ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

I


ՀԱՅԿ
ԱՆԱՀԻՏ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АРМЕНИИ
ГОСУДАРСТВЕННЫЙ АРМЯНСКИЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ИГРЫ

Подготовка текста и исследование
В. БДОЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

394(47.925)
Բ
Կրպ.
793

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Աշխատասիրությամբ
Վ. ԲԴՈՅԱՆԻ

Ա III
1955

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1963

Ժողովածուն ընդգրկում է հիմնականում հայաբնակ երկրներ արտացոլող խաղատեսակները՝ ժողովրդական տոներին կատարվող ծիսական-դրամատիկական խաղերը, լարախաղերը, արտադրական ու ընտանեկան կենցաղը ներկայացնող խաղաձևերը։

Ժողովածուի ներածությունը նվիրված է այդ խաղերի գաղափարական էության բացահայտմանը։

Գիրքը օգտակար նյութեր է դպրոցական ազգագրագիտների, բեմադրագետների, խաղերի դասագրքեր կազմողների, խաղի ու սպորտի մանկագետների և ֆիզկուլտուրային հաստատությունների համար։

Կազմելու աշխատանքին մասնակցեց
Մ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջնադարում և ավելի ուշ շրջաններում մանկական ու պատանեկան խաղերը և թատերական ու կրկեսային ելույթներն արտահայտվում էին «խաղ» բառով։ Այդ բացատրվում է նրանով, որ արվեստի ճյուղերին պատկանող տարբեր երևույթները հնում միաձույլ են եղել։ Այդ առումով էլ հայ բառարանագրությանը հայտնի այն բոլոր խաղաձևերը, որոնք գրանցված են առավել հին դրավոր աղբյուրների տվյալների համաձայն «խաղ» հասկացության տակ, հասկացվում են որպես բազմապիսի շարժումներ՝ տարուբերումներ, տատանումներ, վազքեր, ցատկեր, թռիչքներ, մենամարտեր, մրցումներ, կատակներ, ժամանց, ծաղր, ծանակ, պար-կաքավ, մատավարժություն և այլն։ Հնում «խաղ» էին կոչվում երգերի որոշ տեսակները, և այդ է պատճառը, որ Մ. Աբեղյանը հայկական ամբողջ ջանդյումների ժողովածուն «խաղիկներ» է անվանել։

Սպորտի, թատրոնի և կրկեսի ինքնուրույնության այսօրվա բարձր աստիճանում անգամ «խաղ» բառի գործածությունը տակավին ընդհանուր բնույթ ունի։

Արդի դիտությունը խաղը և սպորտը համարում է մարդու աշխատանքային և սոցիալական գործունեության առանձնահատուկ վերարտադրությունը, կյանքի երեվույթների արտացոլումը։ Որքան բազմազան են մարդկային կյանքի և հասարակական երևույթների ոլորտները, նույնքան բազմազան են դրանցից բխող խաղերը։

Խաղերի, աշխատանքի ու մարդու հասարակական գործունեության մեջ եղած կապերի բացահայտմամբ զբաղվել է Գ. Վ. Պլեխանովը։ Մարքսիստական մատերիալիստական ուսմունքի հիման վրա Գ. Վ. Պլեխանովը ցույց է տվել, որ օգտակար գործունեությունը նախորդում է խաղին և խաղ է ստեղծում։ Հակառակ բուրժուական իդեալիստական տեսության, Պլեխանովը խաղը համարում է աշխատանքի զավակը[1]։

Խաղը,—որքան էլ դրա որոշ տեսակները լուրջ դժվարությունների հաղթահարում են պահանջում,— կատարվում է բավականությամբ, հրապուրանքով և հուզմունքով։ Հուզականությունը խաղի կարևոր հատկանիշն է։ Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում մանկապատանեկան խաղերը։

Խաղի պրոցեսում երեխաներն ստանալով մեծ բավականություն, իրևան են բերում ազատ ստեղծագործական գործունեություն, որին մասնակցում են երեխայի հոգեկան ամենատարբեր բաղադրիչները՝ ղգացողությունը, ըմբռնողությունը, մտածողությունը, երևակայությունը, հիշողու-

---

[1] Տե՛ս Գ. Վ. Պլեխանով, Գեղարվեստ և գրականություն, Երևան, 1949, էջ 77 և հավ.։

թյունը, ուշադրությունը, կամքը, հույզը և մկանների լարումը։ Դրանով էլ վճռվում է խաղերի հնշանակալից ազդեցությունը երեխայի անձնավորության՝ նրա բնավորության, կամքի, բարոյական կերպարի վրա։ Մ. Գորկին գրում է թե «խաղը երեխաների համար միջոց է ճանաչելու այն աշխարհը, որի մեջ ապրում են նրանք և որը կոչված են փոխելու[1]»։

Մանկական տարիքում խաղն անհրաժեշտություն է. դրա միջոցով է, որ մանուկը ձեռք է բերում մեծերի առանձնահատկությունները, կատարելագործում իր ստացած նախնական տպավորությունները, ժառանգում նախորդ սերունդներից ավանդված աշխատանքային գործելակերպը և վերջինիս տրադիցիաները։

Կոլեկտիվ խաղերը նոր սերնդի մեջ պատվաստում ու զարգացնում են դիսցիպլինա, պատկառանքի զգացում և հարգանք դեպի հասարակությունը։

Այս հատկանիշների շնորհիվ է, որ խաղը ժողովուրդների մեջ եղել ու մնում է իրեն ամենասիրված զբաղմունքը։

Ամեն մի հասակային դաս իր հասակին համապատասխան խաղերով մեծանում և անցում է կատարում մի այլ հասակի՝ դրան համապատասխան խաղերին անցնելով։ Ուրիշ շատ միջոցների հետ միասին խաղը նույնպես մեծապես նպաստում է, որ երեխան դառնա հասարակության օգտակար քաղաքացի։

Հասակ առնող երեխայի հետ խաղն ընթանում է պարզից դեպի բարդը, հեշտից դժվարը։ Նրա բովանդակության հարափոփոխությունն, անկասկած, բխում է հասակային առանձնահատկությունների հետ կապված ընտանեկան, կենցաղային, հասարակական, սեռային և այլ կարգի փոխհարաբերություններից ու գաղափարներից։

Ա. ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հայաստանում և Սովետական Միության այլ ռեսպուբլիկաներում ազգային խաղերի ժողովածուներ տակավին չկան։ Քիչ թե շատ ամփոփիչ ժողովածու է Մոսկվայում 1933 թվականին հրատարակված «Игры народов СССР» գիրքը (ИН), որտեղ տեղեվված ռուսական խաղերի թվում կան մյուս ժողովուրդներից բերված հատ ու կենտ նյութեր։ Այդ ժողովածուում տեղ են գտել հայկական միայն երկու խաղեր (ИН, № 220, 223)։

Յարդ հայկական ժողովրդական խաղերի ժողովածուների հրատարակումը կատարվել է դասագրքերի ձևով։ Հրատարակվածների մեծագույն մասը գրված է XIX—XX դարերի մամուլի և գրականության էջերում։

Մասնագիտական շրջանները փոխանակ օգտագործելու այդ գրված խաղերը, բնտրել են ռուսերեն և այլ լեզուներով հրատարակված դասագրքերից պատրաստի նյութերը թարգմանաբար կամ փոխադրմամբ հրատարակելու հեշտ ուղին։ Այս հանգամանքը հող է ստեղծել աչքաթող անելու բանավոր խաղանյութերի հավաքման գործը, որի հետևանքով բազմաթիվ խաղեր և շատ խաղերի վարիանտներ ու կանոններ անհետ կորսված են մատնվել։

Դպրոցական դասագրքերի համար հարուստ նյութեր հայթայթելու, հայկական խաղերի ու ֆիզիկական կուլտուրայի պատմության ստեղծմանը նպաստելու, ինչպես նաև բանավոր նյութերը հավանական կորուստից փրկելու ձգտումն է եղել մեր տարիների (1952—1957) աշխատանքը։

[1] Մ. Գորկի, Երեխաների և երեխաների մասին, Երևան, 1939, էջ 257։

Բանավոր և գրավոր աղբյուրներից հավաքված նյութերն ընդգրկում են ամբողջ պատմական Հայաստանը։ Դա նպաստում է հետևանալու յուրաքանչյուր խաղատեսակի տարածականությունը կամ տոպոնիմիկան, խաղերի համընդհանրությունը, ինչպես նաև խաղերի տարբերակների պատճառները, որ բխում են երկրի ռելիեֆից և տնտեսական զբաղմունքների տարբերություններից։

Գործը կազմակերպված առաջ մղելու նպատակով, մենք 1951 թվականի վերջերին նախապես կազմեցինք խաղերը գրի առնելու հարցարան-ծրագիր, որն ընդգրկում էր ինչպես խաղերի տարբեր թեմաների, այնպես էլ յուրաքանչյուր խաղ մանրամասնությամբ գրի առնելու վերաբերյալ հարցեր։ Ծրագրի համաձայն ժողովածուի մեջ տեղ պետք է գտնեն հետևյալ թեմաները։

1. Մանկախաղից խաղերն ու խաղերգերը, որոնցով մեծերն են փոքրերին զբաղեցնում և այն խաղերը, որ սկսում են խաղալ ու զբաղվել մանուկները։ 2. Խաղեր, որոնք կատարվում են մինչև 5—6 տարեկան երեխաների ձեռքով և հիմնականում ներկայացնում են շինարարական աշխատանքների պրոցեսներ։ 3. Սպորտի վերաբերյալ այն բոլորը, ինչ որ պահպանվել է հայ պատմագրության ու միջնադարյան տնտիպ գրականության մեջ։ 4. Ամբողջ շարժական և սպորտային խաղատեսակները։ 5. Այն խաղերը, որոնք ներկայացնում են խաղի ու պարի միջանկյալ ձևը կամ մեկից մյուսին անցնելու պրոցեսը։ 6. Դրամատիկական կարգի այն խաղերը, որոնք հիմնովին ներկայացնում են հասարակական կյանքի բավական ճշգրիտ պատկերը։ 7. Այն մտավարժական խաղերը, որ կապվում են մասնավորապես մտավոր վարժությունների հետ։ 8. Կենդանակռիվները որպես ժողովրդական զվարճանքի միջոցներ և որպես ազգային կրկեսային խաղերի զարգացման վերապրուկներ։ 9. Միսական խաղերը, որոնք առասպելական կամ դիցաբանական պատրանքի տակ վերարտադրում են աշխարհիկ կյանքի որևէ պատկերը՝ աշխատանքը, բնության դեմ մղվող պայքարը, սոցիալական երևույթները, ռազմի որոշ վարժություններ, բնության զարթոնքի և գարնանային աշխատանքներին դիմավորելու կապակցությամբ մարդու նախապատրաստության վարժությունները և այլն։ 10. Այն ծիսական խաղ-զվարճանքները, որոնք երևան էին գալիս հարսանեկան հանդեսների ժամանակ և իրենց արարողությամբ անմիջական կապ ունեին սպորտի հետ՝ անհատական մրցումներ դրսևորելու համար։ 11. Այն սակավաթիվ խաղերը, որոնք դարերի ընթացքում արտացոլել են հայ ժողովրդի քաղաքական պայքարը օտար պավիչների դեմ։

Երբ այս ծրագիրն ու աշխատանքի հեռանկարները որոշակի դարձան, գիտությունների ակադեմիայի պատմության թանգարանի և Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի միջև հատուկ համաձայնություն կայացվեց։ Ըստ այդմ կողմերը պետք է հավաքեին հազար խաղ՝ վարիանտներով։ Ֆիզկուլտուրայի ինստիտուտը 1952 թվականի կեսերին 25 հեռակայողներից ստացավ մոտ 200 խաղ՝ գրի առնված Արարատյան դաշտի[1գ], Ջանգեզուրի[2], Սևանի

[1գ] Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Հարություն Դ. Եղիազարյանը։ Էջմիածնի Աղավնատուն գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Ն. Մաթևոսյանը։ Էջմիածնի շրջանի Մուղան գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Սահակ Մխիթարյանը։ Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Օնիկ Մնացականյանը։ Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Անդրանիկ Սաֆարյանը։ Խաղեր. 1952 թվականին Էջմիածնի երրորդ սովխոզում գրի առավ Ռաֆիկ Հով. Մխիթարյանը։

[2] Գորիսի խաղերը. 1952—1953 թվականներին գրի առավ Ս. Մելքումյանը։ Ղափանի շրջանի Դավիթբեկ գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Պարգև Հարությունյանը։

ավազանի[3], Շիրակի[4] և Լոռու[5] շրջաններում, Ապարանում[6], Կոտայքում[7] և Արթիկում[8]։

Բացի դրանից ինստիտուտի աշխատակից Մ. Մամիկոնյանը 1952—1953 թվականների ընթացքում դրի առավ մեծ քանակությամբ խաղեր։ Ինստիտուտի կողմից հանձնարարված աշխատանքները կատարվեցին Մ. Մամիկոնյանի և ուսանողների ձեռքով 1952—1953 թվականների ընթացքում, իսկ բանգարանի կողմից՝ մեր և Ն. Թորամանյանի ձեռքով։ Վերջինս, սակայն, 1954 թվականի սկզբից հրաժարվեց հետագա աշխատանքներին մասնակցելուց։ Ն. Թորամանյանը 1952 թվականի դարնանը դրի առավ Կոտայքի Քանաքեռ, Ավան և Էլառ գյուղերի խաղերը։ Տարիների ընթացքում մենք դրի առանք Ախալքալաքի, Ապարանի, Արթիկի, Դափանի, Կոտայքի և Երևանի Արաբկիր ավանի խաղերը։ Ազգագրական բաժնի պատվերով Բոդպանովկայի Փ. Խանչալի գյուղի խաղերի լրացումը կատարեց լեզվի և գրականության դասատու Վաղինակ Վարդանյանը։

Իսկ արևմտահայ հատվածից նյութեր ձեռք բերելու նպատակով, 1952 թվականին բանգարանի Ազգագրական բաժնի պատվերով Գառնիկ Հյուսիսյանը դրի առավ Շապին-Գարահիսարի, Հենա Կարապետյանը՝ Երզնկայի, Բգդերի և Երևանի Նորք ավանի խաղերը, Վ. Պետոյանը՝ Սասունի խաղերը. ապա օգտագործվեցին այն գրքույկները, որ լույս են տեսել զանազան վայրերում[9] 1920—1950 թվականներին։

Նյութեր հավաքվեցին Միության զանազան վայրերից՝ Ն. Նախիջևանից, Վրացական ՍՍՌ Ախալքալաքի, Բոդպանովկայի և Ախալցխեի շրջաններից, Թբիլիսիից, Ադրբեջանական ՍՍՌ Լենկորանի Դարբարդից և այլն։

Սրանով էլ ամփոփվեց այս ժողովածուի համար նյութեր հավաքելու երկարատև աշխատանքը։ Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող խաղագյուղերը, որ

---

3 Նոր Բայազետի Բաստիկյան գյուղի խաղերը. 1952 թվականին դրի առավ Հովհ. Աասատրյանը։ Բասարգեչարի շրջանի Կարճաղբյուր գյուղի խաղերը. 1953 թվականին դրի առավ Խաչիկ Դրիգորյանը։ Մարտունու խաղերը. 1952 թվականին դրի առավ Համազասպ Գ. Կարնեցյանը։

4 Ախուրյանի շրջանի Ագատան գյուղի խաղերը. 1952 թվականին դրի առավ Մ. Գրիգորյանը։ Ախուրյանի շրջանի Ագատան գյուղի խաղերը. 1952 թվականին դրի առավ Վաղոյա Կաոայանը։ Ժողովրդական խաղերը Ախուրյանի գյուղերում. դրի առավ 1952 թվականին Գուրգեն Հարությունյանը։ Ախուրյանի շրջանի Մարմաշեն գյուղի խաղերը. 1952 թվականին դրի առավ Շավարշ Վարոսյանը։

5 Կալինինոյի շրջանի Ղարաբիլիսա գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Հակոբ Գ. Առաքելյանը։ Շարժական խաղերը Կալինինոյի շրջանում. 1952 թվականին գրի առավ Հովհ. Մ. Ավետիսյանը։

6 Ապարանի խաղերը. 1952 թվականին գրի առավ Վարանցով Արտեմի Մարկոսյանը։

7 Կոտայքի Ջորաղբյուր գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Ագաա Ա. Ադիլյանը։ Քանաքեռ գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Ղազար Տրդ. Ղուկասյանը։ Քանաքեռի խաղերը. 1952 թվականին գրի առավ Նիկոլայ Ղուկասյանը։

8 Արթիկի շրջանի Հոռոմ գյուղի խաղերը. 1952 թվականին գրի առավ Անժ. Վ. Վարդանյանը։ Ներկայացվածի մեջ երեք բանահավաքների նյութերի վայրը մնում է անհայտ։ Դրանք հետևյալներն են. Ժողովրդական խաղեր. 1952 թվականին գրի առավ Ա. Արիկյանը։ Արտադպրոցական խաղեր. 1952 թվականին գրի առավ Խաչիկ Գեղ. Գևորգյանը։ Հայկական ժողովրդական խաղեր. 1952 թվականին գրի առավ Մկրտիչ Էմինի Մկրտչյանը։

9 ա. Բարջանճ գյուղ. համպատում (1600—1937), աշխատասիրեց Մանուկ Պ. Մերեն, բարջանճցի, Պոստոն, 1938։ բ. Հ. Պ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմություն, Կալիֆորնիա, 1942։ գ. Հարություն Ֆն. Սարգիսյան, Բալու, իր սովորություններ, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Գահիրե, 1937։ դ. Գրիգոր Հ. Մխալյան, Պարտիզակն ու պարտիզակցին, Գահիրե, 1938։ ե. Աբամ Երեմյան, Չահարմահալի ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923։ զ. Գ. Ս. Երևանյան. Պատմություն Չարսանճագի հայոց, Պեյրութ, 1956։ է. «Նոր Սերմաստիա» տեղեկատու պաշտոնաթերթի, 1958, № 38, մայիս (ուր տպագրված են Սերմաստիայի խաղերից)։

Ֆիզկուլտուրայի ինստիտուտի հանձնարարությամբ միջնադարյան պատմագրությունից ժողովածուի համար հեղինակի հետ միասին բավական նյութեր է քաղել Ռուբեն Արմենյանը։

կազմում են «Ձյուկական ժողովրդական խաղեր» ժողովածուն, մենք միանգամայն հեռու ենք լիակատար համարելու հավակնություններից։

Խաղերի տեսակավորումը կատարեցինք Մոսկվայում հրատարակված «Игры народов СССР» ժողովածուի մեթոդով, թեև մեր նյութերից ելնելով զգալի փոփոխություններ ենք կատարել։ Ըստ այդ մեթոդի նկատի են առնվում ոչ միայն խաղերի այն հատկանիշները, որոնք ծառայում են սպորտային բազմազան շարժուձևերին, այլ նաև մյուս հատկանիշները, որոնք կազմում են խաղերի բովանդակությունը և հաճախ վերծանման կարիք են ունենում։

Արտաքին հատկանիշներով առաջնորդվելու դեպքում թվում է, թե մի քանի խաղեր բոլորովին էլ կապ չունեն հասարակական երևույթների հետ։ Այսպես, օրինակ, «Խաղալու»-ները, որ իրենցից ներկայացնում են հայոնի «պահմտոցի»-ների վարիանտները, միշտ էլ պիտվել են իբրև պահմտոցներ, մինչդեռ դրանք բուն ռազմի խաղեր են, պիշերային հետախուզման ու հարձակման դեղեցիկ ձևերով։ Միայն հարսնառի ծես են պիտվել այն ծիսական խաղերը, որոնք կազմակերպվել են հարսնառի միջոցին և որոնք գալիս են առևանգմամբ ամուսնության դրսևորման տոհմային սովորույթներից։

«Բեկ ու գզիր»-ները սեղանի և «Գայլ ու հովիվ»-ները՝ շարժական խաղեր են դիտվել բոլոր ժամանակներում, մինչդեռ սրանցից մեկում հանդես է գալիս թուրք կամ քուրդ ավատական վերնախավի ներկայացուցիչը՝ իր դաժան հրամաններով և գզիրը, իր ենիչերիական զոպպայով, որ ծեծի է ենթարկում ռայա «մեղավորներին», իսկ մյուսում՝ գայլի դերում հանդես եկող ագան («ագին կասի գառ մի տուր...»), Թուրքիայի զավառապետը կամ գերեվաճառը, որ թալանում են անասնապահի ունեցվածքը և գերեվարում մոր նվիրական զավակներին։

Որքան հնարավոր է եղել բացահայտել խաղերի գաղափարական բովանդակությունը, այսպես և բոլոր դեպքերում ընտրությունն այդ ձևով է կատարվել։ Այդ պատճառով էլ արտաքին ձևերի տեսակետից տեղի են ունեցել անխուսափելի խախտումներ՝ շարժական խաղերն ընկել են սեղանային խաղերի մեջ, կղերական խաղերը՝ ռոցիալական խաղերի մեջ և այլն։ Դասավորման այս եղանակը թելադրեց խտրություն չդնել նաև հին ու նոր նյութերի միջև, այլ բոլորը միավորել ըստ դաղափարական բովանդակության։

Նյութերը վարիանտավորելիս աշխատել ենք նկատի առնել ամեն մի աննշան նորություն, որ բերում է տվյալ խաղը։ Գլխավոր վարիանտ են համարվել նրանք, որոնք իրենց նմանների մեջ համեմատաբար լավ են պահպանել խաղի բովանդակությունն ու կանոնները։ Եթե եղել են տարբեր վայրերի 2—3 վարիանտներ, որոնցից ոչ մեկը չէր կարելի կրճատումներով ներկայացնել, թողնվել են նույնությամբ։ Պակասավոր վարիանտները ներկայացվել են իրենց վերնագրի պահպանումով, բայց բովանդակությունից և կանոններից բերված է միայն այն, ինչը լրացնում է գլխավոր կամ իրեն նախորդող վարիանտին։ Այն բոլոր դեպքերում, երբ խաղը բացարձակապես նույնն է եղել, իր վերնագրի տակ գրել ենք «Խաղը այսինչ տեղում նույնն է» շաբլոնը։

Անկախ խաղախմբերի և առանձին նյութերի տարբերություններից, սկզբից մինչև վերջ բոլոր խաղերը համարակալված են արաբական թվանշաններով, ըստ հերթականության։ Դրանով յուրաքանչյուր խաղ իր կայուն տեղն է ստանում, որը կարևոր է մատուցման և ընդհանուր պատկերի պարզության համար։

Որոշ բացառությամբ անցյալում խաղերի հավաքածուները բանահավաքների կողմից կատարվել է քմահաճորեն: Տասնյակ խաղեր «մանրուք» համարվելու հետևանքով կորստի են մատնվել: Ժողովրդական տաղերին հանդես եկող ծիսա-առասպելական-դիցաբանական բնույթի խաղերն ու ժամանցները գրի են առնվել այն չափով, որչափով խաղի տվյալ մասը անմիջական առընչություն է ունեցել կենցաղային որևէ երևույթի հետ: Շատ անգամ ծիսադիցաբանական խաղերն իրենց քողարկվածությամբ արտահայտել են տոհմացեղային հնամենի սովորույթները: Այդ ծեսերի բազի տակ հին խաղերը հասել են նոր իմաստի, մինչև իսկ քաղաքական և սոցիալական իմաստ արտահայտելու աստիճանի: Դրանք մեր շատ բանահավաքներին անհասկանալի մնալով, գրի չեն առնվել:

XIX դարի բանահավաքներին յուրահատուկ էր խաղը գրի առնելիս այն անմիջականորեն կապել գեղագիտական նպատակների հետ (Խաչ. Աբովյան, Գ. Սրվանձտյան, Բաֆֆի, Պ. Պռոշյան և ուրիշներ): Որոշ հեղինակների. ինչպես, օրինակ. մինչնաղարյան պատմիչների մոտ խաղը կամ ուժային վարժությունը նկարագրելը ծառայել է քաջերի ուժը հավերժացնելու և դրանց օրինակը վարակիչ դարձնելու նպատակին: Հին բանահավաքներին յուրահատուկ է խաղի նկարագրությամբ ընթերցողների մեջ հայրենի հիշատակներն արթնացնելը, ազգային զարթոնքին ծառայեցնելը: Բանահավաքները խաղը նկարագրել են այն ժամանակ, երբ դրանով ուզեցել են լրացնել կենցաղային տվյալ երևույթները, իսկ դրանից դուրս գոնվող խաղերն անտեսվել են: Շատ բանահավաքների մոտ, առանձնապես Արևմտահայաստանում, խաղը վոհ է գնացել թեավոր խոսքերով ծանրաբեռնված նախադրաններին, իսկ որոշ բանահավաքների կողմից խաղերը ներկայացվել են առհղծվածային նկարագրությամբ (Շանիկյան, Փուխ-Կրպս և ուրիշներ):

Յուրաքանչյուր շարժական խաղ կամ սպորտային ձև, ինչպիսի բնույթի էլ նա լինի, պետք է ունենա ա. նախապատրաստական, այսինքն պետք է պատասխանի հետևյալ հարցերին. տարվա ո՞ր եղանակին, սակավ դեպքերում նաև շաբաթվա ո՞ր օրը, խաղային ինչպիսի՞ հրապարակներում է կազմակերպվում խաղը և այդ խաղին ո՞ր սեռի ներկայացուցիչներն են մասնակցում, միասին՞, թե՞ առանձին են խաղում, ո՞ր տարիքում և այլն: Ապա՝ ինչպե՞ս է սեռի ունենում խմբերի բաժանումը, դեկավարների բնորոշությունը, ինչպիսի՞ վիճակահանության միջոցով և այլն:

բ. Բովանդակություն. խաղի պրոցեսը:

գ. Կանոններ, որոնցով դրսևորվում են խաղացողների իրավունքներն ու պարտականությունները:

դ. Պատիժներ և խրախուսանքներ, որ կիրառվում են խաղերի ինքնատիպ օրենքների ուժով:

ե. Բանաձևեր, որ ասվում կամ արտասանվում են, համենայն դեպս, ոչ բոլոր խաղերը վերջացնելու ժամանակ:

Այս սխեմայից մասամբ դուրս են մնում ծիսական և դրամատիկական խաղերը, որոնց համար շատ բնորոշ են տարվա արվյալ օրը, պահը և ծեսի պահանջով՝ խաղակիցների սեռային կազմի խիստ ընտրությունը (մեծ մասամբ մեկ կամ մյուս սեռի կազմն է հանդես գալիս):

Հին բանահավաքչական աշխատանքների թերություններից մեկը լեզվական միօրինակության բացակայությունն է: Անցյալում խաղերը գրի են առնվել կամ XIX դարի վերջերի և XX դարի սկզբների արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներով և կամ կիսաբարբառային-կիսագրական լեզվով: Այդ բանի անհամատեղելիությունը նկատի ունենալով ժողովածուն կազմողն

սկզբից ևեթ որոշից գրավոր նյութերը վերրսատին շարադրել կամ ռճական խմբագրության ենթարկել։

Սակայն բոլոր դեպքերում չէ, որ մենք լեզվական տեսակետից խմբագրել ենք խաղերը։ Բացառությամբ կարգով նույնությամբ մնում են այն խաղերը, որոնք նկարագրվել են գեղարվեստական ոճով (Արովյան, Բաֆֆի, Սրվանձտյան, Տևկանց)։ Նույնությամբ ևնք թողել բոլոր խաղերի լեզուն, որը փոխել անկարելի է, որովհետև երգը բարբառներով հյուսվել է որևէ ռիթմ, որևէ գաղափար, որևէ շարժում առաջացնելու համար և ամբողջականությունն ու շարահյուսական ժողովրդական ոճը փոխելիս գրեթե ամբողջովին կորցնում է այդ բոլորը։ Առավել ևս անփոփոխ են մնում այն խաղերգերը, որոնք մեզ համար առեղծվածային կառուցվածք ունեն։ Այդ երգերի բառերի բացատրությունները չեն մեկնաբանվել գրի առնելիս, իսկ շատ դեպքերում էլ ժողովուրդն ինքը դժվարանում է բացատրել։ Խաղերգերի մի երրորդ խումբը կառուցված է հարևան ժողովուրդների լեզուների բառերից ու ոճերից՝ խառն ձևով։

Պատմիչներից ձեռք բերված նյութերը ներկայացված են գրաբարով՝ աշխարհաբար թարգմանությամբ հանդերձ։ Դրանով հին հաղորդումները հարազատորեն կմատուցվին ուսումնասիրողներին, իսկ աշխարհաբարով մատչելի կլինեն ընթերցողների լայն շրջաններին։

Պատմական անցյալի բոլոր խաղերը և այժմ գրի առնված այն խաղերը, որոնք չեն խաղացվում, այլ պահպանվում են միայն ավագ սերնդի հիշողության մեջ, շարադրվել են անցյալ անկատարով։ Մեր օրերում խաղացվող խաղերը նկարագրվել են ներկա ժամանակով։

* * *

«Հայկական ժողովրդական խաղեր» ժողովածուի ներկա գրքում զետեղված են հիմնականում հասարակական հարաբերությունները արտահայտող խաղատեսակները։ Հաջորդ գրքերում տեղ են գտնելու հետևյալ խաղատեսակները։

ա. Մարմնամարզական խաղեր (մանկան լոգանք, քայլել սովորեցնելու և խաղացնելու ձևեր. մանկական, սկզբնական ինքնուրույն խաղեր. պատանեկան պահմտուկային, ակնատուիկ, հետապնդիչ, գործիքային, նմանողական, հեռավորության, բարձրության և խորության ցատկեր. հեծնոցիկ, ճկունության, հավասարակշռության և այլ տեսակի խաղեր ու զվարճություններ)։

բ. Ռազմական և մրցակցական խաղեր (նշանառություն և յախտախաղեր, «պատերազմ» ներկայացնող խաղատեսակներ՝ բերդախաղեր. «պատերազմներ», թաղակռիվներ, գերեվարումներ. ուժային վարժություններ՝ ծանրության բարձրացնել, նետել, շալակել, քաշել, սրահարել, շրջոցիկներ, նետոցիկներ. ըմբշամարտեր կենդանիների հետ. ղինախաղեր՝ պարսատիկային խաղեր ու կռիվներ, նետաղեղային խաղեր և այլն. լող. լեռնային սպորտ. մականախաղեր հեծոտան և ձիերով. ձիախաղեր-ձիարշավներ. օդապարանով որսախաղեր և այլն)։

գ. Ձվարճախաղեր (անակնկալային, աչքակապուկ, գուշակողական սղալու, պարի, երաժշտական և այլ խաղեր)։

դ. Սեղանախաղեր (սեղանի գնդակներ՝ մատներով խաղալու, քարկտիկային և նման խաղեր)։

ե. Մտավարժական խաղեր (հանելուկաձև համրախաղեր, դրավախաղեր և այլն)։

Ժողովածուն ունի խաղերի ձևերը բացահայտող նկարներ ու սխեմաներ, որոնք կատարված են տվյալ խաղի նկարագրի հիման վրա։ Երեխաների, պատանիների և մեծերի տարազը, ինչպես նաև դրամատիկական բնույթի խաղերի արտաքին ձևավորումները վերականգնված են ազգագրական բանավոր ու նյութական տվյալների հիման վրա, որոնք հեղինակից պահանջել են ոչ

պակաս ժամանակ ու ջանքեր, որքան բնագրերի մշակումը։ Գրաբար բնագիրը աշխարհաբար է թարգմանել լեզվաբան Վարագ Առաքելյանը։

Գրշանկարները կատարված են մի քանի նկարիչների ձեռքով։ Նրանց մեջ իրենց բարեխղճությամբ ու կատարումով աչքի ընկան դեղանկարիչ Ռաֆայել Մնացականյանը և մանրանկարիչ Հովհաննես Քացակյանը։

* * *

Բնագրերում անվերնագիր նյութերը վերնագրված են կազմողի կողմից։ Այսօրինակ վերնագրերը, միջքերված որոշ բառերն ու արտահայտությունները առնված են միջակ [ ] փակագծերի մեջ։

Գ. ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հնագույն օտար ազբյուրների, այնպես էլ հայ պատմագրության մեջ աշխատավորության սպորտային զբաղմունքների, խաղերի, ռազմական վարժություններ վերաբերյալ ուղղակի տեղեկություններ գրեթե բացակայում էն։ Այն բոլոր նյութերը, որոնք, համենայն դեպս, մեզ են հասել պատմագրության միջոցով, ժողովրդական ստեղծագործությունների այն նմուշներն են, որոնք օգտագործվում էին հայ արքունիքում և նախարարություններում։

Որոնումները պարզեցին, որ օտար ազբյուրները հայկական խաղերի և սպորտի ձևերի մասին շատ քիչ բան են թողել։ Սպորտային մի քանի տեղեկություններ են հաղորդել Քսենոֆոնը (V դ. մ. թ. ա.)[10], Ստրաբոնը (I դ. մ. թ. ա.)[11] և Տակիտոսը (մեր թվական. I—II դդ.)[12], թեև այդ տեղեկությունները անարժեք չեն։

Հայ պատմագրության մեջ խաղի կամ սպորտի իսկական նկարագիր շատ սակավ է հանդիպում։ Միջնադարյան այդ նյութերն են՝ ռազմի խաղեր, զրամատիկական խաղատեսակներ, սպորտային և ծանր ատլետիկայի վերաբերյալ ակնարկներ, կրկեսային խաղերի մնացուկներ, մատավարժական խաղեր, վիճակահանման ձևեր և այլն։

Այդ նյութերը վերաբերում են, հիմնականում, ռազմական սպորտին։ Եվ դա հասկանալի է. միջնադարյան ֆեոդալական Հայաստանում պետական և նախարարական ինքնապաշտպանության հարցերը շատ բաներով կախված էին ռազմական պատրաստությունից։

Ռազմի խաղերի մասին հայ պատմագիրների առաջին հաղորդած տեղեկությունները վերաբերում են վաղ ֆեոդալիզմի շրջանին։ Պատմիչներն այդ հաղորդումներն արել են, անկասկած, իրենց ժամանակներում գոյություն ունեցող տրադիցիաները հաջորդ սերունդների մեջ պահպանելու դիտավորությունները։ Այդ խաղատեսակներից էին՝ գնդակախաղերը հեծիստն և ձիավորված ձևերով (ՅՄ. ՊՏ, 201—202, 274—275. Մխ. ՀՊ, 331. ԹՄ. ՊՏՄ, 125—126. ՍՍՏ, 38), որոնք տեղ են գտել «Սասնա ծռեր»-ում (ՍՄ, I, 255, 495, 790, 895, 1040 եև. հատ. II, I մաս, 148, հատ. II, II մաս, 247—249, 539—540, 571 եև). ձիարշավները (Ագ. Պ, 103. ՆՇ. ԸԹ, 66—67). նիզակախաղերը, նետաձգությունը, սուսերամարտերի վարժությունները, տեգախաղերը,

---

10 Քսենոֆոն, Անաբասիս, հատ. 7, գ. IV, պլ. 5, էջ 24 (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 390) և Կիրոպեդիա, հատ. 2, գ. II, պլ. 4, էջ 14—15 (տե՛ս Հ. Մանանդյանի նշ. աշխ., էջ 396—398)։

11 Ստրաբոն, Քաղց և թարգմանց Հ. Ա.ճառյան. Երևան, 1940, էջ 33։

12 Կ. Տակիտոս, Քաղց և լատիներենից թարգմանց պրոֆ. պաշտ. Պ. Սոսեիկյան, Երևան, 1941, էջ 15, 39, 45։

պարապարելը ևն (ՅԴ. ԺԿ, 191. ԿԳ. ՊՀ, 51. ՋՍ. II, 84). օգապարանով կենդանիներ և մարդ բռնելու արվեստը (Մխ. ՊՀ, 179, 230—231. ՅՄ. ՊՏ, 135—136. ՄԿ. ՊԱՍ, 37). ըմբշամարտությունը (Ա. ՊՀ, 31. Ե. ԵԱ, 98. Մխ. ՊՀ, 307—308. ՂՎ, 41. ԲԱ. ՊՏԱ, 482. ԳՍԿ. ԳԱ, էջ ՃԽԵ, ԳՄ. Բ, 230. ՄԱՊ, 33—35. Ա.Կ. Պ, 45. Ջ. 3569, էջ 25ա—28բ. Ջ. 515, էջ 27բ, 28ա—28բ, և այլն). կռվամարտերը (Սեբեքիոսի Պամփիլեայ Կևսարացւոյ Ժամանակականք... հատ. Ա., 285, 287, 289, 290, 300 և այլն). ծանրություններ հավիճահարելը՝ բարձրացնելը, մղելը և նետելը (ՄԳ. Դ, 323—324. Դատ. 69. Սե. Պ, 54. Ա. ՊՀ, 32. Ուե. ՊՀ, 82. ՆՇ. ԲՋ, 516—517. Մխ. ՊՀ, 218 և այլն). որսորդությունը (Մխ. ՊՀ, 110—111. ՂՓ. ՊՀ, 10—11. Ա. ՊՀ, 112. ԱՇ. Մ, 228, 230. ՇԲ. Պ, 75. ԲԱ. ՊՏԱ, 292. ԳՆ. Ո, 300, ԿԳ. ՊՀ, 20, 94—95. ՄԱՊ, 20 և այլն) և մի շարք այլ նյութեր:

Ինչպես միջին դարերի պրակտիկ ապրյուրները, հայկական ժողովրդական բանահյուսությունը ևս պահպանել է դխավորապես վերը ներկայացրած սպորտային աեսակները՝ նրանց հիպերբոլիկ բնույթ հաղորդելով:

Ինչպես գրավոր ապրյուրները ցույց են տալիս, բանահյուսությունը սպորտից հիմնականում այն է պահպանել, ինչի գործադրումն անմիջական կապ է ունեցել ժողովրդի և երկրի պաշտպանության հետ: Վերցնենք, օրինակ, ռազմի վարժություններն ու խաղերը, երկիրն օտար ասպատակողներից մաքրելու համար մղվող ռազմի աեսարանների աեսակները, ախոյանների հետ կապմակերպված ըմբշամարտերի ձևերը: Քաջերի ձևացով երկաթե սյուները կամ՝ ծառերն ու իայիքները[13] սրի մի հարվածով կտրելը, ծառերն արմատահան անելը, սրբյակներով սրերը երկաթալարի նման ոլորելը[14], ահռելի ծանրություններ վերցնելը[15], մղելը,[16] նետելը և այլն: Այս ամենը ոչ միայն Սասնա ծռերի հերոսների հատկություններն են: Դրանք հատուկ են նաև հայկական բոլոր հրաշապատում հեքիաթների հերոսներին: Բոլորովին էլ պատահական չէ, որ ժողովուրդը ֆիզիկական լուրջ դաստիարակություն տալուց, այս բոլորին քաջալվարժ դարձնելուց հետո իր էպիկական հերոսներին ձամփու է դնում ասպատակներին դիմագրավելու, կամ առևանգված դստերերի պատվի հետ խաղացած ահավոր դևերի աշխարհում ճակատագրական պայքարի կոչ անելու համար, որ այլաբանորեն դարձյալ պետք է հասկանալ իրական կյանքը:

Նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ թե ժողովրդական բանահյուսության, թե դիցաբանության և թե միջնադարյան գրականության մեջ պահպանված սպորտային ձևերն իրար չափազանց նման են, եթե չասենք, որ դրանք պարզապես միմյանց կրկնել ու լրացրել են ամբողջ մեկ ու կես հազարամյակի ընթացքում: Միանգամայն համեմատելի են, ինչպես այդ ասպարեզների պահպանած հերոսների՝ Հայկ պյուցազնի, Արա Գեղեցկի, Տորք Անգեղի, Սասունցի Դավթի, հեքիաթների բազմաթիվ անանուն հերոսների, այնպես էլ հաղորդված սպորտային ձևերը (ծանրություններ բարձրացնել, նետել, մղել, մենամարտել[17],

13 ՍԾ. թ. II, 383—384. Մրգ. III, 64 (Ապ.):

14 ՍԾ. ա, 35 (Մկս.), 452 (Մկս.), 97 (Մկս.), 311 (Մկս.), 590 (Մկս.), 866 (Գվշ.), 287 (Մկս.), 363 (Մկս.), 921 (Գվշ.), 642 (Գվշ.), 642 (Մկս.). ՍԾ. թ. II, 289—290 (Աբ.):

15 ՍԾ. թ, 23 (Տրն.), 371—372 (Ալշ.). ՍԾ. թ. II, 257—258 (Աբ.), 277. ՍԾ. ա, 174—175, 232—233, 558—559. ՍԾ. թ. I, 21, 66—68. Մրգ. III, 64 (Ապ.). Մրգ. I, 77—78 (Աշտ.). ԷԱԺ, II 98 (Սրմ.), 99 (Սրմ.). ՍԾ. ա, 239 (Մկս.):

16 ՀԺՀ, V 56 (Լռ.):

17 ՍԾ. ա, 280 (Մկս.) ՍԾ. թ. II, 549 (Վ.). ՍԾ, ա, 1065 (ՀՋ.). ՍԾ. թ. II, 477, 280—281 (Աբ.). ՍԾ. ա, 915 (Գվշ.). ՍԾ. թ. I, 204 (Սան.), 219 (Սան.). ՍԾ. թ. II, 312 (Աբ.), 477, 243—244 (Աբ.), 308—309

հնձած մականախտակը խոպոպ[18] և այլն։ Սրանցից ժողովրդական բանահյուսության մեջ ամենից շատ ու խնամքով պահպանվել են «Սասնա Ծռեր»-ում, առասպելներում, հեքիաթներում և կենդանական առակներում։

Բանահյուսության մյուս ժանրերում, օրինակ, պոեզիայի մեջ սպորան աննշան տեղ է գրավում։ Այստեղ, սակայն, առանձին խնամքով պահպանված են այն խոսքը, որոնք վերաբերում են մանկանը մարմնամարզության վարժեցնելուն կամ պարզապես նրա մարմինը մարզելուն։

Միջնադարյան պատմագրությունից և ժողովրդական բանահյուսությունից բացած այս նյութերն իրենց էությամբ միայն պատառիկներ են, որ մեզ են հասել։ Սպորտային այդ տվյալները ցույց են տալիս այն կարևոր նշանակությունը, որ ունեցել են խաղերը ժողովրդի ֆիզիկական դաստիարակության գործում։

Հայկական խաղերի, զվարճ մասը «պատրյուն ազգային» չէ։ Ինչպես նյութական կուլտուրայի այլ բնագավառներում, այստեղ ևս այլ ժողովուրդների հետ ունեցած շփումների հետևանքով անխուսափելի և անհրաժեշտ են եղել փոխազդեցությունները։ Այդ փոխազդեցություններով պետք է բացատրել հայկական խաղերի անշատ հարբուսությունը։

(Աբ.), 245—246 (Աբ.), 260 (Վ.), 384—386, 609 (Տրն.), 518 (Ագ.), 157 (Նիգա.), 349, 298—299 (Աբ.), ՍԽ. ա, 216 (Մկս.), 458 (Մկս.), 751 (Ագ.), 89 (Մկս.), 217 (Մկս.), 458 (Մկս.), 226 (Գվշ.), 217 (Մկս.), 291—292 (Մկս.). ՍԽ. բ. 1, 190—191 (Սան.), 333—334 (Ալշ.), 89 (Ագ.), ՍԽ. բ. II, 381, 516—518 (Ագ.), 606—608 (Տրն.). ՍԽ. ա, 318—319 (Մկս.), 926 (Գվշ.), 646—647 (Մկս.), 223 (Մկս.), 597 (Մկս.), 224, 296. ՍԽ. բ. 1, 193—194. ՍԽ. բ. II, 613—615, 882—884 (Գվշ.). Մրգ. III, 214—215 (Ագ.). Մրգ. I, 261—262 (Աշտ.). ՀԺՀ. V, 58 (Լոռ.). ԼՀԺ. II, 294 (Կամ.). Մրգ. II, 91—92 (Աշտ.), ՀԺՀ. V, 61—62 (Աբ.). ՀԺՀ. X, 6, 9). ԼՀԺ. IV, 157 (Ալշ.). Մրգ. II, 48 (Աշտ.). Մրգ. II, 229 (Աշտ.).

18 ԼՀԺ, IV, 315—319 (Վ.). ՍԽ. բ. II, 647 (Ագ.)։

XIX դարի սկզբին Պարսկաստան և Հայաստան այցելող եվրոպական մի քանի ճանապարհորդներ գրի են առել ինչպես պարսկական, այնպես էլ հայկական խաղատեսակներ։ Այդ գրառումները ևս, ինչպես միջնադարում, ակնարկային են։ Թեմաները դարձյալ պերազանցապես սրսորդության ձևերն են[19] և մի քանի նշումներ ձիասպորտի[20] ու դոմշակռիվի[21] կազմակերպելու սովորության մասին, որ գրի է առել Վարդանը XIX դարի առաջին կեսին։ Այդ նույն ժամանակամիջոցում հայ գեղարվեստական գրականության մեջ Խ. Աբովյանի կողմից առաջին անգամ գրի է առնվում բարեկենդանյան չիբիդախաղը[22]։ Նա խաղերը գրի առնելու տեսակետից ևս եղավ առաջինը, թեև, ցավոք սրտի, ի վիճակի չեղավ զարգացնելու իր իսկ նախաձեռնությունը։

Խ. Աբովյանի այդ գործը մի փոքր ավելի բծախնդրությամբ վիճակված էր շարունակել բանահավաք Գ. Սրվանձտյանին։ Խաղերի դնահատման և դասման տեսակետից Գ. Սրվանձտյանն իր աշխատանքներն սկսել է դեռևս 1860 թվականից, երբ Մ. Խրիմյանի հետ ճանապարհորդություն էր կատարում Կովկասի Հարավում։ Իր «Տփխիս բաղաք» հոդվածում, որ տպագրել է Վարագի «Արծվի Վասպուրական» ամսագրում[23], Սրվանձտյանը գրի է առնում Թիֆլիսի Հայ երիտասարդության Հայտնի «Բաղակռիվ» ռազմախաղը։ Իսկ 1865-ին, երբ ինքը Մշո «Արծվիկ Տարոնո» ամսաթերթի խմբագիրն էր, Հրատարակում է Տիգրանակերտի գյուղերին Հայտնի, այսպես կոչված, «Պատի բազմ» ծիսական խաղը, որի դերակատար-

19 Գաբ. 97—98, 131. Ժող. 160, 194. Բար. 186, կոլ. 513, 592, 600. Մոր. 350—351, Վկ. 15, 60։

20 Վկ. 3։

21 Վկ. 42։

22 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Հատոր 3-րդ, Երևան, 1948, էջ 37։

23 Գաբրիել Սրվանձտյանց, աշակերտ Ժ.[առանգավորաց] Վ.[արժարանին] Վարագա, Տփխիս քաղաք, «Արծվի Վասպուրական», 1861, № 4, էջ 195։

նպր Հրապննեռով սպառապինված կանայր էին[24]:

1874-ին հրատարակվեց Գ. Սրվանձտյանի «Գրոց-Բրոց»-ը: Այս գրքույկը մի տեսակ ծրագիր էր հայոց բառ ու բանը գրի առնելու համար: Գրական բարձր ճաշակով նկարագրելով ժողովրդի կենցաղը, հոգևոր ու նյութական կուլտուրան, Սրվանձտյանը յուրահատուկ ոճով սկսում է նկարագրել նաև մանկական խաղերը[25]:

Երկու տարի անց, լույս է տեսնում հռչակավոր «Մանանա»-ն: Այստեղ, արդեն, բառահավաքը խաղերի գրանցման ավելի լուրջ փորձ է անում, գրի առնելով ավելի, քան մեկ ու կես տասնյակ խաղեր[26]: Հենց Սրվանձտյանով էլ սկսվում է խաղերի խնդրական բառահավաքչական գործն ամբողջ Արևմտահայաստանում:

Գ. Սրվանձտյանին ունեցավ շատ հետևվորդներ, ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ հատվածում: 1870—1880-ական թվականների խաղերի բառահավաքներ Քաջբերունին, Գ. Տ. Ալեքսանդրյանը, Պեչլերյանը և ուրիշներ ակնհայտորեն կրում էին Սրվանձտյանի ազդեցությունը:

Խաղերը գրի առնելու հարցում նշանակալից դեր խաղաց նաև Պ. Պռոշյանը: Վերջինիս անդրանիկ վեպում՝ «Սոս և Վարդիներ»-ում, որ տպագրվեց «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի 1860 թվականի համարներում, անց գան մի քանի խաղեր[27]:

Իսկ 1879-ին հրատարակած «Հացի խնդիր» վեպում դրանք կրկնապատկվեցին[28], իրենց հետ բերելով ոչ այնքան մանկա-պատանեկան, որքան հասարակական խաղեր: Այդ երկու վեպերում առաջին անգամ գրի առնվեցին «Շահ», «Խան», «Թագավոր-դատավոր» սոցիալ քաղաքական բնույթի խաղերը, որոնց միջոցով, ժողովրդի հետ միասին, Պ. Պռոշյանը ծաղր ու ծանակի էր ենթարկում պարսկական արյունարբուներին և հայ պորտաբույծներին:

Գ. Սրվանձտյանի և Պ. Պռոշյանի օրինակը վարակիչ էր: 1870—1880-ական թվականների մամուլն ու գրականությունն սկսում են մեկը մյուսի հետևից տպագրել գավառական ինտելիգենցիայի և մամուլի քաղաքային աշխատակիցների ձեռքով գրանցված խաղերը:

1880-ական թվականներին հրապարակ են գալիս՝ Թիֆլիսի «Մանկավարժական թերթ» ամսագիրը (1878—1879), Կ. Պոլսի «Բուրաստան մանկանց» (1882—1890) ամսագիրը, Թիֆլիսի «Ազբյուր» (1883—1918) և «Վարժարան» (1882—1884) ամսագրերը, որոնք մանկավարժական այլ խնդիրների հետ զբաղվում էին նաև խաղեր գրառելով, մշակելով ու հրատարակելով: Առանձնապես նշանակալից էր «Բուրաստան մանկանց»-ը, որտեղ, բացի խաղերի բնագրերից, տպվում էին նաև նկարներ, որոնք առավել պարզությամբ էին մեկնաբանում խաղի իմաստը:

Սրվանձտյանի և Պռոշյանի ազդեցությամբ նման թայլերի դիմեցին Քաջբերունին[29], Մ. Միրաքյորյանը[30], Գեորգ Տեր-Ա-

---

24 Հմմտ. Վ. Մուրադյանի հոդվածից, տպված «Արծվիկ Տարոնո» թերթի 1865 թ. № 45: Տե՛ս նաև Գ. Սրվանձտյանց, Մանանա, էջ 116:

25 Գ. Վ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 69—70, 106—107, 122—123: Նույնի «Մանանա», էջ 57—64, 122: Նույնի «Համով հոտով», Թիֆլիս, 1904, էջ 100 և այլն:

26 ԳՄ. Մն., 57—64, 108, 113, 116, 122, 124, 128:

27 ՊՍՎ, 1, 9, 41—44, 102—104, 414—419, 425—426, 428—429:

28 ՊՀԽ, 1, 76—88, 106—109, 126, 138—156:

29 Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություններ, «Փորձ» ամսագիր, 1879, № 10, էջ 39—47:

30 «Նկարագրական ուշադրություն ի հայարնակ գավառս Արեւելյան Տաճկաստանի», մասն Գ, տեղագրեց Մանվել Կ. Միրաքյորյան. Կ. Պոլիս, 1885:

ղեքսանդրյանը[31] Ա. Վ. Տեր-Սարգսենցը[32] և մի քանի այլ հեղինակներ[33]։

Ինչպես պարզվեց վերջերս, Գ. Սրվանձտյանի ժամանակակից Երեմիա եպ. Տեր-Սարգսյանցը (Տեկանց) 1881-ին վարագում ավարտել և անտիպ է թողել մի ստվար աշխատություն, «Տոհմային հիշատակարան» խորագրով[34]։ Այստեղ Տեկանցը օրացուցային պլանով դրի է առել շուրջ 70 խոպ, որ իր մանկության ու պատանեկության շրջանում խաղացել կամ ականատես է եղել խաղերին։ Դրանցման մեջ հետևելով Սրբվանձտյանի մեթոդին, Տեկանցը, սակայն, հակայական քայլերով առաջ է անցել իր ուսուցչից, տալով խաղին գրեթե այն բոլոր մանրամասնությունները, որոնք անհրաժեշտ են դպրոցական դասագրքերի համար։ Նկատի առնել խաղացողների սեռը, տարիքը, թիվը, տարվա ժամանակը, եղանակը, մեկնաբանել դրանց պատճառները, նկարագրել խաղի պլանը, պարզ կերպով ներկայացնել խաղի սկիզբն ու վերջը,—այս բոլորը նորություն էին 1880-ական թվականների բոլոր բանահավաքների համար։

Ժողովրդական խաղերը սոսկ մանկավարժական նպատակով դրի առնելու հարցը հայ իրականության մեջ իր արձագանքը գտնում է 1890-ական թվականներին։

Ապրելով ու գործելով Մոսկվայում, կրելով ռուսական ազգագրության բարերար ազդեցությունը, պրոֆ. Դր. Խալաթյանը 1887-ին տպագրեց իր հայտնի «Ծրագիր»-ը՝ հայ ազգագրության բանահավաքչական գործը դյուրացնող այդ նշանավոր աշխատությունը[35], որով դրվեց հայկական գիտական ազգագրության հիմքը։ Սրա հիման վրա, ի թիվս ազգագրական այլևայլ նյութերի, սկսվում է հայկական ժողովրդական խաղերի հավաքման նոր ու ավելի գիտական շրջանը, ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ հատվածում։ Այդ «գրքի անվիճելի ազդեցության ներքո ոչ միայն աճում էր հետաքրքրությունը դեպի ազգագրական պարապմունքները,—գրում է պրոֆ. Սա. Լիսիցյանը,—այլև պարզ զգացվում էր ձգտում այդ պարապմունքներն ավելի բազմակողմանի, գիտականորեն ավելի սուսումնասիրված և վստահելի դարձնելու, որոշ սիստեմի ենթարկելու»[36]։

Դր. Խալաթյանի «Ծրագրի» երևան գալը, որոշ չափով կանխեց բանահյուսության և ժողովրդական խաղերի ու խաղերգերի դրառման տարերայնությունը, լուծեց յուրաքանչյուր նյութի ինքնայավորման հարցը։

Ե. Լալայանը Ջավախքում 1895 թվականին հավաքել է ժողովրդական խաղեր, թեև տպագրումը հետաձգվել է[37]։ Տիգրան Նավասարդյանն իր «Հայ ժողովրդական հեքիաթներ» գրքերում (1883—1903) հրատարակից

---

31 Գեորգ Տեր-Ավետաձեղյան. *Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, մաս Ա, Թիֆլիս, 1886։*

32 «Պանդուխտ վանեցին», նամակներ, էջեր, ստացածներ, առնչվածներ, գրեց Արիստակես վարդապետ Տեր-Սարգսենց, Կ. Պոլիս, 1875։

33 Նախապաշարմունք, հատ. 1, (բ. գործ). աշխատասիրեց Հովհաննես Նազարյանց, Տփղիս, 1878. «Ժեղջիկան հարսանիք ի Հայաստան», հեղինակությամբ Ա. Կ. Պեյլերյան վանեցվո, Կ. Պոլիս, 1870. Տիգրան Նավասարդյան. Հայ ժողովրդական ավանդություններ, առաջին գիրք, Երևան, 1883։

34 Ե. Տ. Սարգսյանցի սույն աշխատությունը պահվում է Մատենադարանում 4184 համարի տակ։ Այն մեզ հայտնի է գործել Մատենադարանի գիտական աշխատող Ս. Լալաֆարյանի միջոցով, որը 1953-ին դրից «Հայկական ժողովրդական խաղեր» սույն ժողովածուի խմբագրության արամադրության տակ։ Օգտվելով առիթից մենք Ս. Լալաֆարյանին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

35 «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների», հավաքեց և կազմեց Դր. Խալաթյանց, Մոսկվա, 1887։

36 Պրոֆ. Սա. Լիսիցյան, Ազգագրական հարցարան, Երևան, 1946, էջ 5։

37 Ե. Լալայան, Ջավախք, Ա. հատոր, 1897, էջ 165։ Հետագայում Սա. Լիսիցյանը հրատարակելով իր «Ժողովրդական մանկական խաղերը» (1907), խոստովանում է, որ ինքն այդ խաղերի մի մասը վերցրել է Ե. Լալայանից։ Հավանական է, որ դրանք հենց Լալայանի ձեռքով 1895-ին Ախալքալաքի գավառից հավաքած նյութերն էին։

մանկապատանեկան շարժական մի շարք խաղեր, որ գրի են առել Սարգիս Քոլանճյանը (Կարս), Գասպար Աղաջանյանը (Վաղարշապատ) և Մ. Պ.-ն (Ղրիմ)[38]: 1895 թվականին Թիֆլիսում լույս է տեսնում Հ. Կ. Ճանիկյանի «Հնութիւնք Ակնա» գիրքը, ուր զետեղվում են Ակնա ժողովրդական մի շարք խաղերը: 1892-ին հրատարակվում են Ա. պարանի մի քանի խաղերն ու խաղերգերը[39]: 1895-ին երևան է գալիս Գևորգ Շեբենցի «Վանա սազը», որտեղ գտնում ենք մեծ մասամբ Վանա խաղերգերը և մանկախաղաց (մանուկներին խաղացնելու) երգերը[40] և այլն[41]: 1895 թվականին հրատարակված խաղերն առաջին ժողովածուն, որ միանդամայն նորություն էր հայ իրականության մեջ, կազմել էր մանկավարժ Հովհաննես Բարխուդարյանը «Մանկական խաղեր» խորագրով: Դասագիրքը կազմված է հայկական, ռուսական և գերմանական նյութերից[42]:

Օգտվելով արդեն հրապարակի վրա եղած ռուսական և օտար նման ժողովածուների կառուցվածքներից, Բարխուդարյանը մանուկ սերնդին նվիրած այդ աշխատության մեջ մտցնում է խաղերը դասավորելու որոշակի կարգ՝ ըստ խաղերի արտաքին հատկանիշների:

Ժողովածուն բովանդակում էր Տ. Նալբանդարյանի հրատարակած՝ Կարսի, Վաղարշապատի, Ղրիմի, ինչպես նաև Ամիսիթ Իսահակյանի, Կարապետ Միրիմանյանի և Լևոն Դյուլումյանի կողմից տրամադրված խաղերը[43]: Մի որոշ քանակ են կազմում նաև ռուսական[44] ու գերմանական[45] խաղերը: Դրանից հետո խաղերն իրենց ամենատարբեր տեսակներով գրի առնելն ու հրատարակելն ավելի հաճախակի է դառնում: Կ. Պոլսի «Բյուրակն» ամսաթերթը Գր. Խալաթյանի «Ծրագրի» և Թիֆլիսում լույս տեսնող «Ազգապրական Հանդես»-ի գործնական աղեցությամբ փաստորեն վերածվելով ազգապրական օրգանի (1897—1898), սկսում է հրատարակել գավառներից ստացված բանահյուսական ու ազգագրական նյութեր, իսկ 1899-ին՝ իր ակտիվ աշխատակից Բուխ-Կրպոյի ձեռքով Բաղեշում գրի առած շարժական խաղերի հավաքածուն[46]: Այդ նույն միջոցին Արևելահայաստանում «Ազգագրական Հանդես»-ի էջերում նոր թափ է առնում ծիսական կարգի արարողությունների և հասարակական ու հարսանեկան հանդեսների հետ տրամաբանորեն կապված խաղ ու սպորտի գրառման շրջանը: Ե. Վալայանի շուրջը հավաքված բանահավաքների ակտիվ գործունեության շնորհիվ մինչև XIX դարի վերջը հսկայական խաղեր ու խաղիմասաներ արտահայտող նյութեր կուտակվեցին: Այդ հաղորդումների մի մասը էթնոլոգիական խաղերի նկարագիրն էր, ապա մյուս, ճիշտ է, աննշան մասն էլ ցույց էր տալիս որոշ խաղերի ու սպորտային ձևերի երևան գալու հանգամանքները: Ե. Վալայանը Ախալքալաքում[47], Դարաբաղում[48], Ջանգեզուրում[49], Ղարաքիլիսայում[50], Ալեքսանդրապոլում[51], Ղազախում[52], Ելիզավետպոլում[53], Ղարսում[54], Ալաշկերտում[55], Էջմիածնում[56], Նոր Նախիջևանում[57], Ռոստովում[58], Ղրիմում[59], Կ. Պոլսում[60], Վանում[61], Մուշում[62], Բաղեշում[63], Կարսում[64], Ալաշկերտում[65], Էրզրումում[66], Ակնում[67], Սեբաստիայում[68], Ամասիայում[69], Կեսարիայում[70], Ադանայում[71], Ալեքսանդրիայում[72], Կահիրեում[73], Ամերիկայում[74] և այլուր գրի առած խաղերը հրատարակեց «Ազգագրական Հանդես»-ի էջերում[75]:

---

38 Տե՛ս «Հայ ժողովրդական հեքիաթներ». ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, վիճերորդ գիրք, Թիֆլիս, 1890, էջ 113—138 և նույն ժողովածու, յոթերորդ գիրք, 1891, էջ 122—132:

39 Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, ժողովեց Գարեգին ս. Հովսեփյանց, Թիֆլիս, 1892:

40 Գեորգ Շեբենց, Վանա սազ, առաջին մաս, Թիֆլիս, 1895:

41 Վահան վ. Տեր-Միհրանյան, Անգիր գպրության, առաջին և երկրորդ գրքեր, Կ. Պոլիս, 1893. Վ. Փափազյան, «Բուրաստ» խաղ, Մշակ, 1890, № 94 և այլն:

42 «Մանկական խաղեր», ժողովեց Հովհաննես Բարխուդարյան, Թիֆլիս, 1895:

43 Տե՛ս հեղինակի առաջաբանը:

44 *H. Филимис*, Подвижные школьные игры, *Е. А. Покровский*, Русские детские подвижные игры, Москва, 1895.

45 *Y. C. Guts-Mats*, Spiele zur Uebung und Erholung des Körpers und des Gistes, Franz Kreuz, Bewegungsspiele und Wettkämpfe.

46 Բուխ-Կրպո, Բաղեշի խաղերը, «Բյուրակն լրագիր», 1899, № 44, 45:

47 Ե. Վալայան, Ջամախը, «Ազգագրական Հանդես», Շուշի, 1895—1896, գիրք Ա, 250, 254, 259—260, 269, գիրք Բ, էջ 264—269, 277:

48 Ե. Վալայան, Վարանդա—նշանավոր տոներ, «Ազգագրական Հանդես», 1897, գիրք 9, էջ 341—345:

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

բում[49], և Գանձակի գավառում[50], Հովհ. Մալխասյանը Ջավախքում[51], Գ. ք. Երզընկյանը Լոռիում[52], Բենսեն Բուլանըխում[53], Նժդեհյանը Ալաշկերտում[54], Գ. ա. ք. Ադանյանցը[55] և Գ. Շերենցը[56] Վանում, Հ. Մուրադյանը Սուխումում[57] և շատ ուրիշներն այլուր[58] գրի առնում և տպագրում են բազմաթիվ խաղեր:

Այս է մոտավոր պատկերն այն ամենի, որ հայկական խաղերի հավաքման ու հրատարակման գծով արվել է XIX դարի ընթացքում:

Քառասերդ դարի սկզբներին, մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, խաղերի հավաքումն ավելի է լայնանում: «Ազգագրական հանդես»-ի, «Էմինյան ազգագրական ժողովածուի» և այլ պարբերականների խմբագրություններն արտագրում են հավաքված խաղանյութը: Եվ ահա, կրկին երևան է գալիս Հայաստանի մեծ մասը ճանապարհորդելու բախտ ունեցած Քաջբերունին իր «Հայկական սովորություններ»-ով: «Ազգագրական հանդեսի» 7—9 համարներում տպագրված այդ աշխատության մեջ նա ներկայացնում է բազմաթիվ կենցաղային, ծիսական և այլ խաղատեսակներ, ինչպես նաև շարժական խաղեր ու խաղերգեր[59]: Այդ նույնն ենք տեսնում նաև Ե. Շահազիզի մոտ, իր «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք» աշխատության մեջ[60]: Գերազանցելով իրենց նախորդներին, Հրաչյա և Արմենուհի Աճառյանները միանգամայն անթերի կերպով գրի են առնում Կ. Պոլսի հայկական մի շարք շարժական խաղերը՝ խաղերգերով հանդերձ[61]:

Ուշադրության արժանի են նաև մի շարք ուրիշ բանահավաքների խաղանյութերը[62]:

Մեր գարնակղին հրատարակվեց Ստ. Լիսիցյանի խաղերի ժողովածուն, ավելի փարթ ծավալով[63]:

1906 թվականին Չիլինգիրյան հավաքում և կազմում է Վանա ժողովրդական խաղերի լիակատար ժողովածուն՝ «Արևելյան խաղաշարք» վերնագրով, որը 1907-ին արժանանում է Իմիրյան մրցանակի: Այս ժողովածուն թեև բացառապես ընդգրկում էր Վան քաղաքի խաղերը, այնուամենայնիվ իր բավական բազմազան նյութերով եղակի էր նախորդ բոլոր հրատարակությունների մեջ: Ար-

---

49 Ե. Լալայան. Ջանգեղուր, «Ազգ. Հանդ.», գիրք Գ, 1898, էջ 89, 90, 106—111:

50 Ե. Լալայան. Գանձակի գավառ, «Ազգ. Հանդ.», գիրք Զ, 1900, էջ 258, 262—263, 268, 284—285, 365—367, 370:

51 Հ. Մալխասյան. Բարեկենդան, ԱՀ, 1897, գիրք Բ, էջ 254—260:

52 Թրիգորիս Բեճ. Երզնկյացց. Լոռվա հարսանիք, ԱՀ, գիրք Գ, 1898, էջ 332, 334, 336, 337:

53 Բենսեն. Բուլանըխ կամ Հարր գավառ, «Ազգ. Հանդ.», գիրք Ե, 1899, էջ 102—103, 126, 132, 135—139: Գիրք Զ, էջ 59, 61—63, 65:

54 Գրիգոր Ք. Նժդեհյացց. Ալաշկերթի բանավոր պրակտիկան, «Ազգ. Հանդ.», գիրք Ե, 1899, էջ 186—188:

55 Մանկախաղ Հավաթից Գյուտ ա. ք. Ադանյանց. «Լումա», Բ գիրք, 1898:

56 Գեորգ Գ. Շերենց. Վանա սաղ, երկրորդ մաս, 1899, էջ 1—13:

57 Հ. Մուրադյանց, Համշենցի հայեր, «Ազգ. Հանդ.», գիրք Գ, 1898, էջ 140—142:

58 «Արձագանք» լրագիր, 1893, № 1, 1895, № 109, «Արարատ», 1895, № 12, էջ 469—471, և այլն:

59 Քաջբերունի, Հայկական սովորություններ, «Ազգագրական հանդես», 1901, գիրք 7—8, էջեր 120—204 և գիրք 9-րդ, էջեր 83—116:

60 Եր. Շահազիզ. Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, «Ազգ. Հանդ.», գիրք 9-րդ, էջ 7—43:

61 Հրաչյա և Արմենուհի Աճառյաններ. Համաբաժո պրահամայ ռամկական անգիր գրականության, «Ազգ. Հանդ.», գիրք 9-րդ, էջ 168—172:

62 Վ. Վ. Տեր-Միքելյան. Բարեկենդան և արևադարձ, «Մասիս», Կ. Պոլիս, 1901, էջ 86—88: Տիգրան Վարդանյանց, Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, Թիֆլիս, 1900: Փշրանք Շիրակի ամբարներից, Համաբաց Ա.Ղ. Մխիթարյանց, «Էմինյան ազգ. ժող.», 1901, հատ. ա, էջ 251, 255, 265, 268—270, 273: Տմբլալի Խաչան (Կ. Կ. Մելիք-Շահնազարյան), Ջուանա-Տմբլա, գիրք Բ, Վաղարշապատ, 1908, էջ 230—231: Ա. Սոլաքյան, Վանա բանահյուսությունից, «Ազգ. Հանդես», գիրք 19-րդ, էջ 101—102:

63 «Ժողովրդական մանկական խաղեր, խմբագրեց Ստ. Լիսիցյան, Թիֆլիս, 1907 (նա նյութերն ստացել է Ե. Լալայանից և Ս. Տ. Սահակյանից):

պեն 1919-ին Կ. Պոլսում լույս տեսած այս ժողովածուներն ամփոփում են գրեթե բոլոր խաղերը, խաղերգերը, ժամանցի նյութերը են[64]: Գրքույկներից առաջինում հեղինակը տեղավորել է մանկական, իսկ երկրորդում՝ պատանեկան խաղերը, այրբենական դասավորությամբ, թվով 225 հատ:

Վխիցյանի ու Չիլինգու ժողովածուներից հետո հրապարակի վրա երկար ժամանակ չի երևում և ոչ մի աշխատանք: Երկրի քաղաքական երերուն կյանքի տարինների հասկանալի պատճառով բանահավաքչական աշխատանքներն խափան դադարում են: Երկար ժամանակ մանկագիտական շրջանները չեն անդրադառնում այդ հարցերին:

---

64 Զիրունի, Արևելյան խաղաշարհ, տոհմիկ խաղեր և ժամանցներ. հատոր Ա և Բ, Կ. Պոլիս, 1919:

Միայն սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ հիմնադրվում են մանկական թերթերն ու ամսագրերը, երբ դպրոցներում առանձնակի ուշադրություն է նվիրվում երեխաների ֆիզիկական դաստիարակությանը, այն ժամանակ արդեն ստեղծվում են ռեալ պայմաններ՝ մի կողմից խաղերը գրի առնելու, մյուս կողմից դրանք ըստ մանկական հասակների վերամշակելու համար:

Սպասրան ուսումնասիրե ու տեսակետից խիստ ուշագրավ է Վ. Հացունու ծառայությունը. նա քրտնաջան աշխատանքով ի մի է հավաքել հին մատենագիրների մոտ ցրված գրեթե բոլոր տեղեկությունները և ամփոփել իր «Դաստիարակությունը հին հայոց քով» շահեկան աշխատության մեջ (Վենետիկ, 1923 թ.):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԹԻ ԽԱՂԵՐԻ ՀԵՏԱՁՈՏՈՒՄԸ

Ա. ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՏՔԵՐ

Հասակակիցների միությունների կամ հասակային դասակարգերի ինստիտուտը առհմի ներսում գոյություն ունեցող պատանեկան ընկերությունն է, որը առաջնորդվում է որոշակի կանոններով։ Այդ կանոններով պատանեկությունը կրոնաարարոյական և ռազմական դաստիարակություն է ստանում, որը կարգավորում է ածող սերնդի ներքին հարաբերությունները ու առհմի ինքնապաշտպանության գործերը։ Այս ընկերությունները մեծերի վերահսկության ներքո գաղտնի գործունեություն են ծավալում։ Այդ պատճառով դրանք անվանվում են նաև գաղտնի ընկերություններ։ Իսկ գաղտնիքը լիակատար պահպանելու համար ընկերությունները ունենում են առանձին շենքեր։ Բայց առհմում կան նաև աղջիկների տներ, աղջիկների ընկերակցություններ, որոնց դաստիարակությունը հիմնականում կենցաղային բնույթ է կրում։

Հասակակիցների միությունների ինստիտուտը հատուկ է եղել բոլոր առհմացեղային հասարակություններին։ Քանի որ ռազմական տեսակետից այդ ինստիտուտի նորմանները կարևոր դեր են խաղում ցեղերի ինքնապաշտպանության գործում, հետագայում ճնշված ժողովուրդները դրանց մնացուկները պահպանում են նաև դասակարգային հասարակության՝ սերկատիրության և ֆեոդալիզմի պայմաններում։ Գաղտնիության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք, այդ գաղտնի ընկերությունները, որոշակի դեր են խաղացել օտար լծի դեմ պայքարն ուժեղացնելու համար։

Այս ինստիտուտի բնույթի վերծանմամբ սովետական ազգագրության մեջ առաջին անգամ 1930—1940-ական թվականներին զբաղվել է ազգագրության տեսաբան Ս. Պ. Տոլստովը (տե՛ս СПТ. և Т. ДХ)։ Այժմ նրա օրինակով միության տարբեր մասերում սկսվել է այդ կարևոր պրոբլեմի հետազոտումը, որը բացահայտում է հասակային դասակարգերի մնացուկները ու դրանց պահպանման սոցիալ-քաղաքական պատճառները ավյալ ժողովրդի մեջ (ԿԶՅ են)։

Հայ ազգագրության և պատմաբանասիրական գրականության մեջ այս հարցերը տակավին չեն շոշափված։ Մենք փորձում ենք անդրադառնալ այդ խնդրին մեր ձեռքի տակ գտնվող նյութերի հիման վրա։ Առանձնապես նկատի ունենք «խան-փաշա» դրամատիկական խաղերը և ժողովրդական տոներին երևան եկող ծիսախաղերը։

Նախնադարյան հասարակության մեջ հասակակիցների ընկերակցությունների անդամներն ապրում էին հատուկ կառուցված, ընդարձակ շենքերում։ Դասակարգային հասարակության շրջանը թևակոխած ցեղերը

նման շենքերը վարձում էին։ Այստեղ ապրող պատանիների անունը տոհմն էր հայթայթում, իսկ դասակարգային հասարակության մեջ՝ ընտանիքները։ Սննդի այսօրինակ հայթայթումը պարտադիր էր։

Հայկական խաղանյութերից պարզվում է, որ այդպիսի կարգ ու կանոն է եղել նաև Հայաստանում։ Այդ խաղերի հիմնական նպատակն ուղղված է եղել խաղակից ընկերների խմբի խնջույքն ամեն տեսակ նյութական միջոցներով ապահովելուն։ Ուստի ամեն մի շրջիկ խաղախումբ հասարակության մեջ որևէ խաղով հանդես գալով իր անդամների միջոցով տներից հաց, կաթնամթերք, մանղեն, ձու, ալյուր և այլ ուտելիքներ էր հավաքում։

Սննդամթերքների այդպիսի հավաքումը տեղի էր ունենում՝ Նոր Նախիջևանում՝ կաղանդին (ՆՇ. Ա.Հ. IX, 7—8), Ակնում՝ դեկտեմբերի 31-ին (ՃՀԱ. 103), Սամսատում՝ (Ս. Արձ. 1893, № 1), Կարսում՝ (ԲՀ. ՀՇ. ձ. 162), Ուրմիայում և այլուր՝ տյառնընդառաջին, Վասպուրականում՝ ծննդյան և խաչման ճրագալույցին (Բ. ժխ. ձ.), Ջանգեզուրում՝ նույն ծննդին, որտեղ շրջողներն ունեին հատուկ «շուն թակող», որը մահակով խմբի առջևից էր ընթանում և որին հետևում էին՝ ալյուր տանողը և ձու հավաքողը (ՆՀ. Ա.Հ. IV, 106). Ախալքալաքում (Բ. ժխ. ձ.), Բարջանճում (Բրջ. 158), Վանում (Զ. 4184, էջ 86բ), Թիֆլիսում (ՄՀ. 1863, № 6, էջ 65), Ն. Նախիջևանում (ՆՇ. Ա.Հ. IX, 19) հավաքում էին բարեկենդանին, Աշտարակում (ՊՍՎ. I, 41—44), Էջմիածնում (Քաջ. Ա.Հ. VII—VIII, 125—127), Շիրակում (ԷԱԺ. I, 268—269), Ջավախքում (Ա.Հ. II, 269), Բարչալուում (ՆՀ. Ա.Հ. X, 260), Ալաշկերտում (ԷԱԺ, VI, 70), Ախալցխայում (ԺԱԲ, 9—10), Ջահարմահալում (Զ. 19) և այլուր (Ա.Դ. II, 107, Արձ. 1895, № 44, Բ. ժխ. ձ.)՝ ծպիտազարդին. Տարոնում՝ համբարձման տոնին (Բվպ. 1868. էջ 130—131). Բարչալուում՝ վարդավառին (ՆՀ. Ա.Հ. X, 267—268) կն։

Պատանիները սննդամթերքներ պահանջելիս տնեցիների մերժումները կանխելու համար անեծքի հատուկ բանաձև ունեին, որը Հայաստանի գրեթե բոլոր գավառներում նույն ձևն ուներ։

> Ով մեր փայը տա՝ պարի,
> Ով որ տա ոչ՝ սրլարի (ՆՀ. Ա.Հ. X, 260)։

Անեծքի այս բանաձևը փոխարինել է այն սպառնալիքին, որով երիտասարդական միությունները սահմանված օրենքներով իրավունք ունեին բռնությամբ յուրացնել այն, ինչ պետք էր վերցնել տվյալ ընտանիքից։ XIX դարում Կուրաչիում բռնի կերպով վերցնում էին դրամ, մթերքներ և անասուն բոլոր նրանցից, ովքեր հրաժարվում էին հասակակիցների ընկերակցությանը նյութական օգնություն հասցնել։ Երեխաներից գանձում էին 5—20 կոպեկ։ Մեծերի մոտ տուգանքները հասնում էին 20 կոպեկի, իսկ խոշոր տուգանքները՝ մինչև 3—5—10 ռուբլու։ Ամենածանր տուգանքը կովի բռնագրավումն էր։ Հատուկ խորհրդակցությամբ և ծերերին հարցում անելու միջոցով ընկերակցությունը որոշումը կարող էր խստացնել կամ մեղմացնել։ Ապա հետևում էին գանձման համար հատուկ ծիսակատարություններ, որ արտահայտվում էին նվագով ու պարերով (Шил. 156—157)։

Երիտասարդական միությունների տներում կային փոքրահասակ տղաներ, որոնք զբաղվում էին մաքրության գործերով, ճաշի նախապատրաստմամբ ևն։ Այդ բանը մեզ մոտ ամենից շատ ուշադրություն ձեռք է բերում աննպամթերքներ հավաքելու և ընկերակիցների «ակումբում» թեթև աշխատանքներ կատարելու մեջ։ Այս ծառայությունները պատանիները կատարում էին ոգևորության կարգապահությամբ, որովհետև կազմակերպությունն ինքը մարտական էր։ Այստեղից էլ հայ իրականության մեջ «մանուկ» տերմինի տակ «պատանի», «երիտասարդ ժիր», «ծպտա», «սպասավոր», «դին-



Նկ. 1. Ավելացվում իշով Թագավորի կերպարը Նվվարդում (բնագիրը՝ № 7)
Նկ. Ն. Զարգարյանի



վոր», «զորական քաջ» (ՆՀԲ. II, 206) իմաստները, որ լիովին համապատասխանում են ռազմական որևէ կազմակերպությանը։

Այդ նույն ռազմի ըմբռնումով ծիսախաղերի մեջ պատանեկան-երիտասարդական ընկերակցությունների լավագույն օրինակ են ամուսնացող (պսակվող) տղաներին ուղեկցող պատանիների (երիտասարդների) խմբերը։ Հարսանիքն սկսված օրից 3—7 պատանիներ (երիտասարդներ) սուր զենքերով և հրազեններով զինված շրջապատում էին փեսային՝ նրան պրպղեցնելու, հափշտակումից պաշտպանելու, հարսի հերանց տրնից և սրանց մերձավորներից հավ «փախցընելու» և հարսնեաուն հասցնելու, գյուղից դուրս հարսնաոի դնալիս՝ աղջկա կողմի երիտասարդների խմբերի հարձակումներին դիմագրավելու, նույն գյուղից աղջիկ պսակելու դեպքում՝ սրա հարսանեկան շորերը «հափշտակելու» և այլ նպատակների համար։

Այդ պաշտոնատարները զանազան հանդեսներում ու դավառներում ունեին իրենց հատուկ անունները։ Կարնոհայության մեծամասնության մեջ դրանք բագվորի էին կոչվում, Խարբերդում, Մուշում, Դերսիմում՝ փեսամաճուկ (ԳԲ, 1067). Արարատյան դաշտում, Լոռում, Ղազախում, Ղարաբաղում, Ջանդկզուրում՝ մակար (ՀԲԲ, 455), Խլաթում՝ մանկախիմ (ՀԲԲ, 455), Շիրակի որոշ գյուղերում՝ մոմկախիմ (ՀԲԲ, 455), Ասպարանում, Բուլանըխում, Մուշում, Բաղեշում, Ռշտունիքում՝ ազապներ կամ ազապչարի (ՀԲԲ, 455, ԳԲ, 47), որ կազմված է արաբերեն azab «ազապ-ամուրի» և թուրքերեն čari «զորք» բառերից (ԳԲ, 47)։

Ըստ Ստ. Մալխասյանցի, մակար սերմինի հին նշանակությունն էր՝ «աղջիկ առևանդելու գնացող երիտասարդին ուղեկցող ազապ ընկերներից ամեն մեկը, որոնք պաշտպանում էին նրան՝ աղջկա կողմի վարկյանց հարձակումներից» (ՄԲ, III, 238)։ Համեմատել նաև բագավոռեղբայր, փեսապբեր, փեսավեր և փեսածու բառերը, որոնք հին մատենագրության և նոր կենցաղի մեջ նշանակում են պսակվող աղայի մտերիմ ընկեր, որ նրան ուղեկցում է հարսանեկան ողջ արարողության ընթացքում (ԳԲ, 340. ՀԲԲ, 649. ՆՀԲ. II, 940. ՄԲ. IV, 495—496)։

Շիրակի Շիրվանջուղ գյուղում մոմկախիք է Թավրիզում, Ագուլիսում, Երևանում, Խոյում, Ղարաբաղում, Տրապիզոնում մակար էին կոչվում բոլոր հարսնեբները (ԳԲ, 47. ՀԲԲ, 455)։

Գրեթե նույն դիտավորություններով՝ նրման աղջկական ընկերակցություն գոյություն ուներ նաև պսակվող աղջկանը ծառայելու համար։

Հարսանեկան հանդեսների հետ շաղկապված այս երևույթները ներկայացնում են պատանեկությունից երիտասարդության (տղամարդկանց) շարքերն անցկացնելու նախնադարյան սովորությունները։ Այդ պարզ պատկերացված է ինչպես մակարթագվորցիների, այնպես էլ ծաղկոց-ծաղկվորների դործունեության մեջ, որպիսիք դանում ենք կուբաչիների «Գուլալա'-աքուբուքո'ն» (չամուսնացածների խմբի համաքույր, ժողով) կազմակերպության ծիսախաղերի մեջ (Шил. 148)։ Հենց հարսանեկան երևույթների մեջ է, որ ամենից շատ պետք է որոնել հասակային դասակարգումների հետ կապված հարցերը, որովհետև ամուսնության և հարսանիքի ծեսերն ու արարողությունները ոչ այլ ինչ են, երե ոչ պատանիներին ու աղջիկներին հասակային այս դասակարգից մեծերի դասը մացնելու մի բարդ պրոցեդուրա։ Այդ խնդրի հետ առանձին առնչություն ունեն փեսային սափրելու, լողացնելու, հարսանեկան շորերը հագցնելու, հարսին լողացնելու, մաղերը հյուսելու, պսակի շորերը հագցնելու ծեսերն իրենց հատուկ կախարդական արարողություններով ու երգերով։ Սափրման ծեսը բոլոր վայրերում միատեսակ գործողություն էր՝ մի հասակից մյուսն անցնելու

համար։ Այս տեսակետից ուշադրավ է հիշել Սյունյաց եպիսկոպոսի վկայությունն այն մասին, թե պատանի է նա, որի դեսերը երկարում են և թե այն կարելու ծեսից հետո է, որ պատանին «կտրիճ» է դառնում (ԿԴ. ՊՀ, 48)։ Դա հիմնովին կապված է փեսայի սափրման ծեսի հետ։

Ամառաթլիական գաղթի տներից երբ «սրբագործված» պատանիները վերադառնում էին, կանայք արցունք թափելով էին դիմավորում, իբրև թե մահից վերադառնային այդ տղաները (Փր. IV, 220)։

Ջավախքում փեսան սափրման ծեսից առաջ թաքնվում էր իր բարեկամներից մեկի տանը։ Այսպես նրան «գտնելիս» երգում էին. «Հա՛յ, հագուցեք, հագուցե՛ք, Տարեք խաս պաղչան թագուցեք» (Ջավ. 145)։ Իսկ հայրական տունը վերադարձնելիս նրա մայրը ճիշտ ամառաթլիական ձևով դիմավորում և համբուրում էր որդուն (Ջավ. 145)։

Փեսայի թաքնվելու և տուն վերադառնալու ծեսը լուսին համընկնում է նախնադարյան պատանեկան-երիտասարդական դպրոցի միաբյուններին հատուկ սովորույթներին։ Այդ կապով միայն կարելի է բացատրել, թե ինչո՛ւ ամուսնացող տղան այլևս չի վերադառնում իր խաղընկեր ազգականների շարքը, թե ինչո՛ւ պատանիները նրա՝ իրենց հետ ընկերակցություն անելու փորձերին ծաղր ու ծանակով են պատասխանում. չէ՞ որ այդ այն ընկերներն էին, որոնք երեկ նրա համար կին էին առևտրում, հարսնառ էին գնում, կռիվ էին սարքում այլոց հետ։ Սրանով պետք է բացատրել, թե ինչո՛ւ աղջիկներն իրենց ընկերուհուն հարս համփելու ծեսերը կատարելուց հետո նրա հետ խզում էին իրենց մտերիմ հարաբերությունները, և, տղաների նման, այդ ընկերակցությունը վերականգնում էին իրենց ամուսնակցությունից հետո։

Հարսանեկան ծեսերի մեջ հայտնի է հարսի դռան բավորի կամ սկեսրայրի ձեռքով կապկտու արարողությունը։ Այս ծեսն ապրակցության մեջ կապում են առաջին պիտերվա իրավունքի հարցի հետ։ Մինչդեռ դա առնչված է քրմական-կախարդական այն արարողությունների հետ, որոնց միջոցով պատանիները երիտասարդների շարքն էին անցկացվում։

Երիտասարդական միաբյունների սովորությունների թվին է պատկանում նաև «պապապաչ»-ի արարողությունը։ Երբ հարսնառը հարսին հոր տնից դուրս էր բերում, ազատ տղաները հարձակվում էին ապրիկների վրա և բռնությամբ համբուրում (ԳՔ, 47)։ Այդ պարտականությունն ընկնում էր մասնավորապես ապրիկ մերձավոր տղաների վրա (Սա. Մալխասյանցը սխալվում է, երբ գտնում է, թե ապրիկներին համբուրողները հարսնառ գնացած տղաներն էին լինում, ՄԲ, I, 6)։ Այս սովորույթն գաղտնիքը յուրաքանչյուր համբուրողի համար աղջիկը կին դարձնելու մեջ է, թեև մեզ տակավին պարզ չէ, թե հատկապես երիտասարդական միաբյան մեջ դա իրրև ինչ նորմա էր արտահայտում։ Արդյոք այդ գործողությունը առևանգմանը չի՞ փոխարինել, որովհետև ամուսնական ցիկլում ծիսային բոլոր համբույրները կապված են կին «ձեռք բերելու» հետ։

Յուրաքանչյուր սեռատարիքային խմբակցության հայերի մեջ ուներ իր հավաքատեղին, զրույցարանը, ժամանցի վայրը։ Մինչև XIX դարի վերջերը, նույնիսկ որոշ վայրերում, ինչպես, օրինակ, Արևմտահայաստանի հատկապես հարավային նահանգներում, հայերը պահպանում էին տղամարդկանց ու կանանց ճարկաբաժիններ։ Ընդհատումը կանանց տունն էր, իսկ դեմը և օդան՝ տղամարդկանց։ Ընդ որում, պատանիներն ու երիտասարդները մեծ մասամբ դեմում և օդայում տղամարդկանց հետ էին ժամանակ անցկացնում, իսկ տղա երեխաները, մանուկները և ամեն հատակի աղջիկները՝ բոնդրատանը՝ կանանց հետ։ Երկու տներում էլ ավազության կարգով նստելն ավանդական էր։

Բացի ընտանեկան այդ բաժանումներից, կային նաև տների հասարակական, համայնքային հատկանիշի բաժանումներ։ Այդ նույն թոնրատներից մեկը տվյալ թաղի կամ փոքր գյուղի գյուղակեսի համար ծառայում էր նաև որպես հարևանների կանանց հավաքատեղի, իսկ տղամարդկանց համար՝ գյուղի որևէ մեկի օդան, կամ վարպետի արհեստանոցը։

Տղաները, սովորաբար հավաքվում էին իրենցից մեկի դռմբ կամ դռմի օդան, մեծ մասամբ այն օդան, ուր մեծերի հասարակությունը երբեք չէր հավաքվում։ Այստեղ տեղի էին ունենում բազմաթիվ տնային խաղեր, օրինակ, լարախաղացություն և հարակից ուրիշ վարժություններ։ Այն բնակավայրերում, ուր օդան հազվադյուտ էր, դռմերից բացի հավաքատեղի էին դառնում նաև թոնրատները՝ եթե միայն կանայք չէին զբաղեցնում։ Խան-փաշա խաղերի մասնակից երիտասարդների ու պատանիների համար ևս այս օդաններն էին ծառայում որպես խաղը նախապատրաստելու տեղեր։ Այդ իմաստով օդան մի տեսակ ակումբ էր, «ազապների օդա»։

Վաստպուրականի գավառական քաղաք Շատախը, ինչպես հաստատում են պրոֆ. Ստ. Լիսիցյանի դրառած նյութերը, մինչև XIX դարի վերջերը բավական հետևողականորեն պահում էր երիտասարդական միությունների հետքերը։ Քաղաքի թաղակից-հասակակից ազանները մի ընկերակցություն էին կազմում։ Ընկերակցությունն ընտրում էր մի մեծ օդա, ուր հավաքվում էին ազատ ժամերին և կիրակի ու տոն օրերին։ Ջբաղմունքներն էին՝ խաղերը, կատակները, դուռնայով պարերը, առակներ պատմելը, քաղաքային նորությունների հաղորդումները, փոխադարձաբար դրագիտություն սովորեցնելը, կրոնական տոների համատեղ նախապատրաստությունները և այլն։

Ստ. Լիսիցյանն այս օդան իրավամբ «ակումբ» էր անվանում։ Վերջինս տարեկան մեկ անդամ իրեն համար ավագ-աղա, ինչպես նաև տնօրեն-կարգադրիչ էր ընտրում, որը «մալխա» անունն էր կրում։ Ընտրվում էր նաև ծառա, որի պաշտոնն արտահայտվում էր բղեղերն «մըջա» բառով։ Ծառայի պարտականությունն էր՝ մաքրել օդան, պատրաստել կրակը, հավաքել ընկերներին, եփել կերակուրը և ընդհանրապես կատարել բոլոր սև աշխատանքները։ Սրան ընտրում էին ազքատ ընտանիքից, որն օգտվում էր ընկերակիցների ձեռք բերած մթերքներից և դրամ-նվերներից։ Իսկ ավագ-աղան թևև ընտրվում էր առավել հարուստ ընտանիքից, բայց ընկերակցությունը հիմնական նշանակություն էր տալիս ընդունակ և նախաձեռնող անձանց։ Հսկողության տակ ընկած պատանիները մինչև 18—20 տարեկան չդառնային, օդի խոհ չէր թույլատրվում։

Ընկերակցությունը երբեմն հասնում էր մինչև 180—200 հոգու։ Երբ երեկույթներ էին ունենում, այն հարատևում էր մինչև առավոտ։ Գարնանային հավաքները տեղի էին ունենում կաուրների վրա։ Ժողովրդական տոներին և հատկապես բարեկենդանին խնջույքների համար ժողովրդից դրամ էին հավաքում։

Օդայի յուրաքանչյուր անդամ ենթարկվում էր առերես քննադատության։ Ընդունակ տղաներն աննկատելիորեն դառնում էին ազդեցիկ մարդիկ, ուստի և առաջ էին քաշվում։ Ընկերության անդամների սերտ կապերը պահպանվում էին հետագայում ևս։ Աչքի ընկածները մի տեսակ «իշխան» էին ճանաչվում։ Քաղաքային հասարակությունը չունենալով իր սեփական վարչություն, բոլոր կարևոր հարցերի լուծումը այդ «իշխանների» միջոցով էր կատարում։ Դրանք առանց մալեֆի կամ ֆմիրի մասնակցության անօրինում էին կամուրջների նորոգումը և այլն։ Ժողովուրդը գայմագամին կամ դատավորին որևէ հարցով դիմելուց առաջ խորհուրդ էր հարցնում այսպիսի «իշխաններից»։ Նույնիսկ գյուղացիները կապ էին պահպանում նրանց հետ։ Պատանի կամ երիտասարդ իշխանները նման դեպքերում

իրենց հաճախորդներից ընկերակիցների համար հացահատիկ, կաթնամթերքներ, թռչուն, այծ, հորթ էին ստանում։ Առանձին «իշխաններ» թուրքական վարչությունների աչքի առաջ դառնում էին քաղաքի վաստակական անօրինողները և գավառային ադմինիստրացիան հարկադրված էր ճանաչել նրանց (Лис. V, 80—82)։

Կա «երիտասարդանոց» հին տերմինը, որ առաջին անգամ գործածել են ասսվածաշնչի թարգմանիչները։ Մեզ թվում է, որ այդ տերմինը կապվում է հասակակիցների ընկերակցության հետ։

Հայկազյան նոր բառարանում «կրիկէս» տերմինի տակ ասված է. «Շրջափակ վայր խաղալեաց. ասպարէզ. ձիընթացք. «երիտասարդանց» (ՆՀԲ. I, 1134)։ Այստեղից պարզ երևում է, որ երիտասարդանոցները հիմնականում մարմնակրթության տրվեստին էին ծառայում։ Իսկ երիտասարդանոցները XIX դարի նյութերի համաձայն օգա-ակումբներն են եղել։

Հայ երիտասարդությունը ևս դարերի ընթացքում ունեցել է իր գաղտնի միությունները։ Շեռով սահմանված խաղերն այդ կազմակերպություններին օժանդ են գործողությունների ազատությունով. տեղական բարքերին ընդառաջելով՝ օտարներն այդ կազմակերպությունների նկատմամբ իներտ են եղել։ Որքան մեծացել է երկրի արտաքին ճնշումը, նույնքան ուժեղացել ու ավելի մարտական բնույթ են ստացել հասակակիցների միությունները։

Շատախի հասակակիցների միությունը մենք համեմատում ենք «եղբայրությունների» հետ։ Այդ խնդրով զբաղվել է պատմաբան Լ. Խաչիկյանը։

1951 թվականին Լ. Խաչիկյանը հրատարակեց իր «1280 թվականին Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը» հոդվածը[1]։ Հոդվածի հեղինակի հիմնական հետևությունն այն է, որ սոցիալ-տնտեսական երկպառակությունների հողի վրա «Քաղաքներում ստեղծվում են առևտրական ու արհեստավորական «եղբայրություններ», որոնք միավորելով նույն զբաղմունքի կամ նույն սոցիալ-տնտեսական դասակարգի մարդկանց՝ կարևոր դեր են խաղում նրանց տնտեսական ու քաղաքական կյանքում»[2]։ Այս հետևությունը բխել է «Սահմանք և կանոնք միաբանության եղբարց...» կանոններից, որի հեղինակն է Հովհան Երզնկացին։ «Սահմանք և կանոնք»-ը 1280 թվականին գրվել է Երզնկայում այդ ժամանակ գոյություն առած «եղբայրություն» կազմակերպության համար։ Կանոնների համաձայն «եղբայրության» էությունը հետևյալում է.

1. Եղբայրության անդամները մեծամասնությամբ երիտասարդ մարդիկ էին, որոնք բաժանվում էին «կրտսերների» և «ավագների» և որոնց դեկավարում էին՝ «տասին գլուխն», «քառասունին մեծն», «գլխավորք եղբարցն» և «գլուխ եղբայրությանն»։

2. Եղբայրության անդամները պարտավոր էին մինչև ամուսնությունը «անարատ կուսությամբ» մնալ և օգնել աղքատներին։

3. Եղբայրությանը հատուկ էր՝ գործել ընդդեմ «բռնավորաց» և միմյանց օգնել տնտեսապես ու բարոյական տեսակետից։

4. Եղբայրությունն ընդունում էր նկեղեցու ընդհանուր դեկավարությունը։

Երզնկայի «եղբայրությունը», նույնիսկ եկեղեցու դեկավարության պայմաններում էլ,— որ քաղաքական սիոուացիայի հետևանքն էր,—համարում ենք պատանեկական-երիտասարդական դպրոցի միությունների զարգացած մի ձևը։

Ուր որ գոյություն ունեին խան-փաշա խաղերը, այնտեղ անխուսափելիորեն գործում էին այդ կազմակերպությունները։ Այդ էր պահանջում ժողովրդի ինքնապաշտպանությունը։

Ուշադրավ է Լ. Խաչիկյանի կողմից հիշյալ հոդվածում մեջբերված Մատթեոս

---

1 «Տեղեկագիր» հաս. գիտ., 1951, № 12։

2 Անդ, 73։

Ուշադրության այն վկայությունը, որ տալած է, թե տաճարի վաճառելու համար Անտիոք մեկնած մի մեծ քարավան, կազմված 80 հոգուց, ուներ իր «մանկտավագ»-ը: Այդ քարավանն բաղ է. Խաչիկյանի, վանից է մեկնել: Այս դինվորական կարգապահությամբ օժտված կազմակերպությունը վասպուրականում նույնանում է Երզնկայի «Եղբայրության», Շատախի ընկերակցության և ամենուրեք հայտնի՝ խան-փաշա խաղերի էության (նպատակների) հետ:

Կարելի է վստահորեն ասել, որ ազատների միությունների քաղաքական գոնավորում տանտալը նույնքան հին է, որքան օտարների կողմից հայ ժողովրդի ճնշումների պատմությունը: Այդ է ցույց տալիս նաև աշխարհի գաղութացնացված ժողովուրդների պատմությունը: Այսպես, օրինակ, Սերամի արևմտյան մասում, տեղական մի ցեղ անդլիական սերտ տերության ժամանակ ունեցել է «Կակիան» կոչվող ընկերությունը:

Այս ընկերության մեջ մտնում էին հասուն պատանիները: Տեղերում ականատես լինելով այս ընկերության դիմադարձությունների, որոշ հեղինակներ,— ինչպես գրում է Ջ. Ֆրեզերը,—այն մեկնաբանել են իբրև քաղաքական լիգա՝ օտարերկրացիների դեմ պայքարելու համար (Фр. IV, 222):

Այնպես որ հասակակիցների միության դաստիարական-քաղաքական գործունեությունը ավյալ ժողովրդի հասարակական զարգացման աստիճանի հետ դրեթե կապ չունի: Այն երևան է գալիս այնտեղ, ուր պահանջվում է ցեղի կամ ժողովրդի ինքնապաշտպանությունը: Մի տեղ այդ կազմակերպության գլուխն է կանգնում քուրմ-կախարդը (Սերամ), մի այլ տեղ նրան գլեկավարում է կղերը (Երզնկա), մի երրորդում մանկտավագը (Վան—Վասպուրական), չորրորդում տանուտերը (Եղվարդ) են, որոնք միայն անունների տարբերություններ են: Հասկանալի պատճառով մենք նկատի ունենք նաև գլեկավարող-թելադրող անձանց սոցիալական կազմն ու նրա պահանջները:

Այժմ անդրադառնանք մի այլ հարցի, որն օրգանապես կապված է երիտասարդական գաղտնի միությունների գործունեության հետ: Դա պատմական մի անցք է, որ տեղի է ունեցել XVII դարում և գրի է առնվել Զաքարիա Սարկավագի ձեռքով:

Այն ժամանակ Ղարայորան (Ղարաջորան), (այժմ Աշտարակի շրջանի Արագյուղ) գյուղում բնակվում էր ոմն կալվածատեր Հապուշ-Դասիմ, որը Եղվարդի համայնքին շարունակ գլխում էր արտերը ոռոգելու հնարավորություններից: Եղվարդցիները որոշում են կալվածատիրոջ հանդեպ ինքնապաշտպան գլեսնել: Հավաքվում են տղամարդիկ ու կանայք և իրենց միտումները քողարկելու նպատակով երիտասարդներից մեկին մեծի շորեր հագցնում, գլխարկին ավել են ամրացնում (նկ. 1. բնագիրը՝ № 7), նստեցնում իշին և անվանում «Ավելագլուխ իշով թագավոր» (նկ. 2. բնագիրը՝ № 7): Ապա գյուղի տանուտիրոջ առաջնորդությամբ, խան-փաշայի երթարշավի ձևով հասնում են Ղարայորան: Ղարայորանցիներն, անշուշտ, սովոր լինելով «Ավելագլխի» խաղերը գլեսելուն, ապատամբների վրա կասկածով չեն նայում: Եվ երբ ապատամբները հասնում ու շրջապատում են կալվածատիրոջ տունը, չնայած Եղվարդի տանուտիրոջ նախազգուշացումներին, որպեսզի սպանություն տեղի չունենա, ավելագլուխ թագավորը հրամայում է. «Հարէ՛ք ասէ, և սպանէ՛ք զշունդ պայդ...» (ՋՍ, II, 118): Եղվարդցիներն սկսում են ինքնադատաստան տեսնել ոչ միայն Հապուշ-Դասիմի, այլև նրա բոլոր գործակիցների, ի թիվս որոնց և հայ քահանայի նկատմամբ. քանդում, ավերում են նրանց տները և տիրում գյուղը:

Ինչպես տեսնում ենք, ապատամբներն իրենց նպատակին հասնելու համար լիակատար կերպով օգտագործել են փաշայախաղի բոլոր ձևերը: Եվ դա պատահական չէ, որովհետև հաստատապես համոզված ենք, որ «Ավելագլուխ իշով թագավոր»-ը կազմակերպողները Եղվարդի երիտասարդների ընկե-



Նկ. 2. Ավելապուխ իշով թագավորի չքերթը Եղվարդից դեպի Ղարայորան (բնագիրը՝ № 7)
Նկ. Ա. Բեթարյանի

բակցության կազմակերպած դործն էր։ Տանուտիրոջ դեկավար պատնաչն այս արշավի ժամանակ լոկ ժամանակավոր բնույթ ոչնչ։ Դա երևում է նրանից, որ Ավելապուխ թագավորը, որն բուա երևույթին երիտասարդների մանկտավարի դերումն էր լինելու, մերժում է տանուտիրոջ խնդիրքը՝ մահվան չդատապարտելու մասին և ուղղակի հրամայում է սպանել «չշունդ զայդ»։

Կանդ առնենք այն նոր ավյալների վրա, որոնք կօգնեն մեզ լիովին համոզվելու այն բանում, որ պատանիների, աղջիկների և երիտասարդների համար, իրոք, Հայաստանում երիտասարդանոցներ են եղել, որ այդ վերջիններն ունեցել են իրենց կայուն կազմը, կանոնները, ծեսերը, սովորույթները և անունդ հայթայթելու այն եղանակները, որոնք հատուկ էին աշխարհի ուրիշ ժողովուրդների համանման ինստիտուտներին։

Մենք արդեն տեսանք Շատախի «ակումբների» օրինակով նախնադարը հիշեցնող ձևերը։ Այժմ դիմենք խան-փաշա խաղերի ավյալներին։ Խան-փաշա խաղի մասնակիցների թիվը տատանվում էր 5—30-ի միջև։ Բոլոր դեպքերում այդ անձնակազմը սիմվոլիկորեն ներկայացնում էր մարդկանց մի մեծ դանգված, ոչն Աշտարակի «Եղդյար խան» խաղի համաձայն 500-ի էր հասնում։

Խաղի անձնակազմը գլխավորողը խանն էր կամ փաշան, որին ներկայացնում էին, որքան կարելի էր, երկվության մեջ. նա միաժամանակ խան ու փաշա էր բառի պարսկական ու թուրքական առումով և հայ հայրե-



Նկ. 4. Շահի թաղիքե թագը Արևմտահայաստանում (բնագիրը՝ № 16)
Նկ. Ն. Զարգարյանի



նաևեր՝ հայկական առումով։ Այդ բանն ընդգծվում էր մինչև իսկ տարազով։

Խան-փաշայի պվհարկը պարսկական համազածում նման էր պարսիկ խանների գլխարկներին, թեև դիտմամբ այլանդակվում էր։ Այն սրածայր ու բարձր, զգզված գառակ էր Աշտարակում, վրան փաթաթած հին փալասներ կամ ճղճղված մորթուց հարմարեցրած գառակ, որի ծալքի մեջ արլորապոչ էին ամրացնում (նկ. 3 և բնագ. № 10)։ Արևմտահայերի հիշած խանն ուներ թպիքե կամ թղթե չաթալ թագ (նկ. 4 և բնագիրը՝ № 16). Գանձակինը՝ նառնկյունի, թագաձև մորթի էր, Բոբչալունը՝ թպիքե քոլոզ, Ղարադաղինը՝ փափախ։

Թուրքական փաշան սակավ դեպքերում միայն, ինչպես, օրինակ, Հայոց ձորում, ունենում էր սրածայր, բարձր պվհանոց (նկ. 5 և բնագիրը՝ № 13) և Շապին-Գարահիսարում՝ սպիտակ սվխարևնի։ Մնացած դեպքերում փաշայական բարձրաստիճ պետք վարդարում էին հարպե սակառով կամ կոդովով (նկ. 6 և բնագիրը՝ 11), չորս բոլորը փետրազարդ կճուճով (նկ. 7 և բնագիրը՝ 21), ծակծկված կավամանով (նկ. 8 և բնագ. № 14)։

Ռշտունիքում փաշայի պվհարկը փոշի և ավալ ուներ. Թիմարում դրանից բացի ունենում էր փուշի փաթաթած քոլոզ կամ ֆաս, երից գանգակ էր կախում։ Մոքսում կոնաձև մորթե փափախը ներկում—խատուտիկ էին դարձնում։ Արայի լեռան Ծաղկավանք կոչված ուխտատեղում Բաֆֆին տեսել է քրդական ձևով պվհի հարդարանք (նկ. 9 և բնագ. 8)։

Խան-փաշան որպես հասակավոր անձնավորություն, օժտվում էր երկար բեխ ու մորուքով, որոնք պատրաստվում էին այծի սպիտակ ու երկար մազերից կամ բամբակից։ Բոլոր վարիանտների համաձայն բեխ ու մորուքը երեսի հետ ալյուրոտվում էր, իսկ որոշ դեպքերում էլ, անձն անճանաչելի դարձնելու նպատակով, մրով սևացվում, այլանդակվում էր և այլն։

Խանը հագնում էր պարսկական ճղճղված աբխալուղ, թարս դարձրած մուշտակ՝ ոչխարենի կամ սամսա, ադրուտած դոտիով, երբեմն էլ ընտիր վերարկու։



Նկ. 3. Շահի կլոպարը Աշտարակում
(բնագիրը՝ № 10)
Նկ. Հովհ. Քոչակյանի

Փաշան հագնում էր ծակծկված հապո, սպիտակ, պատառոտված շալվար, որի ճղված գրպաններից նա դուրս էր հանում իր ոճրագործ ձեռքերը։ Զանգեզուրում հագնում էր կարմիր շորեր, Վանում՝ բերանը փոքր տրված տոպրակե շոր, էջմիածնի գյուղերում՝ ոտից գլուխ սպիտակ շորեր՝ շալե դոտիով, Վարանդայում և Հայոց ձորում՝ ցնցոտիներ և այլափոխված շորեր և այլն։

Խան-փաշաները երբեմն ունենում էին զանազան «շքանշաններ», «մեդալներ» և ուսադիրներ, որ պատրաստվում էին գունավոր թիթեղներից ու կտորներից: Իսկ երբեմն էլ դրանց փոխարինում էին վզերից կախ արված զանգակները, բժժոնները և ոսկրաշարերը կամ ուսերին ամրացրած ցախի խուրձերը:

Համանաբար բանահավաքները խաղի անձնակազմի հագուստա-կապուստար բավական թերի են նկարագրել: Անշուշտ, որևէ սինթեզ (հաշվի առնելով խաղի վարիանտների թելադրած տարազի դավառային հատկանիշները) կարող էր դրանց միջոցով ստեղծել թե՛ ղեկավար անձանց և թե՛ սպասարկող անձնակազմի տեղական տարազը:

Այսպիսին է նաև զենքերի նկարագիրը: Կան վարիանտներ, որոնք զենքերի մասին ոչ մի հիշատակություն չունեն: Մինչդեռ այս խաղերն առանց զենքերի անկարելի էր պատկերացնել: Նկարագրվածները, սակայն, բավարար չափով ներկայացնում են հին ու նոր զենքերի որոշ տեսակներ, որ գործ էին ածում խաղացողները:

Խաղի ղեկավար անձը՝ խան-փաշան դինվում էր մահակով, մարակով, փայտե սրով, մետաղյա սրով, դաշույնով, տարճանակով, հրացանով:

Զինվորականները և ոստիկանական բարձր պաշտոնյանները, միայն երկու վարիանտների համաձայն զինվում էին հիպոտով, նիզակով, դաշույնով ու սրով, իսկ զինվորները կամ ոստիկանական սովորին անձնակազմը՝ մահակներով, թիերով, բահերով, ցախավելներով, մարակով, դաշույններով, թրերով, հրացաններով և, վերջապես, բնագոռթներով, որոնց էլ էին լծում:

Խաղի որոշ վարիանտներ խան-փաշային ներկայացնում են իբրև սպասատավոր ու մեծափոր արարած: Գրեթե բոլոր վարիանտներում նա ծխող է: Այդ պատճառով նրա բերանը կամ ձեռքն էին դնում երկար, անճոռնի մի ճիպոտ՝ ծխամորճի փոխարեն: Սրա ծայրին երբեմն ամրացնում էին լայնաբերան մի փարչիկ, որի մեջ, ծխելու համար, չոր ծուր կամ հարդ էին լցնում (նկ. 6):

Որպես փոխադրական միջոց խան-փաշային ծառայում էին. 1. իր ծառաները, որ զարդարուն թամբին բազմեցրած՝ երկար ժամանակ ման էին ածում դյուղի փողոցներով ու խաղի հրապարակում: Աշտարակ-Փարպու մի վարիանտում Եղդյար-խանի սարսուխները նրան նստեցնում էին ավանակին և վերջինիս հետ միասին բարձրացնում խաղի հրապարակ զարձած կտուրը: 2. Պատդարակը՝ չորս կրող ծառաներով: 3. Եղնասայլը, որ զարդարվում էր ընտիր փայտերով և բիլիարթաթերով: 4. Ավանակը, որ ավելի բնորոշ ու տարածվածն էր, որովհետև «վեհաշուքին» դրա վրա թարս նստելով ու պոչը ձեռը տալով պատիվ էին անում:

Եվ այսպես. ժողովուրդը կեղծ զսպվածությամբ, արտաբինով խան-փաշային ներկայացնում է որպես պետական բարձր կամ առնվազն նահանգական գործիչ՝ պահպանելով խաղի ծեսով արդեն հայտնի դիմակավորման հին եղանակները և ավելացնում նոր ժամանակների տարազը կամ դիմակավորման նոր ձևերը:

Թեև դիմակավորման և զգեստավորումների արտիցիանները հին են, բայց ժողովուրդը հինը չդիտակցելով՝ դրանց մեջ դնում է օտար քաղաքական գործիչներին ծաղրելու հանդամանքները: Այս նույնը պահպանված է նաև խան-փաշայի շքախմբի մասնակիցների մեջ:

Այդ շքախումբը կազմված էր լինում 5—30 մարդուց: Նայած դյուղի մեծությանը, խաղի մասնակից երիտասարդների ու պատանիների թիվը կարող էր հասնել մի քանի տասնյակի:

Այս բոլորի մեջ խան-փաշայից հետո երկրորդ դեմքը, զարձյալ նայած վարիանտին, հանդիսանում էր լալան կամ լալա-վարդերը, գլխավոր ոստիկանը՝ բեկը, հատուկ բնեռերով մի մարդ, սրով ու ճիպոտով զինված. երկու զաֆթիանները՝ մեկը կազ, իսկ



Նկ. 5. «Չի խաղցուցողի» դիմակավորումը Հայոց ձորում (բնագիրը՝ № 13)
Նկ. Ն. Զարգարյանի

մյուսը՝ մեկ աչքանի, երկուսն էլ XIX դարի Բուրքական աստիկանական հագուստով. պեյպակը, որ սև բեհեզով ու փոքրիկ մորուքով մի մարդ էր, կարմիր շորերով, շալե գոտիով, դաշույնը գոտու մեջ խրած, ծոպավոր թաշկինակով երեսված պխարկ, կարմիր գլխակ, ձեռքին երկար նիզակ. դատավորը, սպիտակ բեխ ու մորուքով, երկար սև վերարկուով, բարակ գոտիով, շորը վրան փաթաթած թաղիքե պխարկով, դեղին գլխակով և նիզակավոր մի մարդ: Պետք է ասել, որ խաղի վարիանտների մեծ մասի մեջ երկրորդական դեմքերի վերաբերյալ տեղեկությունները պարզ չեն նկարագրված. հրամանատարը, գլխավոր աստիկանը, աստիկանական սարին պաշտոնյաները և այլն, նույնանման են: Այսպես, օրինակ, Աշտարակի վարիանտում ներկայացված է «կառավարիչ», որը հիպատով նզդչար խանի համար ժողովրդի մեջ ճանապարհ է բացում. Հայոց ձորի վարիանտում՝ «4—6 աստիկանական սարին աշխատող օգնականները». Վանի վարիանտում՝ «10—15 պատանիք և երիտասարդք... սատանայից և դևայ կերպարանք մտած... փաշայի հավատարիմ պաշտոնյայք..., ահռելի և զարհուրելի տեսողաց». Զանգեզուրի վարիանտում՝ «երկու շաթր-աստիկանները, որ դեմքերը գրիմով այլանդակում, այլանդակ հագնվում և զինավառվում էին». Գանձակի վարիանտում՝ մահակավոր «երիտասարդ թիկնապահներ». Մարտունու վարիանտում՝ «զինվորներ», որ զենքերի փոխարեն փայտեր էին կախկռում. Ղարադաղի վարիանտում՝ «երկու զինված թիկնապահներ». Վարանդայի վարիանտում՝ «զինվորները, որ զինված՝ ծառայում էին մելիքին և մի այլ վարիանտում՝ «Բաքչիները, որոնք պահապան աստիկանների դերն էին խաղում»: Այս զինվորների, աստիկանների, թիկնապահների և մյուսների շարքը պետք է դասել նաև այն երիտասարդներին ու պատանիներին, որոնք թեև իբրև անվանական պաշտոնյաներ չեն հիշատակվում, բայց հագնվում են պատառոտված, այլանդակ շորեր, գլխարկներ ու նույնպես ապտեկիքներ և անպայման դեմքերը մրոտում կամ ալյուրով գրիմ անում, կատարում աստիկանական-զինվորական պարտականություն:



Նկ. 6. Վանա փաշայի կերպարը (բնագիրը՝ № 11)
Նկ. Հովն. Բացակյանի

Ժողովրդի մեջ կատարած ոճիրները գրանցելու համար խան-փաշան ունենում էր անձնական քարտուղար-գրագիր, որ նույնպես համապատասխան այլանդակված հագուստ էր ունենում և գրիչն ու թուղթը ներկայացնող առարկաներ:

Խաղի մեջ պահպանված են տիրոջ դրատի սանձը քաշող կամ դրատը վարող և այլ մանր ծառայություններ կատարող, գրիմված ու զինված ծառաներ, ինչպես նաև մունետիկներ, կամ կատարածուներ, որ նույնպես գրիմված ու զինված էին լինում: Մունետիկի պարտականությունն էր՝ նախապես հայտարարել «վեհապետի» և նրա շքախմբի այցելությունը: Աշտարակ-Փարպիի վարիանտի մունետիկը դիմելով սպասող հասարակու-

թյանը, ասում էր. «Արդ անեմ Աշտարակու էլ ու հասարակությունին, որ մեր Փարպու տերը՝ ղոշաղների ղոշաղ Նպղար խանը իր նազիր-վեզիրներով, իր նոքար-փեքյարով,



Նկ. 7. Փաշայի գլխարկը Մարտունիում
(ընագիրը՝ № 21)
Նկ. Հովհ. Բացակյանի

հինդ հարիր մարդով գալիս ա ձեր սուփրեն շեն անելու, մեր բարեկամությունը հաստատ պահելու։ Նրա հրամանն ա, որ սաղ գեղով, իշխաններով դուրս գաք նրա առաջը»։ Գլիբը, չուխը (կատարածուն) և նմանները կատարելով շահական կարգադրություններ, համատեղության կարգով նաև մունետիկներ էին։

Խան-փաշա խաղերում պահպանված են օտարների կողմից հայ լրտեսներ հավաքադրելու ձևերը (նկ. 18—5, 22—3)։

Շահ-փաշան խաղի ընթացքում իր տվրության համաձայն նախապես նշանակած այդ լրտեսներին հարցուփորձ էր անում. իմանում էր գյուղի անցուդարձի, պետության «հակառակորդների» ով լինելու, զեղծումներ կատարողների և այլոց անունները և սկսում էր ճերմերների ու կղզոպատների ձևեր կատարել։

Խաղախումբն ունենում էր մի դրոշակ, որը կրելու համար կային առանձին պատասխանիներ։ Վանի վարիանտում ասված է. «Ով Թորվան փորատիկ անթրոցի ծայրն անցուցած իրրև դրոշակ տղային մեկ[ը] փաշայի առաջ[ից] բաշեր»։ Մի ուրիշ վարիանտում շահն ինքն է կրում այդ դրոշակը։ Աշտարակի մի վարիանտում խանին դիմավորող երեխաները են, որ դրոշակ են պարզում։


Իբրև հին ռազմական փողահարներն պաշտոնակատարներ, խաղախմբի անձնակազմից դրեթե ամենուրեք անբաժան է նվագախումբը՝ գավոլ զուռնան, որը ոչ միայն շքախմբի առաջնորդողներից մեկն էր, այլև բոլոր ընդմիջումների ժամանակ հրճատասարդությանը խաղ ու պարերով զբաղեցնողը։

Խան-փաշան ուներ իր շքախմբի շարժման կարգը, թեև այդ կարգը թերի նկարագրությունների հետևանքով ոչ բոլոր վարիանտներում է պահպանված։ Հավաքատե-



Նկ. 8. Պարսիկ խանի կերպարը Արծվանիկում
(ընագիրը՝ № 14)
Նկ. Հովհ. Բացակյանի

ղերից դուրս գալու ժամանակ խաղախումբը որքան մեծ անձնակազմ էր ունենում, նույնքան լավ էին պահպանվում այդ ձևերը (Աշտարակ—Փարպի, Վան—Տարոն)։



Նկ. 9. Խանը Մադավանքում (ընդլիրը՝ № 8)

Նկ. Ն. Զարգարյանի



Ի մի բերելով բոլոր վարիանտների թվարդած դասավորման ու շարժման ձևերը, ստանում ենք հետևյալ պատկերը։

Մունեմիկ } Երբեմն նույն ֆունկցիան-
Գվիր } րով։

Դեռշակակիր —

Նվագախումբ —

Ծառա — որ փաշայի դրասան էր քաշում։

Փաշա-խան — 1. Թախտին նստած և չորս ծառաների ուսերին բարձած։ 2. Սայլով։ 3. Ավանակով։

Ծառա — Դրասոը վարող և այլ ծառաներ։

Ջինվորներ } Նույն ծառայի ֆունկ
Ոստիկաններ } ցիաներով։

Երեխաներ — Որ լինում էին պաշտոնական ու պրիմված և կամ անպաշտոն, առանց պրիմի։

Գյուղական վայրերը հնագույն ժամանակներից ի վեր ունեցել են իրենց համար հարմար երեք տիպի հրապարակ։ 1. Որևէ հարի տարածություն, որը պատկանել է համայնքին կամ հասարակությանը՝ որպես ընդհանուր սեփականություն (մարզպետին, գյուղամիջյան բաց տարածություն, նախրաքաշ, արոտատեղի, եկեղեցական բակ և այլն)։ 2. Տան կուր, որն իր ընդարձակությամբ և հարթությամբ ծառայում էր սպորտային ու ծիսային խաղերին։ Այսպիսի կրատուրները տրադիցիայով գյուղերում միաժամանակ ծառայում էին հասարակությանը որպես տղամարդկանց դրուցավայր և ընդհանուր ժողովատեղի, որպես երիտասարդ տղաների հավաքավայր, խաղավայր (կոխ, լախտի, խոյի գլուխկոնծի, ձեռքով խփելու դընդակախաղեր, դամախաղեր և այլն)։

Ահա այդպիսի վայրերն էին, որ խան-փաշայի համար ևս ծառայում էին որպես ընդարձակ խաղատեղեր։ Դրանցից ամենահարմարը գյուղի միջի բաց տարածությունն էր, որովհետև դրա հրապարակի շրջապատի տների կտուրներն ու այլևայլ բարձունքները հարմարավետ տեղեր էին դիտողների, մանավանդ կանանց ու երեխաների համար։

Մեր ձեռքի տակ եղած նյութերի համաձայն, դրսի ամեն տեսակ հրապարակների, կտուր-հրապարակների և տուն-սենյակ խաղատեղիի մասին են վկայում մի շարք վարիանտներ։ Կային և փաշայախաղեր, որոնք հիմնական կայան չունեին. այդ դեպքում խաղախմբերը շրջում էին սեփական և հարևան գյուղերի փողոցները, գյուղամեջն ու տները։

Տրադիցիայի համաձայն, մոտիկ գյուղերի խաները ու փաշաները իրենց խմբերով գուրս էին գալիս երկու գյուղերի միջև ընկած հրապարակները՝ կռվելու և ապա համատեղ խնջույք կազմակերպելու։ Այդ պարագայում նրանց համար հրապարակ էր դառնում հենց այդ վայրը, ընդ որում տվյալ խաղախմբերը երբեմն կարող էին նախապես հանդես գալ իրենց գյուղի հրապարակում, ապա միայն դիմապրավել հակառակորդին։

Խաղային հրապարակներում խան-փաշայի խաղախմբերի դասավորությունը ոչ բոլոր դեպքերումն է հատակ նկարագրված։ Ուստի մենք աշխատեցինք մոտավոր ճշտությամբ վերարտադրել նաև այդպիսիների դասավորության ձևերը։ Ինչպես ցույց են տալիս գծագրումները, բոլոր դեպքերում խաղացողների դասավորությունը մի ընդհանուր նմանություն ունի։ Բոլոր պարագաներում դասավորության մեջ կարդացվում են նախնադարյան հասարակական հարաբերությունները իրենց բնորոշ կողմերով, սոցիալական-ֆեոդալական հարաբերությունները իրենց բնորոշ կողմերով, մինչև իսկ կապիտալիստական հարաբերությունները իրենց բնորոշ նշաններով։

Ինչպես այս խաղերի նկարագրությունները, այնպես և ազգագրական այլևայլ օժանդակ նյութերը խաղերի ժամանակ հանդիսատես-հասարակության կազմի մասին բավական պարզ պատկերացում են տալիս։ Պարզ երևում է, որ 1. խան-փաշա խաղի (կռվի) դրսևորումը հարևան գյուղերի միջև ընկած

տարածության վրա՝ ենթադրում է կանանց իսպառ բացակայությունը կամ մասնակի մասնակցությունը։ 2. Երբ խաղը կազմակերպվում է դյուղի հրապարակում, բակում կամ կտուրի վրա հասարակությունն իր բոլոր հասակներով և սեռերով լիակատար հանդիսատես է դառնում. այդպես է նաև դյուղի փողոցներից խան-փաշայի շարժման կամ նրա շրջիկ խաղերի ժամանակ։ Այս դեպքում հրապարակի մերձավոր շրջապատը տրամադրվում էր երեխաներին (պատանի տղաներին), երիտասարդներին և տղամարդկանց, իսկ հաջորդ օղակը՝ շրջապատի բարձունքները ու կտուրները՝ կանանց ու մանր երեխաներին։ 3. Օդաներում կամ լուսամուտավոր սենյակներում կազմակերպվող խաղի դիտորդների մեջ գերակշռողը տղամարդիկ են (խոսում է տղամարդկանց հարկաբաժնի վերաբերյալ իրավունքը)։ 4. Բոնրատանը, մասնավորապես հարսանիքի ժամանակ հանդես եկող փաշայախաղի հանդիսատես են դառնում ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք (մի նշան՝ կանանց հարկաբաժնի վերաբերյալ իրավունքի մասին)։

Շատախի ընկերակիցների միությունն ուներ իր հատուկ կազմը, բաղկացած 150—200 հոգուց։ Մենք տեսանք, որ խան-փաշա խաղացողների կազմը թեև 30-ից չէր անցնում, բայց մուսեհիկների հայտարարությունների համաձայն, դիտավորյալ չափազանցումով, հասնում էր մինչև 500 հոգու։ Պետք է նշել, որ խաղի միջոցին խան-փաշաները հանդուրժում էին, որ բոլոր պատանիները և պատանեկության տարիքին մոտ բոլոր տղաները կազմեին շրթթի վերջին մասը։ Դրանով իսկ խաղացողների կազմը մի քանի տասնյակների էր հասնում։ Օդան թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում ընդհանուրի «ակումբն» էր։ Շատախի միությունն իր ներսում ուներ զեկավար կորիդ՝ իշխան, որին խան-փաշաներում փոխարինում է խանը (փաշան), անօրեն կառավարիչը։ Մյուս անձնակազմը թե՛ Շատախի երիտասարդական միության և թե՛ խան-փաշաների մեջ մի խումբ է, որ զինվորների նման ենթարկվում է «վերնախավին» կարգադրություններին։ Երկու դեպքում էլ այս վերնախավի ընտրությունը տեղի էր ունենում տարին մեկ անգամ։


Խան-փաշաների անձնակազմի զբաղմունքները նույնպես բավական նման են Շատախի միության և Երզնկայի «եղբայրության» անդամների զբաղմունքներին. երկու տեղումն էլ խաղերը, կատակները, ժողովրդական տոների համար նախապատրաստությունները, պարերը և այլն, մի ընդհանուր սովորություն էին։ Ինչպես Շատախի ընկերակցության, այնպես էլ խան-փաշայի համար նյութական միջոցների հայթայթման եղանակը նույնն էր. նրանց ժողովուրդն էր ապահովում։ Երկուսի մեջ էլ ինքնաքննադատությունն ու քննադատությունը մի սկզբունք էր, որին հնազանդվում էին ոչ միայն անձնակազմի անդամները, այլև տեղական վարչական օրգաններն ու ժողովրդի այն մասը, որ համայնքի նկատմամբ անբարենպաստ դիրք էր գրավում։ Այդ քննադատության միջոցով երկուսն էլ ձգտում էին համայնքի կամ հասարակության նկատմամբ հոգատար լինել, թերությունները վերացնել և մարդասիրական գործունեություն ծավալել։ Երիտմիությունների այս ոգին, մենք տեսնում ենք XIX դարի բոլոր վայրերի մարդասիրական ընկերությունների գործունեության մեջ, որը պետք է համարել նախորդի բնական զարգացումը։


Շատախի հասակակիցների ակումբի և խան-փաշաների տարբերությունները շատ չնչին էին։ Եթե առաջինի մեջ մենք տեսնում ենք հարատևություն, որ բնական էր, երկարդի մեջ այն տեսանելի ու շոշափելի է միայն մեկ երկու օր։ Այս կարճ ժամանակամիջոցում խան-փաշաները խիստ օրինաչափորեն կրկնում էին տարվա ընթացքում կատարվող այն բոլոր պրոցեսները, որոնք հատուկ էին հատատաուն կազմակերպություններին։

Տղամարդկանց այս միությունների թե արտաքին ձևերը և թե ներքին կարգ ու կա-



Նկ. 10. Եղգյար խանի մուննաիկը Աշտարակում (բնագիրը՝ № 9)
Նկ. Ն. Զարգարյանի





Նկ. 11. Կուբաչինների գուլա՛-աքու-քու՛ք-ի անդամների դասավորության սխեման խաղի հրապարակում

1. Բիկ-խալե՛լը (ժամի պտույտ, այսինքն՝ մուխյան պլխավոր դեմքը) և նրա տեղակալը, 2. Թումանա՛-խալե՛լինները (զրամով ավագները) և նրանց տեղակալները, 3. Բիկալյա՛-խալե՛լը (կրտսերը) և նրա տեղակալը, 4. Բիկելաե՛նք (կրտսերները), 5. Մանդո՛ւշ (արարողապետ), 6. Նվագողներ, 7. Դրոշակիներ, 8. Ծառաներ, 9. Շահը և նրա կինը, 10. Շահի շքերթի մուտքը հրապարակ

նոններն իրենց ամբողջությամբ լիովին համընկնում են Հյուսիսային Կովկասում ավելի լավ պահպանված կուբաչիների տղամարդկանց միության ընդհանուր հատկանիշներին։

Կուբաչիի հիշյալ միության անդամները գյուղի մեջ հայտնի ծաղրածուների օգնությամբ կազմակերպում էին «Շահ» կոչված խաղը, որ հայկական «խան-փաշա» խաղերի կովկասյան մի այլ վարիանտն էր։ Ինչպես շահը, այնպես էլ նրա օգնականները այդ խաղի մեջ կին էին ունենում, որոնց դերակատարները տղամարդիկ էին (Шил. 160)։ Խաղի պրոցեդուրայի մեջ մտնում էին կին առևանգելու սովորությունները (Шил. 160—166), որով խաղային դվարճանքները վեր էին ածվում կատակակռիվների (Шил. 166)։

Հայկական խան-փաշաների և կուբաչիների «Շահ» խաղի՝ խաղային հրապարակում դասավորվելու ձևերը բավական նման գծերով են օժտված։ Մի հանգամանք, որ դրանց կովկասյան վարիանտ լինելը լիապես վավերական է դարձնում (նկ. 11)։

Խան-փաշաների և այլ երկրներում տղամարդկանց գաղտնի միությունների ընդհանրությունն ընդգծող փաստերից մեկը, իբրև հասարակական զարգացման նույն էտապի արդյունք, զգեստավորման, դիմահավորման և զինավառման նույնությունն է։ Վերևում մենք արդեն նկարագրեցինք խան-փաշաների տարազը և զենքերը, որից երևում է, որ դրբանք հիմնականում առօրյա տարազից միանգամայն տարբեր բաներ են, թեև վերջին երկու հարյուրամյակում մեզ ներկայանում են որպես պարսկա-թուրքական տարազաձևեր։ Ամեն մի կախարդ պետք է զգեստավորմամբ ու զինավառմամբ խստորեն տարբերվի բոլոր մահկանացուներից, պետք է պատկառանքի ու ահի զգացմունք առաջացնի դիտողների մեջ։ Այդ արտակարգությամբ միայն հնարավոր է դառնում կախարդությունը, և այն բոլորը, հանուն ինչի կատարվում են ծիսային արարողությունները։ Բոլոր պարագաներում հագուստի նյութերը վերցվում են կենդանիների, թռչունների ու բույսերի աշխարհից մասերից և, նայած տոտեմիզմի ավյալ վայրի հատկանշական կողմերին, նմանեցվում են տոտեմներին, ինչպես նաև նախնիների պաշտամունքի հիման վրա՝ վերջիններիս սիմվոլներին։

Այսպես, օրինակ, խան-փաշաների զգեստի նկարագրության մեջ մենք հանդիպում ենք տոտեմների տարբերանշանների՝ կենդանիների ոսկորների, մորթիների, թռչունների փետուրների և այլն։ Այդ բանը հատկապես երևում է դիմակավորման և զլխահարդարանքների մեջ, որոնք տղամարդկանց գաղտնի միությունների կապակցությամբ մեր բարբառներում պահպանված մի շարք տերմինների ու արտահայտությունների հետ անմիջական կապ ունեն։ Ճիշտ է, խան-փաշաների դիմակավորումը կատարյալ չէ, որովհետև դիմակը փոխարինել են մրով ու ալյուրով այլանդակելու եղանակներով, բայց բոլոր տարրերը՝ զլխարկը, բեխ ու մորուքը և այլն, երբեմն դիմակի փոխարեն են գործածվում։ Այդ պատճառով էլ խան-փաշայի դիմակավորումը համեմատելի է կուբաչիների «Շահ» խաղի մասնակիցների դիմակավորման հետ։

Կուբաչիների սոցիալական կարգերն ուսումնասիրող Ե. Մ. Շիլինգը 1925 և 1936 թվականներին այդտեղից հավաքել է պահպանված դիմակների մի կոլեկցիա (Шил. 161)։ Այդ դիմակները պատրաստվում էին գլխավորապես թաղիքից, որի ֆոնի վրա սպիտակ գծերով նախշեր էին ձևավորվում։ Երբեմն գլխի դագաթամասում, որպես խոպոպ-դաջուլ, օգտագործում էին կովի պոչը, կամ ձիու մազերի փունջը (Шил. 161—164)։ Շահի դերակատարի համար դիմակը պատրաստում էին երկաթից, որն արտաքինից խիստ նմանեցվում էր մարդկային կերպարանքի (Шил. 165, նկ. 74)։

Ինչպես խան-փաշայի մի մասի, այնպես էլ առհասարակ հայկական շատ կատակախաղերի մեջ, ուր հանդես են գալիս առասպելական և դիցաբանական հերոսներն ու աստվածությունները, զլխահարդարանքները

ղգալի չափով ինտիմից են պատրաստվում։ Կոնաձևությունը, սրածայրությունն ու ինք դիրքը սրական հերոսների խաղերն պլոտարկների հիմնական հատկանիշն է։ Իսկ հնագույն ժամանակներում հայկական դիմակները մեծ մասամբ կաշվից էին։ Կաշվե դիմակի մնացորդներն ուսերին և գլուխներին հարմարեցնելը և այծենուց բեխ ու մորուք պատրաստելն առավելապես տոտեմների հետ է առնչվում։

Խան-փաշա խաղերի այդ դիմակավորման ինքնին կապվում է պատանեկության ազանների ազամարդկանց դասը անցկացնելու ազապների միության ծեսերի հետ։ Այս պարագայում մենք նկատի ունենք մասնավորապես բարբառներում պահպանված «երես առնել», «կաշվից դուրս գալ», «դոդոլ»— «բոխոլ»—«բոխոլոճ»— «խոզոլա», «չըվնն թռած», «առվե թռած» տերմիններն ու արտահայտությունները։

«Երես առնել» («երես առել, աստառ կուզե», «երես առած ազա է», «երես առած ազջիկ է»), նշանակում է անպարկեշտ լինել։ Տերմինի նոր մեկնաբանությունը պահանջում է անջատել նրա հետագա իմաստաբանությունը, որ անկասկած քրիստոնեության մուտքով է բացատրվելու։ Այս դեպքում մենք կունենանք մի տերմին, որը մեզ հաղորդակից կանի նախնադարյան սովորույթներին։ «Երես առնել» նշանակում է դիմակավորվել, նախնադարյան ազամարդկանց միությունների հանրակացարանների բնակիչներին մի հասակից մի այլ հասակի անցկացնելու ծեսը կատարել, «երես տալ»։ Դա տոտեմի՞ կերպարով էր, թե՞ մի այլ կերպարով, մեզ չի խանգարում, որպեսզի դրա տակ մենք ըմբռնենք հասակային անցման ծեսը։

Կասկած չկա, որ Հայաստանի երիտասարդանոցներում (գաղտնարաններում) պատանիներին նույնպես չարշարանքների էին ենթարկում։ Գոյություն պետք է ունենային այնպիսի երևակայական հրեշներ, որոնք որոշում էին նրանց մահը և հարությունը։ Այդ գազան հրեշները Հայաստանի բոլոր վայրերում ծառայում էին վախեցնելու համար։ Դրանք Արարատյան դաշտում կոչվում էին բոբող (ԱԲԲ, 110), Շիրակում՝ բոբոն (ԱԲԲ, 110), Տարոնում և Ալեքսանդրապոլում՝ բոբիլ (ԱԲԲ, 110. ԳԲ, 200), Երևանում՝ բոբո (ԳԲ, 200), Թիֆլիսում՝ բողոլա (ԳԲ, 200), Վանում՝ բոլոլան (ԳԲ, 200), Թավրիզում՝ բոբոխ (ԳԲ, 200), Ախալքալաքում՝ բոխոլոճ, որ Հր. Աճառյանի կարծիքով ծագել են «միջատ» բառից (ԳԲ, 200—201)։ Այս բացատրությունը հին իմաստը չի ընդգրկում։ Երևակայական հրեշը պետք է, որ պատկերացվեր որևէ գազանի, այսինքն՝ տոտեմի պատկերով։ Երկու դեպքումն էլ դրանք արտահայտվելու էին դիմակներով, ինչպես այդ տեսնում ենք շատ հին Հռոմում, ռեսպուբլիկայից հետո, ուր նախնու պատկեր-դիմակով երեխաներին վախեցնելու սովորույթն է եղել (Игры древних, 15)։

Բոլոր դեպքերում «երես առնելը», ինչպես երևում է, կապ ունի ամուսնության ծեսի հետ։ Այս իմաստով էլ պատանին ազամարդ է դառնում, վերջիններիս հետ հաշվի է նստում, ուստի և «երես առած երեխա» ասելով լեզվին հասկանում ենք մեծերի գործերին խառնվող, մեծերին անհանգստացնող և այլն։ Իսկ «երես առած երիտասարդ» ասելով անպայման հասկանում ենք ամուսնություն տեղաշարժող ազա, որ և անամոթ։ Այդ նույն արտահայտության տակ երիտասարդի՝ հասարակական գործերի մեջ խառնվելը նույնպես վաղաժամ համարվող մի բան է, ուրեմն և նրա համար անմատչելի է։ Դրա համար էլ երբ «երես առնել»-ն ըմբռնում ենք հին իմաստով, հասկանում ենք դիմակը՝ որպես իրավունքի «փաստաթուղթ», որով արեկվա պատանին այսօր երիտասարդների շարքն է անցնում։

Արդյո՞ք այդպիսին չէր անահիտյան տաճարներում աղջիկների՝ աստվածուհուն ծառայելու և անձնատուրության ծեսը, որպիսի պրոցեդուրան անցնելուց հետո միայն, որ պատիվ էր բերում նրանց, կարող էին անցնել երիտասարդ կանանց դասը։ Այդ ծեսի

մեջ պիտի տեսնել ինչ որ մի նոր ստրիճան, որից հետո միայն իշխող դասերը պետք է որ սահմաններին առաջին դիշերվա իրավունքը, այսինքն՝ շարունակելին տաճարային սովորությունը՝ սոցիալական հնարավորությունների գործադրումով։ Այս առումով էլ Անահիտին ծառայող քուրմ աղջիկների անձնատուրության հարցը ազգագրության մեջ լոկ կրոնական հետևությամով բացատրելը միակողմանի է (ԷՀԾ, 87. ՅՄ. I, 223)։

«Կաշվից դուրս գալ» արտահայտության ներկա իմաստն է՝ իր չափը չճանաչել (ԱԲԲ, 330)։ Այս հետևագույն առումը նշանակում է նաև՝ ուժից վեր աշխատել։ Իսկ նախնական իմաստը պետք է հասկանալ՝ շտապելը, ժամանակից շուտ իր հասակակիցներից քաժանվելը, շատ հավանորեն՝ ծիսային դիմակից (գուցե նաև ծիսային կաշվե հագուստից) դուրս գալը, ծեսով նախատեսված արարողությունից դուրս գալը,—իր նախկին հասակային դասակարգումից նոր դասի մեջ մտնելը։ Հետաքրքիր հակառակն է «կաշվումը մրնալ»-ը, որ ներկա առումով նշանակում է չափը ճանաչել (ԱԲԲ, 330), իսկ հնով՝ իր դերի մեջ մնալ, կաշվի դիմակի մեջ մնալ։

Համանման իմաստ ունեն նաև «չըվնե թռած», «թռկե փախած» արտահայտությունները, որոնց արդի նշանակություններն են՝ դող, ավազակ մարդ (ԴԲ, 886), ամեն տեսակ վտանգների մեջ ընկած ու ազատված չարաքած (ԱԲԲ, 217)։ «Աշխարհ չվան դնել» խոսքի տակ հասկացվում է շատ նեղություններ կրել (ԴԲ, 855)։ «Կովի նման չվանը պակաս կապել»—նշանակում է աղջկանը շատ փակ պահել, չթողնել, որ նա ազատ ապրի» (ԴԲ, 885), իսկ «առու թռած» նշանակում է պոռնիկ կին (ԱԲԲ, 58)։

Սրանց հին իմաստները բխել են պատանիների և պատանուհիների գաղտնի միությունների սովորություններից։ Անտարակույս է, որ հայերի մեջ երիտասարդանոցներում և աղջիկների տներում դասից-դաս անցնելու համար եղել են սպորտային այնպիսի ձևերի կիրառման սովորություններ, որոնք կապվում էին չվանախաղերի, ինչպես նաև դեռևից թռիչքներ կատարելու հետ, որպես անցման ծեսի արարողության (սպորտային մրցում)։

Թվենք մի քանի խաղի անուն, որով կհատատավեն այդ դրույթները։ Այսպես՝ «Գաիր ընկեր»-ը և «Կենտ լախտի»-ն, որոնց մեջ անհատը տատասում է. «Ուժփորձուկ»-ը որեղեկ հաղթողի ծնողներին կատակով առաջարկում են տղային ամուսնացնել. միայն «փեսայի քար»-ը վերցնող փեսացուն իրավատու է ավյալ աղջկանն այցելել և այլն։

Թվում է, որ այս և նման խաղերը երիտասարդանոցներում եղել են որպես ուժփորձնական պատանիների համար, իբրև քննություն՝ հասակային մի դասից մյուսն անցնելու, ամուսնության իրավունք ստանալու համար։

Գուցե հին Հայաստանում եղել են նաև նախամուսնական մերձավորման սովորություններ (համմտ. անահիտյան հետևանքը), որոնց համար էլ «չըվնե թռած»-ը կամ «տավի թռած»-ը, լինի տղա թե աղջիկ, բառացի նշանակում է կենակցած, ամուսնության փորձ ունեցող։

Պատանեկությունից երիտասարդության շարքերն անցնելու սովորություններ են պահպանված նաև ծաղկազարդին տեղի ունեցող պատանեական մի քանի խաղ-արարողությունների մեջ։

Վարանդայում ծաղկազարդի դիշերը երիտասարդների ձեռքով եկեղեցի տեղափոխված ուռենիների ճյուղերի վրա մոմեր էին վառում (նկ. 43), որոնց շուրջը երեխաները, ճոռան ու չիկչիկան էին ածում։ Քահանայի կողմից օրհնված ուռենու ճյուղերը ժողովուրդը խլխլում և տուն էր տանում (ել. Ա.Հ. III, 344—345)։ Նույնը տեղի էր ունենում Ջանգեզուրում (ել. Ա.Հ. IV, 109) և ամբողջ կարնոհայության մեջ (Ա.Մ. Փ, 268. ել. Ա.Հ. II, 268)։

Աշտարակում ծաղկազարդին 15 տարեկան երեխաները եկեղեցում փառք ի բարձումի պահին ճոճանակ էին ածում և օրհնած

ուսի ճյուղեր տանում՝ անները ման դալու համար (ՊՍվ, 41—44)։ Վանի պատանիները կանդնում էին եկեղեցու դռանը, աջ ու ձախ կողմերում և ներս մտնող աղջիկների ու հարսների պլխավերևը կարկաչա էին ճոճում և երգ արտասանում. երբեմն կարկաչալով նրանք խփում էին աղջիկների ու հարսների պլխին, առանց հանդիմանության արժանանալու (Ջ. 4184, էջ 99բ—100ա)։ Բասենում և Դավալուում երևելիները շրջելիս ունենում էին ծայրին օղակ շինած ուռի ճյուղեր (Քաջ. Ա.Հ. VII—VIII, 127)։

Ճոռան-ճչանակների հետ կապված մի քանի սովորություններ կան նաև հայկական «աչքակապուկ»-ների և նման խաղերի մեջ։ Արծվանիկի «Քլորքոռի» խաղի մեջ աչքերը կապած երկու պատանիներից մեկը ձեռքին ծանրներ ունենալով 25 սմ երկարությամբ փայտի վրա մի այլ փայտիկով ճոճոացնում էր, որ մյուսն իրեն դաներ-խփեր։ Փայտի փոխարեն երբեմն գործ էին ածում բոժոժներ կամ զանգեր (Ազգ. 1885, № 3, էջ 134)։ Փայտի կամ զանգի փոխարեն որոշ տեղերում ձայն էին տալիս, որ դիմացինը գաներ (Ախ. II, 265—266)։ Այսպես կոչված կույր խաղերի սիրին են պատկանում հեքիաթներում հիշվող այն խաղերը, որոնք կատարվում են խորթ մոր ձեռքով քարանձավների տարված երևելիների և գազանների միջև՝ զանգի օգնությամբ։ «Սատանի չրխչրխ» և մի շարք այլ անուններով խաղերի ժամանակ աչքերն ուրիշի կողմից բռնված պատանին պիտի գուշակի, թե իր մոտակայքում քարով քարին խփողը հակառակորդ խմբի ո՞ր անդամն է (Լ. ԺՄԽ, 21—22)։

Հայտնի է, որ ծաղկազարդը զատկի նախընթաց կիրակնօրյա տոն էր, զարնանային արմավենիների տոնը։ Այսպես էր կոչվում նաև համբարձման հաջորդ կիրակի օրը։ Ժողովրդական տոնակատարությունը մասնավորապես կատարվում էր արմավենիների տոնին և հայտնի էր ծաղզարդար անունով։ Այդ պատճառով էլ ուռենին զարդարուճ էին։ Թե մեկ և թե մյուս դեպքում ծաղկազարդը կապված էր հարության գաղափարի, իսկ ավելի նախնական առումով՝ բնության մեռնող և հարություն առնող աստվածության հետ։

Հնադարյան կենցաղավ ապրող ժողովուրդների մոտ մենք գտնում ենք դրեթե այս ծեսերին հար ու նման արարողություններ, ուր մեռնողը և հարություն առնողը մարդն է՝ երիտասարդության դասն անցնող պատանին։

Հարավային Նոր Ուելսում պատանիների շարքից տղամարդկանց շարքը դասելու համար տղայի առաջ հանում և նրան նոր անուն էին կնքում (Ռնգխի կամ Ռնգխիբոն ցեղ)։ Առաջը հանելու արարողության ժամանակ օդում ձայներ էին հանում մի հատուկ գործիքով, որ Bull Boarer էր կոչվում։ Դա սրբազան ճոռան-ճչանակն էր (Փր. IV, 216—219), որի դերով ու ձևով լիովին համեմատվում է հայկական ճոռան-կարկաչա-ճոճանակի հետ։

Նոր Գվինեայի ցեղերի մոտ պատանուն բլիթատման ծեսից հետո շևդրաքաշում էին, որպեսզի ոչ միայն կանանց հետ հարաբերություն չունենար, այլև նրանց երեսը չըտեսներ։ Այդ պատճառով տեղափոխում էին դաղտնարան-շվաքարանը, որը ներկայացնում էր հրեշի արգանդը։ Բուժումից վերադառնալիս պատանիների (այժմ արդեն երիտասարդների) աչքերը կապում էին, կամ նույնիսկ կավիճով էին պատում, որ հաջորդ օրը միայն բանային (Փր. VI, 220)։ Նոր Գվինեայի բոլոր ցեղերը հիշյալ ճչանակին նույնպես Bull Boarer անունն էին տալիս։ Այդ նույն անունն էին տալիս նաև հրեշին, երը, իբր, բլիթատվողին էր նայում. սրա երևակայվող գոռոցը ներկայացվում էր ճչանակի խուլ բզզոցներով (Փր. IV, 220—221)։ Ըստ այդ ցեղերի՝ նույն Bull Boarer-ը նախհինների նյութականացումն էր, որի համար էլ կանայք և չորքագործվածներն այն երբեք չպետք է տեսնեին (Փր. IV, 221)։ Հոլանդական Նոր Գվինեայում Կայա-Կայա ցեղի մեջ սրբազան ճոռանի անունով էր կոչվում նաև այն միֆական հսկան, որը, երևակայու-

թյան համաձայն, հայտնվում էր տարին մեկ անգամ հարավ-արևելյան մուտքի հետ։ Երբ հսկան հայտնվում էր, նրա պատվին տոն էին անում և տղզացնում սրբազան ճառանները։ Ծեսով պատանիներին հանձնում էին այդ հսկային, որը նրանց խփում էր, բայց, լինելով մեծահոգի, հսկան նրանց նորից կյանքի էր կոչում (Փր. IV, 221)։

Սերամում Կակիան կոչվող միությունում վիրահատված պատանուն գաղտնարան-շվաքարան էին տեղափոխում աչքերը փակած վիճակում։ Այստեղ ոգիները պատանիներին մեղցնում և հարություն էին տալիս (Փր. IV, 222)։ Այդ շվաքարանից էր, որ պատանիները դժոխք էին գնում և վերադառնում (նույն տեղում, 223)։

Վերև թվարկված հայկական նյութերը սրանց վարիանտներն են։ Այն, ինչ տոտեմական, կրոնական ծես էր նախնադարում, մեր ժամանակներում մեծ մասամբ խաղերի են վերածված։ Այս իմաստով էլ ծաղկազարդի ծեսերը թեև որդեգրված են քրիստոնեության կողմից, բայց ըստ էության մնում են որպես ծիսախաղեր։

Ճոռան-Ճչանակ—կարկաչա-Ճոճանակ ածելու պատանեկան խաղերը հիմնովին կապված են մահվան և հարության գաղափարի հետ։

Այդ նախնական գաղափարը քրիստոնեության շրջանում արհեստականորեն կապված է Քրիստոսի անվան հետ, դարձյալ նրա հարությանը ծառայելու համար։ Այդպես է թե հույների և թե բոլոր քրիստոնյա ժողովուրդների մոտ։ Այստեղից էլ VIII դարի հեղինակ Հովհան Օձնեցու կանոններից մեկը, որ նվիրված է Քրիստոսի զալստյան տոնին։ «Որպէս և ի զալստեանն աւուր ոստոն բառնալ, և ճոճանակս շարժել, զնմանութիւն բերելով մանկանցն երրայեցւոց ծափելոյն և ոստոն մատուցանելոյ» (80, Մ, 32, կանոն իզ)։

Եկեղեցական քրոցներն այս բանի հետագա զարգացումն են։

Բ. ՆԱԼԲԱՆԴԱՐՅԱՆ ԴՈՒԱԼԻԶՄԻ ՀԵՏՔԵՐ

Նախնադարյան դուալիզմին վերաբերող նյութերն ընդհանուր ազգագրության մեջ նոր չեն։ Այդ նյութերի մարքսիստական վերլուծությունը կատարել է Ս. Պ. Տոլստովը։ Ռուս ազգագրության մեջ Ս. Պ. Տոլստովի այդ վերլուծությունները խթանեցին նախնադարից դասակարգային հասարակության հասած ծիսային սովորությունների ուսումնասիրումը։

Որպես համամարդկային օրինաչափ երևույթներից մեկը, այս ինստիտուտը հատուկ է եղել նաև հայկական նախնական հասարակական կարգերին։ Այդ մասին են վկայում այն բոլոր մնացուկները, որ մենք տեսնում ենք նախախափտալիստական Հայաստանի հասարակական հարաբերությունների բազմաթիվ ձևերի մեջ։ Այս երևույթի մի մասի օրիգինալ բացահայտմանը հանգեց բանասեր Աս. Մնացականյանը հայկական զարդարվեստի ուսումնասիրության կապակցությամբ (Աս., 308—368)։

Մեր ձեռքի տակ գտնվող նյութերը, հատկապես ծիսական ու ռազմական մրցում ենթադրող խաղերը բուն հայկական տոհմային կարգերից մեզ հասած ֆրատրիալ ծիսական կոմվների (մրցումների) զանազան ձևերի մնացուկներն են։

Մեզ արդեն հայտնի ֆրատրիալ հակամարտությունները գլխավորապես ծեսերի միջոցով են դրսևորվում։ Ուստի և մեզ մեծապես օգնության են գալիս այն ծեսերը, որոնք իրենց պահպանողականության շնորհիվ բավական շոշափելի կերպով պահել են հայկական ֆրատրիալ սովորությունների հետքեր։ Դրանք ցրված են ինչպես ապրատային մրցախաղերում, այնպես էլ՝ դիցաբանության ու էպոսի մեջ։

«Սասնա Ծռեր» էպոսում, առանձնապես այն հատվածներում, ուր մրցումներն անխուսափելիության են, մենք դանում ենք բավական հավասար տվյալներ ֆրատրիալ ծիսակոմպլեքսների մասին։

Սանասարն ու Բաղդասարը մայրական առհմի ներկայացուցիչներ են։ Այդ երևում է նախ այն բանից, որ երկուսն էլ առավելապես կապված են քեռանց հետ՝ ս. ապրում են «քեռիդոր տան մեչ» (ՍԾ. ա, 882)։ բ. Իրար հետ մենամարտելիս, երբ մեկմյանց վտանգելու փորձեր են կատարվում, մայրն ամենից առաջ պիտում է իր եղբայրներին (տղաների քեռիներին), որ գան, օգնեն (ՍԾ. ա, 883)։ գ. Եղբայրների ծիսակոմպլեքսին հետևողը նրանց մայրն է, իբրև մայրական առհմի ներկայացուցիչ։

Մայրական առհմի այս սիմվոլիկ ներկայացուցիչները՝ Սանասարն ու Բաղդասարը ներկայացնում են արդեն իրարից բաժանված և հակադիր գործողության մեջ դանվող ֆրատրիաները։ Այդ են վկայում երկվորյակների ծիսային հակամարտությունները մենամարտերի միջոցով։ Դեռ պատանի հասակում նրանք իրար թշնամիներ են. օրն ի բուն ըմբշամարտում են, իրար քաշքշում, սպանելու փորձեր անում, բայց երբեք չեն կարողանում (չեն ուզում) հաղթահարել միմյանց։ Իրեն համայնքի կամ հասարակության երկու խմբերի ծիսական մրցումների մնացուկ, այդ գծով են օժտված հայկական հարսանեկան մենամարտերի մի զգալի մասը, որի արմատները հասնում են մինչև առհմային կարգերը։

Սանասար և Բաղդասար եղբայրների ծիսային ըմբշամարտերը լիովին համընկնում են պարսկական դիցաբանության Հայտանի Ջրվան աստծուց ծնված Արհմն և Որմիզդ եղբայրների թշնամության հետ (Ե. ՊՀ, 115—116), որոնք Ս. Պ. Տոլստովը հակված է ընդունելու որպես ֆրատրիալ ծիսային կոմիվ (Т. ДХ, 290)։ Առհասարակ Ս. Պ. Տոլստովը գտնում է, որ դիցաբանության մեջ երկու եղբայրների թշնամությունը միմյանց նկատմամբ, ինչպիսի շարժառիթներ էլ ունենային, ֆրատրիալ գաղափար են արտահայտում (Т. ДХ, 288—289)։

Դավիթն ու Մսրա Մելիքը նույնպես մայրական առհմերի ներկայացուցիչներ են։ Երկուսն էլ սերվում են Մեծ Մհերից, որը, որպես տղամարդկանց դասակարգի ներկայացուցիչ, ազատ է՝ այցելելու կանանց դասակարգերի մեջ։

Մի կողմ թողնելով բոլորովին նոր, պետության ու քաղաքական դասակարգերի առկայության պայմաններում առաջացած հակասություններն ու ռազմական ընդհարումները Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի միջև, մենք դրա հիմքում տեսնում ենք ճիշտ այնպիսի թշնամություն, որպիսին հատուկ էր Սանասարին ու Բաղդասարին։ Դավթի ու Մսրա Մելիքի հակամարտությունների մեջ ավելի շատ ու անաղարտ են ֆրատրիալ պայքարի ձևերը։ Այդ ձևերն են. ս. Մսրա Մելիքի ու Դավթի հոլախաղերը, որոնք երբեք հաշտ ու խաղաղ վերջավորություն չեն ունենում (ՍԾ. բ. II, 247—249. ՍԾ. ա, 494—498 և այլն)։ Գնդակախաղի այս եղանակը մեծապես հիշեցնում է իրոկեզական մայրական առհմի այն գնդակախաղերը, որ տեղի էին ունենում երկու ֆրատրիաների միջև։ Ֆ. Էնգելսը գրում է. «Ֆրատրիայի ֆունկցիաները բռակեզների մեջ մասամբ հասարակական բնույթ ունեն, մասամբ կրոնական։ Ֆրատրիաները գնդակախաղը խաղում են միմյանց դեմ. յուրաքանչյուրն առաջ է մղում իր լավագույն խաղացողներին, մյուսները դիտում են խաղը՝ յուրաքանչյուր ֆրատրիա առանձին խումբ կազմած, և իրար հետ գրազ են գալիս իրենց մրցորդների հաղթության վերաբերմամբ» (ԷՀՄ, 118)։ բ. Դավթի ու Մսրա Մելիքի միջև ֆրատրիալ ծիսային մըրցում կա նրանց գոմշակռիվ տալու, այսինքն գոմշի նման իրար գլխով հարվածելու ձևի (ՍԾ. ա, 280), ինչպես նաև այդ երկուսի միջև տեղի ունեցող մենամարտերի մեջ (ՍԾ. բ. II, 280—281. ՍԾ. ա, 915 և այլն)։

Գլխով իրար խփելու ֆրատրիալ կատակավի եղանակի մնացուկ էր Մշո պատանիների «Գոմշակռիվ» խաղը:

Մոտավորապես այսպիսին է նաև Մշո «Եղբայրասպանությունն» խաղը, որտեղ հակառակորդի դերը գազանի կերպով իր ընկերն է կատարում:

Նման ֆրատրիալ պայքար կա նաև Հայկի ու Բելի առասպելաբանության մեջ: Եթե ընդունենք, որ երկու հերոս աստվածությունների բնակավայրը միևնույնն է եղել, ապա Բելին մենք տեսնում ենք, ըստ երևույթին, իբրև ցեղապետ, որն ապրում է դասակարգային հարաբերությունների մեջ: Հետագա գործողությունները՝ Հայկի ողջ «պոխի» բաժանումն ու հետագումը և երկրորդ՝ անհաստափելի ճակատամարտը, հիշեցնում են երկու ֆրատրիանների հակամարտությունները (Մխ. Պ2. է. ժ. ժա), որ ազատորեն կարող էին հարատևել հայերի մեջ մինչև դասակարգային հասարակության սկզբնները:

Ֆրատրիաների ծիսական մրցման մնացուկներ կան հայկական մենամարտերի որոշ եղանակների և մի քանի ծիսական շրջելախաղերի մեջ:

Նոր Նախիջևանը, որ միջնադարյան հայկական հին սովորությունները լավ պահպանած շրջան էր, մինչև XX դարի սկզբները պահել էր «Հանուն գոմշի պլոխ» մենամարտի մի ձևը, որ «Գուռաշ»—կոխ անունն ուներ: «Գուռաշ»-ը տեղի էր ունենում ուխտավայրերում. գյուղական կարիճների միջոցով: Ե. Շահազիզը այդ սովորությունն այսպես է ներկայացնում: Հանդիսատես ուխտավորներից, գլխավորապես գյուղացիներից մի ընդարձակ կրկնակի ձևով շրջան էր կազմվում, որի մեջտեղը գրվում էր գոմշի գլուխ: Ասպարեզ էին դուրս գալիս գուռաշ նկողները և պատյա գալով գլխի շուրջ կողմը, աշխատում էին հարմարությամբ մեկը մյուսին բռնել և գոտեմարտելով վայր գլորել ու չոքել հակառակորդի կրծքին, որ հաղթության նշանն էր: Հաղթողն ստանում էր շրջապատողների խրախուսանքն ու գովասանքը և իբրև հաղթության նշան տեր էր դառնում գոմշի գլխին, որն ուժի ու քաջության էմբլեմն էր:

Հին ժամանակներում, երբ այդ օրերին սովորություն է եղել գոմեշ մորթել, ասպրնդ է հանվել նաև գոմշի բարմ գլուխը: Հաղթողն այն եփել և վայելել է համագյուղացիների կամ, լավ է ասել, իր թաղակիցների հետ ու զվարճացել: Իսկ XX դարի սկզբներին, երբ արդեն գոմեշ չէր մորթվում, ասպարեզի մեջտեղում սովորաբար գրվում էր գոմշի գանգը. հաղթողը փեֆ էր անում իր թաղի կարիճների հետ, որոնք մեծ պարծանք էին համարում իրենց համար, որ իրենց թաղն էր հաղթող դուրս եկել (ՆՇ. Ա2. IX, 35—36):

Հաղթված կարիճները չդիմանալով հաղթող կողմի սրախոսություններին, կոխվ էին ծագեցնում. թաղը կռվում էր թաղի դեմ (ՆՇ. Ա2. IX, 36):

«Գուռաշ»-ի մեջ անհաղթ մնացողների մասին ժողովուրդը մեծ գովեստով երգեր էր հորինում, որոնցից մեկը Ե. Շահազիզը ժամանակին գրի է առել: Այս երգի մեջ անհաղթ հերոս է ճանաչված կարճուկ Մաոթինը, որը, ինչպես երևում է, ոչ թե գյուղի մի թաղի, այլ ամբողջ գյուղի հերոսն է եղել (ՆՇ. Ա2. IX, 37): Իսկ դա ցույց է տալիս, որ գյուղն է գյուղի դեմ ծիսական մրցում կատարողը:

Մի այդպիսի սովորություն էր պահպանված Տիգրանակերտում, ուր ծիսական պայքարը ծավալվում էր «Հանուն ոչխարի»: Անձրև բերելու նպատակով, օրինակ, Ղլիբընկ գյուղացիներն իրենց կանանց գինում էին մարտական հրացաններով. կռվողների նպատակն էր՝ միմյանցից մի ոչխար ավար բերել և պահել, գլուխը մեծ հանդիսով գետը դցել: Կանայք այդ բանի համար օգում կրակում, պատերազմ էին սարքում (ԳՄ. Մն, 116):

Մեզ թվում է, որ այդ ֆրատրիալ ծիսակովի մնացուկներ են նաև անձրև ակնկալելու նպատակով կենդանիներ շրջեցնելու սովորությունները. այսպես, օրինակ՝ էշը Ղափանում (Քաջ. Ա2. IX, 116), այծի գլուխը

Թիֆլիսում (ԴՍ. Մն, 113—114), համբարձման եղը Տարոնում (Բվպ, 1868, էջ 130—132), խոյը Բորչալուում (ՆՀ. Ա.Հ. X, 267—268), ցուլը Արևմտյան Հայաստանի գավառներում (ԴՍ. Մն, 128—129)։ Պատահում էր, որ Տարոնի մի հնուկն զյուղի երկու թաղի պատանիներն էլ մի-մի եզ զարդարում, նրանով շրջում և դիտավորյալ սարքված հանդիպման ժամանակ իրար հարցնում էին.

— Բարեկա՞մ եք, թե՞ թշնամի։

— Թշնամի ենք,— պատասխանում էին դիմացինները, որովհետև «բարեկամ ենք» արտահայտությունը թուլության և հաղթվելու նշան էր համարվում։

Սկսված կատաղի «պատերազմը» դադարում էր միայն հաշտավորների միջամտությամբ (Բվպ, 1868, էջ 130—132)։ Այն երբեմն վերջանում էր բավական ծանր հետևանքներով։

Այս ավյալները երբեմնի ֆրատրիաների ծիսական մրցումների գեղեցիկ օրինակներ են, որ նախկին ծեսերի անվան տակ պրեպվորվել են իրրև սպորտային մրցակցական ձևեր։ Ծիսական մրցման կոմպլեքսի մեջ մտնող այսօրինակ ավյալները, ինչպես ընդգծում է ընդհանուր աղզագրությունը, համամարդկային բնույթ ունեն։ Դրանով է բացատրվում, որ որևէ ֆրատրիալ երևույթ բացարձակ նույնությամբ կրկնվում է իրարից հեռու շատ ժողովուրդների մոտ։ Այսպես. հայերի մոտ «Հանուն գոմշի պլխի» և «Հանուն ոչխարի» մենամարտերի ու ճակատամարտերի սովորությունները հայտնի են Միջին Ասիայի ժողովուրդներին։ X դարի պատմիչ Մակդիսին հաղորդում է, թե Գուրգան քաղաքի բնակիչները Կուրբան-բայրամի առնին բաժանվելով երկու մասի, կռիվ էին մղում «Հանուն ուղտի գլխի». այդ նույնը տեղի էր ունենում նաև Բեկրաբադում (Т. ДХ, 283)։ Նման ծիսային կռիվների մասին վկայություններ կան Մեդինից, Սամարղանդից, Նիշապուրից (Т. ДХ, 283—284)։ Ս. Պ. Տոլստովը այս սովորություններից է համարում նաև Արևելա-Թուրքեստանյան քաղաք-պետություն Կուչինում նոր տարվա 7 օրերում խոյերի, ձիերի և ուղտերի կռվով զբաղվելը, որ նվիրված էր տարվա բերքառատության գուշակություններին (Т. ДХ, 284)։

Ջ. Ֆրեզերը նույնպես նկարագրում է Հին Հռոմի նման սովորությունները. այստեղ աշնանը կառամրցումների ժամանակ ձի էին զոհում, ապա երկու մասի բաժանվելով՝ «Հանուն ձիու գլխի» կռիվ մղում (Фр. III, 194—198)։

Թուրքմենիայում կար gök-böri — козлодрания—այծակռիվ, որ փաստորեն նշանակում է «պայքար հանուն այծի»։ Ս. Պ. Տոլստովն այդ ծեսը նկարագրել է դեռևս 1930-ական թ. սկզբներին՝ թուրքմենական հարսանեկան ծեսերն ուսումնասիրելիս (Пр. № 9—10)։

Ուլը կամ գառը դիրկն առած՝ թուրքմենուհի նորահարսը ձիով արշավում է. փեսան իր ընկերներով հետապնդում է նրան՝ գրկինը խլելու համար։ Այս ուշագրավ մրցախաղը Ս. Պ. Տոլստովը դիտում է որպես երկու ֆրատրիաների՝ համասնությամբ իրար հետ կապված այդ ինստիտուտների ներկայացուցիչների պայքար. պայքար «Կապույտ գայլ» ֆրատրիայի և «Այծ» ֆրատրիայի միջև, որ անմիջական կապ ունի մյուս ժողովուրդներին հայտնի «Հանուն ուղտի գլխի» պայքարի հետ (Т. ДХ, 284)։

Երկու ֆրատրիաների պայքարի տրադիցիաների անցումը դասակարգային հասարակության մեջ՝ մի ընդհանուր երևույթ է։ Այդ պատճառով էլ տարօրինակ չէ, որ հայ ժողովրդի պատմության մեջ մինչև XX դարի սկզբները հարատևող «Հանուն ոչխարի», «Հանուն գոմշի գլխի» մրցակռիվները ծեսերի հետ թարմ էին պահում բուն տոհմային-ֆրատրիալ սովորությունները։ Ինչպես գոմշի ու ոչխարի, այնպես էլ առհասարակ կենդանիների հետ առնչվող մի շարք ծեսեր մեզ մոտ կապված են ագրարային ծեսերի հետ։ Նախնադարյան հասարակության մեջ այս ծեսերը կենսական անհրաժեշտությունից

ծագող հարցեր էին, որ առավել հին էտապներում անմիջական կապ ունեին տոտեմիզմի հետ: Տոտեմիզմը խթաններից մեկն է, որը անասնապահության ու երկրագործության զարգացման համար մեծ ծառայություն է կատարել. ընտանի և որսի կենդանիների անտեղի ոչնչացման դեմ, վայրի կենդանիների ընտելացման համար, քաշող ուժերի՝ իբրև արտադրության միջոցներից մեկի պաշտպանության համար, մթերատու անասունների պաշտպանության, բոլոր տեսակի անասունների ցեղերի զարգացման, աղնվացման համար՝ ահա նախնադարյան մարդու իդեալները, հանուն որոնց ծառայել են իրենց իսկ ստեղծագործած ծեսերը: Այս ծեսերը հայերի մեջ ազգարարչին պաշտամունքի կապակցությամբ հանդես են եկել ինչպես բնության զարթոնքին նվիրված տոնին՝ բարեկենդանին, այնպես էլ համբարձման օրերին և անձրևաբերության համար՝ ամառվա անբարենպաստ եղանակների ժամանակ: Այս տեղից էլ ծագում էին բարեկենդանին կամ զարնանամուտին զոմշակոփվների սովորությունները: Վերևում տեսանք, որ Նոր Նախիջևանում «Հանուն զոմշի պլխի» մենամարտերն անցյալի տվյալների համաձայն տեղի են ունեցել զոմեշը զոհելուց հետո, մի բան, որ նույնանում է Հռոմեական «Հանուն ձիու պլխի» պայքարի հետ: Զոմշակոփվների ժամանակ գյուղի բնակիչները բաժանվում էին երկու մասի: Յուրաքանչյուր խումբը պաշտպանում էր կրոնական տոների մեկի սիրոջ շահերը: Զոմշակոփվը երբեմն տեղի էր ունենում հարևան գյուղերի միջև: Ինչպես մեկ, այնպես և մյուս դեպքում կռվարների բաժանված մարդկանց միջև երբեմն տեղի էին ունենում անախորժ կռիվներ, որ հետևում էր նաև խոյակռիվներին (Տե՛ս ՀՏ, 230—231): Սրանք ֆրատրիաների ծիսական մրցման սիրուն օրինակներ են:

Հարևան գյուղերի միջև տեղի ունեցող ֆրատրիալ ծիսական կռիվների հետքեր կան հարսանեկան սովորությունների մեջ: Որպես լավագույն օրինակ, մի այդպիսի նյութ մենք վերցրել ենք Վանի ազգագրությունից: Ա. Կ. Պեշչերյանի 1870 թ. հրատարակած «Գեղջկական հարսանիք ի Հայաստան» գրքույկում ասված է, թե երբ կոխպանցիները մեծ խմբով գնում են Շահ-պաղ գյուղը՝ հարս բերելու, երկուսաեր ազամարդկանց միջև սկսվում է կոպալներով հետևյալ կռիվը. նախատեսված հաղթանակը շահած կոխպանցիների համար շահ-պաղցիք մի գյուղ սև ոչխար են բերում և մորթում նրանց առջև: Ապա շահ-պաղցիք վերցնում են հարանտի եկածների կոպալները, որ նշան է հյուրընկալման (էջ 35—36 և հետև.): Այս սովորությունն ընդգծված մանրամասնություններով պահպանված էր ոչ միայն այդ երկու գյուղերում. այն հետևյալ էր առհասարակ ամբողջ Հարավային Հայաստանին: Ինչ որ ոչխարով դիմավորելուն է վերաբերում, որ անկասկած «հանուն ոչխարի պայքարի» վերապրուկն է, հետևյալ էր (պահպանվում էր) մինչև XX դարի ըսկզբների հայկական գավառների մեծամասնությանը:

Ֆրատրիալ ծիսային մրցման լավ օրինակներ են խան-փաշա խաղերը: Հատկապես այն փոփոխակները, որ առավել շատ են պահպանել հին ձևերը, առանց այլևայլության բուն ֆրատրիալ ծեսերի կրկնօրինակ էին: Խան-փաշանները պահպանել էին իրար դեմ դուրս գալու, կատարյալ ճակատամարտեր սարքելու հնագույն տրադիցիաները, որոնք հաճախ արյունահեղության էին հանդեցնում: Այդ վարիանտների թիվը 6 է, որոնք ներկայացնում են Զանգեզուրը, Տարոնը, Գանձակը, Վարանդան, Թիֆլիսը և մեկն էլ թևև գավառը հայտնի չէ, բայց հայտնի է, որ արևմտահայկական է: Մի քանի վարիանտների համաձայն ֆրատրիալ ծիսային կռիվներն տեղի էին ունենում միևնույն գյուղի կամ քաղաքի երկու կեսերի միջև, այլ փոփոխակների համաձայն՝ երկու գյուղերի խաղախմբերի միջև:

Կասկածից վեր է, որ խաղերի մի մասը, կապված ծիսական մրցման հետ, առաջացել են ֆրատրիաներից: Այդպիսիներից են մա-

դակռիվները և «Խազալո-Ղազալո» կոչված ռազմի խաղերը։

Թաղակռիվները կազմակերպվում էին պատանիների և երբեմն էլ դեռ չամուսնացած երիտասարդների կողմից։ Կռիվները կրում էին կատակի բնույթ և ոչ ոք պատասխանատու չէր ծանր հետևանքների համար։ Այստեղից էլ՝ վանի «խաղալ ի՛, կաղալ ի՛» արտահայտությունը, որ գործ էր ածվում խաղի մեջ վնասվողներին մխիթարելու և պատասխանատվությունից խուսափելու համար։ Խաղախմբերը կազմվում էին հակառակորդ թաղերի կողմից՝ մեծերի խրախուսանքով ու ցուցմունքներով։

Թաղային պատանեկան կռիվների առաջին նկարագրությունները պատկանում են՝ ռուս ճանապարհորդ Մորից ֆոն Կոցեբուին, Գ. Սրվանձտյանին, Գ. Տեր-Ազեքսանդրյանին և Երեմիա եպ. Տեր-Սարգսյանցին (Տեկանց)։ Այս նյութերի հիմնական էությունը թաղակռիվները որպես ծիսական թշնամություն դիտելն է։ Նախ՝ դրանք տոնական օրերին էին կազմակերպվում, որին հանդիսանում էր ամբողջ բնակավայրի ամբողջ հասարակությունը։ Ապա՝ խմբերը կազմվում էին հատկապես իրար հետ հողային, ոռոգման և այլ անհեսական հարցերի գծով վեճեր ունեցող թաղերի երեխաներից, որոնք ունենում էին իրենց առաջնորդները։ Վերջիններիս դերն այնքան մեծ էր, որ զինվելուց բացի ձիավորվում էին (ԳՍ. Ակ, 1861, № 4)։ Ծիսական մրցման հնամենի օրինակ է Վանի մի թաղակռիվը, որ կազմակերպվում էր վարդավառին՝ պարսատիկով, փայտե նետով ու աղիդով (ԳՍ. ԳԲր, 123)։ Այսպիսի կռիվներ տեղի էին ունենում նաև երկու հարևան գյուղերի հոտաղների միջև։ Կռիվների կատարի բնույթի մասին են վկայում գրեթե բոլոր նկարագրությունները։ Կոցեբուն գրում է, թե Թիֆլիսում թաղակռիվների դժբախտ պատահարները նկատի ունենալով «գեներալ Երմոլովը ժամանակ համարեց միջամտելու, և քաղ այնքան այլևս թույլ չէր տալիս, որ կրկնվեն» (Կոց., 503—504)։ Սակայն ժողովուրդը շատ շուտով մոռացավ այդ օրենքը և մինչև դարավերջերն էլ նույնությամբ շարունակում էր իր ռազմի խաղերի տրադիցիոն տոների կատարումը։

Ինչ վերաբերում է խաղերի մյուս տեսակներին՝ «Խազալո-Ղազալո»-ներին, ապա, ինչպես ասել ենք, ամենից առաջ դիտենք, որ դրանք պահմտուկ խաղերի զարգացած ձևերն են։ Եթե պահմտուկներն առանձնապես 10—12 տարեկան երեխաների խաղերն են և տեղի են ունենում ցերեկվա ժամերին, ապա խազալոները գուտ պատանիների խաղեր են՝ մթնշաղին, լուսնալույս և նույնիսկ մութ գիշերը խաղալու համար։

Խազալո կամ ղազալո հայերեն չէ. քրդերենում «խազալ» եղնիկ է նշանակում. օ-ն հոգնակեցուցիչ մասնիկ է, որով ստացվում է «եղնիկներ» հոգնակի ձևը։ Այս հանգամանքն արդյոք առավել մեծ վկայություն չէ՞ այն բանի, որ երբեմնի «եղնիկ» կոչված տոհմի կամ ֆրատրիայի անունն անցել է պատանեկան խաղախմբերի վրա և հարատևել առանց գիտակցվելու։

Ամփոփելով այս հատվածը, պետք է ասել, որ ծիսական մրցում, հասակակիցների միությունն հասկացություններն իրենց մի երեսով ռազմական կազմակերպությունների ձև ունեն։ Ֆ. Էնգելսը իրոկեզական տոհմի քննության ժամանակ հանդում է հետևյալ հետևությանը. «...ֆրատրիաները, ինչպես հույների և նույնպիսի տոհմական միությունները զերմանացիների մեջ, միևնույն ժամանակ ռազմական միավորների նշանակություն ունեին», որոնց հատուկ էր ուրույն համագործակցությունը, սեփական դրոշակը և առաջնորդը (ԷՀՄ, 119)։

Եվ իրոք. հայկական ժողովրդական շարժական ու ծիսական խաղերի և սպորտի մի քանի տեսակների մեջ միաժամանակ և՛ ծիսայնության, և՛ կոնկրետ մրցությունների առկայությունը լիովին համընկնում են աշխարհի այլ ժողովուրդների համանման զբաղմունքներին։ Բոլորովին էլ պատահական չէ, որ ժողովուրդն իր բանավոր ստեղծագործու-

թյունների մեջ հերոսներին օժանդակել է օտարներին դիմագրավելու տիտանական ուժով։ Ուր որ ֆրատրիալ ծիսական մրցում կա, այնտեղ հայ դյուցազնն անհաղթահարելի է։ Այդ են ցույց տալիս Սասնա Ծռերի անմահ հերոսները, դյուցազն Հայկը և ուրիշները՝ բոլորն էլ յուրայինների նկատմամբ հատուկ պարտականություններով։ Ժողովուրդն իր ֆրատրիալ ծեսերի միջոցով կամ խաղերի մեջ դրանց արտացոլմամբ հարյուրամյակների ընթացքում պատանեկությանն ու երիտասարդությանը հնարավոր չափով ռազմական դաստիարակություն է տվել։ Պատանեկան ընկերակցությունների մեջ դարեդար են անցել այն դյուցազունների հիպերբոլիկ պատմությունները, որոնք խթանել են ռազմական ունակությունների տարածմանը։ Իսկ դա հին ու մանավանդ միջնադարյան Հայաստանի գոյության պահպանության համար երբեմն էր։ Առանց ինքնապաստիարակման, ժողովուրդը ռազմական տեսակետից ինքնապաշտպանություն կազմակերպել չէր կարող։ Ահա այս է ֆրատրիալ բնույթի խաղերի ու սպորտային նյութերի կարևորագույն արժեքը։

Գ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Օտար, ինչպես և ներքին կեղեքիչների դեմ ծավալած պայքարում հայ ժողովրդի համար կարևոր միջոց են հանդիսացել նաև նրա հոգևոր գենքերը՝ դրականությունը, բանահյուսությունը, թատրոնը և խաղերը։

Երկրի սոցիալ-քաղաքական հարաբերությունները յուրօրինակ արտացոլում են գտել խաղերում։ Էպիքական հերոսի ուժի և մարմնի գեղեցկությունը, հայրենի երկրի անձնազոհ պաշտպանի ամենաբնորոշ հատկանիշն է. նրա մեջ ժողովուրդը տեսնում էր իր հավաքական ուժի զորությունը։

Այսպես։ Առասպելաբանության մեջ Հայանի Տորք Անգեղն իր տիտանական ուժը գործ է դնում հայրենի երկրից իշնամիներին վռնդելու համար։ Մովսես Խորենացին, ապա և նրան հետևելով՝ միջնադարյան շատ հեղինակներ ոգևորել են հատկապես իրենց ժամանակակից երիտասարդությանը Տորք Անգեղի քաջագործություններով (Մխ. Պշ, 115. ՍՏ, 36. վբ, 45—46. ՆԾ. ԲՉ, 583)։

Տորք Անգեղի, Հայկ Նահապետի, Արա Գեղեցիկի և ուրիշ լեգենդար հերոսների հինավուրց պատմություններն ընդհանուր սինթեզը հանդիսացող «Սասնա ծռեր» վեպը, իր քաջարի հերոսների մեջ, նաև սպորտի միջոցով մարմնավորել է հայրենասիրությունն արտահայտելու պատկենական սովորությունները։ Այստեղ հիշենք, օրինակ, Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի միջև մղվող մենամարտերը, որոնք ակամա կռվի մեջ մտած Դավթի հայրենասիրության վառ արտահայտություններն են։ Մենք նկատի ունենք Դավթի սովորական ըմբշամարտը (ՄԾ. բ. II, 280—281 և այլն), գոմշակռիվ ձևը (ՄԾ. ա, 280 և այլն) և քշլրածնգ եղանակը (ՄԾ. բ. II, 549)։

Սպորտային խաղերին մասնակցում էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք։ Հիշենք Կիլիկիայի քաջարի ռազմիկ ասպետ Լիպարիտի քրոջ հաղթական մենամարտը իսմայելացի ըմբիշի հետ (Ձ. № 3569, էջ 28ա—28բ), զեյթունցի կնոջ հաղթական ըմբշամարտը Մսրա սուլթանի ըմբշապետի հետ (Ձ. № 515, էջ 27բ—28բ), գորիսեցի կնոջ հաղթական մենամարտը մոնղոլ ըմբիշի հետ և այլն, որպիսի հաղթանակներն բուռ բանահյուսության, կանխում էին այն ավերիչ պատերազմները, որ նախապատրաստում էին օտարները հայերի դեմ։

Սպորտի միջոցով ցույց տրվող հայրենասիրական այս դիմագրավումները հայկական քաղաքական բնույթի խաղերի հիմքերն են։ Ինչպես կտեսնենք, քաղաքական միտք սո-

ուահայտող խաղերի զգալի մասը պարձայ: դրսևորվում է այսպես կոչված հերոսական սպորտի ու խաղերի միջոցով:

Համառոտակի անդրադառնանք այդ հարցերին:

Օտար և հայրենի կեղեքիչների կողմից դրսևորվող հարատահարությունները և դրանց դեմ պայքարը բացահայտորեն արտահայտվել են խան-փաշայի և քողարկված ձևով՝ մանկական շարժական խաղերի մի տեսակի մեջ, որ հայտնի է մի քանի անուններով՝ «Գայլ ու ոչխար», «Ագռն կասի» և այլն: Այս վերջիններիս դաղափարական բովանդակությունն արտահայտվում է շատ պարզ ձևով: Ջոր և ավելի աղջիկներ ու տղաներ գոռ կամ ձագ են ձևանում, իսկ մեկը՝ մայր կամ հովիվ: Մայրը կանգնում է առջևում, իսկ ձագերը՝ նրա ետևը՝ իրար գրանցքից բռնած: Մի այլ երեխա, որ գայլ կամ ագռավ անունն է կրում, երևակայվող ազայի ներկայացուցիչն է, նրա գործակալը: Սա հաճախակի գալիս է խմբի մոտ և ազայի անունից գոռ, ոչխար, կով, կաթնամթերքներ, մրգեր և կրակ է պահանջում, ընդ որում, գոռին ու ոչխարին փոխարինում են «մոր» «ձագերը», իսկ մյուս պահանջներին՝ լակ երևակայական մթերքները:

Մայրը կամ հովիվը, անշուշտ, բոլոր դեպքերում մերժում է գայլին, իսկ վերջինս պայքարով կարողանում է մեկ առ մեկ հափշտակել ձագերին ու մի առանձին տեղ տանել, որ երևակայված ազայի բնակատեղին է, կամ երևակայական մթերքները հասցնել ըստ պատկանելույն: Հափշտակված ձագերն ստրկացվում և լծվում են ուժից վեր աշխատանքի: Այնուհետև, ինչպես կյանքում վաճառված գերիները կամ բռնի հավաքված մանուկները՝ կոբըստյան են մատնվում: Մորը և զավակներին ուղեկցում են աղիողորմ լացն ու կոծը:

Այս խաղախմբի մեջ ապօրինի հարկ ու տուրքերի հավաքման ձևերն ակնհայտ են: Ակնհայտ են նաև հարկերի ու տուրքերի փոխարեն երեխաներին տանելու, մանկահավաք կատարելու փաստերը, որ հատուկ էին միջնադարյան Հայաստանում, ստրատական, մոնղոլական, պարսկաթուրքական գրեթե ամբողջ տիրապետությունների ընթացքում:

Թուրքիայում մինչև XX դարի սկիզբը հարատևող հարկային քմահաճ քաղաքականության եղանակների արտացոլումը մենք գտնում ենք խաղերի մի այլ խմբի մեջ, որ կապված են գյուղատնտեսության ու անասնապահության հետ: Մեծերի կողմից խաղացվող այդ խաղերն են՝ «Աշար»-ը (տասանորդ), «Շպլոզ ադա»-ն, «Հինդ այծատեր»-ը և այլն:

«Շպլոզ ադա» խաղի մեջ ծաղրական անունն ստացած Շպլոզ աղան ապօրինի հարկ տանելու համար սոսկալի ծեծի է ենթարկում արտում վար անող գյուղացուն: Այդ ծեծի միջոցով խաղը ցուցադրում է այն վայրագությունները, որոնց ենթակա էր հարատահարված ու բռնադատվող հայ գյուղացին:

«Աշար»—«Տասանորդ» կոչված խաղի մեջ տասանորդ հավաքող շահնան, պետության կողմից նշանակված հարկը բազմապատկում էր: Խաղի մեջ ներկայացված շահնան նույնպես, ինչպես կյանքում, ունի կալում գյուղացու հացի շեղջը կնքելու դաջ և չափելու ամաններ: Գյուղացին վճարում է պետական օրինական ու ապօրինի հարկը. ապա տանում են՝ վանքն ու եկեղեցին, քահանան, ռեսը, նույնիսկ՝ գվիրը: Գյուղացի ձևացողին տուն տանելու ոչինչ չի մնում, որի համար «գյուղացի» կալվորները համախմբվում, դանակոծում են շահագործողներին ու պետերին (նկ. 94):

«Հինդ այծատեր» խաղի մասնակիցները շուրջանակի հանգիստ նստած ժամանակ լսում են մոնետիկի հայտարարությունը այն մասին, որ պետությունը գյուղին հարկ է նշանակել: Հարուստներից մեկն անմիջապես վրա է բերում՝ թող վճարի 5 այծի տերը: Վերջինս իր հերթին առաջարկում է շատ այծեր ունեցող մեկին, և այդպես մեծ վեճ է ծագում: Խաղը վերջանում է մասնակիցների

մեծամասնության որոշմամբ՝ հարկը վճարել ըստ անասունների քանակի։

Հարստահարությունները յուրօրինակ ձևերով են արտահայտվել խան-փաշա խաղերում։ Եթե վերև բերված խաղերում հարկային քաղաքականությունն արտացոլված է ուղղակիորեն, ապա այստեղ այդ երևույթը մի նոր շերտ է, ավելացված ծիսային խաղերի գործողությունների վրա։ Խան-փաշանեռում հարկահավաքման գործողությունը կատարվում էր նվերներ հավաքելու անվան տակ։ Դրան, սակայն, հաճախ փոխարինում էր միառժամնավոր ռեպրեսիաների միջոցով նվերներ հավաքելը, որը հենց նոր շերտն է Հայաստանի երկու հատվածներում։

Մթերային նվերները (ոչխար, հավ, յուղ, բրինձ, ձու, օղի, գինի և այլն) հավաքվում էին մեծ մասամբ աննեռուն ման գալու միջոցին, իսկ դրամականը՝ պլեխավորապես խաղային հրապարակում։ Խաղախումբը հավաքատեղիից մինչև խաղավայրը հասնելը գյուղամիջում զանազան մարդկանց բակերում խմիչքներ ու խմորեղեններ էր վայելում, երկու դեպքում էլ վեհապետներն ու դրանց գործակիցները և՛ շռայլորեն, և՛ ահաբեկում էին գյուղացիներին։ Իսկ վերջիններս միառժամնավոր կերպով, ահաբեկվում, սոսկում, խոնարհվում, նույնիսկ քծնում և խոյս էին տալիս։

Խաղի մեջ նույն խանը կամ փաշան միաժամանակ ներկայացնում էր և՛ երկրի պարագլուխը, և՛ նահանգապետ-գավառապետը, և՛ հարկագիր անձը, և՛ հարկահավաքը, և՛ գաւառորը։ Նրան, ուրվականի նման, ուղեկցում էր արևելյան տիպի քծնանքն ու շռայլորթությունը մարմնավորող անձնակազմը, բաղկացած գրագրից, օգնականներից, ասպիկաններից, դռնքից և ուրիշներից, իսկ վարիանտներից մեկի համաձայն՝ նաև Հանդիսատես հասարակությունից։

Խաղային հրապարակ ընթանալիս և այնտեղ հասնելիս վեհապետները մունետիկների, կառապածուների, թարգմանիչների և իրենց իսկ բերանով հայտնում էին այցելության նպատակները։ Այդ հայտարարությունների մեջ շռայլվում էին թե՛ կեղծ բարերարների և թե՛ մանավանդ պաժան անձանց խոսքերը։ Ժողովուրդն անտարբեր չէր մնում. նա իր որոշ հատվածով, որոշ մարդկանց միջոցով, դառնում էր խաղի ակամա մասնակիցը և առն ու ժողովը։ Ժողովրդի հենց այս ռեզերվային հատկանիշն էր, որ խան-փաշա խաղը տարբերվում էր թե՛ սովորական շարժական խաղերից և թե՛ դրամային։ Խաղացողների և հանդիսատեսների միջև երևան էին գալիս կոնֆոսություններ, որոնցով դրսևորվում էին կողմերի փոխհարաբերությունները, նրանց իրավական կապերն ու հակասությունները, պետության և ժողովրդի հակադրությունները։ Հանդիսատեսները խաղացողների հետ իրենց ունեցած հարաբերությունների միջոցով արտահայտում էին ժողովրդի ծանր կացությունը, իսկ խան-փաշաները մերթ կեղծ խոստումներով և հաճախ դաժան խոսքերով վերարտադրում էին արաբական, պարսկա-թուրքական սիրապետողների ռեալ մտադրությունները՝ ժողովրդին նյութական անանկության մատնելու և նրան ֆիզիկապես բնաջնջելու քաղաքականությունը։

Բերենք մի քանի փաստեր։

Բաֆֆու գրառած «խան»-ի մեջ Ահմատխանը սուլտան (պաշար) պահանջելիս ազդարարում է. «Ամենախոնարհ հպատակներդ պետք է սուլտան տար նրա քաջ պատերազմող զորքերին։ Եթե մի անբախտ մարդ համարձակվի այդ բարձրագույն հրամանին դեմ կենալ, նա յուր գլխի տերը չէ»։

Ջանդեղուրի Արծվանիկ գյուղի խաղի մեջ խանը գառնալով ժողովրդին, հարցնում էր. «Ինչպե՞ս է ապրում հպատակ ժողովուրդը, ի՞նչ գանգատներ ունի նա»։ Ժողովուրդը նրան պատմում էր իր ծանր վիճակի մասին։ Բայց, խոստումը փոխարինվում էր այս խոսքով.«Բան չկա՞, ակա՛ր ալլահ ջանըմա ամա՛ն, հատի՛ գլխի բիր կազանա մոլատա՛ էլիա՛ր,—եթե ասված ինձ ձևոք չտա, ձեր յոթը տունը մի պղնձամանի կարտա եմ դարձնելու»։

Այդ նույնն է հաղորդում նաև Վանա մի վարիանաբ։ Մարդիկ երկյուղածությամբ փաշային հարցնում էին, թե «Ո՞ր աշխարհն ա... երկիրն ի՞նչ բարիք պիտի առնե»։ Մնապարծ փաշան շոգաբորբելով «բարի և բազաբավար» վանեցիներին, ի վերջո մրտնում էր իր իսկական դերի մեջ և «չան պես կամռալով, խոզի պես մռմռալով հարցաններ» թարգմանի միջոցով, թե ինչու՞ իր գալստյան պատճառները չեն հարցնում։ Ապա նույն թարգմանի բերանով հայտնում էր, թե ինքն այսքան հազար ոսկի տուգանք է պահանջում իր զորքը կերակրելու համար, «ապա թե ոչ առհասարակ սուրն կանցունեմ և քաղաք կրթակով վառեմ»։

Մի փոքր այլ է Ծշաունիքի փաշան. սա պարզապես հայի անունից դիմում է Պախվանց դյուղի տեր ու տնօրեն քուրդ Կուլիխան բեկին և իր զորքով պաշարում նրա տունը՝ հարցնելով. «ինչու՞ բեկը տարին բալոր տանջում է ժողովրդին, հարկեր է պահանջում, թալանով պրաղվում»։ Նա ի վերջո կարուկ պատասխան էր պահանջում, թե ո՞վ է նա, ինչո՞ւ է պրավել այս երկիրը և ի՞նչ է հետանալու։

Վեճը հանգում էր պատերազմի։ Կեղծ հրացանաձգություն, պարսատիկով ու ձեռքով ձնագնդիների տարափ երկուստեք կողմերից, բայց պայմանը պահանջում էր, որ բեկը տեղի տար և կապկպվեր։ Փաշան պահանջում է տուգանք վճարել և անիրավություններից հրաժարվել։

Խան-փաշա խաղերի մեծամասնությունն այս նույն միտքն է արտահայտում, որով երևում է, որ կողոպուտների ու հայահալած քաղաքականության ցուցադրումը խաղի հիմնական նպատակներից մեկն էր։ Բացի սահմանված հարկերից, խան-փաշաները ժողովրդից հավաքում էին տուգանքներ՝ պլոխ չհոնարհելու, հարկերը ժամանակին չվճարելու, իրենց քմահաճույքներին չենթարկվելու համար։ Այս կաշառակերությունն էր այն միակ միջոցը, որով պետերը հպատակներին կարող էին ներում շնորհել։

Հանդիսատես հասարակության զգալի մասը խան-փաշայի շքախմբի երթի ժամանակ և հրապարակում խաղի միջոցին ընդհանուր ահ ու սարսափի մեջ ուներ իր ընդունելու կեղծ ձևերը։ Տղամարդիկ, բացի պատանիներից, հնազանդության էին արտահայտում՝ խոնարհվում էին, խոսքերով շոյում, կերուխումի հրամցնում, որպիսությունները ու քաջությունները հարցնում, գալուստը շնորհավորում և այլն։ Խան-փաշաները որտեղ էլ գտնվեին, խաղի ակամա մասնակիցները, այսինքն հանդիսատեսները նրանց արժանին էին հատուցում։ Հրամցնում էին նռան կուի կողովի կամ նման առարկաների վրա, հյուրասիրում էին՝ գառան փոխարեն սատկած կատվով, կաքավի փոխարեն՝ սատկած ագռավով, օշարակի փոխարեն՝ քացախով, ջրի փոխարեն՝ մրաջրով, զայլանի փոխարեն՝ փարչ-ծխամորում ծխախոտի փոխարեն լցրած չոր աղրով և այլն։

Ինչպես էլ լիներ ժողովրդի ընդունելությունը, խան-փաշան գոհ չէր մնում։ Նրան, ի վերջո, հարկավոր էր նյութական օգուտը։ Իսկ այդպիսին ձեռք բերելու համար անհրաժեշտ էին ճնշման ու ահաբեկման եղանակներ։ Դրա համար էլ խաղային հրապարակներում նախապես պատրաստվում էին պատժելու միջոցները՝ մահակներ ու մտրակներ՝ գանակոծելու համար, շղթաներ ու թոկեր՝ սյուներին ու գերաններին կապկպելու համար, ֆալախաններ՝ ոտքերը կապելու և ծեծելու համար, բանտեր՝ ձերբակալվածներին արգելքի տակ դնելու, չոքեցնելով տանջելու համար և վերջապես կախաղաններ՝ առավել հանցագործներին կոնատակերից կախելու համար։

Պատիժներ սահմանելու առիթ էին ծառայում ոչ միայն ժողովրդի կողմից պետության պահանջներն անմիջապես չկատարելու դեպքերը, այլև ժողովրդի ու տերերի միջև սահմանված ճորտական հարաբերությունների մեջ ստորադրյալների թերանալու հանգամանքները։ Հավաքատեղիից մինչև խաղային հրապարակ հասնելը և խաղն սկսելուց

մինչև դրա ավարտումը խան-փաշային անմիջապես շրջապատող տղամարդիկ, ի թիվս որոնց նաև ունևոր խավերի ներկայացուցիչները, պարտավոր էին սարկաբար դիմավորել, խոնարհվել, տերերի ձեռքերն ու ոտքերը համբուրել, քծնել, շողոքորթել, պահանջված հարկերն ու տուրքերն անմիջապես վճարել և այլն։ Խան-փաշային օգնում էին «տեղացի լրտեսները», նրանց ձեռքն էին մատնում առանձին մարդկանց, որոնց մասացածին հանցանքներ էին վերագրում, մեղադրում նույնիսկ հակապետական գործունեության մեջ։ Միաումնավոր կերպով սարքված այս բոլոր ռեպրեսիաներն ունեին երկու նպատակ՝ վերարտադրել տիրող պետությունների բարբարոսությունները և պարզացնելով Բշնամիների նկատմամբ մեծ ատելություն, ժողովրդին հրահրել ազատագրական պայքարի։

Խաղին ակամա մասնակից դարձած մարդիկ՝ տուգանվածները, դատապարտվածները և ուրիշները, տուգանք վճարելու ժամանակ երբեմն խիզախում էին պահանջված ոսկու փոխարեն կճուճով լիքն ապր հրամցնելու միջոցով խայտառակել փաշային։

Խաղի մի քանի մոմենտներից երևում է, որ ժողովուրդը համբերում է մինչև մի որոշ աստիճան։ Համբերության բաժակը լցվում է, ու պոռթկում է զայրույթը և տեղն ու տեղը լուծվում ժողովրդի վրեժը։ Հենց այստեղ է, որ հանդիսատեսների ակտիվ մասը կատակի անվան տակ խաղի հրապարակից վռնդում, հեռացնում է արյունարբու գազանին՝ թուրք և պարսիկ պաշտոնյային՝ իր ամբողջ կազմով հանդերձ։ Դա խաղի կուլմինացիոն կետն է և հանդույցի դրական լավատեսական լուծումը. ժողովուրդը հավատում է, որ իր պայքարը փառքով է պսակվելու։

Բերենք փաստերից մի քանիսը։

Աշտարակի վարիանտներից մեկի համաձայն շահը մտնում է հարեմատուն—խաղային հրապարակը և հայտնում, թե «օսմանլուն գալ պտի... ղոնշուն հավաքե՛նք, որ նրանց օմարի աչքը հանենք»։ Հայերը շահի կեղծ ճնշման տակ զինվում են։ Եվ, երբ նույն շահն ակամա է կոմի ձևերը սովորեցնել, որ հայերի արյան գնով պարսից զորությունը մեծանա, ինքնագիտակցության մղումով «Մի մասխարա մարդ քամակիցը (շահի) ղ֊խին որ բամբացնց (զարկեց), աչքերը փուս բնկավ, քալլակը տակիցը դուս ինավ, մէջքի վրա փռվեց։ Ընչանք վեր կենալն էլ ձրագը բռնեցին միրքի տակը, բամբակը կպավ... Մի տղա էլ փարշով ջուրը բերուց, սաքի ին կրակին անցնում ա, լցրուց պլխին։ Խեղճ շահը վեր կացավ ու փախավ»։

Վանի մի վարիանտում հարկը ոսկով փաշային վճարելու պահին, երբ փաշան սկսում է հաշվել դումարը, «Սույն կետին ամբոխի մեջեն քանիք հասան, մի կուժ շուր լեցուցին փաշայի պլխին, տակի կողով քաշեցին. փաշան բնկավ հողափալուլ եղավ, ամբոխ ուրախության ազդակ բարձրացուցած ցրվեցավ»։

Այդպիսի վախճանի է արժանանում փաշան նաև Վանի մյուս վարիանտում։ Գրադողն ասում է, թե «հետո մեր և երիտասարդաց խումբն պփաշայն և զմարդիկ, ո՛րս փաշայի պլխո կողովին կրակ կուտայինք, ո՛րս նորա մորուք փետեինք, ո՛րս պլխի վերա ջուր լեցնեինք, ո՛րս աչքերու մեջ փոշի փչեինք և այնպես ձգձգելով ասա անդ քաշքշեինք, որ բնավ փաշայի կերպարանք չէր մնար վրան։ Հաղար դժվարությամբ հազիվ մազապուրծ մեր ձեռքեն փրթելով ազատեր, փախչեր յուր խեղճ մարդիկներով...»։

Ինչպես ասացինք, խան-փաշաները Հայաստանի քաղաքական ծանր պայմաններում նոր ֆունկցիոնալ դրսևորումներ են, որոնց տակ թաքնված են հայ երիտասարդությանը ազգամական դաստիարակություն տալու քաղաքական նպատակները։ Այս հանգամանքը բնորոշ է բոլոր այն երկրներին, որոնք դարերի ընթացքում նվաճված, կամ գաղութային վիճակում են եղել։

Հնարավոր է, որ այս խաղը, ինչպես և այլ ժողովուրդների նման խաղերը, իրենց մեջ արձագանքում են հին մեռնող և հարու-

յուն առնող ասավածների շարքը հյուսված ծեսերը։

Ջ. Ֆրեյզերը պրում է, թե Հռոմում յուրաքանչյուր մարտի 14-ին փողոցներում շրջում էր մորթով ծածկված մի մարդ, որին հետևում էր մեծ բազմություն։ Նա մարմնավորում էր բուսականության ասված Մամուրի վեհարին (հին Մարսը), որը ժողովրդի կողմից վռնդվում էր քաղաքից դուրս։ Ավանդության համաձայն այս ասավածությունը հևացվում էր դեպի Օսկների երկիրը, իբրև Հռոմի հին բնակիչ։ Նոր տարվա այս ծիսային արարողության մեջ ժողովուրդը քաղաքական վրեժ էր լուծում իր երբեմնի ոխերիմ թշնամուց (Фр. IV, 110, 111)։

Տնից կամ երկրից վտարվող ասավածությունը վռնդվող թշնամին է։

Այս տեսակետից ուշագրավ է պատկի նախօրյակին, ծեծի ենթարկվող և հոսող ջրերը նետվող Ախլոճը, որը, ի դեպ, իր արտաքինով նման է խան-փաշային։ Խան-փաշայի և Ախլոճ-Ակլատիզի միջև կա ոչ միայն արտաքին նմանություն. դրանք կամ նույնն են և կամ նույն նպատակի համար ստեղծված ու նույն ֆունկցիան ունեցող ասավածություն են։ Խոսա ուշագրավ է, որ խան-փաշան երեան է գալիս բարեկենդանի վերջին կամ նախավերջին օրը, իսկ Ախլոճը՝ մեծ պասի առաջին օրը։ Եթե խան-փաշային ժողովուրդը հալածանքի է ենթարկում իր երեվան եկած օրը, Ախլոճը դրան ենթարկվում է պատկին։ Ասել է, թե մեկը վերանորոգման է ենթարկվում բնության զարթոնքի նախօրեին, մյուսը՝ արդեն բնության արթնության օրերին։ Թե՛ մեկը, թե՛ մյուսն օժտված է ռազմի հատկանիշներով։ Նրկուսն էլ, լինելով բնության զարթոնքի ասավածություններ, նման են եգիպտական ծլող Օսիրիսին։ Առհասարակ հայկական պլխավոր ասավածներից շատերը ևս կրում են տառապող երկրի ճակատագիրը (Հայկ, Արա Գեղեցիկ և այլն)։ Այստեղից էլ նրանց ռազմաշունչ բնությունը։

Խան-փաշաներում հալածվող ասավածությունները փոխարինել էին երկրի թշնամիները՝ թուրքերն ու պարսիկները, արաբները ու մոնղոլները և մյուսները։ Այդ պատճառով էլ խաղը տեղի էր ունենում ոչ միայն բարեկենդանին, որը հայ իրականության մեջ սպորտի տոն էր օլիմպիական ձևով։ Տրադիցիայի խախտումով այդ խաղերը տեղի էին ունենում նաև հարսնեաններում։ Այս ևս մի ապացույց է, որ խան-փաշա ասավածությանը նվիրված տոնի շրջանակները դիտավորյալ կերպով մեծացված էին, որպեսզի ժողովուրդն իր ուրախության ժամերին կարողանար արտահայտել, ի թիվս շատ խաղերի, նաև քաղաքական ազատություններ բովանդակող խաղերը։

Մի վարիանտում կռվող շահերից մեկը մյուսին հաղթելիս նրա պարագլխին նստեցնում էր իշին, պոչը տալիս ձեռքը, այրում ուսերին դրած դյուրավառ ցախի խուրձը և պրաստով հանդերձ գցում ջուրը կամ հորը։ Մի ուրիշ տեղում հաղթված շահին նստեցնում էին իշի վրա, երեսը մրոտում էին և պախարակելու համար շրջեցնում գյուղամեջը։

Հաղթող կողմը ուրախացնում և զվարճացնում է հանդիսատեսին այն պատճառով, որ վերջինս նրա մեջն է տեսնում իր իդեալները։ Այդ բանն առավել ցայտուն է այն վարիանտում, ըստ որի կողմերից մեկը թուրքական փաշան է, իսկ մյուսը՝ ռուսական աստիճանավորը՝ իրենց զինված ուժերով։

Ի դեպ է ասել, որ այս վարիանտում ռուսական զինված ուժերի մուտքը, որ տեղի էր ունեցել 1820-ական թվականների վերջերին, ռուս-թուրքական պատերազմի ազդեցության տակ, իսկ գրառումը և հրապարակումը՝ 1863-ին, ուշագրավ է։ Սա միակ վարիանտն է, որ լիովին արտացոլել է հայ ժողովրդի ազատագրական պայքարում ռուս ժողովրդի պատմական դերը։

Սովորաբար ուժեղ կողմի պլուխն էր անցնում «ճաչալնիկը», որպեսզի անվերապահորեն ապահովվեր ռուսական զինքի հաղթա-

նակը։ Նրբեմն այդ խմբերի միջև տեղի էին ունենում լուրջ սրամարտեր, կրակվում էին թնդանօթներից։ Հաղթված փաշային դերում և ներկայացնում էին «նաչալնիկին», որը նրան մրոտելով, իշին թարս նստեցնելով և քաղաքի փողոցները ման ածելով պախարա կում էր։

* * *

Քաղաքական առումով ուշագրավ են Վարդանանց ճակատամարտի արձագանքները ժողովրդական կառնավալային և այլ խաղերի մեջ։ Գրի առնված խիստ սակավ նյութերը ցույց են տալիս, որ Վարդան զորավարի անվան հետ կապված անցքերը եկեղեցուց վաղուց է, ինչ անցել են բուն ժողովրդին։

Պատանեկան խաղերի մեջ Վարդանանց ճակատամարտն անցնում էր անպաճուճ ձևերով. Վանում երեխաները երկու խմբի բաժանվում և ձնագնդի էին խաղում իբրև հայկական և պարսկական բանակներ։ Ղարադաղի հայկական դպրոցներում աշակերտությունը ճակատամարտ տալուց առաջ այդ խմբերը կազմում էր ազգային և պարսկական սիմվոլներով։

Առավել տարածվածը կառնավալն էր, որը քաղաքներում մեծ շքերթի բնույթ ընդունելով՝ տոնը նշանավորում էր անմահ հերոսների անունը փառաբանելով։ Մասնակիցներն զգեստավորվում էին հին հայկական ռազմի, քաղաքացիական և եկեղեցական տարազով, ներկայացնելով հետևակը, հեծելազորը և հոգևոր առաջնորդները։ Սրանք տեղի էին ունենում բարեկենդանի հինգշաբթի օրը։ Ուշագրավ է, որ «խան-փաշա» խաղերը ևս նույն օրն էին կատարվում։ Միանգամայն հնարավոր է կարծել, որ «խան-փաշա» խաղերի օրը հարմարեցվել է Վարդանանց օրվան։ Այս բանին մեծապես նպաստել է այդ խաղերի երկակի բնույթունը, երբ հակառակորդներն անխուսափելիորեն պիտի բախվեին։ Այսպիսով, ժամանակի ընթացքում տեղի է ունեցել միֆոլոգիական երևույթների և պատմական անցքերի վերին աստիճանի հետաքրքրքական միաձուլում։

Քաղաքական բնույթի խաղերը հայերին հայտնի են եղել ավելի վաղ շրջաններում, քան մենք ունենք ձեռքի տակ։ Միջնադարյան պատմիչների ժլատ նկարագրություննների հետևանքով դրանք անհետ կորել են։ Հատ ու կտոր էպիզոդներ կան միայն, որ մեզ են հասել միջին դարերից. դրանք բավական են, որպեսզի մենք քաղաքական բնույթի խաղերի հարցն անխոչընդոտորեն կապենք ժողովրդի պատմության հետ։ Փավստոս Բուզանդը վկայում է, թե ինչպես պարսկական նախարար Բոլեկանի և հայ սպարապետ Վասակի ազատական բնդհարումների ժամանակ Բոլեկանի սպանվելուն հաջորդում է պարսից թագավորի պատկերի վրա նետաձգությամբ խաղի սարքումը (ՓԲ. ՊՀ, 233)։ Մի այլ առիթով արդեն հիշատակել ենք, թե ինչպես պարսից պինվորների պլուխը գնդակ դարձնելու և գնդակախաղ պատրաստելու մասին են մտածում հայ պինվորները Հովհան Մամիկոնյանի հաղորդման համաձայն (ՅՄ. ՊՏ, 201—202 և 274—275)։ Մովսես Կաղանկատվացին հաղորդում է, թե հոների արշավանքներից մեկի ժամանակ ժողովուրդը նրանց Ջհբուլ խաքանի կերպարանքն այլանդակ ձևով գծագրում է գդմի վրա և հոների զորքի առջև խաքան-գդմի նկատմամբ խաղ սարքում, նիզակահար անում (ՄԿ. ՊԱԱ, 158—159)։ Այս նույնը կրկնում է նաև Կիրակոս Գանձակեցին (ԿԳ. ՊՀ, 51)։

Ուշագրավության արժանի են նաև մանկական այն խաղերը, որոնք իրենց մեջ արտացոլել են քաղաքական և ռազմական երևույթներ։ Այդ խաղերը հայտնի են «Գզրի էշ», «Բազավոր շինելս խաղ», «Կամանդար», «Գզրի գզրախշ» և «Հինգ քար» անուններով։ Այս զուտ մանկական խաղերը տարածված էին ամբողջ Հայաստանում։ Պետական ու պինվորական վերնախավի, ինչպես նաև հակառակորդների անհաշտափելիորեն պիտի բախվեին։ Այսպիսով, ժամանակի ընթացքում տեղի է ունեցել միֆոլոգիական երևույթների և պատմական անցքերի վերին աստիճանի հետաքրքրքական միաձուլում։

Քաղաքական բնույթի խաղերը հայերին հայտնի են եղել ավելի վաղ շրջաններում, քան մենք ունենք ձեռքի տակ։ Միջնադարյան պատմիչների ժլատ նկարագրությունների հետևանքով դրանք անհետ կորել են։ Հատ ու կտոր էպիզոդներ կան միայն, որ մեզ են հասել միջին դարերից. դրանք բավական են, որպեսզի մենք քաղաքական բնույթի խաղերի հարցն անխոչընդոտորեն կապենք ժողովրդի պատմության հետ։ Փավստոս Բուզանդը վկայում է, թե ինչպես պարսկական նախարար Բոլեկանի և հայ սպարապետ Վասակի ազատական ըն

թագավորը, վեզիրը կամ սրա փոխարեն պըղիրը և «կոխիլ պցոզը» (հրամանատարը)։ Գրառումներն ըստ պատկանելության ճանաչելու համար անվանվում են պաշտոնների անունով։

Խաղի էությունն է՝ թագավորի և վեզիրի (պղիրի) միջև տեղի ունեցող պատերազմը, որ հայտարարվում է կոխիլ պցոզի կողմից։ Կռվողները հեծնում են պրաոնները և իրար մերձենալով՝ սկսում են միմյանց խփել ու բաշբշել։ Երբ թագավորը վեզիրին գետին է տապալում, դերերն անփոփոխ են մնում, իսկ երբ վեզիր-պղիրն է հաղթում, վեզիրը թագավոր և թագավորը վեզիր է դառնում։ Այս դեպքում փոխվում են նաև նրանց պրաոնների դերերը։

Մանկական այս թագավորության մեջ, ըստ արտաբինի, կոնֆլիկտները ծագում են ու զարգանում միևնույն պետության սահմաններում, բայց, կոխիլ պցոզի դերից և հակադիր «բանակների» առկայությունից մասամբ երևում է, որ թագավորի ու վեզիրի կռվի մեջ սիմվոլացված է տարբեր պետությունների կամ հնում՝ ցեղերի պայքարը։

Հայկական «թագավոր» տերմինի և արաբական «վեզիր»— փոխաբերա-նախարարապետ տերմինի գործածությունից հետևում է, որ այդ կռիվը երկուսի միջև՝ ըստ երևույթին, սիմվոլիկորեն ներկայացնում է հայերի պայքարը արաբների և այլ տիրապետող պետությունների դեմ։

Թագավոր դառնալու և թագավորական հրամաններ արձակելու նմանողական խաղերը հատուկ են եղել բոլոր հին ժողովուրդների երեխաներին։ Այդ ժողովուրդներից քչերին է, սակայն, վիճակվել դրի առնել այս խաղերը։ Հակառակ հայ պատմագրության լռության, որը մեզ չի թողել ազգային այդ խաղի հետագույն օրինակները, հունականի մասին Պոլլուկի թողած մի նկարագրից երևում է, որ մանկական այդ խաղերը տարբեր ժողովուրդների մոտ որքան նման սկզբունքներ ունեն։

Պոլլուկը գրում է, որ (հույն) երեխաները վիճակ են գցում. ով որ թագավոր է ընտրվում, հրամայում է, որ ինչ պետք է անեն. նա, ում վիճակ է ընկնում դառնալ հպատակ, պարտավոր է կատարել բոլոր հրամանները (Игры древних, 79)։

Կյուրոսի մանկությունը ներկայացնող լեգենդում, որ գրի է առել Հերոդոտը, ասված է, որ նրա երեխաները նրան թագավոր էին ընտրում, վերջինս նրանցից մեկին հրամանով նշանակում է պալատական շինարար, մյուսին՝ նիզակակիր-բիկնապահ, երրորդին՝ թագավորի աչք, չորրորդին՝ զեկուցող և այլն։ Լեգենդում այնուհետև ներկայացված են պատանի թագավորի գործադրած դաժանություններն իր հպատակների նկատմամբ, որոնք նույնիսկ մեծերի ուշադրությանն ու միջամտությանն են արժանանում (Игры древних, 81—82)։

Մոտավորապես այդպիսիք են թագավոր դառնալու խաղերը նաև ուրիշ ժողովուրդների մոտ (նույն տեղում, 82—83)։

Ինչպես երևում է, հայկական և հին աշխարհի ժողովուրդների այս նմանողական խաղերի մեջ առանձին տարբերություններ չկան։ Հայկականի ու հունականի մեջ նույնիսկ կան ընդգծված ընդհանրություններ. երկուսի մեջ էլ դերաբաշխումը կատարվում է վիճակահանությամբ։ Հայկական խաղերում ցույց են տրված նաև այլ հանգամանքներ. հաղթությանը կամ պարտությանն անմիջապես հետևում են պաշտոնափոխումներ այն հաշվով, որ վատ ղեկավարներն իջնեն ստորին աշխատանքի. տապալված թագավորն իջնում է վեզիրի կամ գղիրի, իսկ վեզիր-գղիրը՝ դրաստի աստիճանին։ Իրեն չարդարացրած թագավորը խաղի միջոցով ծաղրի է ենթարկվում. վանի «թագավոր շինելու խաղ»-ի մեջ միապետի ձեռքը կեղտոտ դավազան է տրվում։

Այս ամբողջներից դժվար չէ հետևցնել, որ հայկական քաղաքական բնույթի խաղերը և ժամանցները որքան ճիշտ են արտացոլել մեր ժողովրդի պատմական գլխավոր իրադարձություններն ու քաղաքական զոյալիճակը։ Խաղերի մեջ բերված տեսակներում պատմությունն այնպես է արտացոլվել, ինչպես տեսնում ենք «Սասնա Ծռեր» վեպում։

Խաղերի մեջ արտացոլվում են նաև սոցիալական հարաբերությունները։

Գյուղական համայնքային հարաբերություններում «Պարոն գզիր», «Բեկ ու գզիր» և նման անուններ կրող խաղերի մեջ ակնհայտ կամ քողարկված ձևով դրսևորված են մի կողմից իշխող դասերի կամայականությունները և մյուս կողմից՝ հասարակության համակեցության մեջ օրենքների դեմոկրատական ձևերը (որ դեռ տենչանք են)։

Խաղը պարզ և հասարակ է։ Վեգ կամ մատանի վիճակահանիչով մեկը դառնում է պարոն (իշխան, բեկ), երկրորդը՝ գզիր։ Վիճակից անհաջող դուրս եկածները ներկայացնում են ժողովուրդը, որը և ենթակա է պետերի կամայականություններին։

Մեղապարտի համար, երբ նրան արդեն վեգ սորելիս հանցագործ են համարում, միայն մի ելք կա՝ ընդունել, որ ինքը հանցավոր է։

Պատիժների թեթևագույն ձևերն են՝ ապտակոցը, բռնցքահարումը, ականջ քաշելը, լախտահարումը և այլն (Բ. Մխ, 111—112. Բ. Ժխ. ձ. (Ախ.). Հա. խ. ձ. (ՇԳ). Ջ. № 4184, էջ 151ա—152ա)։

Պահպանված էին պատժի միջնադարյան մի քանի վայրագ ձևեր։ Վանում վիճակահանիչ վեգը դնում էին «հանցագործի» մատնեի արանքը. գզիրն այդ մատները վեգին էր սեղմում այնքան ժամանակ, մինչև որ պատժվողը երկնքում անծեղ ցույց տար (Ջ. № 4184, էջ 151ա—152ա)։ Շապին-Գարահիսարում գող համարվածին 1—2 րոպե կանգնեցնում էին մի ոտքի վրա. չոքեցնում էին և ձեռնաթաթերը գետնին պնում և չոմախով դրանք գետնին մեխել ձևացնում. մեջքին տախտակ մեխել ձևացնելով բեկի համար նստարան էին պատրաստում. խմորի նման հունցում էին՝ գլուխն առնում էին ափերի մեջ, տարուբերում էին, պառկեցնում, մարմինը բռունցքներով «հունցում», ապա ձեռքերն ու ոտքերը իրար հասցնում, մարդուն գունդ-խմոր դարձնում, փուռը (կրակի մեջ) նետել էին ձևացնում։

Այս խաղերում կան նաև օրինականության պահպանելու պահանջներ։ Միանձնյա իշխանը որոշ դեպքերում հանցավորին պատժելու համար խորհրդի է նստում համայնքի հետ (Ջ. № 4184, էջ 151ա—152ա)։ Մի այլ տեղում ասված է, որ նիհ իշխանը խաղի մեջ իր կարգադրություններում (իմա՝ օրենքներ հրապարակելու մեջ) սխալ է թույլ տալիս, ժողովուրդը նրան պատժում է (Բ. Մխ, 111—112)։ Վերջապես պարոնի և գզիրի բնաբույթյան հարցում ժողովուրդն ունի որոշակի պահանջ՝ բնաբույթյան գործի մեջ խարեություն չդնել և պաշտոնավորներին հաճախ փոխելով՝ գործը լավացնել։ Այս օրենքը այդ բոլոր խաղերի հիմնական դիծն է։

Սոցիալական անարդարությունների հետևանքով է, որ, ահա, իբրև պայքարի հնարավորություն, ծագում են վերևում ակնարկված «գատավոր» կամ «գատավարություն» և այլ խաղատեսակները։ Սրանք խիստ նման են քաղաքական հարաբերություններ արտահայտող խաղատեսակներին։ Ինչպես քաղաքական, այնպես և սոցիալական բնույթի խաղերն աշխարհիկ կենցաղում կատարվել են, գլխավորապես տղաների և տղամարդկանց կողմից, իսկ վանական կենցաղում՝ հոգևոր դասի ստորին խավի կողմից։

Սրանց թեման հիմնականում գատավարությունն է։ Մեր ձեռքի տակ գտնվող այդպիսի խաղերի 7 օրինակները, որ գրի են առնվել XIX դարի վերջերին և XX դ. սկզբներին, ներկայացնում են՝ Արարատյան դաշտն ու Արագածոտնը, Լոռին, Բարձր Հայքը, Հարավային Հայաստանը։ Պարզ երևում է, որ դրանք կրել են համահայաստանյան բնույթ։ Ըստ էության ասկա են՝ պետական գատարանը, որին ուղեկցում են մուսուլմանական վայրենի կամայականությունները և արդարության վրա հիմնված բուն ժողովրդական դատարանը։

Պետական դատարանի օրինակ են երկու վարիանտները: Առաջինը, որ ուներ «դատավոր» անունը, խաղացվում էր բարեկենդանին: Կարնոհայության մեջ այս խաղը տեղի էր ունենում խնջույքի ժամանակ: Թախարի, արաբի կամ ենիչերու դիմակի տակ երևան եկող զադին, երբ սկսում էր դատել, ընտանիքի անդամները որպես «հանցագործներ», պիտի չոքին նրա առջև, ձեռքները կրծքներին դնեին ու խոստովանեին, որ իբրև հայեր, առհասարակ հանցագործ են: Ապա հետևում էին ծանր պատիժները:

Գրեթե նույնն էր Աշտարակի վարիանտը, որտեղ դատավորը քողարկված է թագավորի (պահակվող տղայի) կամ վեզիրի անվան տակ: Թագավորը, վեզիրը, դրագիրը, ֆարրաշը կազմում էին դատարանի անձնակազմը: Սարքված դատի ժամանակ, փեսեկրայր-ֆարրաշը լախտով հարևանուհիներին ստիպում էր, որ ներս մտնելիս թագավորին երիցս խոնարհեին, ձեռքները կրծքներին դրած՝ կանգնեին:

Օտար պետական դատարանի խցկումը հայկական գյուղի մեջ, պատմականորեն միշտ էլ դժգոհությունների առիթ է ծառայել, որովհետև բռնությունը և «օրենքի» ուժով դրպարտությունները վավերացնելը եղել է մուսուլմանական քմահաճ դատարանի սկզբունքը: Հայ դատաստանագրքերում աներևակայելի է, օրինակ, հային հայ լինելու մեջ մեղադրելը, նրան անպատման հանցագործ համարելը, վկայելու իրավունքից զրկելը և այլն: Բայց մուսուլմանական դատարանի այդ սկզբունքների կիրառումը հայ ժողովրդի վրա՝ դարերի պատմություն ունի: Այստեղից և դրա հարազատ արտացոլումը հայկական խաղաշխարհում:

Օտար և ազգային դատարանների բացառական կողմերից ելնելով է, որ հայկական խաղերի մեջ երևան են եկել դատավարության բուն ժողովրդական հակադրվող ձևերը: Այս տեսակետից լուրջ տվյալներ ունի Ալեվորի «դատավարություն» կոչված խաղը, գրի առնված հայկական կոտորածներից հետո: Բալուի այս եղակի օրինակը մեզ լիովին համոզում է, թե ինչպիսին էր լինելու համայնքային սովորութային իրավունքներով օժտված ժողովրդական դատարանը:

Ահա այդ խաղի համառոտ բովանդակությունը:

Բարեկենդանի հինգշաբթի օրն է: Գյուղի հրապարակում ամբողջ հասարակությունն սպասում է դատարանին՝ երիտասարդներից կազմված խմբին: Տեղ-տեղ նստած՝ քեֆ են անում գյուղի մեծավորները: Փայտե ձին նստած (ոտքերը ձիու մեջ հարմարեցրած)՝ իր խմբի հետ գալիս է դատավորը: Սրան առաջնորդում են առաջապահ ոստիկանները, հետից ու կողքերից գալիս են թիկնապահները, իսկ սրանցից հետո՝ կեղծ ռեսը և այլ մեծավորներ, որ մեղապարտ են համարված: Հրապարակում սրանց երևալու ժամանակ իսկույն դադարում են կերուխումը, պարը, նվագը: Դատավորը հանդիսավոր կերպով տեղավորվում է մեծավորների մոտերքում, նստում մի բարձր տեղ, բարձերի վրա: Հրապարակի կենտրոնում տեղավորում են բանտը՝ երկկողմանի մի ելարան: Դատավարությունն սկսվում է: Այլ հանցավորների թվում առաջինը դատվում է կեղծ ռեսը, որը տվյալ գյուղի իրական ռեսը ներկայացնելով՝ նրա հագուստի նման շորեր է հագնում: Դատավորը լիովին տեղյակ է իր գյուղի տվյալ տարվա ամբողջ անցուդարձին, գիտե մարդկանց փոխհարաբերությունները և այլն, որով և վստահ է, որ կարող է բացահայտել ռեսի և նրա գործակիցների տարեկան գործունեության մեջ տեղ գտած սխալներն ու թերությունները, նա ապագա ռեսի ճիշտ աշխատանքի համար ծրագիր է ուրվագծում: Ամբաստանագիրը ձեռքին՝ դատավորը խաղալիկ կեղծ ռեսին մեղադրում է ինչպես հասարակական գործերի, այնպես էլ առանձին մարդկանց ու ընտանիքների հոգսերի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի գծով: Այդ հարցերը հետևյալներն էին:

1. Տաճանորդը հավաքողների վրա ռեսի հսկողության բացակայությունը:

2. Գյուղի անտառի պահպանության գործում ռեսի անտարբերությունը և թույլ ֆեոդալների կողմից դրանք դրավելու ինդիրը։

3. Ոռոգման ջրի հարցով չզրաղվելը և մեծ վնասներ կրելուց բացի՝ ջուրը (դրա իրավունքը) թույլ հողատերերի կողմից դրավել տալը։

4. Ժամանակին հանդապահ չվարձելը և այդ բանի հետևանքով գյուղի առանձին արդկանց անասունները «խալխուն աքինեբուն մեջ» արածացնելը, ուրիշներին վնաս հասցնելը։

5. Գյուղի այգեպանի վատ աշխատանքը և առանձին մարդկանց այգիներից խաղողի գողությամբ զբաղվելը։

6. Նույնպես՝ գյուղի հովվի վատ աշխատանքը և ապօրինի յուրացումները։

7. Ռեսը չի հսկել գյուղի վրա, ուստի գյուղերն ակսել են թալանել։ Չէ՞ որ ռեսը գյուղի «մեսուլն (պատասխանատուն) է», որը կարող էր երիտասարդներին զինել և գյուղը գիշերները հսկել. այդպես որ շարունակվի «մեր կընկվըտինք ըլ կերթան, մեր ախչկուներն ըլ կերթան»։

8. Ռեսի անտարբերությունները գյուղացիների հողային հարաբերությունների նկատմամբ։

9. Ռեսի կողմից կուլտուր-կրթական գործերն աչքաթող անելը, վարժապետին չվարձատրելը, նրան նյութական սուղ պայմանների մեջ դնելը և այլն։

Հարացքննությունների ընթացքում կնշծ ռեսն աշխատում էր արդարանալ, չէր հաջողվում։ Ի վերջո դատարանը հարցաքննությունը դադարեցնում և դրադրի միջոցով հռչակում էր ժողովրդի կամքն արտահայտող վճիռը. ըստ խաղի՝ իր գործի մեջ անկարող ռեսը պաշտոնանկ էր արվում և անմիջապես ձերբակալվում, շղթայակապվում ու բանտարկվում էր (ոստիկանները հանում էին ռեսի վերարկուն և բարձրացնում բանտը ներկայացնող ելարանի վրա)։

Կարելի է երևակայել հրապարակում խնջույքի նստած իրական ռեսի և մյուսների վիճակը և ժողովրդի ցնծությունը, որ դրանք այս ձևով կարողանում էր իր մտածածներն արտահայտել։

XIX դ. վերջերին և XX դ. սկզբին ամբողջ հարավային հայկական գավառներն թվում Բալուն ևս ապրում էր դատակարգային շերտավորման ուժեղ շրջան։ Դատավորի ելույթում ցայտուն կերպով շոշափված են այդ շերտավորման հետևանքով գյուղի ներքին շահագործողների և աշխատավոր գյուղացիության միջև առաջացած հակասությունները։ Բնական է, որ ժողովուրդը դատավորի բերանով արտահայտած իր ցասման բուն պատճառների մեկնաբանությանը չհասնելու հետևանքով առարկում է տխուր փաստերի դեմ և, ինչպես սպասելի էր, միամտորեն դատախարակչական, խրատական ձևով ուզում է բարեփոխումներ մտցնել գյուղական վարչական ապարատի աշխատանքի և ժողովրդի հետ նրա ունեցած հարաբերությունների մեջ։ Չի կարելի ասել, թե այս եղանակով իր ժամանակին ռեսներն ու մածավորներն իսպառ անդրդվելի էին մնում։ Բայց դա այնքան չնչին ազդեցություն էր, որ ժողովրդի սպասելիքներն ի դերև էին ելնում։

Ձևով պետական և վարվելակերպով իսկական ծողովրդական դատարանի օրինակ են պետականական «դատավարություն» կոչված խաղերը։ Ի տարբերություն նախորդ դատավարական ձևերի, այստեղ դիպուկ կերպով քննադատվում են երկրի բագավոր-դատավորները և իրենց գործակիցները, որպես ոչ բանիմաց և աշառու մարդիկ։

Ինչպես իրականում, ժողովրդական բանահյուսության մեջ էլ պատանեկան սայլ խաղերի նյութը հիմնականում նույնն է. հարուստ վաճառականների և ընչազուրկ գյուղացիների վատ հարաբերությունն է, որ դառնում է բագավորական ատյանի քննության առարկան։ Որպես օրինակ, բագավոր-դատավորի դատավարության դեպքում դատը շահողները մեղավորներն են լինում։ Սրեխանների կողմից վերստին դատելու հանդա-

մանքները նման դատավորների աշխատու-
նելը ցույց տալու միջոց են: Այս դեպքում
միայն ուժեղ ամուսինը դատը շահում
և բազավորին ծիծաղելի դրության մեջ է դը-
նում:

Առաջ բերենք նման դատավարության մի
օրինակը հայ ժողովրդական բանահյուսու-
թյունից:

Պանդուխտ առևտրականի ձեռքով երեք
անգին քար ուղարկում է հայրենիք՝ կնոջը:
Առևտրականը քարերը յուրացնում է: Պան-
դուխտը երբ տուն է վերադառնում, առև-
տրականին դատի է տալիս: Վերջինս կեղծ
վկաների և կաշառատվության միջոցով դա-
բը շահում է:

12 տարեկան հորթատած Տատ Պետատը
«կը լսնա հրմեն»: Ապա, երեկոյան, ըստ
երևույթին բազավորական նույն պալատում,
Տատ Պետատը կազմակերպում է նոր դատ:
Դատարանի մի անկյունում, իբրև դիտողներ,
նստում են բազավորը և վեզիրը: Տատ Պե-
տատը բացահայտում է ագահ հարուստի
ենթդուքյունները և վճիռ է կայացնում պան-
դոխտի օգտին (ԷԱԺ. IV, 119—121. Տմ.):

Դատավարության այս եղանակը տարած-
ված էր Հայաստանի բոլոր բնակավայրերում
և գոնեարածների ամենասիրած խաղերից
մեկն էր: Երեխաներն ստանձնում էին ոչ
միայն բազավորի և այլ պալատականների,
այլև գավառական զանազան պաշտոնյաների
դերերը: Այդ տեսակետից մեծ արժանիքներ
ունի Վրթանես Փափազյանի մշակած
«Խաղ»-ը, որի մեջ լուսին տեղ է գրավել նաև
սուսական գավառական բյուրոկրատիան:

«Խան-փաշա» խաղերին բավական նման
խաղատեսակների թվին են պատկանում
«արեգաթող» կոչվածները, որ խաղում էին
վանականները:

Այս խաղի անձնակազմի հիմնական ան-
դամները վանականների ստորին և միջին
խավերն էին՝ մանկները, սարկաւագները և
վարդապետները, ինչպես երևում է
Երուսաղեմի վարքանոցից, բացառված չէր
նաև եպիսկոպոսի մասնակցությունը:

Խաղի առնվողները, երգ ու տաղով այն
համեմողները, և երբեմն էլ նույնիսկ խա-
ղացող հոգևորականների հետ կատակ-կռիվ-
ներ սարքողները գուսաններն էին լինում:

Հավաքված միաբանները քվեարկությամբ
ընտրում էին իրենց թափորապետը, որի գլ-
խին դնում էին թղթե «չամիլ-թագ». գեմքը
ծածկում էին ալեւարի դմակից պատրաստ-
ված դիմակով. հագցնում էին թղթե շուրջառ,
որի վրա նախապես գրում էին բոլոր միա-
բանների անունները, ձեռքն էին տալիս կեղ-
տոտ գավազաններ:

Ապա թափորապետը նստում էր քրձերից
պատրաստված ամպհովանիով գահավորակ-
ին. վերջինիս չորս ծողերից կանթեղներ
էին կախում: Թափորապետն իր դիրքն էր
առնում դինու տիկը և առաջարկում միա-
բաններին՝ դինի խմել: Ջորս տիրացուներ
վերցնում էին գահավորակը: Թափորը շարժ-
վում էր. վառած մոմերով ու ճրագներով շրը-
ջապատողները շարական էին երգում: Ընդ-
հում էին գինեխումի ժողովրդական երգերը:
Գահավորակը շարժվում էր առաջ: Թա-
փորապետի և տիրացուներից մեկի միջև տեղի
ունեցող երկխոսության միջոցով միաբա-
նության անդամներն իրենց սոցիալական
դիրքին համեմատ ծաղր ու ծանակի էին
ենթարկվում:

Ըստ Երուսաղեմի սովորության, խաղը
վերջանում էր «թաղման» արարողությամբ.
տիրացուների համար պարզ դառնալով, որ
թափորապետը դժոխքի ծնունդ է, գահավո-
րակը կործանում էին. վեհապետը մեռած էր
ձևանում:

Մի այլ վարիանտի համաձայն միաբա-
նությունն ղեկավարում էր մեզ ծանոթ «Խան»
խաղախումբը, որտեղ խանը գործադրում է
իրեն հատուկ ռեպրեսիաները:

Այս է արեգաթողների՝ իբրև սոցիալական
հարաբերություններ արտահայտող խաղերից
մեկի, մոտավոր պատկերը:

Ինչպես երևում է, հանձին արեգաթող-
ների մենք գործ ունենք ինչ որ ուշագրավ
երևույթների հետ: Անկախ իրենց սակավու-

թյունից, դժվար չէ պրանց մեջ տեսնել ծիսային խաղի հնագույն շերտերից մինչև ուշ շրջանների սոցիալական պայքարի տարբեր ձևերի առկայությունը։

Թվենք այդ շերտերը։

1. Նախնադարյան դուալիզմի հետքեր. այդ են հատատում ինչպես բուն վանականների խաղախմբերի ներքին երկպառակությունը խաղալու միջոցին, այնպես էլ գուսանների ու վանականների ընդհարումները։

2. Խաղի մեջ պահպանված են հայ եկեղեցու կողմից աղանդավորական շարժումների դեմ միջնադարում ծավալված պայքարի ձևերը։ Մենք նկատի ունենք մասնավորապես բորբորիանների և մծղնեականների աղանդների նկատմամբ եկեղեցու ձեռք առած միջոցները, որոնցից մեկը անպայման եղել է «աբեղաթող» ծիսախաղը։

Իսկ ինչո՞վ բացատրել «աբեղաթող» տերմինի բացակայությունը միջնադարյան պրակտիկայում, և, առավել ևս Հայկազյան բառարանի մեջ։ Գուցե այն պատճառով, որ աբեղա բառը ասորերեն awilā բառն է կուսակրոն առումո՞վ։ Չէ՞ որ հենց աբեղա բառը պրանցված է այդ ապրելաոևներում։ Գոնե պետք է ունենայինք պրա, այսինքն՝ աբեղաթող տերմինի համանիշը։

Թվում է, որ պատճառը խաղի անպատշաճությունն էր լինելու։ Խաղացողների վերապահ բերանով այդ խաղն անվանված է «խաղք-խայտառակ» («Օրհնեսցի և պահպանեսցի... խաղք-խայտառակ աբեղաթող ասլուրս...»)։ Մեզ հայտնի է, որ նման խաղք-խայտառակ խաղերը երբ աշխարհիկ անձինք էին ներկայացնում, եկեղեցին խստորեն բանադրում էր նրանց։ Կարծում ենք, որ իր կողմից ներկայացվող խաղը կղերականությունը չէր կարող բանադրել։

Խաղի արարողության նախնական եղանակը վերցնելով Հեթանոս հայերին հայտնի ձևերից, աշխատավոր ժողովուրդը դրան կերպարանափոխել, տվել է քաղաքական բովանդակություն, որ, իբրև պայքար, ուղղված էր օտար ճնշումների դեմ։ Իսկ եկեղեցին պրան տվեց սոցիալական բովանդակություն՝ պայքարն ուղղելով իր իսկ «հատի» դեմ։ Օտար տերապետությունների պայմաններում եկեղեցին առաջինները, և, նույնիսկ հայ արքունիքի դեմ նման ծագր ու ծանակ չէր տարբի։ Աղանդավորության դեմ իր մղած պայքարում եկեղեցին հենվում էր պետական մեքենայի վրա, և, իր ճնշման տակ էր պահում մասնավորապես աշխատավորության բոլոր տարրերին։ Փաստերը ցույց են տալիս, որ այդ դաժան պայքարի դրսևորմամբ «աբեղաթող»-ների մեջ՝ պետք է որ գոյություն ունենար վաղ միջնադարում։

Դիմենք մեր ձեռքի տակ եղած սակավ, բայց ակնհայտ փաստերին։

Արդեն հայտնի է, որ «Աբեղաթող»-ը վանականները խաղում էին բարեկենդանի համաժողովրդական տոնին։ Այս հանգամանքը կարևոր է հետևյալ պատճառով։ «Կանոնք Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի» այն հատվածում, ուր խոսվում է «Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և սրոշումն վանից» խնդիրների մասին, ԽԹ հոդվածում ասված է. «Եւ ասն բարեկենդանի և պղպմանան մեծ, որ թարգմանի բարեբանեալ օր և թէ այլ ասն որ կատարեսցէ յանուն առաքելոց և մարգարէից, հատարակ եղիցի, զի յայնասլիս աներևիան և առանց հակառակութեան պաշտօնէից կացցեն դասք, զիտելով որում շնորհի արժանաւորք եղեն, զի պարկեշտութեամբ և ուսումնասիրութեամբ վարեսցին և մի եղիցին բանակռիւք, այլ սիրով, արթունք յամենայնի, զի բաւական լինիցին խրատիւ զատահակս և յուշացեալս ածել ի կարգ հաւատոյ, քանզի այդ գործ է վարդապետի և հոգևոր հովուի» (42, 38)։

Այստեղից երևում է, որ ս. վանականները բարեկենդանին և ծաղկազարդին (պղպմանան մեծ) առաքյալներին և մարգարեներին նվիրված, ինչ որ արտակարգ տոն էին կատարում։ ր. Այդ տոնակատարությունները հատարակ, աներևիան (անկեղծ ու ղվարթային, աշխուժ) լինելուց բացի կատարող

խմբերը հոգևոր պաշտոնյաներին հակառակ բաներ չպետք է թույլ տային։ դ. Բանակոմիները չէին իրավասություն։ դ. Սահակներին (անկարդներին, անտառականներին, խոսվարարներին, ըմբռնաններին) և ծուլացածներին խրատելը և հավատի բերելը պետք է կատարվեր խորամանկորեն։

Ինչպես տեսնում ենք, կանոնը հետու է դուս եկեղեցական որևէ ծեսի արարողությունը պահանջվող ձևով կատարելու խնդրից։ Այն պարզապես մատնում է «արեգաթող» ծիսախաղի գոյությունը Սահակ Հայրապետի օրոք, թերևս ոչ «արեգաթող» հոչորչմամբ։ Այլապես ծիսական արարողության մեջ ինչպե՞ս կարող էին թույլ տրվել այնպիսի անպատշաճություններ, որպիսիք բերված են կանոնի մեջ։

Առաջ բերելով ժամանակակից խաղի մեջ պահպանված այդպիսի անպատշաճությունները, որ հենց վանականների սուրբն խավերն էին թույլ տալիս վերնախավերի հասցեին, մենք ավելի կհամոզվենք, որ Սահակի կանոնը վերաբերվում էր խաղին, և ոչ թե եկեղեցական որևէ արարողության։

Ահա համառոտակի այդ փաստերը։

«Արեգաթող» խաղացող թափորապետին հագցնում էին թղթե շուրջառ, որի վրա գրում էին բոլոր միաբանների անունները. դիմակի փոխարեն մուր էին քսում։ Մորուքի փոխարեն դնում էին ոչխարի դմակ։ Գլխարկն էր՝ թղթե ահագին չամչ-թագը։ Վեհապետական զավազանի փոխարեն տալիս էին չոր խոտից հյուսած և քակորով ծեփած գավազանը։ Գուսանների երգերի մեջ նա համարվում է փետուած մորուքով, շլացած աչքերով, մեծափոր մի մարդ։ Նա նաև դժոխքի ծնունդ է։ Վարդապետները համարված են մոլտան կատուներ, որոնք «արեգաթող» խաղալիս պարտավոր էին ծառայել ուրիշներին։ Եպիսկոպոսները կապկվում էին։ Գյուղի համփանները, որ միաբանության անդամ էին լինում, արժանանում էին «բետ բետ դիզան» անարգական կոչմանը։ Էջմիածնի հրացանակիր-պահակները խաղի միջոցին հրահրում էին տերտեր ու վարդապետ կապկպել։ Շատ բնորոշ է, որ խաղի մասնակիցներից մոնթերը, տիրացուները և սարկավագները այդ խաղի խաղերգերում կաքավներ և ճնճղուկներ են կոչվում, չեն անարգվում ճիշտ այնպես, ինչպես պարերգեր երգող աղջիկների մոտ անարգական մատղիր սատանում էին տղաները և գովքի խոսքեր՝ իրենք, երգչուհիները։

Սրանք որոշակիորեն ցույց են տալիս, մի կողմից, ազանդավորների դեմ մղվող պայքարը, որ V դարում իրրև քննաթատության ու «դաստիարակության», հավատի բերելու միջոց, մտել էր եկեղեցու պատերից ներս և մյուս կողմից՝ հոգևոր ֆեոդալների դեմ մղվող պայքարը, որ նախորդի հետ ձուլված ձևով հանդես էր բերվում խաղացող անձնակազմի կողմից։

Մենք կարծում ենք, որ թափորապետը խաղի մեջ հետո ներկայացվում էր որպես ազանդավորների առաջնորդ, կամ ազանդավորության մեջ մեղադրվող բարձր կարգի հոգևորական, որի համար էլ ծաղր ու ծանակը հատկապես ուղղված էր դեպի նա։

Նկատի ունենալով բորբորիտների նկատմամբ եկեղեցու բանադրական ձևերը, թվում է, որ խաղի մեջ թափորապետ-վեհապետին արված անարգանքներն ամենից առաջ կապվում են այդ աղանդի հետ։ Հենց բորբորիտ բառը հունարեն էր և, ըստ Ստ. Մալխասյանցի borborionoii բորբորյանք էր նշանակում. հետագայում բառախաղով փոխվում, դառնում է borboros, ցեխ, աղբ, կեղտ նշանակությամբ (ՄՐ. I, 388)։

Թափորապետի ձեռքը աղտոտ գավազան տալը, այդ իմաստով, բացարձակորեն բորբորիտների սիմվոլն է։ Ըստ էության Մալխասյանցի ակնարկած բառախաղի գաղտնիքն էլ այստեղ պետք է որոնել։ Եվ մի՞թե թափորապետի դեմքը ոչխարի դմակ-դիմակով պատկելը կապված չէ աշխարհիկ և հոգևոր անձանց՝ մծղնեությունը մեջ մեղադրելիս ճակատներին աղվեսադրոշմ դնելու հետ, որ առաջադրում էր Շահապիվանի ժողովը 447 թվականին, իր ժի կանոնով (կշ, 80)։ Թափորապետին դժոխքի ծնունդ համարելը, ինչ-

պես նաև փետուրով, շլացած աչքերով ներկայացնելը ուղղակիորեն կապվում է ազանդավորության մեջ մեղադրվող եպիսկոպոսի կամ վարդապետի հետ։ Այդ նույնը կարելի է ասել նաև միաբանության մյուս անդամների մասին՝ խաղի մեջ դործադրվող միջոցների և անարգական արտահայտությունների կապակցությամբ։

3. «Արեզաթող» խաղի մեջ ներկայացված է, որպես մի նոր շերտ, հայ կղերական երկու խավերի՝ բարձր պաշտոնյաների և սոսրադրբյալների միջև մշտական պայքարը։

4. Եվ, վերջապես, մենք այս խաղի մեջ իրրև չորրորդ շերտ ենք դիտում աշխատավոր դյուղացիության և կղերականության հակասությունների արտացոլումը։

Խաղի այս նոր հավելյալ շերտի մեջ մենք պահում ենք այն բոլորը, սոցիալական ընդվդումների համար բնորոշ այն ձևերը, որ հատուկ էին XVII դարում հայանի Մեխլուի պլեսավորած հակաֆեոդալական դյուղացիական շարժումներին։

Մեր «Արեզաթող»-ների և «խան-փաշա» խաղերի արատաին ձևերի ու Մեխլուի և իր 12 «առաքյալների» միջև ձևական տեսակետից տարբերությունները չնչին են։ Մեխլուն ըստ Գրիգոր Դարանաղեցու «...էր քրձազգեաց և խարանազգեաց և կնկուղն դնելով ի գլուխն. զամենայն ղգայարանն ծածկելով՝ մինչև ցկէս մօրուացն, բայց միայն հանդէպ երկու աչացն ծակոտիկն էր, զի լոյս տեսցէ վասն ընթերցման ազագաւ»։ Այդ նույնն է պնդում նաև Զաքարիա Սարկավագը, ավելացնելով, թե Մեխլուն իր գլխատի վրա, սրտամասում, մեխեր էր խրում, որից և «Մեխլու» անունը։ Իր ընտրած 12 կարիճներին («առաքյալներին») նա դինում էր լախտերով (լախտավոր մահակներով) և բրևրով (ՉՍ. I, 49)։

Մեխլուի շարժման մասնակիցների (գինվորների) թիվը Զաքարիա Սարկավագը հասցնում է 500-ի, որոնց մեջ կային «Գռեհիկ աշխարհականք և ռամիկք, այլև ազեաւ երիցունք, և փարթամ և մեծազդի մարդիկք» (ՉՍ. I, 49)։ Գրիգոր Դարանաղեցին նույնպես պահում է, որ «ազեաւ աշխարհականներն» էին Մեխլուի զորապետները, իսկ սրպես շարժման սոն ավազներ, նա համարում էր ջուղայեցի վաճառականներին, որոնք աշխարհով մեկ թափառելով, ամեն տեսակ «շար սովորություններ» էին բերում և, նույն պատմիչի ասելով, հայ եկեղեցու հետ հակամարտությունների մեջ էին գտնվում։ Ու սրքա՞ն ստույգ է, որ Մեխլուի շարժման մասնակիցներ էին նաև որոշ «երիցունք» և «մեծազդի մարդիկք», պատմաբանասիրական գրականության մեջ տակավին չլուծված հարց է։ Բայց որ հայ առևտրական դասը պետք է նպաստեր խոշոր հոդատիրության դեմ ամեն տեսակ շարժումներ, կասկածից դուրս է։ Այս իմաստով էլ «արեզաթող»-ների մեջ երևան եկող նման գրսևորումները ճշտում են Զաքարիա Սարկավագի և Գրիգոր Դարանաղեցու հաղորդումները Մեխլուի վարքագծի մասին, որովհետև նույն խաղերի մեջ պարզորոշ կերպով արտացոլված են այդ շարժման դատափարները և ձևերը։ Այդ բանը երևում է խաղի այն ակնարկներից, որ վերաբերում է հատկապես կղերականներին կապելու, շարշարելու, բաբեկենդանյան թողավությունների պայմաններում նրանց անարգական խոսքերով ձաղկելու հետ, որ բացարձակորեն նույնանում են Մեխլուի՝ հոգևորականության հանդեպ ունեցած նրա վարքագծի հետ։

* * *

Այսպես, ուրեմն, հասարակական, կենցաղային և շարժական խաղերի ու հարսանեկան հանդեսների ժամանակ կատարվող արարողությունների վերարերյալ մենք շոշափեցինք մի քանի հարցեր, որոնք հայ իրականության մեջ տակավին չեն ուսումնասիրվել։ Այդ խաղերի և արարողությունների մեջ պահպանվել են տոհմային կարևոր իրողություններ, որոնք ժամանակների պահանջով սիմվոլիզացիայի են ենթարկվել։ Այդ սիմվոլների ուսումնասիրությամբ բացահայտվեցին հասարակության միությունների ու նախնադարյան դուալիզմի ուշագրավ հետքեր, իսկ դասակարգային հասարակության մեջ՝ պատմության բերումով ծիսախաղերի վրա բարդված քաղաքական ու սոցիալական անցքերի թողարկված դրսևորումներ։

Բ Ն Ա Գ Ր Ե Ր
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՏԱՅՈՒՂՂԱՑՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

I. ՏՈՆԱԾԻԱԿԱՆ–ԴԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Այս բաժնում զետեղված են մանկական մի քանի խաղեր, որոնց դերակատարները պետական պաշտոններ ստանձնելով խաղում են՝ առանց դրանց ծիսական բնույթ հաղորդելու: Դրանք այս բաժնում են զետեղվել բովանդակության պատճառով:

Ապա ներկայացված են Վարդանանց տոնն արտացոլող և միջնադարից մեզ հասած Արևելահայաստանում «խան» ու «մելիք» և Արևմտահայաստանում՝ «փաշա» անունը կրող խաղատեսակները: Ըստ էության, ինչպես տաված է, քաղաքական բնույթ ունեցող այս նյութերը ժողովրդի կողմից վերանվանված են պարսկական խաներին և թուրքական փաշաներին ծաղրելու համար: Այդ նոր անվանումների իմաստով, անշուշտ, պարսկական տիրապետության տակ «խան»-երն ավելի հին պատմություն ունեն, քան «փաշա»-ները Թուրքիայում:

Թվում է, թե իբրև օրինաչափ պարզաբանման արդյունք, երբեմնի լուկ ծես-արարողությունները Արևմտահայաստանի տերիտորիայի վրա կարող էին ընդունել նոր, քաղաքական բովանդակություն մինչև Օտտոմանյան տերության քաղաքական ազդեցությունները:

Միջնադարյան հայ գրականությունը մեզ ոչինչ չի թողել, եթե բացառենք Ջաքարիա Սարկավագի «Ավելապլուխ իշով թագավոր» Հայտնի նկարագրությունը: Բայց հենց վերջինս բավական է, որպեսզի մենք վստահորեն պնդենք, թե հայ ժողովուրդը օտար տիրապետության դեմ մաքառելու համար հոգեվոր զենքերից մեկն էլ «խան-«փաշա»-ներն է դարձրել:

XVII դարից հետո այդ թեման մեզ մատչելի գրական հուշարձաններում չի երևում մինչև Պ. Պռոշյանի և Րաֆֆու գրական ասպարեզ իջնելը:

Այս հեղինակները փաստորեն դրեցին «խան-փաշա»-ների գրաման հիմքը, որին, այնուհետև, հետևեցին ուրիշ բանահավաքներ: Սակայն մենք անթավարար ենք համարում այն ամբողջը, որ գրի է առնվել մեկ հարյուրամյակում. մենք փաստորեն չունենք «խան-փաշա»-ների լիակատար պատկերը պատմական Հայաստանի մասշտաբով, որը կարող էր ավելի մեծ արժեք ներկայացնել[1]:

[1] *Մենք չարունակում ենք հավաքել դրանք, առանձին ժողովածու կազմելու նպատակով: Ժողովածուն կունենա նաև «խան-փաշա»-ների տարածականության քարտեզ և առանձին ուսումնասիրություն:*

ժամանակագրական տեսակետից նայելով՝ այդ նյութերի դրաման պատմությունը հետևյալն է.

1. «Ավելագլուխ իշով թագավոր» (7). Եղվարդի փոփոխակ. գրի է առել պատմիչ Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին XVII դարում[2]:

2. «Խան» (8). այս փոփոխակը գրի է առել Բաֆֆին 1855 թվականին[3]:

3. «Շահ» (10). Աշտարակի փոփոխակ. գրի է առել Պերճ Պռոշյանը 1858 թվականին[4]:

4. «Եղգյար խան» (9). Աշտարակի փոփոխակ. գրի է առել Պ. Պռոշյանը 1879 թվականին[5]:

5. «Փաշա» («Ղևենոբա») (19). Թիֆլիսի փոփոխակ. գրի է առել Գ.(եորգ) Տ.(եր) Ա.(ղեքսանդրյանցը) 1863 թվականին[6]:

6. «Փաշա» խաղի երկու փոփոխակ վանում (11, 12). գրի է առել Երեմիա եպ. Տեր-Սարգսյանցը (Տեկանց) 1881 թվականին[7]:

7. «Մելիք» (20). Վարանդայի փոփոխակ. հրատարակել է «Նոր-Դար» թերթը 1886-ին[8]:

8. «Ղոշուն-Ղոշունի կամ Շահ-Շահի» (16). գրի է առել Վահան Վ. Տեր-Մինասյանը, Հավանորեն 1893-ին[9]: Վայրը անհայտ է:

9. «Բոշան դախա մը փաշա» (18). Մշո փոփոխակ. գրի է առել Իգիթբաշին 1895-ին[10]:

10. «Փաշա» (15). Սիսիանի փոփոխակ. գրի է առել Ե. Լալայանը 1898-ին[11]:

11. «Էշակ պարոն» (30). Վարանդայի փոփոխակ. գրի է առել Ե. Լալայանը 1898-ին[12]:

12. «Ղոշուն-Ղոշունի կամ Շահ-Շահի» (17). Գանձակի փոփոխակ. գրի է առել Ե. Լալայանը 1900-ին[13]:

13. «Շահ» (24). Բորչալուի փոփոխակ. գրի է առել Ե. Լալայանը 1900-ին[14]:

14. «Փաշա չինել» (22). Խոշաբի փոփոխակ. գրի է առել Ա. Ղանալանյանը 1936-ին[15]:

15. «Փաշա» (23), Էջմիածնի Հայթաղ գյուղի փոփոխակ. գրի է առել Հար. Ավչյանը 1946-ին[16]:

16. «Խան կպիլեն օրը» (29). Դարագապի փոփոխակ. գրի է առել Օն. Եղանյանը 1947-ին[17]:

17. «Փորսուղ կառնավալ» (28). Շապին-Գարահիսարի փոփոխակ. գրի է առել Գ. Հյուսիսյանը 1952-ին[18]:

18. «Փաշա» (21). Մարտունու փոփոխակ. գրի է առել ուսանող Համազասպ Գ. Կարապետյանը 1952-ին:

19. «Խան» (14). Գափանի շրջանի Արծվանիկ գյուղի փոփոխակ. պատմել է արծվանիկցի Գրիգոր Սահակյանը. գրի է առել Վ. Բդոյանը 1952-ին:

20. «Չի խաղցուցել» (13). Հայոց Ձորի փոփոխակ. պատմել է նույն գավառի Հերմենիկ գյուղացի, երևանարնակ Արշակ Հովհ. Զաքարյանը. գրի է առել Վ. Բդոյանը 1952-ին:

---

2 «Զամաբեայ Սարկաւագի Պատմագրութիւն». Հատ. երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 118—119:

3 Բաֆֆի. Երկերի ժողովածու, Հատ. I, Երևան, 1955, էջ 206—207 («Մայրիկ» վեպում):

4 Պերճ Պռոշյան. «Մահ և Վարդիթեր» վեպում:

5 Պերճ Պռոշյան. «Հացի խնդիր» վեպում:

6 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1863, № 7, էջ 72:

7 Երեմիա եպիսկոպոս Տեր-Սարգսյանց (Տեկանց), Տաճարային հիշատակարան, Վարագ, 1881, ձեռագիր: Տե՛ս մատենադարանի ձեռ. № 4184, էջ 91բ—94ա:

8 «Նոր-Դար» օրաթերթ, 1886, № 30 և 6. Լալայանի ձեռագիր նյութեր. տե՛ս պետական պատմության բանգարանի ազգագրական բաժնի գիտական արխիվ, № 77, էջ 45—47:

9 Վահան Վարդապետ Տեր-Մինասյան. Անգիր դպրություն, Հատ. Բ, Կ. Պոլիս, 1893, էջ 70—72:

10 «Արձագանք» լրագիր, 1895, № 109:

11 Ա.Հ. III, էջ 251—252. IV, էջ 107—109:

12 Ա.Հ. III, էջ 341—342:

13 Ա.Հ. VI, էջ 365—366:

14 Ա.Հ. IX, էջ 243:

15 Ա.Ժ. բ. II, 619—620:

16 Պետական պատմության բանգարանի ազգագրական բաժնի գիտական արխիվ, № 106:

17 Տե՛ս պետ. պատմության բանգարանի ազգագրական յարնի գիտական արխիվ, № 157:

18 Նույն տեղում, Գ. Հյուսիսյանի ֆոնդ:

21. «Փաշա» (25). Ռշտունիքի փոփոխակ. պատմել է Ռշտունիքի (Թավաշի) Պախվանց գյուղացի, էջմիածնարնակ Գաբրիել Մուրադի Մուրադյանը. գրի է առել վ. Բդոյանը 1958-ին:

22. «Փաշա» (26). Վանի Բիմարի շրջանի Ալյուր գյուղի փոփոխակ. պատմել է ալյուրցի, էջմիածնարնակ Երվանդ Փանոսի Խրոպոյանը. գրի է առել վ. Բդոյանը 1958-ին:

23. «Փաշա» (27). Մոքսի Նանինց գյուղի փոփոխակ. պատմել է նանինցեցի, էջմիածնարնակ Ավետիս Գալստյանը. գրի է առել վ. Բդոյանը 1958-ին:

24. «Չավեշտաբանություն» (31). Ջարսանճաղի փոփոխակ. գրի է առել Գ. Ս. Երիանյանը 1956 թվականին:

Ա. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԱՐՁԱԹԱՆՔՆԵՐ

1. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ

...Այգուցեն հետո կը տոնվին Վարդան, Վահան, Միհրան, և այն ամեն անուններ, որք տոնական հատուկ օր չունին: Իրարու շնորհավորի երթալով ուրախություններ ընելու մեծագույն օրն է այս օրը:

Բայց ահա ձայներ կը լսվին, սազերու, քամանչեներու անուշիկ զեղգեղ նվագներ, և դես ու դեն պարավորներ կան, որոց գափն ու թմբուկ կը դոդոռան և կողջունեն բարեկենդանը...

...Հոն են և ի նժույգ աշտանակած Միհրանիկներս ու Վահաններս ու պիրար կը շնորհավորեն ճոճելով ճոկանն ճապուկ ճախր ի ճակատն ճերմակ ճաճանչուն, ըստ հին խաղերու ու խաղքերու: Գարեգինիս ու Տիրանիկիս դեմ դիմուկն են Վարսենիկս ու Վարդենիկս. կարմիր հալավ են հագած, պապղուն վալա են կապած, հյուսքեն կիտ ու կիտ գոտին ի մեջք, հինայոտ մատիկներով ամփիկը կը շլշլկեն և մերթ ընդ մերթ կը դափեն պարելով շորորը: Այլևս գիլ ի գլոր են, խելահեղ՝ արուն-արցունքոտ են սրտեր, երբ կը հեղհեղվի սա հնամանդ, սրտերն իրարու կապող ու կաշկանդող, ամրապինդ զոդող սա ուխտանվագը կամ երթմներգը:

Հավկուր ըլլեի,
Քեռր ժուռ մարդ գայի,
Մուրիկ ըլլեի,
Մուրս ի վրա գայի
Փուտ փատ ըլլեի,
Փուշ վատր գայի.
Սև ուրացողի
Սև երեսն ըլլեի, ա՛յ,
Թը աչք կապուկ խաղայի,
Սիրականս խաղր աննեի, ա՛յ, ա՛յ:

ԱԳ, II, 60—62

2. ԿԱՌՆԱՎԱԼԸ ԱԽԱԼՑԻԽԵՒՈՒՄ

Վարդանանց տոնը բարեկենդանի հինգշաբթի օրը Ախալցիխեւում մեծ շուքով էր կատարվում: Կառնավալին մասնակցում էին քաղաքի նշանավոր մարդիկ և բոլոր համքարությունների անդամները: Սովորություններ համաձայն մասնակիցների զգալի մասը զգեստափոխվում և պինավառվում էր: Քաջն Վարդանը կրում էր հնաձև սազավարա և զենք ու զրահ: Մյուս ռազմիկները և հոգևորականները զգեստավորվում էին ըստ պատմական տվյալների, գլխարկները մեծ մասամբ պատրաստվում էին սավարաթղթից և գունավորվում: Ոմանք կրում էին պաշտպանական դիմակներ: Վարդան զորավարը և նրա դինակիցները ձիավորվում էին: Ինչպես

Երևում է 1880-ական թվականների վերջերից մեզ հասած մի լուսանկարից[1], կառնավալին մասնակցում էին նաև կառապաններն իրենց կառքերով։ Ջինվորներն ու ջինվորականների բացի սովորական սառը զննքերից կրում էին նաև հնագույն ձևով փայտից պատրաստված սրեր, տեգեր, նիզակներ և այլն։ Վահանների փոխարեն ամանք սաչա և մաղ էին կրում։ Բազմական և հոգևոր առաջնորդները Հայրենասիրական ճառեր էին արտասանում և պարկապզուկ նվագողների ուղեկցությամբ մեծ թափորով շրջում քաղաքի փողոցները։ Թափորն ստվարանում էր ժողովրդի միանալով, որը նրան շուք էր տալիս (նկ. 12)[2]։

Բ. Ժա. Ա.

3. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ղարադաղում Վարդանանց տոնը 1900-ական թվականներից սկսած «ավելի ազգային բնույթ էր ստացել, քան կրոնական»։ Պատարագից հետո ազատ հրապարակում ըղպրոցական աշակերտության մասնակցությամբ ներկայացվում էր պատերազմի տեսարանը։ Աշակերտները բաժանվում էին երկու բանակի։ Հայկական բանակը իր մասնակիցների դիմարհներին ամրացնում էր խաչեր, իսկ պարսկականը՝ արևի նշան, և սկսվում էր կռիվը՝ փայտե սրերով։ Կռվում Վարդան զորավարն սպանվում էր, բայց հայկական զորքը իր սպարապետի վրեժն առնելու համար հարձակվում ու «ոչնչացնում» էր պարսկական բանակը։

Եղ., 614

4. ԲԵՐԴԱԽԱՂ

Երբ բարով խերով հասնեինք Վարդանանց տոնի հինգ շաբաթին, շարանե[ն]ց Խաչոն, որ հինգ վեց տարով մեր հասակակիցներեն մեծ էր, թիակն ձեռք առնելով Թաղի բոլոր տղայք հավաքեր արտի մեջ, հրամայեր բերդ շինել։ Իսկույն բոլոր տղայք երկու խումբի բաժանված, մեկ քարընկեց հեռու իրարմե, երկու բերդ շինե[ի]նք։ Ձեռքով ձյուներ կկորելով մեծամեծ պլանակներ ձևացնելով իրարու վրա դիզելով երկու մարդաչափ բարձր, 80—100 ոտք լայն բերդ մի ձևացնեինք։ Շարանե[ն]ց Խաչոն իբրև ճարտարապետ Լիակով հղկեր և ձևի բերեր զբերդը։ Բերդի կողեր խորշխորշ պատուհան[ն]եր ձևաց[ն]ելով հրամայեր ձնկլորակ շինել և խորշեր լեցունել։ Անմիջապես 20—30 տղայք ի միասին աշխատելով խորշեր գնդակով լեցուննինք։

Մեր ճարտարապետ և զորապետ Խաչոն տղայոց խմբեր հավասարաղոր բաժանելով հրամայեր չորս հինգ հոգի կենալ բերդեր պահպանել և մյուսներ իրարու վրա հարձակել, իսկ ինքն իբրև դիտող և դատավոր, հանդիսատես կենալով ակարացած կողմին օգնության վազեր։

Այս բերդախաղությունն արդարև տեսնալու բան էր։ Խաչոն հարձակման նշան տալուն պես պարսից և հայոց բանակաց պես իրարու վրա սաստիկ և ուժգին հարձակում կընեինք։ Մի կողմանե խնդալով, մի կողմանե զիրար գնդակով հարվ[ա]ծելով։ Բերդերու գնդակներ սպառելով այնչափ ձյուն իրարու երեսին և գլուխն կուտայինք, մինչև ամենք[ս] ևս ձյունաթաթախ լինեինք։ Հաղթող կողմն հաղթվողաց բերդի վերա հարձակելով բերդ կառներ և կիստ չափ կքանդեր։ Հետո Խաչոն հրաման կըներ նորեն նորոգել, ամենք միաբանաց ավերակ բերդ շինեինք, գնդակներով խորշեր լեցունելով կերթայինք տուներ[ս]։

Թորվան վերա զգեստներ չորացնելով կամ շարունակություն հաջորդ ավուր Թող տալով և այս էր մեր շարունակություն մինչև մեծի պահոց չորեքշաբաթին։ Մեր ձյունակույտ բերդեր երբեմն մինչև լուսաբորչին և ծաղկազարդին առանց հալելու իբրև կոթող արտերու մեջ կենային...։

---

[1] Այդ լուսանկարը 1961 թվականին Ախալցխեում մեզ է տրամադրել տեղացի մանկավարժ բնկ. Մամիկոն Այրեթյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը։

[2] Ախալցխեի կառնավալի մասին պատմեցին գրականագետ Ա. Ինճիկյանը և Վ. Ղազազյանը 1955 թ.։



Նկ. 12. Վարպետանոց տնտեսական Ախալցխաում

[Դարձյալ]... ա՜հա երկու խումբ եղած բերդերու բով կայնելով աղդարար նշանի սպասեմք: Բայց նկատելս է, որ մեծ երիտասարդը և մինչև մեծ մարդիկ այս անգամ եկած խառնված են մեր մեջ: Բաժկատար մարդիկ կամ մեծ գործ պիտի տեսնան կամ լավ մի ձնկլորակով ծեծ պիտի ուտեն:

Նշան արվեցավ: Ահա հարձակման մեջ եմք: Բայց բավական կարգ կա: Մեծ մարդիկ մեծերուն վրա հարձակեցան, երիտասարդը երիտասարդաց և հրամայվեցավ, որ տղայը ևս տղայոց վրա հարձակին: Բայց հանկարծակի մեր տղայոց չարաճճի խումբ կարգ խանգարեց, վի մեք տեսնալով, թե մեծեր և երիտասարդ[ները] մեր մեջ մտած են տղայական նախանձով մի, սկսանք կարկուտի պես գնդակ[ները] մեծ մարդոց և երիտասարդաց վրա տեղալ: Քանիցս կանչեցին կարգ պահել. ո՛վ մտիկ կանե: Արագ-արագ զարնել միայն է պատասխան, ուստի մարդիկ և երիտասարդք միացած ուզեցին արշավել մեզ վրա. կանչեցինք, ծո՜, տղեր, եկեք մեր կողմ: Տղայք եկան մեր կողմն, միացանք: Միաբյամբ սկսեցինք խփել մարդոց և երիտասարդաց: Այս երիտասարդք տեսնալով, թե մեր հանդգնությունն և հարձակումն շատ զվարճալի է, նոքա ևս գարձան մեր կողմն, ավեցինք մարդոց վերա: Քանի մարդիկ արդեն հոտս հետ հանդիսատես էին ու զմեզ բշշբշնալով խրախուսեին, թե հա՛, տղայք, ձեզ տեսնամ, ուստի քաջալերված հասանք մարդոց վերա բռնեցինք, մշկեցինք ձյան մեջ և ձյուներով ծածկեցինք: Հետո ասացին աղեկ, աղեկ, հաղթեցիք, մեք ևս քաշվեցանք: Հետո մարդիկ ձնափալուղ վեր ելին, ծիծաղելով դնացին մարդոց մեջ: Մեք այլ իբրև հաղթող, ծափահարեցինք և ուրախության աղաղակով տպ[ը] թնդացուցինք:


Ջ. Ն 4184, էջ 82ա—86ա (Վ.)

5. [ՍԱՂՐԱՖԱՂ ՆԱՔԱՆԻ ՀԱՅՑԵԻՆ]

...Եւ եղև իբրև լուան բնակիչք քաղաքին պլքանել վասնել նոցա, առաւել հպարտացան յանձինս իւրեանց և սկսան զպատճառ կորըստեան իւրեանց վհատն խազալ՝ բերէին դնում մի մեծ, նկարէին ի վերայ նորա զպատկեր թագաւորին Հռոնաց կանգուն մի յերկայն և կանգուն մի ի լայն. և զտեղի արտեւանաց աչացն յօտ մի ծրագրեալ, որ ոչ կարէր նշմարել. և զտեղի մուրուացն լերկս ժպիրհս. և զտեղի շնչառոր բերնոյն մեզ մի լայն թուով մազից պէրևէշաէից, զոր թէ որ կարէր ճանաչել: Եւ բերեալ եդեալ ի վերայ պարսպին յանդիման նոցա՝ աղաղակէին առ զօրն և ասէին. «Ահաւասիկ կայսր թագաւոր ձեր, գարձարուք երկրպագէք սմա՝ Ջերու Խաքան է սա»: Եւ առեալ գնդապետ ի ձեռն՝ ծակոտէին յանդիման նոցա զդդումն՝ զնմանեցուցեալն ի պատկեր նորա: Նոյնպէս և զմիւս թագաւորն ձաղէին, ծաղր անէին, այպանէին, պիղծ և արուագնդծ կարդային...

ՄԿ. ՊԱԱ, 158—159

...Եվ երբ քաղաքի բնակիչները լսեցին իրենց լքվելու և ոչնչանալու մասին, ավելի հպարտացան իրենք իրենց մեջ և սկսեցին իրենց կորստյան պատճառ եղողի խաղը խաղալ. բերեցին մի մեծ դդում և նրա վրա նկարեցին հոների թագավորի նկարը. մի կանգուն երկար և մի կանգուն լայն: Աչքերի արտևանունքների տեղ մի ճյուղ գծագրեցին, որ չէր կարող նշմարել. մորուքի տեղը թողեցին լրջային վերևությամբ. բերի փոխարեն մի մեծ բեղեր շինեցին, որ ոչ ոք չէր կարող ճանաչել: Այսպես բերին դրին նրանց հանդեպ պարսպի վրա. ապա դեպի զորքը դառնում էին և ասում. «Ահա ձեր կայսր թագավորը, դարձեք և երկրպագեցեք սրան. սա Ջերու Խաքանն է»: Եվ նիզակը ձեռքը վերցնելով ծակծկում էին նրանց հանդեպ այդ դդումը, որ նմանեցված էր նրա պատկերին: Նոյնպես էլ ծաղրում էին նաև մյուս թագավորին, ծանակի էին ենթարկում, խայտառակում և անվանում էին պիղծ ու արվամոլ (նկ. 13):



Նկ. 13. Հայ վիճակները նվիրահարում են անուշ Ջևրու Խարանի պատկերը ներկայացնող գդումը
Նկ. Հովն. Զարանյանի

6. [ԾԱՂՐԱՀԱՂ ԽԱՔԱՆԻ ՀԱՅՑԵՒՆ]

...Զայս Խաքան ծաղր արարին բնակիչք քաղաքին Տփխեաց. առեալ գդում մի՝ նկարեցին պատկերն Խաքանայ ի վերայ նորայ կոյր, որպէս թէ աչք նոցա նեղ են և փոքր, և եդեալ գդումն ի վերայ պարսպին հանդէպ նորա՝ սկսան նետաձիգ լինել։

ԿԴ. ՊՀ, 51

...Թիֆլիս քաղաքի բնակիչները ծաղրեցին այս Խաքանին. վերցրին մի գդում, որի վրա նկարեցին Խաքանի կույր նկարը, որպես թե նրա աչքերը նեղ են և փոքր։ Գդումը դրեցին նրա դիմաց պարսպի վրա և սկսեցին նետահարել։

Բ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆՅԱՆ «ԽԱՆ-ՓԱՇԱ» ԿՈՉՎԱԾ ԽԱՂԵՐ

7. ԱՎԵԼԱԴԻՈՒԹԻՒ ԻՇՈՎ ԹԱԳԱՎՈՐ

Ղարայորան գյուղի տեր Հապուշ-Դասիմը եղվարդին շարունակ զրկում էր արտերը ոռոգելու հնարավորությունից։ Երևանի խանի խրատով ու հրամանով եղվարդցիներն իրենց գյուղի ավագի գլխավորությամբ գյուղովին արշավում են Հապուշ-Դասիմի վրա՝ դրան ոչնչացնելու նպատակով։ Որպես ծպտվելու

միջոց, եղվարդցիք արշավին արտաքուստ, կատակախաղի բնույթ են տալիս: Մենք 17-րդ դարի այս իրական-պատմական դեպքը ներկայացնում ենք որպես «խան-փաշա» խաղի քաղաքական դրսևորման դրավոր, միակ վկայությունը:

«Եւ ապա դրան՝ առնել ժողովեցան ի մի. և ամն երիտասարդ զդեցուցին ի հանդերձից իւրեանց, և եդին ի գլուխ նորա աւել, և նատեցուցին իվերայ իշոյ, և անուանեցին զնա՝ Ալվելապլուխ իշով թագաւոր. և ելին ամբոխիւ ամենեքեան զուռնայով և զհոլով՝ չափօք և պարուք, խաղալով և խնդալով ամենայն արք մինչև կանայք ևս երգելով: Եւ յորժամ մերձ եղեն Ղարայօրան գեղջին, տանուտէր աւադն խրատ ետ նոցա՝ և ասէ, մի՛ գուցէ արիւն հեղուք՝ և լինիք պարտապան արեան. այլ հարեալ ծեծաք՝ կիսամահ արարէ՛ք և թողէ՛ք, այն բաւական է նոցա մահ: ...Եւ ահա եկեալ հասին ամբոխին. և հրամայեաց Աւելագլուխն, հարէ՛ք՝ ասէ, և սպանէ՛ք զշուննդ զայդ: Յայնժամ կալեալ զնա՝ արկեալ յերկիր առաքուր, և հարկանէին անողորմ աքացի և բռնցի, փայտիւ և քարիւ: Յետ երից աւուրց ապա ողջացաւ, և ելեալ կորեաւ. և երկու գեղջն՝ Յօհան անունն՝ փախեալ անկաւ ի ձոր անդր, և եմուտ յորչ մի ագռիսոյ՝ և զերծաւ: Իսկ ի գեղականացն՝ որք կամակից էին նմա, կալեալ բազում հարին և վիրաւորեցին, և քակեցին զտունս նոցա և տիրեցին գեղջն»:

ՋՍ. II, 118—119

Եվ ապա խուռն կերպով եկան ու հավաքվեցին ի մի. մի երիտասարդի իրենց հագուստներից հագցրին, գլխին դրին ավել և նստեցրին էշի վրա՝ անվանելով նրան Ավելլապլուխ իշով թագավոր (նկ. 1 և 2): Ամբողջ ամբոխով եկան նաղարա զուռնա փչելով, ծափով, պարերով, խաղալով, խնդալով, կանանց երգելով, բոլոր տղամարդկանցով գնացին: Երբ որ մոտեցան Ղարայորան գյուղին, տանուտեր ավագը խրատեց նրանց, ասելով՝ չլինի թե արյուն թափեք և արենապարտ դառնաք, այլ ծեծեցեք ծեծաններով, կիսամահ արեք և թողեք այդպես. դա դրանց բավական է: Եվ ահա ամբոխը եկավ հասավ. Ավելագլուխը հրամայեց, ասելով՝ զարկեցե՛ք այդ շանը սպանեք: Այդ ժամանակ նրան բռնեցին, գցեցին գետին՝ ոտքերի տակ և աքացիներով, բռունցքներով, փայտով, քարով անողորմ կերպով ծեծեցին: Երեք օրից հետո առողջացավ և վեր կացավ կորավ գնաց: Իսկ այդ գյուղի Հոհան անունով բահանան փախավ ընկավ ձորը և մտավ մի աղվեսի բույն ու այդպիսով ազատվեց: Իսկ գյուղացիներից նրանց, որոնք կամակից էին նրան, բռնեցին, սաստիկ ծեծեցին, վիրավորեցին, քանդեցին նրանց տները և տիրեցին գյուղին:

Ս. Ա Ն

...Ջուռնայի բարակ և սուր ձայնը, դըհոլի, դափի ու գարիայի տրմբտրմբոցը՝ Ծաղկավանի մեջ խաղեր սկսելու նախերգանքն են: Փողոցի մեջ ձիավոր և հետևակ մարդկանց խուռն բազմություն է արշավում: Քրդի հշիրաթի փառավոր հագուստով բոլորից առաջ ընթացող ձիավորը՝ մի հզոր խան է ձևացնում (նկ. 9): Նրա հալեպյան կերպասից զոլ-զոլ բիճիշի խայտաճամուկ գրոշակները՝ փողփողում են քամու հարձանքի դեմ, նրա փակեղի դուլդուլն փոքրերը՝ փայլում են հարյուրավոր դույներով: Հըպարտ, փքվելով, նստել է նա մի պատվական երիվարի վրա, որի պարանոցը զարդարված է արծաթի ոսկեմայով (պալարակապով). Նա զինված է այդ բարբարոս ցեղի հզոր իշխանների պես. արաբական կեռ թուրը քարշ է ընկած նրա կողքին. ձեռքին ունի եղեգնափայտից թեքուն մզրախ (նիզակ). Մի լայն հնդիկական վահան՝ թափանցիկ ապակենման կաշուց՝ գցած է նրա մեջքի վրա, դաջարի դաշույնը մի զույգ ատրճանակների հետ. թևը խրած են

նրա քրմանի շալե հագած դռան մեջ, փորի վրա։ ...Իշխանին հետևող մյուս ձիավորները նրա մերձավորներն և ծառաներն են ներկայացնում. սրանք բոլորը պարսից հին ձևի պրահ են հագել. գլխներին թագաւորական ադամանդեայ՝ սրածայր վերջավորությամբ. երկաթի օղակներից կանգնած հյուսած հագուստով պրահավորված, ձեռներին նիզակ և թուր։

Հետևակ բազմություններ բոլորանում է հետաքրքիր երեխաներից և պատարկապորա մարդկանցից, որ միմյանց հրելով, ոտպատկելով մեն են դալիս փողոցից փողոց. և ամեն մի դռան առաջ կանգ առնելով կչում են—«սուլսա՛թ, սուլսա՛թ»— այսինքն պաշտո՛ր, պաշա՛ր։

Տանտերը դուրս է դալիս։ Մի լեզվանի արտի (շաթր) պատգամախոսում է.—«Ամմատ-խանը—որին ասված երկար կյանք, փառք և պատիվ տա, որի թուրը ասված միշտ կարուկ անե, և յուր ինամիների վրա հաղթություն տա—Ամմատ-խանը, մեր ամենակարող իշխանը, մեր գլխի տերը՝ յուր ինամիների հետ նոր պատերազմ սկսելու համար, դուր, ամենախոնարհ հպատակներդ պետք է սպասար տար նրա բաջ. պատերազմող զորքերին, որ այժմ հացի կարոտ են։ Եթե մի անբախտ մարդ համարձակվի այդ բաձրագույն հրամանին դեմ կենալ—նա յուր գլխի տերը չէ»։

Ամեն տանից դուրս են բերում գինի, արաղ, եղ, բրինձ, ձու, տալիս են այդ մարդկանց, որ զրանք հավաքում են իրանց պարկերը մեջ և հայցելով խանի հզոր ձեռքի հովանավորությունը՝ երկարակեցություն են մաղթում նրան։ Բայց խանը չէ կամենում հեռանալ, շաթիրը նրա կողմից ձայն է տալիս, թե խանը պահանջում է պիշրիտասի, այսինքն՝ նրանց հացը ուտելու համար—տասմանների վարձ. տալիս են մի բանի արասի փող ևս։

Այսպես, դյուղի բոլոր տներից տասը պաշար հավաքելով, գնում են դյուղից դուրս, մի տոնձացած տեղ և բոլոր բնակիչներով, մինչև կեսգիշեր սկսում են կերուխում անել և ուրախանալ։

Մենք ավելորդ ենք համարում նկարագրել յարեկենդանի այն բազմաթիվ խնդկատակները, որ անճոռնի հագնված և ծիծաղաշարժ ձևերով, ավանակների վրա նստած՝ այդ օր շուտ են պալիս փողոցե փողոց։

Բ. I, 206—207

9. ԵՊԴՅԱՐ ԽԱՆ

[Բարեկենդանի վերջին շաբաթն է։ Տեսե՛ք, տեսե՛ք, երեխաները] աղլուխը կապել են ձողու ծերը, բայդաղ շինել ու Քյասոնց բարձր կտերը յալլա՛ են կանչում։ Դնանք մենք էլ մի քիչ բոզազնևրս թաց աններ. Փարբուս խանը հիմի կգա. մեր Դուկոն էլ էս երկու օր ա դնացել ա, ո՛վ գիտա՝ հիմի էջմիածին կըլնի, թե Հուշական, չա Փարբի։

— Ա՛յ ադա, մարդաբևի որպի էլի՛ր, հրես Փարբուս խանի ապվեան եկավ։

Մին էլ էն տեսար՝ գլուխը երկար պոզավոր թաղիթի գտակը անցկացրած՝ ոշխարի պոզազված մորթին բուրդը դեպի դուրս միջքին կապած, երևան ալյուրտա մի ագա, մի ահագին աթարոց ձեռքին սյուն տալով՝ եկավ, խոր գլուխ տվեց մեր իշխաններին։

— Էր՛, ի՞նչ մարդ ես, ո՞վ ես, ո՞ր աշխարհի քամին ա քեզ պտրաել, մեր գեղը բցել,—հարցնում է մի ծերունի։

— Արդ աննմ Աշտարակու էլ ու Հասարակութեյունին, որ մեր Փարբուս տերը՝ զոշաղների զոշաղ Եղդյար խանը՝ իր նազիր-վեզիրով, իր նոքար-փեքյառով, հինգ հարիր մարդով գալիս ա ձեր սուփրեն շեն անելու, մեր բարեկամութեյունը հաստատ պահելու։ Նրա հրամանն ա, որ սաղ գեղով, իշխաններով դուս գաք նրա առաջը։

— Մեր գլխի, մեր աչքի վրա տեղ ունի ձեր խանը, մենք վաղուց նրա համար տեղ ենք պատրաստել տանուտերի այվանի կտերը. սուփրեն շաղ. գաթա—հալվեն պիբելի պես. հաղար մարդով էլ որ գա, մեզանից ոչինչ չի պակսիլ։ Ադա՛, ա՛յ պատկներ

Ին՛չ, Փարբու ապվևսին մի խալաթ,— Հրամայում էր մի իշխան։

Էս խոսքի հետ մոտիկ տանից մի շատ ալանի բերում ձգում էին մեր պատգամաբերի վիզը, քամակին էլ մի քանի լախտ կպցնելով՝ ճանապարհ դնում։

— Էլ ի՞նչ եր ուշանում, ա՛յ խալխը, պռանք էլի՛, հիմի կգա մեր Եղոյարը։

Գնում էին այնուհետև մեր իշխաններին և իրանց համար վաղուց փռած սուփրի չորս կողմովը շարվում. դափ ու զուռնեն էլ դրանց պռիշը կպած էր, ուր երթային՝ հետները տանում էին։

— Ա՛յ տղա, Ղազա՛ր, տանք փարբեցի Եղոյարն էլ լավ խանություն ա անում, համա մեր Ղուկոյի պես չի ըլնիլ։

— Գի՛ժ ես, ի՞նչ ես, Փարբին մեզ կհասնի՛, որ նրանց խանը մերին հասնի. մեր Ղուկոն որ կա՝ խատակ խան ա. որ գալիս չի՝ մեջտեղը ձգվում իշի վրա նստած ու Հրամաններ տալիս, ես աչքերին մատիկ տալով՝ մոռանում եմ, որ մատխարություն ա անում, էն սհաթը միտքս են գալիս Երևանու հին խաները։

— Բա իլլաթի որ ֆալախա ա պռնիլ տալի՛ս։

— Դու ասա՝ ո՞նց չի ծիծաղում։

— Տանուտե՛ր, դու ուտել-խմելու հայումն ես, էլ ըսկի չես ասում, ըն Փարբու խանի խալաթն ի՞նչ պատ ըլնի։

— Դուք քեֆ արե՛ք, ես վաղուց պատրաստել եմ։

— Յալլա՛, — գոռում են քուչեքումը, — յալլա՛, լսվում է ամեն կարներից, ու ամեն տեղից դիմավորում են Փարբու խանին, որ Գըղիխսկի կողմից երևեցավ։

— Ա՛յ, հա՛յ, հա՛յ, էս ինչ շատվոր են, սաղ գեղը հետը բերում ա տնաշեն Եղոյարը։

Միայն մեր տանուտերը, իշխաններն ու տերտերը, որ տանուտերի կտերը քեֆ են անում, նրանք չեն առաջգալ, ինքը խանը պետք է գա և նրանց տեղանի վերա գոնի։


Ուզած-ուզած բազմած է մեր փարբեցի Եղոյարը իշի վրա. պոչը ձեռքին բռնած, երեսը դեպի ետ՝ մի երկար գերեմաստի ճիպոտ էլ մյուս ձեռքին իբրև շիրուխ գնչին դեմ արած. նրա գլխին դրած է մի դգդգած պաղսից խանի երկար գտակ՝ վրան հին փալասներ փաթաթած. նրա երեսը քսած է տիթառով վառվող տան օճողի մուր, նրա վիզը ձգած է զանազան ոսկրների կտորներից շարք. հագած ունի նա մի պատառոտուն, ծլանքները հազար տեղից քարշ ընկած պարակի արխալաչին. նրա կուրծքը բաց է, նույնպես մրով սևացած՝ կողքերին էլ մի երկար փայտե սուր կախած։ Երկու երիտասարդ, նույնպես այլանդակ հագնված, քաշում են իշի սանձը. երկուսն էլ քամակիցը մի-մի մեծ գավազանի ծայրերը սրած՝ բզում են իշին. դափ ու զուռնեն առաջին ածելով՝ քաշում է այդ հանդեսը գեղի տանուտերի կտուրը, իսկ խուռն ամբոխը միշտ յալլա՛ է կանչում։

Եվ ահա խանն իշի վրա նստած մտավ տանուտերի բակը։

— Ջո՛ւ, չո՛ւ, օ՛շ, չո՛շ, գնա՛, ա՛յ սատկած էշ, ի՞նչ ես նազ անում, էս պատիվը խանինն ա, քունը հո չի՞, — ասում են բզողներն ու խեղճ իշին վեր հատում ու սոխպում, որ տանուտերի տանդուխքներից բարձրանա։ Բայց ճար կա՞, էշը կարո՞ղ է այդ անել։

— Դե՛ վեգի՛ր, նազի՛ր, առաջ եկե՛ք, — Հրամայում է ընդհանուր կառավարիչը, որ միշտ մեկ կողմից մյուսն է վազում և յալլա կանչել տալիս, կամ ճանապարհ բաց անում, — ի՞նչ եր սպասում, բարձրացրե՛ք խանի մոխրաթափավալը։

Ծիծաղ՝ որ էստեղ տես, ամեն կողմից վեր են կաղնում անելու անասունին յուր վերա բազմած խանի հետ միասին ուսերքի վերա և ելնում տանդուխքներով։ Յալլա՛, գոռում է բազմությունը, իսկ վերևիցը այլյուրը շաղ են տալիս խանի և իշի գլխին։ Փոշին ոչ բակը բռնում է, բոլորը ալյուրոտվում են, ում երեսին կամ գլխին էլ որ քիչ է թափվում, ինքն յուր ընկերի մեջքից վերցնում՝ քսում է յուր երեսը. իսկ մեր խանի համար՝ էլ մի՛ հարցնիլ, երևակայի՛ր մրի ու ալյուրի մեջ կոլոված մի գունդ միս։



Նկ. 14. Եղեյար խանի ճաշկերույթի տեսարան կաւոյ վրա (Աշտարակ, գյուղ Եղնպիրը՝ № 9)
1. Եղեյար խանը սակրաբերդկով, 2. Խանի դրասար բաշող ծառաներ, 3 Խանի դրասար վարող ծառաներ, 4. Խանի լրասար մանեակիկը, 5. Խանի պինդորներր, 6. Տանուտեր, 7. Քահանա, 8. Խնջույքի սեղան-ոտաց, 9. Նվագախումբ, 10. Եղեյարի ջիայան սուրը, 11 12. Սառած կատուն և ագռավը որպես Եղեյարի խորհրդներ, 13. Խանի դրոշակիկիր պատանիներ, 14. Մեղապարտներ, 15. Դահիճներ, 16. Տանուտերը ֆալախայով պատժվելիս.

● Երեխա հանդիսատեսներ, Պատանի հանդիսատեսներ, ⊥ Երիտասարդ հանդիսատեսներ, ⊙ Ինն հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Բագրատյանի

— Գլո՛ւխ, գլո՛ւխ ավելք, Աշտարակու իշխաննե՛ր, մեր ողորմած խանին,— կարգադրում է ընդհանուր կառավարիչը:

Վեր են կենում բոլորը սեղանի վրայինն ի իրանց տեղը կանգնած՝ խոնարհությամբ գլուխ իջեցնում: Վա՛յ նրան, ով մի փոքր ուշ գլուխը կոացրեց. աչքով է անում խանն յուր կառավարչին, և բարակ ճիպոտը կպչում է այդ հանդուգն մարդին:

— Ֆալախա՛,— հրամայում է խանը.— բաշեցե՛ք տանուտերին մեյդան:

Տասը-քսան այլանդակ հագնված երիտասարդներ մոտենում են տանուտերին, պատկացնում ու ոտները ֆալախի մեջ ոլորում:

— Հարցրո՛ւ դրան,— հրամայում է խանն յուր նպաստին,— դա քանի՞ գլխանի էր, որ մեր հրամանը չկատարեց, մեզ շան տեղը չդրեց, մեր առաջը չկամ:

— Բազումքյուն կանես, խանն ապրած կենա,— խնդրում է տանուտերը պատկած տեղից.— ես քո մեծությունի համար պատրաստություն էի տեսնում ըստեղ իմ իշխաններով. տեսնում՞ ես՝ հրամանդդ համար սուփրեն բաց արած ա. վարդի շարբաթի շահքյաստ մեջ լիքը հազիր դրած, ավդուշը ձողու ծերին կախ արած, որ հրամայես թե չէ՝ խորովենք անուշ անես. քո ընծեղ էլ, լավ մարկ ատ՛ւր, ոտները կապած դառը ըստեղ պատրաստ, երբ որ ուզես՝ փլավի պլխին առաջդ կբերենք:

— Աֆարի՛մ, աֆարի՛մ, տանուտե՛ր. ուղե՛ք, բայ թողե՛ք դրան:

Առնում է խանչն մեր տանուտերը գավաթով լիքը բացախն և խոնարհությամբ մատուցանում խանին:

Շատ լավ էլ դիտի բարձրապատիվ խանը. որ շարբաթի կոչվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ թունդ քացախ, բայց ոչինչ դեմք չցույց տալով՝ առնում է ձեռքը և մոտեցնում բերանին:

— Օխա՜յ, ի՜նչ լավ էր շինած, սիրտս հովացավ, շատ ծարավ էի:

—Ա՛յ տղա, հորը մոտ բերե՛ք,—հրամայում է տանուտերը:

Վերցնում են ջահելները ձողու ծայրին կախած ապտակած ագռավն և առաջ բերում:

— Ֆարրաշ, — հրամայում է խանը,— վեր կալ էս կաթավը, երբ որ մեր երկիրը կնրբանք, փլավի պլխին տապակած առաջս կբերես:

— Ըստեղ բեր էդ գառը,—տնօրինում է տանուտերը:

Մոտ են բերում ոտները կապած տեփրի մեջ դրած սև կատուն և համեցեք անում խանին:

— Ա՛յ անպիտաններ, ձեր գառը կատու դառա՞վ, շո՛ւտ, շուտ կապոտեցե՛ք Աշտարակու բոլոր իշխաններին, թոթկի միջին պտի փատացնեմ, ընչանք որ խելքները գլուխը գա, էլ ետ կատուն ոչխար շինեն,—հրամայում է խանը: Բայց նորա այս հրամանն էլ չի կատարվում, որովհետև իսկույն մյուս կողմից առաջ է բերվում մի մեծ և պարարտ որձ ոչխար և գյուղի կողմից ընծայվում խանին:

— Շատ շնորհակալ եմ Աշտարակ գեղի մենծ ու պատկից, իրանց պատիվն իմ աչքի, իմ գլխի վրա. համա ըստեղ կա մի խեչանենց խեչան, նրա համար ինձ խաբար ա հասել. որ շատ վատ մարդ ա... էդ մարդին ես պտի պատժեմ, թե որ դա ձեր միջին ա, էս սհաթս դա իմ առաջին չոքի: Հը, շո՛ւտ, ո՞ւր ա էն մարդը, տանուտե՛ր, ձեռաց ըստեղ ատեղծի՛ր:


Մոտ է գալիս այնուհետև խեչանի ընծան՝ մի լիտր թունդ արաղ:

— Էս արաղը պրկել ա, խանն ապրած կենա, քո մեծությունի համար խեչանը, որ անուշ անես, ինքն էլ հենց հիմի քո դռլլուպին կգանվի:

— Գլուխ տո՛ւր, գլուխ տո՛ւր, իրեք հետ գլուխ տո՛ւր խանին, խեչան աղա՛,—ձայն է տալիս ֆարրաշը, և խեղճ խեչանը կատարում է յուր պարտքը:

— Չոքի՛ր,—հրամայում է արհամարհական հայացքով խանը՝ գլուխը բարձր բռնած, աչքերը դեպի երկինք դարձրած, դերեմատի շիրուխը դնչին:

Նպաստը քաշում է խեչանի կռնիցը, չոքացնում իշի առաջին: Բավականին միջոց



Նկ. 15. Ճահը Աչտարակի հարձակմանը հայ զինվորներին վարժեցնում է «Օսմանլիի» դեմ կռվելու համար (սխեմա. բնագիրը՝ № 10)

1. Ճահը ոսկի գրպերով, թագակիր նռան, 2. Ձիավորները և շահի զուգուրը, 3. Ակամա զինվորագրված ազամարդիկ, իրենց զենքերով, 4. Նվագախումբ

Ցամաքով հանդիսատեսներ (հարձակվողներ), ⊙ կին հանդիսատեսներ (հարձակվողներ), ⊥ Պատի հանդիսատեսներ, ● երեխա հանդիսատեսներ, ⊥ երիտասարդ հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Բագրատյանի

յաւիտենից հետս բարեհաճում է խոսել խանը.— Ես միտք ունեի, Խեչան ապա՛, շատ խիստ պատժել քեզ, համա քո ընծեն իմ աչքերը կապից. վեր կա՛ց, արի ձեռս պաչի՛ր ու ապատ կաս։

Խեղճ Խեչանն այդ էլ կատարից։

Այնուհետև մի քանի իշխանների, որոնցից մի-մի պարգև պակելու հույս ուներ խանը, ֆալախա է դնել տալիս, մինչև անգամ մի քանի ճիպոտ էլ խփել է տալիս՝ իհարկե, շատ կամաց, և ատանում՝ որից դինի, որից ըրինձ, մյուսից՝ յուղ, երրորդից՝ ձու, հավ և այլն, և դրանցով ներում նոցա, բայց միշտ ձեռքը համբուրել տալով։

— Մնացեք բարո՛վ,—վերջապես ասում է խանն և ուզում է ես դառնալ յուր հանդիսականներով, բայց ի՞նչ կարելի է։ Մինչև հիմա արածները կատակ էր, հիմի սկսվում է ուրիշ հյուրասիրություն։ Խանի հետ բոլոր ևկողները պաի վայելեն աշատարակցոց սեղանիցը և խմեն՝ երկու դյուզին միաբանությունն և հարատևությունն ցանկանալով և ապա նույն և մի կերպիվ յալլա կանչելով, իշին բարձրացրած՝ ճանապարհ ընկնին դեպի մի ուրիշ մերձակա դյուզ (նկ. 10 և 14)։

ՊՀԽ. I 336—341 (Ա.չա.)

10. [Շ Ա. Հ]

[Հարսանիքում աղջիկները կենատապարերը] խաղալուց հետո օյինն սկսվեց։ Դադի ու զուռնի ձենը կտրվեց, տունը բոնեց մի խոր սատուքյուն։

— Ճամփա արեք, շահը գալիս ա օամանլվի հետ կռվելու, ձեն ա տալի մի ջաուշի (մունեթիկ), ճիպոտը ձեռին, բոստոր ընդոստ քշելով, մեյդան անելով։

Ամեն տեղ էլ ճրաղները մթնացրել են, մնացել ա մի մում թագավորի առաջին, մի երկու էլ ճրագ նվազ լիսով սենքի վրեն։

— Աթոռ դրեք, բղավում են։

Էն սհաթը բերին մի հին, որքը ծակ քաղլակ (սակառի) դրին տան մեջտեղը, երիկի տակը։

Մին էլ ի՞նչ տեսնես, մի բոզ իշի վրա նստած, երեսն ալբռա, ոսկոռի ապռնգեքը շլնքին, մի քուլա բամբակից միրուք շինած, մի աչխարի հին քուրք թաթա հաքին, մի ճըղճըղպատված փոստա պլխին, մի աքլորի չղա (պոչ) գտակածալին, երկու մարդ էլ գտակները շուռ տված, երեսները մութ քսած, մի մին աթարոց (կրակ խառնելու փայտ) ձեռնեբին, իշի նողտեն քաշելով, ծանր ծանր գալիս են։

Ուռած-ուռած ևկավ մեր շահը. իշիցը վեր գալուս մի վեր ընկավ։

— Տննեբս քանդվեց,— ձեն տվին ֆարաշները (շաթիր, ծառա), որ առաջին էին ու վազեցին վեր կացրին, նստացրին աթոռի վրա։

Խալխը ծիծաղու կուտորվել են։

Մի առաջ միրուքը սրպեց, հազաց, բոզալն խառակեց ու ասեց, թե օամանլուն գալ պաի, նա մեր հավատին իշնամի ա, հայի հաց են ուտում, Ալի փեղամբարին ուշունց են տալի, մեր Հասան-Հյուսեյինը բանի տեղ չեն դնում, զոնշուն հավաքենք, որ նրանց Օմարի աչքը հանենք։

Էն սհաթը, որը մի ին, որը մի բահակոթ, որը մի ցախավել, որը մի խշմար (երկճյուղ փայտ) վեր կալան, էկան առաջին կանոնկին։ Նա գառավ մեր շահը, որ կռվելը սարվացնի, մի մասխարա մարդ քամակիցը պլխին որ բամբաջեց (զարկեց), աչքերը փոս ընկան, քաղլակը տակիցը դուս թռավ, մեջքի վրա փռվեց։

Ընչանք վեր կենալն էլ ճրագը բոնեցին միրքի տակը. բամբակը կպավ, քիչ մնաց բեղերն էլ հետ խանձի։ Մի տպա էլ փարչով ջուրը բերուց, սաքի ին կրակն անցնում ա, լցրուց պլխին։

Խեղճ շահը վեր կացավ ու փախավ (նկ. 3 և 15)։

ՊՄՎ. I, 259—260 (Ա.չա).

11. Փ Ա. Շ Ա.

...Մեք խմբովին երթայինք Սալիկանց տուն փաշա շինելու, որ բարեկենդանի վերջի

խաղն է։ Այս պահուն արդեն մեր մշակ Պապոզենց Խաչոյին և Սոլիկն Կարոյին հատկացյալ էր ամեն տարի...։

Մեք ընկերակցոք Հայկավանք հասնելով ահագին աղաղակ, ահագին[ն] խառնաշփոթ ձայներ լսեինք, նազարայի, դուռնայի ձայն լսվեր։ Մեծ ամբոխ մի՝ ծերերև, երիտասարդներև, աղայքներ[ե] կազմյալ այս կողմեն մյուս կողմն շարժումներ կանեին։ Քիչ մի ևս մոտեցանք, լսեցինք, որ ասեին.—Փաշա՜, փաշա՜, ծո՛ տղեք, էնո[ն]ց ասուված, էնտեղ փաշա են շինեն, երթանք Թամաշին։ Շիտակն ասելով մեք այս տեղ կարդալ ու տիրացուքյուն մոռացանք, վազեցինք փաշին տեսնալ։

...Գնացինք մտանք ամբոխի մեջ տեղ փաշայի կերպարանք և արարողուքյուն հայեցանք։

Դե՛, արի խելք միտք ախորժակ բեր այս աստ կերպարանյալ փաշայի կերպարանք նկարագրե։ Չդիտեմ կարդացող պիտի զարմանա, թե ըհա՝ նկարագրուղս պիտի բամբասե և զկառավարուքյուն պիտի մեղադրե, թե ինչպե՞ս թույլ տար հայոց՝ փաշա կերպարանել։ Ես այլ քեզ հետ զարմանամ։

Ժամանակի բզեզների վերջի աստիճան բռնավոր և բարբարոս, բայց սույն մեծ բարեկենդանին բացարձակ և անսահման ազատություն տային, զի մեր տղայությենեն 5—6 տարի առաջ Ամիրանղենց Աբրահամ այսօր Հայկավանից սանդի մեջ գինի լեցուցած, անցուդարձ մարդկանց խմեցուցանելով կտեսնա, որ բռնավոր Թամուր փաշեն քաղաքեն եկած՝ դեպի Այգեստան երթա։ Մահտեսի Աբրահամ հասնելով, փաշայի [ձիու] սանձեն բռնելով բերե սանդին առաջ մի բաս դինի հրամցունե փաշային։ Փաշան ամենայն քաղաքավարուքյամբ և ուրախությամբ գինին խմելով.

— Է՜յի, էյ՜ի, քեֆ եարն, կասե ու կերթա։ Այս ևս քեզ խոստովանիմ, որ փաշա շինել երկու անապատա, վարագա և մյուս գանորեից մեջ տակավին մինչև ցայսօր կա ու մնա։

Է՜, Հայկավանից խաչատուկ փաշեն նկարագրե՛լ չմոռնանք։ Մի մարդու ասր հին, պատռատած ձմեռ հագուստ, մի պատառ-պատառ եղած սպիտակ վերնավարտիկ հագուցած, մարդ վերնավարտիկի գրպանեբուե բերաննեն ձեռքեր և իներ դուրս հանած, վրան մի ծակոտած ու մաշած հապո մի ձգած, էծու երկար մազերով սպիտակ մի մոբուք հարմարցուցած, երես, քիմ ու բերան ալուրի փոշի քսած, այնպես որ աչք հազիվ երևի, գլուխ մի հարդի սակառ կործած, ձևս մի երկար ձող աված՝ իբրև չբուխի կոթ, մեկ ծայր լայնաբերան փարչ մի անցուցած՝ իբրև չրուխի լուլա, նաև գեպի էշու գլուխ և երես գեպի էշու նաև, էշու վերա հեծուցած, 10—12—15 պատանիք և երիտասարդք պատասանի պատկերի միջի սատանայից և գեայ կերպարանք մտած, փաշայի շուրջ բոլորելով՝ յուր հավատարիմ պաշտոնյայք, երթան ահեղի և զարհուրելի տեսողաց։

Փաշան քիչ տեղ էշով երթալով, որպես ինք բովանդակ աշխարհին տերն ինքն է, կիջնար, որպես ինք ի քաղաքի մի և գյուղն, իջնար հրաման կաներ՝ քաղաքի կամ գյուղի խոսք հասկացող մարդիկ հառաջ բերել։ Փաշայի սևագունդ մարդիկ ամբոխի միջեն ձեռք ընկած մարդիկ քաշելով, քաշքշելով, փաշայի առաջ բերեին։ Սույն ձերբակալուքյան միջոցին ամբոխի բազմուքյուն խառն ի խուռն փախչեին, իսկ մեք չէինք փախչեր, զի տղայք չէին բոներ։ Ձերբակալուքենեն հետո ամբոխ ժողով[վ]եր փաշայի գատաստան լսելու։ Ատամած խոփանի գինք և գյուղ գատաստան։ Ձեռք բնկած մարդիկ արդեն բարեկենդանի փաշայի ներքին և արտաքին հանգամանք գիտեին, ուստի ոտքն իշնալով կապաչեին, որ փոքր մի նստելով հանգիս[տ] ըներ։ Նա սոսկալի բարկուքյան ոգով ասեր առանց նստելու.

— Այս քաղաքեն (կամ գյուղեն) 20—30—40 հազար զուռուշ տուգանք կուզեմ։

Քաղաքի կամ գյուղի խելացիք ոտք, ձեռք պագելով կապաչեին նստել, հազիվ թե գիջաներ նստել։ Մի հարդի կիսամաշ կոզով էր



Նկ. 16. Վանեա փաշայի կազմակերպած պատասանեի սխեման (բնագիրը՝ № 11)

1. Փաշան կողովին նստած, 2. Ռամիկաններ, 3. Փաշայի պրասաը, 4. Հայերը հաբեկ են վճարում, 5. Շղթայված մեզապարտ հայեր, 6. Թուրք պահիճ ասիկաններ, 7. Հայ մեզապարտները ծեծվելիս, 8. Ֆալախա, 9. Սափոր, որով թաքուն պահված չուրը թափում են փաշայի գլխին, 10. Բատա, որով թաքուն պահված մրաչրով «ճնկիում» են պատմական փաշային

● *երեխա հանդիսատեսներ,* ∟ *պատանի հանդիսատեսներ,* ⊥ *երիտասարդ հանդիսատեսներ,* ⊙ *կին հանդիսատեսներ,* ♂ *տղամարդ հանդիսատեսներ*

Նկ. Հովհ. Քաջազնունի

նորա աթոռ, որս վերա նստելով հրամայեր կայլոն լեցունել։ Ջիու թրիք փարչի մեջ լեցունելով և մեծ կրակ վրան դնելով ձեռք տային՝ քաշելու։ Սուրճ պահանջեր. մեծ քասա մի մրաջուր բերեին։ Նա որպես թե խմելով թափեր ճերմակ մորուքի վերա։ Հետո բարկանալով, թե մարդիկ այսպիսյավ զինք պիտի հապաղեցնեն, հրաման առներ զորաց բռնած մարդիկ անխնա ծեծել, ֆալախա դրնել, շղթայով կապել և շատ տեսակ չարչարանք տալ։ Հետո մարդիկ զիջանելով նորա խնդրած գումար[ը] բերեն՝ մի մեծ ամանով լեցուն չորացած ոսկր. հրամայեց բերողաց՝ համրել։ Նորա ասացին.

—Մեք համրեցինք, լման էր, ձեր մեծություն թող համրե։

Միամորճ մարդո տալով սկսավ հաշվել։ Ո՞վ կարե զմարդոց ծիծաղն արգելել։ Սույն կետին ամբոխի մեջեն քանիք հասան, մի կուժ ջուր լեցուցին փաշայի գլխին, տակի կողով քաշեցին, փաշայն ընկավ հողափալուլ եղավ, ամբոխ ուրախության ազազակ բարձրացուցած ցրվեցավ (Նկ. նկ. 6 և 16)։


Ձ. № 4184, էջ 91բ—93ա (վ.)

12. Փ Ա Շ Ա

...Թագի կարդալ չգիտցող տղայք պողպոզի խաչեն կերպարանելով ի փաշա, որ շատ պակաս չէր Հայկավանից փաշայի կերպարանքեն, Սոլթիկ Կարոն, Դանել և Գասպար, Մատոյի խաչեն այս փաշային հրամանակատարք էին։ Սոքա յուրյանց էշավորյավ փաշայն խաղի վարի ծայրեն սկսեցին հառաջ քշել։ Սև թորվան փորատիկ անթրոյի ծայրն անցուցած իբրև գլոշակ, տղայի մեկ[ը] փաշայի առաջ քալեր. փոքր նաղարան ինքն՝ փաշայն իշու վրայեն զարներ։ Նորա զարական սպասավորք յուրյանց այլանդակ կերպարանոք հույժ այլանդակապես ետ ու առաջ, վեր վար ցատկեին և մարդկանց դրսան վերա կանդ առնելով գինի և պարգև խնդրեին և առնելեն հետո մյուս դռան վերա հանդեսով երթային մինչև թագի մյուս ծայրի տանց և դրանց վերջ, այսինքն Սալախ Մանուկենց դուռ։

Սույն խայտառակ հանդեսի միջոցին արդեն թագեցիք մեր տանիս կամ սենյակ ժողով[վ]ած և բազմած էին կերակուրի վերա։ Փաշայն յուր սարսրն ելաներ ի մեր սենյակ։ Մարդիկ զփաշայն և զյուր սպասավորք հրավիրելով վերի գլուխ բազմեցուցանեին և նորա գալուստն շնորհավորելով, որպիսությունն հարցանելով, խնդրեն պատմել, թե ո՞ր աշխարհեն գա, ի՞նչ բաջությունն արած է, երկրին ի՞նչ բարիք պիտի առնե։ Նա ևս ասեր.—Բաբելոնեն, Նինվեեն, Եղիպտոսեն, Հնդկ Պոլսեն և աշխարհի բոլոր քաղաքներեն և գեղերեն անցանելով հասած է Վանա քաղաք, որս մարդիկ քան զամենայն մարդիկ քաղաքացն այնոցիկ, զորս տեսյալ էր փաշայն, շատ բարի և քաղաքավար տեսաներ։ Հետո յուր դյուցազնական չունեցած քաջությունք պատմելով և զինքն Աղեքսանդրի, Շահ-Թահմազի և Շահ-Իսմայելի չափ հաղթող ասեր և յուր մարդիկ ամեն պատմությանց վերջ ասեին և վկայեին, թե բոլորն ճիշտ և ստույգ են, զի մեք նորա զորապետք վկայեմք, որ այս այսպես է։

Հետո փաշային և յուր մարդոց գինի և կերակուր տային։ Նորա պահ մի յուրյանց իշխանությունն մոռացած՝ իրև ընկեր, ուտեին, խմեին, երգեին և ուրախությունն առնելով զվարճաբանեին, մինչև փորներնին կշտանար։ Հետո փաշայն նորեն յուր իշխանական դիրք բռնելով, բերան սրբելով, բեխերն ոլորելով, շան պես կոմռալով, խողի պես մռմռալով հարցաներ յուր մարդկանց, թե այս գեշ մարդիկ քնավ չեն հարցաներ, թե փաշայն է՞ր աղագավ այս քաղաք և թագն եկած է, որովհետև այլ ևս արժանի չէր համարեր բերան առ բերան մարդկանց հետ խոսել, այլ թարգմանավ։ Նորա մարդկանց մին թարգման ձևանալով ասեր, թե փաշայն վերջի աստիճան զայրացած է, զի քանի օր է ամիս կամ տարի է, որ այս թագն եկած է, քնավ նորա գալստյան պատճառ չեք հարցաներ։ Մարդիկ բոլոր ի միասին հազար և



Նկ. 17. Վանա փաշայի հաշիվերության և բարկության պահի սխեման (բնագիրը՝ № 12)

1. Փաշան իր զորքի համար պարեն է պահանջում, 2. Հաշվերության տեսարանը սեղան-սփռոցների շուրջը, 3. Երիտասարդ թուրք պենզորները պատրաստ են փաշայի հրամանին, 4 Ոստիկանները շրջում և ծեծում են մեզապարտ հայերին, 5. Շղթայված հանցավոր հայեր, 6. Դրոշակակիր-մաննամիկ, 7. Նվագախումբ, 8. Փաշայի պրատը

● Երեխա հանդիսատեսներ, └ Պատանի հանդիսատեսներ, ⊥ Երիտասարդ հանդիսատեսներ, ⊂ Տղամարդ հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Քաջակյանի

բյուր անգամ ներողություն խնդրելով ասելին, թե մեր մեծապես սխալած ենք այդ մասին, ուստի ներողություն խնդրենք, յուր գալու պատճառն ինքն բացատրե մեզ և ինչ հրաման ունի, մեր գլխու վերա կատարեմք։

Փաշային բարդմանի միջոցավ պատասխաններ, թե այս չափ հազար ոսկի տուգանք պահանջեմ իմ զորաց համար ծախս անելու, ապա թե ոչ առհասարակ սուրե կանցունեմ և քաղաք կրակով վառեմ և այլ շատ տեսակ զարհուրելի սպառնալիքք, զորս ժամանակավ ինուրք փաշայք խեղճ հայոց ազգին արած էին և սորա այսօր ներաստանական կերպիվ այպանեին։ Իսկ մարդիկ, որպես թե սոսկալով նորա սատիկ սպառնալիքեն, ասելին և աղաչեին ասուածո և թագավորի խաթրի համար խնայել մեր կենաց, ինչ որ պահանջես, անմիջապես հատուցանեմք։ Փաշային հրամայեր՝ նախ հորս և ապա հետզհետե բոլոր մարդիկ շղթայել և տուգանք առնել։ Սպասավորք որպես զահիճ, հասանելով շղթայեին և ամեն մեկեն 1—2—3 զուռուշ փոխա առնելով շղթայք քակեին։

Հետո մեր և երիտասարդաց խումբ գփաշային և մարդիկն, ո՛րա փաշայի գլխո կոպվին կրակ կատայինք, ո՛րա նորա մորուք փետեինք, ո՛րա գլխի վերա ջուր լեցունեինք, ո՛րա աչքերու մեջ փոշի փչեինք և այնպես ձգձգելով աստ անդ քաշքշեինք, որ բնավ փաշայի կերպարանք չէր մնար վրան։ Հապար գժվարությամբ հազիվ մազապուծ մեր ձեռքեն փրթելով ազատեր, փախչեր յուր խեղճ մարդիկներով, որք երթալով երեսնին լվային, յուրյանց մաքուր հանգերձ հագնելով գային բազմեին ի շարս մարդկանց և մեք (նկ. 17)։

Ջ. N 4184, էջ 93բ—94ա (Վ.)

13. ՁԻ ԽԱՂՑՈՒՑԵԼ

Հայոց ձորի Հերմոնիկի գյուղում բարեկենդանի վերջին շաբաթվա հինգշաբթի օրը «Ձի խաղցուցկու» համայնքային սովորություն կար։ Բարեկենդանից առաջ երիտասարդ ազամարդիկ վարպետի միջոցավ փայտե ձի էին պատրաստում, որի երկարությունը հասնում էր մեկուկես մետրի, իսկ բարձրությունը համապատասխանեցնում էին այն մարդու մեջքի բարձրության, որը պետք է «ձի խաղցուցկը»։

Ձիու ոտքերը՝ առջևիններն առանձին և ետևիններն առանձին շարժական էին լինում։ Մեջքը վերևից ծակ էր ունենում, որը օգտակում էր խաղացնողի մեջքը։ Ձիու պատաքինը երբեմն ներկերով և հաճախ փայտածուխով ներկում, զանազան նախշերով զարդարում էին։ Կարմիր կամ սպիտակ թամբաշորը, որը կախվում էր ձիու աջ ու ձախ կողմերից, զարդարվում էր զրզազարդերով։ Ձիու պարանոցից կախ էին արվում մի շարք զանգակներ, բիբեղից պատրաստված զարդեր, դույնզդույն ալունքներ և այլն, խաղերի ժամանակ խառնահնչուն ձայներ հանելու նպատակով։

Երբ վրա էր հասնում համայնքի համար դյուղի հրապարակում «ձի խաղցուցկու» օրը, ձի խաղացնողն առավոտյան զգեստափոխվում էր։ Նա հագնում էր հասարակության կենցաղին օտար, ալլանդակ շորեր, գլխին դնում էր սրածայր և բարձր մի գլխարկ։ Դեմքը կամ մրոտում էր և կամ դիմակ էր հագնում։ Կուրծքը զարդարում էր փայլող բիբեղյա կրծքանշաններով ու տատր զենքերով զինավառված՝ մտնում էր ձիու մեջքանցքը և ձին կապկպում իր մեջքին։ Սրանով «ձի խաղցուցողը» ներկայանում էր իբրև թուրքական բռնակալ ոստիկան։

Հետեմերիկում մինչև հայկական եղեռնական կոտորածները այս դերը կատարում էր Կոլոսի Հասանիը։

Ձի խաղացնողն ունենում էր 4—6 ոստիկանական տարբեր աշխատող օգնականներ, որոնք նույնպես ալլանդակ զգեստներ էին հագնում, երեսները ալլանդակում և զինավառվելով հետևում էին «ախրոջ» կարգադրություններին։

Այս բոլոր պատրաստություններ տեսնելուց հետո նրանք հրավիրում էին գյուղա-



Նկ. 18. «Ձի խաղցուցնելու» և պատիժները սահմանելու տնտարանի սխեման Հայոց ձորում (ընդարձը՝ № 13)

1. Ձի խաղցուցողը փայտ ձիով, 2. Ձի խաղցուցողի խաղադիծը, 3. Ձի խաղցուցողի հրամանները կատարող ոստիկանները, 4. Բանտարկյալներ, 5. Լուռես հայը ձի խաղցուցողի ծառայության մեջ, 6. Ծնծի ենթարկվող մեղապարտներ, 7. Նվագախումբ

● *Երեխա հանդիսատեսներ,* ▯ *Պատանի հանդիսատեսներ,* ⊥ *Երիտասարդ հանդիսատեսներ,* ♀ *Տղամարդ հանդիսատեսներ*

Նկ. Հովհ. Բացակյանի

նադարա նվագողներին և հանդիսավոր կերպով ընթանում դեպի դյուղի հրապարակը, ուր հավաքված սպասում էին երկու սեռի գրեթե բոլոր ներկայացուցիչները, երեխաներով հանդերձ։ Նվագն ընթանում էր առջևից, ձիավորը՝ նրա ետևից, սրա օգնականները՝ իր ետևից, որոնց ուղեկցում էին երեխաների խմբերն իրենց ազմուկ աղաղակով և պախարակիչ խոսքերով։

Երբ որ հասնում էին հավաքված ժողովրդին, ձիավորը բուրքերեն հայհոյիչ խոսքերով սպառնում էր «գյավուրներին» և ձիով հարձակվում առանձին մարդկանց վրա։ Վա՜յ նրան, ով ձիավոր ոստիկանի առջև մինչև գետին չէր խոնարհվում, ով առաջին իսկ ակնարկին հետ կերպով չէր ենթարկվում։ Ձիավորը հրամայում էր այդպիսիներին անմիջապես ձերբակալել, որ և իսկույն կատարվում էր իր օգնականների միջոցով։ Ձերբակալվածներին նա իր մտրակով ծեծում և մյուսներին ևս ծեծել էր տալիս ու կանգնեցնում մի պայմանական տեղ, որը իբրև բանտ էր ծառայում։ Սրանք բանտից ու հալածանքներից ազատվում էին միայն որոշ տուգանք ու կաշառք վճարելով, որպիսի դեպքում ձիավորն անմիջապես զրպանում էր։ Այսպիսիներին ազատելու և մինչև նոր մարդկանց իր ճանկերը գցելու ժամանակամիջոցում ձիավորը զանազան խաղեր ու կատակներ էր անում։ Նվագի տակտ տակ շարժում էր ձիու ոտքերը, խոյացնում վեր, շարժվում դեպի մարդիկ, մանում նրանց մեջ, քացի էր տալիս, խրխնջում էր և դառնում իր տեղը, ձիուն հանդստացնելու։

Ահա՛, գալիս է մեկը և հայտնում, թե պիտե՞ք, էֆենդիմ, այսինչ մարդը համարձակվել է չվճարել բարեխնամ տերության հարկը, այսինչը մարդասպան է, այնինչը դյուղում վատ բարք ունի, մյուսը գողությամբ է զբաղվում և այլն։

Այդ րոպեին էֆենդին հրաման էր արձակում, որ իր օգնականները մեկ մեկ ձերբակալեին և դատ ու դատաստան տեսնեին։ Սկսվում էր մարակածեծն ու մահակածեծը, որից դարձյալ ազատվում էին զրամական վճարով։

Երկար ժամանակ տևող այս խաղ-կատակի միջոցով որոշ գումար էր հավաքվում, որով ձի խաղացնողները երեկոյան խաղը վերջացնելուց հետո, նույն հրապարակում խընջույք էին կազմակերպում, որի շուրջը հատարակական երկարատև պարեր էին տեղի ունենում (նկ. նկ. 5 և 18)։

Բ. ժո. ձ.

14. Ս Ա. Ն

Ղափանի Արծվանիկ դյուղում բարեկենդանի վերջին՝ կիրակի օրը, մեկին պարակական խան դարձնելու և խաղի միջոցով հին օրենքները վերհիշելու սովորություններ պահպանված էին մինչև 1910-ական թվականները։

Այդ օրը առավոտյան դերաբաշխում էր կատարվում։ Ժիր մեկին, որը հասարակական աշխատանքներում աչքի էր ընկնում իր դործունեությամբ, խան էին դարձնում։ Երբեմն այդ դերն ստանձնում էր հատակավոր, երկարամորուք մի մարդ։ Սրան խանական կարմիր փալասաշորեր էին հագցնում և համապատասխան ուսադիրներ դնում։ Գլխին դնում էին հատակը ծակված մի կերակրաման, որը վայր չընկնելու համար քղով կապկպում էին։

Դյուղից մեկին նշանակում էին խանի քրթագիր, որին ավելի այլանդակ շորեր էին հագցնում։ Երկու հոգու շալերը (ոստիկան) էին դարձնում, որոնց նույնպես անպետք շորերով զգեստավորում էին և զենքերով զինում։ Խանը «տեղապի» մեկին նշանակում էր լրատու և մի ուրիշին՝ չովուշ (կատարածու)։ Այս գերաբաշխումից հետո առաջ էին բերում երկու էշ, որոնցից մեկին խանն էր նստում, իսկ մյուսին՝ գրագիրը, թարս դրությամբ։ Գրագրի իշու պոչը կապում էին մեջքին, նրա ետևը թանաքաման ձևացնելու նպատակով։ Այնուհետև դերակատարները դյուղի փողոցներով երթ էին կազմակերպում, և մեծ

շուրթ շարժվում դեպի եկեղեցու բակը։ Գյուղի ամբողջ հասարակությունն այդ օրը հանդիսատես էր դառնում։

Խանը թափորի շարժման ժամանակ ողջունում էր հասարակությանը, իսկ վերջինս նրան դիմավորում էր ցլախառակ և խոնարհ արտահայտություններով։ Երբ որ սրանք հասնում էին եկեղեցու բակը, ժողովուրդը խանի համար իրրև նստարան էր ներկայացնում կուի կեղտոտ քիոցը, որի վրա բազմելուց հետո, խանն իր կողքին նստեցնում էր լրատու դյուղացուն։ Գրագիրն իր հերով կանգնում էր մյուս կողքին։ Շաթրները պատրաստակամ կանգնում էին խանի առջև, իսկ կատարածուն՝ քիչ հեռում։

Ապա՝ դառնալով հասարակությանը, խանը թուրքերեն հարցնում էր, թե ի՞նչպես է ապրում իր հպատակ ժողովուրդը, ի՞նչ գանգատներ ունի նա և այլն։ Հասարակությունը խանին պատասխանում էր, թե ինքը շատ վատ է ապրում, հացի և հագուստի նեղություն է քաշում, հարկերի տակ շունչ քաշելու ճար չունի, ծառայողների դաժանությունները տանել չի կարողանում և այլն։

—Բան չկա՞,—պատասխանում է խանը,—ա՛կ՚որ ալլահ ջանըմա ա՛հմա՛ան, սիրըն նստի՛ մի՛ բիր կազանա մայտաճ էլլիսրամ,—եթե աստված ինձ ձեռք չտա, ձեր յոթը տունը մի պղնձամանի կարոտ եմ դարձնելու։

Խանն այնուհետև լուրջ ու ջղային կերպարանքի մեջ մտած հրամաններ էր արձակում՝ մերթ մարդ էր կանչում, ծեծել էր տալիս, մերթ իր պաշտոնյաներին հանձնարարություններ էր անում, լրատուի միջոցով իրրև թե իմանում էր գյուղի մեծահարուստ անձանց անունները, որոնցից կարելի կլիներ գրամ պոկել։ Ապա չուխչի միջոցով կանչում էր նրանց։

Ահա՛, խանի մոտ է Ածվանիկի անտառապետը, որը բազմիցս ղլուխ խոնարհելով, ձեռքերը կրծքին պահած. հարցումի է սպասում։

—Ի՞նչ մարդ ես, ա՛դա, ի՞նչ պաշտոնի ես ծառայում,—հարցնում էր խանը։

—Ես անտառապետ եմ, խանը սաղ լինի։

—Ի՞նչ ես անում անտառում։

—Պաշտպանում եմ, ման եմ գալիս..., խանը սաղ լինի։

—Դու ա՞րջ ես, ի՞նչ ես, որ անտառումն ես ման գալիս,—վրա էր բերում խանը և ընդհանուր ծիծաղ առաջացնում։ Այնուհետև հրամայում էր, որ նա իր արջության համար շաթրների կողմից մի ավ ծեծ ուտեր ու տուդանք վճարեր։

Գալիս էր ներկարարը, որին դարձյալ հարցնում էր.

—Ի՞նչ մարդ ես, ի՞նչ հավատի ես ծառայում։

—Ներկարար եմ, խանը սաղ մնա։

—Ի՞նչ է նշանակում՝ ներկարար ես. ի՞նչ են անում այդ ներկարար հարամզադաները։


—Խանը սաղ մնա,—պատասխանում էր նա,—ներկարարները այն մարդիկն են, որոնք սպիտակ թելը ջուրն են կոխում, սև հանում։

—Վա՛յ, շուն շան որդիներ, դուք ի՞նչ մարդ եք, որ սպիտակը ջուրն եք կոխում և սև հանում։

Շաթրները նրան ևս ծեծ էին տալիս, մինչև որ տուգանքն առնում, հեռացնում էին դատաստանատեղից։ Եվ այսպես, խանը օրվա ընթացքում դրեթե բոլորին կանչում, ամեն մեկին իր մասնագիտության համաձայն հարց ու պատասխան ստեղծելով աշխույժ ծիծաղ էր առաջացնում և առջևը փռված թաշկինակի վրա հավաքում նրանցից պոկած կոպեկները։

Գյուղի չքավորները խանին փող վճարել չէին կարողանում։ Այդ պատճառով դրանց շատերին խանը «բանա» ու «աքսոր» էր ուղարկում, իսկ ոմանց՝ «կախաղան» էր բարձրացնում։ Վերջիններիս համար եկեղեցու բակում նախապես ծառից մի թոկ էին կախում, որտեղ շաթրները դատապարտվածներին կռնատակերից կախում էին։

Գրագիրը՝ հնազանդ իր պաշտոնին, տեմարագրում էր իր տիրոջ հրամաններն ու որոշումները, բոլոր եղելությունները, երբ



Նկ. 19. «Եթե աստված ինձ ձևոք չտա, ձեր (հայերի) յոթը տունը մի պղնձամանի կարող եմ դրեք» նելու,— ասում է խանը Սրդվանիկում։ Պատասխանի սխեման (բնագիրը՝ № 14)

1. Խան, 2. Գրագիր, 3. Ոստիկաններ, 5. Մեղապարտ հայը շղթայված, 6. Ծեծի ենթարկվող հայը, 7. Բանտարկյալներ, 8. Կռատակիրը կախազան բարձրացրած մեղապարտ հայ, 9. Կատարածու, 10. Խանի անրաժան գրասեղ

● *Նրեխա հանդիսատեսներ,* └ *Պատանի հանդիսատեսներ,* ┴ *Երիտասարդ հանդիսատեսներ,* ⊙ *Կին հանդիսատեսներ* ♂ *Տղամարդ հանդիսատեսներ*

Նկ. Հովհ. Քոչակյանի

դրության միջոցին նրա խանաթամանը մեծ ծիծաղ էր առաջացնում։

Խանի խաղն, այսպիսով, տևում էր մինչև երեկո, որից հետո դերակատարներն իրենց հավաքած դումարով ընդհանուր խնջույք էին սարքում (նկ. նկ. 8 և 19)։

Բ. Ժ. Ա.

15. Փ Ա. Շ Ա.

Բարեկենդանի հինդշաբթուց մինչև կիրակի ներառյալ, Սիսիանի երիտասարդներն իրենց խմբից ծպրածուի համբավ վայելող մեկին փաշա էին դարձնում, որին կարմիր շար էին հագցնում, թուր կապում, կրծքից շքանշաններ կախում։ Ապա մի քանիսին փաշայի ծառաներ նշանակելով, իրենց վայել շորեր հագցնելով սափրում էին ծառայել նրան։ Փաշային նստեցնում էին իշուն և դավով զուռնայով պտտեցնում գյուղի մեջ։ Խումն բազմությունը հետևում էր նրանց։ Փաշան այստեղ ուզած մարդկանց կանգնեցնում, հարցեր էր տալիս, ապա խեղկատակություններ անում ու վերջիվերջո նրանցից տուգանք պահանջում։ Ծառաներն անմիջապես գործի անցնելով՝ վերցնում էին սահմանված տուգանքը։ Տուգանքները լինում էին դրամով և արմաթիքներով։

Սրբեմն միևնույն գյուղում երկու փաշա էր երևում։ Այդպիսի դեպքերում երբ խմբերը իրար էին հանդիպում, փաշաներն իրար երգիծական և վիրավորիչ խոսքեր էին ուղղում, հետո կատակով միմյանց խփում։ Բանը մեծանում, կռվի էր վերածվում, ծառաների միջև սկսվում էր տուր ու դմբոցը, որը սաստկանալով՝ «հանաքը չանաք» էր դառնում, քիթ ու բերան արյունոտվում (նկ. 20)։

Փաշաների միջև ծագած այսպիսի լուրջ կռիվների ժամանակ միջամտում էին գյուղի տանուտերն ու գղիրը և մարակի հարվածներով ցրում կռվողներին (եվ. Ա.Հ, III, 251—252)։

Զանգեզուրի այլ մասերում ևս հանդես եկող փաշան, փաշայական զգեստ հագած, էշ էր նստում և հավաքած տուգանքներով քեֆ անում մեծ պառի առաջին օրվա ուխտադնացության ժամանակ։

Եվ. Ա.Հ, IV 107, 109

16. ՂՈՇՈՒՆ-ՂՈՇՈՒՆԻ ԿԱՄ ՇԱՀ-ՇԱՀԻ


Բարեկենդանին Արևմտահայաստանի գյուղերում հաճախ խաղում էին ղոշուն-ղոշունի կամ շահ-շահի։ Մեկն ընտրվում էր ոչխար կամ շահ, երեսը մրոտում, գլխին թղթե կամ թավիքե շամալ-թագ դնում, թիկունքին մի սավան կամ ոչխարի մորթի առնում, մեջքը թրքոտ գոտի կապում, ուսերին՝ ցախի դյուրավառ խուրձեր ամրացնում, ձեռքին էլ առնում էր մի ահագին, սրածայր ձող, որի ծայրին տատանվում էին շորի հին ու մին կտորները։ Մի շարք երեխաներ նույնպես երեսները մրոտած ու ցնցոտիներ հագած, շրջապատում էին նրան և հետևյալ երգը երգելով վազում դեպի մոտակա գյուղը.

Այլ իմն գել (գայլ), թայլ (թե այլ) իմն գել,
Գացեք, բերեք նատոյի տել (քած շուն).
Նատոն քնի խոր քուն,
Կնչկեն (քած) ծոր վեր պլուն.
Անծեղ փախի, մաի տուն,
Ջարկեց կոտրեց գելի ճան (վեպ).
Փախավ, ելավ, մտավ աճմու դեպ,
Մինծ խուրձ քաշեց վըրեն թեզ։
Կնիկ, կնիկ, ճուլ վերու,
Թուլեներ (շան լակոտ) թինտրան տար.
Փըշու մը դրինք վըր շըշին,
Ջէն էլ ճամբինք քեշիշին,
Փըշու մը դնենք վըր լոզուն*,
Ջէն էլ ճամբենք կիկոզին**։

Այս խմբին ընդառաջ էր գալիս մի ուրիշ խումբ, որը նույնպիսի պատրաստությամբ դուրս եկած էր լինում մոտակա գյուղից։ Կանչում էր դավով զուռնան, որը հենց որ

* Փայտ ջարդող գործիք։ Վանում լոզ է նշանակում երկաթե սակրը, որով միս են կտրատում։

** Գղիր։



Նկ. 20. Երկու գյուղերի փաշաների զորքերի հակառամարտի սխեման Զանգեզուրում (բնագիրը՝ № 15)
1. Հակառակորդ փաշաները կռիվ են բորբոքում, 2. Հակառամարտող բանակները, 3. Կռիվը զազրեցնելու համար մեջամտող ատելաները, 4. Գլխիր, 5. Նվագախումբ

● Երեխա հանդիսատեսներ, | Պատանի հանդիսատեսներ, ⊥ Երիտասարդ հանդիսատեսներ, ⊙ Կին հանդիսատեսներ, ⊙ Ջամբռղ հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Թումանյանի



Նկ. 21. Հակառակորդ շահերի բանակների կռվի սխեման Արևմտահայաստանում (բնագիրը՝ № 16)

1. Հակառակորդ և դրուշակակիր շահերն իրենց գյուղերի բանակներով արշավում են միմյանց վրա, 2. Շահերը պատերազմ են հայտարարում, 3. Բանակները կռպտակռիվ են ծավալում, 4—5. Տանուտերը և քահանան միջամտում են՝ կռիվը դադարեցնելու համար, 6. Նվագախմբեր

● *Երեխա հանդիսատեսներ,* ⚌ *Պատանի գինվորներ,* ⌊ *Պատանի հանդիսատեսներ,* ⊥ *Երիտասարդ հանդիսատեսներ,* ☃ *Տարեց հանդիսատեսներ*

Նկ. Հովհ. Քաջազնեանի

սկսում էր ածել, այդ երկու խմբերը հարձակվում էին միմյանց վրա և սկսում կռվել։ Երբ մի կողմը հաղթում էր, բռնում էին հաղթվող կողմի պարագլուխ ռևսին կամ շահին, իշու վրա նստեցնում, երևան ուղղելով դեպի պոչը, որի ծայրը տալիս էին ձեռքը, ապա հրճվելով մոտենում մի գետի կամ ցոլենի հորի և կրակ տալով ուսերի վրայի ցախի խուրձերին, իշով հանդերձ գցում էին գետը կամ հորի մեջ։ Անմիջապես վրա էր հասնում քահանան, ավետարան կարդում և աղաւոում ռևսին, որից հետո փրկանք պահանջում հաղթվողներից, սակայն սրանք, հաղթողների հետ միասին հարձակվում էին քահանայի վրա և նրան հողաթափալ անում, մինչև որ մի կերպ գյուղի մեծավորների միջամտությամբ փախչում, ազատվում էր (նկ. 21)։

Ա.Դ, II 79—72

17. ՂՈՒՇՈՒՆ-ՂՈՇՈՒՆԻ ԿԱՄ ՇԱՀ-ՇԱՀԻ

Գանձակում, բարեկենդանի օրերին, երիտասարդները «ղոշուն-ղոշունի կամ շահ-շահի» էին խաղում։

Մաքրում էին մի կալ, մի բարձր տեղ պատրաստում, մի երկար ձող ցցում և ծայրին կանաչ ու կարմիր թաշկինակ կապում ու թողնում, որ ծածանի։ Ապա երիտասարդներից ամենից ճարպիկ ու սրախոս դիմին մի եռանկյունի, թագաձև փոստ էին անցկացնում, փորը ուռցնում, կուրծքը, ուսերը զարդարում զանազան ձևի գունավոր կտորներով, վրան մի հազվագյուտ վերարկու գցում, կրծքին շարում զանազան գույնի թղթե մեդալներ և իբր շահ բազմեցնում թախտի վրա։ Մյուս երիտասարդները մի մի երկար մահակ ուսերին դրած՝ շարվում էին նրա եռևվը, որպես նրա հավատարիմ թիկնապահներ, իսկ մի քանի սրախոսներ կանգնում էին նրա առաջը և զանազան խնդիրների մասին զեկուցում նրան։

Ահա մեկն սկսեց գյուղի մի հարստի մասին դանդատվել և ամբաստանել նրան զանազան զեղծումների համար։ Շահը խիստ հրամայում էր իր թիկնապահներից մի քանիսին՝ գնալ և բերել նրան։ Սրանք էլ անմիջապես բռնի կերպով բերում էին նրան շահի առաջ։ Շահը երեսովն էր տալիս նրա արածները և տուգանք նշանակում։ Թիկնապահներն իսկույն սկսում էին չարչարել նրան, մինչև որ վճարում էր տուգանքը։ Այսպես՝ դատավարությունը շարունակվում էր, մինչև որ լուր էր գալիս, թե մի ուրիշ շահ հարձակումն է գործում։ Անմիջապես այս շահը խաղացնում էր իր զորքերին և հարձակվում նկող շահի վրա։ Սկսվում էր բավական լուրջ կռիվ. մահակները իրար էին հարվում և փշրվում, երբեմն էլ դլուխներ էին պատռվում։ Վերջապես մի կողմը հաղթող էր հանդիսանում։ Իսկույն հաղթված շահին նստեցնում էին իշի վրա, ապին ձեռը տալիս, երեսին մուր քսում և թիկնապահներով շրջապատված պատեցնում գյուղը՝ հազար ու մի կատակներ անելով և նվերներ ժողովելով (նկ. 22)։

Եվ. Ա.Հ, VI, 365—365

18. ԲՈՇԱՆ ԴԱՆԱ ՄԸ ՓԱՇԱ

Տարոնի գյուղերում տրադիցիոն կարգով ամեն տարի բարեկենդանի առնին կազմակերպվում էր «Բոշան դախա մը փաշա»-ն։ Կազմակերպողները երիտասարդ տղաներն էին, որոնք իրենցից ամենահայտնի ծաղրածուին փաշա դարձնում, փաշայական զգեստներով զուգում-զարդարում ու ձեռքն էին տալիս մի երկար, անճոռնի չիբուխ և բազմեցնում կապերտապատ երկար լայն տախտակի վրա։ Նրան ծառայող անձնակազմը, որ պետք է տարբերվեր հանդիսատեսներից իր զգեստներով ու այլակերպ փոստե գլխարկներով, տախտակի չորս անկյունների տակ մտած՝ պետք է ուսերի վրա պահեր մեծ փաշային։

Փաշան ունենում էր իր առաջնորդող գդիրը, երջանիկ խումբը, այսինքն՝ տոլչի, զուռ-



Նկ. 22. Երկու շահերի պատերազմական գործողությունն սևեման Գանձակում (բնագիրը՝ № 17)
1. Պատերազմ հրահրող շահեր, 2. Հակառակորդ բանակներն արշավում են իրար վրա, 3. Լրտեսներ,
● երեխա հանդիսատեսներ, └ պատանի հանդիսատեսներ, ┴ երիտասարդ հանդիսատեսներ,
♂ Տղամարդ հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Քոչակյանի

նաչի և նարչի փողհարները, իր բաքլիները, որոնք պահապան ոստիկանների դերն էին խաղում։ Նա ունենում էր իր ծնրադիր ու փառաբանիչ հետևող խումբը՝ ժողովուրդը, որը բոպե առ բոպե այլակերպ դիմագծերով ու ծամածռումներով ծունր իջած մարթանոցների ձևեր էր կատարում։ Եվ գղիրը առաջնորդելով այդ բոլոր «օյինական»-ներին, շռայլանակ զգուշություն հանդես բերելով իր «բոշա փաշայի» ժամանումն էր հռչակում։ Իսկ բոշա-փաշան իր տախտակե գահից խոժոռ, վեհանձն և խրոխտ դիրք առած՝ երբեմնակի զանազան պատվերներ, հրամաններ ու կառավարչական կարգադրություններ էր անում, սրան-նրան պատիժներ սահմանում։ Պատժի ենթակա անձանց անունները լսելուն պես՝ բաքլիներն անմիջապես գործի անցնում և բռնում, դրանց փաշային էին ներկայացնում։ Փաշայի բոլոր արած կարգադրություններն ու հրամանները զուտ բոշայական էին լինում և բոշայական իրավունքների ու ոտնահարված կանոնների ամենամոլեռանդ պաշտպան։

Եվ այդպես՝ գործողությունները զարգանում էին ու շրջանը 3—7 անգամ դառնում հրապարակում։ Շրջանավորման միջոցին ջահելների մի այլ խումբ, որ իր բոլոր ձգտում ներով ու պահանջներով «բոշա-փաշայի» դավանած բոլոր սկզբունքների հակապատկերն էր ներկայացնում, ձեռքից եկած ո՛չ մի միջոց ու ջանք չէր խնայում տապալելու նրան, արատավորելու նրա դիրքն ու պատիվը։ Եվ ահա «բոշա-փաշայի» ոխերիմ հակառակորդները մի թաքստոցից հայտնվելով՝ նրա գլխին էին անցկացնում մի ջարդված, փոշով ու քարերի մանրուքներով լիքը կողով։ Այդ միջոցին «բոշա-փաշայի» խումբը, որ մի կեղծ ու պատիր զանգված էր, որ թուլլ ու վախեներից էր կազմված, թողնում էր փաշային իր փոշե սավանների մեջ այլայլված ու փախուստի էր դիմում։ Եվ այսպես, հակառակորդները, որ «զարուս պահանջի արատահայտության ձևն ունի, վերջապես կը տանի հաղթանակը»։ Դրանից հետո արդեն հանդեան ու պարը, խաղն ու բրիչը վերջանում էր (նկ. 23 և 24)։


Իզ. Աթ., 1895, № 109

19. [Փ Ա. Շ Ա.]

Թիֆլիսում մեծ պասի երկուշաբթի օրը փաշա խաղ էին կազմակերպում։ Ներքին թաղեցիները առանձին և վերիններն առանձին խումբ էին կազմում։ Ներքին թաղեցիները մեկին փաշայի շուր էին հագցնում և իշու վրա նստեցնում։ Սա ունենում էր իր զորքը, «ծոպ ու յարաղով» վեղերները, «կոմբըլնեբով ու կետերով» մարդիկ։ Վերին թաղեցիք ունենում էին ձիու վրա նստած «ոբսի մինձ մարթու հանգը զուբած նաչալնիկ»։ Սրա հետևից կարգով շարվում էին ինդանոթավորները, «կետարաուները», «զարբազնիր»-ը՝ էշերը լծած։ Այս երկու խմբերը ամբողջ օրը զուռնա ածելով ման էին գալիս՝ քաղաքի փողոցները՝ խաղալով, «քուչա-քուչա փուշ մոպ անելով»։ Երբ օրը երեկոյանում էր, խմբերը քաշվում էին մի կողմի վրա և մեծ կռիվ սկսում։ Ծեծում էին, ծեծվում, ջարդվում «կետերով» ու կոպալներով, ազմկում...։ Պատահում էր, որ երբեմն կռվողները թրեր էին գործածում, «զարբազնիրը գարպկում»։ Ի վերջո ներքի թաղեցիները պարտվում էին. փաշան գերվում և ներկայացվում էր վերին թագի ոբսի նաչալնիկին։ Այդուհետև փաշային երեսին մուր էին քսում և թարս նստեցնելով իշուն, նաչալնիկի մարդիկ նրան փողոցից փողոց ման ածելով, զուռնա նվագելով ժողովրդի մեջ խայտառակում։ Երբ որ մուրը վրա էր տալիս, փաշային տանում էին Քուռի ափը, գցում էին ջուրը, թրջում, ապա հանելով ու «պանդուրի տալով» ճամփու էին դնում։

Այնուհետև հավաքված փողով խաղացողները քեֆ էին անում։

ԳՏԱ., Մ2, 1863, № 7, էջ 72.




23. Բոշա-փաշայի երթի սխեման Տարոնում (բնագիրը՝ № 18)

1. Բոշա-փաշան թախտին բազմած, 2. Փաշային կրող ծառաներ, 3. Մուսնաւիկ, 4. Նվագախումբ, 5. Ոստիկաններ-զինվորներ, 6. Խաղին ակամա մասնակից խռնարհվող ժողովուրդ, 7. Շղթայված մեզապարտ հայեր, 8 Փաշայի կատարած շրջապտույտը 3—7 անգամ

● *երեխա հանդիսատեսներ,* ⌊ *պատանի հանդիսատեսներ,* ⊥ *երիտասարդ հանդիսատեսներ,* ⊙ *կին հանդիսատեսներ,* ♂ *տղամարդ հանդիսատեսներ*

Նկ. Հովհ. Քոչակյանի



Նկ. 21. Բռչա-փաշայի և հակառակորդի բանակների կռվի սխեման Տարոնում (բնագիրը՝ № 18)
1. Հաղթող փաշան, 2. «Թախթից ընկած» փաշայի պլուխը բխող են անցկացնում, 3. Հարձակվող բանակը, 4. Նահանջող բանակը, 5. Նվագախումբ, 6. Նահանջող բանակից մնացած ավարը
● երեխա հանդիսատեսներ, ⊥ պատանի հանդիսատեսներ, ⊥ երիտասարդ հանդիսատեսներ,
⊙ կին հանդիսատեսներ, ○ տղամարդ հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Բացայլյանի

20. [Մ Ն Ւ Խ Ք]

Վարանդայում մեծ պասի առաջին օրը, ճաշից հետո երիտասարդները հավաքվում, իրենցից մեկին մելիք կամ խան էին դարձնում, հագցնում վառ հանդերձները, նստեցնում գորգի վրա: Մյուսներն էլ որպես նրա պինվորներ, զինված ծառայում էին նրան: Մելիքը զանազան հրամաններ էր արձակում, սրանից նրանից դինի, օղի պահանջում, սրան տուգանում, մյուսին պատժելու հրաման արձակում: Զինվորներն ամենայն ազատությամբ կատարում էին նրա հրամանները, հավաքում նվերներն ու տուգանքները, մանում խմիչքների և ուտելիքների պատրաստությունը և գավով գուռնայի առաջնորդությամբ գուրս գալիս գյուղից՝ մի գեղեցիկ տեղ քեֆ անելու:

Երբեմն այս խումբը հանդիպում էր մերձակա գյուղից դուրս նկած նույնպիսի մելիքի խմբին, որոնց միջև կռիվ էր ծագում: Կռվի ընթացքում խմբերը խլում էին ունեցվածքները, միմյանց գերի էին վերցնում, իսկ հաղթող կողմը ավարառում էր պարտված կողմի ամբողջ պաշարը և վերհանձնաբար հրավիրում բոլորին՝ միասին ուտել-խմելու, քեֆ անելու:

Ուշ երեկոյան խմբերը գավով գուռնայի առաջնորդությամբ վերադառնում էին գյուղ, մելիքի տունը, ուր մի մի բաժակ օղիով հյուրասիրվելուց հետո ցրվում էին (նկ. 26):

ՆԴ., 1886, № 30. եվ № 77, էջ 45—47

21. Փ Ա Շ Ա

Երիտասարդներից մեկին փաշա դարձնում, որպես թագ՝ գլխին մի ման էին դնում և սրա չորս բոլորը փետուրներով զարդարում (նկ. 7): Երևսը ալյուրոտում, այլանդակում էին: Ձեռքին տալով մի երկար չիբուխով պատրաստած գալյան, մեջը հարդ լցնում և մխացնում էին: Փաշայի առջևն ընկած շարժվում էին նրա գինվորները, գենքերի տեղ փայտեր կախկռնելով: Մտնելով հանդիսատես հասարակության մեջ, փաշան անմիջապես անցնում էր ձերբակալությունների կատարմանը: Նրա բարձրագույն հրամանով ձերբակալվածների թիվը երբ հասնում էր 10 և ավելի մարդու, բացվում էր կաշառակերության մասին սակարկության տեսարանը:

— Ոտքիդ տակի հողն ենք, փաշա ջան, մեզ ազատիր այս տանջանքից,— աղերսում էին ձերբակալված մեծատուները:

— Ձեր ազատագրումը ձեր ձեռքին է,— մեծարար պատասխանում էր վեհափառ փաշան և վրա էր տալիս՝ ո՛վ ի՛նչ կարող է խոստանալ:

— Ես խոստանում եմ մի գետ ջուր,— վրա էր բերում ձերբակալվածներից մեկը, որը նշանակում էր, թե մի քանի լիտր օղի էր տալու:

— Ես կտամ 10 հատ ջաղացի քար,— ասում էր մյուսը, որով հասկացնում էր, թե տալու է 10 գաթա:


— Իմ կյանքի համար ես բաշխում եմ 5 երամ Թռչուն,— վրա էր բերում երրորդը, որ նշանակում էր 5 հավ տալ և այլն:

Երկար ժամանակ այս և այլ կարգի գործողություններ կատարելուց հետո, երբ փաշայական խումբը նաև բավականին դրամական դումար էր հավաքում, տեղափոխվում էր որևէ տուն՝ խնջույքի: Փաշայի զինվորները նրան վերցնում էին ուսերի վրա և այդ ձևով ման ածում ամբողջ գյուղում:

Մաղ ա. (Մրտ.)

22. Փ Ա Շ Ա Շ Ի Ն Ե Լ

Մի խումբ դեղջուկ երիտասարդներ հավաքվելով՝ ընտրում էին իրենցից 3 հոգի, մեկին՝ փաշա, երկուսին՝ զաֆթիա: Փաշային արհեստական մեծ փոր ու երկար մորուս էին շինում, հագցնում մի լայն ու երկար տապրակ-շրջազգեստ, որի վերին ծայրը փոթ տալով կապում էին պարանոցից: Զաֆթիաներին հագցնում էին ոստիկանի շորեր, կպցնում արհեստական բեխ-մորուս: Նրանցից մեկը իրեն կաղ էր ձևացնում, մյուսը՝ մեկ աչքով




Նկ. 25. Նաչարնիկի և Փաշայի զորքերի հակառամարտի տեսարան Թիֆլիսի հայկական թատրում (բնագիրը՝ № 19)

1. Հրեսի Նաչարնիկն իր բանակով, 2. Թուրք-Փաշան իր բանակով, 3. Ռուսական մարտական հնոցանոթ, 4. Նվագախմբեր

● երեխա հանդիսատեսներ, └ պատանի հանդիսատեսներ, ┆ երիտասարդ հանդիսատեսներ, ⊙ կին հանդիսատեսներ, ⌒ տղամարդ հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Քոչակյանի



Նկ. 26. Մելիքների գորքերի կռվի սխեման Վարանդայում (ընդօրինակ՝ № 20)
1. Հակառակորդ մելիքները պատերազմ բորբոքելիս, 2. Կռվող բանակները, 3. Նվագախմբեր, 4. Երկու սահք գերիների բանտարկումը, 5. Ոստիկաններ
| Պատանի հանդիսատեսներ, ⊥ Երիտասարդ հանդիսատեսներ

Նկ. Հովհ. Քոչակյանի

կույր։ Փաշան իր երկու զաֆթիաների հետ՝ դհոլ-զուռնի ուղեկցությամբ՝ սկսում էր շրջել գյուղամիջում, գյուղից գյուղ և «գալի կարել». ահել ու ջահել, իրենց կատակախառն խնդիրքներով դիմում էին փաշային։ Սա նույն ձևով (կես կատակ) պատասխանում էր հայցվորներին՝ կարում նրանց դատը։ Զաֆթիաները անմիջապես կատարում էին փաշայի հրամանները։

Փաշան շինում էին բարեկենդանին, խաղը հաճախ տևում էր 2—3 օր։ Դատավարության միջոցին գյուղացիներից գանձված «վերգի»-ով (հարկ) խաղի վերջում քեֆ էին կազմակերպում, որին մասնակցում էին ահել ու ջահել։

ԱՂ. ՍԹ. բ. II, 619—620 (Ա.)

23. Փ Ա. Շ Ա.

Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղում, ուր ապրում են Ուրմիայի Կերտապատ գյուղից 1828-ին ներգաղթած հայերը, բարեկենդանի օրերին մի մարդու ոտքից գլուխ սպիտակ հագցնում և փաշա անունն էին տալիս։ Երիտասարդները փաշային նստեցնում էին սայլի վրա. փաշան հենվում էր փափուկ բարձերին և գայլանը մի ձեռքին ու մահակը մյուս ձեռքին՝ շրջում էր փողոցից փողոց։ Փողոցներում փաշան զաղող խոսքեր էր շպրտում մարդկանց հասցեին. ճոճելով լախտավոր մահակը և հարձակվելով նրանց վրա, նա ան ու սարսափ էր տարածում։ Ժողովուրդը երկյուղելով փաշայից, դինի և օղի էր մատուցում, որով նա մեղմանում և քեֆ անելիս «խայերին էրկեն կյանքյ» էր ցանկանում։

ՀԱվ., № 106, էջ 111

24. Շ Ա. Հ

Բորչալուի գյուղերում կանչը տալու օրվա վերահաս գիշերը թագվորի սեղանը մինչև լույս մնում էր և մակարներն անընդհատ քեֆ էին անում։ Այս գիշեր բացի սովորական խաղերն ու պարերը, նաև փոքրիկ ներկայացումներ էին տալիս։ Այսպես, օրինակ, մի մարդ մուշտակը բարս հագած, գլխին թաղիքե քոչոզ դրած, շահ էր ձևանում, սրան նրան պատժում, այուններից կապել տալիս, մեղադրելով դանազան մատացածին հանցանքների մեջ, մինչև որ մեղադրվողի կինը կամ մայրը մի հավ էր բերում և ազատում (նկ. 27)։

Եվ. Ա.Հ, IX, 243

25. Փ Ա. Շ Ա.

Ռշտունիքի (Դավաշի) Պախվանց գյուղում փաշախաղը կազմակերպվում էր բարեկենդանի վերջին շաբաթվա կեսին։ Հակառակ այլ վայրերի, Պախվանցում այն տևում էր մի քանի օր՝ օրական մի գյուղում խաղալու պայմանով։

Փաշան հատուկ հրապարակ չուներ. նրա օբյեկտները փուրդ բեկերի, ծուրք բեկերի և հայ-մեծատուններուի տներն էին։

Ներկայացնենք խաղի նախապատրաստությունն ու ընթացքը։

Խախտուն կամ խաղատուն.—Այսպես էր կոչվում այն Թոնրատունը («տուն»), որտեղ մի շաբաթ շարունակ տեղի էր ունենում փաշախաղի նախապատրաստումը։ Մի այսպիսի տուն էր պախվանցի Թուրվանդի Սարգսի խոհանոց-ննջարանը։ Սովորաբար «խախտունը» ևն փաշախաղի և ևն բամբասակության ենթադրող այլ խաղերի համար տրամադրում էին ընչազուրկ ընտանիքները, ինչպես որ էր Թուրվանդի Սարգիսը։

Անձնակազմը.—«Փաշա»-ի անձնակազմը բաղկանում էր պատանիներից, երիտասարդներից և միջին տարիքի մարդկանցից։ Խաղի պրոցեսում այն լրացվում էր նաև տարեբային կարգով միացող երեխաների «բանակով»։ Բոլոր մասնակիցները պարտավոր էին որևէ ձևով ու չափով դիմահարդարվել, դիմակավորվել կամ մրոտվել ու այլայլվել, թեև պատահում էին նաև այդ հանգամանքները դանց առնողներ։

Փաշա.—Խաղի գլխավոր անձը «փաշա»-ն էր։ Փաշա էր դառնում 45—50 տարեկան մի



Նկ. 27. Շահի խազը Բօրչալուի հարսանեկան վերջին պիշեքա խնջույքի ժամանակ (սխեմա. բնագիրը՝ № 24)

1. Շահը ոսկերնակով հետո նվեր է ստանում, 2. Ճաշկերույթի նստած երիտասարդ հյուրերը, 3. Այլուներին կապված մեզապարանոք, 4. Շղթայակապ մեզապարանոք, 5. Նվագախումբ, 6. Նվեր-կաշառքով պատապարամածներին ազատելու եկած կինը

⊥ *երիտասարդ հանդիսատեսներ,* ⊙ *կին հանդիսատեսներ*

Նկ. Հովհ. Քոչոկյանի




1. Բևեի տունը




2. Մուճակ



3. Նվագախումբ




4. Փաշան պատվարակի վրա



5. Ասիկաններ



6. Ասիկանապետ



7. Պատանի պինվորներ



8. Խոպին տաբերային կարգով մանուկներ

Նկ. 28. Ռշտունիքում քուրդ բեկի տան վրա արշավող փաշայի դեմքի մեհեան (բնագիրը՝ № 25)
Մեհեանը՝ Հովհ. Զորաբյանցի

մարդ, որը ինչ վարժված լինելով կարող էր ամեն տարի հանդես գալ այդ գերում, բայց անփոխարինելի չէր (նկ. 29—3)։

Ըստ պատմողի, շատ հնում, ավանդությունների համաձայն, փաշան հնոտիներ էր հագնում, որոնք հիշեցնելու էին իր բարքական այդպիսի պաշտոնյայի արատային ձևերը։ Մինչև XX դարի սկիզբը նրա գլխարկն ուներ փուշ և ակալ։ Ներկայացվում է, որ եղել է նաև մարմին դրան։ Իսկ պատմողի պարզ հիշողությամբ փաշայի տարազը հետևյալն էր։

Ագանելիքներն էին՝ բաճիներ կամ գուլպաներ և կանեփից ու այծի մազից հյուսած բոբշիկ, սանամաններ։ Ձևոք բերելիս հագնում էր նաև ճակավոր կոշիկ։ Առաջինների դեպքում անդրավարտիքի փողերն արձակվում էին բաճիների վրա, երկրորդ դեպքում՝ դրվում կոշիկների մեջ։

Անդրավարտիքը լայն էր և ծալկավոր. նախնարելի էր 25 մրբութով ընտիր ծալկապարզած շալը, որ պատրաստվում էր չուռ կոչված այծի՝ մետաքսանման կյաժից (մազ չէր կոչվում)։

Վերնաշապիկը նույնպես կյաժից էր. կրծքի մասը հանկյունաձև բաց էր և կոճկվում էր փորի վրա՝ 1—2 կոճակով։ Կյաժից էր նույնպես գոտին, որ մեջկապ կամ ճարիկ էր կոչվում։ Չորս մետրանոց այս շալը ոլորք տալով փաթաթում էին մեջքը և թզաչափ ծայրերը կախում առջևից։

Վերնաշապկի կուրծքը զարդարվում էր ժամացույցի արծաթե շղթայով։

Հաբան (քաղաքներ), որ 10—15 սմ երկարությամբ մագերով էր ծածկվում, հագնում էր վերնաշապկի վրայից։ Դրա կրծքի եզրերը զարդարված էին լինում սուրմայով։ Փեշերը մեջկապը չէին ծածկում։

Ինչ աբան, որ պատրաստվում էր բրդից, նույնը վերարկու էր. նա գցում էր վրան, առանց հագնելու։ Ուներ լայն, բայց մինչև արմունկը հասնող թևեր։ Քղանցքը ծնկերից չէր իջնում։ Կոճակ չուներ։ Շագանակագույն էր (սովորաբար սա հարուստ ծերունիների տոնական հանդերձ էր)։

Որևէ գույնի փուշին գցում էր գլխին և հագցնում ակալ կոչված երկտակ օղակը, որ սև, ընտիր թելերից պատրաստված պարանաձև օղակապ էր, որը փուշին զարդարում էր և ամուր պահում գլխին։ Ակալի ծոպերը կախվում էին մի կողմից, մինչև ուսը։

Առավել հարգին այծենուց պատրաստված գլխարկն էր, որի անունը չի հիշվում։ Դրա բարձրությունը հասնում էր 25—30 սմ։ Սուր կոնաձև էր։ Ժողովրդի մեջ չէր գործածվում, ուստի փաշախազի օրերին շատ պատրաստում էին հատարակ ձևով։

Մորուքը և բեխերը շինում էին բրդից, թելերով կապում ծոծրակին։ Բեխերը հասնում էին ականջներին, իսկ մորուքը՝ գոտուն։


Աչքերն ու հոնքերը մրով ներկում էին, իսկ երբ փաշան խեղկատակի այլանդակ հագուստով էր հանդես գալիս, ամբողջ երեսը մրոտում էին։

Ձեռքերն էին՝ ժանգոտ թուրը, որ կախում էր ձախ կողքից, ընտիր դաշույնը և ատրճանակը, որոնք խրում էր գոտու մեջ։

Նարգիլեն մատուցվում էր խաղատեղում կամ պատգարակով նպատակավայրը մեկնելիս։ Սա մի կոտրած կավե փորրիկ աման էր, կյուվշիկ, որի մի կողմը ծակում, եղեգնյա 2 մետրանոց ձողը կամ գավազանը ամրացնում էին որպես ծխաձող։ Մեջը հարդ էին լցնում և վառում։

Փաշային էր ծառայում նաև պատգարակը, որ ուներ 3 մ երկարություն։ Երկու թևերի կենտրոնում հարմարեցրած ծանծաղ, արկղանման սարածի մեջ խոտ լցնում և վրան բազմեցնում էին ահարկու փաշային։

Զավիթաներ.—Փաշան ուներ իր անձը պաշտպանելու, նարգիլե սպասարկելու, իր կարգադրությունները սրան-նրան հաղորդելու համար չորս պաշտոնյաներ, զավիթիա (ոստիկան, զինվոր) անունով։ Սրանք 30—35 տարեկան տղամարդիկ էին, որ հագնում էին կանացի երկար, եռափեշ, կուրծքը կոճկվող չուխա։ Սրանք իրենց ճեղքված քղանցք-



Նկ. 29. Ռշտունիների փաշայի գորքի կողմից քուրդ բեկի տան պաշարման սխեման (բնագիրը՝ № 25)
1. Քուրդ բեկի պաշտպանած տունը, 2. Քուրդ բեկի զավակներն ու ծառաներն իր դեկավարությամբ փաշայի գորքի դեմ կռվելիս, 3. Փաշան պատգարակով քարին նստած հրամայում է կրակել բեկի գորքի վրա, 4. Փաշայի բանակը, 5. Ֆարրաշ-թիֆնապահներ, 6. Պատանի դինովներ, 7. Ռամիկա-նապատ, 8. Ծառաներ, 9. Մուշնեփիկ, 10. Հրաշակիրներ, 11. Նվագախումբ, 12. Պարսպած և շղթայ-ված քուրդ բեկը, 13. Գործածվող զենքի տեսակները

Նկ. Հովհ. Բացակյանի

ներով հարմար էին. փայտան ձի հեծնելու և այն ծածկելու համար: Զուխաներն ունեին կարմիր, բաց կապույտ և մուգ կապույտ գույն: Անդրավարտիքները լայն փող ունեին: Ագանելիքներն էին՝ սովորական գուլպաները և բոշիկները կամ սպերը:

Գլուխներին կրում էին փոշի փաթաթած քոլողներ: Զենքերն էին՝ փայտե կեղծ հրացանը և փայտե սաբճանակը, որը երբեմն իսկականին նմանեցնում, փամփուշտի մեջ վառոդ լցնում և կայծքարի հրացանի ձևով կրակում էին: Երբեմն կրում էին պարսատիկ և կռճան, այսինքն՝ մականի բևեռավոր գընդով: Ձախ կողքերից կախում էին վահաններ ձևացրած կավե խփեր՝ իրենց կանթերով:

Արհեստական բեհեզն ու մորուքները, ինչպես և հոնքերը ներկում էին մրով:

Ձափրիաների ձիերը պատրաստում էին փայտից: Երկու ձողերի կենտրոնում այնքան անցք էին թողնում, որ մարդը վերևից ազատ մտներ մեջը և քայլեր: Ձիու արտաքինը ծածկում էին զանազան շորերով. գլուխը պատրաստում էին կանացի նախշուն գուլպայից՝ մեջը հարդ լցնելով և գդալները դրանց ականջ ձևացնելով: Ապա դրանք շորով ձևավորում, գլուխը նմանեցնում էին նժույգի գլխի: Պարանոցը զարդարում էին կանացի կրծքազարդերով:

Ծառաներ.—Թվով 4 ծառաները, որ 20—30 տարեկան տղամարդիկ էին, ծառայում էին փաշային, իրենց ուսերին կրելով վերջինս ամփոփող պատգարակը:

Կրում էին փոշիով քոլողներ, հագնում սովորական բրդե անդրավարտիք, գուլպաներ, բոբշիկ: Բազպախիճները հարի էին կամ փոշով:

Զենքերն էին՝ փայտե հրացանն ու սաբրճանակը, որ երբեմն իսկականի նման վառոդ էր պայթեցնում: Կրում էին փայտե դաշույններ:

Հրամանատար.— Տեղական անունը չի հիշվում: Քոլողը զարդարվում էր ակալով: Հանդերձն բնաիր էր՝ լայն անդրավարտիք, սև քազպախիճ, շբեղ գոտի:

Զենքերն էին՝ իրական կամ փայտե թուրը, փայտե հրացանը և փայտե սաբճանակը, որ երբեմն կեղծ կրակում էր: Դաշույնը խրում էր գոտու մեջ: Հեծնում էր փայտե ձի:

Ջակար.—Բանակ, որ բաղկանում էր 20—30 հոգուց: Կազմում մանում էին 15—20 տարեկան պատանիները: Հատուկ հագուստ չունեին: Կրում էին փայտե հրացաններ, նետ ու աղեղներ, պարսատիկներ, խուփ-վահաններ: Լինում էին նաև անզեն ջակիրներ:

Ջակիրին վերջից միանում էին նաև երեխաներ, որոնք նույնպես զենքեր՝ նետ ու աղեղներ և պարսատիկներ էին ունենում:

Դռոշակակիր.—Դրոշակակիր էր դառնում մի պատանի կամ երիտասարդ տղա: Հագուստը չէր փոխում, բայց նրա սովորական քոլողին երբեմն փոխարինում էր Ռշտունիին խորհ արախչին:

Դռոշակը—Կարմիր փոշի էր, 1×1 մ մեծությամբ, որի ձողը հասնում էր 2—2,5 մ երկարության, որպեսզի ամենքին տեսանելի լիներ:

Մուճեփիկ.—Տեղական կոչումը չի հիշվում: Պաշտոնավարում էր որևէ պատանի կամ երիտասարդ: Գլխարկը ոչխարենուց կամ այծենուց հանպատրաստից կարված կոնաձև փափախն էր: Հագուստը սովորական էր, ագանելիքը՝ գուլպաներ և բոբշիկներ: Մեջքին՝ գոտու ձևով և կրծքին՝ խաչաձև կապում էր թևերին շարված եռանկյունաձև թաղիքակտորներ: Միակ զենքը փայտե հրացանն էր կամ կռճան-կոտռճանը:

Սազ ու զուռնա.—Սազի (ծմբուկի) բարձրությունը շուրջ 70 սմ էր, տրամագիծը՝ 75—80 սմ: Ձայնը հասնում էր մինչև 5 կմ հեռավորության վրա: Զուռնայի փողի լայն ծայրը կովկասյան նույն գործիքի սաորին ծայրից մեկուկես անգամ մեծ էր: Զուռնային օղնական չէր ունենում:

Խաղի դրսևորումը.— Երբ խախտանը պատրաստված այս ամբողջ անձնակազմը պատս էր գալիս փողոց, ուղղվելու համար պյուռամիջի որևէ հարուստհարիշի տունը

կամ Հարևան գյուղը, դասավորվում էր այսպես։

Առջևից գնում էր մունետիկը, սրան հետևում էր սազ-զուռնան։ Ջափթիաներից մեկը ձիով հետևում էր նվագախմբին, ապա գալիս էր փաշան, բազմած պատգարակի վրա, տակին ունենալով խոտե նստարան։ Մի երկրորդ ջափթիա գնում էր պատգարակի ձախ կողմից և երրորդը՝ աջից։ Չորրորդը հետևում էր պատգարակին։ Այդ ջափթիային հետևում էր դրոշակակիրը՝ դրոշակը բարձր պահած. սրան հաջորդում էր հրամանատարը, իսկ վերջինս՝ ձակատը։ Ձակատին միանում էր խոտանամբոխ մի բանակ, կազմված մանրատոհմիկ երեխաներից։ Ձակատը գնում էր երեք շարք կազմած։

Պահվանցում մինչև 1915-ը ապրում էր քուրդ Կալիխան բեկը, որի հասցրած հարբատահարությունները լրացնում էին նրա չորս ավազակ որդիները, որ անվերջ ավարառությամբ էին զբաղվում։

Փաշան առաջինը դիմում էր այդ Կալիխան բեկի տունը, որը տեղավորված էր բլրի վրա, հայկական հնագույն ամրոցի ավերակների տեղում։

Մունետիկն արագ դիմում էր բեկի տուն, ազդարարելով.

— Է՛յ, անիրա՛վ, է՛յ, գազան, քու թագաբուկ տեսի, մենք էկանք կռիվ։

Բեկը (իսկ այլ տեղերում բեյը կամ հայ իշխանը) նախապես ծանոթ լինելով բարեկենդանյան փաշախաղի արարողիչներին, ինչպես նաև տեսնելով մունետիկին, նա իր որդիների ու ծառաների հետ բարձրանում էր կտուրը։ Նա յուրայինների հետ մունետիկին պատասխանում էր սիրալիր, հայտնում էր, որ առանց կռվի անձնատուր լինել չէր կարող։

Փաշայի շքախումբը նվագախմբի ուղեկցությամբ հասնում էր տվյալ վայրը. փաշային պատգարակով տեղափոխում էին մի քիչ բարձր տեղ։ Փոխադարձ բանակցություններ, որ կատարվում էին իրարից հեռու կանգնած կողմերի միջև, դրական արդյունք չէր տալիս. բեկը հնազանդության չէր հայտնում։ Փաշան, որ իր տեղում ջարդ ու կտոր էր լինում, կողքանց նստած, արհամարհանքով կարգադրություններ էր անում։

Սկսվում էին հարցապնդումները, որ փաշան հաղորդում էր բեկին իր մարդկանց միջոցով. ինչո՞ւ բեկը տարին բոլոր տանջում է ժողովրդին, հարկեր է պահանջում, թալանով զբաղվում։ Ի վերջո կարուկ պատասխան էր պահանջում, թե ո՞վ էր նա, ինչո՞ւ է դրավել այս երկիրը և երբ էր հեռանալու։

Բեկը իր կարգին պատասխանում էր հակառակ. դրգռող խոսքերով և պատրաստ էր դիմագրել իրեն շրջապատող փաշայական զորքին։

Փաշան և հրամանատարը համբերությունից դուրս գալով հրամայում էին. շրջապատե՛լ բեկի ամբողջ շենքերը և կրակե՛լ։ Զորքը՝ բոլոր խաղակիցներն ու երեխաները շրջապատում և սկսում էին կրակել կեղծ հրացաններից, ատրճանակներից, բնդ որում նրանք վառոդ էին պայթեցնում, զդուշանում էին, օդն ի վեր էին կրակում, իսկ նրանք դրանք փայտեր էին, ապա գործի էին դնում պարսատիկները։ Վերջիններովս և ծեռքերով անհաշիվ ձնագնդի էին տեղում պաշարվածների վրա։ Փաշան միայն հրամաններ էր արձակում, իսկ հրամանատարը տակտիկական շարժումներով ու հրահրած ազմուկ-ազաղակով տեղում էր բեկին՝ անձնատուր լինել։

Բեկն իր խմբով նույնպես պատասխանում էր ձնագնդակներով, որ նախապես կուտակում էր կտուրի վրա և մարտական հրացաններով՝ օդն ի վեր կրակելով։

Այս կատակախաղը հարատևում էր բավական ժամանակ և, երբ բեկի գնդակները վերջանում էին և իրենք էլ հոգնում, այն ժամանակ պաշարվածները հանձնվում էին մեծ փաշային։ Խոսքի պայմանն այդ էր՝ բեկը պետք է, ի վերջո, անձնատուր լիներ։ Այդ բանին իսկ բեկն ու յուրայիններն անմիջապես կատկտվում էին։ Գերվածներին հրամանատարը փաշիների հետ ներկայացնում



Նկ. 30. Աբրակը «Փորտոլ-կառնավալ» խաղի մեջ (բնագիրը՝ 28)
Նկ. Ն. Զաւզաւյանի

էր փաշային։ Բեկը վերջինիս ներկայանալիս երից խորը գլուխ էր խոնարհում. փաշան դարձյալ արհամարհելով, կողքանց խոսում էր նրա հետ։

—Բավական չէ՞, որ դու շարունակում ես քո րոնութիւնները. մինչև ե՞րբ պետք է քո ազանները խալանեն, ուրիշների կանանց պատվի հետ խաղան։ Դու ե՞րբ ես վերջ տալու խեղճ ժողովրդին հարկերով ու տուրքերով տանջելը։

Այս և նման շատ հարցերով փաշան կատակով դաղում էր բեկին, որն իր բազում խոսուններով չանում էր ցույց տալ հլու հնազանդություն։

— Փաշա ջան, հանգստացիր, բարկությունդ իջեցրու, բարի եղիր իմ նկատմամբ։ Ես էլ մի ժամանակ փաշա էի, այժմ քո ծառան եմ, ասա, ինչ որ կարգադրես, կանեմ։

Վերջիվերջո փաշան հանդարտվում էր և ներկայացնում իր անհետաձգելի պահանջները։

— Ես պահանջում եմ, որ բեկը ձգտեր խաղաղության, հետու մնար անիրավություններից, ժողովրդին ազատեր ծանր հարկերից ու տուրքերից, իսկ այժմ, շեշտում էր նա, բոլոր հին հանցանքների համար կերակրել իմ զորքը և տուգանք վճարել։

Բեկն ընդունում էր փաշայի դերագույն հրամանները և նեղ հրավիրում ամբողջ շքախմբին՝ կերակրելու։ Այն ժամանակ փաշան իրավունք էր տալիս արձակել նրան և մյուսներին։

Պատրաստված ճաշերով ու զանազան ուտելիքներով բեկը հյուրասիրում էր, մի-մի բաժակ շարքաթ խմեցնում, ապա փաշային նվիրում մի որոշ դումար ու մի քանի արշին չուխա։

Հյուրասիրվելուց հետո փաշան իր նույն կազմով, նույն դասավորությամբ վերադառնում էր (խազտուն)։

Բոլոր տեղերում նվագախումբը ողջ գյուղին հավաքում էր իր շուրջը։

Ապա, հաջորդ օրերին փաշան նույն ձևով մեկնում էր այն գյուղերը, ուր կային պատրաստի ենթակա ունեցվածքներ (նկ. նկ. 28 և 29)։

Բ. Հ. Ֆ.

26. Փ Ա Շ Ա

Վանա գավառի Թիմարի շրջանի Ալլուր գյուղում փաշախաղը պատրաստվում էր հնձոցում կամ թորվան տանը, բարեկենդանի վերջին շաբաթվա մեջ։

Խաղի հնագույն շրջանի մանրամասնությունները ժողովուրդը վատ էր հիշում։

Փաշա.—Սրա դերը կատարում էր տարեց մի մարդ, որ փորձ ուներ։ Նա կրում էր թոլոզ, որ փոշի էր փաթաթում կամ՝ ֆաս։ Հանպատրաստից կարում էին նաև այծենուց սրածայր փափախ։ Սրա վրա, եռևի կեսից ծոպեր էին կարում, որպեսզի ֆասի ծոպի նման շարժվեին։ Դրա վրայից կախում էին նաև մի զանգակ։ Երեսին մուր էին քսում կամ սև փոշի կապում, որով փաշայի դերակատարն անճանաչելի էր դառնում։ Կ. Պոլսից վերադարձող պանդուխտները երբեմն փաշայի համար տղամարդու կերպարանքով դիմակ էին բերում. սա օժտված էր լինում երկար բեխերով։ Կրելով երբեմն նաև այս դիմակը, փաշային ավելացնում էին երկար մորուք։ Դիմակ չլինելիս բեխն ու մորուքը այծենուց էին պատրաստում։

Հագնում էր կիսաթեով քաղաքային։ Գոտին ջալ էր, պատրաստված տարեկանի ցողունից։ Քաղաքային թևերին, ուսերին, մեջքին ու կրծքին զանգակներ ու բժժոժներ էին կախում։ Բազմաթիվ ներկած ճաներ շարում էին թևերին ու կախում կրծքից՝ խաչաձև։

Անդրավարտիքը սովորական էր, լայն փողերով։ Գուլպաների վրա չարոխ էր հագնում։ Կոշկոնը շինում էին փայտից, որը 30 սմ երկարության ծխափող էր ունենում։

Փաշայի միակ զենքը գավազանն էր։

Փաշի կնաձիք.—Վեց երիտասարդ տղաներ հագնում էին հայ կանացի շորեր և երեսները ծածկում էին, աչքերը բաց թողնում։

Ջավրիաներ.—Չորս կամ հինգ ջավրիաների դերերը կատարում էին 20—25 տարե-

կան տղաները։ Կրում էին քրդական ձևի սրածայր քոլոզ՝ փոշու փաթեթով։ Հագնում էին ղըբուն և սրա վրա՝ ելակ։ Կապում էին կաշվե սովորական գոտի։ Ձենքերն էին՝ փայտե հրացանները, որ կախում էին աջ ուսերից և ճիպոտները, որոնցով ծեծում էին «մեղապարտներին»։

Կուժ շրլկող.—Պատանի մի տղա էր, 15—20 տարեկան. շալակում էր գինու կուժը և ձեռքին պահում մի պարան, որով կարելի էր լապկպել շուրջ 20 մարդ։ Կրում էր արախչի, հագնում քյոդեխիկ, թիմբոն (կտավե անդրավարտիք) կամ շալվար (շալե անդրավարտիք) և չարոխներ։

Նուկի տարող.—10—15 տ. երեխա՝ կուժ շրլկողի հանդերձով։ Կրում էր նուկին, որը կավաման էր՝ լիտրից քիչ ավելի տարողությամբ։ Նրա պաշտոնն էր՝ ամեն մի տնից գինի հավաքել նուկիի չափով և լցնել կուժը, որ կրում էր կուժ շրլկողը։

Նաղրաչի–զուռնաչի.— Փաշախազի մանակիցներից էր նաև նվագախումբը՝ նաղարա խփողը և զուռնա նվագողը։ Սրանք հագնում էին քյոդեխիկներ, փոշին փաթաթած արախչիններ, արձակ փողավոր անդրավարտիքներ, գուլպա-չարոխներ։

Սեյ.—Կարնո «փասինա» կոչված փոքր սայլն էր՝ տախտակե անիվներով։ Լծում էին 4 էշ, 2-ը ծմկի, 2-ը խորիկ։ Լծերի ուսասեղերը թաղիք էին դնում։

Սելվոր.—Կուժ շրլկողի հագուստով պատանի էր՝ լծկանները վարելու ճիպոտով։ Վարելիս քայլում էր կամ նստում սայլի ականջին։

Խաղի պրոցեսը.—Այս ամենը պատրաստի ունենալուց հետո փաշան իր շքախմբով խոպանից դուրս էր գալիս դեպի դյուղի բակերն ու փողոցները։

Խաղախմբի առջևից գնում էր մի զավթիա։ Սրան հետևում էր սայլը, որի վրա բազմում էր փաշան՝ շուրջն ունենալով վեց կին։ Մի զավթիա կանգնում էր սայլին մոտիկ, կանանց պաշտպանելու, որովհետև դյուղի երիտասարդները սովորության համաձայն աշխատում էին հավաքել նրանց։ Երրորդ և չորրորդ զավթիաները շարժվում էին սայլի կողքերից, մի փոքր ավելի հետու, քան կանանց պաշտպանողը։ Հինգերորդ զավթիան գալիս էր սայլի ետևից։ Սրան հետևում էին նվագողները, իսկ վերջիններիս՝ կուժ շրլկողն ու նուկի տանողը։

Այս բոլորին մի տեսակ լրացնում էին պատանի տղաներն ու աղջիկները, որ իրենց սպմուկով աշխուժացնում էին փաշայական երթը։


Փաշան ճանապարհին սկսում էր մտնել իր դերի մեջ. մերթ ծամածռություններ անելով և մերթ լրջանալով նա հրամաններ էր արձակում։

—Մա՜ր այսինչի տունը, դինի վերցրե՛ք։


Նուկի կրողը մտնում էր ասվյալ տունը, դինին բերում, լցնում կուժը։ Բազմաթիվ կատակներ, ի թիվս սրանց՝ նաև երիտասարդների կողմից փողոցի կանանց վրա հարբուրման նպատակով հարձակումները, զավթիաների հակահարձակումները և այլն, խաղին աշխույժ բնույթ էին տալիս։

Դյուղի որևէ արևգղմի հրապարակում հավաքվում էր դյուղի ժողովրդի մեծ մասը. կտուրների վրա, պատերի տակ և այլն, նախապես հավաքվում էր փաշային հետաքրքրող խավը՝ դինի ունեցողները։ Եվ ահա, փաշան սայլի վրա նստելով, ջղաձգումներ անելով, կանգնելով, մերթ ընդ մերթ, իբրև թե պատահականորեն, կանանց մեջտեղն բննկնելով ու թավալ գալով ուրախացնում էր հանդիսատեսին։

Վրա էր հասնում դինի ունեցող մարդկանց կապկպումը, որ կատարում էր կուժ շրլկողը՝ զավթիաների օգնությամբ։ Այդ մարդկանց հասցեին փաշան խիստ խոսքեր էր ասում, պոնում, որ իր իշխանության մեջ դրանք հանցավոր են, ուստի արժանի էր, որ անմիջապես կապկպվեին։ Կապվողները կեղծ վախի զգացումներ էին դրսևորում, տրտնջում, բողոքում, հարցնում, թե ի՞նչ մեղքի տեր են իրենք։



Նկ. 31. Զեյտակը «Փորուզ-կառնավալ» խաղի մեջ (բնագիրը՝ № 28)
Նկ. Ն. Զարգարյանի



Այսպես կապվում էին շուրջ 20 «հանցավորներ», կողք-կողքի ուված։

Կանանց հսկող զավթիան սայլի մոտից չէր հեռանում. փաշան կանգնում էր սայլի վրա և կարդադրություններ հետ միասին անում ծամածռություններ, ծխում էր ծամռելով, ընկնում կանանց մեջ, նորից բարձրանում։ Ապա դիմում էր հետուն. նկատելով դինի ունեցողների, զավթիաներին ուղարկում էր նրանց կապկպելու և իրեն ներկայացնելու։

Բոլոր կապվածները հանցանքը հանձն առնելով աղաչում էին, որ փաշան պահանջեր, ինչ ինքը կկամենար, միայն թե ազատեր։ Եվ փաշան դինի էր պահանջում. հանցագործները խոստանում էին. արձակվածը նռկի կրողի հետ գնում էր տուն, դինին լցնում նռկին և վերադառնում։ Այսպես, բոլորից նռկի կրողը դինին բերում, լցնում էր կուժը։ Վերջինս որ լցվում էր, կուժ շալակողն իսկույն տանում էր խաղտուն, լցնում այնտեղ պահած կարասը։

Փաշան հին ժամի թաղում թալանն ավարտելուց հետո շարժվում էր դեպի նոր ժամի թաղը, նույնն անելու։

Սահմանվող խաղային հրապարակներում ջահելներն զբաղվում էին շուրջպարերով. նվագախումբը կատարում էր փափուռի, քյոչեքի, թիմբրի, սևիլ, պյունդ, շոշ և խլա պարեղանակները։

Առանձին պայքար էր գնում երիտասարդների ու զավթիաների միջև՝ առաջինների կողմից փաշայի կանանց վրա հարձակվելու, համբուրելու, իսկ երկրորդների կողմից պաշտպանելու համար։ Այստեղ բռնվածները ճիպոտահարվում էին. փաշան ապրում էր իր կատարության շրջանը։

Խաղտուն հասնելուն պես խաղացողները զգեստափոխվում և իրենց տներից չոր-սառն ուտելիքներ էին հավաքում։ Երեկոյան սկըսվում էր կերուխումը նույն խաղտանը, որ տևում էր մինչև առավոտ։

Մասնակցում էին նաև կողմնակի մարդիկ։ Տեղի էին ունենում շուրջպարեր՝ նվագողների ակտիվ մասնակցությամբ։ Ջեռնախաղերը (կենտ պար) բացառված էին։ Կանայք չէին մասնակցում։

Բ. Ժ. Ա.

27. Փ Ա Շ Ա

Մոքսում փաշախաղը կազմակերպվում էր բարեկենդանի երկրորդ շաբաթվա հինգշաբթի օրը, որևէ թոնրատան մեջ։

Խաղին մասնակցում էին մեծ մասամբ պատանիները, որոնց միշտ էլ ընկերակցում էին 30—35 տարեկան տղամարդիկ։ Ունենալով փորձ, վերջիններս վարժեցնողի դեր էին կատարում։ Փաշայի դերն ստանձնում էին այդ տղամարդիկ։

Խաղացողների անձնակազմը հետևյալն էր։

Փաշա.—Հագնում էր այլանդակած կիսաթև աբա, բրդյա անդրավարտիք։ Ագանելիքներն էին՝ բրդյա գուլպաները և չարոխները։ Գլխին կրում էր սպիտակ մորթուց հանպատրաստից սարքած փափախ, որ սրածայր, կոնաձև էր։ Սա տեղ-տեղ ներկում էին կարմիր ներկով, որ խաոտուտիկ լիներ։ Այծենուց կամ մազից մինչև կրծոսկրը հասնող մորուք և երկար բեխեր էին շինում։ Մեջքին շալե գոտի և կրծքին խաչաձև գունավոր թաշկինակներ էր կապում։ Խաղալու վայրը հասնելիս նա ստանում էր մի «ծխամորճ». սա մի փոքր կողով էր՝ լիքը հարդով և կողին շիբուխ-դպզանակ խրած, որը 2 մ երկարություն ուներ։ Հարդը այրում էին, որ ծխելու տպավորություն ստեղծեր։

Նժույգն էր՝ մի ձող և զենքը՝ դավազան։

Շարժուձևերը՝ ծանրախոհ։

Թարեիման.—Փաշայի թարգմանն էր։ Ուներ քոլոզ՝ փոշի կապով, որի լաֆ-երը (ծոպեր) հասնում էին մինչև գոտկատեղը։ Անդրավարտիքը բրդից էր և կիսաթև աբայի նըման՝ սովորական։ Շալե գուլպաների վրա հագնում էր ըոըշիկներ։ Փաշայի կարգադրությունները ձյան վրա գրելու համար ու-

ներ փայտիկ-գրիչ։ Շարժումները ծաղրաշարժ էին։

Ոստիկանապետ.— Տեղական անունը չի հիշվում։ Հագնում էր զարդարուն-զոլավոր շալե անդրավարտիք, կիսաթև սրա, կապում շալե գոտի, կրում գոլոշ՝ փաշիով։ Նժույգն էր՝ փայտե ձողը, զենքը՝ փայտի բաբը, որ խրում էր գոտու մեջ՝ աջից ձախ ուղղությամբ. ձին վարում էր ձեռնափայտով։

Ջավրիաձեր.— Ոստիկաններ, որոնց թիվը հասնում էր 15—30-ի։ Տարիքները՝ 20—35 տ.։ Կարող էին առանձնել թե՛ ամուրիները և թե՛ ամուսնացածները։ Ոմանք սովորական, մյուսները պատառոտված շորեր էին հագնում։ Կրում էին գոլոշներ՝ փաշիով։ Լինում էին նաև գլխարացներ։ Բոլորը փայտե ձող-ձի էին հեծնում և ունենում ձեռնափայտ ու փայտե թաբ։

Խիստ արագաշարժ և ծաղրաշարժ էին։

Ջավրիաների կազմը տարերային կարգով մեծանում էր 15—18 տ. տղաների խառնախմբով, որը խաղն ավելի էր աշխուժացնում։

Նվագախումբը, որ երևան էր գալիս միայն խաղային հրապարակում, փաշայի անձնակազմի մեջ չէր մտնում։ Այն հրավիրվում էր խաղատեղ՝ պարի համար, որին փառատոնն մասնակցում էր հանդիսատեսի։

Խաղի պրոցեսը.—Մոբսի փաշան հիմնականում հարևան գյուղը մեկնելու-խաղալու համար էր։ Այնտեղ մեկնելիս փաշան իր շքախմբով ներկայանում էր ռևսին։ Այսպիսի մի դեպք հիշվում է 1895-ից։ Այս թվականի բարեկենդանին Կայթանց գյուղից գալով Նանինց, փաշան իջևանում է ռես Գալուստի տունը, տեղավորվում նրա կալատեղ-կաուրի վրա։

Կայթանցից դեպի Նանինց խաղախմբի շարժումը այսպիսին էր։ Առջևից ընթանում էին զավրիաները, ապա հետևում էին ոստիկանապետը, փաշան, թարջիմանը։

Օրվա կեսին ռես Գալուստի կալ-կաուրի վրա կայթանցի փաշան իր խաղը կազմակերպեց այսպիսի դասավորությամբ։

Կաուրի անկյունում նստեց թարջիման-թարգմանը, նրա կողքին, կողովի վրա՝ փաշան, սրա կողքին՝ ոստիկանապետը, իսկ վերջինիցս հետո՝ երկարությամբ՝ դասավորվեցին զավրիաները։ Կաուրի ամբողջ ճակատը զբաղվեց։ Այս ճակատի դիմաց, կաուրի կեսից անց, կապկպվեց ռես Գալուստը՝ հենց իր այդ հյուրերին ընդունելու ժամանակ։


— Բացե՛ք, կապեցե՛ք էտուր,—կարգադրեց փաշան։ Եվ փաշայի ծառաները Գալուստի ձեռքերը հետևը կապելով տարան նշված տեղը և կապեցին նաև ոտքերն ու գցեցին ցած։ Գալուստն սկսեց անհանգստանալ, թե այս ի՞նչ է կատարվում. Չէ՞ որ ինքը ուզում էր հյուրասիրել մարդկանց, վատ բան չառաջ նրանց ու մեծ փաշային։ «Փաշան ողջ լինի,—ասում է ռևսը,—ինչո՞ւ եք ինձ տանջում, ասացեք իմ անելիքս և ես կանեմ»։ Եվ փաշան թարջիմանի միջոցով հրամայում է.

—Պետք է իմ զորքին ուտեցնես, կշտացնես, համփու դնես, թե չէ սաղ չես մնա։


Ռևս Գալուստը խնամանում է խնդրել կատարել փաշայի կամքը։ Այն ժամանակ փաշան կարգադրում է արձակել ռևսին։ Կապկպող զավրիաներն իրենք էլ արձակում են։

Ռևս Գալուստն խնդրել հրամայում է իր անեցիներին՝ հաց, պանիր ու մեղր բերել կաուր։ Հրամցնում են այդ բոլորը. կավե ամաններով պանիրն ու մեղրը տեսնելով փաշան զրանք վերցնում, շպրտում է կաուրից ցած և սպառնում ռևսին. սա ի՞նչ խայտառակություն է, խեղճ փաշայի զորքը սհագին սարեր ու ձորեր է անցել և այստեղ հասել, իսկ այս ողորմելի ռևսը նրանց փորրիկ ամաններով մեղր է հրամցնում։

Ամբողջ դյուղը հանդիսատես կանգնած ժամանակ ռես Գալուստը չէր կարող խնդալուքիչ ամբողջ զբաղվել. հրամայում է զուրս բերել մեղրի կարասը և պանրի տիկը։ Այն ժամանակ միայն փաշան հանդարտվում է և հրամայում՝ վայելել ամբողջ մթերքները։ Սկսվում է ճաշկերույթը, որին մասնակցում են



Նկ. 32. Դատավորը «Փորսուղ-կառնավալ» խաղի մեջ (բնագիրը՝ № 28)
Նկ. Ն. Զարգարյանի



նաև ոսոխ և դյուղի մի քանի պատվավոր անձինք։

Ռնս Գալուստի կատուին կից մյուս կատուների և շուրջը հավաքված կանայք, տղամարդիկ և երեխաները այս խաղին հանդիսատես էին լինում ամեն տարի, քանի դեռ ոսոխ նա էր։ Այս հասարակության մեջ զավթիանները ուտելուց առաջ և հետո մեկ-մեկ, մերթ ընդ մերթ, ձիաթոզս խաղ էին սարքում. հեծնում էին իրենց ձիերը, վարագներով խփում, վրընջում, տրտինդ տալով արագ ընթանում, ասելով. «Բաղե՛ք մի ձիաթոզս խաղում»։ Զարաճքի շարժումներ գործելով հասարակության մեջ, նրանք աշխույժ ծիծաղ և մանկական շրջաններում՝ աղմուկ էին առաջացնում։ Մերթ ընդ մերթ իմբով դուրս գալիս, մըրցում էին, իբրև թե ձիարշավ են կատարում։

Փաշան այդ բոլոր պարագաներում ծխում էր իրեն հրամցված ծխամորճը և խեթ-խեթ նայում արհամարհելի մարդկանց վրա։ Նրա բոլոր խոսակցությունները, որ թուրքերեն էին, թարգմանվում էին թարճիմանի կողմից և դրանցվում ձյան վրա։

Պատահում էին քուրդ բեկեր և ներկայանում խաղին։ Փաշան անվախորեն, թարճիմանի բերանով հարցնում էր, թե ի՞նչ գործ ունի նա այստեղ, ինչո՞ւ է եկել։ Բեկը հարկադրված էր հնազանդորեն նրան պատասխանել, թե հենց փաշայի արամադրությունը հարցնելու է եկել։

Ճաշկերույթն ավարտվելուն պես պարեր էին լինում և, երբ փաշան իր շքախմբով հեռանում էր ոսոխի շնորհակալության խոսք ուղղելով, որը նրան կարծես թե հանում էր փաշայական դերից,—սկսվում էր դյուղի երիտասարդության բախումը նրա հետ։ Վրեժխնդիր լինելու համար աղաները ցաք ու ցրիվ էին տալիս փաշայի ծխամորճը, քաշքշում ու չարչարում փաշային։ Փաշայի զորքն սկսում էր մտնել կռվի մեջ. կոզմերն իրար քաշքշում, ապա նաև մահակակռիվ էին սարքում։ Փաշան կամաց-կամաց, կռվելով, նահանջում էր։ Հետապնդող երիտասարդությունն ի վերջո դյուղից դուրս գալով՝ վայր էր դյում փաշայի պատվավոր դլխարկը և սկսում ծեծել փայտերով։ Հալածված փաշան սահմված էր թոթափել ամեն փաշայական բան, որով միայն ազատվում էր շարունակվող հալածանքներից։

Բ. Ժ. Ա.

28. ՓՈՐԱՈՒՂ ԿԱՌՆԱՎԱԼ

Խաղում էին մեծ մասամբ միջին տարիքի տղամարդիկ, երբեմն և կանայք տղամարդկանց հետ, կամ սիրողների խմբերը՝ հետևյալ կազմով[1]։

1. Փորաուղ.—Մեջքը կուզ, մեծ փորով, փարթամ մորուքով, ոտքից գլուխ սպիտակ հագնված մարդ, մեջքին մի քանի անգամ փաթաթած լայն գոտի, մեջը խրած դաշույն։ Գլխին՝ սպիտակ աշխարենուց կոնաձև փափախ, ձեռքին՝ մարակ։

2. Աւրապ.—Սև հագնված, սև դիմակով մարդ, մեջքին կաշվե գոտի, կողքից կախված սուր, գլխին մեկ արշին երկարությամբ սև գլխարկ՝ գույնզգույն նախշազարդերով, ձեռքին՝ մարակ (նկ. 30)։

3. Չեյպակ.—Սև բեխերով, փոքրիկ մորուքով մարդ, հագին կարմիր շորեր, մինչև կուրծքը փաթաթած շալե գոտի՝ մեջը խրված դաշույն, ծոպավոր՝ ծաղկազարդ թաշկինակով եղերապատված գլխարկ, դեմքին կարմիր դիմակ և ձեռքին երկար նիզակ (նկ. 31)։

4. Դաւադուր.—Սպիտակ բեխ ու մորուքով, երկար սև վերարկու հագած, մեջքին բարակ գոտի, գլխին սպիտակ թաղիքե գլխարկ՝ փաթաթված մեծ կտորով, դեմքին դեղին դիմակ և ձեռքին՝ համրիչ (նկ. 32)։

5. Բժիշկ.—Դիմակով և ակնոցներով, սև բեխերով, եվրոպական հագուստով, սովալրաթղթից պատրաստված գլխարկով և գավազանով (նկ. 33)։

---

[1] Այս խաղն ընդունված էր կատարել թուրքերեն լեզվով, որպեսզի խաղի բառերն ու բովանդակությունը հասկանալի լինեին իշխանության կողմից բարեկենդանի օրերին թաղերում նշանակված թուրքական շրջիկ պահակախմբերին, և նրանց կողմից խաղը չդիտվեր իբրև հակապետական գործողություն։

6. Հարս.—Տղամարդ՝ կանացի հագուստով, ղեկին թարլա, որի առաջին երեսին լինում էր մի շարք ոսկի, մեջքին՝ արծաթի գոտի, գեմքը ծածկված բյուրծուկով, մատներին հագցրած մետաղե զիլեր[2]։

Բացի վերը նշված դերծող անձերից, խաղին մասնակցում էին նաև հետևյալ դերակատարները. Թիկնապահ-Փորասուղի, Թիկնապահ-Արապի, Թիկնապահ-Զեյպակի։ Խումբն ունենում էր նաև նվագախումբ, իլաղմված քամանչա և դափ նվագողներից։

Խաղին մասնակցողները հարսին նստեցնում էին ուղտի[3] վրա և նվագի հնչյունների տակ անցնում էին թաղից թաղ։ Խաղն սկսում էին այն տանը, որտեղից առանում էին իրենց մոտ խաղալու հրավերը։ Խումբը մտնելով հրավիրված տունը, նախ ամբողջ խմբով կատարում էր կլոր պար։ Հետո խմբի անդամները առանձին-առանձին պատմում էին անհավատալի պատմություններ, արտասանում էին բանաստեղծություններ, իրար առաջարկում էին հանելուկներ և տալիս այդ պատմություններին ու հանելուկներին յուրօրինակ մեկնություններ, որով առաջանում էր ծիծաղ և զվարճություն։ Այսպես, օրինակ՝ Փորասուղը պատմում էր. Հնդկաստանում առասպելական հսկային տապալելու մասին. Զեյպակը՝ մի վիթխարի մրջյունի մասին, որ ուզած էր լինելու. Արապը՝ Սիբիրում հոնվարյան ահավոր շոգերի, ծովում լողալու, կետին հանդիպելու մասին։ Դատավորը պատմում էր մահվան մասին, որը իր եղած երկրում կոչվում էր «գնացողը նա չի գա»։ Բժշկի սահմից երևում էր, որ նրա պապն իր դաշույնով առագերը խառնելով անձրև էր բերում։

Քարասուղն այդ միջոցին գետնին փռած ծխախոտի թղթի վրա ձեռնափայտով արձանագրում էր դերակատարների պատմածները, ապա բարձրաձայն կարդում.

— Այս սո՛ւտ է, այն սո՛ւտ է, նա սո՛ւտ է, ամենքը սո՛ւտ են։ Գետին կլլեց մի օձ, գնաց մտավ իր բույնը։ Այս էլ է սուտ։


Այս զվարճալի պատմություններից ոգևորված, Զեյպակը հրամայում էր կանացիազգեստ մարդուն՝ պարել։ Երաժիշտները լսելով հրամանը, նվագում էին պարի եղանակ։

Փորասուղը համալիսով կնոջ զրավիչ պարով, մոտենում էր նրան և առաջարկում՝ իրեն հետ փախչել։ Կինը պատճառաբանելով Փորասուղի ծերությունը, հրաժարվում էր։ Փորասուղը խոստանալով մեծամեծ նվերներ, առնում էր կնոջ համաձայնությունը և այն մոմենտին, երբ Զեյպակը ինչ որ վեճի էր բռնվում Արապի հետ, ձեռքից բռնած առևանգում էր։ Զեյպակը շուտով նկատում էր կատարվածը, հարձակվում էր փախչող ղույգի վրա և դաշույնով վիրավորում Փորասուղին։ Փորասուղի Թիկնապահը օգնության հասնելով իր տիրոջը ազատում էր Զեյպակի ձեռքից և բժիշկ հրավիրում։ Բժիշկը վերքը քննելուց հետո գրում էր մի դեղատոմս, կազմված 25—30 տեսակի դեղանյութերից, որոնք ոչ այլ ինչ էին, բայց եթե զանազան կենդանիների՝ թռչունների, գազանների, սողունների և այլ անուններ։ Փորասուղը և Զեյպակը միմյանց նկատմամբ բողոք էին ներկայացնում պատավորին։ Դատավորը լսելով կողմերի պահպանները, երկուսից էլ կաշառք էր առնում և դատարանում առերես դատելուց հետո երկուսին էլ արդարացնում և իրար հետ հաշտեցնում էր։ Դատարանի վճիռը լսելուց հետո Փորասուղն ու Զեյպակը նա էին պահանջում դատավորին տված դրամը։ Դատավորը երկրորդ անգամ վճիռ կայացնելով՝

---

2 Զիլերը մետաղե մատնոցներ են, որոնք պարելու ժամանակ հագնում են բութ և միջին մատներին ու պարի եղանակին համապատասխան տակտով իրար խփում։

3 Ուղտի վերը կատարողը ձեռքը առնում էր քամրակ դգելու աննդ, որին տրված էր լինում ուղտի գլխի և պարանոցի ձև, և որը պարզում էին առաջ։ Մարդու մինչև առները, անեղի հետ միասին, ծածկում էին մեծ թաղիքով և հարսին նստեցնում մարդու ուսերին։ Մարդը թալլելիս անեղը աջ ու ձախ տարուբերելով ուղտի գլխի շարժումներին էր նմանեցնում։



Նկ. 33. Բժիշկը «Փորսուղ-կառնավալ» խաղի մեջ (բնագիրը՝ № 28)
Նկ. Ն. Զարգարյանի

մերժում էր նրանց պահանջը և իրար հետ բարեկամանալուց հետո խաղը վեր էին ածում կլոր պարի։

Խաղի ընթացքում հավաքված գումարը ոչ միայն մանկավոր խնջույքի, այլև երբեմն հասարակական օգտակար նպատակների էին ծառայեցնում։

Հա. Խ. Ա. (ՇԳ)

29. ԽԱՆ ԿՊԻԼԵՆ ՕՐԸ

Բարեկենդանի վերջին օրը Ղարադաղում «խան էին կապում»։ Արևը ծագելուն պես հավաքվում էին գյուղի երիտասարդները, ընտրում մի լայն հրապարակ, որը սովորաբար լինում էր մեկի կտուրը։ Հնչում էր զուռնան և բոլորին հրավիրում այդտեղ։

Տանիքի մի անկյունում թախտ էին սարքում, ուր նստում էր խանը։ Նրա կողքին դնում էին մի կոտրած, ծակ կուպա, որը ծառայում էր որպես հեռադիտակ։ Գլխին դնում էին մորթե փափախ, ուսերին փակցնում զանազան գույների կտորներ. մի կողքից կախ էին գցում մի թուր, մյուս կողքից՝ ատրճանակ. ձեռքը տալիս էին մի մտրակ և երեսին դրիմ անում։

Խանի աջ կողմում նստում էր մխրճին (դրագիր)՝ թղթով-թանաքով, որ պահում էր խանի հաշիվները և հրամանները էր գրում։ Ձախ կողմում կանգնում էր բեկը՝ հատ բեխերով, կողքից սուր կախած և ձեռքին մի ճիպոտ առած, պատրաստ խանի յուրաքանչյուր հրամանը կատարել տալու։ Բեկի մոտ կանգնում էին չորս ճարպիկ երիտասարդներ, որ ներկայացնում էին խանի նաքիբները. սրանք ձեռքերին ունենում էին մի մի մտրակ։ Խանի թիկունքում կանգնում էին երկու զինված երիտասարդներ, որպես թիկնապահներ՝ պաշտպանելու խանի կյանքը՝ չար մարդկանց հարձակումներից։ Խանի դիմաց՝ հրապարակի մեջտեղում երկու մեծ գերաններ էին գցում, որոնց վրա թոկեր էին կապվում։

Այս բոլորը նախապատրաստելուց հետո խանը հրամայում էր բեկին՝ ձերբակալել գյուղի աղամարդկանց։ Բեկը կարգադրում էր նաքիբներին, իսկ նաքիբներն էլ հարձակվելով գյուղացիների վրա, բռնում ու բերում էին, կապում գերաններին և սկսում մտրակահար անել այնքան, մինչև որ ձերբակալվածները փրկագին էին վճարում ու ազատվում։

Խաղը այս ձևով շարունակվում էր ամբողջ օրը (նկ. 34)։

Եգ., 615—616


30. ԷՇԱԿ ՊՍՐՈՆ

Վարանդայում, բարեկենդանի վերջին շաբաթվա կիրակի օրը երիտասարդների խմբերը միանում էին, մի ճարպիկի հագցնում ցնցոտիներ, վրայից ոսկորներ, հին սրեր կախում, մի հրացան գցում ուսովը, գլխին մի հին, գզգզված գլխարկ ծածկում, երեսը մրոտում, նստեցնում մի էգ իշի վրա և «բաիկը կամ էշակ պարոնը գալիս է հա՜, ճամփա բացեք» բղավելով՝ դավուլ զուռնի առաջնորդությամբ ման ածում տներում, հաղարավոր ծամածռություններ, սրախոսություններ անում, ամեն տնից դինի, կերակուր, դրամ հավաքում և ապա, երեկոյան մոտ, խմբով նստում և քեֆ անում։

Եվ. Ա.Հ., III, 341—342

31. [ՋԱՎԵՇՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ]

Բարեկենդանի հինգշաբթի՝ քաջն Վարդանանց տոնն է։ Սուրբ օր է. բոլոր աշխատանքը կը դադրեցնեն։ Գյուղին երիտասարդները, իրարու մոտ հավաքվելով կորոշեն ջինպազութիւն մը (զավեշտաբանություն) ներկայացնել, կը ծպտվին զանազան գույնով, հնամաշ ցնցոտի հագուստներով և կը դառնան բոլորովին անճանաչելի ու այլափոխված. կընտրեն իրենց հրամանատար մեծավորը. կվխտան վրա կը դնեն հավի փետուրներեն շինված գլխակ. մեջքին կը կախեն խայխլով (կաշիե կապ) կապված ծոների խաչ երկաթ մը՝ որպես սուր. ձեռքը կուտան երկար փայտ մը՝ որպես նիզակ և կաթնային խուփ մըն ալ՝ որպես վահան։ Ասիկա հրամանատարն է։



Նկ. 34. «Խան կռվին օրը» խաղի դրսևորման սխեման Ղարագյոզում (բնագիրը՝ № 29)

1. Խանը հետապնդակով պատկերս, 2. Գրպիր, 3. Թիկնապահներ, 4. Երեսաոտքով պատվով, 5. Բեկհրամանակատար, 6. Ոստիկաններ, 7. Ծառաներ, 8. Մեղապարտներ, 9. Գառապարտվածը պատանին կապված, 10. Նվագախումբ

● *Երեխա հանդիսատեսներ,* └ *Պատանի հանդիսատեսներ,* ┸ *Երեսաոտքով հանդիսատեսներ,* ☃ *Տղամարդ հանդիսատեսներ*

Նկ. Հովհ. Բագակյանի

խումբի ընկերներին մեկուն՝ կնկա հաղուստ հագցնելով կը կանգնեցնեն մեծավորին քով, որպես իր կինը, ուրիշ ընկեր մըն ալ կը հագվի երկար փնշերով սև հագուստ մը, երեսը անցնելով ճերմակ ձիու մազեն շինված մորուք մը: Այս մեկը կը կանգնի մեծավորին քով, որպես կրոնապետ-խորհրդատու: Այսպեսով օյինպազներն այլևս կազմ ու պատրաստ կըլլան:

Հանկարծ մեծավորը՝ որպես զինվորական, իր մեջքին խաչ երկաթե սուրը քաշելով կը հրամայե օյինպազներուն, որոնք կատարյալ կարգապահությամբ, իրենց ձեռքի երկար փայտերը (ձողերը) բարձր բռնած, շարք կը կազմեն: Ահա՛, զինվորական նվագախումբը եղող տավուլ-զուռնան խլացուցիչ ձայներով օդը կը թնդացնեն. աղմուկեն գյուղի ամբողջ բնակչությունը դուրս կը թափի. դիտելու համար օյինպազներուն խաղերը: Ըստ վերին հրամանի խումբը երկու մասի բաժանված, կը սկսի իրարու դեմ կռվիլ: Պատերազմեն առաջ խումբի կրտսերագույն երիտասարդը, աղջկա ծպտումով, կարմիր լաթի կտոր մը որպես դրոշակ ձեռքն առած, կը տանի մեծավորին, գլուխ խոնարհելով կը հանձնե զայն և ետ ետ գալով կը վերադառնա: Պատերազմը վերջանալե հետո կը կատարվին զանազան տեսակի խաղեր, ոստումներ, հնդկական պարեր և այլն:

Այդ օրը ամբողջ գյուղը խրախճանքի մեջ է: Օյինպազներու խումբը իր նվագով կը շրջի տուները, ուտելիք և խմելիք հավաքելու: Երբեմն տան մեկ անդամը «կառևանգեն», որպես փրկագին մեկ լիդր գինի և կամ ուրիշ ուտելիք առնելով «ազատ» կարձակեն: Այսպես մինչև երեկո իրենց օյինպազությունները ժողովուրդը ուրախացնելե հետո իրենց հավաքած պաշարով տան մը մեջ կը հավաքվին ու մինչև լույս ուրախություն կընեն...:

Երև. 497—498 (Չար.)

Գ. ՄԱՆԿԱԿԱՆ ՋԻՎՈՐԱԿԱՆ ԽԱՂԵՐ

32. ԹԱԳԱՎՈՐ

Խաղում էին պատանի տղաները, 6 հոգով. փորում էին մի փոքրիկ փոս և նրանից մոտ հինգ-յոթ ոտնաչափ հեռու դնում մի գիծ, վերցնում 5 փոքրիկ, կլոր քար: Խաղացողներից մեկը կանգնում էր գծի վրա և հինգ քարն էլ միասին գցում փոսը: Եթե քարերից ոչ մեկը չէր ընկնում փոսիկի մեջ, գյուղը դառնում էր կամանդեի էշ: Այնուհետև գցում էր մյուսը: Եթե սրան հաջողվեր փոսի մեջ գցել քարերից մեկը, կդառնար թագավորի էշ: Ապա՝ հաջորդաբար գցում էին մյուսները, ըստ որում երկու քար գցողը լինում էր լծլծի կամ վազիրի էշ, երեքը՝ վազիր, չորսը՝ թագավոր, հինգը՝ կամանդեր:

Երբ խաղի ընթացքում փոսի մեջ երկուսը միևնույն քանակի քարեր էին գցում, ապա նրանք հերթով վերսին պետք է գցեին, որպեսզի իրենցից ավելի պաշտոնյան դառնար նա, որը դրա համար պահանջված քանակի քարեր կգցեր և կամ ձեռք կբերեր այլ պաշտոն:

Ասենք թե պաշտոնաբաժանումն ավարտվում էր և մեկը դառնալով թագավոր, ունենում էր իր էշը, մյուսը դառնալով վազիր ունենում էր իր էշը, երրորդը դառնալով կամանդեր ունենում էր իր էշը, այն ժամանակ բոլոր էշերը շալակում էին իրենց տերերին, իսկ կամանդերը հրամայում էր էշերին՝ տանել այսինչ տեղը և նորից բերել այստեղ, ըստ որում կամանդերից էր կախված շատ կամ քիչ տարածության վրա շալակելը:

Այնուհետև, երբ հրամանն ի կատար էր ածվում, խաղը վերսկսվում էր կամանդերի խաղով: Եթե կամանդերին այս անգամ էլ էր հաջողվում դառնալ կամանդեր, նա խաղը այլևս չէր շարունակում, այլ նախկին էշերին «շալակեցեք» հրամանն էր տալիս:

Էշերը շալակում էին նույն տներին և կատարում կամանդների նոր հրամանը:

Երրորդ անգամ խաղն սկսում էին դարձյալ կամանդների խաղով: Ասենք թե նա այս անգամ կամանդերի էշ կամ վիզիր եր դառնում: Համապատասխան պաշտոնատերերի հետ նա նորից քար էր գցում, որպեսզի պաշտոնի նույնությունից ազատվեին: Նույնը տեղի էր ունենում մյուսների միջև, մինչև որ ընտրվում էին բագավորը և նրա էշը, վիզիրը և նրա էշը, կամանդերը և նրա էշը: Այնուհետև խաղն սկսվում էր նոր հրամանատարի կարգադրությամբ և այլն:

Բ. ԺՀ. Ձ. (Սխ.)

33. ԹԱԳԱՎՈՐԻ ԷՇ

Խաղում էին 10—20 տարեկան տղաները, գարնան, ամռան և աշնան ամիսներին, 5 հոգով. փորում էին ձագարաձև մի փոս և 3—5 մ հեռու քաշված գծի վրայից հերթով այդ քարերը գցում փոսի մեջ: Փոսի մեջ մեկ քար գցողը դառնում էր զզրի էշ, երկուս գցողը՝ զզիր, երեք գցողը՝ բագավորի էշ, իսկ չորս գցողը՝ բագավոր, սրանցից էշը տիրոջ և վերջինս իշու դիմաց կանգնում էին: Հինգերորդ խաղացողն աշխատում էր բոլոր հինգ քարերը գցել փոսի մեջ. երբ հաջողվում էր, բագավորի ու զզրի միջև կռիվ էր ծագում, ուստի բագավորը հեծնում էր իր իշուն և զզիրն՝ իր իշուն ու հեռանում իրարից 5—7 մ, խոյանում իրար վրա, աշխատելով մեկը մյուսին տապալել գետին: Երբ զզրին հաջողվում էր տապալել բագավորին, այս դեպքում դերերը փոխվում էին. զզիրը դառնում էր բագավոր և զզրի էշը՝ բագավորի էշ. բագավորը դառնում էր զզիր և սրա էշը՝ զզրի էշ: Բայց երբ բագավորն էր տապալում զզրին, դերերն անփոփոխ էին մնում: Հինգերորդ խաղացողը քարերը նորից էր գցում փոսը, ըստ որում համապատասխան քանակի քարեր գցելիս նա իր դերը դրա դերակատարի հետ փոխում էր, որով խաղը նորից էր կրկնվում:

Վ. Ձ. (Ախթ.)

34. ԹԱԳԱՎՈՐԻ ԷՇ

Խաղում են տղաները գարնանը և աշնանը, բամանների վրա, 5 հոգով: Փորում են մի փոքրիկ փոս՝ ջուլա և նրանից 2 մ հեռավորության վրա գծում մի ուղիղ գիծ: Խաղացողներից յուրաքանչյուրը վերցնում է 5-ական ընկույզի մեծության կլոր քար և գծի վրայից 5 քարը միասին գցում դեպի ջուլան: Եթե գցողի ոչ մի քարը չի ընկնում ջուլայի մեջ, բոլորը թափվում են նրա վրա, սկսում կամթել, ցավեցնել, մինչև որ գցողին հաջողվում է տաքը դնել ջուլայի վրա: Դրանից հետո դադարեցնում են հալածանքը և գցողը հավաքում է գետնից իր քարերն ու գծի վրայից նորից է գցում: Ջուլայի մեջ ընկած քարերի թվով որոշվում են խաղացողների դերերը. օրինակ՝ եթե մեկ քար է ընկել, գցողը դառնում է վեզիրի էշ, երկուսը՝ վեզիր, երեքը՝ բագավորի էշ, չորսը՝ բագավոր: Երկուսի համար նույն պաշտոնն ստացվելու դեպքում այդ երկու խաղացողները նորից են գցում տարբեր պաշտոն ստանալու համար: Հինգ քար գցողը հայտարարում է պատերազմ: Անմիջապես բագավորն ու վեզիրը հեծնում են իրենց էշերը, զվարճներն առնում ձեռները և հարձակվում իրար վրա: Կռվում են, իրար քաշքշում այնքան, մինչև որ մի կողմն իրեն պարտված է զգում, էշը և կամ հեծնողը տապալվում է գետին: Դրանից հետո խաղը նորից է սկսվում:

Բ. ԺՀ. Ձ. (Կա.)

35. ԹԱԳԱՎՈՐԻ ԷՇ

Կոտայքի մի այլ վարիանտի համաձայն երբ նատողներն իրար քաշքշելու ժամանակ էշերից վայր են ընկնում, փոսի մեջ քար գցելու հերթը հաջորդ խմբին է անցնում, իսկ եթե էշերն են ընկնում, ապա նատողները պետք է նորից քար գցեն: Երբ որ գցող խմբին պատերազմ նշանակող հինգ քարը փոսի մեջ գցել չի հաջողվում, այդ ժամանակ մյուս խումբն է գցում և այդպես փոխադարձաբար՝

մինչև որ մեկին հաջողվում է պատերազմ հայտարարող դառնալ։

ՂՂ. ձ.

36. ԹԱԳԱՎՈՐ

Լոռում խաղը նույնն է։ Խաղում են տղաները գարնանը և աշնանը։ Փոսիկների և քարերը նետելու ահմանի միջև տարածությունը 5—7 քայլաչափ է լինում։ 4 քար գցողը դառնում է բագավոր, 3-ը՝ բագավորի ձի, 2-ը՝ գզիր, մեկը՝ զզրի էշ և 5-ը՝ կռիվ գցող։ Երբ գցողներին չի հաջողվում մեկ անգամ քարեր նետելով այդ պաշտոններն ստանալ, գործողությունը կրկնում են։ Կռիվ գցողի հրամանով թագավորն ու գզիրը հեծնում են իրենց ձին ու էշը և սկսում իրար քաշքշել վայր գցելու նպատակով։ Երբ քաշքշուկը երկար է տևում, կռիվ գցողը հրամայում է դադարեցնել այն և խաղը կրկնել։

Շհ. ձ.

37. ԳԶԻՐ ԳԶՐԱԷՇ

Խաղը Կոտայքի այլ տեղերում նույնն է։ Մեկ քար գցողը դառնում է զզրի էշ, 2-ը՝ գզիր, 3-ը՝ բագավորի էշ, 4-ը՝ թագավոր, 5-ը՝ պատերազմ հայտարարող։ Կռվում են թագավորը և գզիրը, որոնցից որևէ մեկը երբ մյուսին իշուց ցած է գցում, տիրում է դրան և նրան պաշտոնազրկում է։ Պաշտոնազրկվածը քարերը նորից է գցում և երբ կարողանում է խլել ախոյանի պաշտոնը, դրանք նորից են նետում և կռվում. այս դեպքում միայն էշերի տեղն է փոխվում։ Իսկ եթե ուրիշ պաշտոն է ձեռք բերում, ապա փոսին նոր պաշտոնազրկվածն է մոտենում։ Խաղն այս ձևով շարունակվում է մինչև ձանձրույթը։

Քհ. ձ.

38. ՀԻՆԳ ՔՈՐ

Խաղը նույնն է։ Խաղում են 7—15 տ. տղաները, 5 հոգով։ Մեկ քար փոսը գցողը դառնում է վազիրի էշ, 2-ը՝ վազիր, 3-ը՝ բագավորի էշ, 4-ը՝ բագավոր, 5-ը՝ կռիվ գցող։ Երբ առաջին իսկ գցողին հաջողվում է 5 քարը գցել փոսը, նա նորից է գցում, որովհետև դեռևս կռվողներ չեն լինում։ Կռվում են վազիրն ու թագավորը, միայն ձեռքով խփելով։ Խաղը նա է շահում, ով մյուսին իշուց վայր է գցում։

Հժհ. ձ.

39. ԳԶԻՐԻ ԷՇ

Սիսիանում խաղը նույնն է։ 1 քար փոսը գցողը դառնում է գզիրի էշ, 2-ը՝ գզիր, 3-ը՝ բագավորի էշ, 4-ը՝ բագավոր, իսկ 5-ը՝ կռիվ կամ կռիվ գցել (կռիվ գցող)։ Էշերն աշխատում են պաշտպանել իրենց տերերին։ Կռվի մոմենտին երբ գզիրն է հաղթում, դառնում է թագավոր, իսկ իր էշը՝ գզիր, թագավորը՝ թագավորի էշ, թագավորի էշը՝ գզիրի էշ։ Երբ թագավորն է հաղթում, ինքը մնում է պաշտոնում, իսկ իր էշը դառնում է գզիր, գզիրը դառնում է թագավորի էշ, գզիրի էշը՝ նորից գզիրի էշ։ Խաղը կրկնելիս առաջին քարը գցողը կռիվ գցողն է լինում։

Մն. ձ.

40. ԹԱԳԱՎՈՐ ՇԻՆԵԼՈ ԽԱՂ

Ջմեռան օրեր և կիրակիք, երբ պարզ լիներ, սառույց պարնեինք, ձյան մեջ երթայինք գայինք, տանյաց վերա աշնան խաղեր խաղայինք, բայց համ չառնուինք։ Հետո թագավոր շինելու խաղ խաղայինք։ Ես չգիտեմ, թե ուր տեղեն բերված էր այս խաղ և ով մեզ սորվեցուց։ Այս խաղի մեջ քնավ տղայության պարզություն չկա, այլ բոլորովին խաբեություն և խորամանկություն։ Սույն խաղն առաջ մեք քանի ճարպիկ տղայք գաղտնի խորհուրդ կազմելով, մեկ միամիտ և պարզ տղա մի համոզեինք, որ թագավոր լինել հոժարի։ Երբ նա թագավոր լինելու բացատրություն խնդրեր, ասեինք, թե մեք քո աչքեր կապեմք, քեզ նոր մի զգեստ հագուցանեմք, ձեռքդ մի սուր և գավազան տամք, դու իշ-

խանությամբ զարկ, որս որ կամիս։ Հետո Թագավորի աչք կապեինք պինդ, որ չնայ մարդ չտեսնա։ Հետո մեկի լողիք վրան քաշեինք, հետո մի փայտի ծայր ցեխի մեջ թաթախելով բերեինք տայինք ի ձեռս Թագավորին. նա ապականյալ ծայրեն բռնելով սկըզբան չէր իմանար ննդավոր խաբեություն։ Այլ երբ բոլորեքյան բարձրաձայն կրկիչով ծիծաղեին և նա զդար, ապա իմացյալ զդավն, բանայր զաչս յուր և տեսաներ զձեռս յուր ապականյալ, ուստի կամ այն էր, զի համոթույն փախչեր, կամ լայր, կամ սաստիկ անիծաներ զխաբողան յուր։

Ջ. № 4184, էջ 148ա (Վ.)

Դ. ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ–ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՂԵՐ

41. ԻՇԽԱՆ ԵՄ, ԻՇԽԱՆ

Ջորս և ավելի երեխաներ, երբեմն և երիտասարդ տղաներ ու աղջիկներ, ունենում էին մի լախտ, որ պատրաստում էին երեսարբիշից և կամ գոտի ու մի խորանարդաձև փայտիկ, որի մի երեսին դրվում էր գող, երկրորդին՝ իշխան և երրորդին՝ իշխանի օգնական։ Խաղացողները շրջանաձև նստում էին և այդ փայտիկը հերթով գցում. ո՛ւմ որ իշխան էր գալիս, դառնում էր իշխան. և այս ձևով ընտրվում էին նաև իշխանի օգնականի ու գողի դերակատարները։ Օգնականն սատանում էր լախտին. նա փայտը վերցնելով իր ձեռքը, դանգատվում էր իշխանին.

— Իշխան, մի գող եմ բռնել։

— Ի՞նչ է գողացել,—հարցնում էր իշխանը։

— Մի ոչխար։

— Տո՛ւր դրան 10 լախտ,—հրամայում էր հերստո իշխանը, զգուշանալով, որ կենտ թիվ չասեր, այլապես սատրագրյալները բռնությամբ էին նրան։

Օգնականն իսկույն կատարում էր իշխանի հրամանը, միաժամանակ հսկելով փայտին, որպեսզի մյուսներն այն չթաքցնեին. թաքցնելիս երբ նա չէր դառնում, նրա իշխանի օգնական լինելն անցնում էր թաքցնողին։

Բ. Մխ 111—112

42. ԲԵԿԻՄ—ԲԵԿԻՄ

Խաղը նույնն էր։ Դերերը բաշխվում էին վեգ գցելու միջոցով. ալչու բերողը դառնում էր բեկ, Թոխան բերողը՝ գղիր, ջիք բերողը՝ գող, իսկ բոք բերողը որևէ պաշտոնի կամ հանցանքի տեր չէր ճանաչվում։

ԴԱ. ՀԺՀ, VI, 118—119 (Վզր.)

43. ԲԱԿ ՈՒ ԳՂԻՐ

Խաղը նույնն էր։ Վեգով դերաբաշխումը կատարվում էր դեպի աջ պտույտ գործելով։ Հանցավոր էին ճանաչվում բոլոր նրանք, ովքեր վեգը այլի կամ Թոխան չէին բերում։ Գղ'ըր բակի հրամանով կարող էր պատժել կաշվե գոտու հարվածներով, ապտակով, բռունցքով և այլն, մեկից մինչև 30 ուժեղ կամ թույլ հարվածներով։ Բակը երբեմն հրամայում էր միայն շփել զանցավորին, ըստ որում հրամանատարության, այսինքն ուժեղի փոխարեն թույլ կամ թույլի փոխարեն ուժեղ խփելիս բակը այն պատրաստում և դառին տալիս էր ծեծվողին և հրամայում՝ պատժել զանցավոր գղիրին։

Պատիժն ի կատար ածվելուց հետո վեգը տրվում էր հաջորդին, որը կարող էր խփել բակի կամ գղիրի պաշտոնը։

Խաղի ընթացքում հին ու նոր «ոխ առնելու», այսինքն թույլ խփելու հրամանի ժամանակ ուժեղ խփելու դեպքում կռիվներ էին ծագում (նկ. 35)։

Բ. ԺԽ. ձ. (Ախ.)

44. ԲԵԿ ԵՄ, ԲԵԿ ԵՄ

Խաղը նույնն էր։ Բեկը իբրև պատիժ էր սահմանում՝ իշու պես զռալ, որևէ իր բերանով վերցնել բերել և այլն, իսկ գղիրը լախ-



Նկ. 35. «Բեն ու գիբ» խաղը Ախալքալաքում. գիբը ծեծում է «մեղավորին»
(ընագիրը՝ № 43)

Նկ. Տ. Թոքմաջյանի

ալը ձեռքին խփելով զանցավորին, սահպում էր անհապաղ կատարել բեկի հրամանը։ Պատժվողը դեռ հանցանքը չկրած՝ բեկը կարող էր ներում հայտարարել։

Խաղը նորոգվելիս երբ վեգը հետևյալն էր գյում, ալչու կամ թոխան բերելիս նախորդից որպես «խալաթ», Բուրայի մի հարված էր ստանում։

Լ. ԺՄԽ, 29—30

45. ՄԱՏԱՆԻ

Խաղը նույնն էր, միայն թե վեգի փոխարեն խաղում էին մատանիով։ Առնում էին մատանին բուռը, վեր գյում, դաստակի եզրերին առնում և աշխատում առանց մյուս ձեռքի օգնության մատանին բուռ մատն անցկացնել, որով բեկ էին դառնում, ճկույնն անցկացնելիս՝ գիբ։ Այս երկուսը չհաջողեցնելիս կամ դաստակից վայր գցելիս պատժվում էին իբրև գողեր։

Լ. ԺՄԽ, 30 և Բ. ԺԽ. Ձ. (Ախ.)

46. ՊԱՐՈՆ ԳԶԻՐ

...Եթե օդն ցուրտ և բուքաբեր լիներ, ցորեկ կամ երեկո, պարոն գզիրի խաղ մեր փարախի վերնատուն խաղայինք։ Իսկ եթե օդ բաց և մեղմագույն լիներ, տանյաց վերա խաղայինք, որ ավելի ազդու և գվարճալի լիներ։ 4 հոգին սկսյալ մինչև 10—12 հոգի բոլորաձև նստելով սկսեինք կարգավ վեգ

ձգել։ Որս ձգված վեգն ճուկ կայներ, նա լիներ պարոն և ամենեքյան քաղաքավարությամբ շնորհավորեին նորա պարոնություն։ Որս վեգն ձգված միջոցին թավ կայներ, որ ճուկի մչուս կողմն է, լիներ գղիր և ամենեքյան ընդունեին զգվրություն նորա։ Այսպես իշխանության հաստատվելեն պկնի հետո կարգավ վեգն ձգեին։ Եթե վեգին սալ կողմն դուրս մնայր, ձգողն ազատ էր, իսկ եթե կուռ կողմն, որ է փոս կողմն դուրս մնայր, վեգ ձգողն գող համարվեր, ուստի գղիրն հապճեպ վեգն հափշտակելով ձայներ առ պարուն, ասելով.

— Պարո՛ն, պարո՛ն, գող մի՞ բռնած եմ։

Պարոն պատասխաներ.

— Հա՛րց՝ ի՞նչ է գողացեր։

Գողն մտածելով, խորհելով օրինակի ազատավ, ասեր.

— Մի ոչխար եմ գողացեր։

Պարոն մնացյալքն իբրև յուր խորհրդական համարելով ընդ նոսա գողուչն պատիժ որոշեր և հրամայեր գղրին՝ գործադրել։

— Վեգն դիր գողի երկու մատի մեջ, պինդ սեղմեն մինչև ազատավ թռչուն տեսնա և ցույց տա, հետո ազատի։

Եթե ազատավ շուտ տեսնվեր, գող[ը] պատիժեն շուտ ազատեր, իսկ եթե ազատվն չերեվնար, խնդճ տղան բավական տանջվեր։ Ուստի բարեխոսք մեջ մտնալով գողն ազատեին։ Դարձյալ վեգ ձգեին։ Մեկ ալ տեսնաս գող[ը] վեգ ձգելով ճուկ կայնեցյավ, եգավ պարոն, իսկ պարոն վեգ ձգելով եգավ գող։ Գղիր վեգ վեր առնելով դարձյալ կանչեր.

— Պարո՛ն, պարո՛ն, գող մի բռնած եմ։

— Հա՛րց՝, ի՞նչ է գողացեր։

— Ի՞նչ ես գողացեր։

— Մեկ այծ։

Պարոն[ն] հրամայեր...

— Սոլ[ը] թող բռնե՞ բեռան[ը], կայնե տանիքի եղերք[ը], մինչև անծեղ տեսնա և ցույց տա։

Է՛, անծեղ ամեն ժամանակ չի տեսնըվեր։ Սա ևս բարեխոսությամբ ազատվեցավ։ Դարձյալ վեգ ձգեցին։ Մեկ այլ տեսար գղիրն դարձավ պարոն, պարոն[ն] դարձավ գղիր։ Տեսար որ դժբախտաբար առաջին գող[ը] վեգ[ը] կրկ ձգելով դարձյալ գող դարձավ։ Հիմա առաջին պարոն[ն] յուր առաջին գղրին խոնարհություն անելով ասե.

— Պարո՛ն, պարո՛ն, գող մի բռն[ե]ցի։

— Ի՞նչ ես գողացեր։

Գող[ը] վախնալով ասե.

— Բան չէ։

— Պարոն[ն] հրամայե ազատակել, մինչ ասացե զգողն, ուստի ձարահատյալ ասե.

— Քաղցած էի, հաց մի գողացա և կերա։

— Է՛հ, երեք անգամ ամուր ականջ[ը] քաշե, բավական է։

Ահա այսպես 1—2—3 ժամ կարելի է այս խաղ[ը] տևև զանազան ձևավոր և անձև պատիժներով, մինչև ձանձրանան և ձգեն։ Բայց սա նկատելո է, թե վեգ ձգելո մեջ բավական ճարպիկություն կա, զի ճարպիկությո[ւն] կարե ճուկ բերել և պարոնություն առնուլ, իսկ որ ճարպիկ չէ, վեգ ձգելու մեջ իբրև գող ըմբռնի և տանջի։

Ջ. № 4184, էջ 151ա—152ա (Վ.)
Վար. Ախ, I 166 (Վ.)

47. ԲԵԿ ՈՒ ԳՂԻՐ

Խաղում էին բարեկենդանին, մեծ մասամբ տղամարդիկ, 8 և ավելի հոգով, ծալապատիկ և շուրջանակի նստած։ Նախքան բուն խաղին անցնելը մասնակիցներն իրենցից ընտրում էին բեկ ու գղիր։ Ընտրությունը կատարվում էր այսպես։ Խաղացողները հերթով վեգը նետում էին գետին։ Թոխան բերողը դառնում էր բեկ, ալչի բերողը՝ գղիր։ Խաղի ընթացքում վեգի հարթ երեսը բերողը համարվում էր սոմին, փոս բերողը՝ գող։ Բեկ ու գղիր ընտրելուց հետո վեգը հերթով նետում էին հատակին (գետնին)։ Ո՛վ որ ալչի կամ թոխան էր բերում, բեկի կամ գղրի պաշտոնը խլում էր։ Ով գող էր բերում, գղիրը բեկին այսպիսի

բացատրություն էր տալիս նրա կատարած հանցանքի մասին։

Գվիր.—Բեկ իմ, բեկ իմ, մի գող բռնեցի։

Բեկ.—Ի՞նչ ըրավ, ի՞նչ գողություն ըրավ։

Գվիր.—Տուն մտավ, տունից դուրս եկավ,

Սառույցի մեջ մտավ, սառույցից դուրս եկավ.

Եկավ, կատուը բարձրացավ, երիվերնակից ցած իջավ.

Գնաց, դատավորի կնոջ ականջի

Օղերը գողացավ։

(Գնաց, դատավորի կնոջ

Շալվարը գողացավ)։

Կամ՝

Գվիր.—Բեկ իմ, բեկ իմ, ես մի գող բռնեցի։

Բեկ.—Ի՞նչ ըրավ, ի՞նչ գողություն ըրավ։

Գվիր.—Տուն մտավ, տունից դուրս եկավ,

Ջուրը մտավ, ջուրից դուրս եկավ,

Գնաց հացագործի փուռը՝

Քանդեց և սոմիններըը գողացավ։

Բեկը տեղեկանալով հանցանքի մասին, խորհրդակցում էր գզրի հետ գողին տրվելիք պատժի մասին և հրամայում նրան՝ դատավճիռը ի կատար ածել։ Գզիրն իր տիրոջ հրամաններն ի կատար էր ածում հետևյալ պատժաձևերից մեկն ու մեկի կիրառումով։

ա. 10—15 հարված՝ ձեռքի չոմախով (շորից ոլորած մարակով)։

բ. Իշու նման զոալ կամ շան նման հաջել տալ։

գ. 1—2 րոպե մի ոտքի վրա կանգնած պահել։

դ. Պատժվողին չոքեցնելով և ձեռքերի թաթերը գետնին դնելով դրանք չոմախով գետնին մեխել ձևացնել, մեջքին տախտակ մեխել ձևացնելով՝ նստարան շինել ու բեկին հրավիրել վրան նստելու։

ե. Գողից սոմին պատրաստել, այսինքն դլուխն առնել ափերի մեջ և ալյուր մաղելու ձևով այն տարուբերել, գետնին պառկեցնել և մարմինը բռունցքներով «հունցել», ապա ձեռքերն ու ոտքերը իրար բերել, խմորի գունդ դարձնել ու տանել, փուռը՝ սենյակի մի անկյունը նետել։

Հա. ֆ. ֆ.

48. ՊԱՐՈՆ ԳԶԻՐ

...Քիչ մը ավելի հասակ առած... [մանկաիններեն] մեկ քանիներն ալ նստած են՝ ճանով «պարոն գզիր» կը խաղան։ Գիտե՞ս ինչու նա մեկ տղային գլուխը ծռեցուցեր ու կռնակին կը զարնե ուրիշ մը։

Ճանը չորս կողմ կամ երես ունի, չորսն ալ իրենց անունն ունին. երիու բարձր կողմերու մեկին կըսեն «ճուկ», մեկին՝ «թաւ», իսկ ցած կողմերուն՝ մեկին՝ «սալ», մեկին՝ «կոռ»։ Կարգով տղաքները ճանը կը ձգեն, որին որ ճուկ գա, նա պարոն կը լինի, որին որ թաւ գա, նա գզիր կը լինի, որին որ սալ գա, ոչ չար է, ոչ բարի, իսկ որին որ կոռ գա, նա գող կը համարվի։ Ահա, ուշ դիր, նորեն կոռ եկավ. գզիր ճանը խլեց և պարոնին դառնալով կըսե.

— Պարո՛ն, պարո՛ն, գող մ՚ եմ բռներ։

Պարոնը կը հարցնե.

— Ի՞նչ է գողցեր։

Գզիրը գողին կը հարցնե.

— Ի՞նչ ես գողցեր։

Գողը կը խոստովանի (օրինակ)՝

— Տանձ մ՚ եմ գողցեր, կամ ինչ և իցէ բանի մը անուն կուտա։ Եթե ծանրակշիռ է բաած բանը, պարոն հրամայ կընե՝ տասն գոմփ (բռնցի) զարնեն կամ ավելի. եթե թեթև է, թեթև. շատ անգամ ալ պարոնական վեհանձնությամբ ներողություն կընե։

Այսպես, կարգով ճանը ձգելով՝ եթե ճուկն ուրիշի մը դա, սա կլինի պարոն և նախկին պարոնը իր իշխանութենեն կիյնա։

ԳՍ. Մն., 60—61 (Վ.)
Վար. Ախ. I, 167 (Վ.)

Բացառապես աղջիկների խաղ էր, որի մասնակիցներից մեկին մայր էին դարձնում, մյուսները մոր եռևից սկսած՝ իրար մեջքից բռնում, շղթա էին կազմում, մոր մեջքից բռնողին անդրանիկ անունը տալով։ Խմբից դուրս մեկը դառնում էր տարող (տանող), որը կանգնում էր մոր դիմաց. սրանց միջև մի վտակ էր երևակայվում։ Տարողը վտակի այն կողմից խոսքը մոր ուղղելով ասում էր.

— Ըատեղեն ղի Ֆոռ՛ւ։

— Խոզի՛տ էլնի, դե՛ Ֆռի՛,— պատասխանում էր մայրը։

Այս խնդրանքն ու մերժումը երկու անգամ կրկնվելուց հետո տարողը ճարահատյալ Ֆռչում, վտակն անց էր կենում և, մոտենալով մորը, ասում էր.

— Աղեն կասի ղի կա՛Ֆ տու։

— Դե՛ արև կՖի՛, տա՛ր,—ասում էր մայրը։

Տարողն այն ժամանակ մոտենում էր անդրանիկին՝ սրան կՖելու, որից քայլ ստանալով անցնում էր հաջորդներին և հերթով կՖկով երևակայված կաթը տանում էր։ Մի քիչ հետո տարողը վերադառնում և մորն ասում էր.

—Աղեն կասի կաՖ Ֆ՚ռփալ, ղի ոչխա՛ր տու։

— Դե, արև տա՛ր,—մոր պատասխանը լսելուն պես տարողը մոտենում էր ոչխարներին, դրանցից մեկը տանելու, բայց մայրը ձևերը բացած, աչ ու ձախ ճոճվելով աշխատում էր արգելել, տարողի հետ երկխոսելով.

—Ինա՛մասիկ՝ որ չե՞մ ի տա՛։

—Ինա՛մասիկ՝ որ կը՞ տանե՞մ։

«Այն մա՛սը վկա, որ չեմ տալու», «այն մասը վկա, որ կտանեմ» երկխոսությունները կրկնվում էին այնքան ժամանակ, մինչև որ ոչխարների գալարվող, պաշտպանվող շղթայից մեկին տարողը ձեռք տալով՝ խմբից անջատում և մի անկյուն տանելով հանձնարարում էր նախրակ մանել՝ ձևը իբրև մանիճ՝ ոլոքակ-ոլորակ դարձնել, ճրղրը-վրղրը անել։

Տարողը նորից գալիս, կանգնում էր մոր դիմացը, ասելով.

— Ըատեղեն ղի Ֆռո՛ւ։

— Խոզի՛տ էլնի՝ դե՛ Ֆռի՛։

Տարողն առվակը Ֆռչում և ասում էր.

—Աղեն կասի կրա՛կ տուր։

— Դե գՖր(կ) տա՛ր։

Առատությունն ստանալուն պես տարողն անցնում էր գործի։ «Ինամասիկ՝ որ կտանեմ», «ինամասիկ՝ որ չեմ ի տա» ընդդիմախոսությունը նորից էր սկսվում։ Տարողը մերթ այս մերթ այն կողմից հարձակում գործելիս ձևերևն իրար էր խփում, որ իբրև Ֆռ կայծ քարով ու արևթով կրակ ստանար, ի վերջո գալարվող խմբի ծայրինին ձեռք տալով, նրան տանում, մյուսի կողքին էր գնում հանձնարարելով գզել և մանել։

Դառնալով մոր մոտ, տարողը գարձյալ ասում էր.—

— Էն ինկա՛մ՝ խաբսի քո՛ղքն իրիցավ. աղեն կասի կրակ տո՛ւ։

— Խոզի՛տ էլնի՝ դե գՖր(կ) տա՛ր։

Տարողը նախորդ ձևերով ևս մեկին խլելով տանում ու նորից գալիս ասում էր.

— Էն ինկա՛մ՝ վեսի մուրճ՛ան իրիցավ, սուղն կասի կրակ տո՛ւր։

— Խոզի՛տ էլնի՝ դե գՖրկ տա՛ր,—պատասխանում էր մայրը և այս ձևով ու ինամասիկ կտանեմ, ինամասիկ չեմ ի տա բանաձևերի կրկնումներով տարողին ի վերջո հաջողվում էր անջատել մորից բոլոր ոչխարներին և տանելով առանձին տեղ՝ հանձնարարել բուրդ ու բամբակ գզել, խլիկով և ճախարակով թել մանել և այլն։ Բայց երբ տանելու հերթը հասնում էր անդրանիկին, տարողը պետք է նրան յոթ անգամ ձեռք տար։ Այդու մենակ մնացած մայրը գալիս էր ձագուկների մոտ և առանձին առանձին հարցնում էր։

—Քանի՞ կանձ պլուրթ ես մանե, կամ քանի՞ առչկան թել ես մանե։ Ել, որքան որ



Նկ. 36. «Ինամատիկ» խաղը Վանում (բնագիրը՝ № 49)

պատասխանվում էր, այնքան թվով «իրիկ կանես» (երբ տղա խաղակիցներ էին ունենում՝ «ինիկ կանես») վճռական խոսքն ասելով հասնում էր անդրանիկին նույն հարցումն անելով։ Սա պատասխանում էր.

— Ձո՛ւմ թոռներ վաճիցի, քիշշիցի՝ կես կանձ չէորէո՞վ մանիցի (մինչև որ թոռները վառեցի, քաշեցի, կես փութաթ հազիվ մանեցի)։

— Կես իրիկ կանես,— վճռում էր մայրը։

Այդուհետև՝ անդրանիկից սկսելով մայրը իր երեխաների ղուխները լվալ էր ձևացնում, որին իբրև ջուր լցնողի դեր էր կատարում տարողը։ Լվալ սկսելիս երբ երեակայված ջուրը լցվում էր անդրանիկի գլխին, վերջինս գոռում էր։

— Յամա՛ն, մարե՛, ճյուր տա՛ք ի։

— Կնա խավա՛ն (սառ ճուր) պե, ասում էր մայրը ջուր լցնողին, որը դեզորեն պատասխանում էր.

— Ջա՛ղնամ, այո՛ւ կնա պե՛։

Մայրը ճարահատյալ սառերը լվացվող գլխի վրա թողնելով գնում էր սառը ջրի և վերադարձին երեխային տեղում չգտնելով, հարցնում էր.

— Ի՞նչես էլավ, գնո՞ր կնաց իմ ուղեն։

— Կես խաց պաղարճ ալի ծեռ, անթրոց գնրկիցի հաևին, ճամփիցի է՛ էնա սար,— պատասխանում էր ջուր լցնողը։ Եվ այսպես, այդ նույն ձևերը կրկնվում էին մինչև բոլոր զավակների կորուստը։ Տեղափոխված տեղում անդրանիկն իրենից կրտսերներին բոլորակի նստեցնելով թոներ կամ քուրսի էր ձևացնում։ Այս անգամ մայրն այն կողմից գալիս, իբրև թե դուռը ծեծելով ասում էր.

— Չը՛խչը՛խկ։

— Վո՞վ ի, ներսից ձայնում էր անդրանիկը և նրանց միջև շարունակվում էր երկախոսությունը.

— Պա՛ց ե՛ս ե՞մ։

— Ինչո՞վ պանծամ։

Գլխո՛վ պա՛ց։

— Գլեխս իլի՛ն մա՞զ ի (կամ ոսկի՞ ի, ևն)։

— Աչկո՞վ պա՛ց։

— Աչկերս իլի՛ն առասունք ի։

— Ակնջո՞վ պա՛ց։

— Ականջս իլի՛ն դի՞նդ ի։

— Պենո՞վ պա՛ց։

— Պերանս իլի՛ն առա՞մ ի։

— Քթո՛վ պա՛ց։

— Քիթս իլի՛ն ալմաստ՞ի ի։

— Ծեռնո՞վ պա՛ց։

— Ծեռքերս իլի՛ն խալխա՞լ ի (կամ շուշա՞ յի)։

Խնդրանքն ու մերժումն այս ձևով շարունակվում էր, մինչև որ մայրը որևէ կերով ներս էր մտնում։ Ներս մտնելով, մայրը նրատում էր քուրսի կամ թոնիր ձևացված բոլորակի մեջտեղը. անդրանիկը նրա տակից բաքան կամթելիս մայրը հարցնում էր.

— Յո՞ւֆ, ծեր թորվան մեչ ի՞նչ կա՞։

— Պանն չէ, պատն ի թոնիր կը եռա՞, — սառն ու անփութանալով պատասխանում էր անդրանիկը։ Եվ այսպես, մայրը քանիցս կամթվում և ասում էր, որ նրանց թոնրի մեջ օճ կա, կարիճ կա, պապուկ կա և այլն, և անդրանիկից ամեն անգամ որևէ կերակրի անուն, որևէ պատճառաբանություն լսելով խաղը վերջանում էր (նկ. 36)։

Ա.Խ. I, 111—116 (վ.)

50. Ա Գ Ե Ն Կ Ա Մ Ի

Վանի մի այլ վարիանտի համաձայն մանուկները խաղում էին տան անկյուններում հավաքված։ «Դուրս գալով՝ միմյանց դեմ թոցնում էին որևէ առարկա», ասելով.

— Աղեն կասի՝ կրակ տո՛ւր։

— Խոպչիպ էլնի՝ զա՛ր, տա՛ր։

Ջրխկ, չրխկ, ի զար՝ տարավ։

— Ա՜խ, մեկ էլ տո՛ւր.

Էն ինգյավ, փեսի մուրտան իրիցավ։

— Ջա՛ր տա՛ր։

Ջրխկ, չրխկ, ի զար տարավ։

— Ա՜խ, էն ինգյավ, խարսի քյողքն իրիցավ։

— Աղեն կասի՝ կաթ տո՛ւր։

— Խոպչիպ էլնի, կթի տա՛ր։

Ճըժ վըժ, ճըժ վըժ, կթից՝ տարավ։

— Ա՜խ, էն բռան կաւուն ի զար թափից։

— Աղեն կասի՝ մածուն տո՛ւր։

— Խոպչիպ էլնի, մերի տա՛ր։

— Աղեն կասի՝ միս տո՛ւր։

— Խոպչիպ էլնի, մորթի տա՛ր։

— Աղեն կասի՝ դյառ տո՛ւր։

— Էնա մասիկ՝ որ չեմ իտա։

— Էնա մասիկ՝ որ կը տանեմ։

— Էնա մասիկ՝ որ չեմ իտա։

— Էնա մասիկ՝ որ կը տանեմ։

Գ.Շ. ՎՍ, I, 19—20
Վար. ՍՔ. ՀԺՀ, VI, 126—128 (կս)
Բ. Մե, 64—65

51. ԱՆՆԱ ՄԱՐԻԿ, ՈՐ ՉԵՄ ՏԱ

Հատկապես գարնանը, առանձին խաղացող աղանիներից կամ աղջիկներից մեկը լինում էր մայր, մյուսը՝ անդրանիկ, որ մոր հետևն էր բռնում, իսկ մնացածները իրար հետևից էին բռնում։ Երեխաներից մեկը գայլ էր դառնում, որը գալիս ու ասում էր մորը.

— Ինձ այս տավից անց կացրու։

— Կարող ես, ինքդ թոխր,—պատասխանում էր մայրը։ Նա էլ մեկ ոտքով թռչում էր և հետո ասում.

— Ինձ այս գետից անց կացրու։

— Կարող ես, ինքդ թոխր։

Այս անգամ գայլը երկու ոտքով թրռչում, գալիս էր մոր մոտ և ասում.

— Մայրիկս հիվանդ է, քեղնից կաթ է ուզում։

— Գառներս դեռ չեն եկել,—պատասխանում էր մայրը։ Այդ ժամանակ մյուս կողմից

դառները (եւեր շարված մանուկները) կանչում էին.

— Բե՛, բե՛, բե՛:

Մայրը իրրև թե կթում էր, տալիս գայլին, նա էլ գնում, բայց կրկին գալիս էր.

— Սև կատուն թափեց, մի կաթը էլ տուր:

Մայրը այս անգամ չէր տալիս: Գայլը կանչում էր.

— Կգամ, ղռռով կտանեմ:

Մայրն սկսում էր թևերը տարածել, իր դառները պաշտպանելու և բոլորը միասին ասում էին.

— Աննա մարիկ, որ չեմ տա:

Դիմացինը կրկնում էր.

— Աննա մարիկ, որ կտանեմ,— և այսպես շարունակում էին:

Երբ գայլը կարողանում էր իր ձեռքը խաղացողներից մեկին կպցնել, տանում էր մի կողմ ու վերադառնում: Այսպես շարունակվում էր, մինչև որ մնում էր անդրանիկը: Սրան պետք էր յոթն անգամ դիպչել ու տանել, որից հետո գայլը բերում էր բոլոր դառներին, կանգնեցնում ու ասում էր.

— Ջուրը տաքացրել եմ, ձեր բուրդը պիտի լվանամ:

Նա սկսում էր անդրանիկից: Վերջինս ասում էր.

— Վա՛յ, ջուրը տաք է:

— Գնացե՛ք, սառը ջուր բերե՛ք,— հրամայում էր գայլը մյուսներին:

— Չե՛նք գնա:

Գայլը սոխակած ինքն էր գնում: Հենց որ սա քիչ հեռանում էր, անդրանիկը փախչում էր մոր մոտը, որը հեռվում կանգնած էր լինում: Գայլը նրան հասնելիս և բռնելիս եղ էր բերում և նորից սկսում էր տաք ջրով նրա բուրդը լվանալ: Եվ այսպես՝ մինչև որ բոլոր դառները փախչում էին իրենց մոր մոտ: Հետո ուրիշներն էին դառնում մայր ու գայլ և խաղը սկսվում էր սկզբից:

Լ.. ԺՄԽ, 18—19

52. ԻՆԱՄԱՍԻԿ

Խաղը նույնն էր, որին մասնակցում էին աղջիկները: Խաղավարները մայր և հափշտակող էին կոչվում: Հափշտակողն ասում էր մորը:

— Ինամասիկ, որ կը տանի՛մ:

— Ինամասիկ, որ չե՛մ իտար,— պատասխանում էր մայրը: Հափշտակողն ամ վրա որ ձեռք էր դնում, նա պարտավոր էր հեռանալ մորից ու խմբից և կանգնել տանողի շարքի մեջ: Երբ մայրը մենակ էր մնում, հափշտակողը տարած աղջիկների պլխից մեկական մազ պոկում և տալիս էր նրան: Մայրը մազերն ատանալով լաց էր լինում և հոգոց քաշելով պատմում, թե այսինչ մաղը իր այսինչ աղջկանն էր պատկանում, այնինչը՝ այնինչին էն, և, համբուրելով դրանք, դնում էր իր գլխին:

Խ. Վժխ. ձ. 70—71 (Վ.)

53. ՍԱՌՆԱԳԵԼԻ

Կոտայքի Ավան գյուղում այդ նույն խաղին մասնակցում էին պատանիները: Մեկը խմբապետ և մի ուրիշը՝ գայլ էր դառնում: Խաղն սկսվելիս գայլի հարձակման ժամանակ խմբապետը ճկուն շարժումներով կանխում էր հափշտակման վտանգը: Բայց երբ մեկին գայլը փախցնում էր, նրան հեռվում շարքի համաձայն կանգնեցնելուց հետո ասում էր.

Մանի մանի
Հարսս գա:

Ապա գայլը վերադառնում էր մյուսներին բռնելու:

Թ. ժխ. ձ.

54. ՄԱՆԻ ՄԱՆԻ

Ախալցխեի վարիանտում խաղերգն ասում էր.

Մանի մանի
Հարսս գա,
Հարսս չգա,
Մանչս գա:

Թ. ժխ. ձ.

55. ԳԱՇԻ ՉՈՐԱՆ

Վաղարշապատում այդ նույն խաղին մասնակցում էին 5—10 երեխաներ: Երկու ընտրվածներից մեկը չորան և մյուսը՝ գայլ էր կոչվում: Մյուսները գառներ էին կոչվում: Վերջիններս իրար փեշից բռնում էին և երբ վտանգ էր սպառնում, գառան պես մայում էին: Գայլը նրանց մոտենալիս ասում էր.

— Մարի գել եմ, կառնեմ:

— Գաշտի չորան եմ, չեմ տա,—

Պատասխանում էր չորանը: Նվ երբ բոլորին վախցնում էր, հերթը հասնում էր նաև չորանին, որին տանելիս խաղը նորոգվում էր՝ գայլի ու չորանի դերերը ուրիշներին տալով:

ԳՄ. ՀԺՀ, VI, 12—123

56. ԳԱՇԻ ՉՈՐԱՆ

Խաղը նույնն էր: Մասնակիցների թիվը հասնում էր մինչև 20 հոգու: Երկխոսությունը հետևյալն էր.

— Գել եմ, գել եմ,
Մարի գել եմ,
Եկել եմ ձեզի տանեմ:
— Չորան եմ, չորան եմ,
Գաշտի չորան եմ,
Չեմ տա, որ տանես:

ԵՀ. ԺԽ, № 65 էջ 26—27

57. ՄԱՐԵ ՄԱՐԵ

Ապարանի վարիանտում տղաներն ու աղջիկները խաղում էին գարնանը և աշնանը: Ձագերին պաշտպանողը հայտնի էր մարե անունով: Հափշտակելու եկածը քայլում էր մի ոտքի վրա, որը մարեին հասնելիս ասում էր.

— Մարե, մարե, մեկըմ տա՞ս:

Երբ մարեն մեկին տալիս էր, նա գարձյալ էր գալիս, այս անգամ ասվում է.

— Մարե, մարե,
Մեկըմ տա՞ս:
— Մեկըմ տվի
Ի՞նչ արիր,—

Հարցնում էր մարեն:

— Հալեցի, հալմլեցի,
Լցրի աման՝
Կուլ տվեցի,—

պատասխանում էր գայլը և աշխատում էր ձեռք դիպցնելով վերջինին՝ դերը սրա հետ փոխել:

ՄԱԽ, Ձ.

58. ԿԱՌՆԵՄ, ՉԵՄ ՏԱ

Շապին-Գարահիսարում խաղին մասնակցում էին աղջիկներն ու հարսները, որոնց թիվը 5 հոգուց պակաս չէր լինում: Վիճակահանությամբ մեկին մայր և մյուսին՝ հափշտակող էին ընտրում: Հափշտակողը «կառնեմ, կառնեմ» ասելով հարձակվում էր ձագերի վրա, մեկն ու մեկին խլելու պայմանով, իսկ մայրը «չեմ տա, չեմ տա» գոչելով պաշտպանում էր թևատարած: Շարքը օձապտույտ էր տալիս: Երբ հափշտակողը մորը արդեն թողնում էր առանց ձագերի, կատարվում էր վերջին դործողությունը: Ձագերը թևերը կրծքի վրա խաչաձևած կանգնում էին իրար կողքի և այդ դրությամբ բռնում իրար ձեռքից, իսկ մայրն ու հափշտակողը կանգնում էին շարքի հակառակ ծայրերին և ամբողջ ուժով շղթան ձգում դեպի իրենց կողմը, աշխատելով կտրել, անջատել նրան որևէ մասում: Հաղթանակը նա էր շահում, որի կողմն էր անցնում կտրված շղթայի մեծ մասը:

Հա. Ա. Ձ. 5—6

59. ՁՈՐԻ ՁՈՐԻ (ՁԵՐԱՆՈՒԿԻ)

Խաղում էին բացառապես աղջիկները, որոնք իրենցից մեկին մայր էին ընտրում, մյուսին տատ, երրորդին զորա (չալաղան) և չորրորդին՝ որսկան:

Մայր ու տատ թիակի պես կըրլըկալով լալագին երգում էին.

Կրլը՛կ, կրլը՛կ Ճուտիկնե՛ր:
Քնանք կալը, Ճուտիկնե՛ր.

Կըռռը՛խկ, կըռռը՛խկ ճուտիկնե՛ր։
Քընանք ուտենք հատիկներ։
Սոված ճուտերը պաղատում էին.
Ծըռը՛վ, ծըռը՛վ, նանի ջա՛ն,
Սոված մեռա՛նք, նանի ջա՛ն.
Ծըռը՛վ, ծըռը՛վ, տատի ջա՛ն,
Քընանք կալը, տատի ջա՛ն։

Այս միջոցին զորին երևում էր։ Ճուտերը նրան տեսնելուն պես շարվում էին իրար հետ և փիշերից ամուր բռնում։ Մայրն առջևից էր հսկում ճուտերին, տատը՝ հետից։ Զորին հեռվից սպառնական աչքերով նայում էր ճուտերին։ Մայր ու տատ ահակալած երդում էին.

Թըռը՛վ, թըռը՛վ, ճուտիկնե՛ր,
Զորին եկավ, ճուտիկնե՛ր.
Թըռը՛վ, թըռը՛վ, ճուտիկնե՛ր,
Հրեն եկավ, ճուտիկներ.
Թըռե՛ք, եկեք թևիս տակ,
Քընանք, դպրվենք ցաքի տակ։

Ճուտերը վախեցած երդում էին.

Թը՛ռըվ, թըռը՛վ, նանի ջան
Զորին եկավ, նանի ջա՛ն,
Թըռը՛վ, թըռը՛վ, տատի ջա՛ն,
Մեզ ըզատի, տատի ջա՛ն,
Թըռը՛վ, թըռը՛վ, նանի ջա՛ն,
Թևերըս պա՛ց, տատի ջան։

Զորին մոտենում էր ու տատին ասում.

Պառավ նանի,
Մի ճուտ տո՛ւ։

Տատը պատասխանում էր.

— Կըրե՞մ կըլլախըա,
Ցեխը՛ս կըխխա,
Քև հըմա՛ր եմ
Ճուտ մեծըցրել։

Ճուտերը վախից հանգիստ չէին կանգնում. շարունակ օրորվում էին մոր ու տատի մեջտեղում, որպեսզի զորայի ճանկը չընկնեին և անդադար գոչում էին. ո՛ւհա՛, ո՛ւհա։

Մայրը հարցնում էր զորային.

— Ո՛ւր ես քընում։

Զորին խարևլու մտքով պատասխանում էր.

— Իմ հորանց տուն եմ քընում։

— Ախը՛ր վի՛նց ես քընում։

Դեան ասեղ ա, դենը քորոց,— ասում էր տատը։

—Ի՞նչ եմ վախում, ըսենց կը թըռչեմ,— ասում էր զորին, վրա էր ընկնում, ճուտերից մեկին բռնում։ Այս բռնվածը մի կողմ կանգնում և բազուկները պատեցնելով երգում էր.

Վի՛լա, վի՛լա,
Հընգերըս կա՛։
Վի՛լա, վի՛լա,
Հընգերըս կա՛։

Զորին մոտենում էր նորից պառավին ու ասում.

—Անողորմ պառա՛վ,
Մի ճուտ տա՛ս։
Տատն ասում էր.
— Կըրեմ կըլլախըա,
Էն վեր տարար,
Ի՞նչ արիր։

Զորին պատասխանում էր.

— Տարա տըրի հաչի պըտակին,
Քըշեց, տարավ քաչկա քամին։

Տատն ու մայրը մնացած ճուտերին իրար մոտ հավաքելով, պաշտպանելու դիրք էին բռնում, բայց զորին ճարպիկ էր լինում, դես դեն թռչկոտելով դիպչում էր ձեռքով բոլոր ճուտերին ու կտրում։ Տատն ու մայրը ճուտերը կորցնելուց հետո վշտահար ու տխրած դալիս էին որսկանի մոտ, որը ծառի կոպրին հրացանը ձեռքին կանգնած էր լինում։

— Հորսկան ախպեր, քի հըմար կարմիր եղածու կաննենք. էն կըլխամեռ զորին սըպանի։

Որսկանը պլոխն օրորում էր, իբրև՝ հոժար չէր։ Նրանք նորից թախանձում էին.

— Հորսկան ախպեր, քի հըմար ճուտ էլ կըտըպակենք, օժա՛ր էս։

Նա պլխով էր անում, նշան՝ թե հոժար է և ձեռքերը հրացանի փոխարեն բարձրացնում էր։ Հենց որ զորին նորից երևում էր, իբրև հրացանի տրաքոց, որսկանը դո՛ւմփ

ձայն էր հանում։ Զորին թըրմփալով ընկնում էր գետին։ Տատն ու մայրն ուրախ վազելով հարձակվում էին սպանված զորիի վրա և սկսում փետել։ Քիչ ժամանակից հետո ճուտերն էին վրա հասնում, համ փետում էին զորիին, համ թեթև կամթում։ Ապա բոլորը կանգնած երգում էին զորիի նաշի վրա՝ ճուտերը ճըվճըվալով, տատն ու մայրը՝ կըրկըռկալով.

Ծըլը՛վ, ծըլը՛վ, ա՛յ զորա՛,
Ջանգըա կո՛տրի, ա՛յ զորա՛,
Մեր հընդերին ի՛նչ ըրիր։
Ծըլը՛վ, ծըլը՛վ, ա՛յ զորա՛,
Ա՛ճկըա տա՛ւս կա՛, ա՛յ զորա,
*Բ՛ընա տատի՛կ, ա՛յ զորա**։

ԳԲ, III, № 18 (Շմ.)

60. ՇՊԼՈՑ Ա.Գ.Ա.

*Ատաանոր երեք խաղի նկարագրություն ներկայացնեմ քեզ***, *որ պյուղերեն և գյուղական կյանքեն մուտ գած է ի քաղաքն [Վան]։ Մի տարի մի գյուղացի Հարությենց սենյակ[ում] «շպլոց աղա» խաղաց։*

Այս խաղ մեզ նոր լինելով, շատ զվարճություն պատճառեց։

Այս գյուղացին Քաչալ Ասպատուր և Պոպոզի խաչո արաց յուր համար եղ։ Մի հատ փայտ առավ ձեռք, մի անձանոթ մարդ մի մեզմե առանձին սենյակեն գուրս պատրաստակաց շպլոց ագա և ինքն յուր եղներ ծնկան վերա բերելով և եղանց բևեր իրարու կապելով սկսեց, որպես թե վիզկի կամ գութան քշել, ձայնավոր եղանակավ եղներ սենյակի մեջ տաներ բերեր և հատա փայտիվ այնպես ատաձիկ զարներ եղանց, որ եղներ իրական եղներեն տատն անգամ առավել բառաչեին, բառային։ Սույն միջոց այլանդակ, այլակերպյալ շպլոզ, այն իրրև տանդարտճեան Սապայեին, ներս մտնալով գայր ամենայն սաստկութեամբ բրածեծ առներ գեղնավարն, խարճ խարած [բնագրում՝ խարած] ուզելով։ Խեղճն մի կողմանե ազերսեր զշպլոզ աղեն, մի կողմանե ատատիկ հարկանելով զեզինս, երկիր հերկեր։ Երբ եղնավարն զեզինս հարկաներ, զշպլոզ աղեն և առավել սաստկութեամբ զեզնավարն հարկաներ, որ ի ծածուկ ապա եղանց թեի կապն արձակելով եղինք և եղնավարն դառնային ի վերա շպլոզ աղային այնպիսի չարաշար ափոց տային, մինչև որ հոգիս ապատատան լիներ։ Հետո մարդիկ, որպես թե դյուզացիք, գային, միջնորդ լինելով երկրագործի ձեռքեն աղատեին զաղային։

Այս խաղ 3—4—5 անգամ այսպես կրկընվելեն հետո երբ վերջի անգամ շպլոզ աղեն ներս գայր, երկրագործն և եղինք զշպլոզ աղային անխնա ծեծելեն հետո հալածական առնելին զայն ի սենեկեն, որպես թե հալածեցին ի գեվղեն։ Երբ երկրագործ և եղինք զշպլոզ աղային ատատիկ գանակոծելին և նա ահռելի ձայնիվ աղաղակեր, հանդիսականք և մեք այնչափ խնդայինք, մինչև ուշաթափ լինելու ատիճան հասանելինք։

Սույն խաղ ուրիշ բացատրություն կխընդրեր, վասնզի յուր բոլոր բացատրություն խաղերաց մեջ բովանդակե։

Ջ. № 4184, էջ 176բ—177ա (Վ.)

61. ՀԻՆԳ Ա.ՅՕՒ.ՏԵՐ

Խաղում էին 5—10 և ավելի տղամարդիկ։ Կազմում էին շրջան առանց ձեռք ձեռքի տալու։ Նրանցից մեկը ձևանում էր 5, երկրորդը 15, երրորդը 25 այծի տեր, ապա՝ հաջորդաբար տատականով ավելի՝ 35, 45, 55։ Նրանցից յուրաքանչյուրը պետք է հիշեր իր այծերի թիվը։

Խաղն սկսելիս խաղակիցներից մեկը հայտարարում էր.

— Գեղին խարճ է էկե, վի՛վ պիտի տա։

— Ի՛ղ հինգ այծատերը տա,—պատասխանում էր մյուսը։

* ԳԲ, II, 121. այս վերջին երեք տողին նախորդում է հետևյալ եռատողը.

Ծըլը՛վ, ծըլը՛վ, ա՛յ ձևրա,
Կաուցա փոխ, ա՛յ ձևրա,
Մեր ախպորը ի՛նչ արիր։

** Խոսքը ներկա «Շպլոզ աղա», ինչպես և գյուղական երկու այլ խաղերի մասին է։ Կազմող։

— Հաշվիր գեղի վրա, թող գեղ'ը տա, հինգ այծատերը ինչի՞ տա,—վրա էր տալիս հինգ այծատերը։

— Գեղն ինչի՞ տա, թո՛ղ 45 այծատերը տա,—դիտում էր հաջորդը։ 45 այծատերը անմիջապես հեռացնում էր իրենից և մատնացույց անում մի այլ այծատիրոջ, վերջինս էլ մեկ ուրիշին և այլն, որով խաղը աշխուժանում էր։

Խաղի մեջ պարտվում էր այն խաղացողը, որը մոռանում էր, թե ինքը քանի՛ այծի տեր է։ Այդ ժամանակ խումբը նրան որևէ մականուն էր տալիս ու վրան ծիծաղում։ Այսպես, օրինակ՝ ասենք թե հինգ այծատերը հաղթվեց, նրան «երկու հավկիթ ածող» կամ «օձ» անունն էին տալիս։ Կորցնելով հինգ այծատեր անունը, այդ խաղակիցն այնուհետև այդպես էլ կոչվում էր։ Եվ, երբ խաղի ընթացքում գյուղի ծախսերը վճարելու համար տրվում էր «օձը» անունը, «եկե մոխ իմ ծոցը» պատասխանում էր նա։ Այսպիսի դեպքերում խաղը վերսկսին սկսվում էր «գեղին խարճ է էկե» բանաձևով։

Խաղի ընթացքում շատերի թվական անունը փոխարինվում էր որևէ մականունով։ Նա էր հաղթում, ով իր թվական անունը չէր կորցնում։

«Հինգ այծատեր» էին խաղում նաև պատանիները։

Բ. Ժո. ձ. (Ախ.)

Ե. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ժողովրդական դրամատիկական խաղատեսակների մեջ սարև ներկայացվող «դատավարությունները» իրենց գաղափարական բովանդակությամբ միանգամայն համարժեք են «խան-փաշաներին»։ Եթե «խան-փաշաների» քաղաքական ծածկված պայքարն ուղղված է մասնավորապես օտար տիրապետությունների դեմ, ապա այս «դատավարությունները» ազգային ներքին հարստահարիչների դեմ մաքառման բացահայտ արտահայտություն են։

Որքան էլ հայկական միջնադարը հարուստ է ֆեոդալական պաշտոնական դատարանի փորձով, ժողովուրդն իր հնագույն սովորույթների վրա հիմնված իրավաբանական նորմանները դերադասում է։ Դրանով պետք է բացատրել բանահյուսության մեջ վերջինիս լայն տարածվածությունը և սուր ծաղրը թագավորների, իշխանների և առհասարակ դատավորների նկատմամբ։

62. [ՏԱՏ ՊԵՏԱՏ]

...Տատ Պետատ [12 տարեկան հորթարածը] կը լսնա հրմեն, իշ որ թաքավորի սինոդքեր կասին, հինք կասի. Հայտե՛, թաքավոր չկարցավ շարաթ անե, ես պտի անեմ, գնա՛ք, էն մարդքեր, էն շահատքեր բիրեք սդա։

Գնացին գիշերով էն շահատքերն էլ, էն երկու պաղրկյանքդիրն էլ բիրին էկան, ձեռ դրեցին սրաքրներ, կայնան։ Էլան խինքն էլ կայնան Տատ Պետատի իրես (թաքավորն ու վոզիր քունճ նստած ականճ կանին)։

Ասաց Տատ Պետատ.—Դյու աստրծու խրմակ շահատ իք, որ էսա մարդ իրեք անդին քար բիրեց, տվեց կնկյան. էսա կնիկ տարի, փճըցուցի, մկա իրիկ դավի կանի։

Կասեն.—Խա՛, մենք աստրծու հառնջ շահատ ինք։

Ասաց Տատ Պետատ.—Էդա շահատքեր տարե՛ք, մեկ մեկ օդա մտուցեք, իրար իրես չտանան։

Հերքեշի մեկ մեկ օդա տարան։

Տատ Պետատ էլավ, իրեք խմորի գյունդ շինեց. մեկը մոնճ, մեկը մանտր, մեկը չըզեն շատ մանտր։

Դանչեց էն մեկ շահատ բիրեց. խարցուղ մոտեն.

— Այ տղա՛, ինոնք անմեղ, դյու մեղավոր, դյու շահատութեին ատրծու խըմա պտի տեք։

Ասաց.—Խա՛, ես ատրծու խըմա շահատ իմ. իրեք անգին քյար էսա մարդ ավեց էսա կնկյան։

Ասաց.—Դյու տեհա՞ր։

Ասաց.—Խա՛։

— Ո՞ր ամիան էր։

— Ես չեմ գիտի, ես կարդացվո՞ր էմ։

— Աշո՞ւն էր, գարո՞ւն էր, ի՛շ վախտ էր։

Ասաց.—Գարուն էր, վիսկու ժամանակ էր.մե իրեքին վիսկին էլ մեկ տեղ էր, բիրեց տուն, մե արաց շահատ։

Տատ Պետատ մենծ խմորի դյունդ շանք ավեց էդա մարդյու, ասաց.—

— Այ տղա՛, էդա քյար ծրնեմ կե՞ր, չկեր։

Ասաց.—Պավարկե էսա քյարն էր։

— Յաղճի՛,—ասաց Տատ Պետատ,—դրի որ վիսկու դյախ իլի շահատ։

Գնացին, մեկ շահատ էլ բիրին, էկան։

— Այ տղա՛, ասաց, ինք արդար, դյու մեղավոր, ատրծու խըմա դյու շահա՞տ իս։

Ասաց.—Խա՛, ես ատրծու խըմա շահատ իմ, որ էսա մարդ իրեք անգին քյար ավեց էսա կնկյան...։

Ասաց.—Ի՞շ դյախ էր։

— Ես կարդացվո՞ր էմ. չըմ գիտի։

Ասաց.—Ձմե՛ռ էր, գարո՞ւն էր, աշո՞ւն էր։

Ասաց.—Կալի դյախ էր. մե կալեր մո մեմեկ էր. մենք էկանք, էլանք շահատ։

Միչնեկ խմորի դյունդ շանք ավեց.

— Ծնեմ կա՞ր, ասաց։

Ասաց.—Պավարկե էսա էն քյարն ի։

— Յաղճի, ասաց, դրի կալի դյախ էկած, իլած շահատ։

Հիտին շահատ բիրին. խարցում արաց։

— Այ տղա՛, դյու ատրծու խըմակ շահատութեին կանե՞ս. մրկա մարդկեր արդար, դյու մեղավոր. օղորմին ասա՛, դյու շահա՞տ իս. էսա մարդ իրեք անգին քյար ավե էսա կնկյան, բյո խոզյուն մեղք մի՛ անի։

Ասաց.—Խա՛, ես ատրծու խըմա շահատ իմ։

— Ի՞նչ դյախ էր։

— Ջըմ գիտի. ես կարդացվո՞ր էմ։

Ասաց.—Գարո՞ւն էր, աշո՞ւն էր, ամառն էր, թե ձմեռ։

Ասաց.—Հիտին հունվարին էր. մենք իրեքով մե տներ կը սվադէնք, մեր ձրոներ չամրաթաթախ բիրեց, արեց մե շահատ։

— Յաղճի, գրի հիտին հունվարին էր։

Բիրին էդա իրեք շահատն էլ կայնըցըցին մեկ մեկի իրես։ Յաղճին կարդաց. մեկ վիսկու դյախ իլի, մեկ կալի դյախ, մեկ հիտին հունվարին։ Տատ Պետատ փետ առավ ձեռ, ասաց.—Մեկ մեկու խապար չէլավ, յան սաղ տասեք, յան սը մորթեմ։

Ասին.—Թաքավոր, մենք շահատ չընք. մե ավեց խինդ խինդ դուրուշ...։

ԷԱԺ. IV, 119—121 (Տմ.)

63. ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարեկենդանի հինգշաբթի օրը, Բալուի յուրաքանչյուր գյուղի հրապարակում կազմակերպված հասարակական պարերից ու ճաշկերույթից հետո տեղի էր ունենում գյուղական ռեսի տարեկան գործունեության ցուցադրությունը, քննադատությունը կամ պախարակումը, որ կազմակերպում էին ծաղրածու երիտասարդ տղաները, ամբողջ հասարակության առաջ, թատերական ներկայացման ձևով։ «Թատերախաղը» ներկայացնողը «դատավոր» անունն էր կրում, որն ունենում էր իր ոստիկաններն ու դրդիչները՝ ատենաճաններին համապատասխան դերասաններով։


Դատավորը վայտաշեն ձին նստած*, ծանրորեն ու դժնի հայացքով առաջանում էր դեպի հասարակության կենտրոնը, ուր գյուղի ռեսը և մյուս մեծերը նստած՝ ուրախություն էին անում։ Առաջապահ ոստիկանները ճամփա էին բացում, իսկ բիկնապահները՝

---

* Փայտե ձին, ինչպես երևում է Հայոց Զորի նույն տոնորության նկարագրությունից, այնպես էին պատրաստում, որպեսզի խոպոպող ձիու մեջքի կողմից ոտքերով մտներ նրա մեջ ու ինքը թայլելով, ձևացներ, թե ձի է նստել։—Կազմող։



Նկ. 37. Դատավարության (բնագիրը՝ № 63)



կողքերից ու թիկունքից պաշտպանում էին նրան։ Այդ շքախմբի հետ առաջ էին բերվում նաև մեղապարտներին՝ կեղծ ոսկին ու մյուս մեծերին, որոնք առաջինն էին դատվելու։ Կերուխումը, պարերը, խաղերն ու երգերը դադարում էին։ Դատավորը տեղավորվում էր դյուղի իրական մեծամեծների մոտերքը, բարձր մի տեղ դրված բարձերի վրա և առյանը բաց անելով առաջ էր հրավիրում մեղապարտ կեղծ ոսկին, որ այլաբանորեն ներկայացնում էր իրական ոսկը։ Ատիկաննները նրան անմիջապես առաջ էին բերում։

Դատավորը դատելի հարցերը երկու մասի էր բաժանում՝ հասարակական և անհատական։ Դրագիրը դրանք կարդում և հարցաքննությունների էլ գրի էր առնում։

Ամբաստանագիրը ձեռքն առնելով, դատավորը ոսկին հարցնում էր.—«Գեղին աքինների (ցանքեր) նոր խորուճին (պահապան) ինչո՞ւ համար ը՛ն օրը օր (որ) հինը ելավ չը բռնեցիր, տասը օր ւոդն (վերջ) բռնեցիր, օր դող Կուրդոն ու Մրատոն, մորը ևղը (յուղ) գողցող Ավոյենց խուկ, ը՛տ խլուդները, օր ատածու մալը, ժամուն մոմը գողնալը պողպղնուն հալալ կ՛էնեն, իրանց էծերն (այծ) ու մաքինները, կովերն ու եղները, մուխուն շաֆխոր (արշալույսին) չը բացված, տարան սայլեցին (մուլլ տալ) խալխուն աքիններուն մեջ արծելով շատ զարար գիան ավին, ու դուն ը՛տ շուներուն հախեն չ՛էկար գեղացիներուն էդած ըտ զարար գիանը վէ՞վ (ոմ) պիտ տա։ Գեղին օրմաններն ըլ խորուճի չունեցան հազկե (միմչև) հիմա, ևև հատիկի օրմանն ըլ, Տըմբրին օրմանն ըլ, մընացին քրդերու ձևոքը, անտեր անտիրական, ուզածնուն խատար փատերը կըլըեցին, թե պիլա փատերուն, քուլի (ամեն) մոշաններուն (կաղնի) մրզիքները հանեցին, ալ խերը չը մընաց օրմաններուն, գեղին մոխը մարավ, հարիր քեսա զարար էղավ գեղին, ըտ զարարը վէ՞վ պիտ տա, ռէ՛ս։

Դաշտին ջուրն ըլ քիչ էր հերու, բամպակը, լոպիկը, կատավատը, կորեկը, խիարն ու կուխան, ձմերուկն ու խավունը, կուշտ ջուր չը խմեցին, ըս սապապով շատ պակաս էղավ գեղին մասուլը (բերքը) ը՛տ տարին, ինչո՞ւ ճայթ (ջանք) չէրիր ատոր համար խըյանեթ (ապերախտ), չը գիր (գացիր) ջրին ակը սեսնայիր քի սապապը ի՞նչ է, օր գեղին ջրին փայը քիչ ը ու քրդուն փայը շատ ը, ը՛տ զարարը վէ՞վ պիտ տա, ռէ՛ս։

Էգիներու (այգի) պաղպանչին (պահապան) ալ հախը Թամամ, Թամամ (ամբողջ տարեկանը) առավ, վա՛յ պապամ, վա՛յ, սապա՛պ, էյ զալը՛մ վէ՛վ չը լսեց օր ը՛տ շուն պաղպանչին էգիներուն Թամալը (հիմը) փորեց ըս տարի անճախ վեց բեռ ունեցավ, շահատով, խսպաթով վրան հախ եղավ (հասատատվեցավ) ըտ շունը, օր Մչոէնց խաղողը գողցավ, Պզընենց խաղողը գողցավ, Թագյենց խաղողը գողցավ... ո՛րը ըսիմ, ո՛րը Թողի՛մ, ը՛տ խեղճերուն ի՞նչ խատար զարար էղավ, դգալ մը ռուպ չունին օր ուտեն մասմունները (խեղճեր, զրկյալներ, անմեղներ), ինչո՞ւ համար ձեն չը հանեցիր ու ընոր հախը Թամամ ավիր, ըտ խեղճերուն ու գեղին զարարը վէ՞վ պիտ տա, ռէ՛ս։

Հը՛պը օխչարներուն, էձերուն չոպա՞նը, ը՛ն ըլ իր Թամամ հախն առավ, հէ՛չ չըսիր ըտ շուտիկ չոպանին ու՞ր ը Մրատոենց էձն ու մաքին, ու՞ր ը Մանուկանց օխչարն ու խոյը, ու՞ր ը գրա (խուլ) Զարդարենց չափիճը (մատաղ այծ), սրհա շարե՞մ, մեկը գալը կեբավ, մեկըլները լինք կերավ, նա փնտռեցիր, նա ըլ հարցուցիր ռէ՛ս, ու հախն ալ Թամամ ավիր. ըտ զարարը վէ՞վ պիտ տա։

Հերու, ամառը, գիր Գոգոյենց, մեծ Տերոըրանց ու Խորոզենց անվընին գողեր մտան, քուլլի (բոլոր) բանները սրբեցին տարան, աման, չաման, եղ, կով, մաքի, էձ, էշ, քուռակ մինակ շընվըտիրը (շուներ) Թողին, խեղճերը սև ճըլին վրա նստըցուցին, գեղը ահուդողի մեջ ձգեցին, ամեն գիշեր գո՞ղ, գո՞ղ, գո՞ղ, դու ըս դյուղին ոէսն էս, տարտ չէրիր, հոգ չէրիր տը (Թե) գողեր կան. մութաթ ըլլինք, ըսօր ինձի, վաղը քեզի կըլլի, մալերնիս կ՛երթա, տավարնիս կ՛երթա, օր մըլհրկըը (եթե) ըսցե (այսպես) նայմալաղըմ

(ինչպես պետք) էնինք նը, մեր կնկվըտիքն (կիներ) ըլ կ'երթան, մեր ախչըտիքն ըլ կ'երթան: Գեղին ոչխը, գեղին մէսուլն (պատասխանատուն) է ըս բաներուն: Դուն էռաջուց (առաջվընե) տուշունմիշ (խորհիլ) պիտ ըլլէիր, գեղին մեջ փառք ասծու աժտարի պես խուվաթով (ուժով) ճահիլներ (երիտասարդ) կան, ընոնցմե քնի հատը կանչեիր տունդ դռտուկ, մարդ մարդասանք ծող խապար չունենար, բարձիդ վրա պառկողը պիլա (անգամ) ծող չի գիտնար, ըսեիր ամր (հրաման) ընեիր, ընոնց օր գիշերը գեղին պայպանութիւն ընէին, գողերուն ճամբանները բռնեին, սիլահ—(զենք) կա, ֆիֆանք (հրացան) կա, ծուր կա, մութին կարելի էր օր գողերը հասարաթ էնէին (համարձակեին) ու ըտ պարարը տային գեղին, ինչո՞ւ չէրիր, ռէ՛ս, ինչու՞ չի կանչեցիր գեղին ասլանի պես կորիճները թուվդ, ռէ՛ս:

Հերու Հասան աղան, ըտ գալըմ մարդը գեղին շայնան էր (բոլոր բերքերուն հավաքիչը, այսինքն տասանորդողը), գեղը այրեց ծափեց այդ խոզի ձագը, թիին ուշուրը (տասանորդը) հարիրին իձձուն (հիսուն) առավ, պոսթան մը քուլլի ձմերուկով, խավունով, խրյուրով, կութայով (վարունգի երկար ու ադեղնաձև մի տեսակը) ըկըր ծախվեր անձախ հինգ հարիր դուռուշ կը բռներ, ը՛ տ անիծածը, ը՛ տ պոսթանեն երեք հարիր դուռուշ ուշուր առավ: Հըգալը էգիներո՞ւն ուշուրը, ի՞նչխան (սրքան) սուլ կըլլեց (գին դրեց) օր խապողն ըլ օրթոան (որթը) ըլ, ծուխերն (տերևները) ըլ, ճղերն ըլ, քուլլի ծախես, տըկեն չէս կրնար էնէլ, ինչո՞ւ ըտ շանը համար արդալ չի տալեր հուբումաթին (կառավարութեանը), օր մուխամեմ՝ (քննիչ) ճամբեր, քններ ըտոր կորա (համեմատ) ուշուր առնեին, լաքին (բայց) չէրիր, ու ծողիր օր ըտ գաղանին կըլլրածը կըլլրած ըլլի, կապածը՝ կապած»:


Այնուհետև.

«Տարի մը էվել էգալ Կուրդոյէնց ու Մրբոյէնց կռվըտուքը իրանց լարերուն (արտ) սինռոներուն վրա, ը՛ն կըսե օր դուն իմ սինռոնըս քակեր էս լարս դողցեր էս, ը՛ն կըսե օր դուն, ու ըս սապսպով իրարու հետ կը դվվըտին Մամպակին (պեյ) շներուն պես, ռէ՛ս, դուն կը լըսես ըտոնց խաղքութիւնը սինռոններու վրա, առնեիր հետդ Մելիք Արթոն, Մելիք Տոնոն, էրթայիք ըտոնց լարերը չափեիք պարանով հախը հախին (իրավունք) բերեիք օր խալըսեր, վրթիեր, էրթար, ընոնք ըլ, դուն ըլ, գեղն ըլ ըտահաթ կըլլեիք, ըտ բանը քու շլեիթ (վիպ) պարաքն էր, ռէ՛ս, ֆախաթ չէրիր ռէ՛ս չէրիր:

...Աղնոյենց Կակոն (Կիրակոս) ըտ քոռը... ժամու կոշնակին (զանգ) ձանը լսելուն պես իր եղն ու գոմեշը կը սայլե խալխուն աքինններուն մեջ ու ինք ընոնց քով կը կենա ժամ կենը, խորոճին քնի՞, քնի՞, հեղ ը տոր եղն ու գոմեշները ծեծեց քշեց դուրս էրթա խալխուն աքիններուն մեջեն, Կակոյին երեսը թքած օր խալխուն ցորենները չարծը աղոթքը սապսպ էնելով, ըտ մարդը սուտ քրիստոնյա ը, մեր օրենքը, մեր ժամը այլազգիներուն եռաջ խայտառակ կենը, դրսեն քահանա, ներսեն սատանա ը, ըտոր, ը՛տ կեղտոտ մարդուն ինչո՞ւ ճապա (պատիժ) մը չէ՞ս ի տար, ռէ՛ս:

Վարժապետը բռնեցիք (վարձել) հերու, սանաթով (պայմանագիր) մեկ տարիի համար երկու չարեկ ցորենի (մեկ չարեկը 406 հոխա է կշռում), 12 հոխա բամպակի, 15 բեռ (իշու) փատի, խեղճը յալվար յախար էգալ, անճախ (հազիվ) իր հախուն կեսը առավ, հիմա նա կարդալու հավաս ունի, նա աշակերտներու ըրախամ (թվաբանություն), գիր սորվեցնելու սիրտ ունի... ըկըր ըսցե էրթա դպրոցն... ըլ, ժամն ըլ պիտ գոցվին, ռէ՛ս՝ ինչու չէք իտար մարդուն հախը (ձայներ ամեն կողմերե՝ «հախլի խոսք, հախլի խոսք»):

Եվ այսպես, ռեսի հասցեին ուղղված նման ամբաստանումները հարատևում էին երկար ժամանակ, բոլոր մանրամասնություններով: Կեղծ ռեսը հարցաքննության միջոցին որքան էլ ձգտում էր արդարանալ, չէր հաջողվում, որովհետև փաստերն ու վկաները



Նկ. 38. Պղնձամանան գլխարկով դաաավորը Ախալքալաքում (բնագիրը՝ № 64)
Նկ. Ն. Զարգարյանի



նրա դեմ էին խոսում: Այդ փաստերի հիման վրա ատյանը նախապատրաստում էր ոեսին պաշտոնանկ անել:

Հարցաքննությունն ավարտվելուց հետո դատարանը մի պահ դադարեցնում էր իր աշխատանքը և ապա վերսին շարունակելով՝ գրագրի միջոցով՝ ի լուր ամենքին, կարդում էր հետևյալ վճիռը:

«Մեր դեղին լավ տիրուհին չի կրցավ էնել, շատ զարար պիչան ավելց դեղին, իմ մախքէմէն (դատարանս) մահրյում էրաց (դատապարտից) բա ոչսը, ճա՛պ ավելց բաոր ու հաննց ոչսոլենն, ըլ ընի մեր դեղին ոչսը չէ, զարար պիչանը քուլլի պիտի տա, մարըս (բանս) պիտի էնիմ բա անկված նաբռիվանները (սանդուխ) վրա»:

Վճիռը կարդալուց հետո ոեսի վրայից անմիջապես հանում էին «մռուզ ապան», որ նրան էր ավել դյուղի հասարակությունը՝ որպես աստիճանին հատուկ վերարկու (դյուղում դրանից ուրիշ ոշ ոք չէր հագնում):

Ապա՝ ատիկաննները ոեսի ձեռքերը շըղթայելով՝ նրան բարձրացնում՝ ի տես հասարակությանը, նստեցնում էին կանգնեցված սանդուխի վերին մասում: Այնուհետև դատում ու իրար հետևից սանդուխին էին բարձրացնում ոեսի խորհրդականներին: Դրանից հետո պարտված ոեսն իր պատճառած վնասները հատուցելու խոստմամբ մյուսների հետ ազատ էր արձակվում: Հետո դատավորը, իբրև իր խաղի գնահատությունը, մեծարվում էր տանիքի վրա պատրաստված խնջույքի սեղանի մասնակիցների կողմից:

«Սովորություն մըն է աս, ըստ որում այդ օրվան պատշաճությամբ մեծերը պետք է որ ներողամիտ գտնվին փոքրերու այդ կարգի վարմունքներուն» (նկ. 37):

ՀՍՔ, 24—39

64. ԴԱՏԱՎՈՐ

[Ախալքալաքի գյուղերում, բարեկենդանի առնի օրերին, իբրև զվարճանք] մեկը, հագնում էր հաստ մուշտակ, երեսին կապում ահագին մորուք, գլխին դնում թենջերե, շալե երկար գոտին իբրև ժապավեն գցում ուսը և տերօղորմյալի հատերը քաշելով մեծափառ նստում էր բարձր սադրի վրա, պահանջում ընտանեքի անդամներին՝ առաչը չոքել, ձեռքերը կրծքերին դնել և սիրտում էր իր ամբողջ կյանքում անմեղ ու հանգիստ հային, որ ասեր չեղած տեղից իր մեղքերը: Այդ գաղին, որ ներկայացնում էր թաթար բռնակալը, կամ արաբական խալիֆան, կամ կրոնամոլ տաճիկը, կամ կատաղի ենիչերին և կամ մի ուրիշ բռնակալ՝ արյունարբու ավերող իշխան՝ իր քննությունը վերջացնելուց հետո կամ հրամայում էր, որ իր հրամանատարները այդ անօրեն հային տանեին, կախեին, ողջ ունեցածը թալանեին, կամ բաշխելով նրանց «անպետք» կյանքը՝ մեծ փրկանքներ առնում, հեռանում էին:

Վա՛յ այն մարդուն, որ հանձն կառներ գաղի դառնալ. էլ ի՛նչ հայհոյանք, էլ ի՛նչ հարվածներ ասես, որ չորս բոլորից չէին տեղում նրա գլխին (նկ. 38)

ՀՄ. ԱՀ, II, 258

65. ԹԱԳԱՎՈՐ—ԴԱՏԱՎՈՐ

Լիսը բացվեց ամենի վրա էլ. [հարսանեքի] կառավարիչն էկավ տները սրբիլ ավուց, որ էս օր նոզլի (քաղցրեղենի) օրն ա, թագավորը շատ (դատաստան) պտի կտրի:

Թագավորը թախտին նստեց: Գարեգինն չինեց վեզիր, Սոսին էլ ֆարրաշ ու հրամայեց, որ Գարեգինը շատ կտրի:

Փեսացուները մի լսխտ ձեռն առավ, կանչեց. ով որ տուն էր մտնում, իրեք հետ գլուխ տալ էր տալի թագավորին ու բերում առաջին կանոնացնում ձեռները սրտին: Ամեն էկող իրա հետ բերում էր մի ազլուխ շիրինի, մի շուշա էլ արաղ: Ֆարրաշն ասում էր.—Թագավորն ապրած կենա, էս մարդը գող էր, շատ մարդիկ թալանեց, շատերի տունը քանդեց, շատ չալիշ էկանք (տանջվեցինք) - չի կարացինք բռնել, հիմի ինքն իրան ա էկել, քու դատն ընկել, քեզ համար էլ փեշքյաշ ա բերել, ի՛նչ ես հրամայում: Նա էլ ասում

էր.—բերնին դյուլլով ավեր։ Ին մենծ մարդ էր ըլնում, մի քաս ատաղ լցնում էին բերանը, ին պատիկ էր ըլնում՝ մի կաոր շուչուխ կամ մի ալանի էին կոխում բերանը։

Ամեն բարեկամներն էլ մի ալլուխ միրը նոր դրկեցին ու իրանք էլ նանուց էկան։ Հենց որ քոմմա հավաքվեցին, թագավորը նստեց շարյաթի (դատաստան), մի մարդ նստացրուց միրզա (գրագիր), մի մոխրատ (ապր թափելու կուն աման) դրուց առաջին թանաքամանի տեղակ, մի ածարոց գալամի տեղակ, պարանն էլ բերին մեջտեղը վեր քցեցին։

Առաջ բերին թագավորի հորն ու մորը։

Ցարրաշն իրեք հետ գլուխ ավուց ու ասեց վեզիրին.—սրանք մեր թագավորի տան վերակացուն էին. քանդել փշացրել, կերել են ու մեր թագավորին էլ մասխարա են քցում։

— Դրանց երկուսին էլ մի տեղ կապեցեք,—ասեց վեզիրը (Գարեգինը), կարպետի միջին կոլոլեք ու ծոլ արեք։

Էն ոհմաթը հրամանը կատարեցին։

Մի քանի մարդի էլ, որին կախ տվին, որին խաչեցին, որին կապեցին, հարանապարն էլ չոքեչոք բերին ներողություն խընդրել տվին ու մի մին քաս գինի խմելուց հետո, տղամարդիկը քաշվեցին։

ՊՍՎ, I, 261—262 (Իշա.)

66. ԳՈՂ ԵՎ ՓԱՇԱ

Խմբված երևելիներից ամենափառասերը փաշա էր դառնում, որի շուրջը նստում էին երկու-երեք բիկնապահներն ու շան պաշտոնը վարողը։ Փաշան իր անձնակազմով կեղծ քուն մանելուն պես գողերի դերերն առանձնողները գալիս և առաջիններին մոտ նախապես դրված իրերը հափշտակում, փախչում էին։ Շունն արթուն լինելով, անմիջապես ակում էր հո՛վ, հո՛վ, հո՛վ հաչել և արթնացնել բնածներին։ Արթնացած բիկնապահներն արագ հետապնդում, բռնում էին գողերին և բերում փաշայի մոտ դատաստանի։ Փաշան սրանց զանազան պատիժներ էր սահմանում, որը կիրառելուց հետո կատարելով դերերի փոփոխումներ, խաղը նույնությամբ շարունակում էին։

Ա.Ա., I, 97—98

Ջ. ՎԱՆԱԿԱՆ ԱՐԵՂԱԹՈՂԻ ԽԱՂԵՐ

Վանական կենարաններում հոգևորականության կողմից խաղացվող «արեգաթողի» ներկա խաղերը բարեկենդանյան տոներին՝ եզակի նյութեր են։ Դրանք հայ թատրոնի պատմության մեջ ավելի հին անցյալ ունեն, քան եկեղեցական որոշ արարողություններ, որ օգտագործում են թատրոնի պատմարանները։

Ուշագրավ հարցեր շոշափող այդ նյութերի առաջին դրառողը Պ. Պռոշյանն է։ Նա դրանք օգտագործել է «Հացի խնդիր» վեպում։ Վերջինիս հետևել է Վահան Վ. Տեր-Մինասյանը։

67. ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԵՎ ԱՐԵՂԱԹՈՂ

Վանականներու համար եթե կա ուրախության միակ օր մը, Բուն բարեկենդանի օրն է, որ կըսվի Արեղաթող, այսինքն թե, այն օրը թողված ու ձգված է արեղայությունը՝ վանական տխուր կյանքը։

Ո՛վ են սա լամուկներն ու նունուկները, որոնք հով ի հով գեպ ի վանք կը վազեն, սեյիր ընելու համար վանական պապուկներու խաղերն ու զվարճությունները, մանավանդ թափորը, որ կազմված է շքեղապես Ջահերով և մոմերով վանքին գավիթը լուսավառ է։ Հոն է դահավորակը, որուն չորս ձողերուն կախված կան կանթեղներ։ Չորս մոմակալներ կը բերեն տիկը և կը դնեն դահա-

վորակին վրա, ուր քրջերով կարկտուն ամպ-հովանիի տակ փառահեղ բազմած է Թափորապետ-մեծավորը Թըմբե չաթալ-թաղ ի պլուխ և ի ձեռին չոր խոտերե հյուսված ու բակտրե ներկված գավազան մը։ Հագուստն է Թըմբե շուրջառ և դիմակն է մուր և մորուքն է ոչխարի գմակ մը։

Հեռվեն ձայներ կը լսվին. աշուղներն են, որ եկեր են Աբեղաթողը սազել, երգել և հանդեսը սկսիլ նախ սա հոգենվագ տաղով.—«Սուրբ, սուրբ, տեր զորութեանց. լի են երկինք և երկիր փառօք քով. օրհնութի՛ւն ի բարձունս»։

Եվ վանքին ներսեն անուշիկ անուշիկ սա ձայները կը լսվին.

Թասերըն չինի[1],
Կարմըրիկ դինի,
Ձեզ անուշ լինի։
Ջոր մազեն համեղ,
Գինին է զորեղ,
Դուք անուշ արեք։
Տաղերըն կանչեք,
Սաղերըն ածեք.
Ծափ արվեք, պարեք։
Ղապլու խորովու,
Հավու քապափներ,
Խաշլամա գառըն,
Էս մեջլիսումըն.
Տըխուր ու գառըն,
Մարդ չինի դառըն.
Թասերն շարած,
Ողջ ոսկեջըրած,
Ծըմոդն է օրհնած։

Այս է կարգ Թափորի հավուրն աբեղաթողի[2].

Խումբ պապաններու (աշխարհական միաբան),
Պար մոնթերու (փոքրավոր),
Դաս սարկավագներու,
Պար վարդապետներու։

Գահավորակին կը լծվին չորս սիրացուներ, որոնց մին ձայնեց.

— Օրհնյա՛, տե՛ր։

Հանդիսապետը տիկն ի ձեռին կաղաղակե.

— Այս է այն տիկը, որմե խմեց Նոյ Նահապետ. խմեց ու գինովցավ. ան ըրավ առաջին աբեղաթողը. մերկացա՛վ։

Եվ ահա աղաղակներ կը գորգոռան.

— Փա՛ռք ի բարձունս աստուծո։

Եվ ահա մի առ մի բոլոր հանդիսավորները տիկն կը խմեն երգելով.

— Եվ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնյալ ես տեր աստվա՛ծ մեր, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ։

Գահավորակը կը հառաջանա դեպի արև վելք և աշուղները կերգեն սա տողերը.

Թողեր են ավետրան,
Աւեր են թամպուրան։

Վանականները, իրը թե կը բարկանան, կը հարձակին, այլ աշուղները կը դիմադրեն և կռփամարտութիւնը կը շարունակվի, մինչև որ կը լսվի.

— Խաղաղութի՛ւն ամենեցուն։

Հանդիսապետին ձայնն է այս, որ կը հավելու.

— Խմեցեք տիկեն. Նոյ Նահապետի այդպիսի գինին էր, զոր խմեց Քրիստոս։

Գահավորակը կը հառաջանա դեպ արևմուտք, հարավ և հետո հյուսիս, ուր աշուղները կը սկսին պախարակել, նշավակել հանդիսականները՝ երգելով.

— Էն դիզան, բետ բետ դիզան,
տեսեք թե էն ո՞րն է.
— Էն դիզան, բետ բետ դիզան
գեղի համբեքն է։
— Կատուներ մըռըլտալեն՝
տեսեք թե էն ո՞րն է.
— Կատուներ մըռըլտալեն՝
վարդապետներն է։
— Կաքվըներ կըղկըղալեն՝
տեսեք թե էն ո՞րն է.
— Կաքվընները կըղկըղալեն՝ էրիցներն է։

---

1 Վահան վ. Տեր-Միհայեանը Մս. 1901, էջ 86 Նաղաշ Հովնաթանի այս բանաստեղծութիւնը սխալմամբ վերագրել է Մկրտիչ Նաղաշին։ Կազմող։

2 Չեռագիր տետրակ ի Սիս և ի Սևան։ Ծան. բան.

— Ճնճղուկներ ճվըլըտալեն՝
տեսեք թե էն ո՞րն է.
— Ճնճղուկներ ճվըլըտալեն՝ սարկըվեկ-
ներն է....:
— Ջախաւվել եաին դրան՝ տեսեք թե էն
ո՞րն է.
— Ջախաւվել եաին դրան՝ էն մկներն է:
— Մուկն եկաւ ալըրթաթախ՝
տեսեք թե էն ո՞րն է.
— Մուկն եկաւ ալըրթաթախ՝ էն
ջախացըպանն է:
— Մորուք փետուած, աչեր շլցած,
տեսեք թե էն ո՞րն է.
— Մորուք փետուած, աչեր շլցած,
էն մեծավորն է,
Վանքին հասա գերանն է, մեծ փորն է:

Այս անգամ վանականներն ա՛լ ավելի կը կատղին, այս նախատինքներուն ի լուր զայրույթ կը բրդի, աշուղներուն կը փաթթվին, կըմբշամարտին. ա՛լ տեսնել պետք է խաղերու տեսակները: Սարեն, ձորեն, դաշտեն, եկվորներ, ուրախ են, զվարթ են...: Այդ սակայն մեկ ուրիշ տեսարան. հոն, վիր տանիքին՝ ծերուկ վանականները սեղան նստած են. յուրաքանչյուրն իր առջև ունենալով տապկած կարավ և դինիի բզուկներ, կուտեն, կը խմեն, վարը սեյիր կընեն և կեղտանակեն սա շատ հին երգը.

Նստյալ կայր և յայր կաթավուկն
Ի վերա քարին, ա՛յ հավեր,
Ու դանդատ կաներ ձագերուն,
Թռչունք, ա՛յ հավեր:
Ի բարձր լերունք եկա
Ի կանաչ մարգեր նայեցա, ա՛յ հավեր,
Իջի, ի ձորակն ընկա:
Զայս իմ դուխդուխն փետուր,
Մեկն ի սար արին, մեկն ի ձոր, ա՛յ հավեր,
Զայն, որ ի սարեն ընկեր,
Զայն, իջեր քամիկն ու տարեր:
Զայն, որ ի ձորեն ընկեր,
Զայն իջեր ու հեղեղն էր տարեր,
ա՛յ հավեր:

...Բովանդակ այս բարեկենդանական օրերուն մեջ ոչ մեկ տուն ուրախութենեն, կերուխումեն մաւրում կը մնա: Երեկույթներ կան, այսինքն խնջույքներ, որոնք կրավին սրտայապատիվ: Աղքատիկներն ալ կը մասնակցին, վասն զի աշուղները կը սազեն, և կը պնդեն թե այն օրվան մատաղին ու հացին անոնք ալ բաժնեկից են:

Տըմպըլ սրմպըլ թամպուրեն[3]
Առա ելա տանիքեն:
Խաղ կանչեցի ցնծալեն,
Ջախ ձըդեցի դես ու դեն:
Աղբեր, աղբեր, էս գեղուն,
Ի՞նչ էս բարձեր վեր իշուն,
Ո՞ւր կը տանիս.—Բըղեղուն:
Բղեղ հոև սարերուն,
Բուրդ կը գրվի գառներուն,
Ճամբեն մանե որբերուն,
Գեշ չդպնի մեր էծուն,
Մեռնիմ ես քը մեր էծուն:
Ուլ մի ունի ճըտպըտուն,
Գրկեմ տանիմ ժամի տուն,
Մատաղ անեմ ատրճուն,
Բահ ու բրիչս վերի տուն,
Խաչ գավազան իմ դլխուն:

ՏՄՎ. Մա., 1901, էջ 86—87

68. Ա Բ Ե Դ Ա Ք Ո Դ

Բարեկենդանի վերջին 3 օրը, որ արևպտիղ է կոչվում, երուսաղեմում հետևյալ կերպ էր անցնում:

Ճոխ սեղանից վեր կենալով, առանց ատաձեռնների խորության, մյաբաններն սկըսում էին երգել, պարել և ապա բավոր կատարել: Ամենահետաքրքրականը այս բավորն էր, որ կատարվում էր այսպես:

Քվեարկությամբ ընտրում էին մի բախտապետ, որը գլխին դնում էր թղթե ահագին չաթալ—թագ, վրան գցում մի թղթե շուրջառ, սրա վրա խոշոր տառերով գրվում էին բո-

3 Խարբերդական է այս երգը և այլուր փոխադրությամբ: Ման. բան.

լոր միաբանների անունները. ձեռքին առնում էր չոր խոտերից հյուսված և քակորով ծեփված մի գավազան: Հանդիսավոր կերպով նա նստում էր մի դահավորակի վրա, որի տակից ձողեր անցկացնելով չորս տիրացուներ բարձրացնում էին, դնում իրենց ուսերին: Բոլոր շրջապատողները վերցնում էին իրենց ձեռներին վառած մոմեր ու ճրագներ և «Որ վերօրհնիս» շարականը՝ «Քրիստոսի էշով երուսաղեմ մտնելուն ի հիշատակ դրված Ծաղկազարդի շարականը» երգելով առաջ շարժվում: Երբ այս թափորը մտնում էր աբեղանների թաղը, արևմուտք դառնալով երգում էին.

«Ամեն. ալելուիա, ալելուիա»:

Այդ ժամանակ սարկավագներից կամ տիրացուներից մեկը բարձրաձայն հարց էր տալիս թափորապետին, թե ինչո՞ւ էր կատարվում այդ հանդիսը: Եվ նա գոռ ձայնով պատասխանում էր.

«Օրհնեսցի և պահպանեսցի կարաս վանքիս, վասնզի ասված օրհնեց Նոյը, առաջին անգամ աբեղաթող ան ընելուն համար. և գայթակղեցավ Քամ, երբ տեսավ, որ իր դինով հայրը մերկ կը ննջե»:

Այդ միջոցին մի ուրիշ սարկավագ հարցնում էր, թե «Նոյին ի՞նչ պատիժ առավ Քամ, ծաղրելուն համար յուր հայրը», թափորապետը միաբաններից մեկի անունը տալով լրջությամբ ասում էր.

«Այսինչին պես սեցավ»:

Բոլորը այդ միաբանի երեսին նայում և ծիծաղում էին:

Թափորը նորից շարժվում էր և արևելյան կողմը կանգնում: Թափորապետն օրհնում էր.

«Օրհնեսցի և պահպանեսցի աղաման վանքիս այս նշանավ սուրբ խաչիս,—խաչակնքելով,—և շնորհիվ խաղք-խայտառակ աբեղաթող ավուրս»:

Միաբանները ձայնակցում էին.

«Անվամբ Հոր և որդվո և հոգվույն սրբո այժմ և միշտ և հավիտյանս, հավիտենից: Ամեն. ալելուիա, ալելուիա, ալելուիա»:

Սարկավագը կամ տիրացուն նորից էր հարցնում թափորապետին, թե «Ստո՞ւգ է ժողովածուին գրվածը, թե Նեռը, այսինքն աստ Քրիստոսը, Ղովտի աղի արձան եղած կնիկին պիտի ծնի»:

«Ո՛չ, պատասխանում էր թափորապետը. և տալով մի ուրիշ միաբանի անուն, ավելացնում՝ այսինչեն պիտի ծնի»:

Նորից ծափ ու ծիծաղ:

«Ամեն. ալելուիա, ալելուիա, ալելուիա»:

Հետո դառնում, գալիս էին դեպի հյուսիս, ուր թափորապետը կրկին օրհնում էր.

«Օրհնեսցի և պահպանեսցի ցորենս շատ-մարան վանքիս այս նշանավ...» և այլն:

Սարկավագը կամ տիրացուն նորից էր հարցնում.

«Ո՞վ էր ան, որ աստուծո օրհնած հացը—մանանան փորձեց պահել ուրիշ օրերու համար և որդնոտեցավ»:

«Այսինչն էր»:

Նորից ծիծաղ ու ծափեր:

«Ամեն. ալելուիա, ալելուիա, ալելուիա»:

Թափորապետը հետո հարավն էր օրհնում, դոշելով.

«Օրհնեսցի և պահպանեսցի աղբյուր և առու վանքիս այս նշանավ» և այլն:

Նորից սարկավագը կամ տիրացուն հարցնում էր.

«Ո՞վ Հորդանանու ջուրն իբր դեղ բժշկության ծաղրելուն համար բորոտեցավ»:

«Այսինչն էր»:

Վերջապես երգում էին «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականը, որից հետո սարկավագը թափորապետին դիմելով գոչում էր.

«Օրհնյա, տեր»:

Թափորապետը պատասխանում էր.

«Հրամայալ է քեզ ի տյառնեն խոսիլ»:

Սարկավագը հարցնում էր.

«Երբ այս վանքին հիմերը դրվեցան և պարիսպները շինվեցան, ո՞ւր էիր դուն»:

«Դժոխքին մեջ»:

«Վա՛յ, ուրեմն դուն դժոխքեն փախած ու հոս եկա՞ծ, ուրեմն արժանի պատժո»:

Ապա աղաղակելով, դահավորակը կործանում էին:

Այդ միջոցին թափորապետը մնում էր ձեռնում, ուստի և վերցնում էին ու արարողությունը կատարելով տանում զերեզմանատուն՝ իր թաղելու։ Վանապետը, եպիսկոպոսը կամ վարդապետը վրա էր հասնում և աղաղակում.

«Դազարե, արի, ե՛լ արտաքս»։

Թափորապետն իսկույն ելնում էր գերեզմանից, համարյա մերկ, պատանքով պատած և ականատեսները իրր ահաբեկված փախչում էին վանքը, որով և վերջանում էր արհեստ-յողի հանդեսը։

ԱԳ. II. 67—70։

69. ԱԲՆԱԹՈՂ

—...Տանուտե՛ր,— ասաց [աշտարակցի] երիտասարդը.— պարտեռնիր, թե [էջմիածնում, բարեկենդանի վերջին շաբաթվա ընթացքում] էն մենծ-մենծ սիպտակ մելքա-վոր եպիսկոպոսներն ու վարդապետները ո՞նց էին փեշերը քշում, աթոռա [իծաշա-րուկ] խաղում ֆարշի վրա. գոռգոռոցն ընշանք գետն էր գնում, ձնծռփով հենց էին իրար գլխի կպցնում, որ վեղարը թռչում էր, ու թե որ լսեիք՝ ի՞նչ պետս պետս խոսքեր էին ասում, որ ես ամաչում եմ։

— Ոչի՛նչ, բարեկենդան օրեր ա, նրանց խելքն էլ կորել ա, էս քանի օրս արեգա-թող ա։

ՊՀԽ, I, 342

70. ԽԱՆ

[Բարեկենդանի վերջին շաբաթն է։ Աշ-տարակցի Ղուկոն խանի դերն ստանձնած՝ գնացել է էջմիածին, բարեկենդանու խաղ խաղալու նպատակով]։

— Ա՛յ տղեք, երեք օր ա մեր Ղուկոն խան դառած՝ գնացել ա գեղերը, ըսկի խա-բար ունի՞ք թե չէ, ո՞ր մնաց, հետո էլ խելի ջահել-ջուհուներ կան,— հարցրեց տանուտե-րը փոքրեցոց գնալուց հետո։

— Ղուկոն երեկ էջմիածնում էր,— պա-տասխանեց մի երիտասարդ.— շատ քեֆ շանց ավեց, կոտորեց ամենքին ու թողեց ծեծատցնելով. էջմիածնի դռանը ֆարշի (աբրահատակ) վոտ սիրու էր դնել ավել, վրեն բազմել, էշն էլ մի վարդապետի էր բռնել տվել. մի քանի եպիսկոպոսներ կապո-տեց, իր համար շատ ըմծներ առնելուց ետը, հրամայում էր թվանքչոնցն էլ բան բաշխել. մեր տղեքնցը ետ էր կաննացրել՝ թվանք-չոնցն էր նապիր-վեպիր շինել. դուք, ասում ա, սոխոր եք տերտեր—վարդապետի կապե-լու։

— Ես որ ասում եմ Ղուկոն զոչաղ ա՞, էս բրզարևրան ջամաղակեր փարբեցոց պես չի՞. ախար աշտարակցի յա, մեզ ո՞վ կհասնի,— սլաթծեցավ մեկը։

— Հետո ի՞նչ փեշբյաշներ էին տալիս վարդապետները։

— Թոփերով դումբնիք ու շամու ալաջեք էր առնում, որիցը մի երեսարրիչ. մեկելիցը չախու. մեկի միջքիցն էլ մի լավ շալ գոտիկ ետ արեց։

— Ապրի՛ ինքը, նրանց հախն ա, տարին տասներկու ամիս նրանք են ուրիշից մուֆտա ուտում, թող մի օր էլ իրանք տան։

ՊՀԽ, I, 341—342

71. [ՄԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ]

Անցած տարիներին մի զվարճասեր մարդ հետևյալ խաղը խաղաց դավառիս փոխա-ռաջնորդի և զոզիի գլխին. կանացի հան-դերձներ հագած և երեխայի շորեր հագցրած մի շան լակոտ գրկելով՝ նախ ներկայացավ վարդապետին և պահանջեց, որ նա իր հան-ցավոր ամուսնուն կարգի հրավիրի, որովհետև նա անիրավորեն իրեն տիրություն չի անում և գցել է փողոցները։

Մինչ վարդապետը հրամաններ էր արձա-կում, «մայրը» իր «որդու» լացը կտրելու հա-մար մի զոմփ իջեցրեց լակոտի գլխին և սա վժալով ընկավ վարդապետի առաջ։ Ներկա գանվողները վարդապետի հետ միասին ծի-ծաղից pnrfung եղան։

Առաչնորդը կամենալով զպլին ևս անմասն չթողնել այս ուրախությունից, պատվիրեց երիտասարդին՝ երբ ինքը կգնա զադուն տեսության, մինչևայն կերպ այեռել ևս ներկայանա և խաղը կրկնի։

Զարաճճի տղան այս անգամ շան լակոտը լավ թրջեց և նույն հանդերձներով ու փոթուլիով ներկայացավ զադուն. վարպետը զատավորին հայտնեց ներկայացող կնոջ Բշվառ դրության մասին և խնդրեց, որ նրա շաբաթօրծ այրը բերվի և տերության օրենքի համեմատ պատժվի։ Դատավորը դեռ Լվեր Լվերն (այո՛, այո՛) էր ասում, երբ կեղծ կինը նորից մի գոմփ իջավ իր «որդու» գլխին և հեռվից գցեց զադու գիրկն ու փախավ։

Հասկանալի էր այժմ զադու վիճակը, որ իր անսովոր շարժումներով ավելի ծիծաղ կշարժեր, քան թրջված շունը։

Այս ու այսպիսի խաղերը ներելի են բարեկենդանի օրերին, որովհետև «աբեղաթողի» օրեր են։ Գյուղացիների ասելով սարի ճգնավորներն անգամ այդ քանի օրը ցած են իջնում և ուրախություններ անում։

ԲԵՆՄԵ. Ա.Հ, VI, 62—63

II. ՏՈՆԱԿԱՆ ԾԻՍԱԽԱՂԵՐ, ՉՎԱՐՃԱՆՔՆԵՐ ՈՒ ԺԱՄԱՆՑՆԵՐ

Տոնական ծիսախաղերը, զվարճանքներն ու ժամանցի ձևերը, որ կազմում են նախորդ ծիսախաղերի դուպահենները, նրանցից տարբերվում են մի պլխավոր հատկությամբ՝ առավել սառնակ վիճակով։ Այդ պատճառով էլ սրանք չեն կարող համարձակ լինել այնպիսի գաղափարական նշանակություն ունեցող ծիսախաղերին, որպիսիք, ասենք, հանդիսանում են «խան-փաշաները», «զատավարությունները», «աբեղաթողները» և այլն։ Կապված լինելով, սակայն, ժողովրդական տոների հետ, այս զվարճախաղերի մեծ մասը նշանակալից դեր է խաղացել ժողովրդի կյանքում։

Ազգագրության համար նշանակալից է սույն ծիսախաղերի դերը մի շարք տեսակետներից։ Մենք նկատի ունենք՝

ա. Հայ դիցաբանության պատմությունը, որը մեզ մոտ տակավին խորազնին քննության չի արժանացել։ Բանասիրությունը գրավոր, խմբագրված ու աղավաղված նյութերին տվելի է վստահել, քան ծիսական կարգերին ու բանահյուսությանը, որոնք փաստորեն նախնականը պահպանող ամենավստահելի աղբյուրներն են։ Ինչ խոսք, որ այդ բանի մեջ մենք չենք բացառում պատմության հետագա էտապների նստվածքները, որոնք պետք է տեսնել։

բ. Հայ բանդակագործական, կիրառական արվեստի պատմությունը, որի վրա տակավին պատշաճ ուշադրություն չի դարձվել։ Հնագիտության միջոցով ստացված նախատարատական, ուրարատական և բուն հայկական քանդակների զգալի մասի առեղծվածների լուծման կարևոր բանալիներից մեկն են այն ծիսախաղերը, որոնց դերակատարներն անխուսափելիորեն ենթադրում էին կերպարանափոխում՝ կենդանական և երևակայական էակների ձևերի ընդունում։ Ինչ որ ծեսով է արվել կենդանի դերակատարի հետ, անտարակույս նույնն է արվել նաև քանդակագործական նախնական արվեստի մեջ։ Վերջիններիս տեղայնության հարցն այս պարագայում ամենից առաջ պետք է որոնել դրանց կապի մեջ։

գ. Հայ թատրոնի պատմությունը, որի մեջ այս տնային՝ շրջիկ դրամատիկական խաղերը կարևոր դեր պիտի խաղային վերծանելու համար հնագիտության, պատմության ու ազգագրության մեջ մի շարք առեղծվածներ։ Մենք նկատի ունենք մասնավորապես ժեստերը—շարժման ձևերը, որոնց

լեզուն կարդալու համար թատրոնի պատմաբանը չի կարող խուսափել այն շարժուձևերից, որոնք հատուկ էին ծիսակատարության ժամանակ բոլոր «դերասաններին» (միմիկա, ձեռքերը և ոտքերը պարզելու ձևեր, իրանի դիրքը, տարազը, ագանելիքը, զվխարկը և այլն):

դ. Տոտեմիզմն ու ֆետիշիզմը և կապը որոշ ծիսախաղերում դերակատարների զգեստավորման ու կերպարանափոխման հետ:

ե. Ագրարային պաշտամունքների վերծանման պատմությունը, որի գծով ևս շատ ուսումնասիրություններ կան: Ժողովրդի մեջ մինչև XX դարի սկզբները պահպանված էին հողին, ջրին, երկնքին ու երկնային մարմիններին վերաբերող բազմաթիվ հավատալիքներ ու պաշտամունքի հետքեր:

զ. Սեռա-հասակային դասակարգումների պատմությունը, որին մենք, այս աշխատության ներածական մասում, անդրադարձել ենք լոկ ակնարկային ձևով: Այս գծով մենք շատ մեծ դեր ենք վերագրում առնական շրջիկ խաղերին, որոնք հատկապես տղաների խաղեր էին և որոնք դեռևս անբավարար են հավաքված:

Ա.

72. ԿԱԼԱՆԴՈՍ

Նոր Նախիջևանում Նոր տարվա երեկոյան դեմ լսվում էր «կալանդոս» երգող երեխաների ձայները. սրանք խումբ խումբ անից տուն տուն էին գալիս, երգելով շնորհավորում կալանդը և գաթա, սամսա, խալաջ ու փող էին հավաքում: Քաղաքում «կալանդոսը» երգում էին դեկտեմբերի 31-ի առավոտից մինչև երեկո և, որ ուշագրավ էր, հայ երեխաները երգում էին և՛ հայերենը, և՛ ռուսերենը, իսկ ռուս երեխաները՝ և՛ ռուսերենը, և՛ հայերենը:

Գյուղերում «կալանդոսն» այսպես էին երգում:

Կալանդոս, դոս, դոս,
Ամեն տարի բարով հասնինք.
Շնորհավոր Նոր տարի,
Նոր յանկալիս տուն բերի,
Շալե շապիկ հագուցի,
Քերմե գոտի կապեցի,
Խալաջ տվեք:

Իսկ քաղաքայինը հետևյալն էր.

Կալանդոս, դոս, դոս,
Կալանդոսը էկիլ է,
Դուռին տակը կայնիլ է,
Շալե շապիկ հագիլ է,
Կարմիր գոտի կապիլ է,
Մեկ ավուճին խայիլ է:

ՆՇ. Ա.Հ, IX,7—8 (Ննթջ.)

73. [ԿԱՂԱՆԴ ԿԱՆՉԵԼ]

Դեկտեմբերի 31-ին Ակնի աղքատ երեխաները խմբերով շրջում էին տնետուն և երգով կաղանդ էին կանչում:

Ասօր կա՞խ է,
Առուն կաղնո՞տ է.
Ձեր մեռելտացը հողուն տվե՞ք,
Ուր(որ) դա:
Տա՛նտիկին, տա՛նտիկին.
Ելի՛, գնա՛ մարագն ի վար,
Կարճ բռնե՛,
Երկան կտրե՛,
Կամբցուկ ուր մատդ չի կըլնա (կտրես).
Ո՛վ ուր չի տա՝
Հավերուն տոտո՛ղը չորնա:

ՃՀԱ, 103

74. ԽԼՎԻԿ

Սալմաստում Խլվիկ էր կոչվում 8—12 տարեկան երեխաների այն խումբը, որը Խլվիկի առնին՝ Նավասարդին այցելելով հա-

մագլուզացիներին, երդիկներից գուլպա կախելով և նվերներ պահանջելով երգում էր.

Ակլե մարեմ, մարեմ, մարեմ,
Ձեր տղայի սոլը կարեմ,
Ջամիչ ավեք՝ ատամներս շարեմ,
Ընկեղ ավեք՝ գլուխս ճարթեմ,
Փշատ ավեք՝ փորս լարեմ,
Շաքար ավեք՝ չայ խմեմ,
Պնդուկ ավեք՝ սիրտս ուզելի,
Կարկատ ավեք՝ փորս լցնեմ,
Քյոխվա, տանտեր, մի խնայի,
Ատամած ձեր խարան ու
վհատան պախի:

Ս. Արձ., 1893, № 1

75. ԱԿԼԱՄԱՐԵՄ


Վաղարշապատի Հայթաղ գյուղում (Ուրմիայի կերատապատիներ) ոչառնընդառաջին երեխաները շրջում և երդիկներից գուլպա կախելով երգում էին.

Ակլա՛ մարե՞մ, ակլա մարե՞մ,
Ձեր խարտու (կամ տղայի) սոլերը
կարեմ.
Ջամիչ ավեքյ փո՛րս լցնեմ,
Փշատ ավեքյ, կլոխ կոռեմ,
Ջու ավեքյ ճակատս կոռեմ,
Եղ ավեքյ չո՛րս քյցեմ.
— Կաղապի լաճ, ձեր խարտու
անունն ի՞նչ ի:
— Ասլիհան ի:
— Ասլիհանը բախտս նստի.
Աչ ծեռը չո՛րը տանի,
Մարդասին Ակլամարեն առնի,
Դեր աուշմրնի աշկը հանի,
Ուտենքյ, խմենքյ, քեփ անենքյ:

ՀԱՎ., № 106, էջ 109

76. ԱՎԵՏԻՍ


Վանում մինչև անցյալ դարի վերջերը ծրնընդյան և խթման ճրագալույցին երեխաները խմբեր կազմած, անեռաուն ման էին գալիս և «ավետիսներ» երգում: Յուրաքանչյուր խումբ ունենում էր մի երկարավիզ չոր դդում, նկարակերպ անցքերով (նկ. 39ա): Դդմի



Նկ. 39ա. Նկարակերպ անցքերով չոր դդումը ճրագով (բնագիրը՝ № 76)
Նկ. Ա. Պատրիկի

մեջ մի վառ ճրագ էին դնում, որի լույսը այդ անցքերից փայլփլում էր դիշերվա խավարում (ԹՍ. ԱՄԼ, XI, 584, ձ. № 4184, էջ 47ա): Շատախում այդ ամանը պատրաստում էին նաև կավից: Սրա պարանոցի հավելվածները խաչ էին կազմում (նկ. 39բ): Ամանի փորանցքները նույնպես խաչաձև էին լինում (Բ. Ժո. ձ.): Երեխաները այդ ամանը ճրագով հանդերձ կախում էին երդիկից ներս և երգելուց հետո կաթնամթերքներ, հատիկներ և չոր մրգեր սառնալով հեռանում էին: Վարանդայում սովորության համաձայն երեք հոգի բարձրանում էին կտուրը, երկուսը պրիո էին ածում, իսկ երրորդը ճրագը ճվարանով կախում էր երդիկից ցած ու երգում էր և բաժին սառնում (Արրատ. XII, 469): Ջանգեզուրում ծննդյան երեկոյին երեխաները խմբեր կազմած շրջում էին տները «ավետիս» ասելու: «Շուն բախտը» մահակը ձեռին առաջ էր ընկնում: Նրան հետևում էին երկու

կամ երեք երեխա, որ եկեղեցական շապիկի փոխարեն իրենց մայրերի շապիկներն էին հագնում։ Սպա գնում էին՝ «ալլուր տանողը»՝



Նկ. 39բ. Գդմաձև կավաման խաչաձև անցքերով և ճրագով (ընդհատը՝ № 76)
Նկ. Ա. Պատրիկի

տոպրակը շալակին և «ձու հավաքողը»՝ սալան գլխին։ Մանելով մի տուն, նրանք ձախ ու ծուռ երգում էին և մի բան տանելով դուրս գալիս, ուրիշ տուն մտնում (ել. ԱՀ, IV, 106)։

Ստորև ներկայացնում ենք «ավետիս»-ի երգերի մի քանի նմուշ, վերցված տարբեր գավառներից։

77. ԱԼԵԼՈՒՅԱ

Յրնծացե՛ք ուրախացե՛ք, ալելուիա։
Այսօր տան էր Մարիամա, ալելուիա.
Մարիամ գընաց դուռն ի յէրին, ալելուիա,
Քամակն ի զարկ խաչաբարին, ալելուիա,
Ծընաւ ի բեր Հիսուս որդին, ալելուիա,
Երնե՛կ է քե պոռնի՛կ Մարիամ, ալելուիա,
Որ Քրիստոսին գադմեր եղար, ալելուիա,
Երնեկ է քե, բո՛ւրդ խանձարուր, ալելուիա,
Որ Քրիստոս մեջ քե փաթաւիեցին, ալելուիա,
Երնեկ է քե, քարե՛ մրսուր, ալելուիա,
Որ Քրիստոս մեջ քե ծվարեցին, ալելուիա,
Երնեկ է քե սի՛նդ ծանոթմակ, ալելուիա,
Որ Քրիստոս մեջ քե օրորիցին, ալելուիա,
Երնեկ է քե, Մա՛րիամ Յովսա, ալելուիա,
Որ Քրիստոսին օրոր ասեր, ալելուիա,
Երնեկ է քե, կո՛ւյս Մարիամ, ալելուիա,
Որ թագավորներ քե տես էկան, ալելուիա,
Երնեկ է քե, սըրբ Ովանես, ալելուիա,
Որ Քրիստոսին քաւոր եղար, ալելուիա,
Երնեկ է քե, դե՛տ Որդանես, ալելուիա,
Որ Քրիստոս մեջ քե մկրտեցին, ալելուիա,
Երնեկ էր էն տարին, էս տարին, ալելուիա,
Որ երուսաղեմ շինեցին.
Շինեցին, թամամեցին, ալելուիա,
Սունն ու գերան պակսեցուցին, ալելուիա,
Ծառին զարնեն ծառ կը ճրչա, ալելուիա,
Սղոց քաշեն, յարուն ֆրշա, ալելուիա,
Ով որ հիսուս երեք բերան հիշա, ալելուիա,
Յուր հար մոր մեղք դատաստանին առտւած չհիշա, ալելուիա։

(Երբ երգը այստեղ էր հասնում, հարցնում էին տան երեխայի անունը. սակայն ինչ պատասխանը լինում էր Ներսես)։

Ներսեսը ճամի էր ճրթացավ, ալելուիա,
Յուր զավատեքն ամբրալատավ, ալելուիա,
Հերը կերավ ուրախացավ, ալելուիա,
Մերը կերավ անմահացավ, ալելուիա,
Աղբեր կերավ վեր վեր թրռավ, ալելուիա,
Քույրը կերավ ինկավ ծոնիր,
կոան երեցավ, ալելուիա,
Ներսես նստեր ծառի հովին, ալելուիա,
Բրոչամ թալեր կանանչ ճյուղին, ալելուիա,
Առջև զրեր բոլոր սինին, ալելուիա,
վըրեն ելին հազար բարին, ալելուիա,
Կը թխեն ի՝ ձեռն նըռան գինին, ալելուիա,
Օձու լեզուն երկու ճղեն, ալելուիա,
Մեկն էր չարոց, մեկն էր բարոց, ալելուիա,
Չարոցն երթեր վեր սարերաց, ալելուիա,
Բարոցն իջեր վեր ձեր տան վեր, վեր
ձեր տան տեղաց, ալելուիա,

—Մամիկ, մամիկ, ի՞նչ կը բանես, ալելուիա,
—Բուրդ կը գըզեմ, բուրդ կը մանեմ,
ալելուիա,
Սարկավագին շապիկ կարեմ, ալելուիա,
Վարդապետին կընգուղ անեմ, ալելուիա,
—Մամիկ, մամիկ, ես քե ծառա, ալելուիա,
Սոլերդ հագի՛ր, ծող ձըռվըռա, ալելուիա,
Դեհ մառնի դուռ էլիր գընա՛, ալելուիա,
Մենք չենք ուզեր ծի մ՚ ու ջորի մ՚, ալելուիա,
Մենք կուզենք մեր քեֆին գին, ալելուիա,
Մեր քեֆին գին պուտիկ մ՚ գինի։
Թե կուտաք, դուք շեն կենաք,
Թե չեք իտար, դուք շեն կենաք։

ԳՍ. ԱՄԼ., XI, 584—585 (Վ.)
Վար. ՍՀ. ԷԱԺ, VI, 28—29 (Վ.). ԷԱԺ, VI, 27 (Գվշ.). ԷԱԺ, VI, 27—28 (Կրա.). ԷԱԺ, VI, 29 (Նրկ.). Մեղ. Ձ. (Մրա.). ԳԹ, № 361—388 (Զշ). Արբա., XII, 469 (Ավ.) Արբա , XII, 469 (Ճր.). Արբա., XII, 469—470 (Աո.). Արբա., XII, 470 (Հգր.). ԷԱԺ, VI, 26—27 (Մկա.). ԷԱԺ, VI, 25—26 (Նան.)

Բ

78. [ԽՆԿԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ]

Սուրբ Յոհան եպիսկոպոս որդի Փառինայ յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղկատակ լինէր ճոպա, որպէս խաղալով դանձն իւր կրթէր յագահութեան, որում ծառաւեալ պատճառ փափաքէր, սակայն միհատնէաք այն էին նորա։ Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողեր առաջի թագաւորացն, և զուտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով։ Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դիք ի վերայ իմ զմեղս արքայի, ծող բառնամ։ Իսկ թագաւորքն զմուրհակս պիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց առացաւ իւր գեւս և ագարակս և դանձս յուզոն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն։

ՓԲ. ՊՀ, 402—403

Այս Հոհան եպիսկոպոսը, Փառենի որդին, երբ գնում էր Հայոց թագավորների մոտ՝ նրանց խեղկատակն էր դառնում։ Խաղալիք դառնալով նա ագահության էր ձգտում, որին անհագաբար ծարավ էր և (այդ խեղկատակությունները) նրան իբրև միջոց էին ծառայում։ Նա թագավորների առաջ ձեռների ու ոտների վրա բնկնելով չորեքթաթ էր տալիս, ուղտի նման կառաչում էր, ուղտի նման քայլելով։ Կառաչելու ժամանակ մի մի խոսք էր խառնում կառաչելու ձայնով ու ասում էր. «Ուղտ եմ, ուղտ եմ, թագավորի մեղքերը բառնում եմ, վրաս դրեք թագավորի մեղքերը, որ բառնամ»։ Իսկ թագավորները գյուղերի կամ ագարակների պարգևագիրներ գրելով ու կնքելով դնում էին Հոհանի կռնակի վրա իրենց մեղքերի փոխանակ։ Եվ այսպես ուղտ լինելով ու մեղքեր բառնալով նա Հայոց թագավորներից ձեռք բերեց գյուղեր, ագարակներ ու դանձեր։

79. [ՋԻ ԵՎ ՈՒՂՏ ՇԻՆԵԼ]

Ալեքսանդրեն [արևայազն].—*Այլևայլ ազգերը, կարծեմ, այլևայլ կերպ են խաղում։*

Իռնաե.—*Անկասկա՛ծ։ Ասիայում բոլորովին այլ կերպ է... իսկ հայերն ավելի մեզ (վրացիներիս) նման են խաղում։ Օրինակ՝ երբ արքայազունների հարսանիքին կամ մեծ ինջուլքներին հավաքվում էին հայերը, [առանձնապես] համբարների (առնաճների)*

դասից, մարմնից փայտ էին կապում ու չիով ծածկում, գլուխ ու վիզը ձիու նման փայտից շինում և որևէ բանով փաթաթում և վրայից փոքր զանգակներ կախում։ Եվ այսպես էին պարում շատերը։ Եվ շատ դեղեցիկ էին շարժում ոտները. և նրանց տեսքն այնպիսի էր, կարծես թե ձիու վրա էին նստած։ Եվ սա հնուց՝ կռապաշտության ժամանակից էր մնացել հայոց մեջ։ Նույնպես՝ ուղտեր էին շինում կարպետներից և երկու մարդ կանգնեցնում ցածը. ուղտի էր նմանվում. և սրանք ևս զուռնա-դափը նվագելով հրաշալի կերպով պարում էին և փախչելիս ուղտերին նմանվում։ Այսպես համապատասխան դեպքերում և բարեկենդանի շաբթին էին խաղում...[2]։

ԼՄԲ, III, 241

80. Ո Ւ Ղ Տ—Ո Ւ Ղ Տ

Ախալքալաքի Փ. Խանշալլի գյուղում բարեկենդանի օրերին երկու կամ երեք երիտասարդ տղաներ ուղտ ձևացնելու նպատակով իրար կոնքից բռնում, կռանում էին։ Սապատը ձևացնելու համար դրանց մեջքին մի փոքրիկ կողով էին դնում ու հին վերմակով ծածկում։ Ապա այդ բոլորի վրա, բուրդը դեպի դուրսն արած, գցում էին ուղտագույն մուշտակներ։ Կռացողներից առաջինը վերցնում էր երկարաթաթ մի կացին և մտցնում մուշտակի թևերից մեկի մեջ։ Կացնի պոչով ձևացվում էր ուղտի պարանոցը, իսկ թաթով՝ գլուխը։ Մուշտակի թևարերանը մի փոքր կախ էին թողնում, որը ներկայացնում էր ուղտի կախ ընկած շուրթը։ Այնուհետև զանգը կախում էին ուղտի պարանոցից, որպեսզի այն հետևից հետու ահագանգեր նրա գալուստը։

Ուղտը տեր էր ունենում, որը պարանով սանձում էր և առաջնորդում տնից տուն։ Այս ձևով նա մուտք էր գործում գյուղի հատկապես այն տները, որտեղ գիշերային խնջույք և տնային խաղեր կազմակերպած ունևոր տանտիքները, համախմբված մի տեղ, «բարեկենդան-փորեկենդան» էին անում։

Տիրոջ կողմից առաջնորդվելով դոմի օդաները, ուղտը (առջևի դերակատարը) ուղտանման կառանչում էր և գլուխն ու պարանոցը զանգով ճոճելով աջ ու ձախ, ահազդեցիկ ձևեր էր անում։ Նրա մուտքը իսկույն շեղում էր տվյալ ընտանիքի ժամանցի եղանակը։ Երեխաները սարսափահար ընկնում էին մեծերի գիրկը։ Կանայք ճչում էին, երբ ուղտը փորձում էր իրենց կծել կամ երեխա կուլ տալ։

Ի հեճուկս «խածան» ուղտի, պատանիները երգեցիկ ձայնով ասում էին.

Մուկը անկաճ ունի,
Ուղտը չունի՛,
Մուկը անկաճ ունի,
Ուղտը չունի՛....

Եվ որովհետև ուղտը «հասկանում» էր նրանց այդ արհամարհական խոսքերը, կառանչում, հարձակվում էր նրանց վրա ու ահաբեկում էր։ Ուրախ ծիծաղը և ահաբեկման աղաղակները խառնվում էին իրար։

Ուղտը տիրոջ հետևյալ երգով ուղտապար էր խաղում՝ ճոճվում էր, զանգ էր զրնգացնում, առաջ էր գալիս ու ետ գնում։

Դա՛վա՛լի՛ ջան, դա՛վա՛լի՛,
Է՛րկո՛ւս քը՛նա՛, մե՛կ ա՛րի՛.
Դա՛վա՛լի՛ ջան, դա՛վա՛լի՛,
Է՛րկո՛ւս քը՛նա՛, մե՛կ ա՛րի՛։

Ուղտախաղը տևում էր 10—15 րոպե, որի համար ուղտատերը նախապես պայմանավորված լինելով, տանտիրոջից որևէ նվեր էր ստանում։ Երբ ուղտախաղը գյուղում ավարտվում էր, դերակատարները հավաքած միջոցներով խնջույք էին կազմակերպում։

Վ. Ժա. Ա.

81. Դ Ա Վ Ա Շ Ի Ն Ե Լ

(Խոշաբի Քռել գյուղում բարեկենդանին) երկու զույգ միջահասակ՝ երիտասարդներ կանգնում էին իրարից երեք քայլ հեռու, և-

2 Խոսքը այսպես կոչված «Ղեննոթա»-ի մասին է։ Ծան. ԼՄԲ. III, 259



Նկ. 40. Ուղտախաղը Վասպուրականում
Նկ. Տ. Թորամայեանի

բեռները դեպի առաջ, ձևացնելով ուղտի առջևի և հետևի մասերը: Երկու ավելի բարձրահասակ տղաներ կանգնում էին հիշյալ զույգերի մեջ՝ կապմելով ուղտի սապատը: Առավել բարձրահասակ մեկը կանգնում էր առջևում՝ ուղտի պարանոցի ու գլխի տեղում: Սրա ձեռներին կապում էին երկու շերեփ: Ջուգահեռ ձևով վեր բարձրացնելով ձեռները և շերեփներն իրար մոտեցնելով (ներսից), վերջինս դոյացնում էր ուղտի բերանը: Այնուհետև կմախքը ծածկում, կապկպում էին ոչխարի մորթիներով, որով նա սկսում էր նմանվել կենդանի ուղտի: Զարդարում-սարքավորում էին նաև ուղտի սանձը, թամքը, պանդակները:

Ուղտապանը բռնում էր սանձից և կամաց կամաց առաջ շարժվում: Ուղտի շերեփ-բերանը բաց ու խուփ անելով, օրոր-շորոր հետևում էր նրան: Ուղտի քայլքի ռիթմին համընթաց ուղտապանը երգում էր «ուղտի երգը» և շրջում դյուղամիջում ու դյուղից դյուղ:

ԱՂ. ՍԽ. բ. II, 629

82. ՅԱՐԱԼԻ ՇԱՄՈ

Սասունում այս կամ «Յարալի Շամո» անունով ուղտախաղը պատրաստում և խաղում էին այսպես: Երկար գավազանի ծայրին ամրացնում էին մածնկուլը և ծածկում շորով. մածնկուլի սուր ծայրը ձևացվում էր ուղտի դունչը, լայն մասը՝ պուխը, վերջինիս երկու կողմերին մեկական դդալներով ականջներ էին ձևացնում. դեմքին նկարում էին՝ քիթ, բերան, աչքեր, բեխեր: Ուղտ խաղացո-

ղը (ձևացողը) ամբողջովին ծածկվում էր մեղարով (փալաս) և գավազանի միջոցով կատարում ուղտապղպեի ծիծաղաշարժ կամ վախեցնող շարժումներ՝ խեղկատակություններ. նա մերթ հարձակվում էր հանդիսատեսների վրա, մերթ նահանջում էր, փախչում և այլն։

Պետ. Ա.

83. ԻՇՈՒԿ ԽԱՂ

Տարոնում բարեկենդանին վայտան ձի էին պատրաստում և համապատասխան զարդարանք տալուց հետո խմբով շրջեցնում էին գյուղի մեջ։

Ից. Արձ. 1895, № 109

84. [ՇՐՋԻԿ]

[Բարեկենդանին Վանում] ...Մյուս կողմանեն տեսնաս, որ մարդ մի մեռել ձեռնալով թարանճայի, այն է սանդուխի վրա պառկեր, չորս հոգի թևերուն վերա առած կտանին մեծատանց դրան վերա վար գնելով դուռ կղարնին.

—Դուռ բացե՛ք, ապրատ մարդ մեռա՛վ, պատանք չկա, պատանք տվե՛ք, գինի տվե՛ք խմենք, ապա թե ոչ մեռել ձգենք ձեր տուն, կերթանք։

Շատ պողիկ և քաշին կուգա մեջ տեր։—Խմեք ձեզ անուշ լինի, տասված ոզորմի ձեր մեռելի հոգվույն։

—Չէ՛, դու չե՛ս ասե, դու չե՛ս տասե տասված ոզորմի։

Մեկ էլ տեսնաս մեռել գլուխ վեր վերցունելով՝ ամա՛ն, մեռա՛, ինձ էլ գինի, թե չե նորեն կմեռնիմ։

Նորա բերան պառկած տեղ մեկ բաստա գինի լեցելով, մեռել կասե.

— Տասված ոզորմի ինձ և ձեր մեռելներուն, և կերթա ուրիշ դուռ։

Է՛ ախպեր, զոր ասեմ, և զորն պատմեմ, գի խոյտառակության թիվ չկա։

Ջ. № 4184, էջ 86բ

85. ՈՒՂՏԱՊԱՆԸ

Բարեկենդանին երկու ուժել մարդ, մեկը առաջը, մյուսը ետևը, ուսերի վրա էին առնում երկու հասալիկ ձողեր, և ամբողջովին փալասով ծածկվում էին։ Քուրջերից շինված, կարկատված ուղտի գլուխ էին ձևացնում և ամրացնում մի բարակ ձողի վրա, որ առջևի մարդը դյուրությամբ կարող էր կրել իր ձեռքին։ Սրանց վրա հեծած ուղտապանը, որի երեսը խատուտիկ ներկվում էր, հագնում էր ցնցոտիներ, գլխին դնում էր քուրջի փաթիթոց և ձեռքը երկար, բարակ ու ցեխապատ մի ձող էր առնում։ Առջևից ուղտի սանձը քաշող մի պատանի էր լինում, նույնպես սև ներկված երեսով ու ցնցոտիներով փաթաթված։ Սրանց առջևից գնում էր դավուլ զուռնան։

Սա գյուղի բնիկ սըրբըքան էր։

Փողոցներից անցնելիս ուղտը և հետևող բազմությունը կանգ էր առնում մսագործի ու նպարավաճառների խանութների առջև։ Ուղտապանը երկարում էր իր ցեխոտ ձողը դեպի միսը, դեպի յուղագրված ապրանքները... «Իրեք հոխոխանոց պաշով խապուրդա մը», «օխտա մի կարմիր չամիչ..., չէ նը, ինչ որ կա չամուռ կինիմ, հա՞» գոռում էր նա։ Եվ առնում էր ուզածները։

Ճանապարհին ուղտին և ուղտամարդկանց գինի էլ էին հրամցնում։ Ուշադրավ էր ուղտապարը, որ կատարվում էր հաճախակի քայիներ տալով։

Բրջ., 158 (Բրջ.)

86. ԻՇՈՎ ԵՐՈՒՍԱՂԵՄ

[Վանում բարեկենդանի օրերին] «...Մեկ էլ նայես, որ մարդ մի էշ ձեռնալով չորս ոտնն եղած է և մի երիտասարդ մեծ հասած ձող մի բռնած հեծեր իշու վրա, կբշև ու կասե.

—Իշով Երուսաղեմ կերթա՛մ, և բազմություն կայներ կասե.—Մաշա՛ա՛հ, մաշալա՛հ»։

Ջ. № 4184, էջ 86բ

87. [ԱՅԾԱՄԱՐԴ]

Համեմատաբար մեծ տղաները բարեկենդանին իրենցից մեկին այծի մորթի էին հագցնում, գլխին էլ այծի գլխի ձևի գլխարկ



Նկ. 41. «Այծամարդը» Թիֆլիսի փողոցներում (լուսագիրը՝ № 87)
Նկ. Հովհ. Քացակյանի

դնում, ապա սալամուր-գիհուով քեֆ անելով ման էին գալիս փողոցներում (նկ. 41)։

ԳՏԱ. ՄՀ, 1863, № 6, էջ 65 (Բ.)

88. ՀԱՐՍԱՆԻՔ—ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

Կ. Պոլսի հայերը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին դեռևս պահպանում էին դիմակահանդես կազմակերպելու ազգային սովորույթները։ Դիմակահանդեսները տեղի էին ունենում բարեկենդանի վերջին երեք օրերում, հեռևյալ կարգով ու արարողությամբ։

Անձնակազմը բաղկացած էր մինում 12 տղամարդուց, որոնցից երկուսն ատանձնում էին ամուսնացողների, չորսը՝ պարողների, մեկը քահանայի, մեկը քավորի և մյուսները հանդիսականների կամ հարսնևորների դերը։ Նրանց ուղեկցում էր նվագախումբը, կլարնետով, ուտով, քամանչայով և դափով։ Յուրաքանչյուր մասնակից ունենում էր իր դերքին ու տարիքին համապատասխան դիմակ։ Վերջիններս և շորերը մեծ մասամբ վարձով էին ձեռք բերվում։ Հարսը հագնում էր հարսանեկան սովորական շորեր։ Նրա պահակից բոլորապատ կախվում էին նեղ ու դունավոր, զանազան երկարությունների մի շարք ժապավեններ։ Փեսան կրում էր ծոպավոր ֆաս, հագնում էր աղով (լայնակոնք), մինչև ծնկները հասնող անդրավարտիք, երկարավիզ դուլպաներ և ելակաձև շալե աբա։ Քահանայի դիմակը և գլխարկը մասնակիորեն տարբերում էին նրան. բացահայտ քահանայական զգեստ չէին հագցնում։ Իսկ պարողները հագնում էին աղավոր անդրավարտիք, երկարավիզ դուլպաներ, կեռքիթ ոտնամաններ, կրում էին կոնաձև և ծոպավոր, կարմիր կտորից պատրաստված գլխարկներ։ Նրանք ունենում էին 3—4 մետրանոց մետաքսե լայն գոտիներ, իսկ սրանց վրայից՝ կաշվե գոտիներ։ Վերջիններիս վրա տեղավորում էին՝ երկուսական՝ դաշույն, 2—3 ատրճանակ, և մի մի փոքրիկ դաշույն։ Շարքային հարսնևորները հագնում էին սովորական շորեր և կրում դիմակներ։

Երբ այս բոլորը պատրաստ էր լինում, նվագախումբը կեղծ հարսնաուն առաջնորդում էր դեպի հարսնատունը։ Այստեղ պարելուց և մի շարք խեղկատակություններից հետո հարսին հանում էին դուրս, շարժվում դեպի այն հրապարակը, որ իրենց նման խմբերի շուրջը կուտակված հասարակությունը լցնում էր շրջապատը։ Երթի ժամանակ զբաղեցնում էին պարող դերասանները, որոնք երբ հրապարակ էին հասնում, ծանր եղանակի տակով ձեռքերում մի մի երկար դաշույն բռնած, սկսում էին վերջիններս ճոճել և իրար բախել։ Բախում էին ինչպես ճոճելիս, այնպես և ծալված ոտքի ծնկատակը տանելիս ու այլևայլ ձևեր ներկայացնելիս։

Կենտ պարերին հաջորդում էր ամուսնացողների պսակի արարողությունը։ Սրանց բերում, մեջք մեջքի տված կանգնեցնում էին, որոնք թևերը փոխադարձաբար օղակելով

գլուխներն իրար էին հասցնում։ Քավորը և քահանան մի մի փոքր փայտ առած, որ խաչն ու ավետարանն էին ներկայացնում, պահում էին պսակվողների գլխավերևը։ Հանդիսականների ընդհանուր քրքիջի մեջ բարձրանում էր քահանայի երգեցիկ ձայնը, որ մեկ առ մեկ կրկնվում էր քավորի կողմից։

Ջինի-ջինի ջինդո՞նի.
Դինի-դինի դինդո՞նի.
Վինի-վինի վինվո՞նի։

Պսակի արարողության միջոցին կամ նրա ավարտումից հետո փեսան օղակած թևերից բաշելով՝ հարսին առնում էր շալակը, որով և ընդհանուր հրճվանք էր առաջանում։ Դրանից հետո հարս ու փեսան և քավորն ու քահանան շարքով կանգնում, հանդիսականների կողմից շնորհավորանքներ էին առանում։ Ապա սկսվում էր հարս ու փեսայի պարը, որին հանդիսականները կեցցեներով էին դիմավորում և պսակվողների գլխին դունավոր թղթի կտորներ շաղ տալիս։

Այս դիմահանդեսը վերջանում էր դեբակատարների շուրջպարով։

Բ. Ժո. ձ.

89. [ԹՄԱԿԱՆԱԳ]

Բարեկենդանի ուրախության օրերին Նոր Նախիջևանում սովորության համաձայն երիտասարդները դիմակավորվում և դիշերները ցանկացած տներն էին այցելում։ Սրանք շրջում էին խմբերով, որոնք բաղկացած էին լինում միմյանց ազգական, ծանոթ ու բարեկամ աղջիկներից ու երիտասարդ տղաներից և որոնք զանազան դիմակներ ու զգեստներ էին հագնում։ Խմբերից մեկը ներկայացնում էր Հարան ու փեսան՝ մերձավորներով, մյուսը հոգևորականներ՝ քահանա, կույս, աբեղա, երրորդը՝ բոշաներ, չորրորդը՝ զինվորականներ ևն։

Դիմակավորները սովորաբար չէին խոսում. հատուկ դիտավորությամբ նրանք թաքցնում էին իրենց ով լինելը. այդ ձևով տղաներն իրենց և աղջիկներն իրենց համար ապագա փեսացու և հարսնացու էին ընտրում։

Որևէ տուն մտնելիս նրանք երգում կամ դաշնամուր նվագել տալով պարում էին, և կամ իրենք նվագում և ձեռքերի շարժուձևերով ու փոխած ձայնով սրախոսություններ, կատակներ անում։

ԵՃ. Ա.Հ., IX, 19

90. [ՀԱՐՍԱՆԻՔ]

Թիֆլիսում հայ պատանի տղաները բարեկենդանի օրերին իրենցից մեկին աղջկա շորեր հագցնելով նորահարս և մի ուրիշին նորափեսայի շորեր հագցնելով փեսա էին ձևացնում։ Սրանք խմբերով, զուռնա-նապարայով անհատն ման էին գալիս, խեղկատակություններ սարքում և դրամ հավաքելով խնջույք կազմակերպում։

Մ.Հ., 1863, № 6, էջ 65

91. [ՃԱՂԱՏՆ ԷԿԱՎ]

Գանձակում բարեկենդանի վերջին օրը երիտասարդներն իրենց միջից մեկին առաջնորդ էին ընտրում, մուշտակը թարս հագցնում, փափախը շրջած դնում, երեսին մուր քսում և կնոջ շորեր հագցրած մի տղամարդու հետ շրջում դյուղը։ Գյուղացիները սրան տալիս էին «ճաղատան էկավ» և ահագին բազմությամբ հետևում նրան։ Թե՛ ճաղատը և թե՛ մանավանդ նրա կինը հազար ու մի ծամածռություններով ու կատակներով ծիծաղեցնում, ուրախացնում էր շրջապատողներին։

Եվ. Ա.Հ. VI, 365

92. [ԿԱՏԱԿԱԼՈՂՔ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ]

Բարեկենդանի հինգշաբթի օրվանից սկսած մինչև կիրակի իրիկնապահը, փոքր երեխաները մեկի երեսին թղթից պատրաստված դիմակ դնում ու մուր էին քսում։ Մյուսները փողոցի մեջտեղում կանգնած՝ այս խեղկատակի հետ անց ու դարձ անողներին զվար-

ձայնում և իշխանական բարևներ հղելով՝ դրամ էին հավաքում։

ԳՏԱ. Մշ, 1863, № 6, էջ 65 (Բ.)

93. [ԿԱՏԱԿԱԼԱՂԵՐ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ]

Վանում փոքր երեխաները բարեկենդանի օրերին անդրավարտիքները մինչև ազդրերը վեր ծալած, երեսները ածուխ ալյուրատած, անց ու դարձ անողների առջև խեղկատակություններ սարքելով դրամ էին կորզում և դրանով խնջույք կազմակերպում։

Ջ. № 4184, էջ 86բ

94. ՀԵՐՅՈՒՍ ԿԱՄ ԹԼԱՊՂԻՐ

Բարեկենդանի հինգշաբթի (Վարդանանց) օրը Մարաշում մինչև 1860-ական թթ. կանայք մի թի կամ բահ վերցնում, «Թլխապիր» անունն էին տալիս, ապա իբրև հարս, Թլխապիրին շրջազգեստ հագցնում, գլուխն այլևայլ քոպերով ծածկում, արդ ու զարդերով զարդարում էին։ Այնուհետև կանայք Թլխապիրը անեծանն մոն ածում, հատուկ խաղեր ու կատակերգություններ էին սարքում, երգեր ասում, բերում էին բակը, անկում և մինչև երեկո նրա շուրջը պարում ու զբոսնում էին։

ԴՀ, 336

95. ՄԵՆ ՊԱՊՈՒԿ

Ս. Սարգսին հաջորդող օրերին սպասվում էր մենծ պապուկը՝ Սահակ Պարթևը։ Շարաթ առավոտյան ատն տարիքավորը՝ պապը կամ ատար եկեղեցուց գալուն պես հավաքում էր ընտանիքի անդամներին սեղանի շուրջը և ինքը հեռանում էր։ Հանկարծ նա երևում էր պլպին խոշոր ու սրածայր քոլոզ դրած, ձեռքին ահագին գավազան ատած և մեջքին ոչխարենին թարս գցած, ու պինի մատուցելով ամենքին, ասում էր. «Ընկավ մենծ պապուկը, հազար բարով մեր բարեկենդան»։

ԱԴ, II, 53

96. [ՄԵԾ ՊԱՍ]

Մեծ պասի առաջին օրվա երեկոյան վարանդայի խաչմաչ գյուղում, մի էշ էին թամբում, մի կին նատեցնում վրան, երեսին մուր քսում, գավուլ զուռնայի առաջնորդությամբ շրջեցնում անեատն և դրամ հավաքում, որ զատկին մատաղ անեին։ Այս սևերես կինը ներկայացնում էր մեծ պասը և նրան պատվով շրջեցնում էին, որպեսզի մեծ պասը առանց փորձանքի անցնի։

Եվ. ԱՀ, III, 343

97. ԱԽԼՈՃ

...Գլուխը կարմիր սոխից էր շինած ու թագը յուր հատա սև ու պապղան փետուրով զուգած։ Իրանը բրդոտ, ճմրան պես ճերմակ մորթով էր պատած ու ձեռքին բռնած կարմիր ճիպոտը, դայիսոնի նման, որ կարծես մարդու կարմիր արյունով լիներ ներկված, ահ ու սարսափ էր տարածում չորս դին։ Խաչբրն ու Ախլոճը իրար հետ կապող յոթը գույներդգույն թելերից հյուսած կարճ թոկի վրա յոթ քար կար շարած՝ մեծ-պասի յոթը շաբթվան թվով։ Ու մեջքին կապած վայտե կեռ խուրը սիրոջից երկար ճոճում էր օդում, սաքերից էլ ցած...։

Զատկի շաբաթ առավոտն էր։ Դեռ արևը տեղից չելած մենք բոլորս... հանդիսավոր խաղ ու կանչով ձեռքերիս մի մի ճիպոտ բարձրացանք տան կտուրը։ Ծագր ու ծանակ Ախլոճին քանդեցինք երկաթե խաչքից ու չորս բոլորը պար բռնեցինք... Զարկինք... զարկինք... դաղված սրտի բոլոր ուժով, մինչև բզիկ-բզիկ վերջին բուրդը-բամբակը քամուն կեր տվինք...։

Ջ. Ա, XII, 190—191 (Ախ.)

98. [ԱԿԱՏԻՋ ՄԵՄԵՆ]

...Հմա մենք էլ էդ օրը հայիֆներս ակլատիվեն հանեցինք։ Օխտը շաբաթ պլխնեբուս վերևը կախված մնգի ահ էր տալըմ։

...Սկսած [մեծ պասի] առաջի շաբաթուց ամեն շաբթուն սրով մի մի բմբուլ քաշըմ,

ջարդըմ ու էն կողմ էինք քցըմ՝ էս ըսելով.—Ճիճու, ճիճվարանքը դուրս, ցորեն, գարին ներս։

Ջաղիկը մոտեցել է, էդուց ավագ-հինգշաբթի է, պտի մնացածն էլ ջուրը բցենք։ Էդ իրավունքը մամիցս առնելուն պես, տպա թախտս բոլուկով տան երթիկը կտրեցինք ու սկսանք կախած տեղն դուրս քաշել ակլատիվը, որ մնացել էր մեն սև բմբուլմ, սոխի պլուխը, թելն ու քարը, հառաջ քարի տակը դրինք մի լավ ծեծեցինք. ընդից հետև ամեն մեկս մե ծերեն բռնած, ինչպ օր անտիի պիլտնը անտեր մնացած գառի, վազինք պիպա Աբրահայրը, բապլինք, բցինք ջուրն ու հետն ըսինք.

Ջմեռն անցավ, գարունն էկավ,
Պասը գնաց, ուտիան էկավ,
Քաշվի, կորի՝ զատիկն էկավ։

Արար., 1899, № 3—4, էջ 147 (Շրկ.)
Վար. եվ. ժո. № 77, էջ 40 (Բզշ.)

Գ

Մեկ տարի [վանում] սուրբ Սարգսի կիրակուրվի [օրը] մեր քեռի Դավիթ պատկեցինք։ Տյառնընդառաջն չորեքշաբթի օր լինելով, հարսանյաց և տյառնընդառաջի ուրախություն իրարու հետ խառնվելով, արտաքո կարգի ուրախություն եղավ։

...Վանա քաղաքու անվանի մեծեր այս հարսանյաց մեջ էին [որոնք տոնական հետևյալ ավուրությունն էին կատարում]։

99. [ՄԱՐԳԿԱՆՈՑԻ]

...Սեկանց Մահտեսի Հովհաննես[ի] մեջքեն չվանով կապեցին, կախածի պես քաշեցին առիք. պոռացին.—մինչև մի կարաս պինի չբերվի բակի մեջ, այս կախած մարդ առքեն վար չիջնա՞ր։ Քիչ էր մնացեր խեղ[ճ] Մահտեսի Հովհաննես մեռներ։ Քեհին հավար ձգեց հորս. հայրս հասավ, մարդ[ուն] իջեցնել տվավ. երեք ժամ խելոսծ մնալով հագիվ խելք գլուխն եկավ։ Մեկ կարաս գինին խմելով [կախողները] էլան սենեկի տանիք 40 հոգվով պար բռնեցին. այնպես վեր վեր գատկեին, որ քիչ մնաց տանիս պլեր՝ վար գար։

Ջ. № 4184, էջ 81ա

100. [ԿԱՏԱՂԱԿԱՆ]

Կարսի գյուղերում երբ հարսանիքը համընկնում էր տյառնընդառաջին, տղամարդկանցից մեկը կնոջ և մյուսը աղամարդու ցնցոտի հագուստով հանդես էր գալիս այն պահին, երբ խարույկի շուրջը կատարվող ծեսերից հետո մարդիկ կտուրից ցած էին իջնում։ Դրբանք ամուսիններ էին ներկայացնում։ Կինը հոգաթափերով կամ ավելով խփում էր մարդուն և հեռանում։ Ամուսինը կատու էր ձևանում, պռակում գնդին, ճանկում էր, մլավում, անց ու դարձ անողների ոտքերը կծում, բռնում ու նվեր էր ուզում։ Կինը տղամարդկանց ժժի էր տալիս, խաղում, ծամածռություններ անում, և կալչում շալակներին ու նվերներ պահանջում։

ԲՀ. ՀԺ. ձ. 162

101. [ԿՐԱԿԹՈՒԿՆԵՐ]

Գանձակում տյառնընդառաջին նորապսակ երիտասարդները ցրտին ծառի ճյուղեր էին բերում և եկեղեցու բակում դարսում։ Երեկոյան ժամասացությունից հետո եկեղեցու ջահից վերցրած մոմով վառում էին այդ խարույկը, որ «Դռնատառունչ» էր կոչվում և նորապսակ զույգերը երեքական անգամ պտտվում էին շուրջը և վերջը ամուսինները երեքական անգամ թռչում գոմատառունչի վրայից (ՆՀ. Ա.Հ, VI, 366)։

Ջանգեզուրում այդ ծեսի ժամանակ նորապսակները շրջան բռնած պտտվում էին խարույկի շուրջը, իսկ երբ բոցը մի քիչ իջնում էր՝ թռչում էին վրայից (ՆՀ. Ա.Հ, IV, 108)։ Նոր Նախիջևանում խառի խարձերից



Նկ. 42. Կրակխաղը Ակեքսանդրապոլում (ընդհատ.՝ № 101)
Նկ. Տ. Թոքմաջյանի

կազմված խարույկների վրայից թռչում էին չորս բոլորը պատվելուց հետո (ՆՇ. Ա2, IX, 17—18)։ Վանում կատուների վրա փայտակույտի խարույկը վառելիս երիտասարդները կրակի վրայից թռչում էին, իսկ հարսն ու փեսան բոցերի շուրջը ձեռք ձեռքի տված պար էին գալիս (ԳՍ. Մն., 108)։ Նույն տեղում եկեղեցու բակում վառված խարույկի վրայից հարս ու փեսաները երեքական անդամ էին թռչում։ Իսկ նորապսակների բակում խարույկի վրայից առաջինը տան մամիկն էր թռչում (ԱԴ, II, 85)։ Շիրակում խարույկի վրայից (նկ. 42) այս ու այն կողմ երեք անգամ թռչում էին թե՛ մեծերը, և թե՛ փոքրերը (ԱՄ. Փ, 265)։ Կարսի գյուղերում կանայք խարույկի վրայից մի քանի անգամ խաչաձև էին թռչում (ԲՀ. ՀՇ. ա., 161)։ Բարիքներ ակնկալելով սրբազան կրակից, Բալուում պատանի տղաներն ու աղջիկները և նորապսակները հավաքվում էին խարույկի շուրջը և հատուկ երգեր էին երգում։ Երիտասարդ տղաները ցատկում էին բոցերի վրայից, իսկ ցատկել չցանկացողները արագ վազքով ճեղքում անցնում էին կրակի միջով։ Նորապսակները ձգտում էին գերազանցել բոլորին։ Երիտասարդ աղջիկներն ու տղաները զույգ զույգ, իրար ձեռք բռնած, խարույկի շուրջը երեք անգամ արագ վազքով պտույտ էին գործում։ Այդ նույնն էին անում դեռատի հարսներն իրենց կրծքի երեխաները պինդ գրկած, մինչև որ խարույկը հանգչում էր (ՀՍ. Բ, 17—18)։

102. ՍՐՍԵ ՉՈՒԽԱ [ԽԱՂԱՂ]

Բալուում, ծաղկազարդի առավոտ, պատանի տղաները ուռենու կամ բարդու ճյուղերից մեկական բիր էին պատրաստում ու կարմիր ներկով նախշում: Ապա՝ կառուրներում, փողոցներում ու բակերում փորձում էին դրանց դիմացկունությունը:

Այդ բիրերը «սրսե չուխա» էին կոչվում:

Մեկն իր սրսե չուխանը ամրացնում էր պատի մեջ: Մյուսն իր բիրով ուժգին հարվածում էր դրան: Մեկ հարվածից հետո մյուսն էր դրա բիրին խփում և փոխնիփոխ խփելը շարունակվում էր այնքան, մինչև որ մեկը կոտրվում էր: Կոտրողն այն յուրացնում և տուն էր տանում:

Այդ ամբողջ օրը փողոցներում, բակերում և կառուների վրա լսվում էին սրսե չուխաների անընդմեջ հարվածները[4]:

ՀՍ. Բ, 38 (Բլ.)

103. [«Տ Ո Ն Ա Ծ Ա Ռ»]

Վարանդայի գյուղերում տղաները ծաղկազարդի երեկոյան ձրոռան և չրխչրխկան էին պատրաստում: Այստեղ ձրոռանը նույնն էր, ինչ որ Ախալքալաքինն էր (տե՛ս ԱՀ, II, 269), իսկ չրխչրխկանը համեմատաբար երկար տախտակի երկու կողմերին հատ թել-լով ամրացրած երկու փոքրիկ տախտակներ են, որոնք խփվելով միջի փայտին, չրխկ, չրխկ ձայն են հանում: Երբ այդ բոլորը պատրաստում էին, փորր ինչ քնում էին: Կեսգիշերին մոտ երիտասարդները վեր էին կենում, բահ ու թի վերցնում և գնում էին, ուռենին արմատից հանում և առանց մի ճյուղ կտրելու տանում եկեղեցու բակը: Այդ ժամանակ երեխաներն էլ հավաքվում էին այդտեղ և սկսում իրենց ճրոռանով ու չրխկչրխկանով այնպիսի աղաղակ բարձրացնել, որ ամբողջ գյուղը զարթնում և եկեղեցի էր շտապում:

Ուռենիներից մեկը տանում եկեղեցու մեջ ապամարդկանց, մյուսը կանանց կանգնելու տեղը կանգնեցնում էին: Անմիջապես բոլոր ժամավորները իրենց ձեռքի երկու զույգ մոմերից մի մի զույգը ամրացնում էին ծառերի ճյուղերին և վառում: Երեխաներն էլ ծառերը շրջապատած՝ ճրոռան էին ածում (նկ. 43): Եվ երբ քահանան օրհնում, վերջացնում էր ուռենին, անմիջապես բոլորը հարձակվում էին այս ծառերի վրա, մի կողմից մոմերը հանդցնում, մյուս կողմից ճյուղերը կտրատում և միմյանցից խլխլում: Այս ճյուղերը տանում տնկում էին, որ շուտով արմատ բռնեին: Մի ճյուղ էլ կանայք վերցնում պահում էին, որպեսզի խնոցի հարելիս նրա պոնք-ից (ծակից) կոխեն խնոցու մեջ և տեսնեն, թե կարագն արդեն եղե՞լ է, թե ոչ: Այս ճյուղը կոչվում էր «խնցատեսի» (նվ. ԱՀ, III, 344—345): Զանգեզուրի գյուղերում ևս ծաղկազարդի օրը եկեղեցում մի ուռենու ծառ էին կանդնեցնում և ճյուղերի վրա մոմեր վառում, իսկ երեխաները ճռռան ու ճճանակ էին ածում:

Նվ. ԱՀ, IV, 109

104. [Ճ Ո Ճ Ա Ն Ա Կ]

...Էքուց ծառազարդար ա...: ...Երեխեքը փառքի բարձումին ճոճանակները ու ճեռները պտի ածեն...:

...Վերջը «փառք ի բարձումն» ասեցին. երեխեքը՝ որը ժամի դռնիցը, որը վանջաթեքանց տակիցը, որը հենց ժամի միջիցը ճոճանակները ու ճեռներն՝ ածեցին. բառոնց ձեները տերտերների ձենին կոխեց ոչ ով բան

4 Հ. Սարգսյանն այնուհետև ավելացնում է.— «Այս տարօրինակ սովորության նշանակությունը բուն դյուղացիներուն, սա իմաստն ունի. որպես թե անոնք կը խորհրդանշեն այն բիրերը, որոնցով հրեաները Հիսուսը ծեծեցին և ներկվեցան անոնք անոր արյունով: Իրենք ալ իբր թե այդ բիրերը կը կտրեն բիրը բիրին զարնելով և անոնց կտրվածքը ամրոջությամբ, խնամքով կը պահեն մինչև գալիք Քրագալույցի իրիկունը, այդ օրվան Քանապուին տակ վառելու համար»:

չէր կարում իմանալ «փառք ի բարձում»-ից։

Տերտերը շատ էլ բարկացավ՝ որ մեին ասես. մի քանիսի գլխին էլ հողաթափով բամբաչեց (խփեց), էլ չհլավ. մինը չի, տասը չի. 15 տարեկանից ցածին ունի. գեղումն էլ որտեղ կորած մոլորած երեխեք կան, էսօր ժամումը կըլնին։ Ջարեն կարեց խեղճ իրիցի, բռա փոշման էկավ տեղը կանննց, ու—ի՛ու, ի՛ու, ասեց, կատրվիք գութ՝ ջհըդի ժամ շինեցին էլի. էս ի՞նչ սավորություն ա, տու։

Հենց «փառք ի բարձումը» պրծան, երեխեքն էլ իրանց ճոճոնակների ու ճեռների ձենը կարեցին։

...Կնանանց գալմագալը ճոճոնակների ձենից բարձրացավ...։

...Երեխեքն էլ, ամենքը մի վին հընկեր հետները, ջուխտ ջուխտ առան իրանց օրհնած ուռը, ծերերը կռացրին ճղրների ու գնացին ման գալու տները ու ձու կխնդրու։

Գնում են, բակերումը կանչում ու իրար հետ ասում.

Անա՛կ անա՛կ ճոճոնակ,
Աստծու գուռը բանանք,
Մտնենք ժամ անենք,
Գուրս գանք պատարագ անենք,
Ջալ եղը մորթենք մատաղ անենք,
Պոզերը չարդախ անենք,
Միջին նստենք, քարզահ անենք.
Մատաղը սիրողն երկու ձու տա,
Ջատկին խաղանք քեֆ անենք,
Մինն ինձ, մինն իմ հընկերին.
Ով տա՝ գիզի բարձին նստի,
Ով չի տա՝ չոր բարին նստի։

Ըսենց ասելով, ձու էին կիտում տներիցը, ու հենց էն օրվանից՝ դեռ չի ներկած՝ խաղում։

...Էլ բատուց հետո ընչանք կանանչ կիբակին, Աշտարակու երեխեքանց չելերը լիքը ձու կըլնի. ձու խաղալուց սավահի, ուրիշ բան չկա։

ՊՄՎ, I, 38—40 (Աշտ.)
Վաս. Քաչ. Ա.Հ, VII—VIII, 125 (Վդ.), 126 (Աշտ.), 126—127 (Դրմ.)

105. [ԿԱՐԿԱՋԱ]

...Մեր երկրորդ պաշտոն էր այս. ես, Շարանե[ն]ց Պետրոս և Դավիթ երեք, երեք ես Հայկավանից տղայք մի շաբաթ առաջ կարկաչա շինեինք։ Ջեռաց չափ մեծությամբ և բանձրությամբ երեք հատ տախտակ, մեկ պոչ ունեցող տախտակ՝ մեջ տեղեն, երկու տախտակ ես՝ մեկ նորա տակ, մեկ նորա վերա անցունելով և վարի կողմ թելով թույլ կապելով իրարու և թելք միմյանց մեջ ծակոտիքեն անցունելով, կարկաչայի պոչ բռնելով շարժեինք, որ տախտակք բացվելով, խփվելով իրարու զարնվելով կարկաչա ձայն հանեին։

Կեսօրեն առաջ, երբ կանայք, օրիորդք և հարսունք երամ-երամ գալով եկեղեցվո դրսի դռնեն ներս մտ[ն]այինք, մեք՝ երեքս դրան դրսի մի կողմ, երեքս մի կողմ կայնելով ճոճեինք զկարկաչայն ի վերա գլխոց կանանց, մանավանդ հարսանց և օրիորդաց, ասելով.

Ծառազարդա՛ր,
Ծառազարդա՛ր.
Քար քաշիկ,
Ապրամաշիկ,
Հուշիկ,
Հուշիկ։


Երբեմն երբեմն չափազանցություն ընելով կարկաչայն նոցա գլխո վերա զարնեինք, բայց զարմանայինք, թե ի՞նչպես այդ չափ կանայք մեր տղայական զվարճության համբերելով, մեզ բնավ բան մի չէին ասեր և կամ հանդիմաներ, այլ ժամալով անցանեին, գնային հեկեզեցին։

Ջ. № 4184, էջ 99բ—100ա (Վ.)

106. [ՃԵՔ ԵՎ ԿԱՐԿԱՋԱ]

Ինչպես կարնոհայության մեջ, այնպես և այլ վայրերում ծաղկազարդին եկեղեցում «փառք ի բարձունս» արարողության ժամանակ փոքր ու մանկահասակ երեխաները ճեռ ու կարկաչա էին խաղացնում։ Քահանաներն օրհնած ուռենու ասեր էին բաժանում ժողո-

վրդին, որ վերագրում էին Քրիստոսի՝ երուսաղեմ մտնելու խորհրդին։ Այդ պատճառով վերոհիշյալ փայտե առարկաները ծառայում էին ձիթենյաց և արմավենյաց օրհնության։



Նկ. 43. «Տոնածառ» (ընդարձակ՝ № 103)
Նկ. Հովհ. Քաջակյանի

Նկ. 44. ա. ճեւ. (ՊԹ, 4118), բ. կաթիլչա (ՊԹ, 2152)
Ս. Ա. Պատրիկի

խաչեն։ Ուսինու ճյուղերը բերում էին պլեսավորապես նորապսակ զույգերը և երբեմն անձամբ էլ բաժանում բոլոր ժամավորներին։

Նույն օրը, առավոտյան ժամերգությունից հետո, 6—10 տարեկան մանր երեխաները ընկերներով կամ մենակ ճեւերը (նկ. 44ա) և կարիչանները (նկ. 44բ) ձեռներին տնեվով անեսան մանէին գալիս և հատուկ երգեր երգում (ԱՄ. Փ, 268 և եվ. Ա.Հ, II, 268)։ Բասենում և Դավաչում երեխաները կրում էին ուսի ճյուղերը, ծայրերը օղակ շինած (Քաջ. Ա.Հ, VII—VIII, 127)։ Շրջոց երեխաները երգում էին հետևյալ երգերը։

1

Ճեւ-ճեւ ճեճենակ,
Աստու հալալ պեպենակ.
Ընկերս ընկավ ծովը,
Մովը դառավ ծիրանի,
Պատկերքը դառավ հայլի.
Ասունկ առնք, մոմ առնք,
Տասվերկու պատարագ էրնք,
Ջառակի հավկիթիս գարս բերնք։

ԱՄ. Փ, 268 (Շրկ.)
Վար. եվ. Ա.Հ, II, 269 (Ախ.). Քաջ. Ա.Հ, VII—VIII, 126 (Ալր.). ԱԴ, II, 107

2

Ճեւ ճեւ ճըճենակ,
Աստու հալալ պըպենակ (թիլիւ).
Իմ հընդերը ծովն ընկավ.
Մովը ծիրանի գառավ։
Ձերեն (բազեն) էկավ կիս կառույ.
Հավը թառեն թագրուց,
Ջուխտ ձուն տակեն պըցրուց.
Տարավ կտարեց բլըրուց.
Մինը ինձ, մինը իմ ընկորը,
Ով մեր փայը առ՝ պլարի,
Ով որ առ ոչ՝ սըլարի։

եվ. Ա.Հ- X, 260 (Բրչ.)
Վար. եվ. Ա.Հ, X, 260 (Բրչ.)

3

Կարկաչա, կարին կաչա,
Սև եզան՝ սև սամսաեն,
Կարմիր եզան՝ օղն ու կոճակ.
Կարմիր հավկիթիս դուրս բերեք,
Ու չ կըսեմ պալատ Բրիյուն,
Կիպա կոտրև ձեր ձըձամ։

4

Ծառզարդար, ծառին զարդար,
Խունդ առեք, խունդ ծխեցեք,
Սև հավկին հավկիթի դուզեմ,
Կարմիր կովին եղ դուզեմ,
Վեվ օր տա՝ շեն մնա,
Վեվ օր չտա՝ չոր չորնա։

Եվ. Ա՛Հ, II, 268 (Ախ.). Վաս. ԺԱՒ, 9 (Մղ.). Արձ., 1895, № 44, 2, 19 (Չհր.)

5

Կարկաչա, կարինկաչա,
Սև եզան սև սամսթեո,
Կարմիր եզան օղն ու կոճակ,
Ով որ չտա իմ երկու ձուն,
Մուկն ու կատուն իրանց բիրուն.
Ով որ կտա իմ երկու ձուն՝
Աստված պահե իր փեսացուն։

Քաջ. Ա՛Հ, VII—VIII, 127 (Գվ.). ՆՄ. Փ, 269 (Շրկ.). Վաս. Եվ. Ա՛Հ, II, 269 (Ախ.). Արձ., 1895, № 44 (Ախց.). ԷԱԺ. VI, 70 (Ալշ.). Քաջ. Ա՛Հ, VII—VIII, 127 (Գվ.), 128 (Բաս.). ԺԱՒ, 9—10 (Մղ.)։

107. [Ճ Ո Ճ Ա. Ն Ա. Կ]

Ճոճանակը ձեռքի բաթի չափ, կոթով մի տախտակ է, որի երկու կողմից թուլլ կապած են մի մի տախտակ և այս տախտակները շարժելու, ճոճելու ժամանակ զարկվում են միջին տախտակին։

Քաջ. Ա՛Հ- VII—VIII, 125 (Վղ.)

108. [Ճ Ո Ճ Ա. Ն Ա. Կ]

«Ճոճանակն է բաթի չափ կոթով կլոր տախտակ, որո ծայրերեն կապված ու կախված են կ·որիկ տախտակիկներ, բոժոժավոր, այնպես, որ ճոճելու ատեն թե տախտակին և թե իրարու զարնվելով՝ ձայն կը հանեն»։

ԱԳ, II, 105

109. [Ճ Ե Ր]

Ճերը փայտե ատամնավոր գլան է, երկար կոթով։ Գլանի երկու կողմերից 2—3 վերշակ երկարութեան տախտակներ են անցկացրած, որոնք միանում են ուրիշ երկու տախտակներով, գամիներով։ Մի ուրիշ բարակ տախտակ էլ մի ծայրով հենվում է գլանի ատամների վրա, իսկ մյուս ծայրով անցնելով երկրորդ գամիով՝ ամրանում է առաջի գամու վրա։ Գլանը պտտեցնելիս լեզվակը ընկնում է ատամից ատամ և սուր ձայն բարձրացնում (Եվ. Ա՛Հ, X, 261, Բրչ.)։ Սա Ախալքալաքում հայտնի էր «Կարկաչա» անունով և ուներ ճիշտ նույն կառուցվածքը (Եվ. Ա՛Հ, II, 269)։ Մատնակի նկարագիրը տե՛ս նաև ԱԳ. II, 105, Քաջ. Ա՛Հ, VII—VIII, 125։

110. [Կ Ա Ր Կ Ա Չ Ա.]

Բռնցքաչափ խորանարդ, որ տախտակներից էր շինվում։ Տախտակներից մեկը կոթավոր էր լինում, որից և բռնում էին ցնցելու համար։ Մի քանի տախտակների անկյունները վերջանում էին եղունգներով։

Մեջը փայտե կամ այլ գնդիկներ էին լցնում, որոնք ցնցումների ժամանակ ձայներ էին հանում։

Զատկի առավոտ և ամբողջ օրը տղաներն այս խաղալիքը ձեռքերին՝ տնեսուն ման գալիս, չհկչհկացնում և երգում էին.

Կարկաչա, կարինկաչա,
Սև հավիս հավկիթը դուս փերեք...

Բ. ժո. ձ. (Ախ.)

...Եւ իբրու յայնմանէ ոչ կարէր ծածկել ինչ և կամ զանուծանելիան առաջի արկանել, այլ մանաւանդ իբրև զմանուկ այսր անդր յածծալ իբրու խաղալիօք զինեա վրդովեալ վարիւք, իբրու խնծորան առնչանան, անդամաբեկ վազիւքն տատանէին զնա [«Տաղասացութիւնքի» առաջաբանից]։

ԳՄՏ

...Եւ երբ նրանից չէր կարողանում ծածկել որևէ բան և կամ անուծելին չէր կարողանում առաջարկել, այլ մանավանդ իբրև մանուկ այս ու այն կողմ էր վազում կարծես խռմած ընկած լիներ խաղալիքի հետևից, իբրև շանչան խնձորներ, որ կատարվող վազքերով տատանում էին նրան։

Ե

112. ՅԱՂԿԱՀԱՆԱՔԻ ԽԱՂ ՈՒ ԺԱՄԱՆՑՆԵՐ

Զորեշաբթի

Այսօր Վանում վաղ առավոտից սկսած զանազան թաղերի աղջիկներն առանձին առանձին խմբեր էին կազմում և սկսում պատրաստութիւններ տեսնել իրենց համար շափազանց ցանկալի տոնը՝ բախտագուշակ վիճակի տոնը կատարելու։

Յատրաքանչիւր խումբն իրրև մի ամբողջութիւն, անհրաժեշտ էր համարում ունենալ պլխավոր, որ լինում էր ամենից մեծը կամ գեղեցիկը. ապա որոշում էին պաշտոնները՝ ծաղիկ հավաքողը, ջուր վերցնողը, առաջնորդը և վերջապես դրոշակակիրը։ Այսպես կարգավորված խումբը վաղ առավոտից սկսած զանազան ուրախ երգեր երգելով սկսում էր այգիներից ծաղիկ հավաքել։ Խմբից առաջ գնում էր դրոշակակիրը՝ փայտի ծայրին մի փունջ ծաղիկ և մի գունավոր բաշկինակ կապած։ Գեղեցիկ էր տեսնել Այգեստանի աբանչելի այգիներում ծաղիկ փնջելու գործողութիւնը։

Իրիկնապահին մի տեսակ հանդիսավոր թափոր կազմելով սկսում էին իրենց շրջանի աններր ման գալ և մատների փնջերը բաժանել։ Մտնում էին բակը, երգում վիճակի երգերից մի տուն, տալիս էին մի փունջ ծաղիկ, երբեմն էլ մի ներկած հավկիթ, որ առաջուց պատրաստում էին. տանում էին մի քանի դրամ, ապա առաջարկում էին այն փարչը, որի մեջ հետո պետք է ջուր լցվեր, որպեսզի տանտերը մի նշան դներ մեջը։ Տանտերը, մանավանդ տրբունքի հետած աղջիկը, խորհուրդ էր անում և նշանը դնում ամանի մեջը. առհասարակ տան ամեն մի անդամի անունով մի մի նշան էին դնում, որպեսզի բոլորի ապագայի համար էլ մի բան գուշակվեր։ Այս գուշակությունը հանում էին երգված երգի այն կտորից, որի երգվելուց հետո հանվում էր իրենց ասած նշանը՝ մի ուլունք, մատանի, կոճակ կամ բանալի։

Այս ձևով իրենց շրջանում ման պալուց և նշաններ հավաքելուց հետո գնում էին իրենցից մեկի տունը և սկսում պատրաստել վիճակ կոչվածը, որը մոտավորապես հետևյալ կերպ էր լինում։ Վերցնում էին մի կանդուն երկարությամբ մի երիզդանի փայտ, վերին մասում կապում էին մի թղաչափ փայտ, որից սասցվում էր մի խաչաձև, երիզդանի, երկու ոտքերով. ապա այս փայտին հագցնում էին մի ոտարևկան երեխայի հագուստներ՝ տեսական տարազով, որքան կարող էին, իհարկե, մանկապին կտորներից պատրաս-

* Ադապաձոնի լեռնային գյուղերում շրջելու ժամանակ պատանիները բաղդավորված հարսի եանվից գպրոցական մատենում և Լիմով հասակը չափում էին։ Թլիսմի ուժը պահելու նպատակով՝ աղջիկներն պղպջանում, իսկ նման փոքրիկ նկատելիս ուժով կոխվ էին մտնում։ (Բ. Ա.)։

տելով։ Իրենց ժամանակի համեմատ տարազի ավելի հին ձևերն էին ընտրում։ Փայտի վերին մասին պլխի ձև էին տալիս՝ շորեր կապելով, գլուխը կապում էին տեղական հարսի պլխի ձևով և զարդարում էին, ինչով որ կարող էին. պլխի առաջին մասին մոտավորապես դեմքի ձև էին տալիս, ապա կապում էին ապխտակ բաշկինակով և նկարում էին աչք, բիլ, բերան, հոնքեր և այլն, մի խոսքով, բայց պլխի կապից ամեն բանով զարձնում էին երեխայի շատ նման մի խրծիկ, որը շատ անգամ իր ոսկի զարդերով բավական մեծ արժեք էր ունենում։ Սա ունենում էր ճակատոց՝ ոսկու շար, մանյակ կամ ճանոց, կուրծքը զարդարած զանազան զարդերով։ Ինչ խոսք, որ արծաթի խաչը նույնպես զարդարում էր տիկնիկի կուրծքը։

Այսպես պատրաստված տիկնիկը ամբացնում էին Փարչի բերանին. երկուսը միասին կոչվում էին Վինակ, թեև դեռ պակասում էր անհրաժեշտ տարրերից մեկը՝ ջուրը, որը առանձին դեր ուներ։ Արդեն օրը մթնում էր, երբ պատրաստ էր լինում ծաղիկներով և ուլունքներով զարդարված խրծիկը, որին դնում էին մի ապահով տեղ, մի քանի աղջիկների հսկողությամբ[5]։

Երիտասարդների և պատանիների խմբերը ծածուկ տեղերից դիտում էին այդ առաջին օրվա աղջիկների խմբի ամբողջ գործողությունները և քայլ առ քայլ դիտում էին նրա շարժումները, մանավանդ Վինակը պահված տեղն իմանալու համար։

Վանեցի կանայք չորեքշաբթի օրը առն էին պահում՝ Ծաղկամուտ անունով. ոչ մի գործի ձեռք չէին տալիս, որպեսզի զավակներն ապատ լինեին կամքուկ և ծաղիկ հիվանդություններից։ Վինակի համար ծաղիկ հավաքելը, պատրաստելը և յոթը տեղից ջուր վերցնելը աղջիկների գործն էր, մնացած գործողություններում խառնվում էին նաև հարսները։

Զորեքշաբթի–լույս հինգշաբթի գիշեր

Գալիս էր հրաշալիքների գիշերը... Արևը մայր մտնելուց մի քիչ հետո աղջիկների խմբից ընտրում էին յոթ հոգի՝ յոթ աղբյուրից կամ ջրհորից ջուր վերցնելու։ Վերցնում էին նույն լայնաբերան Փարչը՝ մեջը լցված նշաններով և անխոս սկսում յոթն աղբյուրից կամ յոթ ջրհորից ջուր հավաքելու ծեսը կամ արարողությունը. չխոսելը այս գործողության էական խորհուրդն էր կազմում. վերցնում էին ամեն մի տեղից յոթ ափ ջուր։ Կթան կենդանի ունեցող տունն իր ջրհորից ջուր չէր տալիս, որպեսզի կթանի կաթը չցամաքի։ Հավաքած ջրի մեջ գցում էին յոթ տեսակ ծառից և յոթ տեսակ ծաղիկներից մի մի

---

5 Աբրիկի Մանթաշ (նախկին Աբրվալի) և Ապարանի Հնարերդ (նախկին Ղրախդափրման) գյուղից Աշտարակի շրջանի Փարրաման (նախկին Ղառղավանը) վերաբնակվածների հարցմամբ աղջիկների առաջին հավաքը տեղի էր ունենում երեքշաբթի օրը, գյուղի յուրաքանչյուր տան համար մի մի փունջ սինձ հավաքելու նպատակով։ Աղջիկներն իրենցից մեկին Վինակի Հարս էին դարձնում, որը ոտից գլուխ ամանացած կնոջ տարազով էր զգեստավորվում։ Հանդում ուտելու համար նաև այս աղջիկները Վինակի Հարսին առնում էին իրենց շրջանի մեջ (Բ. Ժո. ձ.)

Արծկում և Գարծոմում (Բերկրի) ընտրում էին ամենագեղեցիկ աղջիկը, զարդարում էին Թանկագին հագուստներով և զարդերով, ապա առանց տղաների դնում ծաղկահավաքի։ Այդ ժամանակ հոտաղները հարձակվում էին զարդարված աղջկա վրա՝ զարդերից մի բան խլելու, որը փրկանքով (ուսելիքներ) վերադարձնում էին։ Հարս ու աղջիկ ճաշից հետո քաղած ծաղիկներից խաչփնջեր, ձիավոռափնջեր և սիրափնջեր էին շինում։ Այդ օրը 7 տեղից ջուր ու ավազ էին հավաքում 3—7 աղջիկներ, առանց խոսելու։ Մի ընտիր փունջ ծաղիկ դնում էին կճուճի մեջ, բերանը կարմիր շորով կապում։ Այս պատրաստի Վինակի կճուճը աղջիկները ձեռքերի մեջ առած՝ խաղացնում էին և վինակի երգեր երգում, ապա տանում, հանդում քաղցրացնում էին, որ տղաները չտեսնեն։ Այն մնում էր առավոտի տակ։ Փնջած ծաղիկները աղջիկները հանում էին ամբողջ գիշերը (ետ. Ա.Հ, X 266)։

Ապարանում, Աբրիկում և Աշտարակի լեռնային գյուղերում չորեքշաբթի օրը հավաքած ծաղիկներից մի մի հատ վերցնելով պատրաստում էին Ջաճգյուղումի Փունջը։ Ծաղկի բոխչայի շուրջը պարում էին, հավաստալով, թե դրան չմոտենա կղզը։ Երեկոյան ծաղկաբոխչան տեղափոխում էին անձի տունը և հանում էին (Բ. Ժո. ձ.)։

տերև ու թերթիկներ, յոթ հատ քար ու մի բուռ ավազ (Գ, 919—920)։ Արագածի հյուսիս-արևմտյան սառոյտների Կարնո հայերի և տարոնցիների մեջ Վիճակի Փարչը վերցնում էր Հարսը կամ մի ուրիշ աղջիկ. երկրորդը վերցնում էր ջրամիկը։ Այստեղ ջուր վերցնելու ծեսը զուգանալ էր կոչվում։ Ջրամիկով ջուրը և ձեռքով ավազը զուգանում էին միևնույն տեղերից։ Զուգությունն ուրիշները չըպետք է տեսնեին, այլապես թլիսմը քանդվում էր։ Այդ պատճառով զուգության էին դուրս գալիս կեսգիշերին։ Հավատում էին, թե զուգացվածը պաշտպանվում էր Ջանդյուլումի ծագկի կողմից, որ մտցված էր լինում Փարչի մեջ (Բ. ժո. ձ.)։ Վանում ջրամանը բռնանարաց դնում էին «աստղունք»-քաց երկնքի տակ, ծագիկների մեջ, որպեսզի «աստղունք իրիշկային վերեն» և, երբ Քրիստոսը կեսգիշերին երկինք համբառնար, «շնորհքն էճներ վերեն», որպեսզի ջրին հաղորդվեր երկնային ուժը և, հետևապես, ապագա զուշակությունները անվրեպ ու լավ լինեին։ Այս գործողությունը կատարելիս աղջիկները մեծ զգուշություն էին գործ դնում, որ տղանները չիմանային, որովհետև վերջիններիս հպումը ոչնչացնում էր զուշակության ուժը։ Բացօթյա էին պահում նաև խոծիկը։

Այս գործողությունից հետո և առհասարակ մինչև խաղի վերջը երիտասարդների հատուկ խուզարկու խմբեր աշխատում էին գտնել Վիճակը և փախցնել. աղջիկները պահապաններ էին նշանակում, որոնք պաշտպանում էին, բայց հաճախ տղաներին հաջողվում էր, երբեմն ուժով, փախցնել Վիճակը. չէին վերադարձնում, մինչև իրենց պահանջած փրկանքը չէին ստանում։

Վանին մոտիկ Լեզք գյուղն իր Ամենափրկիչ վանքով ուխտատեղի էր համարվում. համբարձման տոնին այստեղ հավարավոր ուխտավորներ կատարում էին Վիճակի խաղը տղամարդկանց մասնակցությամբ և դհոլ-զուռնայով։ Այստեղ տղաների և աղջիկների պայքարը շատ խիստ էր։ Վիճակը տղաներից ազատ պահելու համար աղջիկներն այն դնում էին հեռավոր դաշտերում, կանաչավետ արտերի մեջ. երբեմն իրենցից ուժեղներին ընտրում էին, որպեսզի երիտասարդները, ուժ գործադրելու դեպքում կարողանային պաշտպանել Վիճակը կամ վերջինս ազատել գերությունից։ Փրկանք վճարելու համար աղջիկները ժողովարարությամբ ժողովրդից հավաքում էին մթերքներ, երգելով.

Վիճակն ինկեր ի գերի,
Ազար լաճերաց ձեռն ի.
Տուն երկու ձու կժողվեմ,
Քև գերութինից կազատեմ.
Ջա՛ն, Վիճակ, ջա՛ն, ջա՛ն,
Ջան ծագի՛կ, ջա՛ն, ջան։

Իսկ երբ աղջիկները հաջող էին դուրս գալիս մաքառումից և կարողանում էին Վիճակը պահպանել մինչև «բախտ գուշակելու» արարողությունը, այն ժամանակ սկզբում սկսում էին սուր վիրավորական երգերով ծաղրել տղաների թուլությունը, հետո անցնում էին խաղին։

Կանա՛չ կենան աղջիկներ,
Մեջքակոտոր ազարներ,
Չեկան տարան Վիճակներ...
Վիճակի փեշերն ի նախշուն,
Ազար լաճեր Վիճկին շուն...
(Գ. 920—921)։

Ապարանում, Արթիկում և Աշտարակի լեռնային գյուղերում Ծաղկատոնը պահակության կանգնող Հարսի ու երկու այլ աղջիկների ձեռքերը հինայում էին։ Աղջիկները գիշերը զաղանի լողանում էին։ Տղաները հետապնդում էին շորերը գողանալու համար։ Վիճակը գողացող տղաները, որպես վաթձահատուցում, պահանջում էին, որ աղջիկներից ոմանք հաշտվեին խոսված սիրածների հետ, կամ ուրեք պրծել էին տղաներին՝ ամուսնության խոստանային։ Այս պահանջի համար աղջիկները լուրջ խորհրդակցություն էին ունենում և հաշտեցնում խոսվածներին (Բ. ժո. ձ.)։



Նկ. 45. Վիճակահանության համբարձման առնին (բնագիրը՝ № 112)
Նկ. Ա. Գավրյաքի

Այս պիշեր ամեն մի վանեցի աղջիկ մի ձու էր դնում տանիքի վրա, որպեսզի կախարդական բույսին, երր երկինքն ու երկիրը իրար էին կպչում, ձվի վրա գրվեր գնողի բախտը. եթե դիրը կարմիր լիներ, հրեշտակի գրած էր համարվում և լավ բան էր գուշակվում, իսկ եթե սև լիներ, սատանայի գրած էր համարվում ու վատ էր գուշակվում: Երիտասարդներն այս բանումն էլ խառնում էին իրենց մատը և գրատում ձուն սև կամ կարմիր գրով:

Կանայք չափում էին բույսերի կապը (երկու ծնկերի տարածությունը) և կարմիր թելով չափում. հետևյալ առավոտյան եթե կապերը մեծացած լինեին, ապա դա նշան էր, որ իրենք ավելի երկարակյաց կլինեին, քան այն անձը (մեծ մասամբ ամուսինը), որի մասին խորհուրդ էին անում: Հակառակը հակառակն էր գուշակում:

Ըստ հայեցողության այս պիշեր բնությունը կախարդվում էր, կյանքը կանգ էր առնում: Երկինքն ու երկիրը համբուրվում էին, ծառերն իրար ողջունում: Զարխուֆլագը՝ Տիեզերական անիվը կանգնում էր: Ով որ այս կախարդական ժամին արթուն լիներ և հանդիսատես դառնար, իր խնդրածը կկատարվեր:

Կախարդվում էր և՛ ջուրը, ուստի ընտանիքով լուսաբացին լողանում էին, որ ջրին հանձնեին մարմնի «ցավն ու չորը» (Գ, 921—922):

Այս պիշեր աստղերի համբուրման խորհուրդը տեսնող տղամարդիկ կենակցում էին..., որպեսզի իմաստուն երեխա ունենային (Բ. ժող. ձ.):

Հինգշաբթի

Վանում դեռ վաղ առավոտից այգինները լի էին լինում զարդարված աղջիկներով և հարսներով. գեղեցիկ ծաղիկները կազմում էին նրանց և հանգեսի պլխավոր զարդը: Ճաշից հետո սկսվում էր խաղը: Այդ օրը բոլորը այգիներում էին անցկացնում. հարյուրավոր բազմամարդ խմբերով մարդիկ ուրախ ժամանակ էին անցկացնում: Տղամարդիկ և կանայք միասին մի ընդարձակ սեղան էին բացում. շրջանաձև բոլորը նստում էին, իրենց հետ վերցրած ուտելեղենը մեջտեղ բերում, հավասարապես վայելում: Վերջացնելուց հետո մեկը վերցնում էր Վիճակը (ջրի Փարչը և Խոծիկը), առաջ էր անցնում, մյուսները խմբերով հետևում էին, կազմում մի տեսակ շքերթ ու երգում գովքի երգեր բարձր ձայնով, դուրեկան եղանակով: Այս գովքի արարողությունը երբեմն նստած էին անում:

Գովքի երգերն ընդգրկում էին բերքատվության-պտղաբերության, սիրո, աշխատանքի և այլ հարցերը:

Այդ երգերը երգելուց հետո նույն կարգով նստում էին, Խոծիկը Փարչից զատում. Խոծիկ-Վիճակը ձեռքից ձեռք էին ածում, համբուրում էին և դնում մի պատվավոր տեղ և սկսում բուն վիճակահանության խաղը:

Ամենից առաջ չոկում էին մի քանի փոքրիկ երեխաներ—տղա կամ աղջիկ, որոնք բոլորովին անմեղ լինեին և հասկացողություն չունենային իրենց դերի մասին. ապա դրանցից վիճակով ընտրում էին մեկին կամ երկուսին, որ հերթով հանեին նշանները: Երկուսի մեջտեղը դնում էին խորհրդավոր Փարչը և երեքին միասին ծածկում անթափանց մեծ թաղով: Ընտրվածը չափազանց խմանար և չարն ու բարին, մինչև իսկ արևի ծագման կողմը. ընտրությունը շատ զգուշավոր էր լինում, որովհետև շատ անգամ, ըստ հավատքի, դրանցից էր կախված իրենց բախտի գուշակությունը. այդ զգուշությունը ձեռք էր առնվում խարդախության առաջն առնելու համար: Վերջապես երկու փոքրիկները, որոնց Վիճակահաւս էին ասում, ձեռները մինչև արմունկը վեր քաշած խոնում էին Փարչի ջուրը և միջի նշանները. հետո սկսում էին վիճակի երգերը երգել տուն առ տուն. ամեն մի տուն երգից հետո Հարսը մի նշան էր դուրս բերում ջրից. մեկը կանգնում և ցույց էր տալիս բոլորին: Երգերի առանձին հերթականություն չկար. ամեն մեկը իր ցանկացածն էր

ասում, հույս ունենալով, որ այդ իրեն կվիճակվեր. երգերն ասում էին առանց եղանակի։ Թեև աղղների և երգողների առանձին խումբ էլ լինում, որի անդամները ամբողջ երգերը գիտեին, բայց բազմության միջից առանձին, հատ-հատ աղղներ էլ էին լինում։ Երբեմն էլ երկու խմբի էին բաժանվում և հերթով մրցում, ասում էին (նկ. 45)։

Որովհետև անպայման հավատում էին, դրա համար էլ աշխատում էին անպատճառ հիշա համարել երգված տունը դուրս հանված նշանի տիրոջ բախտի համեմատությամբ, նշանի տիրոջ վիճակը համեմատում էին երգի հետ և համաձայնեցնում։

Քան այդ երգերի, աղջիկների և մյուսների համար շուշափվում էին ընտանիք կազմելու, երջանիկ ապագայի կամ ապերջանկության հետ կապված հարցեր։ Քանի որ սեփական ընտրությամբ ամուսնությունը վանում անեթևակայելի էր, երբեմն աղջիկը համարձակվում էր մորը հայտնել, թե ինքը մի երիտասարդի վրա խորհուրդ էր արել և վիճակը բարեհաջող գուշակություն էր արել. միայն այս դեպքում, որովհետև մայրը հավատում էր այդ բանին, ծնողները պիջող էին լինում և աղջիկը կարողանում էր իր ուզածին առնել։

Այս հանգամանքի շնորհիվ վիճակի խաղը ճակատագրական նշանակություն էր ունենում, իսկ սրա գուշակածը արդեն անպայման եղած պրծած բան էր համարվում։ Ամեն երգից հետո ընդհանուր կարծիքների փոխանակություն էր լինում և աշխատում էին ծաղրել հասած աղջիկներին, տալով նրանց ապագա փեսացուների անունները։ Երիտասարդ տղաներն էլ սված էին լինում նշաններ և խորհուրդ արած իրենց ընտրած աղջիկների մասին. այդ գուշակությունները նրանց հաղորդում էին ազգականները։

Երբ նշանները վերջանում էին, վիճակախաղ հանդեսը վերջացած էր համարվում և բոլորն էլ ուրախ սրամտությամբ տակ գրվում էին, որովհետև վանեցիների վիճակի երգերի մեջ սխալ բան գուշակող քիչ երգեր կային։

Վիճակահանությանը հաջորդում էր մի գործողություն։ Փաստորեն դա ևս գուշակություն էր, որ արվում էր «աստղունք» դրած ջրով։ Հանդես կազմակերպողները, գործը մինչև վախճանը դրսևորողները և վիճակի գուշակությունից դժգոհողները դևոս չէին գրվում։ Փարշի ջուրը լցնում էին մի թասի մեջ. երկու աղջնակ (անդրանիկ) աղջիկներ բոլի մատներով բռնում էին թասը. դժգոհը մոտենում էր, վերջին անգամ խորհուրդ էր անում և մատը թաղում ջրի երեսին. եթե ջուրը ձախ պտտվեր, նշան էր, թե վատ գուշակությունն անպայման կիատարվեր ամանց այլևայլության, իսկ եթե աջ պտտվեր, նշանակում էր, թե կարող էր փոխվել վատ գուշակությունը։ Այս գործողությունը վերջին ապավենն էր, ուստի թաս բռնողները ճարպկությամբ այնպես ծածուկ շարժում էին անում, որ ջուրը աջ էր պտտվում, որով մեղմանում էր դժգոհողների տխրությունը։

Վիճակի ջուրը դեռևին չէին թափում, այլ լցնում էին հոսող ջրի մեջ, կամ թաղ էին մաղերին, որ երկարեին (Գ, 923—928[6])։ Վիճակ խաղացողները երեկոյան ուշ վերադառնալուց առաջ Վիճակը մերկացնում էին (ԳՇ. ՎՍ, I, 88)։

---

6 Վիճակահանությունը Հայաստանում գրեթե ամենուրեք նույնն էր։ Ջավախքում այդ օրը զվարճանում էին, իրենց պաշարներով սեղան բաց անում. վիճակը հանում էին հետևյալ հինգշաբթի օրը. Վիճակի Հաբս էին ընտրում մի մեծ աղջիկ, որ գործողության ընթացքում բոլորովին անխոս էր մնում։ Վիճակի երգերը մրցությամբ երգում էին տղաներն ու աղջիկները։ Սկսնակում մրցությունը վերջանում էր տրախտասությաններով և ծաղրով։ Տիգրանակերտում Հաբսը փորրիկ աղջիկ էր լինում և կոչվում էր Վիժկի Աբուտ։ Մուշում, Աբճեշում և Աբծկեում Հաբս էին ընտրում ամենաչքնաղ աղջկան և միայն աղջիկներն էին մասնակցում խաղին։ Նոր նախիջևանում նշանները հենց խաղի ժամանակ էին գցում ամանի մեջ։ Նաղն սկսում էին այս նախերգով. «Վիճակ, վիճակ, վարդ մանուշակ, բյուրլի չիչակ». Հաբս էին ընտրում երկու հոգու, որոնք հերթով նշանները հանում էին. ամեն մի երգից հետո ավելացնում էին. «Քրխտաս (տասված) իր բերնով տասց. «Այս քո ճակատդ էր գրած»։

Բիբլիոգրաֆիա

Համբարձման տոնի այլ նկարագրու թյուններ ու վիճակի երգեր տե՛ս ել. Ա.Հ, II, 275—277 (Ախ.). ել. Ա.Հ, III, 258—259 (Սիս.). ել. Ա.Հ, IV, 112 (Զնգ.). ել. Ա.Հ. III, 347 (Վրնդ.). ել. Ա.Հ. III, 91—104 (Ախ.). Քաջ. Ա.Հ, VII—VIII, 130—145 (Երկ. Բան. Դպիս. Դրլ.). Նժ. Ա.Հ. VII—VIII, 445—447 (Ալշ). ՅՇ. Ա.Հ, IX, 27—29 (Ննխջ.). ել. Ա.Հ, X, 266—267 (Բրչ.). ել. Ա.Հ, XII, 153—154 (Գպիր.). ԳՇ. ՎՍ, I, 85—98 (Վ.), ԳՇ. ՎՍ, II, 64—72 (Վ.). Բվպ., 1887, էջ 16 (Վ.). Ամենաբեր, 1914, էջ 594——596. ՆԴ, 1896, № 77. ՀԺՀ. VI, 89—90. Ար., 1895, № 3395 և 3398 (Տիգ.). Արարատ., 1915, էջ 584—585. ՀՍ. Բ, 40—41 (Բլ.). Բանասեր, 1902, էջ 142—144. Արարատ., 1908, էջ 1026—1040. Արձ., 1894, № 54. Բրկ., 1898, էջ 362 (Տիգ.). Բրկ., 1898, էջ 596 (Խն.). ՃՀԱ, 107. ՆԴ. 1896, № 77 (Տրն.):

113. ԿԱՔՈՎ ԱՊՐԻ ԱՐՈՒՍ

Խիանում, հատկապես Տիգրանակերտում կաթոլիկ հինդշաբթի առավոտյան 6, 10, 13 տ. տղաներն ու աղջիկները փայտե մարդ էին շինում և հարսի շորեր հագցնում: Սրան ասում էին «կաթով ապրի Արուս», որ արաբերեն հարս է նշանակում: Սա տնեցուն ման էին ածում և ձու հավաքում:

Բրկ., 1898, էջ 506

114. ԽՆԴՈՒՄ ՏՈՔ ԱՆԵԼ

Ագուլիսում դեռ վարդավառը չհասած, նշանված աղջիկների ձեռքով մի ամանի մեջ ցորեն կամ գարի էին կանաչեցնում: Երբ վրա էր հասնում վարդավառի տոնը, մի երեխայի հասակի չափ փայտ էին տնկում այդ կանաչի մեջ ու զարդարում մանր վարտունգով, խնձորով և վարդերով: Փայտը հաճախ թևավոր էր լինում: Այս զարդարած փայտը կանաչի հետ միասին կոչվում էր «Խնդում»:

Տոնի կեսօրից հետո, մի պառավ կին վերցնում էր այդ Խնդումը, տանում դնում էր գյուղի հրապարակում ու «հակում» էր նրան: Տղամարդ և կին հանդիսականները «Խնդումի» շուրջը պարում էին զուռնա նագարայի նվագով: Երկարատև պարից հետո պառավը վերցնում էր Խնդումը, դնում գլխին և ինքն սկսում պարել երգելով.

Խնդում օնիմ՝ վ՚ըրդավ լի,
Ջըրդրփչեծ խնձոր լի.
Վախիմ թա քոնըս տանի,
Խնդումըս յարին տանի:

Այդ ժամանակ տղամարդիկ հանկարծ հարձակվում էին պառավի ու Խնդումի վրա: Երիտասարդներից ճարպիկը գավազանով խփում էր Խնդումին և վայր գլորում. իսկույն բոլորը վրա էին պրծնում և խլխլում ծաղիկներն ու մրգերը: Այնուհետև հանդիսականները գրիվ էին գալիս, իսկ պառավը կեղծորեն անիծում էր սրանց՝ երգե ով.

Խնդումըս յարին տարա՞լ ա...,
Ձոր ըրահիբյ ա՞յ հարա.
Ազվրկուտուր էլի նո,
Ուվ ամ Խնդումըս տարալ ա,
Աստված քու ջանիտ քուր տո,
Բա թևերիտ էդունք չի տո.
Ուվ ամ Խնդումըս տարած ա,
Տիանիմ օր այսաղ այուն տո.
Նո կնըննչկուտուր էլի,
Ա՚րկու ակնավ խավարի,
Գինդարու չունք պատկ արի,
Ըրասխի չունք չիրք արի:

ՍՀՔ, II, 26—27. ել. Ա.Հ. XII 150—151

Զ

115. Զ Ի Զ Ի Մ Ա Մ Ա

Հ. գյուղացիք Երաշտի ժամանակ Զիզի-Մամա են պատրաստում: Գյուղի տանուտերը պառավ կանայք կը հավաքվեն մի տեղ. և կրնտրեն իրենց մեջեն առողջ և դիմացկուն պառավ մը, որն որ կը մերկացնեն



Նկ. 46. Զիչի-Մամա. անձրեւաբեր կանանց շրջիկը կարնո գավառում (բնագիրը՝ № 115)
Նկ. Հովհ. Գացակյանի

և միայն միատակ շապիկով և ներքնաշորով կը թողուն։ Հետո ձեռքը մեծկակ խաչափայտ մը կուտան, որուն վրա ճերմակ շապիկ մը կը հագցնեն, բայց սա այնչափ երկայն պիտի ըլլա, որ խաչափայտի վրայեն իջնի, և դինքը բռնող Զիչի-Մամայն ալ ծածկի մինչև ոտքի կոճերը։ Վերոհիշյալ տասն-քսան պառավ կանայք, որոնց մեկը թմբուկ է առած ձեռքը և չորս-հինգ պառավ ալ յուր օգնական բովեքով կանգնած, մի ուրիշ քանի պառավ մի-երկու պարկ ունեն հացի համար, մի քանին մի պարկ ապի համար, մի քանին պարկ ձավարի համար և ուրիշ մեկ-երկուքն ալ մի պղնձե աման են բռնած յուղի համար։ Իսկ անչափահաս տղայք և աղջկունք շատ-շատ հավաքված են անոնց շուրջը. մեր վհատիտ Զիչի-Մամայն յուր ծանր բանակով կը խաղա առաջ. կը թափահարի դոնե ի դուռ, և կսկսի յուր բարձր մուրացկանությունը։ Սակայն նա ինքը բոլորովին լուռ, ինչպես տեղացիք կըսեն «անխոս» պիտի մնա։ Ըստ որում պատրաստված թմբկահար կանայք փոխանակ իրեն, թմբուկ հարկանելով իրենք նորին բարձր ցանկությունը կը հայտնեն. խոսքեր ըսելով հայերեն և թուրքերեն, ուզակի այն տանտիկնոջ, որուն դուռը կանգներ են.

Զիչի-Մամայն ինչ կուզե,
Երկնքեն ամպեր կուզե։
Զիչի-Մամայն ինչ կուզե,
Աստծու (յայ) անրջև (անձրև) կուզե...։

Այսպես շարունակելով կը հավաքեն յուղ, ապ, հաց և ձավար։ Իսկ այն միջոցին, այսինքն ամեն տան դռան առաջ բարձր տեղերեն մեծամեծ ամաններով պաղ ջուրը կը թափեն Զիչի-Մամայի գլուխն ի վայր. նա սոսկալի կերպով կը դողա խաչի տակը, բայց այնուհանդերձ ամենայն քաջությամբ կը դիմանա հեղեղի նման՝ մինչև իսկ փողոցը պլխուն թափած պաղ պաղ ջրերուն (նկ. 46)։

ՆԴ, 1893, № 67 (Կրն.)

116. ՈՒՇԱՈՒՐՈՒՆ

*Շապին-Գարահիսարում նման մուրա-
կով և թրջվող պատանու կամ աղջկա գլխին
մաղ էին դնում (նկ. 47), սրա վրայից մին-*



*Նկ. 47. Անձրևարեր տոն Շապին-
Գարահիսարում (բնագիրը՝ № 116)
Նկ. Հովհ. Քացակյանի*

*չև ոտները ծածկում սավանով։ Պատանին
այդպես հագնված շրջապատված ուղեկցող
մասսայով, կանգնում էր որևէ տան առաջ
և ձեռքերում ունեցած գդալները մաղի կո-
ղերին խփում ու արտասանում էր.*

*Ուշխուրուճին եկել է,
Շալե շապիկ հագել է,
Կարմիր կովից յուղ կուզե,
Գունդուկ հավից հավկիթ կուզե.
Տո՛ւր ասում,
Տուր յոթն օր,
Յոթը գիշեր,
Մատարաղի ամբարին,
Աղբատների արտին։*

Հա. խ. ձ. 31—32

117. ՁԻՁԻ—ՄԱՄԱ

*Անձրև բերելու նպատակով Ակնում և
Արմաղում մի տղայի կամ մի աղջկա մերկաց-
նում, հին ու մին ցնցոտիներով զգեստա-
վորում և գլխին մաղ էին անցկացնում. այդ
վիճակում նա Ձիշի-Մամա էր կոչվում (ջըր-
ջեր-մամա—խոսում խաբուն), որին ընկերա-
նում էին տղաների խումբը ու շրջում տնե-
տուն, տաճկերեն «հատուկ երգ մը շրթուն-
քին»։*

ԱՏ, 1920, էջ 117

118. ՆՈՒՐԻՆ

*Նուրինը պատրաստվում էր՝ Ախալքալա-
քում՝ մի ձողի վրա ամրացրած ցախավե-
լով, որին հագցնում էին կանացի շորեր և
գլխին քող էին գցում։ Ցախավելի վերին
ծայրին փայտե թևեր էին պատրաստում
(եվ. Ջվ, 247—248)։ Նոր Բայազետում
նույնպես ցախավելով էին պատրաստում
(նկ. 48), բայց գլխին դնում էին տղա-
մարդու գլխարկ (փափախ) (եվ. ԱՀ, XVII,*



*Նկ. 48. Նուրին, անձրևաբեր
(բնագիրը՝ № 118)
Նկ. Հովհ. Քացակյանցի*

*96)։ Մի այլ տեղ Նուրինը ներկայացնում էր
մեկ խաչափայտ, որին սպիտակ երկար
շորեր էին հագցնում (ՆԴ, 1893, № 67)։
Խարբերդում, Վանում և այլուր այն պատ-*

բաժանում էր փոքր խաչաձև փայտից, դարձյալ շորեր հագցնելով։ Սրվանձայանի նկարագրածով՝ փայտի վրա լաթեր էին փաթաթում և մարդու ձև տալիս (ԳՍ. Մն., 113)։ Շիրակում նույնը պատրաստում էին ավելով, որին փալասներ էին փաթաթում (ԱՄ. Փ, 273)։

Երկարատև երաշտի դեպքում անձրև բերելու ակնկալությամբ նկարագրված Նուրինր ման էին ածում դյուղերի փողոցները, անցնում տնեւտուն։ Նուրինի վրա տանտերերը և երեխաները ջուր էին թափում։ Ջուր էին սրսկում նաև շրջող անձնակազմի վրա։

Նուրինը ման ածող անձնակազմը կազմվում էր գլխավորապես դեռատի աղջիկներից և այրի կանանցից։ Բացառիկ դեպքերում մասնակցում էին նաև պատառ, ամուսին ունեցող կանայք։ Տղաներից կազմված անձնակազմ՝ ընդհանրապես ընդունելի չէր, բայց բացառություններ լինում էին։ Տղաները սովորաբար ջուր սրսկելուն և «կատակելուն» էին մասնակցում. նրանք շարչարում էին թե՛ տիկնիկին և թե՛ աղջիկներին։

Անձնակազմը սովորաբար զգեստափոխվում, հատարակ, երկար շորեր էր հագնում։ Շրջելիս նա կանգ էր առնում դյուղի յուրաքանչյուր տան բակում և երգում։ Երգի մեջ տանտիրուհուց խնդրվում էր կաթնամթերք, ձու, ալյուր և այլ ուտելիքներ՝ հատուկ ամանիներով։ Սովորաբար շրջող անձնակազմին դիմավորում և սպատարկում էին վերդատատանի տանտիկինները, փոխադարձ խոսակցությամբ ու երգերով։

Բ. ԵՊ, 51, 55—56

119. ՇԱՂԿԱՋԱՐԻ ԱՌԻՃԿՈՒՐՈՒԹԻՒՆ

Մինչև XIX դարի վերջերը փոքրատիական մի շարք հայարնակ գավառներում, ինչպես նաև Տարոնում փոքր տղաները առանձին և աղջիկներն առանձին խմբերով մարդագձև խրձիկ էին շինում, որին անվանելով Խուճկուրուրուկ, երեսը ճերմակ կտորով պատում և վրան աչքեր, քիթ ու բերան էին նկարում։ Մեջքը գոտի էին կապում և գույնզգույն լաթի կտորներով զարդարում։ Երեսի լաչակից ուլունքներ և պապղան փուլեր էին կախում և գլուխը ծաղկով պսակում։

Ծաղկազարդի այս հարանացուն փողոցփողոց ման էին ածում, պատուհաններից ու երդիկներից նրա վրա ջուր էին սրսկում, իսկ կանայք շրջողներին կորկոտ, ձավար, մողաշար (աղացված սիսեռ), ձեթ էին տալիս, որով երեխաները լուսաղբյուրների կամ առուների մոտ տապկոց կոչված կերակուրն էին պատրաստում։

ԱԴ. II, 101—102

120. [ՅՈՒԼ ԱՆՁՐԵՎԱԲԵՐ]

Անձրև բերելու համար պատրաստված յուլը կամ կովը առաջ բերում, աղջուրները մոմերով զարդարում և վառում էին դրանք։ Որոշ տեղերում այդ անասունի վրա շուրջառ էին գցում և իրենք էլ մոմերը ձեռքներին՝ թափոր էին կազմում։

ԳՍ. Մն, 128—129

121. [«ՊԱՏԵՐԱԶՄ»]

Ապրիլ ամսո մեջ անձրև չեկավ Ներքին դաշտ (Տիգրանակերտ). ընդհանուր կարծիք հատարակաց այս էր թե՝ հարուստները կախարդությամբ կապած են երկինքը (որպեսզի իրենց ամբարած ցորեններըը քանկ քանկ վաճառեն). ուստի որքան ժողովրդական կախարդներ կան կը տքնին ամպոց կապանքն արձակելու, որը քարի վրա բան մը դրելով կը ձգե ջրին մեջ, որը՝ մեռելի գանգ գերեզմանեն հանելով գետը կը ձգե, որը՝ իշու պլուխ ջրով կը լվանա, սև էշ, ճերմակ էշ չմնաց, որ չվայրին, և ինչ որ ըրին, անձրև չեկավ։

Ըլիբընկի դյուղացիք իրենց կանայք կապատպրենեն կուղարկեն Խոշավա դյուղին վրա, և այն դյուղի կանայքն ալ սպատազեն առնոց դեմ կելլեն. երկու կողմեն հրացաններ կը պարպվին, վերջապես ըլիբընկցի կա-

նայք կը հաջողին ոչխար մը ավարել և կը բերեն գոհել, գլուխը կարելով մեծ հանդիսով կը տանին ձգեն գետը, որ անձրև գա։

ԳՍ. Մն., 116 (Սան.)

122. ԼԻՇ ԱՆՁՐԵՎԱԲԵՐ

Ղափանի գյուղերում անձրև բերելու նպատակով մի կին շերեփը ձեռքին, թարս նստեցնում էին իշու վրա. իշու գլուխը թանով սպիտակեցնում էին, ապա այդ տիկինը ամբոխի հետ շրջագայում էր գյուղի մեջ, անից առն և երգում հատուկ երգեր։

Քաջ. Ա՛Հ, IX, 116



Նկ. 49. Անձրևաբեր պատավը Ղափանում էշով շրջելիս (բնագիրը՝ № 122)
Նկ. Հովհ. Բագակյանի

123. ԱՅԾԱԳԼՈՒԽ—ԱՆՁՐԵՎԱԲԵՐ

Թիֆլիսում 1860-ական թթ. երաշտի ժամանակ այծի (նկ. 50) և խոզի (նկ. 51) գլուխները փայտի գլխին ցցում, լաթերով ու ճյուղերով փաթաթում և ցեխոտում ու թաղից թաղ ման էին ածում։ Ժողովուրդը անձրևի ակնկալությամբ սրանց վրա ջուր էր սրսկում։

ԳՍ. Մն., 113—114

124. ԼԵՋ ԾՐՋԵՑՆԵԼ

Համբարձման բուն օրը, Մշո հոտաղներն իրենց նախրի միջից մի խայտավոր եզ էին ընտրում, որը «նույն օրը գեղի ոևանն շատ ավելի պատվավոր էր», և դրան ծոպավոր գորգ բաճկոն էին հագցնում ու տեսակ տեսակ ծաղիկներով զարդարում։ Պոչը զարդարում էին գույնզգույն լաթերով։ Այս զարդարանքների մեջ եզը գրեթե ամբողջապես կորչում էր։



Նկ. 50. Այծի գլուխն անձրևաբեր (բնագիրը՝ № 123)
Նկ. Հովհ. Բագակյանի

Արևի ծագման պահին զարդարված եզը իրեն շրջապատած մեծ թափորով սարից իջնում էր գյուղ։ Լախտակիր հոտաղները հպարտ բայլվածք ու դիրք էին ընդունում.

ցույց տալով, որ իրենք մեծ բան են պաշտպանում։ Գյուղ մտնելիս դղրդյունն ընկնում էր։ Ժողովուրդը դիմավորելով դրանց, բացականչում էր. «Համբարձման եղն եկավ»։



Նկ. 51. Խոզի գլուխն անձրևաթեր
(բնագիրը՝ № 123)
Նկ. Հովհ. Քացակյանի

Հոտաղներից ոմանք կողով և ոմանք էլ բղուկ էին կրում, որտեղ տեղավորում էին տներից նվեր ստացած ձվերն ու կարագը՝ շրջելու միջոցին։

Պատահում էր, որ միևնույն գյուղի առանձին թաղերի հոտաղներն առանձին եղ էին զարդարում, և երբ սրանք գյուղամիջում իրար էին հանդիպում, կողմերից մեկը մյուսին հարձակողական տոնով հարցնում էր.

— Բարեկա՞մ եք, թե՞ թշնամի։

Հակառակորդներն իրենց ինքնասիրությանը թույլ չէին տալիս ասելու «բարեկամ ենք», որովհետև դա հենց պարտության նշան էր համարվում։

— Թշնամի ենք,— ասելուն պես սկսվում էր փոխադարձ հարձակումը և պատերազմը։ Աղմուկն ու աղաղակն ընկնում էր գյուղի մեջ։ Լուրջ կռվի մեջ մահակների ու վարոցների հարվածները զգացվում էին միայն գյուղի հատարակության միջամտությամբ։

Կռիվը եզան հետ կապված արարողություններից մեկն էր, որի հետևանքով ջարդվածքներ և ուռուցքներ ստացող հոտաղները անմիջապես հաշտվում էին, երբ որ տեղի էր ունենում միջամտությամբ բաժանումը։ Կռվի և հաշտության արարողությունը հոտաղներին ավելի էր ոգևորում և զվարճացնում։

Հանդեսից հետո հոտաղները հավաքած մթերքներով գաշտում կերակուրներ էին պատրաստում և զանազան սպորտային խաղեր կազմակերպում։

Տղաներից հետու կերակուրներ էին պատրաստում նաև աղջիկները։

Բվպ., 1868, էջ 130—132. ԱԳ, II, 135

125. ԽՈՅ ՇՐՋԵՑՆԵԼ

Բորչալուում վարդավառի տոնն ավելի լավ յայլաններումն էր տոնվում, քան գյուղերում։ Շաբաթ օրը հորթարածները ծաղիկներ էին քաղում, վինջում և հորթերի ու կովերի վզից կապում։ Հետևյալ առավոտ, կիրակի, այս հոտաղները ծաղկեվինջերը ձեռներին շրջում էին և ծաղկափայլ յուղ հավաքում, առնում ապրակ եփում, ուտում, ուրախանում։

Հովիվներն էլ այդ կիրակի օրը մի խոյ էին ներկում կարմիր գույնով, ծաղիկներով և զանազան կտորներով զարդարում և տանուտեր մեն ածելով յուղ էին հավաքում, ուրախություն անում։

Աղջիկներն էլ ծաղիկներ էին հավաքում, վինջում, ընտեուն բաժանում և ծաղկափայլ հավաքում, միասին եփում, ուտում, ուրախանում։

Երբեմն էլ այս աղջիկները վիճակ էին շինում և հանում, ինչպես Համբարձմանը։

Եվ. ԱՀ, X, 267—268



Նկ. 52. Իրար վրա ջուր սրսկելու սովորությունը վարդավառին՝ Արեմտահայաստանում
Նկ. Հովհ. Բացակյացի

126. [ՋՐԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ]

Վարդավառի առնին... բոլոր ժողովուրդն հայոց, արք և կանայք, ծերք և մանկտիք, ջրախաղություն կը կատարեն. թե՛ տուներու մեջ և թե՛ փողոցները կամ դաշտերու մեջ, գետերու ափին կամ աղբյուրներու ակին ու առվակին մոտ խմբված ղերար կը դնեն ի ջուր, կամ գոնե կուժերով իրարու վրա ջուր կը թափեն։

ԳՄ. ԳԲ., 122

127. ՏՋԿՈՑԻԿ ԿԱՄ ՎԱՐԹՈՎԱՐ

Վարդավառի օրը Վանի երեխաներն իրար վրա և անցորդների վրա ջուր սրսկելու ժամանակ ասում էին.

— Վարտեռվրին քե չե՞մ տիսե, կամ վ՚ըրտեռվրին քի չե՞մ տիսնա՞։

ԱՀ, I, 178

128. ՋՐԱՊՁՏԻԿ

Ամառնային տաք եղանակն ստիպեր զմեզ ջուրց հետ խաղալ՝ թե ի զբոսանս և թե ի գովացումն։

Ջրապզտիկ շինելով ջուր սրսկեինք միմյանց վերա։ Քեզի որձա կոզակ գտնալով արմատի բերանին կտրեինք. կոզակի մեջ եղեզի պես բաց լինելով և արմատի կոզմն գոց։ Այս գոց տեղն մախաթով կամ հերուենով ծակեինք։ Հետո կես կանգուն երկարությամբ, մի մատի չափ հաստությամբ փայտ առնելով, փայտի մի գլուխ ցնցոտիով զարդարեինք, հետո ջրապզտիկ[ի]ն մեջ խոթելով, ջրապզտիկ[ի]ն ծայր ջրի մեջ դնելով փայտ վեր քաշեր։ միջոցին ջուր քաշեր, լեցուցաներ ջրապզտիկ[ի] մեջ։ Հետո ջրապզտիկ[ի]ն մեկին երեսին ուղղելով փայտիվն ճնշեինք զջուրն, որ ջրապզտիկ[ի]ի ծակեն պղպջով երթայր սրսկեր զերեսս այլոց և այլ տղայք ևս այսպես առնեին և զվարճություն

բաղում լիներ ի ջրապղպիկեն։ Եթե քեղի՞ կոզակ չգանայինք, եղեգե կամ փորյալ փայտե շինեինք։

Ջ. № 4184, էջ 188ա (վ.)

129. ՖՍԽԻՉ ԽԱՂԱԼ

Պատանի տղաները ամռանը ձեռք են բերում հասած բալզրղանի ցողուններ և մի ծայրը բաց, մյուսը ոտով փակ՝ ցնցուղ են պատրաստում։ Ոտի կոմմի փակ բերանը դանակով հարթում և սրա վրա, դեպի ներս, ճաղով ծակերի ցանց են ստեղծում։ Ապա վերցնում են մատիտի հաստությամբ մի ուղիղ ձողիկ, այդ խողովակից 10 սմ առավել երկարությամբ ծայրին փաթաթում են թաց շոր այնքան, որ դժվարությամբ մտնում է խողովակի մեջ։ Սրանով ամրողջանում է այն գործիքը, որ կոչվում է ֆսխիչ։

Սրա ցանցավոր ծայրը մտցնում են ջրի մեջ, մղան-ձողիկը հասցնում մինչև խողովակի հատակը և դանդաղ վեր քաշում, որով ջուրը ծծվում է փողի մեջ։ Այնուհետև մղանով ճնշելով ջուրը ցանցի միջից մղում են իրար վրա։

Խաղը հիմնականում տեղի է ունենում ջրափերին, որը երկար ժամանակ զբաղեցնում է երեխաներին։

Վ. Ժ. Ձ. (Ախ.)

130. [ՖՍԽԻ]

Կարինում ֆսխին պատրաստում էին քառորդ արշին թիթեղյա խողովակից, որը հետզհետե նեղանում էր։ Նեղ ծայրում ֆրսխին ունենում էր մի փոքր ծակ։ Ետևանը նույնն էր՝ փայտ, ծայրին շոր փաթաթած։ Ֆսխին պատրաստում էին տեղական թիթեղագործները։ Խաղը նույնն էր։

Եվ. Ժ., № 18

131. ՖԼՍԽԻ

Խաղը և խաղալիքը նույնն էր, վերջինս պատրաստում էին 1/4 արշին երկարությամբ եղեգնից։ Փակ ծայրում ծակերի ցանց էին ստեղծում հատ ասեղով կամ բարակ մեխով։ Ետևափայտի ծայրին փաթաթված լաթը թևով պինդ կապում էին, որ անշարժ մնար։

Եվ. Ժ., № 64, էջ 21

132. [ՋՐԱՄԻՉ]

Ակնում խաղալիքն ու խաղը նույն անունն ունեին։ Խաղալիքը պատրաստում էին ծառի ճյուղերից, որ թզաչափ երկարություն էր ունենում և ջրմփիչ էր կոչվում։ Սրանով վարդավառին երեխաներն անցորդների և իրար վրա ջուր էին սրսկում։

ՃՀԱ, 107

133. [ՖՇՖՇՈՒԿ]

Ուռենու կանաչ մորճից շինված խաղալիք, որով երեխաները իրար վրա ջուր էին սրսկում։

Բրջ. 279

III. ԿՐԿՆՍԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՏԱՐԲԵՐ

Հայաստանում պետական կրկեսային հաստատություն լինելու մասին գրավոր վկայություններ չկան։ Պատմություններից մեզ հասած կատարյալ կոտորակված տեղեկություններ վերաբերվում են լոկ ժողովրդական արվեստին։ Միջնադարից այդպիսի նյութեր են հաղորդել Եղնիկ Կողբացին և Դավիթ Անհաղթը։ Առաջինի տվյալները վերաբերում են կենդանիները վարժեցնելուն, իսկ երկրորդինը՝ խրտվիլակը լարի վրա շարժման մեջ դնելուն։

Ըստ այս հաղորդումների և բուն ժողովրդական տվյալների կրկեսային խաղերի տարրերը հիմնականում հետևյալներն են.

ա. Կենդանիներ վարժեցնել, վարժված կենդանիներով ժողովրդի մեջ ելույթներ ունենալ։

բ. Կենդանիներ և թռչուններ կռվեցնել. վերջիններիս միջոցով առնահանդեսներում, ուխտավայրերում, պյուզական հրապարակներում և այլուր հանդիսատես լայն հասարակության համար զվարճանք ստեղծել։

գ. Լարախաղեր, որոնք նույնպես կրկեսային ներկայացումներ էին պյուզամիջեներում, ուխտավայրերում, դերձների ժամանակ և այլն։

դ. Կառարշավներ և կենդանիների հետ մենամարտի փորձեր և այլն (սրանց վերաբերյալ նյութերը, որ մենք քաղել ենք հայ պատմագրությունից. առնչվում են բյուզանդական կրկեսի պատմության հետ։ Որոշ նկատառումով այդ նյութերը մենք զետեղելենք գրքի երկրորդ հատորի մեջ՝ ձիարշավների հետ միասին։ Այդպիսին է, օրինակ՝ Սմբատ Բագրատունու ակամա կռիվ-մենամարտը ցուլի, արջի ու առյուծի հետ։ Հայտնի է, որ ավանդության համաձայն կորովի Բագրատունին հաղթում է այդ կենդանիներին և ազատվում իրեն սպառնացող քաղաքական վտանգից։

Առանձնապես փայփայանքի են արժանացել լարախաղացությունները իրենց բազմաթիվ ձևերով։ Մինչև այսօր էլ դրանք ժողովրդական «բեմից» չեն իջնում և, միաժամանակ, մուտք են գործել ժամանակակից կրկեսի ծրագրերի մեջ։

Ա. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՎ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԿՈՎԵՑՆԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

134. ԿԱՊԻԿ ՎԱՐԺԵՑՆԵԼ

...Եւ այլ ոք զկապիկս անապատականս բմբռնեալս՝ հատիս և ընչապատիկս և ամենաշար ուսուցանեն։

Ե. ԵԱ. 49

...Եվ մի ուրիշը վայրի կապիկը բռնելով խեղկատակություն և գունաշարժություն է սովորեցնում։



Նկ. 53ա. Կապիկ խաղացնելու սովորություններ V դարում (բնագիրը՝ № 134)
Նկ. Հովհ. Բագակյանի



Նկ. 53բ. Արջ խաղացնելը V դարում (բնագիրը՝ № 135)
Նկ. Հովհ. Բագակյանի

135. ԱՐՋ ՎԱՐԺԵՑՆԵԼ

...Եւ այլ ոք զարջոյ թոժիւն անուցեալ՝ կաթաւիչս ուսուցանէ, և ետանեցուցեալ բարուց մարդկան՝ զգազանաբարոյն ցածուցանէ։

Ե. ԵԱ, 49

...Եվ մի ուրիշը արջի ճագը պահելով՝ պարող է դարձնում և մարդկանց սովորությունները վարժեցնելով՝ փոխում է նրա գազանաբարո բնությունը։

136. [ՕԶ ՎԱՐԺԵՑՆԵԼ]

...Եւ այլոց զբարբս իգակերպս կալեալ թովչութեամբք յընտելութիւն մարդկան ածեն, զբեցուցեալ վիճակն սպանողս։

Ե. ԵԱ., 49

...եվ ուրիշները իգակերպ վիշապին թովչանքով բռնում են և ընտելացնում մարդկանց՝ ջնջելով նրա մահացու թույնը։

137. [ԹՈՒՄՇԱՄԱՐՏ ԷՋՄԻԱՄՆՈՒՄ]

Ժամասացությունից հետո կաթողիկոսը կանչել տվեց ինձ և ասաց,... թե ինքը կամենում էր, որ ես և բոլոր քրիստոնյա աշխարհը դնացող վաճառականները գոմշամարտի զվարճությունը վայելենք։

Այս կռիվը տեսնելու համար տարան մեզ մի պարսպապատ հրապարակ, ուր այդ գոմեշներից ութ հատը կային։ Այդ կենդանիներին միմյանց դեմ գրգռելու համար յուրյ ավելն մի կարմիր մահուդ, և այս հենց սկզբում այնպես կատաղացրեց նոցա, որ առաջին եղջյուրի հարվածների վրա երկուսը անշունչ ընկան, իսկ մնացածների մեջ մեկը չկար, որ անվնաս մնացած լիներ։ Կռիվը ավարտվելուց հետո բերին շատ փայտ և միմյանց վրա դիզեցին և արքեպիսկոպոսներից մեկը մի մի սպիտակ մոմ բաժանեց բոլոր ներկա գոնվողներին, տերերին ու ծառաներին, որոնք հայտնեցին նորան, թե որքան տալու են հետևյալ օրը մոմի համար։ Մոմերը վառելով և յուրաքանչյուրը իրանը ձեռքին բռնելով, կաթողիկոսը գավազան բռնած շարական ասելով երեք անգամ պտտեց փայտակույտի շուրջը. նորան հետևեցան հոգևորականները և աշխարհականները։ Երբ բոլոն եկավ փայտակույտին կրակ տալու, վաճառականներից մեկն ասաց, թե ինքը այսքան ձեթ կը նվիրե եկեղեցու լապտերների համար. մի ուրիշն եկավ և նորանից ավելի խոստացավ. երրորդը այս վերջինից էլ ավելի առաջարկեց և վերջապես փայտակույտին կրակ տալու պատիվը ամենից ավելի առաջարկողին բնկավ։ Իսկույն ամեն մարդ յուր մոմը հանգցրեց զգուշությամբ պահպանելու համար, որովհետև նորա հավատացած են, որ ծովի վրա գտնված ժամանակները եթե փոթորիկ բարձրանա, վառելով և ծովը ձգելով այդ մոմերից մեկը մի քանի ապրիքներ ասելուց հետո փոթորիկը իսկույն կդադարի։ Հանդիսը ավարտվելուց հետո զանգակ տվին, բոլորն էլ վերադարձան եկեղեցի և հետո յուրաքանչյուրն յուր տեղը քաշվեցավ։ Ամբողջ գիշերը հայերը, տեր և ծառա, խմելով կնքեցին բարեկենդանը, այնինչ կաթողիկոսը յուր կողմից եկեղեցին զարդարել տվեց յուր ամենագեղեցիկ զարդերով։

Տավ., 87—88 (տե՛ս նաև Վգ. 42)

138. [ԳՈՄՇԱԿՈՒԻՎ]

Գյուղացիներն վերոհիշյալ եղանակով [խամից հանելով] զանազանում կանոնավոր աշխատության վարժեցնելեն ետքը գյուղին մեջ մոսլի գոմեշ ունեցողներն իրարու հետ կը խոսին, յուրյանց գոմեշներն հանել ի կռիվ։ Գյուղացիք արդեն կիմանան, զի խոսքերնին ծածուկ չէ և ես հիմ ուղևորության բնավ չտեսի խորհրդապահության մի նշույլ այդ հայ մարդոց քով, ձայն կը տարածվի գյուղի ամեն կողմը թե այս ինչ անձանց գոմեշներն այս ինչ տեղ կռիվ պիտի ընեն. ահա հոս է մեր աշխարհի հայոց գեղջկական կենաց մի հետաքրքրական կողմն, որ իրենց մեջ ամենուն առ հասարակ սիրելի է։ Երբ որոշյալ ժամն կը հասնի, երկու գոմշատյարք հրաման կընեն մշակներուն, թե «գուրս հանեցեք մեր մոսլիներն և բերե՛ք այս ինչ արտի մեջ (տեղվո անուն տալով), որ պիտի թողումք զանոնք ի կռիվ». մշակաց արդեն ուսած բանն է, անմիջապես ասոնք կը վազեն ուրախական ցույցերով.

երկու կողմանց մշակներն մոսլիններու պլուխը դրված չվաններու ծայրերն կը բռնեն երկու կողմանէ կոճն տակավին գոմիշի վզեն չհանած՝ ախոռներեն դուրս կը հանեն և կը տանին դեպ ի հայն տեղին, ո՛ւր պիտի լինի մեր գյուղացվոց գոմշակռիվն, զոր տեսանելու փափաքով մեծ և փոքր, արք և կանայք խառն բազմութեամբ հոն կը դիմեն։ Այս պահուս գոմշատարք ձեռքերնին եւեւնին դրած՝ վեհանձնորեն կը կենան բազմութեան մեջ. մշակներն ևս մոսլիներն բերած և պատրաստ կը կենան՝ անհամբեր սպասելով տյարց վերջնական հրամանին. վերջապես հրամանն կարձակվի. խոտաղներն զգոմեշս հարմար դիրքով մը կը կեցնեն, կոճերն վար կառնուն վզերեն և իրարու մոտեցնելով կը տան ճակատ ճակատի, չվաններն քակելով իրենք ետ կը քաշվին. մոսլիներն կռիվին կը շարունակեն և կարելի է ասել 3—4 ժամեն ավելի։ Գյուղի երիտասարդներն երկու կողմեն չվաններ ձեռքերնին բռնած՝ զգուշորեն կը կենան որպես զի այդ երկու կռվասեր անասուններ երբ դիրայր վնասելու չափ հասուջ երթան, հաղթութեյունն տակավին անորոշ մնացած, անմիջապես իրարմե պահեն։

Ագնիվ վերծանող, այժմ մեր մոսլիներն տակավին կռիվին շարունակելու վրա կը գտնվին. տերերն աչալուրջ հսկողութեյամբ կեցած կը նային գործի վախճանն տեսնել, սիրտերնին կը նետե յուրյանց այդ անասնոց հաղթութեյուն տանելուն և կամ պարտութեյուն կրելուն համար. վերջապես կամ կռիվն երկարելով իրարմե կը բաժնեն, կամ ինոցանն մին կը փախչի, որով և հանդեսն վերջ կը գտնի. նեռկա եղողներն կը վերադառնան տուներնին և ամանք ևս կը շնորհավորեն զհաղթողին տեր, որս դեմքի ամեն կողմը կըտեսնվի բնական մի գոռոզութեյուն, իսկ հաղթվողի սիրտ վերա կը սիրե խորին տրտմութեյուն մը։

Մ. Նոր, III, 181—183.
Վար. Ան, II. 222—224 (վ.)
Բջ., 157—158 (Բջ.)

139. ԳՈՄՇԱԿՌԻՎ

Տարոնում համբարձման տոնի օրը «Հոտաղաց անզգուշութեյամբն երբեմն կը պատահի նաև գոմշոց կռիվ, որ զարհուրելի կերպով մը հոտաղներեն մասնավորապես սրած կոտոշներով կռիվին զիրար բզքռելե։ Կանայք ու տղայք բարձր տեղերու կապավինին, որ չըլլա թե մեկը հաղթվելու ժամանակ անոնց տրքին տակ մնան, վասն զի հաղթականը սաստիկ արագութեյամբ երկայն տաեն զմյուսն կը հալածե։ Երիտասարդները բոլոր հոն կը լեցվին, դաշտը աղաղակներով կը լեցվի, ու հոտաղներ ալ յուրաքանչյուրը իրենին քաջալերական ձայներ կու տա, վրա ջուր լեցունելով ու շփելով, ինչվան որ մեկն հաղթվի ու փախչի՝ զամանս ի տուն, զոմանս հուրախութեյան թողլով»։

Բվպ., 1868, էջ 133

140. ԽՈՅԱԿՌԻՎՆԵՐ

Ախալքալաքում խոյ կռվեցնելու սովորութեյունը շարունակվում էր մինչև 1910-ական թվականները։ Քաղաքի շատ երիտասարդներ ու տարիքավոր մարդիկ ընտիր խոյեր էին պահում, հատուկ կերակրում և զարդարում։

Ուշ գարնան ու ամռան կիրակի կամ տոն օրերին հրապարակ էր հրավիրվում հետաքրքրասեր հասարակութեյուն՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ։

Տերերն իրենց խոյերի զարդերը նախապես հանում էին և արձակում իրար վրա։ Սկսվում էր խոյահարման կատաղի կռիվը և կողմերի հարայհրոցն ու բացականչութեյունները։

Համեմատաբար թույլ խոյ ունեցողները խախտելով տրադիցիան, նախապես հաղթանակն ապահովելու նպատակով խոյերին օղիով հարբեցնում էին։ Խոյերն այդպիսի դեպքերում կատաղի էին դառնում և հանկարծակի հարձակումներով հաղթում իրենց ուժեղներին։ Վերջիններիս տերերը գլխի ընկնելով սուտում և վհճեր ու կռիվներ էին



Նկ. 54. Գոմշակովիվ Արարատյան հովտում

Նկ. Ռ. Մնացականյանի

սարքում։ Կռիվները երբեմն անհատական բնույթից վեր էին ածվում ֆետիշականի, որոնք հանդիսականների կողմից խնդանձանքի էին արժանանում։

Բ. ժո. ա. (Ախ.)
Վար. Տե. ՀՏ. II, 230—231.
Եվ. ժո, № 71, էջ 14

141. [ՆԵՐԻՆԵՐ ԿՈՎԵՑՆԵԼ]

Տարոնում ներինների (արու այծերի) կռիվը նույնպես կազմակերպվում էր գարնանը և ամռանը, երբ դրանք հոտից առանձին էին պահվում։ Սրանց տերերը ևս ընտրում էին փորրուց, վարժեցնում էին։ Ներինների կռվի ժամանակ տերերը հետևում էին դեպի դիտողները, որոնք այս կամ այն կողմին հարելով՝ երկու հրահրող, աղմուկ հանող խմբեր էին կազմում։ Լինում էին դեպքեր, որ հասարակության այդ բաժանումը ելնում էր այս կամ այն խմբի կողմից ներինների վրա դրված դրոշից։

Մեկի պարտությանն նշանները երևալիս, մյուսի կողմնակիցներն սկսում էին պարտվողին պաշտպանել իրենց բացականչություններով։

Ներինների նախկին դիրքը աստիճանաբար փոխվում էր հարվածների հետևանքով. երբ ուժեղ հարվածից մեկն ու մեկը ստիպված էր լինում շարժվել աջ կամ ձախ, ներինները դանդաղորեն պատւտ էին գալիս իրենց առանցքի շուրջը։

Մ. ժո. ա. (Տրն.)

142. [ՇՈՒՆ ԿՈՎԵՑՆԵԼ]

[Թագավորն իր աղջկա ուղնկաններին] ասում ա, որ մի շուն բերեն իր շան հետ կռվելու։ Թոռչու ապեն գո՛ւս ա կանչում իր շանը։ Որ վրա ա գալիս Թագավորի շան վրա, բզիցը բռնելն ու խեղդելը մին ա անում։

ՀԺՀ, V, 58 (Լո.)

143. [ՇՈՒՆ ԿՈՎԵՑՆԵԼ]

Շուներ կռվեցնել սակավ զբոսանք չէր մեզ համար։ Մեր Թագի շունը, որ միշտ բարեհամաբար վարվեն իրարու հետ, բայց երբեմն մեր մեր տղայության զվարճության համար կռվել տայինք իրարու հետ։ Քիչ մի հացի փշուրք և ոսկերոտիք ճարելով Թագի բոլոր շուներ կանչեինք։ Երբ բոլոր գային, հավաքվեին, 1—2 բաժանելով քիչ հետուն հացի փշուրք և ոսկերք նոցա առաջ ձգեինք։ Նոքա հապճեպ սկսեին ուտել, մյուս 3—4 շունք գային նոցա բերաններեն հափշտակելու,—ահա՛ քեզ շան կռիվ, ահա՛ քեզ տղայական զբոսանք։

Ջ. № 4184, էջ 181ա (Վ.)

144. ԹՌՉՈՒՆ ԿՈՎԵՑՆԵԼ

...Հեքսի օրն ասեց.—Ինձ սև դուշ ունեմ, պըտես դու սիպտակ դուշ բերես կռվացընենք։ Իմը ախտի՝ քու գլուխդ կտրեմ, քունը ախտի՝ ախչիկս տամ։

Քշերով որ Թաթավորի դուշն էկավ, արեվի հառաչը փակեց. տղեն տալդալամիշ էլավ, ղշի բմբուլը ավուց կրակին, Թաթավորի ղշի մի հատը մնաց ոչ, բմբըլները նի ին ըլնըմ երկինքը, չանգակները վեր Թափում գետինը։

Ասեց.—Բոլ ա, քու ղշերը հետացրու։

...Ասեց.— Թաթավորն ապրած կենա, տարա՛ ախչիկդ։

Ասեց.—Տարա՛ր։

Մրդ., I, 216 (Աչա.)

145. [ԱՔԱՂԱՂ ԿՈՎԵՑՆԵԼ]

Աքաղաղի կռիվ շան կռիվեն ավելի դվարճալի է։ Շաբաթներով աքաղաղաց գրի և միս տայինք։ Հետո բոլոր Թաղի տղայք ժողովելով սույն հավերու դռոդ Թագավորք կռիվի Թող տայինք և մեք եղունգ-եղունգի վերա քսելով,— Տի՛կ, տի՛կ,— ասելով գոռոզներ գրգռեինք։ Սոքա երբեմն այնչափ փիրար հարվածելով հոգնեին, որ այլ ևս չկարենալով շարժել, իրարու բոլ

որպես զի իյնային մնային և երկու ժամեն հազիվ թե տեղեն շարժելով վեր ելնեին։ Երբեմն մին փախչեր և մյուսն եահեն իյնար, բայց մեք փախչողին պաշտպան լինելով, ուրիշ մեկ չհոգնած աքաղաղ հոգնածի վերք[ա] թողուինք։ Հոգնած գիտնալով, թե փախած աքաղաղն է, որ նորեն դարձեր յուր հետ կռիվ կանե, ամենայն կատաղությամբ կռվեր ընդ նորայն, մինչև արյուն կատարներին ընկելով աչքերնին այլ ևս զիրար չէին կարող տեսնալ։

Եվ այլ շատ բաներ ընել տալինք աքաղաղաց և նոցա վիրավորության և խեղճության վերա ուրախացյալ զվարճանալինք։

Ջ. № 4184, էջ 181բ (վ.)

146. [Ա Ք Լ Ո Ր Ա Կ Ե Վ]

Անցյալում հաճախ, իսկ այժմ սակավ պատահում է, որ մարդիկ հաճույք են զգում երկու աքլոր միմյանց հետ կռվեցնելու և այս միջոցին նրանց կռվի դրդելու նպատակով քսում են իրենց բութ մատների եղունգները միմյանց և ասում.

Տի՛կ, տի՛կ, տի՛կ,
Գարի կըտամ,
Յորեն կըտամ,
Տի՛կ, տի՛կ, տի՛կ։

Եվ. ժո., № 71, էջ 12

147. Մ Ի Ջ Ա Տ Ա Կ Ա Բ Ա Ն Ե Ր

Տե՛ս «Մակատուղ, ականջ խան այուս» (Վանից. Ա.ա, I, 75—76, § 7)». «Բղեղ կռվեցնել» (Ախալքալաքից. Բժխ. ձ.). «Ասեղի գուլ թագավորներ կռվեցնել» (Ագր., 1886, № 3, էջ 120—127). «Թիթեռախաղ» (Բորչալուից. Եվ. Ա.Հ, XI, 43). «Ալյուր մաղե» (Վանից. Ա.ա, I, § 8)։

Բ. ԼԱՐԱԽԱՂԵՐ

148. [Խ Ր Տ Վ Ի Լ Ա Կ Ա Ղ Ա Յ Ն Ե Լ]

...Քանզի ոչ հնարից կարօտանայ և արբանեկութեան առ ի յայլոց ամանց, որպէս առ մեզ իշխանութիւնս պէտս ունին յոքնաձեռնութեան վասն ներգոյ սոցունց տկարութեանց, այլ աստուածայնագոյն կարօղ զօրութիւնն ի ձեռն պարզ շարժուիեան պէսպէս տեսակս կատարէ, որպէս արարեալ լինին մեծ արհեստքն ի ձեռն միոյ գործարանի, զոր զքաստերիէ անուանեն. բազումս և զանազան իրաց կատարեն ներգործութիւնս։ Նոյնպէս և լարախիլքն մին թելք խլելով ի լարիցն՝ շարժեցուցանեն զկենդանոյն զպարանոցն և զձեռսն ուսուիքն. այլ պատճառ է այսր իրի, զի ամենայն մասունքն առ իրեարս իւիք քաջահարմարութեամբ են շարակացեալ (նկ. 55)։

ԴԱ. Մ, 621


...Որովհետև հնարագիտությունների և ուրիշների օգնության կարիքը չի զգում, ինչպես մեզանում, որտեղ իշխանները պետք ունեն բազմաթիվ աշխատողների՝ իրենց ներքին անկարողության պատճառով։ Բայց աստվածային կարող զորությունը մի պարզ շարժման միջոցով տեսակ-տեսակ գործեր է ստեղծում, ինչպես որ անում են մեծ արհեստավորները մի գործիքով, որին քաստերիե են կոչում. բազմաթիվ և զանազան գործողություններ են կատարում։ Նույնպես էլ լարի վրա խրտվիլակներ խաղացնողները. որոնք մի թել պոկելով լարից՝ շարժել են տալիս կենդանու (խրտվիլակի) պարանոցը և ձեռքերը ուսերով։ Այս բանի պատճառը այլ է, քանի որ (խրտվիլակի) բոլոր մասերը միմյանց հետ կապակցված են համաչափ և լավ հարմարեցված։

149. [Լ Ա Ր Ա Խ Ա Ղ Ա Յ]

...Ի՛ր և առաջի վրանին՝ ուր բազմեալ էինք ի սեղանն, իբրու Բ. քարընկեց հեռադոյն՝ ճանապազ խաղայր ի չուանին։

Ակ. պ, 50

...Վրաններուն առջև, որտեղ սեղան էինք Նստած, մեզանից մոտ երկու քարընկեց հեռու պարանի վրա լարախաղաց էր խաղում։



Նկ. 55. Լարի վրա խոտվիյակ խաղացնելու հնդիազրական ձևր V դարում. ըստ Դավիթ Անհաղթի (ընագիրը՝ № 148)
Նկ. Հովճ. Քացակյանի



Նկ. 56. Լարախաղ կաթսայով
Նկ. Հովճ. Քացակյանի

150. [Լ Ա Ր Ա Խ Ա Ղ]

Ընդունելի խաղաց Ստամպոլ ի Սուլթան Պայազիտն 1154 (1705), նոյեմբերի 15։ Յետոյ վարի իսկելէյէն կապեց պչուանն մինչ ի դիմացն և խաղաց և էր ուրախանմայ։

Մժ, 339

1154 (1705) թվականի նոյեմբերի 15-ին Կոստանդնուպոլսում Սուլթան-Պայազիտի ժամանակ լարախաղաց խաղաց։ Հետո վարի տախտակամածից կապեց պարանը մինչև դիմացը և խաղաց։ Եղավ հմայքի տոն։

151. [Լ Ա Ր Ա Խ Ա Ղ]

Ի սոյն [1763] թիւ սեպ. եկին փահլիվանք [ի Վան] և խաղացին ի վերայ պղնձէ թելի։

Մժ, 375


Սույն [1763] թվականի սեպտեմբերին եկան լարախաղացներ [Վան] և խաղացին պղնձյա լարի վրա։

152. [Լ Ա Ր Ա Խ Ա Ղ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն]

Մեր հայ իրականության անցյալում լարախաղացությունը այնպիսի զբաղմունք էր, որով պարապողը տարին տասներկու ամիս չէր զբաղվում։ Գարնանային և ամառային ամիսները այդ զբաղմունքի համար սեզոնային օրեր էին։

Լարախաղացները, որ երբեմն խաղում էին գյուղերում, ջավախք էին գալիս մեծ մասամբ դրսի գավառներից, մանավանդ

Արևմտահայաստանից, որոնց մեջ բիթլիս-ցիներն առաջնակարգ տեղ էին գրավում։



Նկ. 57. Լարախաղ՝ ոտքերին գաշուհններ կապելով
Նկ. Հովհ. Քացակյանի

Լարախաղացը, իհարկե և որոշում է նրա անունը, խաղում է լարի վրա, որպիսի լարի հաստությունը 3—4 սմ էր հասնում, իսկ երկարությունը՝ 40—45 մ։ Այս լարը գետնին էին ամրացնում այսպես։ Կալերում կամ մոտակա դաշտերում, շուրջ 15 մ հեռու տարածության վրա երկու տեղ կանգնեցնում էին երկուական սյուն, որոնց ստորին ծայրերը 70—100 սմ խորությամբ թաղում էին գետնի մեջ։ Այդ երկու սյան հեռավորությունն իրարից՝ լինում էր մոտ 3—4 մ։ Սրանց գլուխները վերևում իրար միացնում, խաչաձևում, կապում էին։ Ապա այդ զույգ զույգ խաչաձևված գերանների գլխին դնում էին հաստ պարան, այն լարը, որի ծայրերը սյուների մոտից մոտ 12 մ տարածությամբ հեռու, շեղ ուղղությամբ, իջեցնում էին գետին և փորում 15—20 սմ խորությամբ երկու փոս՝ պարանի ծայրերի օղակներն անց էին կացնում մի մի կարճ, 75 սմ երկարությամբ փայտերի, որոնք թաղվում էին այդ փոսերում, շեղ դրությամբ։ Ամրությունն ապահովելու նպատակով փայտերի փոսերում հողի հետ քար էին լցնում ու պնդացնում։

Որպեսզի լարը ձգվեր, պնդանար և առաձգականությունն ապահովվեր, խաչաձև անկվող փայտերը վեր էին բարձրացնում լարը վրայից անցկացնելուց և պարանի երկու ծայրերը կապելուց հետո։ Լարն, այդպիսով, գետնից բարձրացնում էին 5—5½ մ։ Այդուհետև միայն լարախաղացը, որ հաճախ փանիկաև էր կոչվում, ձեռքն էր վերցնում հավասարակշռությունը պահպանող, մոտ 6—6½ մ երկարության ձողը, ծոկի ծայրից սկսում էր բարձրանալ։ 3—4 մ առաջ գնալիս զույգ ոտքով ճոճում էր պարանը, ստուգելու համար դրա ամրությունը և սյուների պնդությունը։ Մինչև ծեր հարթությունը բարձրանալը, այդ փորձը նա կրկնում էր 2—3 անգամ։ Եվ այնպես, քիչ հետո լարախաղացն իր բոլոր ոտքերով հասնում էր ծոկի հորիզոնական մասին։

Լարախաղացն ինքը հագնում էր զաղակ (սաժ) կոչված կտորից արխալուղ, որ գեղին



Նկ. 58. Լարախաղ աչքերը կապելով
Նկ. Հովհ. Քացակյանի

կամ կարմիր գույնի էր լինում։ Արխալուղը մեծ մասամբ լինում էր կիսաբաց կրծքով. վերին մասն առանց կոճակի էր, իսկ ստո-

րինը՝ կոճակով։ Արխալուղի կիսաբաց կրծքից երևում էր պրա տակից հագած նախշազարդ կրծկալը։ Արխալուղի փեշերը փոքիչ



Նկ. 59. Լարախաղ՝ ջրով լիքը շիշը գլխին դրած
Նկ. Հովհ. Բացակյանի

բով էին լինում և կարճ, որպեսզի խաղացողի շարժումները չխանգարվեին, այդ պատճառով դա մասամբ նմանվում էր կանացի յուբկայի։ Շորի այս ձևը նաև նրա համար էր, որպեսզի խաղային իրերի ժամանակ փեշերը վեր ու վար շարժվեին։ Արխալուղի վրայից, խաչմերուկ արած, կապում էր հուռումների ժապավենները, որոնք առանձին շուք էին տալիս կրծքին ու թիկունքին։ Հուռումները եռանկյան ձև էին ունենում, որոնց մեջ դաստակ թուղթ, իսկ երբեմն էլ Նարեկացուց կամ վեցհատարյակից որևէ աղոթք էր լինում։ Հուռումների եզրերը զարդարվում էին ծոպերով, որ ծաղկաձև էին լինում և փուլերով։ Հուռումի վրայի մասը զանազան գույների կտորներից էր արվում։

Տակից հագած վարտիքի վրա լարախաղացը հագնում էր կարճ շալվար, որի վրա շեքամասում 20—25 սմ լայնությամբ և 60—65 սմ երկարությամբ մի բարձ էին դնում, որպեսզի վեր թռած և այնտեղից լարին ոտնաթաց իջնելու վայրկյանին մարմինը պատանիից վնասվածք չստանար։ Բարձը լցրած էր լինում բրդով կամ փետուրով։

Բարձի վրայից հագնում էր և մի գունավոր, լաստիկ շալվար, լայն փողքերով։ Փողքերի ներքևի մասերը տոլաղներով կապում էր սրունքներին, կամ կոճերի հետ, որպեսզի խաղալու ժամանակ իրեն չխանգարեին, որևէ բանի դեմ չառնեին։

Գլխին դրվում էր թաղիքե թեթև գդակ, կամ արախճին և կամ թաշկինակ էր կապում։

Այն ձողը, որ լարախաղացն առնում էր ձեռքը հավասարակշռությունը պահպանելու համար, ուներ երկու ծայրերին կապած ավազով լցրած պարկեր կամ գուլպաներ, յուրաքանչյուրը մոտ կես կգ ծանրությամբ, թեև դրանց փոխարեն ոմանք հագցնում էին երկաթե գնդակներ։ Ձողի մի ծայրին մոտիկ լինում էր երկաթե կեռ, որ երբ խաղացողն ուզենում էր լարի վրա նստել, քաշ աներ այն լարից ներքև։


Լարախաղացն իր ցածում, գետնի վրա ունենում էր մի ծաղրածու, որին թուրքերեն



Նկ. 60. Լարախաղ՝ երեխային շալակած
Նկ. Հովհ. Բացակյանի

ասում էին յուղուրթմի, յալանչի կամ տակի մասխարա (նկ. 64)։ Դա լարախաղացի կլոունն էր, որը հագնում էր շուռ տված

կարճ մուշտակ, գլխին՝ շուռ տված փափախ, երեսին՝ մորթուց շինած դիմակ, երբեմն դիմակը միաժամանակ ծածկում էր և՛ գլուխը, և՛ երեսը։ Երբ լարախաղացն սկսում էր լարի վրա խաղալ, ծաղրածուն սկսում էր նրա տակ կատակաբանություններ անել։ Նմանեցնելով իր շարժումները վարպետի շարժումներին, նա սկսում էր վեր վեր ընկնել, պառկում էր մեջքին, ոտքերն սկսում էր դեպի վեր անկել ու թափ տալ, գլուխկոնծի



Նկ. 61. Լարախաղ՝ սկուտեղին նստած


էր տալիս, պորտը խաղացնում, երեսը վեր անկում, լարախաղացի հանդեպ լեզու հանում ու զանազան անճոռնի ծիծաղաշարժ ձայներ արձակում, խաղացողին անազ էր տալիս։ Սովորաբար ձեռքին մի կարճ ու կտրած ճիպոտ էր բռնում, որը նույնպես նմանեցվում էր լարախաղացի ձողին։ Մի խոսքով՝ ծաղրածուն գետնի վրա կրկնում էր այն ամենը, ինչ լարի վրա կատարում էր լարախաղացը։

Բացի այն ձևերից, որոնք լարախաղացը կատարում էր պարելու, վեր վեր թռչելու, լարի վրա կոպքանց կամ շնքով իջնել-բարձրանալու միջոցով, նա կատարում էր նաև հետևյալ ձևերը՝ հնարքները։

1. Լարի վրա մանր էր գալիս չմուշկ հագած։

2. Ոտքերը փորր պղնձե կաթսայի մեջ հագցրած՝ նա լարի մի ծայրից մինչև մյուս ծայրն էր գնում ցատկեր կատարելով. հաղթահարում էր ամանի ուռուցիկ հատակից առաջացած դժվարությունները (նկ. 56)։

3. Ոտքերին աջ ու ձախ կապում էր մերկացրած դաշույններ և այդպես անց էր կենում լարի վրայով (նկ. 57)։



Նկ. 62. Լարախաղ՝ շլին գլուխկոնծի կանգնած
Նկ. Նկ. Հովհ. Քացակյանի

4. Աչքերը կապում էր թաշկինակով և անցնում լարի վրայով մինչև մյուս կողմը (նկ. 58)։

5. Անց էր կենում գլխին ջրով լիքը մի շիշ դրած (նկ. 59)։

6. Փորր երեխային, երբեմն էլ մեծերին շալակում և անցնում էր լարի վրայով (նկ. 60)։

7. Նստում էր սկուտեղի վրա և լարի մի ծայրից մյուսը սողալով անցնում (նկ. 61)։

8. Շշի բերանը դնում էր լարի վրա, գլուխը դնում շշի հատակին, գլխիվայր կանգնում օդի մեջ (նկ. 62)։

9. Երկու երեխայի չվաններով կապում էր աջ ու ձախ ոտքերին, դեմքից մոտ 70 սմ բարձրությամբ և քայլում լարի վրա՝ իր կախ տված բեռներր ոտքերի հետ առաջ տանելով և այլն (նկ. 63)։


Խաղի ժամանակ լարախաղացի հետ շրջող նվագախումբը փչում էր զուռնան,

դիմբրտում էր դավուլը։ Գյուղի ժողովուրդը հավաքվում, շրջապատում էր լարախաղացին, դիտում, հրճվում։ Քանի գնում, խաղը տաքանում էր, նրա հետ տաքանում էին

Ջուռնայի ձայնը կարկում էր։

— Գալդ ուտից, գնալդ ո՞ր,— դառնում էր ծաղրածուն լարախաղացին։

— Գալս գյուղից է, գնալս Մեկկա, Ջան-



Նկ. 63. Լարախաղ՝ ոտքերից երեխաներ կախած



Նկ. 64. Ծաղրածու լարախաղացի
Նկ. Նկ. Հովհ. Բացակյացի

ծաղրածուի ծամածռությունները, և երբ հասարակությունն ընկնում էր հափշտակության մեջ՝ լարախաղացը նստում էր մի կողմի գերանների վրա, նայում ներքև։ Այդ պահին ծաղրածուի հարցումով, երկուսի և նվագախմբի միջև երկխոսություն էր սկսվում։

— Փահլեվա՛ն ախպեր։

— Հրամմե՛, ախպեր ջան։

— Տո ձենդ կտրի՛,— դառնալով ջուռնաչիներին, ասում էր ծաղրածուն։

Ջուռնաչիների պվսավորը ջուռնայով դիտմամբ այո՛ւ, լյո՛ւ, լյո՛ւ էր անում, իբրև թե ջուռնայի ձայնը կտրելու համար, բայց չէր հաջողվում։

— Տո քեզ եմ ասում, շան թուլա, ձենդ կտրի՛,— ասում էր ծաղրածուն։

դիլլի ժամի դուռը մուրազ առնելու, Թաղրի աստծուն կանչելու, որ ժողովրդին օգնի։

— Փահլեվա՛ն ախպեր։

— Հրամմե՛, ախպեր ջան։

— Էս հունարը, էս շնորհքը ո՞մ ըլլի։

— ...Աստծուն ըլլի, տասներկու առաքյալին ըլլի, Հիսուսի չորս ավետարանիչին ըլլի, Շիրվանի շեյխերուն ըլլի...

— Է՛ վալլա, փահլեվան ախպեր, էդ հունարը ո՞մ համար ես ծախսում, դիտե՞ս։

— Սարգիս աղայի համար,— ասում էր լարախաղացը,— ակնարկելով հանդիսատեսներից ամենահարուստ մեկին։

— Տո փչի՛, շա՛ն տղա ջուռնաչի, դո՛չի՛։

Ջուռնաչին սկսում էր նվագել, թմբկահարը՝ թմբկահարել։ Ծաղրածուն զանազան

ծամածռություններով վազում էր դեպի Սարգիս աղան՝ փող վերցնելու։ Ջուռնաչին շարունակում էր չալել իր եղանակը։ Իսկ ծպրածուն սառնալով Սարգիս աղայի



Նկ. 65. Լարախաղ՝ սկուտեղին կանգնած
Նկ. Հովհ. Քոթակյանի

դրամը, վերադառնում էր, դյում լարախաղացի դիմաց գետնին փռած թաշկինակի վրա ու էլի հարցնում.

— Փահլեվա՛ն ախպեր։

— Հրամմե՛, ախպեր ջան։

— Հունարը հունար ըլլի, հունարը ու՞մ ըլլի։

— Հունարը Մարկոս ապին ըլլի։

Եվ այսպես 10—20 մարդուց բավականին դրամ հավաքելուց հետո լարախաղացը նվագածուների տակ նորից շարունակում էր խաղալ, ապա նորից հավաքելուց հետո, հանդարտությունն ինքն էր սկսում իր լուման գցել թաշկինակի վրա։

Երբ 3—4 ժամ տևող խաղից հետո լարախաղացն իջնում էր ցած, ժողովուրդը ցրվում էր։

Լարախաղացի հավաքած դրամը հասնում էր 15—30 ռուբլու։

Երբեմն պատահում էին կին լարախաղացներ, միայն շատ սակավ։

Ինչպես տրանք, նմանապես և տղամարդ լարախաղացները հնում նախապաշարված էին համատարած, թե իրր լարախաղացությունը վերուստ տրված «տուրք էր Մշու Սուլթան տուրր Կարապետի», կամ, ինչպես ասում էն, «օխտո անունի»—Հովհաննեսի, Մկրտիչի, Կարապետի, Մարտիրոսի, Ավետիսի, Մարգարի, Առաքյալի կողմից։ Այդ պատճառով էլ բոլոր վայրերից, ի թիվս որոնց և Ջավախքից, ձի նստում, կամ ոտքով գնում էին նրա դուռը ուխտի, մուրազ խնդրելու։




Նկ. 66. Վագր լարի վրայով
Նկ. Հովհ. Քոթակյանի

Բայց հենց 1900-ական թվականներին արդեն այդ նախապաշարումներն սկսել էին վերանալ, ըմբռնելով, որ դա լոկ ճարպկություն և սովորելու արդյունք լինելով որևէ կապ չուներ սրբերի հետ։

ՀՄ. ՀԺԻ. IV, ա., 230—236

153. ԼԱՐԱԽԱՂԱՑՈՒԹՅՈՒՆ

Մշո գավառը հայտնի էր իր ընտիր լարախաղացներով։ Ժողովուրդն այս արվեստը համարում էր ս. Կարապետի ընծա՝ երազի միջոցով։ Խաղի պահին պյուղի երկու կեսե-



Նկ. 67. Պատրաստվում է յատկանշական կատարելու

րի կամ թաղերի աղջիկներն սկսում էին պարանի հակառակ ծայրամասերը զարդարել իրենց պատրաստած գույնզգույն թաշկինակներով։ Լարախաղացը նախընտրում էր բարձրանալ այն ծայրից, որն ավելի լավ էր զարդարված (այդ բոլոր թաշկինակները մնում էին խաղացողին իբրև նվեր)։

Լարախաղացն այնուհետև սկսում էր իր խաղերը, կատարելով հետևյալ վարժությունները։

1. Վազքով անցում պարանի մի ծայրից մյուսը (նկ. 66)։

2. Դանդաղ պարախաղ պարանի երկարությամբ և նրա կենտրոնում (նկ. 72)։

3. Արագ պարախաղ պարանի երկարությամբ և նրա կենտրոնում։

4. Յատկանշաիկներ (նկ. 68) և հնձ. նուիներ (նկ. 69) պարանի կենտրոնում։

5. Նստել պարանի կենտրոնում և ոտաիլ (նկ. 75)։


6. Անցում պարանով՝ աչքերը կապած (նկ. 58)։

7. Անցում պարանով՝ ոտքերն իրար կապած։

8. Անցում պղնձամանի մեջ կանգնած (նկ. 56)։

9. Անցում սկուտեղի վրա կանգնած։

10. Նստել պարանին երկու ոտքով հենված ամոռին (նկ. 70)։



Նկ. 68. Յատկանշաիկ լարի վրա
Նկ. Կ. Հովհ. Բացակյանի

11. Ոտքերով կախվել պարանից և կատարել զանազան վարժություններ (նկ. 71)։

12. Ոտքերին երեխաներ կապել-կախել ու պարանի վրայով անցում կատարել (նկ. 63)։


Լարախաղացը ուղղահայաց կանգնեցրած գերանի վրա կատարում էր հետևյալ վարժությունները.

1. Բարձրանալ գերանի ծայրին և մեկ կամ երկու ոտքով կանգնել վրան (նկ. 73ա-բ)։


2. Մի ոտքը կապելով գերանածայրին, կախվել կամ դուգահեռ դիրք ընդունելով վարժություններ կատարել (նկ. 73բ)։

Ժամանակ առ ժամանակ լարախաղացը հենվում էր փայտե ոտքերի վրա և քայլում ու վազում էր գետնի վրա. այդ դրությամբ նա երեխա գրկած կամ առանց դրան հատուկ

եղանակով պարում էր, ապա կատարում ձեռնածուական վարժություններ, անցնում էր արգելքների վրայով (պատ, առու և այլն), ոտումներ էր անում մեկ կամ երկու ոտքով



Նկ. 69. Հեծնոցիկ լարի վրա
Նկ. Հովհ. Քացակյանի



Նկ. 70. Լարախաղ՝ աթոռին նստած
Նկ. Հովհ. Քացակյանի

և այլն: Այդ նույն վայրեն ոտքերով նա խաղից հետո մարդ էր գալիս տնեսում և յուրաքանչյուր տան առաջ որևէ ձև-պար կատարելով նվերներ էր հավաքում: Հանգստանալիս նստում էր բարձր կտուրներին:

Լարախաղացները Մշո գյուղերում ունեին հատուկ տարազ, որ հագնում էին խաղի ժամանակ: Այդ տարազը հետևյալն էր.

1. Վերնաշապիկ գունավոր, նեղ թևերով:

2. Անդրավարտիք գունավոր, նեղ փողերով և լայն ծնկով:

3. Փոքրիկ բարձ՝ նստատեղում, անդրավարտիքի մեջ տեղավորելու համար, որը պաշտպանում էր ցատկանատիկների և ցատկահեծնումների ժամանակ:


4. Ջանկապաններ, ծնկապաշտպաններ ծոպավոր կապիչներով:

5. Ելակ զարդակարերով:

6. Գոտի, գունավոր շալ:

Ծաղրածուն խաղի ընթերին հագնում էր.

1. Կարճափող և կարկատված անդրավարտիք:




Նկ. 71. Վարժություններ լարի վրա ոտքերով կախված
Նկ. Հովհ. Քացակյանի

2. Գունավոր կտորներից կարկատված շապիկ:

3. Կեմե կամ պարանե գոտի:

4. Ծաղրածուն երևում էր գզգզված մազերով, գծանախշերով այլանդակված դեմքով և երբեմն էլ արհեստական մազերով ու հետևին կապած պոչով:

Մարդածունները դյուլ մանելուն պես սկսում էին ծանոթանալ տեղական սովորություններին և առանձին մարզկանց հատկությունների հետ։ Դրանով ծաղրածունները խաղալու ժամանակ մարդկանց հետ ընտանեբար վարվում, դրական ու բացասական



Նկ. 72. Դանդող պարախաղ լարի վրա
Նկ. Հովհ. Քացակյանի


կողմերը հրապարակելով զվարճացնում էին ժողովրդին։ Այս եղանակը մեծապես նպաստում էր ունևորներից դրամ ստանալու գործին։

Մ. Ժ. Ա.

154. [ԼԱՐԱԽԱՂԱՑ ՀԱՋԻՆ]

Մշո Առախ դյուղացի Հաջին Ճարպիկ լարախաղաց էր։ Քառասունն անց հասակում անդամ նա չէր թողնում իր այդ զբաղմունքը։ Նա տարին մեկ անգամ, մի շարք այլ լարախաղացների հետ մրցմամբ հանդես էր գալիս Մշո Առաքելոց վանքի մոտ՝ Եղիական պահոցի տոնին։ Բացի այն սովորական խաղերից, որ ընդհանուր էր բոլոր լարախաղացների համար, Հաջին կատարում էր այլև այլ վարժություններ։


1. Նստում էր լարի կենտրոնում, մի ոտը դնում էր մյուսի վրա, գոհի գառը վեր էր առնում, մորթում, քերթում, մի բուդը կըտ-



Նկ. 74. Ոչնաբ բերթելն ու խորոված անելը լարի վրա



Նկ. 75. Լարախաղացը վայելում է իր պատրաստած խորովածը
Նկ. Նկ. Հովհ. Քացակյանի



Նկ. 73. Լարախաղացը վարժություններ է կատարում գեբաննածայրերին (ա, բ) և քայլում վայրան ոտքերով (գ)

Նկ. Հովհ. Բացակյանի

րում իրեն էր պահում ու մյուս մասը ցած տալիս։ Այնուհետև կրակարանը կրակով հանդերձ վեր էր առնում, դնում պարանին, ոտքերով պահում էր, ձեռքի միսը կտրատում, շարում շամփուրին ու խորովում, բաժանում ընկերներին (նկ. 74)։

2. Երկու ոտքը պղնձամանի կամ սկուտեղի մեջ դնում, սղում կամ ցատկելով անցնում էր պարանի մի ծայրից մյուսը (նկ. 56)։

3. Բաժակով ջուրը գլխին դրած՝ քայլում էր։

4. Թաթերով պահում էր լարը և գլխավայր կախված զանազան ձևեր էր կատարում (նկ. 71)։

5. Երկու տղայի կապում էր ոտքերին և պարանով կախում ցած՝ մինչև լարի ու գետնի միջին տարածությունը։ Մի երրորդին նա շալակում էր և այդպես կամաց կամաց քայլում (երեխաների տարիքը հասնում էր 10—12-ի)։

6. Հաջին ուներ փետե ոտքեր, որ հասնում էին 4—5 մետր բարձրության։ Կանգնելատեղից դեպի վեր եղած մասը (մոտ 70 սմ) նա կապում էր ազդրերին ու քայլում, պարում էր գուռնայի հատուկ եղանակով։

Բ. Ժո. Ա.

Վար. Բրջ. 159 (Բրջ.)

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Ի. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՑԱՂ

Արտադրական կենցաղի մեջ են մտնում շինարարության, որսորդության, անասնապահության, երկրագործության, արհեստների, փոխադրական միջոցների և առանին կենցաղի վերաբերյալ խաղանյութերը։ Բացի որսորդությունից, որը այստեղ տեղ է գտել որպես սպորտի տեսակ, մյուս բոլոր թեմաները մանկական խաղեր են։

Շինարարությունն այս նյութերի մեջ ներկայացնում է հայկական ժողովրդական ճարտարապետության յուրատեսակ պատկերը։ Մանուկները սիրում են ամենից առաջ բնակելի տներ կառուցել։

Այստեղ մանր խաղալիքներով պատկերացված մարդիկ, անասունները և կահույքն ու տնային գույքը տեղաբաշխված են այնպես, ինչպես երեխաները տեսել են հայրական տներում։

Ակնհա խաղի համաձայն այս գյուղաքաղաքում բնորոշ է դարձել փուռը, որը փոխարինել է հայկական թոնրին։ Այս հանգամանքը հետաքրքրական է ոչ միայն Ակնի, այլև այն բոլոր հայ գաղթավայրերի համար, որոնք գոյացել էին միջին դարերում, Բյուզանդական կայսրության սահմաններում։

Ակնհա խաղի մեջ ակնարկ կա նաև կրկնինդրի մասին, որը ևնթադրում է կղմինդրածածկ ժողովրդական շենքեր, որոնք անցյալ դարի վերջերին և մեր դարի սկզբներին աստիճանաբար փոխարինում էին հողածածկ շենքերին։

Ջրաղացաշինությունը մանկական խաղերում երևան է գալիս քարը պատող անիվին նմանեցրած ճաղավոր խաղալիքներով։ Սրանք ունենում են ձվի, դնդի և գլանի ձև։ Ունենալով սռնի, դրանք հոսող ջրի մակերեսի վրա բռնելիս հեշտությամբ պտույտ են գործում իրենց առանցքի շուրջը և ժամերով զբաղեցնում երեխաներին։

Այս բոլորի մեջ, որպես անփոփոխ երեվույթ է քաղաքաշինությունը, որ մեզ է հասել Վանա «Քարափոսիկ» խաղի միջոցով։ «Քարափոսիկ»-ը փուշեկույտի և ցեխի միջոցով պատրաստված բերդամման կառույց էր, որին, Գ. Սրվանձտյանի վկայությամբ, երեխաները բերդ էին անվանում։ Վանեցի մյուս բանահավաքները՝ Տ. Չիլինգիրին, Խանջյանը և Տեկանցը այն ներկայացնում են իբրև քաղաք։ Այս բերդաքաղաքն օժտված է պարսպով, որն ունի ելքի և մուտքի դռներ։ Խաղալիքներից կազմված մարդիկ այստեղ զբաղվում են առևտրով ու այգեգործությամբ և վերջինիս համար ոռոգող ջուր են բերում։

155. [ՔԱՐԱՓՈՍԻԿ]

Առվի եզերք չոր փոշի ժողովելով թիզ ու կես բարձրությամբ, իբրև փոքրիկ բլուր դիզինք, հետո կավ շաղախելով, մի մատի թանձրությամբ գլուրն հավասար ծեփելով չոր փոշի վերան տալով սկսեինք ձեռոք կամուշիկ գքարափոսիկն շփել և միշտ նոր չոր փոշի բերելով, վրան լեցուցանելով, գորս բլուրին վերեն վայրեն շփելով ասեինք.

Քարափոսիկ,
Մազ բուսիկ,
Քարափոսիկ,
Մազ բուսիկ.

Մինչև մազ բուսաներ վերայն և հայտնի լիներ, թե ամրացած է քարափոսիկն։

Հետո քարափոսկի չորս կողմն քաղարի դրան պես ձևավոր դուռ բանալով, միջի չոր փոշին դուրս քաշելով քարափոսիկն որպես շինյալ նոր քաղաք ի մեջ անդ Թողունք և մեք մեր ձեռակերտի վերա հրճանալով ասեինք.

— Տեսե՛ք, ինչպես առանց սյան կեցած է այս քաղաք։

Քիչ միջոց այս ավազաշեն քաղաքի վերա ղվարճացած փոքր քարինք ի գրանց ներս անցուցանելով՝ կարգով շարեինք և հրամայեինք քարանց՝ մարդոց պես առ և տուր առնել։ Քարինք այս կողմեն մյուս կողմն փոխելով ասեինք. Թե մարդիկ երթան, գան։ Հետո, որպես Թե դիշեր վերա եկավ, քարինք դուրս հանելով քաղաքի գրունքն փակեինք և պահ մի կենալով, որպես Թե առավոտ ծագեցավ, գրունքն բանալով ի ներս հայեինք։ Բայց դպալով, Թե քաղաքի մեջ ջուր չկա, ջուր բերելու պատրաստություն տեսնայինք։ Փոշիներով վերի գռնեն մինչև դիմացի դուռ փոքր առու շինեինք և հետո առվեն ջուր առնելով լեցունեինք քաղաքի առվի մեջ, որ մեկ գռնեն վազելով մյուս գռնեն ելաներ արտաքս։ Հետո մտածեինք, Թե այս քաղաքին մարդ կա, ջուր կա, բայց պատեղ և այգի չկա, ուստի քաղաքի այն գրան առաջ, հորմեն ջուրն արտաքս ելաներ, պատեղ և այգի տնկեինք և սկսեինք ջրել, ոռոգանել և զվարճանալ։

Եթե սույն ավազաշեն քարափոսիկ քաղաք հանկարծակի ինքնըստինքյան կործաներ, մեզ այնչափ մեծ զվարճություն չէր պատճառեր, այլ երբ իբրև ամուր անկործան երևեր, մեք միտրանյալ չորս կողմեն կից և կռուի տալով մի հարվածով կործանեինք սույն ավազաշեն քաղաքն, ուրախություն բարձրության ծայր բարձրանալով աղաղակեինք.

— Բլա՛վ Քարափոսն, բլա՛վ Քարափոսն (նկ. 76)։

Ջ. № 4184, էջ 188բ—189ա (Վ.)

156. ՔԱՐԱՓՈՍԻԿ

Նույն խաղի մեջ մազ փնտրողն ասում է՝

Քարափոսիկ, մա՛զ տուր,

իսկ քարափոսիկն իբրև Թե պատասխանում է՝

Ես չեմ կանա տար։

(Ա. Վժվ. Ձ., 68—69)։
Վարիանտները տե՛ս նաև
ԳՍ. Մն., 59 (Վ.) և Ա.Ա., I. 180—182 (Վ.)

157. ՏՈՒՆՏՈՒԼԻԿ ԱՄԱՆԱՅ

«Տունտուլիկ» էին կոչվում այն փոքրիկ տնակները, որոնք կառուցվում էին մանկահասակ տղաների և մասամբ էլ աղջիկների ձեռքով։ Սրանք մեծ մասամբ մի բաժանմունքով, մի երդիկով և դռնակով տնակներ էին։ Սակայն մեծ շինարարություն նախաձեռնելիս երեխաները երբեմն տունտուլիկը կառուցում էին 2—3 բաժանմունքներից, որոնք ներսից իրար հետ կապվում էին առանձին դռներով, բայց ունենում էին մի ընդհանուր մուտք։ Մի բաժանմունքով տունտուլիկներում միաժամանակ լինում էին



Նկ. 76. «Բարափոսիկ» խաղը Վանում (բնագիրը՝ № 155)

Նկ. Ռ. Մնացականյանի

անասունները կապելու տեղեր և թնդրափներ, իսկ մի քանի բաժանմունք ունենալու դեպքում մեկը ծառայում էր իբրև տուն, ուր թոռներ էին խաղում, երկրորդը օդայով դոմն էր, ուր անասուններ էին կապում և մարդիկ ապրում, իսկ երրորդը օշխոնոցն էր, ուր աշխարն էր տեղավորվում։

Նախքան տունտուլիկը ծածկելը, աղջիկները հասարակ ցեխից կամ կավից թնդիր էին դնում և խաղում թնդրափի կենտրոնում։ Դոմում «կապում» էին զանազան անասուններ ներկայացնող զանազանագույն քարեր ու ապակու կտորներ, օդայում «նստում» էին մշակները կամ տան անասնապահները, իսկ օշխոնոցում տեղավորում էին խեցե և ապակե անոթների կտորվածքներից բաղկացած մի քանի տանջյակ ոչխարներ և այծեր։

Թոնրի շուրթին մոտիկ «նստում» էր հացթուխ ձևացրած մամը, որը իբրև թե տրանջում էր, որ իր աչքերը ծխից կուրանում էին, մոմոում և «հաց ու թնդիրն» ուշանում էր։

Խաղի ընթացքում մեկն ատանձնում էր պապի, մյուսը՝ մամի, հաջորդները՝ անասնապահների, հարսների, աղջիկների և այլ անձանց դերերը, որոնց կարգադրություններն և տրտունջները խառնվում էին «անասունների» բառաչի, խրխինջի, մայունի և հաջյունի հետ։

Երբ մութը վրա էր հասնում, տունտուլիկը պահում էին հաջորդ օրվա խաղերը



Նկ. 77. Տունտուլիկ խաղալը Ախալքալաքում (ընագիրը՝ № 157)

դրսևորելու համար, կամ որ ավելի բնորոշն էր, խմբովին քարերով ու քացիներով հարձակվում էին, հիմնահատակ ավերում և

Ամենն իրենց տունը,
Լաթլաթն իրենց բունը

ասելով ցրվում անները (նկ. 77)։

Բ. ԺՀ. Ձ. (Ախ.)

158. [ՏՈՒՆ ՇԻՆԵԼ]

Գարնան, երբ պարտեզներուն ու այգիներուն ձյունը հալած և կակուղ հողը հայտնվիլ կը սկսեր, մենք ալ մեր գարնանային խաղերուն կը ձեռնարկեինք, անշուշտ միշտ կիրակի և տոն օրերը։

Ամենեն ավելի կը սիրեինք տուն ու կամուրջ, փուռ ու մարագ շինել, հողով ու ցեխով, քարով ու փայտով։ Որմնադիրի և քարտաշի գործիքներ չունեինք, մեր ձեռքերը կը կատարեին ամենուն դերը։

Նախ և առաջ առատ ցեխ կը պատրաստեինք, անշուշտ միշտ առվի մը եզերքը, ուր կը դիմավորեինք գարնան առաջին ծաղիկները, ձյունածաղիկը, անմոռուկն ու փինարբուրը։ Ո՛վ որ գարնան նատեր է հողին վրա, ջուրի մը եզերքը, հոտառեր հողին բուրումը, ծծեր անոր շոգին, ա՛ն միայն կրնա վերհիշումն ունենալ այն երջանիկ ու անդորրավետ օրերուն, երբ մանկության ու պատանեկության ծիծաղկոտ պահերը կը սահեին, անհոգ, երազի մը պես...։ Ոտքերնիս կը կախեինք ջուրին մեջ, ձյունհալքեն զոյացած ջուրին առաջին լոզանքը կառնեինք, որ մեզի դող մը կու տար նախապես.



Նկ. 78. Տուն շինելու համար քար կրելը Ախալքալաքում
Նկ. Ռ. Մնացականյանի

կը ցնցեր մեր մարմինը, և հետո կը դառնայինք արևին, ու կընդունեինք անոր բարի ճառագայթներու ջերմութիւնը։

Ըսի արդեն, որ տուն ու մարագ, կամուրջ ու փուռ շինել շատ կը սիրեինք։ Ձյունը հալելուն պես, երբ հողը տակավին շատ կակուղ է նույնիսկ մեջը մխրճվելու աստիճան, մենք շատ անգամ կը վերադառնայինք քարի, կղմինդրի և կամ փայտի կտորով մը, մինչև ծունկերնիս ցեխին մեջ թաղված, բայց երջանիկ՝ մեր հանդուգն արշավին ու ձեռք բերած նյութերեն։

Երբ շենքը բարձրացած կըլլար ու վերջին ծեփն ալ դրված, կը սպասեինք արևուն քաղցր ժպիտին, որ ամպերուն տակեն դուրս գար, ու չորցնել սկսեր մեր շինած շենքը։

Մեր անհամբերության չափ ու սահման չէր մնար, եթե մեր շինածը փուռ ըլլար. ինչ պետք ունեինք արևուն ճառագայթներուն սպասելու. լուցկի մը կը մոտեցնեինք մեր դիզած հարդի ու չյուղի դեզին, որպեսզի փուռին ներքին մասը տաքնալ ու չորնալ սկսեր, ու հազիվ կարմիր բոցի մը լեզու կը նշմարեինք, սրտի դողով մը կը պաշարվեինք հանկարծ, որովհետև մեր հավաքած ցեխերն ու փայտի կտորները խոնավ ըլլալուն հետևանքով շատ դժվարությամբ կը բռնկեին։

Երբ կրակ կու տայինք, ու փուռին մեկ կողմը հավաքած, հայթուխ ընկերներուն ձայն կու տայինք, որպեսզի խմորին գնդիկները մոտեցնեին մեզի։ Բայց մեր շինած

հացերը գրեթե չէին հաջողվեր միշտ, կես խմոր, կես եփած, միշտ առանց աղի ու թթխմորի, կուլ կու տայինք սակայն մեծ զոհունակությամբ ու հրճվանքով։

Նվազ աշխատանք ու ճիգ կը պահանջեին մեր շինած մյուս շենքերը, փուռին համար ուրիշ ճարտարապետություն կը պահանջվեր, ավելի գործնական միտք կը հղանային երբեմն ընկերներս, փոխանակ մասնավոր շինքի ու հոգնության. երեք քար քով քովի կը բերեին, վրան կը տեղավորեին աղեղնաձև թիթեղի կտոր մը, տակը կրակ կը վառեին, ու թիթեղին վրա կը շարեին, բացված խմորները, թերթի ձևով. ճիշտ այնպես, ինչպես դյուղին տերտերը մաս կը բաժներ շաբաթ երեկոները, լույս զվարթի աղոթքին ու խունկի ծուխին ընկերակցությամբ։

Մեր ընկերներեն մեկը միայն մասնավոր ընդունակություն և հարմարություն ուներ կամուրջ շինելու, նույնիսկ առուներուն վրա. որոնց վրայեն մենք, տասը տարեկան ղպրոցականներ, մեկ ոտաումով, կրնայինք ցատկել։ Անոր համար կըսեին թե հորը արհեստեն շնորհ մը ժառանգեր էր. ճարտար մատներ ուներ, որոնցմով քարերը քով քովի կը շարեր, անոնց տալով ապեղի ձև մը։ Հպարտությամբ կը պատմեր, որ իր հայրը Եփրաթին վրա կամուրջներ նետեր է. քանի՜ քանի՜ անգամներ։ Ու իրավ էր. մենք կը հավատայինք անոր խոսքերուն, որովհետև այդ տարիքին մեջ սուտ խոսիլ չէինք գիտեր...։

ԿՄ., 46—47 (Ա.Կն)
Վար. ԳՄ. Մն., 59 (Վ.)

159. [ՏՆԱԿՆԵՐ ՇԻՆԵԼ]

Երեխաները հողի կույտի նստում, նրանից տնակներ են շինում ու երգում.

Ծի՜ա, ծի՜ա,
Ծրատապյո՜ւն.
Ծիսը կա՞ շինի՜,
Ակռավը կա՝ քանդի՜։

Երբ հասնում են երգի վերջին խոսքին, ձեռքով խփո՛ւմ են շինած տնակներին և քանդում, իբր թե ագռավն է քանդում, ու նորից շինում, նորից են քանդում։

ԳԲ, II, № 111 (Շմ.)

160. ՔՈՒ

Երեխաները երևակայական բոստանների մեջ փոքրիկ տաղավար՝ քոխ են պատրաստում, որտեղ իբրև թե ապրում է բոստանի կամ արտի պահապանը։

Այնուհետև տպակն կամ քարն երևակայական պահակը տեղավորվում է քոխի մեջ, իսկ գոռանը կապվում է գողեր բզկտող ապակի շունը։

Երբեմն իրականում երեխաներն իրենք իրենցից պահակ են ընտրում և շատ լավագոռանդ կապելով տեղծում են իրական պահակություն, երբ վրա է հասնում երևակայական ահավոր մութը։ Ահա գողերը մտնում են բոստանը։ Պահակը հարայ հրոց է գցում, ահ է տալիս, շանը քսի քսի է տալիս և այդ ազմուկով ոտքի է հանում իրենց տներում սուտ քուն մտած երեխաներին։ Հայ հավաքից գողերը փախչում, անհետանում են, որով գովաբանվում են և՛ արթուն պահակը, և՛ նրա իմաստուն շունը։

Բ. ԺՀ. Ա. (Ախ.)

161. [ՋՐԱԳԱՅ]

Խաղում էին 10 և ավելի տարիք ունեցող երեխաները տուների և գետակների ափերին։ Ջրաղաց էին պատրաստում իրականի բացարձակ նմանությամբ, խիստ փոքրացված չափերով։ Սրա պարագաների մեծ մասը հարևանակից երեխաները պատրաստում էին տներում, որպիսի շինարարությունը երբեմն տևում էր մի քանի օր։ Պատրաստելուց հետո այն մեծ հաճույքով դիտում էին ոչ միայն շինարարները, այլև գյուղի շատ երեխաներն ու մեծերը, որոնք իրենց խորհուրդներով ու օգնությամբ հնարավորություն էին



Նկ. 79. Ջրաղաց շինելու խաղերը Աբարաւյան հովտում և այլուր
Նկ. Ռ. Մնացականյանի

տալիս ավելի կատարելագործելու ջրաղացի աշխատանքը։

Մ. Ժո. Ա. (Տրն.)

162. [Ջ Ր Ա. Գ Ա. Տ]

...Որովհետև ջրի հետ պիտի խաղայինք, երկու երեք տեսակ ազայական ջրաղաց շինեինք և երբ ջուր պատյտ առնելով իջաներ ջաղացի մեջ, մեք ջրի պատյտի վերա աչք սևեռելով ուրախանայինք։

Խնձորի վերա ճյուղի մատներ անցուցանելով շինեինք ջրի անիվ և ջրոց հոսանուտ տեղույն վերա անվո առանցք հաստատելով թող տայինք հոսանքին, որ խնձորի մատերուն տա և դարձուցանե։ Երբ անիվն ջրի հոսանաց վերա դառնար, մեք տեսնալով ղվարճանայինք։

Աշխատեինք շատրվան շինել և հաջողեինք, երբ բարձրեն ի խոնարհ ական շինելով ջուր վերեն թող տալով, վարեն ի վեր բաձրանայր ջուր պղպղկալով։

Ջ. № 4184, էջ 189ա—189բ (Վ.)

163. Ջ Ա. Գ Ա. Ս Կ Խ Ա. Գ Ա. Լ

Պատանի տղաներն ու աղջիկները դարնանը և ամռանը 2 մմ հաստությամբ անամիջ ցողունները հավաքում և հետևյալ ձևով ջաղասկ են սարքում։

1. Վերցնում են երկու հավասարաչափ ցողուն և բարակ ծայրերը հաստ ծայրերի մեջ մտցնելով երկու առանձին օղակ են ստեղծում, որ ունենում են 10—12 սմ տրամագիծ։

2. Օղակների մեջ երկու խաչաձև տրամադծեր են մացնում և սրանց հատման կետերում ծակում, 30 սմ երկարության բարակ ճիպոտի ձողիկ-սռնի են անցկացնում, որի ծայրերը 3-ական սմ դուրս են գալիս:

3. Այնուհետև մի շարք ցողուններով այդ օղակ անիվների շրջանները իրար են միացնում, որով ստացվում է ցանցավոր պլան:

Երբ չաղաղն այսպիսով պատրաստ է լինում, երեխաները դրա սռնու ծայրերն ամրացնելով առվի ափերին, ճաղերը մինչև սռնու մոտերքը սուզում են ջրի մեջ: Հոսող ջուրը, մանավանդ թեք սահանք ունեցող տեղերում արագորեն պատում է պլանը, որով ձևացվում է, թե արդեն չաղաղն աշխատում է:

Աղունատերերը իրենց սայլակներով ադունը չաղաղ են տեղափոխում, ուր չաղլըպանը հերթի դնելով ադում է ցորեն ու գարի և մեկից շատ, մեկից քիչ վարձ վերցնելով, ոմանց զոհ և ոմանց դժգոհ ճանապարհ է դնում:

Բ. ԺՆ. Ձ. (Ախ.)

164. Ջ Ա Ղ Ա Յ–Ջ Ա Ղ Ա Յ

Երկու խաղակիցներից մեկը երկու ձեռքի ճկույթները, մատանեմատներն ու միջին մատները ձեռքի երեսի կողմից իրար էր հագցնում և աղատ մնացած ցուցամատներն ու բութմատները առանձին առանձին իրար դիմաց բերում, բայց ու խուփ էր անում, ձեռքները հնելով, թե երկու չրաղաց էր աշխատեցնում, դիմացինին հարցնելով.

— Ձաղա՛ց-ճաղա՛ց, քե՞ր ճաղաց:

— Ձիկ էնա՛ ճաղաց,— ակնարկելով դրանցից մեկը, պատասխանում էր խաղընկերը:

Այս պատասխանը լսելիս չրաղացպանը նրա ընտրածի աշխատանքը դադարեցնում և իրեն մնացածը դարձյալ շարունակում էր արագ արագ աշխատացնել, հեգնելով.

— Իմ կպանի՛, քոն չը՛պանե,
Իմ կպանի՛, քոն չը՛պանե:

Դիմացինն այդ տեսնելիս ու լսելիս անմիջապես ընտրած աչքը փոխելով ասում էր.

— Ձիկ էնա՛ ճաղաց,— մատնանշելով աշխատող չրաղացի աչքը:

Չրաղացպանն այդ իսկ վայրկյանին դադարեցնելով նոր ընտրած չրաղացի աշխատանքը, մյուսն էր աշխատեցնում, նորից կրկնելով.

— Իմ կպանի՛, քոն չը՛պանե,
Իմ կպանի՛, քոն չը՛պանե

խոսքը, որ կարող էր կրկնվել, քանի դեռ դերակատարը շփոթության չէր մատնված: Շփոթությունը կամ խաղի կանոնների ամենաչնչին խախտումը խաղակիցների դերերը փոխելու առիթ էր ծառայում:

Ա.Ա, I, 60—61 (Վ.)

Բ. ՈՐՄՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Որսորդության վերաբերյալ ավյալները երկու կարգի են՝ բուն որսորդությունը, որ մտնում է սպորտի մեջ և որսորդության արտահայտությունը զվարճախաղերի մեջ (հարանեկան սովորություններում դրանք արտահայտված են «թագավորահորս» ընդհանուր անունով, որտեղ թռչնորսությունը հիմնական թեման է):

Որսորդական սովորությունները մենք մտցրել ենք ժողովածուի մեջ ոչ պատահական կարգով, որովհետև ինչպես անցյալում, այժմ ևս դրանք մտնում են սպորտի ձևերի մեջ: Հայտնի է, թե միջնադարում որսորդությունը որպես սպորտային ձև որքան հարգված է եղել: Այն հայկական պետական կազմակերպություններում առաջնակարգ զբաղմունքներից մեկն էր ճանաչվում, որովհետև դրա միջոցով պատանիներն ու երիտասարդները ռազմական դաստիարակություն էին ստանում: Որսի հետապնդումը հետիոտն և

հեծյալ ձևով, որսի դարանակալման ձևերը, պաշտպանների դեմ մաքառելիս, զենքի տեսակների օգտագործման եղանակները, օգտապատրաստված կենդանիներ որսալը և այլն, փաստորեն ռազմական վարժությունների և մանևրի ձևեր էին: Ուստի և պատահական չէ, որ միջնադարում որսորդությունը պետական կազմակերպության հսկողության տակ էր դրված: Պետությունն արքունիքում ունենում էր արքունական որսերի վերակացու: Այսպես, օրինակ, Արտաշես Առաջինն իր իշխանության ժամանակ արքունի որսի վերակացու նշանակեց կորովի նետաձիգ Վարաժին (Մ. Խորենացի, Բ. ժա.): Արտաշեսն ինքը հայտնի որսորդ էր. Սաթենիկին, ըստ ավանդության, «որսալու» ձևը այլ բան չէր, եթե ոչ օգտապատրաստով որսորդության եղանակի սիմվոլը: Օգտապատրաստով հեծյալ ռազմիկները որսում էին նշանավոր հակառակորդներին և գերի վարում:

Որսորդական այն հնություները, որ տեղ են գրավել սույն հատորում, այդ սպորտ-զբաղմունքի միջնադարյան և նոր ժամանակների պատառիկներն են:

Որսորդության այն մասը, որ դուրս է ռազմական դաստիարակությունից, պատանեկության զվարճալի զբաղմունքներից մեկն է: Այդպիսիք դանում ենք դյուղական վայրերում, որպես թռչնորսության ու ձկնորսության հետ կապված նախնական ձևեր:

Թռչնորսության գլխավոր միջոցներից մեկը թակարդն էր, որը տարբեր տեղերում ուներ տարբեր ձևեր: Կարնո հայերի մեջ ճրնճղուկ, արտույտ, կաքավ, ազավնի և այլ մանր թռչուններ որսալու համար թակարդը պատրաստվում էր հատո թելի վրա ամրացվող ձիու մազօղակներով: Պարսկաստանից Արարատյան դաշտի գյուղերը ներգաղթած հայերը այդիներում լորը որսում էին ցեխից պատրաստված գնդակի մեջ ամրացված մազե օղակով: Տարածված էին նաև՝ դպրանակավոր ծածկ ունեցող հորի, կողովի, մազի և այլ միջոցներով մանր թռչուններ որսալու նախնական ձևերը: Այդ և հատուկ ձևերին ժամանակի ընթացքում փոխարինել են բազեով, նետաձգությամբ ու հրացանաձգությամբ որսաձևերը, որոնց հետևանքով նախորդները մեծերից անցել են փոքրերին՝ հիմնականում իրրև ժամանցի միջոցներ:

Այսպիսի նախնականությամբ են օժտված նաև մանկապատանեկան ձկնորսական ձևերը: Դրանցից ամենահետաքրքիրը գուցե կարելի լիներ համարել Մշո դաշտի հոտաղներին հատուկ հետևյալ եղանակը: Կանաչե մեծ պլանը, որ գետակի լայնքին հավասար էր լինում, ջրի հոսանքի ուղղությամբ դլորելով հավաքում էին ոչ միայն ձկներ, այլև ամեն տեսակ զեռուններ: Ամենայն հավանականությամբ սա մեզ է հասել նախամարդու այն պատմաշրջանից, երբ զեռուններով սնունդ հայթայթելը մի մեծ էպոխա էր կազմում:

Նույն Տարոնում և Բագրեւանդում ձուկ էին որսում մեզարով ու կարպետով: Ճրագի լույսի օգնությամբ մաղով ձուկ էին որսում բազրևանդցի ձկնորսները: Քթոցով ձկնորսությունը տարածված էր ամենուրեք:

Այս պրիմիտիվ ձկնորսության մեջ իրրև խոր հնության նմուշ, կարելի է հիշատակել «խշտով» ձուկ բռնելու սովորությունը Մուրադ գետի վրա: Դա նշանառությամբ ձկնորսության այն եղանակն է, որ կատարվում էր սլաքավոր զործիքի կամ նիզակի միջոցով և որպիսին տակավին հարատևում է նախնական կենցաղով ապրող ժողովուրդների մեջ:

Ուշադրության արժանի է «Արկան» խաղը Տարոնում: Դա օգտապատրաստով կենդանիներ որսալու հայտնի եղանակն էր, որ կատարվում էր չվանի օղակը ցցին կամ դոմշի պոզերին զցելով: Երեխաներն այս խաղ-վարժության միջոցով պատրաստվում էին այդօրինակ որսորդության համար, որը հնում նաև մարդ «որսալու» եղանակ էր ռազմաճակատներում:

Այս բաժնում զետեղված նյութերն ընդգրկում են շուրջ երկու և կես հազարամյակ, թեև, զժբախտաբար շատ սակավ են զրանցված:

165. [ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ]

...Պոնտոսի թագավոր Պոլեմոնի որդի՝ Զենոնը... հենց առաջին մանկությունից... կրթվել էր հայերի սովորույթներով ու կենցաղով. որսագնացության, խրախճանքների և բարբարոսների մոտ հաճախ գործադրվող այլ սովորույթունների միջոցով նա իրեն հետ էր կապել թե՛ ազնվականներին և թե՛ հասարակ ժողովրդին:

Տկ., 15

166. [ԱՐՏԱՎԱՆԸ ՈՐՍՈՐԴ]

[Արտավանին]. . գտան Հիրկանների (Վրկանների) երկրում, կեղտի մեջ կորած, և նա որսորդությամբ (ագնդով) էր սնունդ հայթայթում:

Տկ., 39

167. [ՎԱՐԴԱՆԸ ՈՐՍՈՐԴ]

[Հպատակները]... նախապես դավադրության կազմելով, անզգուշորեն որսորդությամբ տարված Վարդանին սպանեցին երիտասարդ հասակում...:

Տկ., 43

168. [ՆԱՊԱՍՏԱԿԻ ՈՐՍ]

...Իսկ նրա [հայ-արմենի աղջկա] մարդը գնացել էր նապաստակ որսալու և դյուղեում չգտնվեց:

Քս. Ան., հատված 7, Գիրք IV, գլ. 3, էջ 21

169. [ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՅԱՆՑԵՐՈՎ ԵՎ ԹԱԿԱՐԴՆԵՐՈՎ]

211. ...Ապա յետ այսորիկ ժամ առեալ [Թագաւորի Տրդատայ] որսոյ՝ ամենայն զօրաց ածել կուտել զպատահականն, խուճապական սփռեալ, երագազ առեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթեալ ի դաշտն Փառական Շեմակայ:

Ա. ՊՀ. 112

...Ապա սրանից հետո որսի ժամանակ ավելց [Տրդատ Թագավորը] ամբողջ զորքին, որպեսզի հավաքեն բերեն բոլոր որսի շներին և խուճապ առաջացնելու համար ցրեն, ցանցեր լարեն, թակարդներ ձգեն և առաջնեը կարելով՝ որս անեն. գնաց Շամակի Փառական դաշտը:

170. [ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԹԱԿԱՐԴՆԵՐՈՎ, ԾՈՒՂԱԿՆԵՐՈՎ ԵՎ ԱՅԼՆ]

...Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երագագիւքն և գահոդովքն եղեալ ի յորս գունդք նախարարացն որդւովքն ազատացն. ուր ամանք դհետ ցուցն և այծեմանցն արշաւելով՝ զխիզախական զազկնաձայնն ևեթ բարբառիցին. և այլք դհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգործ կորովածիւղ արանցն ցուցանեն. և կէսք սուսերօք իրրև զմենամարտիկս՝ զաստականդամ երամս վարազացն պղորեցուցեալ սպանանեն: Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն դաստիարակօք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճուձն ընթրեացն ուրախութեան.

...Իսկ թակարդներով, ծուղակներով, դաններով որսի են դուրս գալիս նախարարական խմբերը ազնվականների որդիների հետ միասին. ամանք արշավում են գիտերի (վայրի էշեր) հետևից, ամանք այծյամների՝ հանդուգն ազդային ձայներով են միայն խոսում, իսկ մյուսները ձիարձակ հետապնդում են եղջերուների և եղնիկների հոտերին՝ հանդես բերելով հմուտ նետաձիգ այրերի մեծ շնորհք: Մյուս մասը սրերով իբրև մենամարտիկներ՝ վարազների հոտերի հարձակման վարազներին պղորելով սպանում են: Իսկ նախարարների որդիներից անչափահասները դաստիարակների, ծառաների հետ

և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք։

ՂՓ. ՊՀ, 10—11

միասին այլեւայլ տեսակի թռչուններ բազեներով որսալով, եւ դառնալով բերում են առատ զարձնելու ուրախութեան ընթրիքը։ Եվ այսպես յուրաքանչյուրը իր որսով ծանրաբեռնված ուրախ ու զվարթ գնում են։

171. [ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԹԱԽԱՐԴՈՎ ԵՎ ՆԵՏԵՐՈՎ]

Ի Հարցումն։ Ներսեհի Կամսարականի Շիրակայ և Արշարունեաց տեառն բուն կանգնէր առ ստորոտով լերինն, որում Արտին կոչեն։ Եւ ի գիշերի միոջ մտին երամակք գոռոց բազումք։ Եւ ոչ լեալ առակ որսորդացն՝ ընթացեալ պատմեցին նմա ի գեաւղն Թալին։ Եւ նորա իւրովի եկեալ հանդերձ եղբայրաւքն և ազատաւքն և մտեալ կոտորէին զերէսն։ Եւ եղեն կալեալք ի թակարդի հասարակ երկոցն. եւ եղեն սպանեալն նետիւ չորս մասն. և զմատաղերէն ողջ կալան, որ եղեւ ԺԲ մասն. Եւ եղեն մեռեալք ի նիզակէ ՅԿ երէ։ Արդ դիտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ լեալ էին։

Ա.Շ. Մ. 230

Լուծումն Ի հարցմանն։ Եղեւ ընդ ամենայն երէն ՍՃԿ։

Ա.Շ. Մ, 231

Ի Հարց. Շիրակի և Արշարունու բնիկ տեր Ներսեհ Կամսարականը կանգնում է մի լեռան ստորոտում, որ կոչվում էր Արտին։ Եվ մի գիշեր բազմաթիվ ցիռերի նախիրները ներս եկան։ Եվ ի վիճակի չինելով որսորդները՝ գնացին Թալին գյուղը և պատմեցին նրան։ Նա ինքն անձամբ եղբայրների և ազնվականների հետ գալով՝ հետամտեցին և կոտորեցին երեններին։ Երեների կեսը բռնվեցին, մի քառորդը նետերով սպանվեցին, իսկ մատղաշներին ողջ-ողջ բռնեցին, որ եղան տասներկու մաս։ Նիզակով սպանվեցին 360 երե։ Այժմ իմացիր, թե ընդամենը ո՞րքան երե կար։

Ի Հարցման լուծումը։ Ընդամենը եղավ 2160 երե։

172. [ԵՐԵՆԵՐԻ ՈՐՍ]

Թ հարցումն։ Որա էր Կամսարականացն ի Գէն և կալեալ էր երէ բազում. եւ ինձ որսամսան եառն բերել վարազ մի...

Ա.Շ. Մ, 228

Թ հարց. Գենում Կամսարականները որսատեղ ունեին, որտեղ կային շատ երեններ։ Ինձ որսատեղը բերել տվին մի վարազ։

173. [ՆԱՊԱՍՏԱԿԻ ՈՐՍ]

108. Ապա ի լուսանալն առաւաւտուն, յաւուր երկուշաբթի եկին իդուրն Ապումրվանայ. և յեղբարքն Ամատունիք և ասեն. «ով իշխան, ահաւասիկ յորսոյ, բազում լապշատականք են նստուցել ծառայքն մեր, արի երթանք որսանք»։ Եւ նա հնծաւ ջորի և գնաց

108. Ապա երբ լուսացավ երկուշաբթի օրը, եկան Ապումրվանի պալատը Ամատունի հինգ եղբայրները և ասացին. «Ով իշխան, ահա որսի օրեր. մեր ծառաները բազմաթիվ նապաստակներ են շրջապատել-նստեցրել, արի գնանք որսանք»։ Իսկ նա ջորի նստեց և

զհետ նոցայ և հասան եղբ ագեացն (84ա) որ Վարդափոյն կոչեն։ Եւ նոքայ հագել էին զեհ ի ներքոյ հանդերձից և կամէին սպանանել ըղնայ։

ՇԲ, Պ, 75

դնայ նրանց հետ, և հասան այդիների եղբը, որին կոչում էն Վարդափույն։ Եվ նրանք հագուստների տակից զրահավորվել էին ու կամենում էին նրան սպանել։

174. [ՈՐՍԱՏԵՂԵՐ][1]

...Եւ մինչ չէ նա [վարազ Շապուհն] եկեալ էր, խորհէր արքայն [Հայոց Տիրան] ընդ իւր ծառայսն ներքինիսն սպասաւորսն իւրում սենեկի. ասէ. Արժան է մեզ, այր որ գայ առ մեզ՝ զբօսուցանել և ուրախ առնել որսովք և բազմականօք, և ամենայն պէսպէս վայելչութեամբք։ ...Այլ յերկրին Ապահունեաց, յոտինն մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսացուք. տեղւոյն՝ որում անուն կոչի քաղաք Աղիորք[1]։

...Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ թագաւորին [Տիրանայ], և ոչ գունդ և այրուձի. բայց միայն սակաւ սպասաւորք հանդերձ, և որսոցն պառականօք...

ՓԲ, Պշ, 79—80, 81

...Դեռ նա [վարազ Շապուհը] չհասած՝ թագավորը [Հայոց Տիրանը] իր սենյակի ներքին սպասավորների հետ խորհուրդ էր անում։ Նա ասում էր. մեզ մոտ եկող հյուրին հարկավոր է զվարճացնել և ուրախացնել որսերով, կերուխումներով և ամեն տեսակ վայելչություններով։

...Ընտրենք Ապահունյաց երկրի Մեծ Մասիսի ստորոտում որսի տեղ, Աղիորք կոչված քաղաքում։

...Թագավորի [Տիրանի] մոտ ուրիշ մարդ չէր մնացել, ոչ հեծելազոր և ոչ այրուձի, բայց միայն սակավաթիվ սպասավորներ, որսորդական շների պահապաններ...

Բիբլիոգրաֆիա

Որսի կենդանիների, թռչունների և ձկների ու սրանց վայրերի, որսորդական միջոցների և որսորդական զրաղմունքների մասին պատմագրության մեջ զանազան, մեծ ու փոքր ակնարկներ տե՛ս Քս. Կր., Հատված 2, դիրք 11, պպ. 4, էջ 15,25. Ախ., 69, 186. ՂՓ. Պշ, 19. ՄԿ. ՊԱՄ, 124. ՇԲ. Պ, 51, 79. ՍՏ. ՊՏ, 49. ՆՇ. Ն, 41. ՄՈւ. Ժ, 353. Մժ, 48. ԿԳ. Պշ, 363, ՎԲ, 50, 51, 167. ԳԱԳՍ, էջ կդ. ՓԲ. Պշ, 30, 79—81, 179, 187, 331, 337—378. ԱՇ. Մ, 342. ԹԱ. ՊՏԱ, 292. ՍԱՆ. Հ, 205—206. ՆՇՐԲ. 41, ԿԳ. Պշ, 20. ՄԳ. Ա, 82—83, 91,92 99, 101—103, 106, 109. ԴԱ. Մ, 114. ԳՆ. Ո, 497. ՍՕ. ՊՆՍ, 87։

1 Ստ. Մալխասյանցն իր Բարգմանության 59-րդ ծանոթագրության մեջ գրում է. «Քաղար» բառը բայի սովորական նշանակությունից Փավստոսի մեջ հաճախ գործ է ածվում նաև պարիսպ, պարսպապատ տեղ նշանակությամբ։ ...Ըստ որում Ագիորք քաղաքը պետք է հասկանալ՝ պարսպապատ, որսատեղ նման խոսքակերպին։ Քանի որ այս տեղը գտնվում էր Ապահունիքում, Տուրուբերան նահանգում։ Ապա Մասիսը չէ կարող լինել Այրարատյան դաշտի հայտնի Ագռաւ Մասիսը, այլ ինչպես կարծում է Էփրիկյան («Բնաշխարհիկ բառարան», էջ 101) Սիփան-Մասեաց՝ մեծ և գեղեցիկ լեռը» (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ստ. Մալխասյանցի Թարգմանություն, Երևան, 1947, էջ 320)։

175. [ԴԱՅԼՈՐՍԸ ՀԱՐՔՈՒՄ]

Հարք գավառում գայլի որսն առհասարակ ձմռանն էր կատարվում։ Գայլին հալածող ձիավորները մի-մի կողքի վրա ընկած համընթաց բավական ժամանակ սլանում էին, ուր որ որսն էր ձգտում հեռանալ, որովհետև



Նկ. 80. Գայլոցը Տարոնում (ընդօրինակված № 175)
Նկ. Ռ. Մնացականյանի

վերջինս երկյուղից շարունակ ստիպված էր նայել իրեն հալածողներին։ Այդ պատճառով նրա պարանոցի ջղերը փայտանում էին։ Ա-պա ձիավորներն անցնում էին ձիու մյուս կողմը և, գիտենալով, որ գայլն այլևս առաջ-վա նման չէր կարող պարանոցը շրջել դեպի իրենց, մոտենում էին և քթին թեթև հարվա-ծում, վայր գլորում։ Ականջները բռնելով՝ գայլի բերանը մի փայտ էին անցկացնում և գագաթին կապում։ Վնասազերծված գայլին այնուհետև դնում էին ձիուն և ողջ-ողջ բե-րում գյուղ, պարանոցից շղթայով երկանա-քար կախում, շների միջոցով խեղդում, գվարճանում էին (նկ. 80)։

Բենսե. Ա.Հ, V, 67—68


176. ՂՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Բարջանճում թուրքական իշխանություն-ներն արգելում էին ամեն տեսակ զենք, ի թիվս որոնց նաև որսորդական զենք կրել։ Որսը համարելով բեկերի զբաղմունք, նրանք հայերին արգելում էին նաև որսորդությամբ զբաղվել։ Այնուամենայնիվ գյուղում կար եր-կու մարդ, որ թռչունների և գիշատիչների որսով էին զբաղվում։

Բրջ., 153

177. ՂԱԿՈՐՍՈՒԹՅՈՒՆ ՋԵԽԵՐ ՁԱՐՆԵԼՈՎ

Նփրատի ու Շեռկանա մեջ, ինչպես և Գա-բաքիլիսայի մոտերքը ձկնորսությունն ըն-հանրապես ջեխեր զարնելով էր կատարվում։ Ջրի լայնքի վրա ցցեր էին խփում և հյուսում




Նկ. 81. Օղապարանով եղնիկ որսալու եղանակը Տարոնում
Նկ. Ռ. Մնացականյանի

էին: Ապա այդ ջեխի առջևից դեպի ցամաք մի ծոցիկ էին փորում, ուր հավաքվում էր ջուրը: Ձկները պարնանից սկսած, քանի դեռ ջրերը դեպի վեր էին բարձրանում ու հորդում, մինչև արևադարձը գալիս էին, լցվում: Արևադարձից հետո, երբ ջրերը քշանում էին, ձկներն էլ նրանց հետ նահանջում էին դեպի հորդառատ տեղերը:

Հյուսված ջեխերին դեմ առնելով, ձկները բարձրանում էին դեպի փոսիկը, որտեղ նրանց սպասում էին ձկնորսները և որտեղ հենց ձեռքով բռնում ու դուրս էին դցում նրանց: Գիշեր ժամանակ ձկնորսը ոտքերը դնում էր փոսորակի անցքի բերանին՝ ջրի մեջ, որով զգում էր ձկան անցումը: Այդ վայրկյանին նա փակում էր անցքը և անմիջապես բռնում:

Կային ձկնորսներ, որ հիշյալ ծոցիկները մեծ էին պատրաստում: Գիշերվա ընթացքում այնտեղ հարյուրավոր ձկներ էին կուտակվում: Այս դեպքում ձուկը որսում էին երկու ձևով՝ մեջը մտնելով ու բռնելով և փոսորակի ջուրը դեպի մի կողմ հոսեցնելով ու փոսը ջրապրկելով:

Տեղական սովորույթունների համաձայն՝ 1. ջեխի տերը իրավ չէր տալիս, որ իր ջրերում, այսինքն՝ ջեխից ջրի հոսանքն ի վեր բավական տարածության վրա, ուրիշներն ուղղակի գցեին: Ուղղանով ջեխատիրոջ ջրային տարածություններում որսի արդյունքը կիսվում էր: 2. Քանի որ օրենքը ևս հարգում էր ջեխատիրոջ այդ տերիտորիալ իրավունքը, մի այլ ձկնորսի իրավունք չէր վերապահվում այդտեղ ջեխ զարնել: Տվյալ ջեխից ցած, որ-



Նկ. 82. Ջեխերով ձկնորսությունը եփրատի վրա (ընագիրը՝ № 177)
Նկ. Ռ. Մնացականյանի

քան էլ մոտիկ լիներ, թույլատրվում էր ջեխ պարնել։ 3. Մի տեղում ջեխ պարկողը երբ մի քանի տարի մնում էր նույն տեղում, նա այդ տերիտորիան սեփականացնում էր և ցմահ տիրանում։ Մինչև իսկ մաքառում էր նա ամենազորեղների դեմ, որոնք կցանկանային խլել իրենից։ Այսպես, օրինակ, երբ որ մեկը երկու տարի միևնույն տեղում ջեխ էր պարկում, վայրը նրա անունով էր կոչվում։ Հայոնի էր, օրինակ, «Կարոյի թառափ», «Սրդոյի թառափ» և այլն, որ նշանակում էր ջեխի սահմանը։ 4. Երբեմն ներքևի ջեխատերը գիշերը գազանորեն վերևի ջեխը բացում, ձկները իր ջեխն էր քաշում։ Այդպիսի պարագաներում կռիվ էր ծագում և որսած ձկները կիսվում էին։ 5. Ջեխատերն իր սահմաններում, ջեխից վերև թույլ չէր տալիս ձկնդեղով ձկնորսություն անել։ Նման դեպքերում ծագող կռիվները ոչ միայն ձկնդեղը գործածողների և ջեխատիրոջ մեջ էին գնում, այլ և նրանց շուրջը համախմբված վերինների ու վարինների խմբավորումների միջև (նկ. 82)։

ՍՀ, № 1, էջ 481ա—481բ (Ա12։)

178. ՉԻՆՈՒԿ

Խաղում էին տղաները, որոնք ընդհանուրի հավանությամբ իրենցից մեկին ընտրում էին մայր։ Մայրը լախտով կամ կաշվե գոտին ձեռքն առած, խմբին հարցնում էր.

— Ծի՛, ծի՛,
Բոզ ծի՛,
Ո՞ւմ ծի։

Թաղի ձիատերերը նրանց ծանոթ էին. ամեն մեկը մի տան անուն էր տալիս. ասածները հաճախ ճիշտ չէին լինում, ուստի մայրը



ա



բ

Նկ. 83. ա. Զկնորսություն մազով՝ հրազի օգնությամբ (Արևմտահայաստան)
բ. Զկնորսությունն՝ խոտերը գետի հունի վրա պլանելու միջոցով (Արևմտահայաստան)
Նկ. Հովհ. Քաջակյանի

շարունակ կրկնում էր չէ՛, չէ՛, չէ՛: Վերջապես մեկը ճիշտ էր գուշակում.—Խըլըշտրիկանց Պետու ծի՛ն,—բղավում էր նա ու լախտը մոր ձեռքից առնում, ընկերներին քշելով տանում էր մինչև որոշված տեղը և այնտեղից մորը ձայն էր տալիս.

— Արինքն ո՞ւմ փեշ:

Մայրը բարձրաձայն պատասխանում էր, օրինակ, Պողու փեշ: Պողի անունով տղան իր փեշը երկու ձեռքով բաց էր անում. լախտավորը մյուսներին քշում էր Պողու թիկունքի կողմը, իսկ ինքը լախտով նրա փեշին խփում ու փախչում էր: Եթե արագ էր փախչում, պրծնում էր, իսկ եթե դեռ չորը չհասած՝ նրան բռնում էին նախից վազող ընկերները, այն ժամանակ նրանք բռնվածի մոտից խլում էին նրա մի քանի առարկաները և տանում էին մոր մոտ, որը հարցաքննում էր այսպես.

— Քընացիր հոբսի, հոբսըտ ի՞նչ ըրիր:

— Թագի թուկնիքը ձեռես խըլեցին:

— Քըշերը վե՞րտի կըցար:

— Հանդոմը:

— Ի՞նչ քըցեցիր տակըտ:

— Խոզի կաշին տակըս, կով մըշի կաշին վըրես:

— Ո՞ւր ա քամարըտ, ո՞ւր ա վըռնաքարըտ, ո՞ւր ա կըլխաքարըտ:

Ամեն մի հարցին բռնվածը մատնացույց էր անում մի ընկերոջ վրա: Եթե իրենից պահանջած բանը մատնացույց արած տղայի մոտ գտնվում էր, նա ազատվում էր պատժից, իսկ եթե սուտ էր դուրս գալիս, այն ժամանակ ամբաստանվածները մոր հրամանով նրան պատժում էին. մեկը ականջից էր քաշում, որ կոչվում էր «լավաշ քաշել», մեկը մազերից էր քաշում, որ կոչվում էր «պեխակ քաղել», երրորդը եղունգներով գլուխն էր հըրհըրում, որ կոչվում էր «կոտեմի տեղ վարել»:

ԳԹ, III, № 18 (Շմ.)

179. Ա Ր Ա Ն

Խաղում էին 10—16 տ. տղաները, ամռան ամիսներին: Հոտապներն այն կազմակերպում էին դաշտերում: Հոգում բաղում էին կես մ երկարությամբ մի գերանիկ կամ հաստ ձեռնափայտ: Ընդհանուրի համար ձեռք էին բերում 8—10 մ երկարությամբ պարան: Տնկված ձողից 5—8 մ հեռու մի գիծ էր քաշվում, որը ծառայում էր սահմանի տեղ: Նախապես հերթականությունը որոշելուց հետո առաջինը պապի հրամանով պարանի 30—50

սմ տրամագիծ ունեցող օղակը նետում էր դեպի վայրը, պարանի ազատ ծայրը մյուս ձեռքում պահելով։ Երեք անգամ օղակը վայրին գցելու դեպքում գյողը շահում էր մեկ միավոր։ Այդ ձևով շատ միավորներ հավաքողը խազի մեջ հաղթող էր ճանաչվում։

Հատաղներն այս խաղը կազմակերպելիս ցցի տեղ օգտագործում էին գոմեշի պոզերը կամ սայլի ցիցը (նկ. 84)։

Մ. Ժո. Ա. (Տրն.)



Նկ. 84. Արկան, օղապարանով կենդանի որսալու վարժությունը Տարոնում (բնագիրը՝ № 179)
Նկ. Հովն. Բացակյանի

180. [ԹՌՉՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ՅԱՆՅՈՎ]

...Քանզի ահա գոտւ որոգայթ իբրև զվարմ հաւորսաց ձգեալ ի մէջ ժողովրդեան ազգի իւրոյ...

30. Մ, 78

...Որովհետև ահա դանվեց որոգայթ, ինչպես թռչնորսների ցանց, որ ձգվեց իր ազգի ժողովրդի մեջ։

181. [ԹՌՉՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ՅԱՆՅՈՎ ԵՎ ԿԱՐԹՈՎ]

...Ջտեսի զըմբռնող որսոյն ծածուկ մեքենայս. չկարծեցի զնաբոմն կերպարանաց կեղծաւոր վարմին. չնկատեցի զգայթակղութիւնն շուրջանակի. չշօշափեցի զպատանդիչ ղեանցարկ կարթին...

Գն. Ո, 300

...Ջտեսա, չըմբռնեցի որսի ծածուկ մեքենաները (մեքենայությունները). գլխի չընկա կեղծավոր ցանցի խաբեական կերպարանքը. չնկատեցի շուրջանակի գտնվող գայթակղությունը. չշոշափեցի կարթի կաշկանդող ցանցը։

182. [ԹՌՉՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԲԱԶԵՈՎ]

...Եւ թագաւորն կամէր որսալ պաղատյմին։

ՄՈւ. Ժ, 353

...Եվ թագավորը կամենում էր որսալ բաղեով։

183. [ԿԱՔԱՎԻ ՈՐՍ]

...Իսկ միւս Գագիկն թագաւորեալ, յաւուր միում եկեալ էր յորս՝ և էր արրեալ. և ի աւթ ժամու էջ յերիվարին հանգչել ընդ հովանեաւ ծառոյն, և ոչ այլ ոք գոյր ընդ նմա, բայց միայն մանուկ մի փոքրիկ, զի այլ զօրքն ամենայն ցրուեալ էին զհետ որսոյ. և պատահեալ նմա արանց Յունաց, ծանեան զնա, և բարձեալ տարան զնա ի բերդ մի...

ԿԳ, ՊՀ, 94—96

...Իսկ մյուս Գագիկը թագավորելով՝ մի օր որսի էր դուրս եկել հարբած. մի շոգ ժամի իջավ երիվարից՝ հանգստանալու ծառի հովանում. ոչ ոք չկար նրա հետ՝ բացի մի փոքրիկ պատանուց. մնացած ամբողջ զորքը ցրված էր որսի ետևից. և հույներ հանդիպելով նրան, ճանաչեցին և նրան վերցրին տարան մի բերդ...

...Որ յամ ժամ գային և Հարկաւ նեղացուցանէին [Տաթարք] զվրաց և զՀայոց իշխանքն. յոմանց ուզէին ոսկիկատաւ, յոմանց բազայ, յոմանց ակէկ շուն և ձի...

ՄԱՊ, 20

...Որ ամեն ժամանակ գալիս և Հարկերով նեղում ու անհանգստացնում էին [Թաթարները] վրաց և Հայոց իշխանները. ոմանցից պահանջում էին ոսկիկատավ, ոմանցից բազե, ոմանցից լավ շուն և ձի...

185. ԹՌՉՆԱՎ ՈՐՍ

Արսեն Գեղամյան իշխանն ու [քուրդ] Ալի Բեկ իմ երկրաբանական ու անկաբանական զննութիւններուս վրա այնչափ հոգ մը չէին ցուցըներ, իրենք աղվոր բազեով մը որսորդութիւն կընեին ու անով կը զվարճանային։ Օր մը ես ալ աս տեսարանին ներկա գտնվեցայ, թեպետ նույն անգամուն բազեն այնչափ քաջութիւններ չըրաւ, ինչ որ աս թռչուններն ալ օր ու ժամ ունին, երբեմն անխոնջ կըլլան ու որսին վրա մոլեգին կը խոյանան, երբեմն ալ թույլ, ծույլ ու անհոժար կը կենան, և նույնիսկ պարարտ լորամարգի... մը տեսքը իրենց արյունոտուշտ բարքը չի զարթուցաներ. երբեմն ալ ազատութիւնին մաքերնին գալով՝ կթռչին ու կփախչին, բայց շատ հեղ նորեն կը բռնվին, ինչպես Գեղամյան իշխանին բազեին ալ դիպեցավ. իշխանը բազեն կաքավի (քեքլիկի) մը վրա արձակեց. խեղճ կաքավը տեսնելով որ թռչելու մեջ իր սոսկալի թշնամվույն հետ պտոս պիտի չկրնա ելլել, հանկարծակի ինք զինքը վայր թողուց որ թիեռու մեջ պահվըտի, բայց բազեական աչվըներեն չկրցավ փախչիլ. քիչ մը ետքը անոր սուր մագիլներուն (քենչենեռուն) ու կտուցին տակ արյունվա եղած մեռած էր։ Տերը երբորդ անգամ ուրիշ թռչուններու տարմին... վրա խաւրեց, բայց անիկա նախ դեպ ի փոքր Մասիս փախավ, ետքեն վար իջավ կեցավ, և մոտ կայնող ձիավորները ձիերնին բոլոր ուժով վազցուցին ու հասան և նորեն բռնեցին զբազեն։

Թեպետ արևելքի աս մասին մեջ բազեով որսորդութիւնը հառաջվան չափ շատ ծախքով չըլլար, այսու ամենայնիվ դեռ մեծին ու պզտիկին պիտավոր զբոսանքներեն մեկն է։

...Որ ամեն ժամանակ գալիս և Հարկերով նեղում ու անհանգստացնում էին [Թաթարները] վրաց և Հայոց իշխանները. ոմանցից պահանջում էին ոսկիկատավ, ոմանցից բազե, ոմանցից լավ շուն և ձի...

186. ԲԱԶԵՈՎ ՈՐՍ

Արսեն Գեղամյան իշխանն ու [քուրդ] Ալի Բեկ իմ երկրաբանական ու անկաբանական զննութիւններուս վրա այնչափ հոգ մը չէին ցուցըներ, իրենք աղվոր բազեով մը որսորդութիւն կընեին ու անով կը զվարճանային։ Օր մը ես ալ աս տեսարանին ներկա գտնվեցայ, թեպետ նույն անգամուն բազեն այնչափ քաջութիւններ չըրաւ, ինչ որ աս թռչուններն ալ օր ու ժամ ունին, երբեմն անխոնջ կըլլան ու որսին վրա մոլեգին կը խոյանան, երբեմն ալ թույլ, ծույլ ու անհոժար կը կենան, և նույնիսկ պարարտ լորամարգի... մը տեսքը իրենց արյունոտուշտ բարքը չի զարթուցաներ. երբեմն ալ ազատութիւնին մաքերնին գալով՝ կթռչին ու կփախչին, բայց շատ հեղ նորեն կը բռնվին, ինչպես Գեղամյան իշխանին բազեին ալ դիպեցավ. իշխանը բազեն կաքավի (քեքլիկի) մը վրա արձակեց. խեղճ կաքավը տեսնելով որ թռչելու մեջ իր սոսկալի թշնամվույն հետ պտոս պիտի չկրնա ելլել, հանկարծակի ինք զինքը վայր թողուց որ թիեռու մեջ պահվըտի, բայց բազեական աչվըներեն չկրցավ փախչիլ. քիչ մը ետքը անոր սուր մագիլներուն (քենչենեռուն) ու կտուցին տակ արյունվա եղած մեռած էր։ Տերը երբորդ անգամ ուրիշ թռչուններու տարմին... վրա խաւրեց, բայց անիկա նախ դեպ ի փոքր Մասիս փախավ, ետքեն վար իջավ կեցավ, և մոտ կայնող ձիավորները ձիերնին բոլոր ուժով վազցուցին ու հասան և նորեն բռնեցին զբազեն։

Թեպետ արևելքի աս մասին մեջ բազեով որսորդութիւնը հառաջվան չափ շատ ծախքով չըլլար, այսու ամենայնիվ դեռ մեծին ու պզտիկին պիտավոր զբոսանքներեն մեկն է։ Պր. Գոլենաղի՝ որն որ իմ աս կոմմերը պարտած ժամանակս Ռուսի Հայաստանը պարտեցավ ու աս որսորդութիւնը տեսնելու շատ անգամ առիթ ունեցավ, անոր վրա ազնիկ ծանոթութիւններ կուտա, զորոնք հոս դնելը Հարկավոր կը սեպեմ։ Աշնան ու գարնան երբոր բազեները ճամբորդ թռչուններուն նայելն կիյնան, Կավկասի բնակիչները վարմ... կը ձգեն, մեջը կը կապեն լորամարգ կամ սալամք և կամ ուրիշ անանկ թռչուն մը, որուն վրա բազեները հոժարութեամբ կը հարձակին. իրենք չվանը բռնած կը պահվին, ու բազեն վարմին մեջ գալուն պես՝ չվանը կը քաշեն ու բազեն վարմի մեջ կը մնա։ Ասկից ետքը կրթելու կը սկսին. նախ կը քննեն, կը նային, որ բազեն սևաչյա չըլլա, վասն զի՝ ինչպես տեղացիք կըսեն, սևաչվի բազեներն այնպես սրատես չեն, ուստի և միայն խարտեշաչվինները... աս որսորդութեան համար կը դատին։ Աս ընտրութեանն որ կըլլա, բազեին աչվընեռուն կոպերը... մածուցիկ նյութով մը իրարու կը կպցընեն և կամ ավելի հաճախ՝ մեկ երկու անգամ ասեղ անցընելով իրարու հետ կը կարեն, և երեք օր անանկ կը թողուն ու կըսեն, որ աս կերպով բազեն կընատանենա կամ իր վայրենութիւնը կը մոռնա. ասկից պատ՝ սղանգ (լատ. Aristolochia, պրս, զերավենա) ըսված խոտին եփոցրովը կը լվան, որպեսզի վրայի տիզերն ու ոջիլները սատկին։ Բայց բազեն պիտանի ընելու համար պէտք պայմաններուն մեկն ալ աս է, որ իրեն քիչ ուտելիք տալու է։ Դարձյալ ռավներուն շրջիա՝ այսինքն երկթի օպակներ կանցընեն, և կաշիով մը զանոնք իրարու կը կապեն, վրան ալ պլան մը կը



Նկ. 85. Բազեով թռչնորսություն Հայաստանում (ընդհրը՝ № 181—186)
Նկ. Ռ. Մնացականյանի

Հաստատանն։ Ասոնք ըլլալեն նաքը բազեավարժը կենդանվույն աչվընները կը բանա, և գ՝անին վրա երկայն առատան կապկով՝ բազեն ծառի մը վրա կը թոցրնե, ու գայ-յու՛, գայ-յու պոռալով՝ գանիկա իր բովն ունեցած հավին վրա կը կանչե կիջեցրնե։ Վերջեն ձեռքը մսի կտոր մը կառնե, ու գանիկա շարժելով՝ բազեն կը հրավիրե, որն որ բազեակալին ձեռքին վրա գալու նստելու վարժելուն պես՝ անիկա կը սկսի առանց մսի փորձել ու վարժցնել։

Երբոր կատարյալ կը կրթվի, կը սկսին որսորդության գործածել, բայց որսեն հառաջ պետք է որ բազեն անոթի մնա։ Բազեակիրը մաշկեղեն հաստ ձեռնոց մը կը հագնի ու բազեն ձեռքին վրա կառնե։ Բազեով որսորդություն ընողները հասարակորեն ձիով՝ թիթուռ ու մացառուտ տեղեր կերթան, հետերնին ալ խումբ մը թավամազ քերծե (որսի շուն, թազը) կառնեն. ամեն մեկ շան վրան թազիք... կապված է, որ փշերու մեջեն անցնելու ատեն չվնասի։ Որսորդները շարունակ քերծենները կը գրգռին, որ թռչուններու տեղը գտնեն, և անոթի բազեն միօրինակ չորս դին կը նայի։ Թռչուն մը երևան ելլելուն պես՝ որսորդը կարձակե բազեն, որն որ կամ անմիջապես թռչունը կը բռնե, և կամ անդուլ անդադար անոր հետեն կիյնա, մինչև որ խեղճ թռչունը թիփ մը մեջ կերթա կը պահվրտի, բազեն ալ կիջնա նույն թիփին վրա կը նստի։ Շները կը ցատկեն ու թռչունը նորեն դուրս կը հանեն, բազեն կը հարձակի կը բռնե նէ, պինքը վարձատրելու համար որսին ըղեղն ու աչվընները անոր կու տան։ Բայց բազեին

բռնած թռչունները թանգարաններում ամենևին չեն հարմարիր, վասն զի երբեք թռչուն ամբողջ ու անարատ չի մնար։ Թռչունը բռնվելեն ետքը միշտ բազեին ու որսկան շներուն մեջ սաստիկ կռիվ մը կը բացվի։ Երբեմն բազեն շատ կը կատղի, ան ատեն բազեակիրը մսի կտոր մը շարժելով՝ կը սկսի ղայ-յու պոռալ ու զանիկա կանչել. բազեն թև քաջակիրթ է, նաև (ռուսի) մղոն մը հեռու տեղեն կը դառնա ու բազեակալին ձեռքին վրա կու գա, կը կենա։ Շատ անգամ բազեին հառաջվան ազատությունը միտքը կու գա ու կը փախչի, բայց սովորաբար դեշ վախճան մը կունենա, վասն զի կա՛մ ոռվըներուն կաշիները տեղ մը փաթթվելով կը մնա ու սովամահ կը մեռնի, և կա՛մ մերձավոր գեղորեից հավերուն մեջ մտնելով՝ կը սկսի զանոնք գիշատել, ուստի և հրացանով կը սպանվի։

Վգ., 66—70

186. [ԲԱԶԵՈՎ ԿԱՔԱՎԻ ՈՐՍ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ]

Հետևյալ առավոտ ինձ հրավիրեցին կաքավի որսի... ես զիջեցի և համաձայնեցի ուղեկցել նրանց։

...Համարյա տասը հոգի հեծանք մեր ձիերը, վերցրեցինք երկու-երեք լավ շուն, իրեն կաքավ որսողներ։ Վերցրեցինք նաև երեք բազե և շարժվեցինք դեպի Սելիմի ձորը։ Ամենալավ բազեն պատկանում էր այդ խմբի մեջ նախիջևանցի Ղազար աղայենց Ստեփանին։ Գնում ենք և զվարճախոսություններ անում։ Անցանք Սելիմի դեռատիը՝ Ջիբուխ Քյորփիից շատ վերև։ Շները մեզանից շատ առաջ էին գնում։

— Ստեփան, բազեն քաղցած է՞, թե չէ,— հարցրեց մեկը Ղազար աղայենց Ստեփանին։

— Երեկվանից քաղցած է, ամենևին միս չի կերել։ Եվ ինչպես կարելի է միս տալ որսից առաջ։ Եթե բազեն միս ուտի կամ կուշտ լինի, այնուհետև կաքավի վրա չի գնա,— պատասխանեց նա։

Ես սկսեցի հետաքրքրվել մեր այժմյան տեսարանով։ Սկսեցի զննել այդ բազենները, որոնց մեկ մենք էինք տանում, բայց իսկապես նրանք էին տանում մեզ։ Բազեակիրները իրենց աջ ձեռքի վրա հագել էին կաշվե ձեռնոց, որին և կանգնեցրել էին։ Կաշվե ձեռնոցը պահպանում է ձեռքը բազեի սուր ճիրաններից։ Բազեների մի կամ երկու ոտքերի վրա կարած էին բժժներ՝ նրան գտնելու համար։ Երկու-երեք թզաչափ կաշվե ժապավենը, որ երկու ճյուղով կապած էր բազեի երկու սրունքից, պահում էր թռչունին բազեակրի ձեռքի վրա։ Ջիու քայլերից բազեն ձեռքի վրա տատանվում էր այս ու այն կողմը և իր հավասարակշռությունը կրկին վերականգնելու համար նա թռչկոտում էր՝ լայն թևերը տարածած և բժժները շարժելով, բայց կաշվե ժապավենը արգելք էր դրնում նրա թռիչքներին։

Դարալագյազում բազենները բաժանվում են մի քանի տեսակի։ Ամենաարժեքը տեսակն է մոխրագույնը՝ Թառլան անունով, որի գինն է 40, 50 մինչև 60 ռուբլի։ Դրանց որսում են Երևանի շրջակայքում, բայց առավել՝ Ալեքսանդրապոլի գավառում, մանավանդ վերջինի տաճկաբնակ Հալլավար գյուղում։ Նրա որսալը արժանի է ուշադրության։ Կան մարդիկ, որոնք միայն դրանով են զբաղված։ Բազեաորսները բլրակի գագաթի վրա լայն ցանցը բրգաձև տարածում են փայտե երկար ցցերի ծայրերի վրա և ցանցի մեջտեղը կապում են իրեն հրապույր՝ կաքավ կամ այլ թռչուն։ Ցանցից 10—15 քայլ հեռու, ծառի տերևներից շինած տնակի մեջ թաղված բազեաորսը մոտն ունենում է ցանցից կապած թոկի ծյութը։ Տերևածածկ տնակից նա անդադար նայում է ցանցի վրա և այդ դիրքով սպասում է շատ անգամ ամբողջ օրեր ու շաբաթներ։ Երբ սրատես բազեն երկնքում պտտելով նկատում է ցանցի մեջ կապած թռչունին, կայծակի արագությամբ սլանում է դեպի վայր, որը խլելու, որ հանկարծ բազեաորսը ձգում է թոկը և շրջելով ցանցը՝ փաթաթում է նրա մեջ անզգույշ բազեին։ Այնուհետև կալանավոր բազեին ընտելացնում են, թանկ դնով ծախում։

Շները ահա գնացին մեր դիմացի մացառների մեջ, նրանք կարճ պոչերը ցցած դեպի վեր և անդադար շարժելով՝ հոտոտում են խոտերի մեջ և երբեմն ետ նայում, թե արդյոք մոտենո՞ւմ ենք մենք դեպի իրենց։ Մոտեցանք այնտեղ, ուր ընկերներիս կարծիքով պետք էր անշուշտ լինեին կաքավների երամներ։ Բազեները ոտքերը բոլորովին բացեցին կաշվե ժապավեններից։ Այդտեղ երեք բազեակիրներն իրենց խմբերով բաժանվեցին միմյանցից ու հեռացան զանազան կողմերի վրա, որպեսզի չխանգարեն միմյանց։

«Կու, կու, կու», լսվից ժայռի ստորոտում, մացառների մեջ կաքավների ձայնը։ Բոլորը պատրաստվեցին։ Քայլերս ուղղեցինք դեպի այն կողմը և զգուշությամբ մոտենում ենք ձիերով։ Այդ սպասողականության մեջ սիրտս սկսում է թրթռալ։ Ես չդիտեմ՝ ինչ պիտի լինի։ «Ֆըռ, ֆըռ, ֆըռ» հանկարծ դուրս թռան կաքավները մի քանի քայլ մեզանից հեռու։ Բազեակիրը բոլորից առաջ բազեն տարել էր բավականին մոտիկ։ Այդ դիշատիչ թռչունը կաքավներին տեսավ թե չէ պոկվեց տիրոջ ձեռքից և գնդակի արագությամբ, ոտքերն ընդունդացնելով թռավ կաքավների հետից։

Ո՜հ, թշվառ թռչուններ... այն ինչ ճիչ և աղիողորմ աղաղակ էր, որ նրանք բարձրացնում էին բազեի առաջից փախչելով։ Տեր աստված, բազեն տիրոջ ձեռքից նոր էր պոկվել, կաքավները նրանից դեռ 50—60 քայլ հեռու են փախել, բայց դիշատիչի սարսափը այնքան զարհուրելի էր նրանց համար, ոչ սղորմելիները աղետալի ճիչով մարդու սիրտ էին կտրատում։ Ես ոչ մի ժամանակ չեմ մոռանա այդ հուսահատ, սրտաբեկ աղեխարշ ձայնը, որով արդարացնում էին կաքավներն իրենց կորստաբեր դրությունը բազեի առաջից փախչելով...։ Այս սարսուռի րոպեին, որքա՞ն փրկարար է ժայռի մեջ մի ճեղք, մի անցք, թեկորների մեջ մի խորշ, որ կարողանար նա թաքնվել և ուր չկարողանար մտնել արյունարբու բազեն...։ Բայց ո՞չ, անտերունչ թռչունի ճակատագիրը այլ տնօրինություն է արել։ Բազեն հետից հասնում է... մոտենում է... ահա հասավ... մի քանի քայլ ևս և ահա նա դիշատիչի ճիրանների մեջ է... Ճարակատուր կաքավը իրեն նետեց մոտակա ժայռին, բայց ավա՞ղ... ուշ էր։ Բազեն արդեն հասավ նրա հետից և դեռ օդի մեջ, ահա բռնեց նրան սուր ճիրաններով ու թշվառ զոհի դյուրաթափ փետուրների մի մասն ընկավ քամու հոսանքի մեջ։ Նրա ճիչը այլևս չէր լսվում... նա բոլորովին լռեց։

Մենք բազեի թռչելու րոպեից քար ու ծառ, թուփ ու խոտ, ձար ու ձոր, հարթ ու փոս, բոլորը ոտքի տակ առնելով ձիարշավի մեջ էինք դիշատիչի և նրա զոհի հետևից պտտվելով, որպեսզի բազեն չպատառոտի իր զոհին և նրան լափելով՝ չկշտանա ու հետո չկարողանա պատառոտել մի այլ զոհ։ Այս հանգամանքն ունեցավ այն հետևանքը, որ ևս սեփական աչքերովս տեսա նկարագրած տխուր և քաղցնելի տեսարանը։ Քաղցնելի, ըստ որում, խոստովանում եմ, իմ վրա գործեց սրտաճմլիկ տպավորություն։

Բազեն և իր զոհը մի քանի րոպեով անհետացան մեր աչքից խոտերի և թփերի մեջ, բայց բազեի բոժոժների ղողանջումը շուտով որոշեց նրա տեղը և Ղազար աղայենց Ստեփանը արագությամբ ձիուց իջավ կաքավը խլելու բազեից։ Ես, որ մի անգամ արդեն վկա էի գործած այդ որսորդությանը, հարկադրված ուղեցի տեսնել բոլորը, թեև սրտաճմլիկ, բայց հետաքրքիր արկածները, որոնց համար խնդրեցի բազեի տիրոջը՝ շուտով չխլել կաքավը բազեի ճիրաններից և ինձ հնարավորություն տալ տեսնել գիշատիչի արյունոտուշտ վարմունքն իր զոհի նկատմամբ։

Ես մոտեցա... ինձնից դեռ քայլ հեռու, փշալից թփի տակ, բազեն բռնել էր մագիլներով թշվառական կաքավին, շրջել էր նրան մեջքով դեպի գետին, իսկ ինքը իր սուր կտուցով կաքավի կրծքի փետուրները փետելով արդեն մերկացրել էր մարմինը և մերթ մեր վրա հայացք գցելով ու մերթ կտուցը կոխելով խեղճ կաքավի կրծամանի մեջ՝ պոկոտում և կուլ էր տալիս մսի կտորները...։ Կաքավը, որ դեռ բոլորովին կենդանի էր և

դալկացած աչքերով անընդհատ նայում էր իր միսը պոկոտոզի վրա, բազեի յուրաքանչյուր կտցահարելու ժամանակ միայն խփում էր իր աչքերը և միսը պոկելուց հետո կրկին բացում...:

Այս զազիր տեսարանն ինձ վրա այնպես ազդեց, որ իսկույն զզվանքով հետ քաշվեցի մի քանի քայլ հետու:

Ղազար աղայոնց Սահիմանը մոտեցավ և կաքավին բազեից դեռ չխլած, կտրեց նրա գլուխը դանակով ու այդ գլուխը բազեի կտցի առաջ բռնելով՝ նա մի ակնթարթի մեջ հանեց նրա ճիրաններից կաքավի մարմինը և և թաքցրեց իր տոպրակի մեջ: Բազեն հազիվ երկու-երեք անգամ կտցել էր գլուխը, որ Սահիմանը առավ նրան իր ձեռքի վրա և կաքավի գլուխը այն կողմ գցեց: Մենք հեծանք ձիերը և կրկին շարունակեցինք մեր ընթացքը:

Երկրորդ անգամ կաքավ պատահած ժամանակ ես կրկին կամեցա մոտենալ, հուսալով տեսնել ավելի հետաքրքիր, քան սխալ տեսարան: Կարծեմ իմ հույսը խորտակելու համար շուտով պատահեցինք մի երամի: Բազեն թռավ և քաշ իր սովորության երամից ջոկեց մի հատ ու ընկավ նրա հետից: Հետու քշելուց հետո կաքավն ընկավ քարերի բեկորների մեջ՝ հուսալով թաքնվել այնտեղ: Բայց հարմար տեղ չգտնելով՝ այնուհետև այլևս չվատահեց թռչել, այլ սկսեց վազվզել այս ու այն կողմ: Նրա հետից վազվզում էր և բազեն: Բայց ընթացքի մեջ բազեի արագությունը չի կարող հավասարվել կաքավի արագությանը: Սրանից առաջացավ ահագին պատերազմ երկու թռչունների մեջ: Մի սահմանափակ տեղ նրանք վազում էին հետ ու առաջ: Մեկը աշխատում էր փախչելով ազատվել մյուսի ձեռքից: Իսկ մյուսն աշխատում էր որքան կարելի է շուտ հասնել իր զոհին պիշատելու: Եթե կաքավը թռչեր, բազեն կես վայրկյանում կբռներ. կաքավը բնազդորեն այդ գիտեր, ուստի նա չէր վատահում թռչել: Վերջապես բազեն բռնեց թե չէ, իսկույն հասավ Սահիմանը և խլեց կաքավը նրա ճիրաններից: Նրա բաժինը սովորականի պես ընկավ վզից, մի երկու պատառ միս և ոչ ավելի:

Այսպես, մենք մի քանի ժամ պատվելուց հետո վերադարձանք Հետևանքյանդ՝ երևկոյան վայելելու այդ բառնելի միջոցով ձեռք բերած կաքավների տապակած համեղ միսը:

* * *

Բազեով որսորդությունը շատ ընդհանրացած է Դարալագյազում: Այստեղի հին հայ բնակիչների համար երկու-երեք հարյուր տարի առաջ կաքավի որսորդությունը կազմելիս է եղել ամենասիրելի զբաղմունքներից մեկը: Այն ժամանակի հայերն ունեցել են մեր դեպի որսորդությունը: Նրանք պահելիս են եղել բազեներ: Բազեպահությունը այնքան խոր արմատ է քցել հին հայերի մեջ, որ նրանց կենցաղավարության այդ կերպարանքը ամբողջապես զրոշմվել է հանդուցյալ հայերի տապանաքարերի վրա: Դարալագյազի շատ գյուղերի, զորօրինակ Արփայի, Հերհերի, Մարաիրոսի, Թեղփի, Բարթիի, Ջուլի, Կնդևազի և այլ շատ բազմաթիվ գյուղերի լայնարձակ գերեզմանատան տապանաքարերն իրենց վրա այժմ կրում են բազեի պատկեր՝ ամեն տեսակ դիրքով՝ ցցի վրա կանգնած, հետևակ մարդու ձեռքի վրա, ձիավորի ձեռքի վրա, տիրոջ խնջույքի մոտ ներկա գտնվելիս, կամ վերջապես կաքավի հետից թռչելիս:

Ի՞նչ կասած, որ կաքավի որսորդությունը վերջին դարերի ժառանգություն չէ, այլ նա եղել է Հայաստանում ամենահին ժամանակներում ևս: Մենք ունենք պատմական ապացույց, որ բազեով որսորդությունը եղել է նաև V դարում: Մենք ունենք V դարի որսորդության նկարագրությունը, իսկ բազեով որսորդությունը կլիներ, անշուշտ, և V դարից շատ դարեր առաջ: Հայոց պատմիչների խոսքերից երևում է, որ հին դարերի ազատները, նախարարները, և մինչև անգամ թագավորները պարապում էին ամեն տեսակ

որսորդությամբ։ Ջորջինակ Խորենացին նկարագրելով փոքրահասակ Խոսրով Թագավորի անհոգ կյանքը, ասում է, որ նա փոխանակ քաջությունների և բարի հիշատակի թողնելու մասին մտածելու և հոգալու, ընդհակառակը, պարապում էր հավերսությամբ և այլ տեսակ որսորդությամբ (Խոր. դիրք Գ., գլ. 8)։

Պատմարաններից հին դարերի որսորդության ձևը ավելի որոշ, ավելի մանրամասն նկարագրողն է Ղազար Փարպեցին, որն իր պատմության մեջ Արարատյան նահանգի արդատավորության վրա խոսելով՝ հիշում է, թե այդ նահանգի մեջ ինչպիսի վայրի էշեր, այծյամներ, եղջերուներ, եղներ, վարազներ, սաչամրներ, կաքավներ, սագեր և այլ շատ անհամար ցամաքային ու ջրային թռչուններ կային։ Իսկ թռչուններին, որոնց թվում և կաքավներին որսալու համար Ղազար Փարպեցին ասում է, որ նախարարների փոքր մանուկներից շատերն իրենց դաստիարակների և ծառաների հետ «զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք» վերադառնում էին տուն, ուրախության ընթրիքը կազմակերպելու համար (տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1904, էջ 10—11)։

Ուրեմն բազեով որսորդությունը Հայաստանում երկու հազար տարի շարունակվելով մինչև մեր օրերը, արդարև, այժմ այնքան ընդհանրություն չունի, բայց այնուամենայնիվ այդ սովորությունը կա այժմ և պետք է լինի դեռևս շատ դարեր։

Քոչ. Փ, 1881, 5—6, էջ 57—62

187. ԹԱԿԱՐԴՈՎ ԹՌՉՈՒՆ ՈՐՍԱԼ

Ձմռանը, երբ վայրի թռչունների համար ուտելիք ճարելը դժվարանում է, երեխաները սկսում են դրանց որսը՝ ձիու պոչի մազից պատրաստած թակարդով։ Թակարդը պատրաստում են այսպես։

Դիմացկուն և մինչև 1 մ հասնող թելի երկու ծայրերին ամրացնում են մեկական բռնցքաչափ քար։ Ձիու պոչի մազը երկտակ անելով, բոլի մասը և ցուցամատը իրար քսելու միջոցով ոլորում են և ծայրը հանդուցում. այս ծայրը մտցնելով հակառակ կողմի օղակի միջով, առնում են շարժական օղակ։ Ունենալով այդպիսի մի շարք մազօղակներ, հանդուցված ծայրի կողմից դրանք կապում են թելի վրա իրարից 10 սմ հեռու։ Ապա թակարդը տեղավորում են ձյան վրա, քարերը նրա մեջ թաղելով։ Թելը ամրողջապես ծածկում են հարդով և հատիկներով այնպես, որ մազե օղակները դուրսը մնան։

Կեր որոնող թռչունի ոտքը կամ պարանոցը երբ մտնում է մազե օղակի մեջ և օղակը ձգվում է, անմիջապես բռնվում է։

Մանր թռչուններ որսալիս օղակը մի մատից են պատրաստում, աղավնի որսալիս՝ երկու և կաքավ որսալիս՝ 3—4 մազից։ Սովորաբար նախընտրում են շեկ մազերը, որոնք հարդի մեջ աննկատելի են լինում։ Որսի թռչուններին գրավելու նպատակով դարին բովում և այդպես են ցանում թակարդի վրա։ Այս եղանակը գործ են ղնում հատկապես կաքավ որսալիս։ Մանր թռչունների համար նախընտրում են կտավատ կամ նման հատիկներ ցանել (նկ. 86ա)։


Թռչնորսի այս ձևը հայտնի է նաև Սևանի ավազանում։

Բ. Ժո. Ա. (Ախ.)

188. ՁՆՃՈՒՂ ԲՌՆԵԼ

Ձմռանը, երբ ճնճղուկները բույն են դնում խոտերի դեզերի մեջ և երեկոյան մտնում այնտեղ, տղաները եզանի մատներին անցկացրած մազը բերանքսխիվայր խփում են բնաբերանին ու շարժում։ Ճնճղուկը բնից փախչելու փորձ անելիս ընկնում է մազի մեջ, որտեղ և որսորդի կողմից բռնվում է (նկ. 86բ)։

Բ. Ժո. Ա. (Ախ.)



ա



բ


Նկ. 86. ա. Թակարդով թռչնորսություն Ախալքալաքում. բ. Մագով ճնճղուկ որսալը (բնագրերը՝ № 187—188)

Նկ. Հովհ. Քացակյանի


189. [ԼՈՐԻ ԹԱԿԱՐԴ]

Արտաշատի շրջանի վ. Արտաշատ գյուղում այդիները վնասող լորերը որսալու համար հետևյալ ձևի թակարդ էին պատրաստում: Ջիու պոչի մազից երկուական հատ իրար հետ ոլորում և օղակ էին գցում: Ապատ ծայրին կապում էին բարակ ձողիկ՝ մատնաշափ երկարությամբ և սա դնում էին 10 սմ տրամագիծ ունեցող կեխափնդակի մեջ ու չորացնում: Շարժվող օղակը մնում էր դուրս: Ապա, ունենալով այսպիսի մի քանի տասնյակ գնդակ-թակարդներ, գնում էին այդիներում, շուրջը ցանում զանազան հատիկներ: Լորերը հատիկներն ուտելու միջոցին գլխով կամ ոտքով ընկնում էին թակարդը և և բռնվում (նկ. 87ա):

Բ. Ժո. ձ.



ա



բ


Նկ. 87. ա. Թակարդով լոր որսալը Արտաշատում. բ. Լորի որսը Զանգեզուրում՝ ատրճանակով կրակոցից ծածկված հորը գցելով

Նկ. Հովհ. Քացակյանի

Գ. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը *մանկական խաղերի մեջ տեղ է գտել գլխավորապես խաշնարածության գծով, որը մինչև XX դ. սկիզբը մեր լեռնային մասերի համար շատ բնորոշ էր:*

Այս խաղերը կատարվում են երկու ձևով՝ խաղացողների դերակատարմամբ և անշունչ առարկաները կենդանիներ ու մարդիկ ձևացնելու միջոցով:



Նկ. 88. Ագռաւ որսը Արտաշատում՝ կողովի միջոցով
Նկ. Ռ. Մնացականյանի

Թվում է, որ խաղը մանկական աշխարհում այսպիսի ժամանակագրական պատմություն ունի. ա. դեռևս առարկաների միջոցով հանգումը սիմվոլիզացիային, երբ առարկաներն են կենդանիներ ձևացվում, որպիսին ստեղծելը շատ ավելի երկարատև ժամանակաշրջանի էր կարող։ Սիմվոլիկ ոչխարները, շները, գայլերը և անասնապահները մեծ մասամբ պատրաստվում են արձանիկների ձևով, որպիսի հանգամանքները երեխաներին մղում են դեպի ստեղծագործական աշխատանքը։

Դրանցից ծագած մտքերն ու գործողությունները խաղը դարձնում են շարժական, իսկ զարգացող գործողությունների շնորհիվ սրանք օժտվում են դրամատիզմով։

Անասնապահությունն ընդգրկող խաղերի մեջ կա կաթը հարևաններին տալու սովորություն, որ կարնահայերի մեջ հայտնի է «խապ ու խապ» անունով. այն կաթնամշակման ձևերի մասին նախնական տվյալներ է հաղորդում։ Սա պարզապես կաթը կոլեկտիվ կարգով արդյունավետ մշակելու մի եղանակ էր, որն իր շուրջն էր համախմբում ազգակից և հարևան ընտանիքներին։

«Խապ»-ն ունի իրեն հատուկ կենցաղ, որ կապված է կաթը կեղծելու, քիչ տալով՝ շատ պահանջելու և այլ հարաբերությունների հետ. «կանանց» վեճերը, «տղամարդկանց» միջամտությունները, խռովությունները և դրանով՝ «խապի» կազմալուծումը. ահա այս է դրա դրամատիկական լուծումը։

190. ՕՁԽԱՐ-ՕՁԽԱՐ ԽԱՂԱԼ

Մանուկ տղաներն ու աղչիկները ամառային օրերին աղակու և հախճապակու կտորներով «Օչխար-օչխար» են խաղում։ Սրբանց գունավոր և ընտիր կտորներից ընտրում են մի մի հովիվ, մի մի օպնական, մի քանի շուն, և մնացածն ըստ տեսակների ներկայացնում են մայր ոչխարների, թոխլիների ու գառների հոտեր։ Հոտերն



Նկ. 89. Օչխար-օչխար խազալն Ախալքալաքում (բնագիրը՝ № 190)
Նկ. Ռ. Մնացականյանի

ունենում են մի մի նոխազ, որոնք միշտ գտնվում են առջևում, մանավանդ այն ժամանակ, երբ հոտը ֆաշվում է մակաղատեղը՝ հանդատանալու և կամ մեծ գետերից դժվարին անցում են կատարում։ Թեև հոտերի, հովիվների ու շների բնատուբյունն այդ ձևով կատարվում է, բայց դրանց շարժման մեջ դնողները իրենք՝ հովվի, շան և նոխազի դերակատար երեխաներն են (ոմանք ապակիների փոխարեն կավից շինած ոչխարներով են խազում)։

Գլխավոր հովիվն աջ ու ձախ հրամաններ է արձակում, ոչխարն այս արտից այն արտը շուռ տալու կարգադրություններ է անում, օրվա կեսին երբ իր սավերը կարճանում, երեք ոտնչափի է հասնում, կթելու է տանում և այլն։ Գյուղում յուրաքանչյուրն իր ոչխարը բոլո՛, բոլո՛ տանելով ջոկում, տուն է տանում։ Սկսվում է ոչխարի կթիը։ Աղջիկները վայտե սուտ քուղանները վերցրած գալիս են երբը՝ կթելու։ Կթում են ֆշֆշացնելով և փրփուրով ծածկված կաթը տանտիկինը քուղով խապն է տանում։

Կթից հետո գառը տալիս են մորը։ Երեխաներից ոմանք գառան, ոմանք ոչխարի, ոմանք այծի և ոմանք ուլերի մայուններով ու մկկոցներով աղմուկ հանելով գառ ու ոչխար խառնում են իրար։

Օրը իրրև ըե երեկոյանում է. գառը մորից ջոկում և գարձյալ սարն են քշում։ Մութը վրա է գալիս։ Ահա, գայլը հովից երևում է, որին ներկայացնում են սև քարով։ Ապակե սպիտակ շները և հովիվները հարայ-հրոցով

և հաջյուններով դայլին հալածում, կորցնում են հետ՝ և հետս սարերի ետևը։

Եվ այսպես, մերի լուսանում է ու կյանք է սկսվում և մերի պիշեր պառնում, խոր քուն բերում (նկ. 89)։

Բ. ժո. ձ. (Ախ.)

191. ՕՁԽԱՐ-ՕՁԽԱՐ ԽԱՂԱԼ

Տղաներից մեկը պառնում է հովիվ, երկուսը՝ շներ, մեկը գայլ, իսկ աղջիկ ու տղա երեխաները՝ ոչխար, այծ ու գառ։ Իրարից 50—80 քայլ հեռավորության վրա նշանակվում է ոչխարի համար մակաղատեղ և գայլի համար՝ բույն։

Երևակայվում է, թե մութը վրա է տալիս։

Հովիվն արոտից ոչխարը մակաղատեղ է բերում։ Մակաղատեղը երբեմն ընտրում են բամայի՝ չորացման համար երկար ու ցածրիկ շարված ախարի շղխանների արանքը, որը ազդել է ձևացվում։ Բոլորը պառկում և քնած են ձևանում։ Գայլը գաղտագողի գալիս ու հանդարտիկ մտնում է ազդրը և բռնում որևէ ոչխարի, որը պարտավոր է հնազանդորեն հետևել իրեն։ Այդ ժամանակ ոչխարի քնած հոտը խրտնում, դես ու դեն է փախչում, որից հովիվն ու շներն արթնանում են։ Հովիվը շներին հո՛յ, հո՛յ, հո՛յ բացականչությամբ հորդորում է՝ գայլին բռնելու և ոչխարն ազատելու համար, իսկ գայլը ձգտում է բոպե առաջ ոչխարը հասցնել իր բույնը։ Երբ որ շները գայլին հասնում ու բռնում են մինչև բույնը հասցնելը, ոչխարն ազատում են, հակառակ դեպքում ոչխարը մնում է նրա մոտ։

Խաղը այսպես պարբերաբար կրկնվում է մինչև որ գայլը շարունակ բռնվում է կամ ընդհակառակը, ոչխարն է սպառվում։

Բ. ժո. ձ. (Ախ.)

192. ՕՁԽԱՐ ՏԱՄ ԿԱՐԾԵ՞Ս

Երկու սեռի երեխաներն իրար հետ կամ առանձին առանձին միմյանց կամքը փորձելու նպատակով դիմում են հետևյալ հարց ու պատասխանին.

—Օչխար տամ կարծե՞ս։

—Կարծեմ։

— Գելը քա չվախենա՞ս։

— Չէ՛։

Երբ լինում է «չէ» պատասխանը, հարցնողը պատասխանողի վրա հարձակողական դիրք է դրավում, անակնկալորեն «բա՛» է բղավում և միաժամանակ ձեռքով խփելու նշան է ցույց տալիս։ Երբ պատասխանողը «բա» բղավոցից վեր է թռչում կամ ձեռքի շարժումից աչքը փակում, տանուլ է տալիս։

Խաղում են նաև հայր ու որդի, ուր հարցնողը մեծ մասամբ հայրն է լինում։

Վ. ժո. ձ. (Ախ.)

193. Օ Ղ Ա Կ—Կ Ո Ճ Ա Կ

Վանում խաղը նույնն էր։ Հարցումը հետևյալն էր.

Օղակ անեմ,
Կոճակ անեմ,
Գելու մոտեն
Չև՞ս վախենա

կամ՝

Աղ անեմ,
Աղճյուր անեմ,
Գելու մոտեն
Չև՞ս վախենա

Խոսքի հետ ձեռքով նրա աչքերի առաջ սաստկական շարժում անելու դեպքում դիմացինը աչքը չթարթելիս քաջ էր ճանաչվում։

Ախ, I, 70

194. [ԳԱՅԼՆ ՈՒ Ո Չ Ա Ր Ն Ե Ր Ը]

Նրբամատություն և խիզախություն զարգացնող այս խաղը տե՛ս

Վվ. Մա., 32—33։

195. [ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ]

Ոչխարի հոտ, հովիվ և գայլ ներկայացնող սույն խաղը տե՛ս

ՊՇԽ., 30։



Նկ. 90. Գել-գել՝ խաղը Ախալքալաքում (ընդօրինակ՝ № 196)
Նկ. Ի. Մնացականյանի

196. Գ Ե Լ-Գ Ե Լ

Երեխաներն իրենց փափախները ոչխար էին ձևացնում և շարքով, իրարից երկու-երեք քայլ հեռու, գետնին դնում։ Գլխարկատերերը որպես շներ, գլխարկ-ոչխարների հետևը նստում և սպասում էին։ Մեկը հովիվ դարձած՝ նստում էր փոքր հեռու և հսկում ընդհանուրին։

Ոչխարներից 30—40 քայլ հեռու գայլն էր տեղավորվում իր բնով։ Սա տոտիկ տոտիկ գալիս, մոտենում էր ոչխարներին, մեկ-մեկ վերցնում, հոտոտում էր, ապա միամտացնելով շներին՝ ուզում էր խույս տալ ու փախցնել։ Շներն իսկույն վեր էին ցատկում։ Գայլը հենց որ վտահ չէր լինում, թե կարող էր ոչխարը փախցնել, իսկույն փափախը վայր էր դնում, որ շները նահեին։ Ապա ինքն անցնում էր հաջորդ ոչխարին, հոտոտում էր, նույնը փորձում և հարմար վայրկյանին փախցնում էր մի ոչխար։ Հովիվն ամիջապես ազմուկը գցում, շներին հրահրում էր և վերջիններիս հետ հետապնդում գայլին։

Երբ որ գայլին կիսաճանապարհին բռնում էին, ոչխարը ետ էին առնում, և իրեն ծեծում, բայց երբ գայլին հաջողվում էր բռնվելուց խուսափել և ոչխարը բույն հասցնել, սրա տեր-շանը ևս տեղափոխում էր իր բույնը։ Առաջ անարար բոլորին այս ձևով իր բույնը տանելու դեպքում գայլը հաղթող էր համարվում և դերը հովվի հետ փոխելով՝ խաղը նորից էին սկսում (նկ. 90)։

Բ. ԺԽ. Ձ. (Ախ.)

197. ԴՄԱԿ ՏԱՐՕՑԻԿ

Պատանիները, երբեմն և մեծերը դմակ ձևացնելու նպատակով փեշերը հավաքում էին կոնքերի վրա և իրենցից մեկին դմակ տանող էին նշանակում։ Երբ ընդհանուրի կողմից խաղն սկսված էր համարվում, բոլոր դմակավորները փախչում էին, իսկ դմակ տանողը հետապնդելով նրանց, մեկին ու մեկի դմակը տարած էր համարում՝ երբ հաջողացնում էր այն քանդել-ցրել։ Սրանով դմակազուրկը դառնում էր դմակ տանող և նույն ձևով շարունակում խաղալ, իր պաշտոնը փոխադարձաբար ուրիշներին տալով։

Ա.Խ, I, 34 (Վ.)

198. ՄԵՐԿԱՏՈՒ

Խաղում էին աղջիկները, 6—10 հոգով, որոնցից մեկը մայր էր դառնում, երկրորդը՝ անդրանիկ, երրորդը՝ կատու։ Բայլ մորից ու կատվից, մյուսները ձևոք ձևոքի տված՝ բոլորաձև կանգնում էին։ Մայրը մտնելով շրջջանի մեջ, անդրանիկի ձեռակցից սկսած սրա վենջակից դույզ ձևոքերով բռնած, դպակի մեջ կամ կրծել էր ձևացնում, մինչդեռ հետևում կանգնած կատուն կամ էր աղերսում հետևյալ երկխոսությունն սկսելով.

— *Միո՜ւ, միո՜ւ։*
— *Տյու վի՞ր կատուն։*
— *Ալահա՛վերդուն։*
— *Ի՞նչը կուզես։*
— *Սե՛ր ու մածուն։*
— *Վի՞ր կը տանես։*
— *Իմ ծա՛քերուն։*
— *Ծա՞քեր գիո՞ր ևն։*
— *Քնուշկի՛ կուբեն[2]։*
— *Ի՞նչ էս պիրե։*
— *Լաճ և ախչիկ։*
— *Անուն ի՞նչ ի։*
— *Զանգալ Պամբակ։*
— *Փը՛շտ, տերամեռի՜ կատու։*

Վերջին «Փը՛շտ, տերամեռի՜ կատու» խոսքն ասելուն պես մայրն անցնում էր հաջորդին կրծելու, սրանից էլ մյուսին և այսպես բոլորին, մինչև դարձյալ հասնում էր անդրանիկին, յուրաքանչյուրին կրծելիս կատվի հետ նույն երկխոսությունը կրկնելով։ Եվ երբ վերջին անգամ կրծում էր անդրանիկին, կամենալիս դպակը դնում էր վերջինիս գլխին, ապա բոլորի փեշերը դնում էր իրենց բերանը, մի մատով յուրաքանչյուրի աչքին դիպ դնել ձևացնում ու ծողնում, իբրև թե ժամ էր գնում։ Եվ ահա, անմայր մնացածներին մոտենալով՝ կատուն բոլորի փեշերը բերաններից հանում, ծարիրը աչքերից սրբում և անդրանիկի գլխին խփելով կաթը թափում ու խույս էր տալիս։ Այդ ժամանակ գառնուկները պպզում, լաց ու ճիչով վայնասուն էին գցում և ժամից դարձած մայրը այդ իրարանցումը տեսնելով, մոտենում էր անդրանիկի ձևռակցին և նրան հարցնում.

— *Ի՞նչ էլեր ի, վո՞վ արեր ի։*

— *Էսա արաց,—պատասխանում էր նա, մատնանշելով իր հաջորդ ընկերոջը։ Վերջինս նույն հարցով դիմելիս, նա ևս իր հարևանին էր մատնանշում, հանցանքն իրենից նրա վրա գցելով, այն մյուսն էլ՝ մյուսին և այլն, մինչև որ մայրը հասնելով անդրանիկին, կրկնում էր, թե.*

— *Ո՞վ ըրեր է, կաթն ո՞վ է թափեր։*

— *Բան կատո՜ւն ի թափե,— պատասխանում էր անդրանիկը։ Այս անգամ արդեն մայրն ընկնում էր բան կատվի ետևից, որը հալածանքից ազատվելու համար երեք անգամ մտնում էր շրջան կազմածների թևերի տակով ներս և դուրս էր գալիս։ Երրորդ անգամ դուրս գալու վայրկյանին բոլորը ձևքերը ծողնում և հարձակվելով կատվի վրա՝ կըտ կըտ էին անում, այսինքն՝ մատնածայրերով ծեծկտում-ծմբկահարում էին, մեծ ժխորով, որը և խաղի ձայնավոր վերջաբանն էր լինում։*

Ա.Խ, I, 153—155 (Վ.)

---

[2] Վար. Տե՛ս նաև ԳՇ. ՎՍ, I, 18։

199. Մ Ա Յ Ո Մ Ա Յ Ո

Խաղը նույնն է։ Տեղն անհայտ է։

Տե՛ս ԳԱ. ՀԺՀ, VI, 117—118։

200. ԱԼԱԲԵԿԻ ԿԱՏՈՒՆ

Խաղը նույնն է։ Տեղն անհայտ է։

Տե՛ս Լ. ԺՄԽ, 17։

201. Խ Ա Պ ՈՒ Խ Ա Ջ

Խաղում էին միայն աղջիկները, որոնք ունենում էին մեկական քուղա, մեկից երկու ջրաման, մեկից երկու կաթսա, մեկական կճուճ, տակառ և մեկական ծոնթ։ Այդ առարկաների դերերը հաճախ ոչ թե իրական, փոքրիկ ամաններն էին կատարում, այլ ապակիների կամ խեցիների կտորները։

Երևակայվում էր, թե առավոտ է կամ երեկո։ Կովերը տուն էին վերադառնում։ Կամ կեսօր էր, ոչխարը դյուղ էր «թափվում»։ Կթվորները քուղաներով կթում էին իրենց կովերն ու ոչխարը և մեկական քուղա կաթ ունենալիս ձեռքով, իսկ ավելին ունենալիս՝ ճկակըլով (լծափայտով) տեղափոխում էին իրենցից մեկի տունը, ում որ «խապը վրեն էր»։ Խապվորները հավաքվելով խապի տիրոջ բակը, խապտիրոջ կնոջ ներկայությամբ ծոնթերը մացնում էին կաթի մեջ ուղղահայաց դիրքով և ուր որ կաթի մակերևույթը ցույց տալիս, ծոնթում կամ խաղում էին ու ծոնթերը տալիս խապտիրոջը, որ պահի։ Հաջորդ բոլոր անգամները ծոնթում էին և երբ «խապը գառնում էր» մի ուրիշի վրա, փոխ տվածները դումարում և ծոնթերը ետ էին տանում։ Այնուհետև մեկը փոխ էր տալիս և մյուսը պարտքն էր վերադարձնում։ Այսպիսով, կաթի փոխառվությունը կրկնվում էր բոլորի տանը, որով ոչխարի կաթից գլուխ պանիր և կովի կաթից յուղ, ջիվիլ պանիր ու վազնաթ էին պատրաստում։

Խապ ու խաղի ժամանակ հաճախակի կեղծ վեճեր էին ստեղծվում, պատճառաբանելով, թե այսինչ «դրկցին կնիկը» կաթին ջուր է խառնում, կամ ճանապարհին անձրևի կաթիլներից կաթը իր գոգնոցով չի պաշտպանել, կամ այսինչի կնիկը կաթը պղտի քուղով փոխ է տվել, մեծ քուղով ետ է պահանջում և այլն։ Բանավեճերն այնտեղ էին հասնում, որ տան «տղամարդիկ» միջամտում, «թքում, մրում» և հաշտեցնում էին իրենց կռվարար կանանց և ընդհակառակը, երբեմն էլ կաթի պատճառով ծագում էին «դապինակի կռիվներ», որով կապ ու խաղով իրար հետ կապված ազգական կամ հարևան մարդիկ անջատվում, ուրիշ խապ էին կազմակերպում (նկ. 91)։

Բ. Ժ. Ձ. (Ախ.)

Դ. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Երկրագործության վերաբերյալ խաղատեսությունները բավական շատ են։ Մենք ընտրել ենք դրանց առանձին նմուշները, որոնք մի ընդհանուր գաղափար են տալիս գաշտամշակության ձևերի, աշխատող անասունների ու գործիքների, աշխատանքային պրոցեսների, աշխատավոր մարդկանց և նրանց փոխհարաբերությունների ու սոցիալական հարցերի մասին։

Գյուղական երեխաների խաղաշխարհում ուրույն տեղ գրած գաշտամշակությունը, այդ գործունեությունը, պարտիզպանությունը, ոռոգումը և կալսումը, բացառությամբ հնձի, դրեթե ապառում են գյուղատնտեսական աշխատանքների ցիկլը։



Նկ. 91. Խոպ ու խոպ խոպը (կաթը իրար փոխ տալը) Ախալթալաքում (բնագիրը՝ № 201)
Նկ. Ս. Մնացականյանի

202. ԿԱԿՈ-ՄԱՏՈՆ*

Կակո-Մատոն ծույլ և մակաբույծ մարդու օրինակն է, որ ներկայացնում էին երեխաները՝ դրանց ծաղրելու նպատակով:

Հավաքողներից մեկը փորին մի փոքր բարձ կապած և հիվանդ ձևանալով՝ պալիս, սենյակի մեջտեղը մեջքի վրա պառկում էր: Մի ուրիշն էլ, իբրև նրա եղբայրը, բահն ու բաֆրիկը (ձյունաթիակ) ձեռքին՝ պալիս էր հիվանդ եղբոր մոտ և բահով կողքը բոթելով կամ թիակով բարձրացրած փորին խփելով ասում էր.

— *Օ՛, Կակո-Մատո՛, էլի՛ էրթ ես վա՛ր անենք:*

— *Ա՛խ վա՛յ..., հա... հիվա՛նդ ե՛մ, չե՛մ կանա՛... պի՛... ա՛յի... կնա՛... վա՛յրի՛..., պատասխանում էր Կակո-Մատոն՝ նվաղուն ձայնով:*

Եղբայրը, որ ներկայացնում էր բարյացակամ հարազատը, հեռանալով սենյակի մյուս կողմը, որտ վարել էր ձևացնում՝ ուկռաներ բանալով դալիս-դնում էր և լրացնելուց հետո նորից վերադառնալով հիվանդի մոտ ու փորը խթելով ասում էր.

— *Օ՛, Կա՛կո-Մատո՛ո՛, էլ էրթ՝ ցանք անե՛նք:*

— *Ես... հիվա՛նդ ե՛մ..., չե՛մ կանա՛..., ա՛յի կնա՛ ցանի՛...,— նորից պատասխանում էր հիվանդ եղբայրը, միշտ ծուլանալով:*

---

* Ահ, II, 245 և 253 բան. հատատառում է, թե խաղի անուններից մեկը այս է, ուստի մենք հարմար գտանք Ահ. II 251-ում «Հիվանդ ախպեր» անունը «Կակո-Մատո»-ով փոխարինել.— Կազմող:



Նկ. 92. Արտով վար անելու խաղը Ախալքալաքում. ազջիկները աշխատավորների համար ճոպ ու ջուրթ են բերել

Նկ. Ս. Մնացականյանի

Աշխատավոր եղբայրը կռանում էր հիվանդ եղբոր վրա, նայում, քննում, և, իբրև թե ատույգ պարզելով, որ հիվանդը լուրջ վիճակ է ապրում, դառնում, կես ծաղրական, կես ցավագին ձայնով ու դիմագծերով ասում էր.

— Վա՜խ, իմ ախպեր խիվինդցե՜ր ի՜... խիվանդ ինկե՝ ուռուցվորե՜ր ի՜... քիթն էրկընցե՝ փորն ընցե՜ր ի՜...,— և ծիծաղելով հեռանում ու արտը ցանել էր ձեռնամուխ։ Լրացնելով ցանքը, դարձյալ գալիս էր եղբոր մոտ, ամեն անգամ հրավիրելով նրան արտ ջրելու, արտ քաղելու, կալ անելու, եւրան տալու, թեղելու (դիզելու) և ամեն անգամ էլ հիվանդ եղբորից նույն պատասխանն առանալով ինքը գնում ջրում էր, քաղում, կալ էր անում, երնում էր, թեղում, մինչև որ գալիս էր կալը կիսելու ժամանակը։ Ապա, մոտենալով Կակո-Մոռոյին, ասում էր.

— Օ՜, Կակո-Մոռո՜ո՜, է՛լ էրթանք կալ կիսե՜նք...։

—Հա՛, էրթանք, կիսենք,— պատասխանում էր հիվանդ եղբայրը և անմիջապես վեր էր թռչում։

Եղբայրների հետ մի քանի հոգի ևս գնում էին արտը։ Այնտեղ հիվանդ եղբայրն իր աշխատավոր եղբորից պահանջում էր՝ կալի երկու մասը իրեն տալ և միայն մի մասը՝ նրան։ Խեղճ աշխատավոր եղբայրն ի պատիվ եղբայրության, ձայն չէր հանում։ Սակայն ներկա գտնվող դյուղացիները, որոնք տարին բոլոր ականատես էին լինում եղելությա-



Նկ. 93. «Կալ հնձելը» Ախալքալաքում (ընտիրը՝ № 201)
Նկ. Ս. Մնացականյանի

նը, ի պատասխան հիվանդ եղբոր անգիտության, մի ավեճ ավեճ էին կազմակերպում՝ մի ձեծ էին տալիս, որ Կակո-Մատոն հիվանդության նոպայից ազատված՝ փախուստի էր դիմում։

Ախ, II, 251—252 (վ.)

203. ՓԱՐՏԻԶՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պարտեզ շինեինք, ինչպես մեր թաղի պարտիզպանք գարնան պարտեզի առուներ քաշեին, սեխ և մեղրապոպ տնկեին։ Երբ ջուր օձապտույտ առուներաց մեջ պտույտ առնելով ընթանայր, մեր զվարճությունն կատարյալ լիներ։ Հետո մեք մեզեն մոտածելով, թե պետք է փոշի եղած տեղեր ջուր սրսկել, թաղի մեկ ծայրեն մինչև մյուս ծայր փոշոտյալ ճանապարհներ զովացուցանեինք։

Ջ. № 4184, 189բ (վ.)
Վար. ԳՍ. Մն, 59 (վ.)

204. ԿԱԼԷՆԵԼ

Ճանապարհների կենտրոնում, ուր հողը փոշիացած ու առատ է լինում, երկու սեռի մանկահասակ երեխաները կալ են անում։ 50—60 սմ տրամագծով հարթ տարածության վրա հողը շրջանաձև լցնում, հասցնում են մինչև 4—5 սմ հաստության։ Փոքրիկ ալաքարերին թելեր են կապում, որոնք վերջանում են լծափայտերով։ Ապա ձեռքերը երկարացնելով, որպես եղներ ու ձիեր, լծում են

այն կամերին և կալսում են։ Նայելով կալսողների թվին ու կալի մեծությանը, լինում են մի քանի կամեր ու այդքան զույգ «եղներ», «ձիեր», «արջառներ»։ Եղները հնապանդ են լինում, իսկ այդ չարաճճի արջառները հաճախ փախչում են, կամը ջարդ ու փշուր անում։ Կամը վարողը հաղիվ հնազանդեցնում և արջառներին նորից կալն է տեղափոխում։ Բավական անհանգստություն են պատճառում նաև այս ձիերը, որոնք մեկ մեկ քացի են տալիս և իրրև թե քիթ ու բերան արյունվա են անում։

Ահա կալի մի երեսը պատրաստ է։ Կամերը «կշտի առնելով» անասուններին հանդըստացնում են, իսկ մյուս աշխատավորները սկսում են կալը նախ փայտե և երկաթե եղաններով, ապա հուսկ ինքներով շրջել։ Ապա նորից են կալսում, նորից շրջում, մինչև որ կալը «թիու է ընկնում»։ Այնուհետև մալը թողնում և սկսում են կալի հավաքումը։ Մեկը կալքաշով, մյուսը հալով, հավաքում, թեզ են անում, մյուսները եռանից ավլում են կալի տակը։ Տգամարդիկ սկսում են ձեռքերով երնել։ Ահա, քամին հատիկն անջատում է էրթից, կանայք մաղերով (ձեռքերով կամ սալաքարերով) սկսում են հատիկը մաղել, մյուս տղամարդիկ մի կողմից հատիկը ջվալներով տուն են տանում և էրթը՝ քթոցներով մարագ։ Երևակայվում է, թե արդեն մութը վրա է հասել, ուր և լսում է օրվա եռուզեռը։

Բ. Ժ. Ա. (Ախ.)

205. Տ Ա Ս Ա Ն Ո Ր Դ

Խաղում էին 5—12 տարեկան տղաներն ու աղջիկները ամռանը, դեռևի և առուների ափերին ու դյուղի փողոց հանապարհներին. հողից հացահատիկի շեղջեր էին շինում և սպասում պետական տուրքերը դանձող շահնային, որը գալիս և բոլոր շեղջերը դաջում էր ձմերուկի կամ դդումի կճեպից պատրաստված դաջով։

Խաղացողներից մեկին նշանակում էին շահնա։ Սա պետության այն ներկայացուցիչն էր, կամ այն վաշխառուն, որը կապալով իր վրա էր վերցնում հացահատիկի տասանորդի հավաքումը, դրա դիմաց նախօրոք որոշ գումար մուծելով պետական գանձարկղը։ Մյուսներին նշանակում էին՝ տերտեր (եկեղեցու կամ վանքի ներկայացուցիչ), ռես, նախարապահ, հորթարած, հովիվ, ժամկոչ, դպիր, որոնք բոլորն էլ գալիս բաժին էին պահանջում։

Շեղջը չափելու համար երեխաները ձմերուկի կամ վարունգի կճեպից կոտ և շնիկ էին շինում։ Շահնան կոտով կամ շնիկով վերցընում էր հացահատիկի մեկ յոթերորդականը, որից հետո կալատերը բաժին էր հանում եկեղեցուն, վանքին, քահանային, ռեսին, դպրին, վճարում էր նախարապահի, հորթարածի, հովվի, վարսավիրի, հանդապահի վարձը և միայն այդ ամենից հետո մնացած հացահատիկը տանում էր տուն։

Երբեմն խաղացողներից երկուսին նշանակում էին կիսարարներ, որոնք իրենց կողմից տուրքերն ու վարձերը տալուց հետո մնացած բերքը բաժանում էին իրար մեջ (Մ. Ժ. Ա. Տրն.)։

Շատին Գարահիսարում խաղում էին ավելի մեծերը. ձևացող շահնան տասանորդը հավաքում էր ասպիկանության անմիջական օգնությամբ ու բռնությամբ, որը տեղի էր ունենում կալակից հարևանների ու գրանց ընդհարմանը. դյուղացիները ծեծում էին բոլոր հարկ ու տուրք հավաքողներին (Հա. Ա. Ա.)։



Նկ. 94. «Տաճանորդ» խաղը բարեկենդանին (բնագիրը՝ № 265)

Նկ. Ս. Մուրադյանի



206. [ԱՐՀԵՍՏ ՄԻ ԲԱՆԻՎ]

Տան մեջ պատանի տղաները խումբ կազմում և մի վարպետ էին ընտրում: Խաղակիցներն ընտրում էին մեկական արհեստ՝ կոշկակարություն, դերձակություն, նվագածություն և այլն, իսկ մեկն էլ՝ դրագիր էր դառնում: Երբ որ վարպետը նշան էր անում, բոլորն իրենց արհեստների ձևերն էին կատարում, իսկ վարպետը ծափ էր տալիս: Աշխատանքի պրոցեսի ժամանակ երբ վարպետը հանկարծ ծափը դադարեցնում էր, բոլորը պետք է դադարեին աշխատելուց. ով ծափից հետո շարունակում էր արհեստով զբաղվել, պարտավոր էր ծափ տալ, մինչև որ վարպետը կամ իր սովորական ծափն ակներ և կամ որևէ այլ արհեստով պարապեր: Այդ վայրկյանից ծափահարող արհեստավորը դարձյալ իր արհեստովն էր պարապում: Երբ վարպետի ծափը դադարելուց հետո արհեստավորն էր ծափահարում, բոլորը նորից սկսում էին իրենց արհեստով պարապել. այդ ժամանակ վարպետը հանկարծ կատարում էր արհեստավորներից մեկի, օրինակ՝ կոշկակարի արհեստի ձևերը: Եթե տվյալ արհեստավորը ուշադիր չլինելով շարունակում էր աշխատել, վարպետը թաշկինակից պատրաստված ձաղկիչով որոշչյալ չափով խփում էր նրան: Եվ, ընդհակառակը, եթե վարպետը դադարում էր, օրինակ, կոշկակարի ձևերը կատարելուց և կոշկակարը շարունակում էր իր ծափահարությունը, վարպետն այս անգամ հարվածն ավելի էր ուժեղացնում, որով կոշկակարը վերստին սկսում էր իր արհեստով պարապելը:

ՃՀԱ, 185 (Ակն)

207. [ՊԱՏՆԱՏ]

Մի խումբ երեխաներ բոլորակ նստելով իրենցից մեկին վարպետ էին ընտրում: Վերջինս նստողներից յուրաքանչյուրի համար նշանակում էր որևէ արհեստ՝ մեկին գուլպա գործող, մյուսին կարող, երրորդին՝ շարժող, չորրորդին՝ մանող, մյուսներին՝ բամբակ զզվող, փայտ տաշող, արտ հերկող և այլն: Հրահանգի համաձայն արհեստավորներն սկսում էին աշխատել՝ կատարել իրենց արհեստին հատուկ շարժուձևեր և աչքով ուշադիր հետևել վարպետին: Աշխատանքի պահին վարպետը հանկարծ սկսում էր կատարել իր նշանակած արհեստներից մեկի հատուկ ձևերը. այդ արհեստի տերը պետք է ուշադիր լիներ և վարպետի հետ միաժամանակ ցույց տար իր վարպետությունը: Բայց վարպետը արագ արագ փոխում էր արհեստները, որպեսզի շփոթեցներ դրանց տերերին: Վարպետի շարժուձևերին անուշադիր խաղացողը առաջինի կողմից ձեռքերի երեսներին ապտակ էր ստանում:

ԱԽ, I, 94—95 (Վ.)

208. ՄԱՆԻՄ ՄԱՆԻՄ...

Նախադրոցական երկու սեռի երեխաները մի տեղ էին հավաքվում և յուրաքանչյուրն իր ձեռքերը իրար բոլորտիք անիվանման դարձնելով արտասանում էին:

Մ՛անիմ, մանիմ,
Գալուն (գայլին) տամ.
Գալին աչքը
Հանել տամ.
Երթամ չարսուն,
Ծախել տամ:

ՃՀԱ, 178 (Ակն)

209. ՃԱԽԱՐԱԿ

Երեխաներն իրենց ձեռքերի շարժումները նմանեցնելով ճախարակին, ասում էին.

Տը՛պ, վը՛պ, չխարակ,
Ես հատա մանեմ,
Դու՝ պերակ:

Քաջ. Ա.Հ, IX, 95 (Շամ.)

Գրականություն

Արհեստները ներկայացնող խաղերից են՝ «Ուրագ-ուրագի» (Հ. Ադն, № 2, էջ 63). «Պոլիսուդրի» (Ն, I, 56). «Նվագահանդես» (ԲՄ, 1882, № 1, էջ 20). «Արհեստավորներ» (Վվ. Մհ, 33—34)։

Ջ. ԱՌԵՎՏՈՒՐ

Արհեստներն ու տնայնագործությունը ինչպես կյանքում, մանկական խաղերումն էլ ենթադրում են «առևտրական հարաբերություններ»: Այս թեմաներն ընդգրկող խաղերի համաձայն առևտուրը կատարվում է երկու ձևով՝ ապրանքափոխանակությամբ և դրամով։

«Խանութ-խանութ խաղալ» խաղի մեջ տակա է «տունտուլիկ» շենքը որպես խանութ։ Վաճառականը, որին պատկանում է շենքը, պատրաստ է իր ապրանքները վաճառել կամ փոխանակել։ Նա վաճառքի համար ունի շորեղեն, մրգեղեն, հրուշակեղեն և այլն։ Նա մի բուռ բաթաթուկը կարող է փոխանակել մի թևաբաց թելով, ծաղկեփունջը՝ շինափայտով, դնդակացու մազով և այլ պարագաներով։ Նա ապրանքի մի մասը վաճառում է ապակյա դրամներով. տալիս է և ապառիկ։ Հենց այս վերջինն էլ խաղի համն ու հոտն է, որովհետև հանդարտիկ առևտուրը վեր է, ածվում պարտատիրոջ ու պարտապանի վեճի։

Առևտրական հարաբերությունները դրանվորելու, ինչպես նաև տներ ու դամեր կառուցելու համար շինանյութեր կրելու, ջրաղացը աղուն տեղափոխելու, մաղար և ճանապարհ դնալու համար երեխաներն ունեին երկանիվ և քառանիվ սայլեր, սահնակներ, ձևացվող ձիեր և այլ փոխադրական միջոցներ, որ հատուկ էին XX դարի սկզբներին։

210. ԽԱՂՈՒՄ ԽԱՆՈՒԹ ԽԱՂԱԼ

Երկու սեռի մանկահասակ երեխաները ամռանը մի բաժանմունքից բաղկացած տունտուլիկ էին շինում, որին խանութ անունն էին տալիս։ Այստեղ տեղավորում էին «քաղքեն բերած» խաս ու ղումաշ շորեր, անուշ մրգեր, «մոռմոռ» «կանֆետներ» և այլն, որտեղ իբրև վաճառական էր ներկայանում տունտուլիկի տերը։ Իրականում այդ ապրանքների դերը կատարում էին թարմ վկի, անձի, պատատուկի, ղմու և զանազան տեսակի ծաղիկների կույտերն ու փնջերը կամ գույնզգույն շորեղենների կտորներն ու թելերի. գիլոնները և այլն։

Առևտուրը կատարվում էր մեծ մասամբ ապրանքափոխանակման կարգով. մի բուռ պատատուկը կամ վիկը փոխանակվում էր 1—2 դիրկ թելով, ծաղկեփունջը կամ սինձը՝ տունտուլիկի ծածկի և սայլի շինափայտերով և կամ դնդակացու մազով և այլն։

Խանութպանը հաճախ վաճառում էր դուռնալոր ապակիների կտորներ՝ կանխիկ կամ ապառիկ դրամով։ Նա երբեմն վեճի էր բռնվում ապառիկ գնորդների հետ, որոնք «ամիսներ» շարունակ չէին բարեհաճում մնարել իրենց պարտքերը։

Ահա՜, լսվում էր ուշադրավաճառ շարչու ձայնը, նրա իշու զոռոցը, շների հաջոցը և այլն։ Տան «մեծերը» «թուփերով» շոր, փթիթերով մրգեր, շարերով հրլուն էին գնում, որոնցով ուրախանում էին «հարսները», «երեխաները», «աղջիկներն» ու «տղաները»։

Բ. ԺԽ. Ձ. (Ախ.)

211. ԿՇԵՌՔ ԿԱՄ ԿՇՌՈՑԻԿ

Երեխաները ամռանը ծառի կեղևով և ձմռանը՝ դղումի կոճղով իսկականին նման կշեռք էին պատրաստում և տաք եղանակներին ծառի ճյուղերից, իսկ ձմռանը՝ պատը խրած փայտից կախ էին տալիս։ Ապա մեկը վաճառող և մյուսները գնորդ ձևանալով կշռում էին վաճառված խնձորը, տանձը, սալորը, փշատը, ընկույզը, չամիչը, հատիկն ու աղանձը ևն։

Ա.Խ, I, 41 (Վ.)

212. [ՀՐԵԱ ՎԱՃԱՌԱԿԱՆ]

Բարշաւում հարսնեւանը թագավորի և մակարների խնջույքը հարանւորներից հետո երբ երկար էր տևում, ամանք մանրավաճառ հրեայի տարազով մտնում, մի կապոց շալակում և մոտենում էին կանանց, գովում իրենց ապրանքը, սրախոսում, ծիծաղեցնում ներկաներին (նվ. Ա.Հ, IX, 243)։ Այդ նույնը տեղի էր ունենում նաև Ախալքալաքի գյուղերում։ Փ. Խանչալյի գյուղում հրեայի դերը սկսած 1910-ական թվականներից, մինչև 1950-ական թթ. սկզբները տանում էր կատակարան Մուշեղ Հարությանը (Բ. ԺԽ. ձ.)։

213. ՍԵՂԱՆ

Մանկահասակ երեխաների համար մեծերը քառանիվ սայլ են պատրաստում։ Սայլի թափքը ներկայացնում է 40×60 սմ մեծության և 15 սմ խորությամբ տախտակե տաշտակ, որի տակին փայտե սռնիներ են մեխվում։ Սռնիներին հագցնում են միապատղ տախտակից պատրաստված՝ առջևինները 15 սմ և ետևիններըը՝ 20 սմ տրամագծով անիվներ։ Սռնիների ծայրերին մեխ են խրփում, որպեսզի անիվները վայր չընկնեն։ Սայլակին լծկե քարշակ դնելով երեխաները ձիեր են դառնում և լծվում նրան, որով «կոլտնտեսության գոմերը» և իրենց տուն-տուպիկները շինելու համար քար ու փայտ, հող ու խիճ են կրում, էլեկտրաղացը աղուն են տանում, մատար են գնում և այլն։

Զիապաններին ձի են տրամադրում կոլտնտեսությունների ֆերմաների վարիչները, որոնք հսկում են ձիերի և ձիապայլերի խնամքը, պատժում են անփույթ ձիապաններին, նախատում են ձիերին ծանրաբեռնող ուղևորներին և այլն։

Բ. ԺԽ. ձ. (ևխ.)

214. [ՍԱՅԼ ԽԱՂԱԼ]

...Երբ այսպես սայլեր բավական ժամանակ չէինք տեսնում, մեք փոքրիկ սայլեր շինելով մեզ համար նատեինք մեջ և տղայոց քաշել տայինք, զնոսա նստուցանելով մեք քաշեինք։ Սույն մեր շինած սայլի վերա այնչափ բարձրավզյալ հպարտանայինք, մինչդի չէինք ուզեր մեր ընկերակից մյուս տղայոց հետ խոսել։

Ջ. № 4184. էջ 194ա (Վ.)

Է. ԱՌՏՆԻՆ ԿԵՆՑԱՂ

Առտնին կենցաղը մանկական, մանավանդ աղջիկ մանկան, հոգուն շատ մոտիկ տպպարեզ է։ Սրանից են ծագել տնային տնտեսության առօրյան ընդգրկող խաղերը։ Ինչպես տնտեսության մեջ, այս խաղաշխարհումն էլ կյանքը մերթ շարժուն է, որով խաղի մեջ շարժական տարրեր են մըտնում, մերթ նստկան, որով խաղը սենյակային է դառնում, աշխույժ բռնկումներ ունի, մերթ հանդարտիկ կենցաղավարություն։ Ընդհանուր առմամբ դրանք միմյանցից բխող երկու ընդգրկումներ ունեն՝ սննդի պարագաների ձեռքբերումն ու կերակուրների պատրաստումը և ճաշկերույթների-խնջույքների կազմա-

կերպումը։ Այդ բոլոր հարաբերությունները կատարվում են ամենաբազմազան խաղալիքներով, որոնք, եթե չլիներ ազգագրական որևէ նկարագիր, հիմք կհանդիսանային վերականգնելու համար հայկական տան-խոհանոցի բոլոր պարագաները։

Թոնիրն այդ խաղալիքների մեջ, ինչպես կենցաղում, ամենակարևորն է։ Մանկական «ընտանիքներն» ու «խնամի» խմբերը հավաքվում էին սրա շուրջը։ Այն շատ անգամ պատրաստվում էր մեծերի կողմից և հրամցվում երեխաներին՝ խաղեր դրսևորելու, ընտանեկան կենցաղին վարժվելու համար։ Եվ որովհետև երեխաները նման պատրաստի թոնիրներ ամեն անգամ չէին գտնում, կճուճի հողը ծառայեցնում էին դրա փոխարեն։

Ինչպես ցույց են տալիս պեղածո կավե մանրիկ ամանները, դրանք Հայաստանում ներկայացնում են ամենահնադույն ժամանակներից սկսած, մինչև միջնադարի վերջերի մանկական խաղալիքները։ Վերջիններս և ամեն տեսակի պարագաներ, որ հատուկ են խաղացող երեխաներին, ունեցել են բոլոր ժողովուրդները։

Մինչև ֆաբրիկային խաղալիքների մասսայականացումը դրանց տեղական տեսակ-

215. ԽՆՋՈՒՅՔԻ ԽԱՂ

Տարվա բոլոր եղանակներին 7—12 տարեկան մի խումբ աղաներ ու աղջիկներ հավաքվում էին և պայմանավորվում, թե ով ինչ է ցանկանում բերել իրենց տնից։ Սովորաբար բերում էին յուղ, ալյուր, ձու, թթվաթան, ափսե, պատատաբաղ և այլն և պատրաստում ճաշեր ու թխվածքներ։ Իրենց պատրաստածն ուտելուց հետո կազմակերպում էին պանապան խաղ ու պարեր։ Հաճախ այդպիսի հավաքույթները ավելի զվարճալի դարձնելու համար աղջիկները տղաներին, և տղաներն աղջիկների շորեր էին հագնում։ Ամբողջ օրը երգելուց, պարելուց և խաղալուց հետո նրանք երեկոյան ցրվում էին իրենց տները։

Հա. ԺՈՂ. ՀԱՅ. 31 (ՇԳ.)

ները կենցաղում պատրաստվում էին նաև մեր օրերում՝ XX դարի սկզբներին։

Առանին կենցաղի խաղերի դրսևորման մեջ բնորոշ է աշխատանքի բաժանումն ըստ սեռերի և ըստ տարիքների։ «Թնդիր խաղալ» խաղի համաձայն, որ ներկայացնում է միջին մեծության մի ընտանիք, նորահարսն ալյուր մաղողն ու խմոր հունցողն է, ավագ հարսը՝ խմորից բուլկիներ ու լավաշ պատրաստողը, սկեսուրը՝ հաց թխողը, փոքր աղջիկները՝ մանր աշխատանքներ կատարողները։ Շապին-Գարահիսարի «Տուն-տուն» խաղը ներկայացնում է փոքր ընտանիքը, որտեղ մայրը կովկիթ է, կարպետ, հաց և ճաշեր պատրաստող, հայրը՝ դրսի առևտրական գործերով զբաղվող, աղջիկները՝ լվացք անողներ և տուն ավլողներ, տղաները՝ տավարածներ ու վտակափայտ բերողներ։

Ջոր մրգերից, հատիկներից, լրիշտայից և երևակայված բազմապիսի սննդամթերքներից պատրաստված ճաշերով երեխաները անգան են բացում ինչպես ընտանիքի անդամներին, այնպես էլ իրենց կազմակերպված ընկերական հավաքույթների մասնակիցներին ու հյուրերին կերակրելու համար։ Այս «կերուխումների» մեջ երևում է մեծերի աշխատանքը՝ բավական մանրամասներով։

216. ԿԵՐ ԵՓՈՅԻԿ

Ընդօրինակելով առանին կենցաղից, մանկահասակ աղջիկները զբաղանները լցած չիրով, ապանձով, հատիկով, ընկույզի միջուկով կամ ուրիշ որևէ ուտելիքով կերակուրներ էին պատրաստում։ Որպես թոնիր՝ ընտրում էին կտրված հողերը, դատարկ տուփերը, ցածրիկ աթոռները և այլն, որոնց մեջ երևակայվում էր բարի ջրակը։ Իբրև պուտուկ էին ծառայում լուցկու տուփերը, կոշկաների թիթեղամանները և այլն։ Ամանների մեջ լցնելով կերակուրների պարագաները, ջուր էին ավելացնում և դնում թոնրի վրա՝ եփելու։ Որպեսզի զրանք եփվեին և ժամանակին պատրաստ լինեին աշխատավորներին կերակրելու համար, ամանը թոնրի ակից

փչում, կրակը բորբոքում էին: Պատրաստի կերակուրները տան տիկնոջ ձեռքով դրվում էին սեղանին և հրամցվում նրան շրջապատողներին:

Ակ, I, 39—40 (փ.)

217. ՏՈՒՆ ՏՈՒՆ ԿԱՄ ՀՈՐՔՈՒՐ-ՄՈՐՔՈՒՐ

***5—12** տարեկան տղաներն ու աղջիկները հավաքվում, իրենց միջից ընտրում էին հայրիկ, մայրիկ, հորաքույր, մորաքույր և երեխաներ:*

Խաղում էին զարնանը և ամռանը, սենյակում, պարտեզում կամ երդիկի վրա, որտեղ առանձին բնատնիքների համար սարքում էին առանձին տներ: Տներում մառան, գոմ և այլ հարմարություններ ստեղծելու նպատակով բնակարանները վարագույրներով բաժանում էին փոքր սենյակների: Տնային ամանեղենին փոխարինում էին հախճապակե, խեցեղեն և ապակյա շշերի կտորները, իսկ տնային անասունները նման խեցեղեն կտորներով էին սարքում: Հյուր գնալիս օգտագործվող ծալքավոր լապտեր, խուրջին, զամբյուղ և այլ իրեր պատրաստում էին թղթից: Պատրաստում էին նաև խնոցի՝ անամեջ սակրից կամ փայտից և ձի՝ փայտե գավազանից:

Սովորաբար այս խաղը տևում էր ամբողջ օրը, որի ընթացքում մի քանի րոպե հատկացնում էին դիշերվա քնին, իսկ մնացած ժամանակամիջոցին զբաղվում էին տնային գործերով, հյուր գնալով, հյուր ընդունելով և այլն:

Խաղն սկսելով, մայրը կթում էր կովը, կաթը տաքացնում, մի մասը խմացնում էր երեխաներին, մնացած մասը խնոցու մեջ հարելով սարքում կարագ: Երբեմն կաթը խափ էին անում՝ փոխարինարար իրար էին տալիս:

Այնուհետև ընտանիքի հայրը ձի էր նստում և ուղևորվում քաղաք՝ գնումներ կատարելու. մայրը հաց էր թխում ու ճաշ պատրաստում, աղջիկները տունն էին ավլում, լվացք անում, իսկ տղաները գնում էին անտառ՝ փայտ բերելու և կովերն արածեցնելու:

Երբ հայրը վերադառնում էր քաղաքից, անեցիները նրան ընդառաջ գնալով խուրջինով ու զամբյուղներով մթերքները, հացը, պանիրը, չոր մրգերը և այլն, ձիուց իջեցնում և տեղափոխում էին տուն, որից հետո ընտանիքով միասին ծալապատիկ նստում էին սեղանի (տափակ քարի) շուրջը, ճաշելու: Ճաշից հետո պառկում էին քնելու:

Երևակայված լուսաբացին երբ արթնանում էին, աղջիկները ջուր էին լցնում մեծերի ձեռքերին և նորից կրկնում նախորդ օրվա զբաղմունքները:

Այսպես ամբողջ օրը խաղալուց հետո, երեկոյան բոլորը հավաքվում էին մի տեղ. խաղացողներից ամենակրտսերը իր բութ և ցուցամատները իրար միացնելով օղակ կազմում և հարցնում էր.

— Սա ի՞նչ է:

Բոլորը միաբերան պատասխանում էին.

— Աղբլ-տուն:

— Ամեն որ ուր տուն,— ասում էր կրտսերը և խաղընկերները ցրվում էին:

Հա. Խ. Ա., 24—25 (ՇԳ.)

218. ՍԽՏՈՐ ԾԵՏԵՄ...

Տան մեջ մի քանի տղաներ ձեռքերը սանդ և սանդիտուռ ձևացնելով սկսում են իբր սխտոր ծեծել, մի քանի անգամ կրկնելով հետևյալ երգը.

Սխտոր ծեծեմ փաչային,
Էրանիկին հարսնիքին:

Հետո իբրև թե եփված խաշի համն են նայում և գտնելով, որ անալի է, դարձյալ աղ են ավելացնում ու շարունակում սխտոր ծեծել: Վերջապես խաշը պատրաստ է լինում. ուտում են, մի քիչ էլ տատին են պահում ու պառկում: Իրենցից մեկն այդ ժամանակ կատու է ձևանում, որը երևակայված կեսգիշերին գալիս, պահած խաշն ուտում է. մյուսները լսելով՝ արթնանում և կատվին հալածում են:

Ա. Ա՛Հ., IX, 171 (Պոլ.)

Ամուսնության և ընտանիքի հետ կապված նյութերը բավական սուղ են: Դրանք քսան էության, երկու բնույթի են: Առաջինն՝ նյութեր, որ ամուսնության ու հարսանեկան սովորությունների հետ կապված երևույթների մնացորդներ են, որ արտահայտվում են սպորտի, պանդխտան ձևերի միջոցով և պահպանված են ֆոլկլորի ու հարսանեկան հանդեսների մեջ: Երկրորդ՝ նյութեր, որ այդ նույն երևույթների արտացոլումն են մանկական անմեղ խաղերի մեջ:

Մանկական խաղանյութերում խաղի միտքն երբեմն արտահայտվում է ուղղակիորեն, երբեմն անուղղակի, քողարկված:

Թեև չափազանց աղքատիկ են, բայց այդ խաղանյութերն իրենց մեջ լիովին պահպանել են հայկական ամուսնության ցիկլի և ընտանեկան հարաբերությունների ամենաատրրական կողմերը: Այդպես, օրինակ՝ սիրո կամ ընտրության շրջան, նշանադրություն, հարսանիք և ընտանիք:

Հայտնի է, որ նշանադրությանը հաջորդում են մի շարք միջանկյալ ձևեր, հարսնատես, փեսատես և այլն: Այդ նյութերին մենք հանդիպում ենք խաղերի մեջ ևս, թեև դրանք հանդես են գալիս զվարճալի ցիկլային գործողությունների հետ խառնված վիճակում:

Սիրո կամ ընտրության շրջանի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած հիմնական նյութերը «Ձլորթիի»[1] կոչված խաղերն են, որոնք իրենց մոտիկ նշանակությամբ ընդհանուր առմամբ ընդգրկում են պատարերության ֆունկցիաները: Որքան էլ սիմվոլիկ են և գաղտնիքը սքողող, դժվար չէ հասկանալ, որ ձլորթիները պատանեկության, հատկապես աղջիկների սերը զրահապատելու մի եղանակ են: Տարակույս չկա, որ դա առհմատեղային ազատ հարաբերությունների մեջ նախապես գոյություն ունեցող մոտիկ ծեսերի զարգացման էր հայրիշխանության պայմաններում:

Նկատելի է, որ ձլորթու խաղերը կազմակերպվում են գլխավորապես նորափեսանների տներում: Մոտիկ գործողությունն սկսվում է նորափեսայի և նորահարսի ձեռքով. սրանք երբ միասին նստում են ձլորթուն, հարսը անպայման տակ է գրկում: Ծեսը պահանջում է, որ փեսան ճոճման միջոցին հրապարակով հարսին համբուրի: Ապա մեկ առ մեկ աղջիկները ձլորթի են բարձրանում և ճոճման ժամանակ ճիպոտահարվում երկու կողմերում կանգնած աղջիկների ձեռքով՝ մինչև որ կիսատավանվեն, թե ովքեր են իրենց սիրածընտրած տղաները: Աշտարակի վարիանտի համաձայն «Պաս երկուշաբթի օրն ազատ աղջիկը որ ձլորթի չընկնի, նրա բաղդը կը կապվի»:

Կոտայքի Զորագյուղի սովորության համաձայն, որը եղակի չէր,— բարեկենդանյան խրախճանքների ժամանակ նորապսակները իրար հետ կշռվում էին, որպեսզի հաջորդ

---

1 Այս խաղերն ունեն տարբեր անուններ, որ հետևյալներն են:

Գալրխան, ավելի ճիշտ՝ ձղոր-գալրխան, որովհետև «գալրխան» բառն առանձին չի գործածվում. Վ. (Զ. №—4184, էջ 88բ). Հալոնճ. Ա.ին. (ՃՀԱ, 178—179). Հակոբջր. Բլխ. Ապ. (ՀԲՀ և ՀԲԲ. Ճլորթի բառի տակ. ՄԲ. III, 16). Հաճլորթի. Բ. (ՄՀ, 1863, № 6, էջ 66). Կախորան. Պլս. (ԳԲ). Ճննջեղ. Գնձ. (Շ. Մշ., 1890, № 77). Ճննջաղ. Գնձ. (Ա.Հ, VI, 367). Ճննճող. Բրչ. (ԳԲ, III, № 18 և ԳԲ, II, № 86). Ճինջի. Դրր. (ԳԲ). Ճլորթի. Ար. եր. Աշտ. Կտ. Դպխ. (ՊՀա, 138—156, Ա.Հ, IX, 104, 105. Բ. ժող. ձ. ՄԲ, III, 213). Ճղոր. Վ. Հձ. Ռշտ. Բգ. Զն. (ԳԲ). Ճղոր. Վ. Ա.ղշ. Տրն. Սլմ. (ԳՇ. ՎՍ, I, 23—25. ԱՏՍ. ՊՎ, 123—124, Ա.ես, I, 142—145. ես. Վժես. Զ. 50—51. Ս. Ա.Հ, XIX, 102. Զ № 4184, էջ 88բ. ՀԲԲ). Ճղոբիկ. Վ. (ԳԲ. Ճինջի բառի տակ): Ճղորիկ. Վ. (ԳԲ. Ճինջի բառի տակ): Ճոլորիկ. Բլխ. Ապ. (ԳԲ, Ճինջի բառի տակ). Ճոխտ օրորոց, Բրչ. (ԳԲ, III 18). Ճոճբ. Բաս. (Ա.Հ, IX, 104). Ճոնճի. Զնգ. (Բ. ժող. ձ.). Ճոնճլիկ. Ախ. (Բ. ժող. ձ.). Ճոնորիկ, Բր (ԳԲ, Ճինջի բառի տակ). Ջամչլուղ. Դրլ. (Ա.Հ, IX, 104), Ջոշիկ. Վ. (ԳԲ, Ճինջի բառի տակ). Ջու. Մրգ. (ԳԲ, Ճինջի բառի տակ). Ճղղոր. Բլխ. Ապ. Բ. (Ա.Հ, VI, 63, ՀԲԲ, Ճլորթի բառի տակ, ՄԲ. IV, 141): Քըշկո. Դրլ. (Ա.Հ, IX, 104). Քյուվանջի. Դրլ. (Ա.Հ, IX, 104):

տարվա այդ նույն օրը կշռվելով՝ խմանային հարսի (ըստ էության պաղի) աճը...:

Ճլորթու խաղերին սովորաբար մասնակցում էին աղջիկները, տղաները և հարսները: Բայց իրենց սիրո գաղտնիքը դժվար խոստովանող աղջիկները խաղը կազմակերպում էին առանձին: Այս հանգամանքը, իհարկե, չէր խանգարում, որ նույն օրն ևեթ բնակավայրում տարածվեին ամենագաղտնապահ աղջիկների գաղտնիքները: Ճիպոտահարող բուրմ-աղջիկները նույնիսկ հարցապնդում էին, թե ի՞նչ կանեն սեր խոստովանողները, եթե նրանց ծնողները մերժեն:

Ճլորթիներն ունեն հատուկ երգեր, որոնք պարզապես սիրո խաղեր են: Դրանք արտասանվում էին յուրաքանչյուր խաղացող աղապի համար և կամ խաղացողն ինքն էր արտասանում: Որոշ երգեր բավական անաղարտ պահպանել են սիրո սիմվոլիկան կամ ամուսնանալու տենչը:

Բազմաթիվ օրինակներից առաջ բերենք մի քանիսը:

Վանա Ճլորի երգերից մեկում աղջիկն իր եղբոր համար հարսնացու ճարելու նպատակով դիմում է սրբավայրերին: Մի այլ վարիանտում նա դանգատվում է իրեն հարս չտանելու համար: Երրորդում ակնարկ կա աղջիկներին սիրո խնձոր տալու մասին: Շուլավերի վարիանտի համաձայն աղջիկը խընձոր է ակնկալում, որ քավորի միջոցով քրոջ համար փեսացու գտնի. նա իր եղբորից ունպլունկ է ակնկալում:

Երկու դեպքումն էլ հարցը հանգում է ամուսնության: Խնձորը սիրո սիմվոլն է, իսկ ունպլունկը, եթե դա դոդոշոցն է, ապա խնդիրը ամուսնության պարզ պահանջ է, որովհետև դա ամենից առաջ աղջկանը հարսնացնող հագուստաձև է:

Համբարձման վիճակախաղերը բարեկենդանյան Ճլորթիախաղերի շարունակությունն ու դրանց զարգացումն էին: Երկու դեպքումն էլ ձգտումը մեկն էր՝ սեր, ամուսնություն, պաղաբերություն: Համբարձումն այս գծով կարելի է համարել պաղաբերության և հնագույն համաժողովրդական տոն, որովհետև երեխաներից սկսած մինչև մեծերը որևէ ձևով մասնակցում էին խաղի որևէ պրոցեսին:

Խաղը հիմնականում կազմակերպողներն ու դրսևորողները աղջիկներն ու տղաներն էին, թեև այդ երկու սեռերի խմբերի միչև ամբողջ տոնակատարության ընթացքում «հակասություններ» գոյություն ունեին: Այս բանակներն, անկասկած, ներկայացնում էին կանաց ու տղամարդկանց նախնադարյան ամուսնական դասակարգերը՝ ամուսնության հանգելու նշանաբանով: Այս շփումներն ստեղծված էին ճանաչումների, սիրո հարցերը սեփական հայեցողությամբ որոշելու համար, որովհետև այդ էր պահանջում պատրիարխալ խստությունը հին Հայաստանում, ընդհուպ մինչև քսաներորդ դարի սկզբները:

Իր տեղը թողնելով անիմիստական և հեթանոսական պատկերացումների հետապատությունը, թվենք լոկ այն առնչությունները, որ ունի համբարձման տոնը երիտասարդության սիրո և պաղաբերության հետ:

Նախապես ասենք, որ համբարձման խաղը կազմակերպողները գլխավորապես աղջիկներն էին՝ հարսների և տղաների օգնությամբ: Խաղի ընթացքում բոլոր խրախճանքներն ու «ողբերգություններն» առաջանում էին դրանց փոխհարաբերություններից, որին հանդիսատես ու հրահրող էր դառնում ամբողջ հասարակությունը:

Որ դա սիրո և պաղաբերության համաժողովրդական տոնահանդես էր, հաստատվում են հենց փաստական նյութերի պարզ նկարագրությամբ:

Ամուրիների ամուսնական ճակատագիրը որոշողը Վասպուրականում կանացի չքնաղ տարազով ու զարդերով օժտված տիկնիկն էր՝ տակի փարչով: Շատ վայրերում դրան փոխարինում էր մայր ծաղկեփունջը: Սա փաստորեն նշանավորում էր սիրո և պաղաբերության աստվածուհիներին՝ Անահիտին և Աստղիկին: Բախտորոշման համար ծաղկամանն իր ջրով լույս հինդշաբթի գիշերը, բացօթյա «աստղունք» էր դրվում: Ողջ

բնությունն ու տիեզերքն այդ դիշերվա մի պահին սիրո դերագույն խորհուրդն էր ապրում։ Երիտասարդությունը անմահ չմնալու համար աղջ դիշերը բազմաթիվ ծեսեր էր կատարում, որոշելու համար իր ճակատագիրը, սերը։ Աստղերի սիրային խորհրդին «ականատես» ամուսնացածները ձգտում էին կենակից՝ պաղատելու համար։ Աղջիկներն ու կանայք շատ տեղերում դիշերն անխոս լողանում էին, որը հիշեցնում էր Աստղիկ դիցուհու լողանքը։ Տոնի ամբողջ ընթացքում վիճակը կամ վիճակահարսի դարդերը տղաների կողմից հափշտակման ենթակա էին, որը մեր համոզմամբ առևանդմամբ ամուսնության սիմվոլիզացիան էր։

Վիճակահանության պահին երգվող սիրո երգերի համաձայն որոշվում էին ամուրիների բնատիպ կազմելու հեռանկարները։ Օգտվելով առնախաղի այդ բնույթից, աղջիկները մայրերի միջոցով հայտնում էին իրենց վիճակված բարեհաջող ճակատագրի մասին, որով պնդում էին հասնել նպատակի։ Այսպիսի դեպքերում ծնողները թույլ էին տալիս, որ նրանք հարսնանային ցանկացած տղանների տանը։ Ջափաղանց ուշագրավ է, որ համբարձման տոնի ընթացքում կամ վիճակահանության պահին սեր խոստովանողները չէին դրժում, իսկ ծնողներն էլ այն հաշվի էին առնում։

Այս կապակցությամբ հարց է առաջանում, թե ո՞րքան ճիշտ էին և ճիշտ են այն բանասերները, որոնք մինչև մեր դարու սկզբները տեղի ունեցող աղջիկ «առևանդելու» մեջ տեսնում էին առևանդմամբ ամուսնություն։

Ըստ էության դա առևանդմամբ ամուսնության ոչ թե բովանդակությունն էր, այլ նրա սոսկական ձևի անցումը, որովհետև աղջկանն առևանդելիս մեծ մասամբ նախնական համաձայնություն էր տեղի ունենում։ Ուստի և պատահական չէր, որ «առևանդված» աղջիկներ քահանան կամ իրավասու մարմիններ հարցաքննության էին ենթարկում, թե որքանով տղան միակողմանի վարմունք էր երևան բերել։ Ազգագրական նկարագիրները, ինչպես նաև դյուցազրների բոլոր տվյալները հաստատում են, որ այդպիսի «առևանդումները» գաղտնի սիրով կապվելու հետևանքներ էին։

Այդ դեպքում ծագում է երկրորդ և կարևոր մի հարց, թե ո՞րքան իրավացի են նույն բանասերները, որոնք հայ երիտասարդության ընտանիք կազմելու պատմությունը պատկերում են որպես բացարձակ և ընդհանրական մի անսեր պատմություն։ Այնպես է ասացվում, թե որովհետև պատրիարխալ-ֆեոդալական խստություններ կային, որա հետևանքով սերային կապերը խափան չէր ցույց էին և ամուսնությունը կատարվում էր կուրորեն, տարերայնորեն կամ միայն բռնի։ Այս տարօրինակ տեսակետը ժխտվում է նախ այն ամբողջ վկայություններով, որ մենք ունենք հայկական ժողովրդական բանահյուսության մեջ և ապա նաև մեր խաղաշխարհի առաջ բերած նյութերի միջոցով։ Ժողովրդական ու դասական միջնադարյան և հետագա երգերը, էպոսը, հեքիաթները, առակներն ու ղրույցները դրեթե առանց բացառության փառաբանում են հայ աղջկա և ազգի վսեմ, երևակայական, լավատես և երբեմն ռոմանտիկ սիրո պատմությունը։ Ճիշտ է, այդ ռոմանտիզմի մեջ մենք տեսնում ենք նաև սիրուց տանջվածներին, բայց բնորոշը դա չէ։ Բնորոշը սիրով, ճիշտ է գաղտնի սիրով, կապված լինելն էր, որի իրականացման համար կային վերև ներկայացված ձևերը, որ ժողովուրդը մշակել էր իրեն կաշկանդող հանգամանքները շրջանցելու համար։ Ծեսերն այդ հարցում բավական դրական դեր են խաղացել, որովհետև խիստ տղամարդու ծեսերի առաջ մանկահասակ և դիջում է, ինչ սահմանված է դրանցով։

Ամուսնության նախապատմանն առնչվելու գործում ծեսերին կարևոր տեղ տալու մասին է վկայում «պլխարկախաղ» կոչված խաղը։ Պատահմանում նստած աղջիկն ու մայրի վրա կանգնած տղան իրենց պլխարկները վերև գցում և գարձյալ բռնում են։ Լինում է մի պահ, երբ աղջիկը չի կարողանում

իր պլխարկը բռնել և տղան այն վերցնում, անհետանում է: Սկսվում է աղջկա սիրո ողբերգությունը. նա սիրուց դիվահարվում է: Եվ երբ երկար ժամանակից հետո տղան վերադարձնում է նրա պլխարկը, հայրն ասում է. «Տգա՛, էն օր իշ էն ֆաս որ ասում֊ած քէ խամաթ ի արե, էն աղջիկ քե խամաթ ի էլէ, արե եմ ձեռ, եմ աղջիկ տամ քե»: Այս խորհրդին հետևում է սիրահարների ամուսնությունը:

Այնպես որ ծիսային ձևի տակ կատարվում է ռեալ, աշխարհիկ գործողություն, որով մեղմացվում է սոցիալական խստության ասպիճանը:

Թվում է, թե որոշ չափով ծիսայնության կա նաև մանկական այն խաղերի մեջ, որոնք հայտնի են «մատխուկ» և այլ անուններով և որոնց մասնակցող աղջիկները՝ վիճակն ընկնելու դեպքում պարտավոր են խաստովանել իրենց սիրային գաղտնիքները:

Նշանադրության շարքին պատկանող նյութերը ևս աղքատիկ են. խաղերի մեջ սփռված այդ ավյալները ևս, հանդես են գալիս ծիսային սովորությունների կարգով: Այլ կերպ չէր էլ կարելի պատկերացնել, որովհետև խաղը ամուսնության սովորությունը կարող է անդրապատկերել միայն ձևեր ներկայացնելով: Իսկ ձեսը, ներկա դեպքում, արվեստ է: Իրականում հենց այդպիսին են նաև ամուսնության հետ կապված բոլոր արարողությունները:

Այստեղ տեղ գտած նյութերը, որ կապված են «աղջիկ ուղելու» կամ «նշանվելու» հետ, երկու կարգի են՝ պատանեկան-երիտասարդական սպորտային խաղեր, որ մենք դանում ենք ֆոլկլորի ու հարսանեկան ծիսակատարությունների մեջ և մանկական, որ մեքենայական արտացոլման պատճառով խաղացողների համար անբմբռնելի են:

Այն սպորտային խաղերն ու վարժությունները, որոնք երևան են գալիս ամուսնության ցիկլում, հասարակական պահանջի արդյունք են: Որքան խորանանք պատմական անցյալի մեջ, անհատի ֆիզիկական հատկանիշներին նշանակալից տեղ հատկացնելն ակնհայտ է դառնում: Հայ ֆիզիկական կուլտուրայի պատմությունը ցույց է տալիս, որ Հայաստանում երեխաների, հատկապես աբրական սեռի երեխաների մարմնակրթությունն սկսվում էր մանկության շրջանից:

Հայ ժողովրդական էպոս «Սասնա ծռերում» պահպանված են չափազանց հին սովորություններ, կապված «աղջիկ ձեռք բերելու» հետ, որ կատարվում են սպորտի միջոցով: Այդ նյութերն են՝ աղջկա համար ուղնկան տղանների մենամարտերը, ուղնկան տղանների գոտեմարտերը աղջկա տիրոջ կարիճների հետ և ուղնկան տղանների գոտեմարտերը հենց ուզած աղջիկների հետ:

Հայտնի է, որ Խանդութը և սրա հայրը՝ պալատականների հետ միասին Դավիթ դյուցազնի առջև խնդիր են դնում՝ նպատակի հասնելու համար գոտեմարտությամբ ու սրամարտով հաղթանակ շահել այն բոլոր կարիճների հանդեպ, որոնք իրրև ուղնկաններ, Դավթի ախոյաններն են:

Լոռվա Համզի, Շապի Խորասանցու
գլուխ բերիր,
Ես քեզի կնիկ, դու ինձի էրիկ,

ասում է Խանդութը: Դավիթը կատարում է առաջադրանքը և ախոյանների գլուխները ներկայացնելով Խանդութին, ամուսնանում է: Նույնպիսի գոտեմարտի են բռնվում եղբայրներ Սանասարն ու Բաղդասարը՝ Քաոասուն Ճոդ-Ծամ աղջկա համար, Դավիթն ու Ջննով Հովանը՝ Խանդութի համար, Դավիթն ու իր որդի Մհերը՝ մի կնոջ համար և այլն:

Ինչպես էպոսում, այնպես էլ առհասարակ հայ ժողովրդական բանահյուսության մյուս բնագավառների մեջ հայտնի են աղջկա ձեռքը խնդրող կարիճների գոտեմարտերը առաջինի հայրական տունը պահվող կարիճների հետ: Այդպիսի մի գոտեմարտի մասին է պատմում էպոսը Բաղդասարի և

Պղնձե քաղաքի թագավորի կարիճների ու առյուծների հետ, որ մղվում է Հանուն Քառասուն Ճոզ Ծամի։ Քուլընկի դևի քրոջ հետ առաջինի հետ ըմբշամարտի է բռնվում Մհերը։ Հանուն աղջկա գոտեմարտում են՝ Բաթման Ղլիճը թագավորի ըմբիշի հետ, անանուն հերոսները՝ թագավորի առյուծի և դևերի հետ։

Իրենց էությամբ հետաքրքրական են ուզած աղջկա հետ գոտեմարտելու սովորությունները, որ նույնպես սերտ աղերս ունեն ֆիզիկական դաստիարակության հետ։ Բանն այն է, որ մենամարտելու այս ձևը հրահրվում կամ պահանջվում է աղջիկների կողմից։ Աղջիկը կմերժեր ֆիզիկապես տրկար տղային, եթե նա իրեն գետնով չտար։

Այս կարգի ըմբշամարտեր են մատնանշված Սանասարի ու Դեղձունի, Բաղդասարի և Բրչամի, Դավթի ու Խանդութի, Փոքր Մհերի և Գոհարի և երկու անանուն հերոսների միջև։

Հայ ազգագրական գրավոր պատմությանն անծանոթ է այն անմիջականությունը, որ մենք տեսնում ենք այստեղ՝ բանահյուսության մեջ՝ ամուսնության կապակցությամբ։ Դրա հիմնական գաղտնիքը բանահյուսության ահռելի հնության մեջ է։ Էպոսի հերոսների ու հերոսուհիների այդպիսի ազատ ու անմիջական վարմունքները տոհմային հարաբերությունների հետքեր են։ Առհանգամանքն ամուսնությունն ընկած է այս պահպանված սովորության հիմքում, այստեղ, սակայն, խառացած են ամուսնության հետ կապված այլ հարցեր ևս։ Ուզընկանների անվան տակ մենք տեսնում ենք միևնույն տեղի տարբեր տոհմերի ներկայացուցիչներին։ Առկա է էնդոգամիան այնքանով, որքանով դրանք միևնույն ցեղին են պատկանում և էքսոգամիան այնքանով, որքանով ամուսնությունը կատարվում է տոհմերից դուրս։ Կան բազմայրության հետքեր. եղբայրները կամ հայր ու որդի պայքարում են միևնույն կնոջ համար։ Բայց որովհետև առկա է նաև մենամուսնությունը, հետևապես գոյացել է խնդրը,— պայքարը առաջվում է հանուն մենամուսնության։

Մոտավորապես նույնպիսի խառնվածք ունեն ամուսնության հարցերը շոշափող մանկական խաղերը։ Նկատելի է, սակայն, որ այս խաղերում հետնագույն շրջաններն առավել տեղ են գրավում։ Գնամբ ամուսնությունը սրանց բնորոշ կողմն է։

«Մանկական հարսանիք» խաղի խաղերդում ալաշկերտցի մանուկները միմյանց են դիմում որպես ուզնկաններ ու աղջկա ազգեր։ Ուզնկաններն աղջկա մորը հրապուրում են երևակայական մի մազ ոսկով, արծաթով, մի գոմ ոչխարով, իսկ որ ընդգծելի է, սիրո սիմվոլ խնձորով։ Ըստ էության աղջկա մայրը թեև բոլոր պարագաներում մերժում է ուզնկանին, բայց սիրո խնձորի հիշատակությունը կանխում է նրա դիմադրությունը։

Ա. ՆԱԽԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԽԱՂԵՐ

219. [Թ Լ Ե Ա Ր Կ Ա Ե Ա Գ]

[Հեքիաթի հերոս Մանուկը] գնաց, կայնավ դեմ փինճերին. Մանուկ ուր գդակ առեց վեր, [պատուհանում նստած գեղեցկուհի] աղջիկն էլ ուր գդակ առեց ձեռ։ Մանուկ ուր քոլոզ թալեց վեր ու բռնեց. աղջիկն էլ ուր ֆաս թալեց վեր ու բռնեց։

Մեկ դիր էլ սկսեն, մեկել դիր Մանուկ բանցր թալեց ու բռնեց. աղջիկն էլ մեկ դիր բանցր էթալ ուր ֆաս, բռնեց։ Մեկել դիր աղջիկ ինչ բանցր էթալ ուր բռներ, ընկյալցած։

Մանուկ առեց ֆաս ու գնաց տուն։

ԷԱԺ, IV, 98 (Տփ.)

220. [ՃԳՆՈՐ ԽԱԴԱԼ]

[Դավիթ և Զննով Հովան]

...Էան պոյկն, ա՛իյին Սիվ սար։
Ճամբէը մնչ չամբ՛ ծառ ըմ էրևաց։
Դավիթ ձեռ խառ, ան ծառ կոսից.
Խալը՛, ուր ինամար ճլլար խառ։
Զննով Հովան էսաց.
Շա՛ն հևթըմ Թլա՛ր Դավիթ,
Չի քանի մ՛անուշ էրևվաց.
Թուխ փշու մ՛էլ իս տամ։
Դավիթ էսաց.— Արը՛, առ՛։
Զննով Հովան իրը, կախավալ ծառեն,
Դավիթ բզծառ բանիր ի, կանգնիր։
Զննով Հովան էսաց.— Դավի՛թ,
Ըզծառ[ա]թուխս, սըր իս էլամ, գամ։
Էսաց,— Խոռխալե՛ր, բզքի տը թ[ա]՛լը՛։
Զննով Հովան էսաց.— Ը՛ռխս, Ը՛ռխս.
Յանև իս քանց քի կորիճ չի՞մ։
Դավիթ ընչ ձեռ Ը՛ռչըրցուց, ծառ
բանցրթյավ,
Զննով Հովանը ուտաքիր գետնուց
կտրավ։
Դավիթ ձեռ խառ, կոսից բզծառ,
Զննով Հովան փշու մ՛ճլլար խառ,
Թըզին, գնցին[1]։

ՍՄ, ա., 563—564 (Մկս.)

221. ՃԼՈՐԹԻ

[Մեծ պասի առաջին օրը աշտարակցի]... Սահակենց տանը մեծ հանդես կար, բավականին ազատ աղջկերք ու ջահել հարսներ հրավիրված էին։ Սրանց միջին չէիր գտնիլ միայն այս տարվա պսակվածներին, այսպիսիների բոլորի տներումն էլ ճլորթի կար։ Սրանք այսօր իրանց տանից դուրս չեն գալ։

Հացատան երիկի փայտիրը կապել են մի պարան և ամենքը հերթով ճլորթի են ընկնում։ Ամուսնացածների ընկնելու ժամանակը ոչինչ հետաքրքիր բան չկա։ Մի քանի անգամ ճլորթու մեջ նստած՝ կը ճոճեն ու կիջնեն։ Տեսարանն ազատ աղջիկների ճոճելու ժամանակն է. սրանք էլ պիտի ավարտեն, որ վերջսումը նորափեսան շնորհավորելու տեղերից վերադառնա ու յուր նորահարսի հետ ճլորթի բնկնի։

...Երկու օրիորդ ավելի վատահներիցը՝ մի մի ճիպոտ ձեռքներին՝ կանգնել են ճլորթու այս և այն կողմը։ Մի ուրիշ աղջիկ էլ քամակիցը հառաջ է հրում պարանի վերա նստողին և սա օդումը ճոճում է։

— Նշանածիդ անումն ի՞նչ ա, խփում են ճիպոտով ճոճողին ու հարցնում։

— Ամա՞ն, ամա՞ն, ամա՞ն։

— Որ կտրվիս՝ պաի ասես, ճիպոտը վրեդ կը կոտրեմ։

Մինչև որ ճոճողը որևիցե ազատ աղջկի անունն չըտա, նրան կը խփեն։

[Սովորության պահանջով օրորոցախաղով նշանված աղջիկները պարտավոր էին ճոճվելիս ճիպոտահարմամբ պահին տալ նրա անունը՝ նույնիսկ իր կամքին հակառակ]։ ...Ախչիկե՛ք, Հեղնա՛ր, Հերիքնա՛զ, գրողի մտիցն ընկնիք դուք,— ծիծաղելով հառաջ եկավ Զանազանը.—վեր կացե՛ք եկեք ճլորթի ընկե՛ք, դուք եք մնացել, հարս ու փեսեն պտի ընկնին, հաց պտի քաշեն...։ Պաս երկուշաբթի օրն ազատ աղջիկը, որ ճլորթի չընկնի, նրա բաղդը կը կապվի...։

...— Գնա՛նք, ճար չկա,— ասաց Հերիքնազան ու Հեղնարին, համարյա քարշ տալով մոտ բերեց ու ինքը ճլորթու պարանի վերա նստեց։

— Նշանածիդ անումն ի՞նչ ա,— ճիպոտով խփեց Զանազանը։

— Մուկուչ։

— Քանի՝ տարեկան ա, ո՞ր թաղումն ա կենում։

— Քսան տարեկան, սըր Մայրամի թաղումը,— ասաց ու պրծավ Հերիքնազը։

[Նվ երբ նույն ձևով խոստովանեց նաև Հեղնարը՝ տալով Ամբոթի անունը.— լսվեց]։

---

1 Սրա մի այլ տարբերակը տե՛ս ՍՄ. ա., 506—507 (Մկս.) և ակնարկ՝ ճլորթի ծառը տանելու մասին, ՍՄ ա., 569 (Մկս.)։ Մոտավոր նմանությամբ նյութեր տե՛ս նաև ՍՄ. ա., 41—42 (Մկս.), 338 (Մկս.), 395—396 (Մկս.), ՍՄ. բ., II, 109 (Մճ.)։

—...Ապրի՛ս, ապրի՛ս, զորանա՛ս,—քչքչալով ծիծաղեցան ամեն կողմից ու Սմբաթի ականջը նորափեսան քաշեց։

[Այնուհետև հերթը հասնում է տան նորապսակ Սահակին ու նորահարսին]։

—...Դե էլ մի՛ ամանչիլ, մոտ արի՛,—ձայն էր տալիս նորափեսա Սահակը ճլորթու մեջ փառավոր բազմած։

Ջանազանը քարշ էր տալիս կարմիր քողը ծածկած մեկ հարսի դեպի ճլորթին. վերջինս թեպետ հետ հետ էր ընկնում, բայց երևում է, որ մի ոտքը թույլ էր. մոտ էր պառկիս։ Վերջապես Ջանազանը նրան զոռով ըրկեց, Սահակի կողքին պարանի վերա նըստացրեց, մի սիրունիկ փոքրիկ երկու տարեկան տղա էլ մեր ամոթխած դոդին նստացրեց. աղջիկները քամակներիցը հրեցին ու ճլորթին սկսավ ճոճել։

...Ճլորթու մեջը նորափեսան և նորահարսն էին, իսկ այս մանուկը տված էր նըրանց գիրկը, որ անդրանիկը տղա ծնի։

— Դե պրծի՛, դե շո՛ւտ, ճիպոտը Ջանազան-ի ձեռքեն առած՝ մոտ նկավ Սմբաթը նորափեսին, պրծի՛, թե չէ մեջքդ դաղդղորիկ ածեցի։

Նորահարսն ուզում էր վայր իջնել փախչել, բայց երեսը պատռած Սահակը ձեռքը ձգեց յուր խեղճ հարսի վզովն ու երեսը համբուրեց։

...Խաչեղբայրն ու փեսեղբայրն էլ գոռացին.

— Անուշ.

— Կյանքներդ խոշ,— պատասխաննեց նորափեսեն և ճլորթուցն իջավ։ [Ճլորթու ավարտումից հետո] սեղանը քաշեցին ու ամենքն էլ կարգով շարվեցան։ Ուրիշ օրեր մեր աղջկեքն ու հարսները տղամարդկանց երեսն էլ տեսնելով կամաչեն, թող թե միասին ճաշեն, իսկ այսօր անպատճառ դրանց սեղանակից պիտի լինեին նորափեսան յուր խաչեղբոր և փեսեղբոր հետ։

[Ճաշկերույթից հետո պետք է պարեին]։

—...Հեղնարը հետս չալլի պտի խաղա՝ թե չէ,—մոտեցավ Սմբաթը Հերիքնազին։...

— Էրնե՛կ տամ դու էդ կասկածները չունենաս, Սմբաթ..., խի՞ չի խաղա, [ասաց Հերիքնազը օրորոցախազով նշանված Սմբաթին]։

— Ա՛խ։ Հերիքնա՛զ, դու իմացա՞ր, որ ճլորթու մեջն ինձ մորթեց..., լավ՝ ասում ես, թե ինձ սիրում ա։

— Թե որ սիրեր ըչ, ընենց համարձակ բարձր, բարձր, տեղն ու տեղը անումդ կասե՞ր։

ՊՀԽ, I, 374—381 (Աշտ.)

222. ՃՈՐ

...Բայց օրիորդաց խումբ [Վանա] բակենդանի սովորությանց մեջ մեծ բաժին ունին։ Նոցա պարագլուխ Շարանի Պողոսի Մարգարիտ և Սեդրի աղջիկ, բոլոր մեծ ու փոքր աղջիկներ Ամպարենց ընդարձակ տուն և կամ Ազատենց առանձին տուն ժողվելով հինգշաբթի օրեն և այլ քիչ մի անդիեն, այսինքն մեր տղայոց պես սուրբ Սարգսի շաբաթ օրեն, ճոր կախելով օրվան մեծ մասն ճոր թռնեին։ Սույն ճոր անպատճառ ամեն տան մեջ ուր աղջիկ և տղա դտնվեր, պիտի մեկ հատ կախվեր, իսկ այն ժողովատեղն բոլորի համար ավելի կանոնավոր լիներ։ Բանաստեղ[ծ]ն[ն]ոց օրիորդք միայն ճորիով չէին բավականանար, այլ մի թմպուկ գռնալով յուրյանք երգեին, յուրյանք զարնեին և յուրյանք խաղային։ Սոքա բնավ չէին թողուր, որ թագի երիտասարդք յուրյանց խաղատուն մտնային։ Բայց մեր հասակի տղայք և փոքր պատանիք ընդունեին յուրյանց մեջ, դմեզ ճորի մեջ դնելով մեծ օրիորդներ մեկ մեկ կողմ կայնած և մեկ ալ մյուս կողմ կայնած ճորն այնպես դեպ իրար հրեին, որ մենք ճորի միջեն պապաճեկ զարնեինք առիքին, այսինքն այնչափ մոտենայինք առիքին, որ մեր ձեռք հասներ առիք։

---

2 Վանում խաղս հայտնի էր նաև «ճոդր թռնել» (Ա. Վժա. ձ., 59—51). «ճոճք», «Տատան» և «Հյուրթի» (Ակ, I, 142) անուններով։

Մեծ օրիորդաց մեծ ուրախության առիթ էր, երբ երկու փոքր աղջիկ ձղորի մի կողմ և երկու նույն հասակ մանչ տղայք մյուս կողմ դնելով ճոճանակի պես ձղոր տանեին բերեին։ Բայց իրենք առանձին առանձին ձղորի մեջ նստելով, իրենց ուժով և ճարպկությամբ այնչափ ուժ տային ձղորի ճոճման, մինչդի շատ անգամ բարձրանալով տանիս տեսնային և այս կողմեն առիթն համբուրեին։

Սույն ձղորի մեջ զանազան հայերեն բանաստեղծական երգեր երգեին, որք միտքս մնացած չեն և ես այժմ միջոց չունիմ այն երգեր ժողովել և հրատարակել. այսչափ միտքս կուգա, որ երգաց մեջ հասած երիտասարդք հեգնելով մեծապես խնդային և զվարճանային նոցա շարժման և ընթացքի վերա։

[Հետևյալ] փոքրիկ կտոր միտքս եկավ, տեսս նշանակեմ իբրև հատակտուր։ Մեծ օրիորդք ձղորի մեջ մտած միջոցին փոքր օրիորդք նոցա համար այս երգ երգեին.


Թո՛ւ էնա՜ տարան,
Թո՛ւ էնա՜ տարան.
Ջըմեն տարան,
Ջիս չտարան։

Ջ. № 4184, էջ 88բ—89ա

223. ՃԼՈՐԹԻ

Կոտայքի որոշ գյուղերում բարեկենդանի առաջին շաբաթվա ուրբաթ օրը աղգակից աղջիկներն ու տղանները հացատան երդիկի վրա դրված հատա ձողից կախում էին սայլի ճոպանը այնպես, որ սա երկու օղակ ներկայացներ։ Օղակների վրա մի մի մարդ էր նըստում, որոնք երևով իրար հանդեպ լինելով, ոտքերը փոխադարձաբար իրար կոզքի էին դնում և կամուրջ ձևացնում։ Հանդիսականներից մեկը նրանց ճոճում և հեռանում էր, որից հետո նստողները շարունակում էին ճոճվել ու երգել, երբեմն իրար ձեղունից ձեղուն հասցնելով (նկ. 95)։

Բ. ԺԽ. ձ.



Նկ. 95. Կոտայքի ձղորի խաղալու ձև բարեկենդանին (ընդօրինակ՝ № 223)
Նկ. Հովհ. Բացակյանի

224. [ՃՈՐ]

Վանում երեսբացի նետից կամ փակ սենյակի կենտրոնական հատա գերանից շվան կախելով՝ ծայրերն իրար կապում և մի ղըմփիկ վրան դնելով նստում էին ու ինքնամղումով ճոճվում ինչպես սովորական, այնպես և բարեկենդանի օրերին։ Այսպիսի պարագաներում խաղին միայն աղջիկներն էին մասնակցում։

Բարեկենդանին խաղը մասսայական բնույթ ընդունելու հետևանքով ձղորին սեղանատախտակ էին դնում և երկուսով թըռչում։

(Ախ, I, 142—143)

Ձղորախաղերը ժողովուրդը համարում էր արագ մարսողության միջոց, որին զուգակցում էին նաև ծամոն ծամելը, նույն նպատակով։

(Ախ, I, 145)

225. ՃԻՆՋԱՂ

Գանձակում բարեկենդանին աղջիկներն ու հարսները իրենց բակերում կամ մերձակա ծառերի տակ առանձին, ապա և կամաց կամաց հավաքվող երիտասարդների հետ խաղալիս, երբ հասնում էին խաղի «տաք» պահին, մեկը մի ձող էր առնում և այնքան

հրում քինջազն ու ձողով խփում մեջը նստողին, մինչև որ նա տալիս էր ապագա նշանածի անունը։ Եվ որովհետև ընկերներին հայտնի էր լինում խաղացողի ում սիրելը, նա հարկադրված էր ճիշտը խոստովանել։

Եվ. Ա.Հ., VI, 367

226. ՁՈՆՁԼԻԿ

Խաղում էին Ախալքալաքի լեռնային գյուղերում, բարեկենդանի վերջին շաբաթվա օրերին, օրվա բոլոր ազատ ժամերին։ Մասնակցում էին պատանիներն ու երիտասարդները, ամուսնացած տղամարդիկ ու կանայք։ Սովորաբար թաղի երիտասարդությունը ճոնճլիկի խաղատեղ էր ընտրում բարձր ու դիմացկուն դերաններ ունեցող դոմ։ Որանի սայլի հոսանը կախում էին հնծանից և նրա երկու օղակների վրա դնում 2 մետրանոց տախտակ։ Դեռևս մի մետր բարձր այդ տախտակի ծայրին հաճախ աղջիկ ու տղա էր կանգնում։ Երբեմն կանգնում էին զաղանի սիրով իրար հետ կապված երիտասարդներ, փորձելով միմյանց ֆիզիկական կարողությունները։ Տախտակին նստում էին 3—4 հոգի և սկսում պահում միմյանց։ Փոխադարձ հրումով երբ ճոնճլիկը թափ էր առնում, հակառակորդների մեջքերը երբեմն հասնում էին գոմի ձեղունին։ Այդպիսի ոգևորությանը պահերին հրողներն ու դիտողները «Հա՛յ, հա՛յ, հա՛, հա՛...» բացականչություններ էին անում, հորդորում և ծիծաղում։ Պատահում էր, որ հրողներից մի կողմի և նստողներից ոմանց մոտ զննատուտա ու սրատախտություն էր առաջանում... այդ պատճառով ճիշտ էին արձակում, լալիս էին և պահանջում անհապաղ կանգնեցնել ճոնճլիկը։ Դրանով ճոճումը դադարում էր ու նորից սկսվում մի ուրիշ խմբի կողմից (նկ. 96)։

Բ. Ժո. Ձ.

227. [ՁԼՈՐԹԻ]

Ղազախի Ուղունթալա գյուղում ճլորթին խաղում էին վարդավառին։ Հարսներն ու աղջիկները այն կամակերպում էին յայլաներում, հատուկ այդ նպատակով ղբոսանքով այնտեղ բարձրանալով։

Քաջ. Ա.Հ. VII—VIII, 145

228. [ՁԼՈՐԹԻ]

Մեծ պասի առաջին օրվա առավոտյան լուսում տան առաստաղի մի գերանից թոկ կախում և ճլորթի էին պատրաստում։ Փոքրերը մի քիչ ճոճվելուց հետո տան նաննին բերում, նստեցնում էին ճլորթուն, որ «եղ աներ»։ Նանի նստելուց հետո հարսները նրա գագը մի քար էին դնում և, փոխանակ ճոճելու, պատեցնում էին, թոկը ոլորում, որ հետո բաց թողնելիս հակառակ կողմի վրա էր պատյա գալիս։ Այդ միջոցին պառավը քարը դոգից վայր էր գցում ասելով. «Լաքան եղ ինձ»։ Հարսներից մեկը քարն իսկույն վերցնում և կրկին դնում էր նանեի գիրկը, որ պառավը վերստին պտույտ գործելուց հետո քարը նորից գցելով ասեր. «Լաքան եղ էս հարսիս», և այսպես շարունակ, բոլոր հարսների համար, որպեսզի շատ յուղ ունենային։

Եվ. Ա.Հ., V. 258—259

229. ՃԳՈՐԳԱԼԲԱՆ


...Դե՛, ելեք երթանք ճղոր խաղանք։

Մեկ էլ տեսար բոլոր մեծ մարդիկ տանքեն լեցվեին մեր բակ։ ...Բոլոր տղայք հորս թևեն բռնելով, ճղորի մեջ դնելով քանի անդամ ճոճանակի պես տանեին, բերեին[ն], հետո շատ շատ փռացնելով, ման տալով գալըշեան տային։

Դե՛, պնդկի փարա։ 3—4—5 դուռուշ փարա առնելով կազատեինք։ Կարդ Շարանենց Պողոսին է։

— Հա՛յ, տղայք, ձեզ տեսնամ։ Շարանի Պետրոս, խաչոն և ես այս ևս գրինք գալըրեան, տվինք 3 դուռուշ թողուցինք և հետըզհետե ամենք ևս այսպես ճղոր դնելով, դրամ առնելով թող տային։

Սույն այս տեսարան հույժ սքանչելի ուրախության առիթ էր մինչև երեսասարդ և



Նկ. 96. Ճոճճլիկ խաղը Ախալքալաքում (բնագիրը՝ № 226)
Նկ. Ռ. Մնացականյանի

մեծ մարդկանց, և կանանց, և օրիորդաց, զի [ը]նդ մեկ ծայրեն մյուս ծայր ձայն հասաներ, թե տղաք մեծ մարդիկ ճղորի մեջ գալըրխան դնեն: Կանայք և օրիորդք մեր տանյայ կտուրներու վերա խիտ առ խիտ լեցված կղիտեին, թե փոքր տղայք ինչպես մեծ մարդիկ գալրխան կուտան: Մեն մի մարդ երբ ճղոր դնեինք և գալրխան տայինք, ահագին բրթիջ, բարձրաձայն ուրախություն սկսեր: Կանայք և օրիորդք այնչափ սաստիկ ամոթիածության մեջ չէին կրնար յուրյանց բարձրաձայն ծիծաղ զսպել, ուստի այս արարողության միայն մեծաց և փոքունց, արանց և կանանց առ հասարակ ուրախություն պատճառեր, զի ոմանք ճղորի մեջ զիրենք չէին կր[ը]նար բռնել, մեք բռնեինք: Ոմանք ճղորի մեջ չէին կարել եչներ նստեր, մեք վերցուներինք դնեինք: Ոմանք նստելով ծանրությենեն շուտ ու մուտ կառնեին, հասանեինք բռնեինք: Ոմանք հարբած լինելով ոչ ճղոր կրնայինք դնել, ոչ գալրխան տալ: Ոմանք սուտ հարբած ձևանալով երկար պառկեին: 20—30 տղա թափելով տեղեն հազիվ շարժինք: Ոմանք միջոց գըտնալով փախչեին: Տևնաս մեկ մեղմե պոռալով կանչեր:

— Ծո՛, տնամեր, փախա՜վ, փախա՜վ: Բոլոր տղայք մեկեն փախչողի հաևեն վազեինք, բռնեինք, ճղորի մեջ դնելով սաստիկ գալրխան տալով, երկու բաժին տուգանք պահանջեինք: Վերջապես մեր բոլոր իշխանությամբ և աշխատությամբ 20—30—40 դուռուշ պլնդուկի դրամ առնելով աշխարհի բոլոր մեծություն և հարստություն մեզ կարծելով օձիքներին թող կուտայինք.—Դե՛, ելեք, գընացեք, մեր իշխանություն ճանչցեք:

Ջ. № 4184, էջ 90բ. (Վ.)

230 [Ճ Ե Ն Ջ Ե Ղ]

Մյուս օրը վարդավառն էր: Ժամը 10-ից սկսած գուռնան «տանձուտում» ածում էր: Մի մեծ ծառի ճյուղերից կախել էին երկու հաստ չվաններ, դրանք էին «ճենջեղները»: Այդ ճենջեղներն սովորաբար կախ են տալիս $^3/_4$—1 արշին գետնից բարձր: Մարդիկ բարձրանում են այդ ծայրերը միմյանց հետ կապած չվանի, «ճենջեղի» վրա, կանգնում, չվանից բռնում, ոտներն և ամբողջ մարմնի կուճ-ձիգ անելով տարուբերվում: Գնալով այդ տարուբերումն արագանում, սաստկանում է, այնպես որ ճենջեղի վրա տարուբերվողը, կամ, ինչպես ժողովուրդն է ասում, «ճենջեղ ածողը» ծառի (որից կախած է ճենջեղը) բարձր ճյուղերին է դիպչում:

Երկու ճենջեղներից մեկը [տղա]մարդկանց համար է, մյուսը՝ կանանց:

Ջուռնան սկսում է: Գյուղացիք ծիծաղելով, բրթջալով ճենջեղ են ածում, քեֆ անում:

Շ. Մշ. 1890, № 77 (Գնձ.)

231. Ք Ա Ր Ե Կ Շ Ե Ն Ք

Տեղի էր ունենում Կոտայքի Զորապյուղում, բաբեկենդանի առաջին շաբաթվա ուրբաթ օրը, նորապսակներ ունեցող ընտանեքներում: Ջվարճանքին մասնակցում էին ազգակից և հարևան ընտանիքների անդամները:


Հացատան երդիկի վրա դրված դիմացկուն ձողից մի շղթա էին կախում: Վերջինիս ծայրին ամրացնում էին հորիքի լուծը, որը գետնից 2—2,5 մ բարձր էր լինում: Լծի սամիների ծակերից թոկ էին անցկացնում և հանգույց անելով օղակ սարքում, որով գետնից 60—70 սմ բարձրության վրա կշեռքի նժարներ էին ձևացնում: Հավաքվածները իրար հետ հերթով կշռվում էին, միմյանց նկատմամբ ծանր ու թեթև իմանում: Հաջորդ բաբեկենդանին նույն կշռվածները զարձյալ կշռվում էին, և պարզում տարբերությունը:

Առաջինը կշռվում էին նորապսակներն իրար հետ:

Թեթև կշռողները երեքմն խորամանկում, գրպաններում կամ շորերի մեջ քար էին պահում, իսկ բացահայտ թեթև թաշ ունեցողները գրկերը համապատասխան կշիռ ունեցող մի կամ երկու երեխա էին առնում:

«Քաւե կշեռքի» օրը տանտերը թեև ուտելիքեղու համար պատրաստություն էր տեսնում, բայց այցելուները ծեսի պահանջով հետները բիլամածքներ, խմիչքներ և այլ պատրաստաներ էին բերում, կշռումն ավարտելուց հետո կերակուրները վայելում և այլ խաղերի էին անցնում (նկ. 97)։

Բ. Ժո. Ա.



Նկ. 97. «Քաւե կշեռքը» կատարքի Ջորագյուղում (բնագիրը՝ № 231)

Նկ. Հովհ. Քացակյանի

232. ԿՇՌՆԴՈՒԿ

Բարեկենդանյան խաղերից վերջինը Տարոնում «կշռեցուկ»-ն էր։ Առաստաղի գերաններից կապված մի երկթանանի ճոճանակի մեջ նստելով՝ կշռվում էին ընկերներն ու ընկերուհիները՝ մյուս տարվա բարեկենդանին իմանալու համար, թե «արդյոք իրենց կյանքից անցնող մի տարին, որ պատված էր ամբողջ հոգսերով, ո՞րքան հալել ու մաշել, ծլուրել ու ցամաքացրել է իրենց անձը»։

Իզ. Արձ., 1895, № 199

* * *

Կային ձոր-ձլորիու ուշագրավ երգեր, որոնցից առաջ կբերենք մի քանի նմուշ։

1

Քյուֆ, քյուֆ, դարա, դարա,
Ես էլա բերդի բարա.
Կանչիցի տեր Զաքարա՛,
Խունկը մոմ հազրը արա՛,
Առավոտն պաշտոնմ՛ արա՛,
Իրիկուն խթում արա՛.
Խարկի խաբար տեղն արա։

Թյու էնա պուճախ,
Թյու էնա պուճախ,
Մեր քյավորանց մեղրի պուճախ.
Շեն կենա իմ խոր օճախ։

Քյուֆ, քյուֆ, դարա, դարա,
Ես էլա բերդի բարա.
Իմ ախպեր վեր էն բերդին,
Ոսկի թուր վեր էն թիվին,
Կերթա խաղա տեմ լուսընկին,
Լուսնակ ափեց մեջ իրիսին։

Թյու էնա պուճախ,
Թյու էնա պուճախ,
Մեր քյավորանց մեղրի պուճախ,
Շեն կենա իմ խոր օճախ։

Քյուֆ, քյուֆ, կերթամ կուկյամ,
Իմ ախպոր կնիկ ճարեմ.
Հուստ ճարեմ, հուստ չճարեմ,
Վարագա սարեն ճարեմ։

Դուռը տփեմ մարմար քյարով,
Մանեմ ներս զարդարանքյով.
Հերը խաբեմ թամ՛ արաղով,
Մերը խաբեմ մամ՛ խինով,
Ախպեր խաբեմ պոլատ ձիով,
Ախչիկ պիրեմ խազար պարով։

Թյու էնա պուճախ,
Թյու էնա պուճախ,
Մեր քյավորանց մեղրի պուճախ,
Շեն կենա իմ խոր օճախ։



Նկ. 98. Ճոճանակ-ձիուն Սյունիքում
Նկ. Տ. Թոքմաջյանի

Թյու էնա պարան,
Թյու էնա պարան,
Ամեն տարան, պիս չտարան։

Քյուֆ քյուֆ մեր տղեն,
Կախվեր ի ծառի ճղեն.
Ծառ Ջինարի, խերիկն էր,
Ջինար բաժիկ, մերիկն էր.
Ճեռմ որհան, քեչոիքյն էր։

ԳՇ. ՎՍ, I. 23—25 (Վ.)

2

Ես պապուճիկ, դյու պապուճիկ,
Քյավորկինն ինկյավ այուճիկ.
Քյավորն եկավ այուս կխաներ,
Ոտնեն ի վեր սև կխայներ։

Էշ քյաշեցին Թորման բերան,
Ոտկերն արին սուն ու գերան,
Գլուխ գրին փաչա կերան,
Ուսկոան արին կոզվի մերան,
Կաշին արին այուֆ նապարա,
Կրտսեն զարնի, խեպան խաղա։
Էրկու խոզի՝ մեկ ճիավոր,
Մեկ սանսախեր, մեկն քյավոր,
Խոխվներեն կախվի ճուխամ՝ պուխ,
Մեյն ի սիպատակ, մեկըն՝ Թուխ։

Ես պապուճիկ, դյու պապուճիկ,
Քյավորկինն ինկյավ այուճիկ.
Քյավորն էկավ այուս կխաներ,
Ոտնեն ի վեր սև կխայներ։

ՍՏՍ. Պվ, 123—124 (Վ.)

3

Ջիր, չիր, չիչանջա,
Իմ ապրեր Գյանջա,
Գյանջու Գալի դաման ա,
Թավլա քաշեմ ձիանն ա,
Գալի կաալը կեցին (Հադած),
Վկալ քցի ծալքին,
Ծալքը զումշով լիքը,
Տյուրը Թուխ կյումշով լիքը,
Փուդաո փուդաո (կարճ) մարդիկը,
Ոսկի քյաքյուլ տղերքը,
Փունջ մանիշակ աղջկերքը։

Քաջ. Ա.Հ., IX, 105 (Գդհ.)

4

Ծլորիի բաղի,
Շիմշիրի Թաղի,
Շիմշիրը փուլ կյա,
Տակովը ճյուր կյա։

Քաջ. Ա.Հ., IX, 105 (Գդհ.)

5

Բաիբըն արա, Հա՛ Բաիբըն արա,
Տանձ ու խնձոր գողըս արա.
Տանձը տանեմ ախպորըս տամ,
Խնձորը տանեմ, քվորըս տամ։
Ախպերըս ինձ մի ունդլունկ տա,
Քիրըս ինձ մի ուլունք տա,
Ունդլունկը պիշիս կարեմ,
Ուլունքը ճիտես շարեմ։
Կովը կթեմ, մեր անեմ,
Մածնիցը բոլ սեր անեմ,
Փեհեն կի անուշ անի,
Ինձ յաղլուխ փեշրեշ անի։

Գթ., III, № 18 (Շմ.)

6

Խրնամունց ապիլ ապա,
Խնձոր ու տանձ կիքըս արա,
Կարմիր խնձորն ախպորս,
Հուլունքը ճրտիս շարեմ,
Կովը կթեմ, մեր անեմ,
Մածնիցը բոլ սեր անեմ,
Մըխրատանձը քվորըս,
Ախպերս մի ունդլունկ տա,
Քիրըս մի շարք ուլունք տա,
Ունդլունկը պիշիս կարեմ,
Փեհեն կի անուշ անի,
Ինձ յաղլուխ փեշրեշ անի։

Գթ., II, № 86

7

Բորչալուում ձեղունից կամ ծառի ճյուղից կախված Թոկերի վրա Հատուկտած տախտակի ծայրերին կանգնում էին մեծ աղջիկները և մեջտեղում նստեցնում մի փոքր աղջկա, որը ձեռներով պինդ բռնում էր Թոկերից։ Ճոճելիս աղջիկները երգում էին խնոցու վրա Հորինված երգը։

Հա՛րի, Հա՛րի, ա՛ խընո՛ցի՛,
Մեչըտ ա պըրի, ա խընոցի,
Եղըն ու շորը ինձ-ըլի,
Շիջուկը՝ ո՛ւմ ուզես, ըլի։
Եղը տանեմ, տաշտ դընեմ,
Տիկը Հանեմ, Հանդը դարկեմ.
Մերը Հալի, ըմանի,
Սուփ Սըրբըսին փալ Հանի։
Փաղընձա խաշիլ անի,
ԼըսպաՓին սիլա անի,
Առնեմ, Թըղամեջ քընամ,
Ով ախկատ ա, նըման տամ։
Նա ինձ ասի՝ շեն կենաս,
Օր ու ըմբրով կըշտանաս.
Շեն կենաս, Հա՛, շեն կենաս,
Հա՛, շեն կենաս, շեն կենա՛ս։

Գթ., III, № 18

8

Ջու, չու, չուանդի,
Իմ ապրերը Գյանջա ա,
Գյանջի խանի դաման ա.
Սամուր քյոլքը կաման ա.
Փեսեն փեսեն մարդիկը,
Երկաթեն կնանիքը,

Փունջ մանիշակ աղջկերքը,
Վարդ ու խնձոր տղերքը։
Քաջ. Ա.Հ., IX, 104 (ներ.)

9

Քյու, քյու, քյուվանջա,
Իմ աղքերը Գյանջա,
Գյանջու խանի դռանը,
Կանանչ կապեն կռանը։
Քաջ. Ա.Հ., IX, 104 (Հնթջ.)

10

Ճղորի մաղե լարան,
Բիթուն տարան, ձի չտարան.
Հանտ հանանոր,
Ես մնռնեմ խաթուն տիրամոր։
Ս.Հ. էԱԺ, VI, 51

233. [ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ]

Ալաշկերտում մանուկները 5—8 տարեկան աղջկանը հարս ձևացնելով երեսը քողով ծածկում էին։ Նրանցից մեկը բաց էր անում հարսի երեսը և մյուսը փակում ու երգում էր.

1. [Աղջիկ ուզել]

— Քեզի կիտամ մաղ մի ոսկի,
Ա՛ռ պարիշի, խնամի ճան։
— Մաղը ծակի,
Ոսկին թափի,
Ջը՛մ պարիշի, խնամի ճան։
— Քեզի կիտամ մաղ մի արծաթ,
Ա՛ռ պարիշի խնամի ճան։
— Մաղը կոտրի,
Արծաթ թափի,
Ջը՛մ պարիշի, խնամի ճան։
— Քեզի կիտամ դամ մի ոչխար,
Ա՛ռ պարիշի, խնամի ճան։
— Գոմը բըլի,
Ոչխար ջարդի,
Ջը՛մ պարիշի, խնամի ճան։
— Քեզի կիտամ մաղ մի խնձոր,
Ա՛ռ պարիշի, խնամի ճան։
— Մաղը ջարդի,
Խնձոր թափի,
Ջը՛մ պարիշի, խնամի ճան։
Բարով ու խոշ ես ակի, խնամի ճան,
Դատարկ ու բոշ ես ակի, խնամի ճան,
Երկու պոլոճ ես բերի, խնամի ճան,
Էն լև ճամբաներ ես կերի, խնամի ճան։

2 [Խնամիները...]

Ալուճ-մալալուճ, խնամի ճան,
Ալուճ եմ քաղե, խնամի ճան,
Գոտիկս եմ շարե, խնամի ճան,
Քաղքից քաղաք ման ակա, խնամի ճան,
Տոպրակս լցի, խնամի ճան,
Բերանն էլ կապի, խնամի ճան։

3 [Հարսնաու]

Ածին-մածածին, զնկլիկ,
Եկած կը տանին, զնկլիկ,
Տարան, Բըզ տանին, զնկլիկ,
Ջաուկին կը բերին, զնկլիկ,
Կարմիր սոլերով զնկլիկ,
Դեղին բըճերով, զնկլիկ։
Նմ. Ա.Հ., VII—VIII, 437—438

234. [ՏԻԿՆԻԿ ԹԱՂԱՅՆԵԼՈՒ ՆՐԳ]

Փոքրիկ աղջիկները, «տիկինն» խաղալիս դիմում էին հետևյալ երկխոսությանը։

— Քա՛, խնամի ջան, էկել եմ, էկել։
— Ա, խնամի ջան, ու՞ր ես էկել։
— Քա՛, խնամի ջան, աղջիկդ ուզող։
— Ա, խնամի ջան, աղջիկ չունեմ։
— Քա՛, խնամի ջան, տեհնել եմ, տեհնել։
— Ա, խնամի ջան, ո՞րդի ես տեհնել։
— Քա՛, խնամի ջան, խանըաղումը։
— Ա, խնամի ջան, պլխին ի՞նչ կար։
— Քա՛, խնամի ջան, չալ բլաղա։
— Ա, խնամի ջան, ոտին ի՞նչ կար։
— Քա՛, խնամի ջան, ծուղով մաշիկ։
— Ա, խնամի ջան, մեջքին ի՞նչ կար։
— Քա՛, խնամի ջան, բուղմա գոտիկ։
— Ա, խնամի ջան, ինչ ես բերել։
— Քա՛, խնամի ջան, սելով սեղան։
— Ա, խնամի ջան, ո՞նց ես էկել։
— Քա՛, խնամի ջան, պռաստ դառով, պոչատ հավով։
Նմ. Ա.Հ., XI, 45 (Բրչ.)

Ինչպես նշանի, այնպես էլ հարսանիքի ցիկլում խաղանյութերը երկուսն են՝ մանկական և երիտասարդական: Եթե առաջիններն իրենց գործողություններում հարսնաոի ու բուն հարսանեկան ծեսերի նահմանները չեն ստորոշում, ապա վերջինները հստակ պատկերացում են տալիս: Մանկական հարսանեկան խաղերն իրենց մի մասով լոկ սովորույթների կատարումն են կամ աննշան շարժական խաղեր: Մինչդեռ երիտասարդականն արտահայտում է սպորտային մի քանի ձևեր՝ հալթարշավ, մկնդախաղեր—«ձակատամարտեր», մենամարտեր, ծիսական-դրամատիկական խեղկատակություններ, սրտրդական սովորույթների կրկնումներ: Այս վերջիններն իրենց կոմպլեքսով մի ուրույն պատմություն են ներկայացնում ոչ միայն սպորտի, այլև ամուսնության ձևերի զարգացման պատմության մեջ:

Հարսանեկան սպորտային խաղերը մեծ մասամբ ամուսնացող տղայի ու աղջկա կողմերի հակամարտությունների դրսևորումն են իբրև առհանդամբ ամուսնության մնացորդներ: Ավելի ստույգ կլիներ ասել, որ հետավոր անցյալի առհանդման գործողությունները ժամանակի ընթացքում, ամուսնության ձևերի փոփոխման հետևանքով, երբ բռնի միջոցներն արդեն տեղի էին տալիս,—այդ գործողությունները մնում են իբրև լոկ զվարճություններ ու խաղեր:

Ա. Կ. Պեչևրյանը, ինչպես ասել ենք մի այլ առիթով, 1870-ին հրատարակում է Վանա գյուղական հարսանիքի ազգագրական խիստ ուշագրավ նկարագիրը, «Գեղջկական Հարսանիք ի Հայաստան» խորագրավ: Կոպսանց գյուղի 20 երիտասարդներ Շահ-պաղի ասված գյուղից հարս տանելու համար վինվում են զավազաններով, սրերով և վահաններով: Երաժիշտների առաջնորդությամբ երիտասարդները արշավում են գյուղի վրա: Շահ-պաղցիք տեսնելով այդ, ևս զվխտավորությամբ խուռն բազմությամբ դիմագրավում են նրանց. նրանք «...իբրև երկու թշնամի բանակ զորաց զենընկեց մը իրարմե հեռու կենալով՝ մենամարտության դեր մը կը ներկայացնեն»:

Այս նույնն ենք տեսնում նաև Բալանըխում, ուր հատ փայտերով ու զենքերով զինված երիտասարդները մականախաղջրինդով գնում են դեպի հարսնացուի գյուղը: Դիմապրավող խումբը ձգտում է փախցնել նկողնիից մեկի գլխարկը, որ հետո վերադարձվում է տիրակոջով: Տարոնի գյուղերում պսակի արարողությունից հետո երկու խնամիները խմբերով իրար հետ մկնդախաղ-մականակոխ էին սարքում: Հարսի բարեկամներն աշխատում էին խանգարել պսակվողների առաջընթացը դեպի տղայի տունը:

Դարալագյազ գավառի Խաչիկ գյուղի սովորության համաձայն գրսից եկող հարսնացուին պետք է դիմավորեր գյուղի երիտասարդների խումբը: Սրանցից մեկը քշված ձեռքերով դիմավորում և հարսնաոից բմբշամարտիկ էր պահանջում:

Մենամարտությունը հարսնաոի պրոցեսում, մինչև պսակի ավարտումը և հարս ու փեսային հարսնեաոուն մացնելը, մի ամբողջ սիստեմ է, կատակախոսների շղթա: Այդ շղթայի մեջ ոչ միայն ներառնվում են կրտրիճները, այլև կանայք: Կեղծ դատեմարտ է տեղի ունենում փեսայի ծնողների միջև՝ պսակված և իրենց բակը հասած զույգի առջև: Հարսնեորները, որ հրահրողներն են, այս մարտի ժամանակ օգնում են կնոջը, որ ամուսնուն տապալի և չոքելով կրծքին, պահանջի, որ սեզի տղամարդիկ կանանց հնազանդվեն:

Բավական յուրահատուկ են կարիճների բմբշամարտերը հարսնատան բակում կամ հենց տան մեջ:

Դժվար չէ նկատել, որ այս բոլորը հնադույն սովորույթների բարդ հյուսվածք են, ուր կարելի է կարդալ ժամանակներն իրենց որոշ հետևյալներով: Դրանց մեջ ամենից առաջ պարզ երևում է, որ ամուսնությունը դիտվում է իբրև հասարակական գործ: Հարսնաոր դիտելով որպես առհանդողների

խումբ, հակառակորդները բնականորեն պիտի դիտվեն իբրեւց առհմակից աղջկա պաշտպաններ։ Թվում է, թե աղջկա յուրայինների պայքարը մղվում է հանուն էնդոգամիայի տրադիցիաների պահպանման։ Տոհմից, իսկ ապա նաև համայնքից աշխատավոր ձեռք է պակասում, հարաղատը և համատոհմայինը սովոր չէ հանդուրժել էքսոգամիայի բերած նորությունները։ Ահա այս առումով էլ հարսնառը լոկ առևանգում չէ, այլ ընտանիքի պատմության մի նոր էտապը՝ էքսոգամիայի դրսևորումը սովորույթների ուժով։

Սրանք և սատրև ներկայացվող սովորույթները կապված են ժողովրդական այն խաղերի հետ, որոնք դրամատիկական արժեք են ներկայացնում։ Դրամատիկական են այն բոլոր խեղկատակություննները, որոնք որպես խրախճանականք, ուղեկցում են հարսնառին՝ իր բոլոր արարողություններում։

Այսպես, օրինակ՝ Կարսի «Ադվես»-ը, Դարալագյազի հարսնառի ժամանակ ձևացվող «մեռել»-ը, և ոսկրապարզ ապան, Տարոնում հարսնառի ժամանակ էշը Թարս նրսած ապան, Ուրմիայի այծամիրուք ապան, Արարատյան դաշտում և Ալաշկում խեղկատակ դարձրած տղամարդիկ և այլն։

Դրամատիկական կարելի է համարել նաև սպորտային այն ձևերը, որոնք հարսանիքի ընթացքում երևան են գալիս իբրև ուժփորձություններ՝ փեսայի և մակարների ուժը փորձելու ձևեր։ Դրանք հայտնի են «որձի իրիկուն» կամ «Թագավորահրաս» անուններով։ Ուժփորձությին մասնակցում էին նորապսակ տղան, նրա մակարները և քավորը։ Փեսան մերկացրած սրի մի հարվածով կտրելու էր աշխարի պլուխը, իսկ սրի բերանին խփելով՝ աքաղաղների պլուխները։ Հայաստանի այդ վայրերի մեջ Լոռիում էլ Թագավորն իր մակարներով «Թագավորահրաս էր ելնում», այսինքն՝ որսում էր հարսի հերանց և հարևանների հավերը։

Այս սովորույթունների հիմքում, անշուշտ, ընկած էր սրատրական սպորտը և տոհմային շրջանին հատուկ երիտասարդական միության սովորույթը, որոնց կապը ամուսնական ծեսերի հետ, կապ էր ուժի հասկացողության հետ։ Այս է պատճառը, որ «որսի իրիկվան» «Թագավորահրաներում» անհաջողության ունեցող փեսան ծաղր ու ծանակի էր ենթարկվում։ Ռազմա-սպորտային դաստիարակության մղող այս սովորույթունը, հետևապես, պահանջում էր նախապատրաստական շրջան։ Այդպիսի փորձաշրջաններից էր «մակար» դառնալու սովորույթունը, որի իրագործման համար պատանիների մեջ կատարյալ մրցում էր գնում։

Այս գործնականին զուգակցում կամ ուղեկցում էին ստահմական ու Թովչական գործողությունները, որոնք նախնական և հեթանոսական շրջանի մարդու հայացքների արդյունքներն են և որոնք աղերսվում են նրա պատահականների սերնդունակության ու պտղաբերության հետ։

Լինելով ամուսնության ծեսերի մի մասը, այդ շրջանում դրանք կորցրել են հին իմաստները և վեր են ածվել խաղ-ներկայացումների։ Եվ իրոք. ժողովուրդն այս վերջինին հանդում է լոկ այն ժամանակ, երբ զգալում է պիտակցել դրանց նախնական առումները։

Հարսնառի որոշ ձևեր են ներկայացնում «Խնամի-խնամի» կամ «Հարսնանուկի», «Տեր Ովանես», «Ջորան-չորան», «Թարս ջան, թարս» և այլ խորագրերով շարժական դրամատիկական խաղերը։ Սրանք ևս, ինչպես ճլորթիները են, ունեն միտքը բազարկող բնույթ։ Սակայն այն դիալոգները, որ առկա են այս խաղերի մեջ, կասկած չկա, որ դրանք հարսանեկան սովորույթունների արտացոլումն են, առանց խաղացողների մեջ այդ բնույթի խոր պիտակցման։ Շարքի մի ծայրին կանգնած առաջնորդը մյուսին հարցում է անում, թե արդյոք նա նվագի ինչ տեսակն է ցանկանում։ Դիմացինը, որպես աղջկա տերը, խնամուն պատվիրում է դուռնայով կամ նաղարայով գալ (հարս տանելու)։ «Խնամի-խնամի» կամ «Հարսնանուկի» խաղի համաձայն նվագախմբով եկողները մտնում են խնամու տան

դնով (Քևերի տակով) (նկ. 99)։ Ջահարմահալի խաղի մեջ հիշատակվող հոդևորական Տեր Օվանեսը հարսանիքի քահանան է նշանակում։ Թիֆլիսի վարիանտում նվագախմբից պատ, ակնարկ կա կճուճ-կոտրելու, ոլորաններ փշրելու և մարզարիտներ հավաքելու մասին, որոնք անպայման հիշեցնում են պսակը և պսակվողների գլխին թանկագին քարեր ու ոսկի տեղացնելու, ինչպես նաև աման կոտրելու սովորությունները։ Վանա «Չվան-չվան»-ում պարզ ասված է՝ «Տըմփը տըմփը նազարա, խարս վեր ձիուն կը խաղա»։ Իսկ դա իսկական Հարանաո էր Հարավային Հայաստանում, երբ հարսը շատ տեղեր նույնիսկ գյուղամիջում ամուսնանալու դեպքումն էլ հոր տնից ձիով էր հեռանում։

Այս խաղերի մեջ, կատարման տեսակետից ևս մի հատկանիշ կա, որը ավելի է հատատում հարսանեկան լինելը։

Երկար շարք կազմած և իրար ձեռք բռնած երեխաներն ատիճանաբար անցնում են նախ հակառակ ծայրի առաջնորդի, ապա նրա հարևանի բևատակով և դրանով բոլորի ձեռքերը, բացի խաղապահներից, խաչաձևվում են կրծքերի վրա։ Ավարտման պահին խաղապահների խորհրդակցությամբ որոշվում է դանդել այդ շղթայակապը, ուստի առաջարկվում է սխատոր ծեծել, չվան կամ շղթա ձգել, որպեսզի որևէ թույլ օղակից քանդում առաջանա։

Մենք այն կարծիքին ենք, որ այս ամբողջը մի կախարդական գործողություն է, փեսային կապելու-ունպդրկելու դեմ և ապա այն նորից քանդելու համար, ինչպես որ արվում էր իրականում՝ փականքները փակելով, թևերը հանգուցելով և ապա քանդելով։

Անդրադառնանք մանկական հարսանիքներին։

Մանկական խաղերի մեջ հարսանիքի տարբեր շրջանները տարորոշված չեն. հարսնառն ու բուն հարսանեկան ծեսերը միասին են ներկայացվում։

Այս խաղերում երկու երեխա կամ երկու տիկնիկ ձևացվում են հարս ու փեսա։ Մյուսները դառնում են հարսնեւորներ, նվագողներ, պսակողներ և այլն։ Այսպես թե այնպես, երեխաներն իրենց խաղի միտքը չեն ըմբռնում, ուստի այն կատարվում է մեխանիկական կրկնություններ ձևով, առանց անպատշաճությունների։

Վանա «Հարս կամ հարսնոցիկ»-ում, որ հարսնառ է, փեսան բացակայում է։ Մի բան, որ անցյալում հատուկ էր հայկական մի շարք գավառների։ Շուլավերի «փսակ-փըսակի» խաղը, ընդհակառակը, պահպանել է հարսնառին փեսայի մասնակցության սովորությունը։ Այս խաղը, իր կենդանի հարս ու փեսայով, կարող է հարսանեկան արարողությունների մի բավական ընդարձակ ու ամբողջական պատկեր համարվել։ Սա ունի խաղերը, որ քահանայի հարցումն է պսակվողներին և նրանց պատասխանը։ Կոտայքի «Սապ-սապ» խաղը պարունակում է խեղկատակություններ տարբեր, որ հիշեցնում են իրական հարսանիքը։ Սա այդ տարրի շնորհիվ վեր է ածվել մի տեսակ շարժական խաղի, որը, հակառակ կանոնազուրկ խաղերի, ունի որոշ կանոն և պատիժներ։ Շուլավերի «Ջորի-ջորի» խաղն սկսվում է շարժական ձևերով և որոշ պրոցեսներ անցնելուց հետո միայն հանգում հարսանիքին։

Մանկական այն խաղերը, որոնք «Կովուլիկոս» անունն են կրում, իրենց երկախոսության մեջ պահպանել են առաջին դիշերվա իրավունքի վերապրուկը։ Այդ է երևում հետևյալ հատվածից.

Կո՜վկո՜վլի՜կո՜ւ,
Կո՜վկեմ ձեր տո՜ւն,
Ձե՜ր կարմիր խա՜րս
Ճա՜մխի մեր տո՜ւն,
Ը՜սկո՜ւն պագեմ՝
Ձե՜ն պյա՜ ձեր տո՜ւն։

Ինչ խոսք, որ մեր մանկական հարսանիք ներկայացնող խաղերը պակասավոր են գրի առնվել։ Ամբողջականը գրի առնելու դեպքում հայ հարսանեկան սովորությունների պատկերն ավելի ամբողջական կլիներ, քան այն կա մեր նյութերի մեջ։

235. ՀԱՐՍ ԿԱՄ ՀԱՐՍՆՈՑԻԿ

Մանկահասակ աղջիկներն ու տղաները խառնախառն կազմած, մեկ, երկու և երբեմն էլ երեք աղջկա պլխին թաշկինակ կամ որևէ լաթ պցկով հարս էին ձևացնում, պատվիրելով, որ նրանք մունջ և համեստ մնային: Մյուսները ձևացնում էին, թե դրուց հալավ կամ հարկի հաղուստ էին հագնում, զարդարանքներով վրա պլուխ հարդարում և հարսին վար դառնում: Ապա՝ անմիջապես կիսվելով, մի մասը հարսի հետևն էին դառնում, մյուսը՝ հարսնաոի մասնակիցներ: Հարսն իր տեղում սուսիկ փուսիկ հարսանական էր կանգնում, իսկ հարսնաոի խումբը, հոգ չէ, թե առանց փեսայի էր լինում, գալիս, հասնում էր հարսին: Հարսը հերթով ձևոք-պաչ էր սկսում և վերջացնում անխոս ու անձայն: Խնամիների հարսնախոսությունից հետո հարսի հետևն ու սկեսրանքը դարձյալ մի խումբ կազմում և տոտիկ-տոտիկ շարժվում էին դեպի եկեղեցին ու այստեղից էլ տուն:

Ակ., I, 45—46 (Վ.)

236. ՏԻԿՆԱՆՈՒԿԻ

Աղջիկները տիկնանուկի խաղալիս ասում էին.

Դիլ, դիլ, հրսանիք,
Հարսի մատին մատանիք,
Դե դուս բերեք, որ տանենք,
Փոխան չունի, ի՞նչ անենք:

Ել. Ա.Հ, XI, 44 (Բրչ.)

237. ԽԸՆԱՄԻ-ԽԸՆԱՄԻ ԿԱՄ ՀԱՐՍՆԱՆՈՒԿԻ

Խմբված աղա ու աղջիկ երկու մայր էին ընտրում, մյուսները իրրև ճուտեր հալա-հալա էին գալիս և բաժանվում երկու խմբի, որոնք կռնաբռնուկ արած իրար դիմաց կանգնում էին: Ապա «խնամ խնամի էին տալիս», իրար հետ բարձր ձանյով հետևյալ կերպ խոսելով.

ա. խումբ.— Վերի վերի խընամի:
բ. խումբ.— Ղանդու շաթարը ծամի:
ա. խումբ.— Վերցակըս ծեր կարով ինի ա՞նց չի կացել:
բ. խումբ.— Անց ա կացել:
ա. խումբ.— Ի՞նչ կար կըլխին:
բ. խումբ.— Ալ բազդատի:
ա. խումբ.— Ի՞նչ կար ճըտին:
բ. խումբ.— Ալ քյալտի:
ա. խումբ.— Ի՞նչ կար վեսին:
բ. խումբ.— Վեսկա պանդակ:
ա. խումբ.— Ի՞նչ կար կընաբաին:
բ. խումբ.— Չիր ու չամիչ:
ա. խումբ.— Ջուռնո՞վ կա՞մ ին պըհոլով:
բ. խումբ.— Վենց բեփրա տալիս ա. կուդես՝ դուռնով արի, կուգես՝ պրհոլով:

ա. խմբի անդամներից ո՛րը սրլսրլացնում էր, ո՛րը սրլսրլացնում էր, ո՛րը կըլկըլացնում էր ու պրրդդամբ անելով մոտենում էին խնամի խմբին. իրար ձևոք բռնելով մեծ շղթա էին կազմում: Շղթայի մի ծայրի երկու հոգին թևերը բարձրացնում էին՝ իբր խնամու տան դուռն էր, որի տակով ամբողջ շղթան գալիս անցնում էր: Ում թևերի տակով որ անցնում էին, նրանց թևերը խաչվում էին և այդպես շարունակում էին թևերի տակով անցնել, մինչև որ բոլորին էլ խաչվում էր: Այդ ժամանակ ծայրին կանգնող ա. խմբից մեկը ձայն էր տալիս մյուս ծայրին կանգնող բ. խմբի անդամին.

Է՛հե՛, խընամի:
բ. խումբ.— Հալվեն ու նուշը ծա՞մի:
ա. խումբ.— Է՛, քընանք վեսի:
բ. խումբ.— Վեն՞ց կա՞մ, ղընջիլըս կարճ ա:
ա. խումբ.— Ծըքի՛, ըրգընանա:

Շղթայի երկու խմբերը ձգում էին հակառակ կողմերի վրա: Ում թևն անզոր էր ու պոկվում էր, նա կարվում էր: Հակառակ կողմերի վրա ձգելը շարունակում էին, մինչև որ բոլորն էլ իրենց թևերի ուժը փորձելով, կարրվում էին:

ԳԲ, III, № 39 (Շմ.)

238. ԷՐԿԱՆ ՕՎԱՆԵՍ

Գարնանն ու ամռանը բամանների վրա խաղացվող այս խաղին մասնակցում են 10—20 երեխաներ, երեմն և պատանիները աղջիկների հետ խառն կամ առանձին առանձին: Նրանք կազմում են ուղիղ մի շարք, ձեռք ձեռքի տված: Շարքի աջ ծայրին կանգնում է ամենից բարձրահասակը, որին և անվանում են «Էրկան Օվանես»: Ձախ ծայրին կանգնում է տղաներից ամենից աշխուժը, որը կարող է աշխուժություն առաջացնել: Սրան էլ կոչում են «Համմե Պատանես»:

Երբ որ շարքը պատրաստ է խաղն սկսելուն, Համմե Պատանեսի հարցումով երկխոսություն է սկսվում:

— *Է՛րկա՞ն Օվանե՞ս...*
— *Համ՞մե Պատանե՞ս...*
— *Դամբուլով բա՞՛՛մ, թե զուռնով:*
— *Դամբուլո՞վ (կամ զուռնով):*

Համմե Պատանեսն այդ ժամանակ սկսում է իբր թե խոսել դհոլը, ձեռքը փորին խփելով և համապատասխան ձայնով դմբդմբացնելով.

Դա՛մբրատա դըմբա՛,
Դա՛մբրատա դըմբա՛,
Տա՛րնա նինա,
Տա՛րնա նինա:

Նա միաժամանակ սկսում է տեղից շարժվել, իր եռևից քարշ տալով ամբողջ շարքը՝ առջևի կողմից, դեպի Էրկան Օվանեսը: Համմե Պատանեսի խումբը նվագով ձայնակցում է նրան: Եվ երբ հասնում են շարքի ծայրին, Համմե Պատանեսն անցնում է Էրկան Օվանեսի և նրա թևկից ընկերոջ թևերի տակից, որին հետևում է շարքը: Այդ ձևով անցնելիս Էրկան Օվանեսի ձեռքը բռնողը բնականաբար շրջվում է հակառակ կողմը և ձեռքերն իր կրծքի վրա խաչվում են: Էրկան Օվանեսի դիրքը չի փոխվում:

Համմե Պատանեսը շարքը նորից ուղղում է և կրկին հարցնում Էրկան Օվանեսին՝ դամբուլով է ուզում գալ, թե՞ զուռնով: Էրկան Օվանեսն իր ցանկությամբ ընտրում է մեկը կամ մյուսը: Ջուռնա ընտրելիս Համմե Պատանեսը երկու ձեռքով զուռնա նվագել է ձևացնում: Եվ այսպես Համմե Պատանեսը նվագելով գնում, այս անգամ անցնում է 2-րդ և 3-րդ ընկերների թևերի տակից, մինչև որ նախավերջին խաղակիցը նույնպես շրջվում-խաչվում է: Անփոփոխ է մնում նմանապես և Համմե Պատանեսի դիրքը:

Բոլորը շրջվելուց հետո Էրկան Օվանեսն ու Համմե Պատանեսը զալիս մոտենում են իրար, բռնում միմյանց թևից կամ մեջքից, կազմելով մի շրջան, որտեղ բոլորի երեսը շրջվում է դուրս, իսկ երկուսի՝ Էրկան Օվանեսի ու Համմե Պատանեսի երեսները՝ ներս: Այդ ժամանակ խումբը միաբերան ասում է.

Պապը սխտոր ունի,
Ծեծող չունի,
Պապը սխտոր ունի,
Ծեծող չունի:

Եվ ուժգին վեր վեր թռչելով ոտքերը խրփում է գետնին, մինչև որ շրջանի ձեռքերը բանդվում են (նկ. 99):

Բ. ԺԽ. Ա. (Ախ.)

239. ՏԵՐ ՕՎԱՆԵՍ

Խաղը Ջահարմահալում նույնն էր: Երկու մայրերի միջև տեղի ունեցող երկխոսությունն էր.

— *Տե՛ր Օհանե՞ս:*
— *Պատրուքուկես[1].*
Զուռնո՞վ էրթամ, թե՞ դափով:
— *Դափո՛վ:*
..— Հաճկի լուս, օր տղա իս բերի:
— *Հաճկի լուսով ապրես, բարով կապես կարմիրը:*

---

1 Գյուղի ծերունիների ասելով՝ Նոր-Ջուղայի ս. Ամենափրկչյան վանքի մոտ ապրել է չահարմահալցի մի քահանա, Տեր-Օվանես անունով, որն իր շրջապատի մեջ ունեցել է մեծ ազդեցություն, որով ժողովուրդը նրան կոչել է պատրուքուկես, այսինքն պատրիարքի կես ազդեցություն ունեցող:



Նկ. 99. Էրկան Օվտնես

Նկ. Ե. Մնացականյանի

— Արի էրթանք դպրի։
— Չվան չունեմ։
— Չվանդ կուտամ։
— Հաց չունեմ։
— Հացդ կուտամ։
— Դաթըխ չունեմ։
— Դաթըխ կուտամ։
— Ջուր չունեմ։
— Ջուրն ածա՛ չանախդ։
— Չվանս կարճ է։
— Քաշի հինչուգ օր հերգննա։

Չ. 33—35 (Չհր.)

240. ԲԱԲԱ ՋԱՆ, ԲԱԲԱ

Խաղին մասնակցում են պատանի տղաներն ու աղջիկները։ Խաղում են տարվա տաք եղանակներին, դրսում։ Մասնակցողների մինվը հասնում է չորս և ավելի հոգու, պայմանով, որ զույգ լինեն։ Սրանք իրենց միջից ամենաուժեղներից երկուսին պատ են ընտրում։ Պատերը «ուռ քցելու» միջոցով խաղակիցներին նախապես երկու խմբի են բաժանում։ Այնուհետև բոլորը ձեռք ձեռքի տված մի ուղիղ շարք են կազմում. պատերը կանգնում են շարքի ծայրերին։ Սրանցից մեկի հարցումով երկախոսությունն է սկսվում։

— Բաբա՛ ջան, բաբա՛,
Հավողդ հասե՞լ է։
— Հասել է,
Հասմըսել է.
Շանը կտամ,
Գիլուն կտամ,
Քեզ մի քոռ գիլա չեմ տա։
— Ինչո՞վ գամ, որ տաս։
— «Պաբեդա»-յո՛վ։

Երբ որ առաջարկվում էր «Պաբեդա»-յով գալ, հարցնող պատը խմբի հետ միասին «Պոբեդա» մեքենայի խուլ ձայնը հանելով գալիս, անցնում է խաղողատեր պատի և ընկերոջ թևի տակով, որով այս պատի ձեռքը բռնած ընկերը շրջվելով հակառակ կողմը, ձեռքերը խաչում է կրծքի վրա։

Երբ որ խումբը շարժվող պատի հետ նորից է ուղղում, դարձյալ այս պատը հարցնում է մյուսին, որին ի պատասխան խաղողատերն առաջարկում է գալ «գազ» մեքենայով. հաց ուտելով և այլն։ Հաց ուտելով գալու առաջարկը լսելիս՝ շարժվող պատը խմբի հետ միասին ծամելու ձև է կատարում, «գազ»-ով գալու առաջարկի դեպքում՝ մեքենայի բարձր ձայն է հանում և այս ու այն առաջարկին համապատասխան խաղը կրկնում է այնքան ժամանակ, մինչև որ բոլորը, բացի պատերից, խաչվում են։ Այդ ժամանակ խաղողատեր պատը մի շարք այլ առաջարկներ է անում, որին համապատասխան պատասխան է տալիս շարժվող պատը ամբողջ խմբի հետ, հետևյալ ձևով։

— Պապեն կասի
Սրխատոր ծնծե՛ք։
— Չը՛կակ, չը՛կակ, չը՛կակ։
— Պապեն կասի
Հա՛ց կերե՛ք։
Համ, համ, համ։
— Պապեն կասի
Մեղր կերե՛ք։
— Համ, համ, համ։
— Պապեն կասի
Կարաք կերե՛ք։
— Համ, համ, համ։

Այս բոլորն ավարտելուց հետո պատերն իրենց խմբերով առանձնանում և դնում են մի ուղիղ գիծ։ Պատերն աջ ոտքերի թաթերով իրար դիմաց կանգնում են գծի վրա և բռնում իրար ձեռքից։ Ընկերները թևերով գրկում են պատերին և իրենք իրենց ու այդ ժամանակ խաղողատեր պատն ակնարկելով հակառակորդ պատին, ասում է. «Պապեն կասի թաբավորի ախչկան իրա էրեխաներով քա՞շեն հանեն», որով սկսվում է խմբերի փոխադարձ ձգումը։

Հաղթանակը տանում է այն խումբը, որը մյուսին գծից անց է կացնում իր կողմը։

Բ. ժող. ձ. (Արթ.)

241. ԲԱԲԱՋԱՆ ԲԱԲԱՋԱՆ

Խաղը նույնն էր։ Բայց հարց ու պատասխաններում հիշվում էին մի քանի հին երաժշտական գործիքների անուններ։

ԳԱ. ՀԺՀ. VI, 82

242. Զ Ո Բ Ա Ն Զ Ո Բ Ա Ն

Առավելապես խաղում էին աղջիկները, որոնց թիվը չէր սահմանափակվում։ Բռնում էին միմյանց ձեռքից և ուղիղ գծով կանգնում։ Ծայրիններից մեկը հարցնում էր, իսկ մյուսը պատասխանում.

— *Զոբան, չոբա՜ն, դիմ չոբան,*
Մեր ոչխարը ու՞ր գնաց։
— *Ալա սարը։*
— *Ի՞նչ է ուտում։*
— *Խուռմա։*
— *Ի՞նչ է խմում։*
— *Հուռմա։*
— *Ջուռնով գանք, թե՞ գավուլով։*

Եթե պատասխանն էր «ջուռնով», մի ծայրը «պրռ-պրռ» անելով, իսկ եթե գավուլով՝ «պրմր պրմր» անելով գնում անցնում էր մյուս ծայրի վերջին զույգի թևի տակով, հետո երկրորդի, երրորդի և այլն, առանց ձեռները բաց թողնելու, որով նրանք բոլորը կազմում էին շղթա, ձեռքերը կրծքերի վրա խաչաձևած, բոլորը մնում էին կանգնած, իսկ երկու ծայրիննները պտտում էին և սկսվում էր հարց ու պատասխան վերջիններիս միջև.

— *Ժամկո՛չ ամի,*
Ժամկո՛չ ամի,
Ժամկո՛չ ամի։
— *Հրամմե՛։*
— *Մե կրակ տուր։*
— *Ահա՛։*
— *Մեկել տուր, սա մարեց։*
— *Ահա՛։*
— *Մեկ է՛լ, սա էլ մարեց։*
— *Ահա՛։*

— *Սա վառվեց,— ասում էր առաջինը և ձևացնում, թե իբր ծխաքարշ էր ծխում։*

— *Ժամկո՛չ ամի,— կրկին կանչում էր առաջինը։*

— *Հրամմե՛։*

— *Թագավորն ասաց, թե փաչա ենք առել, մի քիչ սխտոր ծեծեցեք։*

Բոլորը խփում էին ոտքերը գետնին և «սրխ-սրխ» ասում. հետո նորից առաջինն մայրը կանչում էր երկրորդին.

— *Ժամկո՛չ ամի։*

— *Հրամմե՛։*

— *Թագավորն ասաց, թե լվացք ենք արել, չվանը կարճ է։*

— *Քաշենք երկարի,— պատասխանում էր երկրորդը և քաշում էին։*

Ձևերը բաց թողնողին, եթե տղաներ էին, «ղըխկ» էին խփում, իսկ եթե աղջիկներ՝ որևէ պատիժ էին տալիս։

Լծմա, 12—13.

243. Զ Ո Բ Ա Ն Զ Ո Բ Ա Ն

Կարսի Բայբուրդ գյուղում խաղը նույնն էր։ Առաջնորդներից մեկը բեկ և մյուսը չոբան էր կոչվում։ Խաղի պրոցեսում բեկին անվանվում էր Լաչի։ Խաղն սկսվում էր բեկի կողմից, որին պատասխանում էր չոբանը։

— *Զոբան, չոբա՛ն։*
— *Լա՛չի դուրբան։*
— *Տավարն նե՞րաւ։*
— *Ալի՛ տաղտա։*
— *Ռո՛ւտմա։*
— *Ղո՛ւտմա։*
— *Դավուլտա՞ն,*
Թա՛ ջուռնատան։
— *Դավուլտա՛ն (կամ ջուռնատան)։*

Բ. ժո. ձ.

244. [Հ Ա Ր Ս Ն Ա Ք]

«Երեխայք երկու շարք կազմած առանձին առանձին իրանց առաջնորդի բերանով միմյանց հետ խոսում էին այսպես, հետո խառնվում և խաղը շարունակում»։

— Ակառնա՛, դեդա։
— Նա՛ դեդա։
— Ջուռնով գուբա՛ս, թև գափո՞վ։
— Ջուռնով էլ գո՛բամ
— Գափով էլ գո՛բամ.
Կճուճ կոտրանալով գո՛բամ,
Հուվանը փշրանալով գո՛բամ,
Մարդիկ վիրաւորվով գո՛բամ։

ԹՄԿ, 22 (Բ.)

245. [Զ Վ Ա Ն, Զ Վ Ա Ն]

— Զվան, զվան։
— Լաբև զվան։
— Ոչխար պյո՞ր ի։
— Տանիս։
— Ի՞նչ կուսի։
— Սվրուկ խոտ։
— Ի՞նչ կըպատրի։
— Ոսկի։
— Նաղարո՞վ պյամ,
Թև՞ զուռնով։
— Չամ նաղարով,
Չամ զուռնով։
— Դրմփը զրմփը,
Նաղարա,
Խարս վեր ձիուն
Կը խաղա։

ԳՇ. ՀՍ, I, 18 (Վ.)

246. [ՀԱՐՍՆԱՌԻ ԵՐԿՈՒ «ՁԱԿԱՏԱՄԱՐՏ»]

ա. [Նախապատրաստումն]

...Կողպանցվոց խառնաշփոթ ձայներուն սահման չկա, քանզի հարսիհյուր երթալու պատրաստութիւնն կը տեսնեն։

Քաղաքացիները կելլեն իրենց փառաւոր զգեստները (ճյուպպե և էնթերի) կը հագնին, գյուղացիքն ալ գունդգունդ յարմանիներով փաթթված՝ երկայն երկայն քոլոզները զլուխնին կը դնեն, տրեխնին կը հագնին, և մեյմեկ ալ բարակ գավազան ձեռքնին բռնած (ոմանք սորա տեղ սուր) և ընդհանրապես վահան ուսերնին, հարսը բերելու համար ճամփա կելլեն։

...Այս խմբյակը 20 երիտասարդներե կը բաղկանա, և նոցա կառաջնորդեն զուռնան և նապարան։

...Հարսը Շահ-պաղի բսված գյուղեն պիտի բերեն։

...Խամբա Եղոյի աղջիկն է, որ Կոխպանից գյուղը հարսնության պիտի տանին։

բ. [«Մենամարտ» հարսնառը գյուղ մտնելիս]

...Շահ-պաղիի արևելյան կողմեն կողպանցիք [հարսնառի մասնակիցները] խուռն բազմությամբ կարշավեն գյուղին վրա. սոցա առջևեն կընթանա դավուլ-զուռնան...։

...Շահ-պաղցիք զայս տեսնելուն պես, ամենքն ի միասին, գյուղի ոևսեն սկսյալ մինչև փոքրիկ մանկտին կը դիմավորեն զանոնք...

...Իբրև երկու իշնամի բանակ զորաց կենդանակեց մը իրարմե հեռու կենալով՝ մենամարտության դեր մը կը ներկայացնեն։

Գնունյաց դավառի զործոթցի Մելիք Մելոն, որ պինավարությամբ երևելի հանդիսացած էր վասպուրականի մեջ, կողպանցվոց կողմեն սուր ի ձեռին, վահան հուռն, հառաջ կը խաղա. իսկ շահ-պաղցվոզ բանակեն ալ Պուղոս ախպեր նորա դեմ կելլե։ Երկու կողմեն ամենու ձեռքի փայտերը դեպ ի վեր կը բարձրանան. ժամ է մենամարտության։

Գործոթցի Մելիք Մելոն, յուր արյունուշա աչերով ակնարկ մը կը ձգե Պուղոս ախպոր վրա, և «յա՛ ալլահ» ըսելուն պես սովալլուկ գայլերու նման իրարու վրա կը հարձակին, սուրերը վահաններուն կը զարնվին և երկու քաջաց զորությունը հավասարակից կը թվի. դրեթե ժամ մը այսպես կը շարունակի և ապա Պուղոս ախպարը հաղթությունը իրեն երազելով՝ սուրի հակառակ կողմը, իբր կատակ Մելիք Մելոյի կռնակին կիջեցնե։ Սույն միջոցին Մելիք Մելոն յուր

անթիվ քաջորեն հաղթությունները միտքը բերելով կը մոռնչէ իբր զառյուծ, և ահեղ զորությամբ կը զարնէ սրով Պուզոս ախպոր բոլորը մազերով հանդերձ պլխեն վար կը բեր։

Ահա այս է հաղթությունը...

Կողպանցիք ի շնորհս Մելիք Մելոյին հաղթող դաան և ի վարձատրություն յուրոց քաջութեանց հետևյալ հարդանքներն ընկալան։

Շահ-պաղըցիք զայգ մը սև ոչխար կը բերեն և գետին զարնելով կը զենեն նոցա առջև, և հետ այնորիկ զանոնք մեյմեկ փայտի վրայեն կախելով քանի մը կարիճ երիտասարդներ հյուրերու մեջտեղեն ընթանալ կըսկսին։

...Երկու խումբերու դուռնա նապարաները զարնելով-զարնելով՝ ուղղակի դյուղի մեջի ընդարձակ վայրը կառաջնորդեն, ուր է խամբա եզոյի տունը, սակայն դյուղը մատած չը մատած խել մը ընտանիք կը վազեն, կը դիմավորեն զանոնք և յուրաքանչյուր հյուրերու ձեռքի փայտերը կառնուն ու կըտանին։

Սույն պահուն հյուրերը թող սրատես բլլան հա՜... և դիտեն, քննեն ու իմանան, թե իրենց փայտերին որը որու տունը տարվեցավ. քանզի կը պարտին նոքա ըստ օրինաց իրենքն ալ իրենց փայտին հետ դիշերը հոն հանդչիլ։

...Կըզիր (դյուղի քահյան) Հովասափ քանի մը երիտասարդներով հանդերձ ահապին պաշտի մը մեջ ոչխարաց խորովածներ կը բերե, և կըսկսի ժողովրդյան մատակարարել. այս այն խորոված ոչխարներն են, զորոնք կողպանցիք հետևրնին բերած էին։

...Կըզիրը այս մսեն յուրաքանչյուրին բաժնելեն հետո թիակ կոչված ոսկորը մսով հանդերձ սեղանի ճիշտ մեջտեղը կը դնե։ Շահ-պաղըցի երիտասարդներեն թիամորթ և կարճ հասակով մեկը հառաջ կը նետվի և այն ոսկորը կառնու, բազմականաց պարմանորը հինգն դրավելով։

Այս նշանավ (ըստ սովորության) ըսել կուզե, թե վաղ առավոտ պատրաստ է ինքն կողպանցվոց երիտասարդաց մեկուն հետ ձեռքով մենամարտություն մը ընելու, ուստի հարկ է, որ նոքա ալ իրեն դեմ ելլելու մեկը պատրաստեն։

գ. [«Մենամարտ» հարսը գյուղից հաճելիս]

...[Քավորի] բծավոր ձերմակ ձին... հառաջ [կը] բերեն և հարսը [որը 12 տարեկան էր], վրան դնելով՝ կըսկսին երթալ զուռնա նապարայի առաջնորդությամբ։

Այն ինչ կողպանցիք «մնաս բարյավ» կըսեին, շահ-պաղըցի թիամորթ երիտասարդը, «աո՜ տո՜ր կերթաք, դեմս ելնող չըկա՜, մահկյար (մխիթ) կը պրծնենք մեր ձեռքեն» ըսելով հառաջ կարշավի և իր հետ մենամարտակից կը խնդրե։

Մելիք Մելոն «Կյո՛ (ահա) էկա» կըսե, և անոր հետ մենամարտելու հավանություն կուտա։ Իսկ շահ-պաղըցիք ամենքն ալ «չէ՛, չէ, դու չես կանա գալ, մեկ անգամ էկար, մըրկա էլ ուրիշ մը թող գա» կը պատասխանեն. այս ճշմարտությանը ոչ ոք չը կարենալով դեմ դնել, ուրիշ երիտասարդի մը կը հանձնեն զայն։

Ընթերցո՛ղ, չը կարծես որ այս մենամարտությունը առաջնույն նման է, ըի ո՛չ սուր, ո՛չ վահան և ո՛չ այլ ինչ ձեռվնին ունին. այլ բազկի զորությամբ միայն է այս հաղթությունը։

...Երկու երիտասարդներ թևերնին և ոտերնին սոթթած՝ երբեմն հետանալով և ապա ընդ դիրյար կը հարկանին. երբեմն բազուկներնին պարզած ահագին հարվածներ կիջեցնեն, և երբեմն ալ ծունկի գալով դիրար գետնաթավալ ընելու փորձեր կըընեն։

Ճարտար գտնվեցավ շահ-պաղըցին, կողպանցվույն աջ ոտքը բռնածին պես երեսնիվար գետին թավալեց ու դնաց դլխույն վրա կեցավ և այսպիսյավ հաղթության տեր եղավ։

Պ. 92, 31—49 (Վ.)

Հարսնածի մասնակիցներն ընտրածուրիկ (ընտրյալ) Բոռըն ու գեղեցիկ երիտասարդներ են, քրդական շորեր հագած, ծոպերով փուշիք (սև փաթթան գլխու) սրածայր և պուճ (ծայրը փոս) ղըֆլիկ գոլոսներ ու կամ բազմերանգ նախշված արախչիններու շուրջը փաթաթած, բեխերը սրած, ընտիր ձիերու վրա հեծած, ձեռքներնին երկայն և հատ փայտեր՝ և ոմանց՝ նաև զենքեր առած, երգելով քրդական լոլոներ, ձիարշավով և ջրինդով (մականախաղ) առաջ կերթան։ Ահա և մի խումբ ձիավորներու՝ որ աղջկան գյուղի կողմից կը դիմավորեն Հարսնածին, ջրինդով մըրցությունը կսկսի, մեկն յուր ձին, մյուսն յուր ձեռքի ուժը կը փորձե, մականը կը ձգեն, հարված կուտան, կերգեն, կը բոռան և հարհրոցով կը մոտենան գյուղին. բայց վերջին խմբի նպատակն է Հարսնածից Բոռըս փախցնել, որ եթե հաջողվի իրենց, Հարսնածի համար մեծ անպատվություն կը համարվի։ Ջրինդի իրարանցման միջոցին դիմավորող խմբից մեկը Հարսնածի անդամներից մեկի Բոռըսը առնելով կը փախչի, բոլոր ձիավորները կընկնին հետևից, կոզմնակիցները թաջալերեն, հակառակորդները կը հալածեն մինչև գյուղը։ Եթե բռնել աջողեցան՝ լավ կը դնգսեն, իսկ եթե ոչ՝ կորպուլուս կը լինին, և 10—20 դուրուշ տալով Բոռըսը հետ կառնեն։

Երբ Բոռըս փախցնել տեղի չունենա, ձիավորները խաղը շարունակելով և իրեն ախոյաններ մրցելով կամաց կամաց կը մոտենան գյուղին. գյուղի առաջ ջրինդի եղանակը զուռնաճին կը փոխե մի տեսակ քայլերգի, որ բավական սրտառուչ է. և երբ կը մտնեն գյուղը, խնամու բարեկամները, ազգականները և պրացիները, ընդունված սովորության համաձայն, կընդառաջեն Հարսնածին և յուրաքանչյուրը 1—2 ձիավոր կը հրավիրե յուր տունը ու հանդեսը կը վերջանա։

Բ. Ա.Հ., V, 102—103 (Բլիս.)
Վար. ՀԳ. Ա. (Ախթ.)

Նախապես արդեն իմացված այս խաղը խաղում էին մեծ մասամբ Հարսանիքների ժամանակ։ Խաղացողները բաժանվում էին երկու մասի. փեսայի բարեկամները կազմում էին առանձին, և Հարսի բարեկամներն առանձին խումբ։ Պսակի արարողությունից հետո երբ Հարսն ու փեսան եկեղեցուց դուրս էին գալիս, զուռնան փչում էր մկնդախաղի եղանակը։ Երեխաների միջոցով կողմերն սատանում էին մեկական կոպալ խփելու և մեկական կարճ փայտ՝ վահանի փոխարեն։ Երբեմն ձախ ձեռքերին վահանի փոխարեն թաղիք էին փաթաթում։

Գյուղի մեծամեծերի միջամտությամբ Հարսնեորները և ուրիշները սպասարկ էին բացում խաղացողների համար։ Սկսվում էր բավականին կոպիտ մի խաղ։ Սկզբում խաղի մեջ մտնում էին ծերունիները և Հարսնահայրն ու փեսահայրը, որից հետո միայն ներքաշվում էին երիտասարդները։ Հարսի բարեկամներն աշխատում էին խանգարել փեսայի բարեկամների առաջընթացը, իսկ վերջիններս համառորեն և պայքարով հարս ու փեսայի համար ճանապարհ էին բացում։ Խաղն սատանում էր ուրախ կատաղի բնույթ, թեև մասնակիցները երբեմն բավական լուրջ հարվածներ էին սատանում հակառակորդներից։ Իբրև պաշտպանման կամ հարձակման միջոց, կոզմերը մեջք մեջքի տալիս կամ շղթա էին կազմում։ Հարսնառի մասնակիցները երբեմն պաբեսպի նման հարս ու փեսային կալմեջ էին անում, և այդ ձևով առաջանում։ Սրանք իրար լինելու դեպքում երբեմն օղակը համալրվում էր հարևան խաղասեր երիտասարդներով։

Քանի որ խաղի մեջ հաղթող և հաղթվող չէր ենթադրվում, մեկի կամ մյուսի հաղթանակով չէր վերջանում։ Բայց ընթացքի և լավագույն խաղացողների մասին օդաներում ու այլ տեղերում երկար ժամանակ խոսում, գնահատում էին համագյուղացիները։

Կաճոններ.—1. Խաղի ընթացքում անթույլատրելի էր խփել գոհատեղից ցած և ուսերից վեր. արգելվում էր փայտերով բռնել կամ հրել: 2. Թույլատրվում էր խլել հակառակորդի փայտը և նրան զինազրկել: 3. Ախաղները հետևում էին խաղին որպեսզի վերջինս կոպտությյան չհասներ և լուրջ կռվի չվերածվեր: Նրանք հասարակությանը խաղացողներից հեռացնում, հրապարակ ու ճանապարհ էին բացում և զգուշանում, որ զբոսից չարամիտ միջամտություններ չարվեին կամ խաղացողներից պատահական հարված չստանային:

Մ. ժո. ա. (Տրն.)

249. Փ Ա Ս. Կ–Փ Ա Ս. Կ Ի

— *Եկե՛ք փսակ-փսակի տանք, ասաց երեխաներից մեկը:*

— *Եկե՛ք, եկե՛ք,— ասաց Թաշիտը և 6—7 տարեկան երեխաներին մակարների պես երիշարք կանգնեցրեց օդալում:*

— *Սրա Թաո՛նին, դո՛ւ դավաշան ու դո՛ւմբ բաշի: Վարթոն կըլի փսացուն, Հանոն՝ փըսախաչերը, Օսանը հըրսնացուն: Ղարո՞ւլ էս, Օսան, հարցրեց եղբայրը:*

— *Դե՛, լա՛վ,— ասաց Թաշիտը,— ես էլ կլեմ հըրսնախաչերը:*

— *Սրա՛, Հուպ-տո՛ւ-Կուլտո՛ւ, դո՛ւ էլ կըլես փըսակող երեքը, Թալ-Փալտը կըլի տիրացուն, մըկալտոնը կըլեն մակար ու խնամի, դե՛, սարքվե՛ք, տեղե՛նք:*

Ասելն ու կատարելը մեկ արին: Աղջիկները Օսանին նստեցրին, գույնզգույն փալասների կտորներով գլուխը զարդարեցին, երեսը լաչակով ծածկեցին ու զարձրին դուզ-ված նորահարս: Հանոյին նստեցրին Թախտի մյուս ծայրին. ով որ նոր չուխա և արխալուղ ուներ, հանեցին, նրան հագցրին և ուսկապների փոխարեն էլ երկու ծանրոց քաշ արին: Ակռլը ասկի դհոլի վրա չալիկով դո՞ւմբ Հա՛ դո՞ւմբ գցեց: Ղուռնաչիները նախ գնացին Հանոյի մոտ և փչեցին «սըհարի» եղանակը: Այստեղ բավական դադ Հա դադ արին, հետո դնալը դո՞ւմբ Հա՛ դո՞ւմբ ածելով փեսային բերին Թախտի այս ծայրը՝ Հարանացուի հրանոց տանը: Այստեղ Թաշկինակի մի ծայրը տվին փեսացուի, մյուսը Հարանացուի ձեռքը: Հարանեղբայրը բռնեց Հարսի ձեռքից և զուռնայի ետևից ծանր ու շորոր ընթացան դեպի բուխարիկը, որն իրենից ներկայացնում էր Եկեղեցին: Այստեղ արտակարգ մաքրություն էր տիրում, որի պատերին եկեղեցական պատկերների փոխարեն բենձեկի կտորներ շարեցին:

Հուպտու-Կուլտուն իրրև երեց, շուրջառի տեղ մեջքին մի չուխա գցեց Թարս կողմից և հենց որ զուռնաչիները լռեցին, նա սկսեց փնթփնթալ, իրրև Թե գիրք է կարդում: Հետո Հարս ու փեսին մոտեցրեց, գլուխ գլխին կպցրեց: Հին-Վեսպը խաչախաչերն էր, որը բենձեկի երկու կտոր պահեց պսակվողների գլխավերևում: Երեցը պսակն ավարտելուց հետո դարձավ փեսին ասելով.

Փսակ, փսակ,
Կընտելի փսակ,
Կուժն ու կուլեն
Կըլխիտ կոտրեմ,
Հարսիտ տե՞րն էս:

Փեսան առանց խոսելու, կընտով անելով պատասխանեց.

«այո՛, տեր եմ»:

Երեցն ապա դիմեց Հարսին:

Փսակ, փսակ,
Կընտըլի փսակ,
Կուժն ու կուլեն
Կըլխիտ կոտրեմ,
Մարդիտ տե՞ր էս:

Հարսը կընտով անելով պատասխանեց. «տեր եմ», որից հետո երեց Հանոն բենձեկները մեկ մեկի խփելով կոտրատելով գոչեց.

— *Ծեր չարն էլ ըսենց կտրվի, դե՛, քընացե՛ք, մուրազներիտ հասեք: Այս արարողությունից հետո մակարները շարքով կանգնեցին. զուռնաչի Հանին ու Թաոնին փչեցին «առավոտ լուսո»-ի եղանակը և Հարս ու*

վեհին տարան թախտի մյուս ծայրը՝ տղատունը,— աստո՞ծ շընհավիր ձանի, դոշեցին խաղացող տղաներն ու աղջիկները և օդային փախան դուրս։

ԳԹ, II, № 111, (Շմ.)

250. ՊՍՍԿ ՊՍՍԿ

Երեխաները տիկնիկներն իրար հետ պատկելիս ասում էին.

Պատ՛կ, պատ՛կ,
Կոնտի՛ մհակ,
Առջու՛ պանի՛ր,
Դե՛ղին մհակ.
Մածուն ու երես,
Նղ ու կարաք,
Էծու տոն՝
Ճանճու փարախ,
Մին թաս պինի,
Կես թաս արագ,
Մին պատառ հաց,
Մին խրե գազ,
Մին հիմար,
Մին ուլախ,
Կոժն ու կուլան
Կլխետ կոտրեմ՝ տարնը՞ս...։

Եվ. Ժխ, № 64, էջ 107 (Զնգ).

251. [ՊՍՍԿ ՊՍՍԿ]

Բորչալուում խաղերդը դրեին նույնն է.

Պատկ, պատկ,
Տիկնի պատկ,
Աբշի պոլոլը,
Դեղին զմակ,
Կուժն ու կուլեն
Գլխիդ կոտրեմ՝
Տե՞ր էս,
Ուն չէ։

Եվ. Ա.Հ. XI, 44

252. ՋՈՐԻ ՁՈՐԻ

Ջորին տափին նստած, ծեղով հողն է խառնում, իսկ մայրն իր ճուտերով պարապվում է նրա շուրջը և հարցնում։

— Էտ ի՞նչ էս էփում, ա՛յ նանի։

— Շիտոթ եմ էփում,— պատասխանում է Ջորին։

Խումբը երկրորդ անգամ պտտվելով նրա շուրջը, դիմում է.

— Նանի՛, մի պատառ շիտոթ տա՞ս։

Ջորա-նանը ձեռքի ծեղ շերեփով մեկ սբրան է բաժին տալիս, մեկ նրան։ Շիտոթը բաժանելուց հետո նանը խմբին ասում է.

— Դե՛ շեք արեք։

— Ճուտերը ոտներն իրարից հեռացնում են։ Ջորին շերեփը շպրտում է ոտների արանքով և առաջին կանգնողին հարցնում է.

— Շերեփս ի՞նչ արիր։

— Հընդերիս տվի,— ասում է ճուտը։

Ջորին երկրորդ ճուտին է դիմում.

— Շերեփս ի՞նչ արիր։

Սա էլ միևնույն պատասխանն է տալիս և այսպես հասնում է մինչև վերջինին ու հարցնում.

— Շերեփս ի՞նչ արիր։

— Մումը հալեց, ծեղը կուլ տըվավ,— պատասխանում է նա։ Այս խոսքի վրա Ջորին բարկանում է, ընկնում ճուտերի հետևը։ Մայրը չի թողնում, որ մոտենա. ճուտերն իրար փեշից պինդ բռնած փախչում են և Ջորիի դեմ բղավում.

— Ո՛ւհա՛, ո՛ւհա՛։

Մայրը Ջորիին հարցնում է.

— Ու՞ր ես քընում։

Ջորին խաբելու նպատակով պատասխանում է։

— Իմ հորանց տուն եմ քընում։

Մայրն ասում է.

— Ախր վի՛նց էս քընում, դեսը ասեղ ա, դենը՝ քորոց։

Ջորին չի լսում և վազում է ճուտերի հետևից ու մեկին բռնում, կտրում։ Հետո պտտվում է, բռնում երկրորդին, երրորդին և

այլն, ու կարածներին նատեցնում է մի կողմ, որոնք բազուկները պատեցնելով երգում են.

Վիրա՜, վիրա՜, հընգերքս կա՜,
Վիրա՜, վիրա՜, հընգե՜րքս կա՜...

Ջորին կարված ճուտերին ծալապատիկ նատեցնում է: Վերջիններս ձեռքերով մատը բռնում են իրենց ծնկները: Ապա դրանց յուրաքանչյուրի թևից երկու հոգի վեր քաշելով տանում են քիչ հեռու, նատեցնում: Տանելիս ում ձեռքը որ բաց է թողնվում, նրա համար բարձրաձայն ասում են.

— Վա՜յ, քու մոր քամարը կըտըրվեց,
Վա՜յ, քո մոր կռնակը կըտըրվեց:

Այնուհետև կարված ճուտերը հարսանիք են սարքում՝ մեկին հարս դարձնում և նրա համար քեֆեր են պատրաստում: Այդ ընթացքում ամեն մեկը երկու փայտի կտոր պատրաստ է տալիս, իբրև ճախարակ է մտնում: Հետո հարսին մեծերը մի քանի աղջիկների հետ թողնում են այդտեղ. մեծերը փախչում են մի-մի սալան ներկայացնող փայտի մեջ ու ժամ են դնում: Այնտեղից վերադառնալիս տեսնում են, որ հարսը փախել է, չկա: Հարա՜յ, հուրա՜ կոչելով, դես դեն ընկնելով, հարսին գտնում, տուն են բերում:

ԳԹ, III, 27 (Շամ.)

253. [Հ Ա Ր Ս ՈՒ Փ Ե Ն Ա]

Պղտիկներուն նայի. սուտիկ մուտիկ հարս ու փեսա են եղած և ուռի զալար ճյուղեն կամ ասի մը կողակեն, կամ մասրայե մը տուտուկ շինած դուռնայի պես կը փչեն, պար կը գարնեն, տամբլաթաղ կը տփեն, խաղ կաուեն, տաղ կասեն, փայտե ձիեր հեծած կարշավեն, փայտե թուր, թոմե վահան բռնած թրախաղ կը խաղան ի հանդես հարսանյաց:

ԳՍ. Մն., 62 (վ.)

254. ԿՈՒԿՈՒԼԻԿՈՒ

Թևև խաղին անմիջական մասնակիցները երկու մանուկներ էին լինում, բայց հանդիսատես շատ երեխաներ երբեմն փոխարինում էին երկախոսողներին:

Ընդօրինակելով աքաղաղներից, նրանցից մեկը թռչում էր մի թմբի, կոճղի կամ պատուհանի դոդի վրա, իրենից սկսելով երկախոսությունը.

— Կո՜ւկո՜ւլի՜կո՜ւ, սա՜նա՜մե՜ր,
Մե խա՜վըմ կեր՝ պիո՜ր կնա՜ց:
— Ծարա՜վ ախպո՜ւր կո՜ւլ կնաց:
— Ի՞նչ կեր կուաց:
— Ջի՜ր չամի՜չ:
— Վի՞ր կտաներ:
— Խա՜րս-փեսին:
— Խարս պի՞որ էր:
— Վեր ոսկի՜ թախտին:
— Փե՞սեն պիո՜ր էր:
— Վեր ցո՜ւտ ցախավիլին:

Եվ երբ այս երկխոսությունից ձանձրանում էին, իրեն խաղի վերջաբան, դիմում էին հետևյալ ոտանավորին, որը բոլորի կողմից առանձին առանձին կրկնվելուց հետո խաղը վերջանում էր.

Կո՜ւկո՜ւլի՜կո՜ւ,
Կո՜ւկուկ ձեր տո՜ւն,
Ջի՜ր կարմիր խա՜րս
Ճո՜ւմխի մեր տո՜ւն,
Ր՜ակո՜ւն պագի՜մ՝
Ջի՜ն դյա՜ ձեր տո՜ւն:

ԱԼ, I, 42—44 (վ.) և ԳԾ. ՎՍ, I, 25 (վ.)

255. ԿՈՒԿՈՒԼԻԿՈՒ, ԱՆԱՄԵՐ

Գուսաններըը երբեմն հարց տալով և պիտացից պատասխան ստանալով երեխաներին պրպտնում-ուրախացնում էին հետևյալով.

Աքլորն ելեր՝ հարց կաներ.
— Կուկուլիկու, սանամե՛ր,
Մե ձաքուկ խավ ոյո՞ր գնաց:
— Ծարավ ախպյուր կուլ գնաց:

—Ի՞նչ կեր կաուց։
—Ջիր ու չամիչ։
—Վի՞ր կու տաներ։
—Խարս ու փեսին։
—Խարս տիրո՞ր նստի։
—Վեր օսկի թահտրի։
—Խարսն ի՞նչ ի էփե։
—Կուրկուտ։
—Մեջ ի՞նչ թալե։
—Խավղը ծրտոտ։
—Վովի՞ բերե։
—Ջաչալ Ակոբ։
—Վովի՞ պահե։
—Մամիկ մեր ճան։
—Տիրո՞ր դրե։
—Օսկի պատխան։
—Վովի՞ կերե։
—Կարա փըսիկ։
—Վա՛յ կարափըսիկ,
Վա՛յ կարափըսիկ,
Քիս մերըն ուտի քիս թըշիկ։

ԱԳ., I, էջ ԼԹ

256. [Ա Պ Վ Ե Ս]

Կարսի գյուղերում հարսանիքի ժամանակ աղջկա տան ծախսերը տանողը ապվես էր կոչվում։ Եղան սահնակով այդ բերը տանող ապվեսը իր գյուղի, ինչպես նաև հարսի հերանց գյուղի երիտասարդների կողմից կատակածեծի ենթարկվելիս ալյուրով պատվում էր և խեղկատակ դառնում։ Պատահում էր, որ երկու գյուղերի միջև այլ գյուղ ևս լինում էր։ Այսպես ևս ապվեսին նույն հալածանքն էին տալիս և ալյուրոտում։

ՐՀ. ՀՄ. Ֆ., 120—123

257. [«ՀԱՆԴՈՒԳՅԱԼԸ» ԵՎ ՆՐԱ «ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ»]

Հասանի գյուղի (Շատին) վրա տիրում էր խորին լռություն։ Քնաթաթախ, ականջիս հասավ մեռելի հուղարկավորության շարականի ձայնը։ Ծանր քնից հագիված, մի վայրկյանի մեջ կրկին մոռացա շարականը։ Չանցավ մի քանի րոպե, շարականի ձայնը կրկին զարթեցրեց ինձ։ Ցնո՞րք է արդյոք, թե դեռևս զուռնայի և փողի ազդեցության տակ եմ, հարցնում էի ինքս ինձ։ Ոչ, իրողություն է, ըստ որում երգեցողությունը աստիճանաբար մոտենում էր մեր կացարանին։ Խառնիճաղանջ երգեցողների թիվը ավելանում էր և այդ բազմությունը ծիծաղով, երգով, խոսելով մտավ տան բակը և երկու երեք րոպե չանցած, մեր սենյակի դուռը սարսափելի դղրդմամբ հետ բացվելով, դիպավ պատին։ Սա և ինձ հետ քնածները ակամա զարթնեցինք աչքերս տրորելով և տեղերին մեջ նստեցինք։ Ներս մտան վառած մոմերով մարդիկ, նրանց հետևից, դիրքը ձեռքին քահանան և մի վեղարավոր վարդապետ։ Իսկ սրբանց հետևից ավելի քան 10 մարդ մահճի անկյուններից բռնած ներս բերին մի հանդուցյալ և դրեցին սենյակի մեջտեղը։ Վարդապետը կանգնեց հանդուցյալի գլխի մոտ և ըստ երևույթին առանձին դեր չէր խաղում։ Քահանան պատվելով դիակի շուրջը, կատարում էր կարգը։ Հավաքվածներից մեկը մարակը բարձրացրած կանգնեց դիակի մոտ և աչքերը բևեռեց նրա աչքերի վրա։ Եթե հանդուցյալը ցանկություն չուներ մարակի հարվածներ ստանալ, ուրեմն չպետք էր շարժվեր կամ աչքերը բանալ։ Քահանան հանկարծ հրամայեց մարակավորին՝ գործ դնել իր մարակը մեզ՝ տեղերիս մեջ նստածներիս վրա։ Իր հոգևոր տիրոջ հյուծ հպատակը անհապաղ սկսեց գործել մեր մարմինը։ Ո՛վ կընդդիմանար կամ ո՛վ կհեղանար այս ապարմունքի համար... Ճարահատյալ բոլորս էլ կիսամերկ կանգնեցինք։

Արարողությունը բացատրվեց։ Հարսանիքի հյուրերը միացել են և պատվելով մյուս հյուրերի տները, բոլորին էլ ծեծելով արթնացրել են և մի խումբ կազմելով, մտել են քահանայի մոտ, նրան, իբրև հանդուցյալի վերցրել են տեղաշորով, իսկ նրա հանդերձը հագցրել են շինական դատավոր գյուղացի Հ. տեր Կար...յանցին, որ իբրև քահանա կատարում էր հոգեհանգիստը։ Քահանայի

մարմինը մահճի մեջ երգեցիկ խումբը պատեցրել է անից տուն և ապա մտել են Դարալագյազի վանքի վանահոր սենյակը։ Բայց նրա վարդապետական պատիվը պահելով նրանից վերցրել են միայն հանդերձը և հագցրել են իրենցից մեկին։ Այժմ այդ բոլորը իրենց քահանայով, վարդապետով, հանդուցյալով կանգնած են մեր սենյակում։ «Ջուռնա, ջուռնա կանչեցեք», ձայն տվեց նոր թեած հայր սուրբը։ Հրամանակատարները խկուչն դուրս թռան և մի քանի րոպեից հետո ջուռնան սկսեց թնդալ մեր սենյակում։ Հանդուցյալը հրաման ստացավ հարություն առնելու։ Այնուհետև մարակավորը անողոքորեն սկսեց շանթել բոլորին, առանց խտրության, սրպեսզի կաքավեն։ Հարվածներից ազատվելու համար այդ կիսամերկ, քնաթաթախ մարդիկ վեր ու վար էին թռչկոտում, ոմանք գետնի վրա և ոմանք թախտերի վրա։ Ինքնակոչ քահանան և վարդապետը նույնպես պարում էին։


Քաջ. Փ, 1881, № 4, էջ 79—80

258. [ԵԳԴԱՅԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՍՆԱՔԱՌ ՎԵՐԱԳԱՐԶԻՆ]

Երբ Դարալագյազի խաչիկ գյուղից մեր հարսնառը հարսի հետ միասին հասել էր Ջիրուխբյորփու դիմացի բարձրավանդակը, հարսավային այդինների սահմանում մեր առաջ դուրս եկավ մի խումբ հեռևակ և նրանց մեջ կանգնած էր մի երիտասարդ, ոտից գլուխ զարդարված անասունների ոսկորներով։ Ոսկորները թելերով շարված ծածկում էին նրա մարմինը։ Այնպես որ մի թեթև շարժումից դրանք միմյանց դիպչելով, առանձին ձայներ էին հանում։ Եզան ճակատի ոսկրով և եղջյուրներով ու սրանց վրա կախված բոժոժներով երիտասարդը զարդարել էր իր ճակատը և ավելի ծաղրածուության համար դեմքը ծածկել էր արյունով։ Ջուռնան նվագից կարավի եզանակ և ոսկրազարդ երիտասարդը շիկըշկացնելով իրա վրայի ոսկորները, զոդանջիւնելով եղջյուրների բոժոժները, թռչկոտում էր մեր առաջ և իր ատաղձական կերպարանքով խրտնեցնում մեր վախկոտ ձիերին։

Այսպիսի խնդությամբ, ուրախությամբ և զվարճությամբ մտանք մենք Հասանբյանդ (Շատին. նկ. 100)։

Քաջ. Փ, 1881, № 4, էջ 91



Նկ. 100. Խնկածառի երիտասարդը հարսնառին պիտավորելիս և պարելիս (բնագիրը՝ № 258)
Նկ. Հովհ. Բագակյանի

259. [ԷՇԻ ՆԱՏԱՆՑ]

Տարոնում նորապսակները մեծավոր տան բակը հասնելիս երեում էին երեխաներ, որոնք երեսներին այլայլ բաժ՝ զանազան խնկկատակություններ էին անում։ Մեկն էլ իշուն թարս նստած, պոչը ձեռն առած, զանազան միմոսություններ անելով պարզեցնում էր հարսնեորներին։

Եվ. Ա.Հ, XXVI, 177

260. ՕՅԻՆ ԵՎ ՕՅՆԱՃՈՒՏ

Գանձակի մի քանի գյուղերում, ինչպես Բանանց, Բրաջուր և այլն, մի կամ երկու ծաղրածու մուշտակը լարս էին հագնում, երեսները դիմակ դնում, պոչեր շինում, և երբ հարս ու փեսային հասցնում էին տղայի հոր բակը, ծաղրածուները հարսնևորների առաջն ընկած հազար ու մի ծամածռություններ ու կատակներ էին անում և բոլորին ծիծաղեցնում: Սրանք կոչվում էին օյին և օյնաճուտ, այսինքն ավազ և կրտսեր ծաղրածուներ:

ԵԼ. ԱՀ, VI, 262—263

261. ՓՅՈՒՌՆԴԱԼԻՆ

Ուրմիայի հայերի սովորության համաձայն էջմիածնի շրջանի հայմազգիները հարսնառոր հարսի առնը գնալու միջոցին քյոռնդալինը այծի մորթին կապում էր մեջքը, մորթու մի կտորը կապում էր կզակին, որի մազերը մորուք էին ձևացնում, մի լախտավոր մահակ էլ ձեռքն էր առնում և ընկնելով նվագախմբի առջևը, խաղալով ու խեղկատակություններ անելով առաջ էր ընթանում:

ՀԱԿ., № 106, էջ 205

262. ՔՈՍԱԿԷՆ

Հին Բայազետում Քյոսադյալինը երևան էր գալիս ս. Սարգսի առնին: Մեկը փողոցներից հավաքած ցնցոտիներ հագած, սև երեսով ու այծի մորուքով՝ խաղքը (սրածայր փայտի ծայրն անցկացրած շրխշրնկոց) «կը անկանկի զույգ քաղաքավարներու առջև», ծամածռություններ անելով: Տիգրակի երեխաների ընդհանուր իրարանցման մեջ «քոսա կէլինն է, որ ս. Սարգիսը առնելու եկած է»: Ամբոխը կանգ էր առնում յուրաքանչյուր դռան մոտ, որտեղ դիմակավոր հարսները ձեռք ձեռքի աված պարում էին նազանքով:

Հանդեսը սկսվում էր պասի չորեքշաբթի օրվանից ու տևում մինչև շաբաթ օրը:

«Չկա դուռ, որ չծեծի խաղքը, և չկա մեկն, որ չիոխարինե»:

Ա.Գ, II, 54



Նկ. 101. Քյոսադյալինը հարսնառի ընթացքի ժամանակ խեղկատակություններ անելիս (բնագիրը՝ № 261)
Նկ. Հովհ. Քոչակյանի

263. ԶԱՄԲԼԱԳԵՆԻ

Արարատյան դաշտում բնակության հաստատած ուրմեցիների, սալմաստցիների և խոյեցիների սովորությամբ երբ նորապսակների առջև տղայի ծնողները դառեմարան ավարտում էին, տեղի էր ունենում «Զամբլա քշըցկու» արարողությունը: Հարսնևորները տղայի հոր երեսն ու շորերը ալյուրոտում, ավելը ցցում էին փափախի ծալքի մեջ, ձակ զամբլան անց էին կացնում վիզը և դես ու դեն քաշքշելով ծաղր ու ծանակի ենթարկում (Բ. ԺԽ. Ձ.): Որիշ տեղերում հոր գլխին թաղիքի կտոր էին դնում, վիզը քթոց անցկաց-

նում (Քաջ. Ա.Հ, VII—VIII 189)։ Ախալքալաքում երբ թագվորամայրը դիմավորում էր նորապսակներին, թագվորցիները իսկույն մի զարձրած փափախ դնում էին նրա գլխին, ավելը որպես պոչ կապում հետևից, սամիները խրում դռանն։ Թագվորամայրը պարում էր և թագվորի ու հարսի աչքերը համբուրում։ Այդ ժամանակ թագվորցիներից մեկը գաշուկնի մի հարվածով կտրում էր խոհաբարուհու ներկայացրած հավի գլուխը (եվ. Ա.Հ, I, 260—261)։ Մոր նկատմամբ ճիշտ այդպիսի խեղկատակություններ էին սարքում նաև Արարատյան հովտի պարսկահայերը, որին մենք ականատես եղանք Արտաշատի շրջանի Շահումյան գյուղում, 1950 թվականին։

(Բ. Ժո. Ա.)

264. [ՓԵՍԱՀԱՐ ՈՒ ՓԵՍԱՄԱՐ ԿԱՏԱԿՆԵՐԸ]

Խլաթում երբ պսակյալները հասնում էին տղայի տունը, ազապները փեսահորը դուրս կանչելիս՝ վերջինս ալյուրոտած երեսով, ոսկորները վզից կախ, մի երկար ոսկոր էլ որպես փշտով դռանն խրած, գալիս էր առաջ։ Սա խեղկատակություններ անելով փշտովից կրակելու ձևեր էր կատարում։ Ապա՝ ազապները հատուկ երգով պահանջում էին փեսամորը, որը դուրս էր գալիս խաչերկամբ գոտու մեջ խրած, անթրոցը ձեռքին և դիմելով հարսին, ահ տալու համար ասում էր.

—Խըշտ ունեմ,
Խըշտ ունեմ։
—Խըշտես խըշտին դեմ կենեմ,
Խըշտես խըշտիս դեմ կենեմ,

կամացուկ պատասխանում էր հարսը։

Այդ արարողություններից հետո ազապները փեսամորը դնում էին փեսահոր շալակը։ Վերջինս կնոջը շալակած պարում և կատակարանելով ուրախացնում էր հարևաններին ու հանդիսականներին։

ԷԱԺ, VI, 410

265. [ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԽՆԴԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ]

Փոքրասիական հայկական գաղութների հարսանեկան հանդեսներում երևան էին գալիս խաղեր, որոնք խրախճանքի բնույթ ունեին։ Հարսնեղբայրը որպես սամույր՝ գլխից ոչխարի մի նևրկված մորթի էր հագնում, գլխին մի խոշոր բարձ էր կապում, որ պիրուկ ու մեծփոր երևար. գլուխը սպիտակ սամաններ էր փաթաթում և վրայից բթոց դնում, որը սրածայր և ահագին բարձր էր լինում։ Սրա եղրերից բոժոժներ էր կախում, որոնք ձայներ էին հանում գլխի շարժման ժամանակ։ Նա դնում էր արհեստական բեհեզ ու մորուք, վզից իրրև մանյակ՝ կախ էր տալիս մի մեծ ծակված աթար. իրրև գավազան՝ աջ ձեռքով վերցնում էր աղբոտ մի բի, իսկ ձախ ձեռքով բռնում էր խոտան կապոց՝ իրրև համրիչ. լեզվի տակին ավազ էր դնում, որպեսզի կակազեր։ Այս անճոռնի կերպարանքով հարսնեղբայրը մտնում էր փեսայի տունը աղաղակելով ու ազմկելով։ Նա գալիս, բազմում էր այն աթոռի վրա, որ պատրաստված էր ցախավելներից ու նստելուն պես քանդվելով՝ վայր ընկնում և ոտներն ի վեր ցցում էր։

Ճիշտ այս պահին աղաղակ էր բարձրանում, թե հարսը գողացվել է։ Հարսնեղբայրն անմիջապես և կատաղած՝ հարսնատնից դուրս էր թռչում, որին հետևում էին հարսնևորները։ Դրսում ընդհանուր իրարանցման մեջ դես ու դեն վազելուց հետո խնդրում էր ցույց տալ հարսի տեղը, խոստանալով նվերներ տալ։ Հարսին նա գտնում էր փեսայի տանը։ Բայց երբ հարսնեղբորը սաիպում էին խոստումը կատարել, նա գաղտնի վայր էր իջնում, և որպես վրիժառություն՝ թոնրի մեջ ջուր էր լցնում, հանգցնում և ավելորդ կերակուրները թափում էր դուրս շների առջև, որպեսզի հարսնևորներն անկրակ և սոված մնային։ Բայց որովհետև այդ չարագործության մեջ նա բռնվում էր, հարսնևորների ձեռքով «ոտներն վար կախվելով» չարչարվում էր կամ հրհրվում ու կոմիվում, մինչև որ խոս-

ատնում էր խոստումն անհապաղ կատարել։ Այնուհետև հարսնեղբայրը խնկկատակը դնում էր, իբր թե, խոստումը կատարելու և մի ամանով թաց գոմաղբ էր բերում ու հրամեցնեք գոչելով փախչում։ Այդ տեսնելուն պես հարսնևորները հետապնդվում էին ու բերելով առիքից կախում էին և կամ «կլորաձև, այսինքն թևերը հակընդի վար՝ անկված ոտներուն հակընդի կը կապեն. այս է գնդաձ խոզր (տոնուց թոխու)»։ Գլտորում ու շարչարում էին, մինչև հարսնեղբայրը ճարտ. հատված՝ իրեն համար պահված կերակուրներն ու խմիչքները նրանց էր հանձնում, իսկ ինքը՝ որպես պատիժ, պետք է բարև բռներ ու կանգներ, մինչև որ իրեն շորշարողները կերուխտեմը վերջացնում էին։

ԱԴ, I, էջ ՀԲ—Ե

266. [ՀԱՐՍՆԵՂԲՈՐ ԿԱՏԱԿՆԵՐ]

Երբ հարսանիքի ավարտման ժամանակ ազապներն իրենց հավերը վայելում վերջացնում էին, և հարս ու փեսային բարիվայելում մաղթում, անմիջապես ավելացնում էին.

—Քյոմե՛ք, դխավու օսկըռներ։

Ազապները հավերի ոսկորները հավաքում, թելով մեկ-մեկ իրար կապում և կախում էին հարսնեղբոր վիզը ասելով.

—Տե՛, դնա՛, քյո խըլղաթն էտ ա։

ԷԱԺ, 414

267. [ՄԱԿԱԲՆԵՐԻՆ ԿԱՓԿՊԵԼ]

Դանձակում թագվերացումից հետո մակաբները թագվորի հետ գնում էին խաչնկրոր տունը դվարճանալու։ Այստեղ մակաբրաշին պահանջում էր թագվորից նրա համար նախընթաց երեկոյին աներանց տնից ուղարկված խոնչա, իսկ մակաբներից՝ մի մի հավ։ Ով անմիջապես հավը չէր բերում, մակաբրաշին հրամայում էր կատուից թոկ կախել և դրա մի ոտը կապել։ Այսպես մի ոտի վրա կանգնած պիտի սպասեր մինչև որ նրա մերձավորը մի հավ ուղարկեր և ազատեր նրան։ Մակաբրաշին սրանով չբավականանալով, ավելի պահանջներ էր ներկայացնում և կապում էր մակաբների երկու ձեռքերը, երկու ոտքերը և այլն։ Այս երեկո ծայրագույն իշխանությունը նրան էր պատկանում և նա ամեն միջոց գործ էր դնում կարելույն չափ ուրախ անցկացնելու և սեղանին շատ բան ունենալու։

ԵԼ. ԱՀ, VI, 268

268. [ԿԱՏԱԿ ԿԱՆՉԻ ԺԱՄԱՆԱԿ]

Ղազախում հարսանիքի հիշելիքի (կանչի) ժամանակ երբ կանչողը տալիս էր նվիրաբերված անասունների անունները և նվիրողի հասցեին «չեն կենա» էր հռչակում, հանդիսատես չարաճճի պատանիները սկսում էին կովի նման բառանչել, ձիու նման խրխնջալ, խոզի նման մրթմրթալ, մեղվի նման բզզալ և այլն, նայած թե ինչ էր հիշվում։

Քաջ. ԱՀ, VII—VIII, 197

269. [ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԿԱՏԱԿԱԽԱՂԵՐ]

Հայկական գյուղական հարսանիքում «ամեն գիշեր սովորական կերուխումը, ուրախությունները և պարերը վերջանալեն հետո, լինում է մի տեսակ թատերական ներկայացումներ, որը ռամկի լեզվով կոչվում է օյին (խաղ)։ Դերասանների պաշտոն կատարում են գլխավորապես սազանդարները (նվագածուներ)։ Ներկայացնում էին ժողովրդի կյանքից առած ծիծաղաշարժ պատկերներ, երբեմն առանց բովանդակության և երբեմն իրանց տգեղությամբ անցնում են բարոյականության չափը։ Բայց այդ կոշտ, կոպիտ և անմաշ (անտաշ պետք է լինի) ուղղիլները սաստիկ ազդում են մանուկ սրտերի վրա։ Մանկտին նրանց մեջ տեսնում է այն գաղտնիքները, որոնք իր համար առաջ անորոշ էին, անբացատրելի էին»։

(Բ, 24, 133)

270. [ՈՐՋԻ ԻՐԻԿՈՒՆ]

Պսակից հետո հարսի տնից մի ոչխար կամ գառ և կամ մի սագ, իսկ մակարոնների տնից մի մի հավ բերում հավաքում էին թագվորի տան գավիթում կամ կարին։ Դուրս էր գալիս թագվորը գավով զուռնի առաջնորդությամբ շրջապատված մակարոններով և ձեռքի թուրը մերկացնելով խփում մի հարվածով ոչխարի պլուխը թռցնում էր։ Եթե չէր հաջողեցնում, խայտառակ էր լինում, բոլորը նրա վրա ծիծաղում էին։ Ապա թուրը կիսով չափ դնում էին պատյանի մեջ և երկու մակար բռնում էին՝ մեկը երախակալից, մյուսը ծայրից, բերանը դեպի վեր ուղղած. մակարները մեկ մեկ վերցնում էին մի մի հավ կամ աքաղաղ, ոտներից բռնում և վիզը խփում թրին՝ կտրում և հավը դեպի վեր գցում։ Նրբ չէին կարողանում մի հարվածով կտրել, ծաղրի առարկա էին դառնում և հաճախ մի աքաղաղ իրր տուգանք վճարում։

Այդ հավերը հավաքում էին և նույն երկոյի համար հավով փլավ պատրաստում, այդ պատճառով էլ այս երեկոն «Որձի իրիկուն» էր կոչվում։

Եվ. Ա.Հ, XVI, 27 (ՆԲպա.)

271. [ՀԱՎԸ ԹԻՐԱԽ]

Ղարադաղում առագաստի առավոտյան քավորը փեսային և մակարներին հավաքում էր իր տանը, որոնք վերցնում էին մի հավ ու կապում մի քարի և սկսում հրացանով նշան բռնել։ Մակարները դիտմամբ թիրախին չէին խփում և հրավիրում էին քավորին՝ խփելու։ Քավորն էլ իր հերթին հրավիրում էր փեսային, որը կրակում, խփում էր։ Երբ գնդակը հավին դիպչում էր, մակարները կատակով ասում էին, թե «գիշերը գործը հաջող է անցել, իսկ եթե չէր դիպչում՝ անհաջող»։

Թիրախ-հավը ուտելուց հետո հարսանիքն ավարտվում էր։

Եգ., 471

272. [ԹԱԳՎՈՐԱՀՈՐՍ]

Հին հարսանեկան հանդեսների մեջ նրբապսակ աղայի ֆիզիկական ուժը կամ նրա ռազմի ընդունակությունները փորձելու համար սահմանված «թագվորահորս»-ի ծեսը տեղի էր ունենում Հայաստանի բոլոր գավառներում, տարբեր անվանումներով։ Ուրմիա հայերը էջմիածնի Հայթաղ գյուղում այն անվանում էին «Որսի առավոտ», որ տեղի էր ունենում վերջին ճաշկերույթին՝ խաշի առավոտյան։ Հավի ոտքերից բռնելով մերկացրած սրին խփելուց և գլուխը թռցնելուց առաջ նա արտասանում էր. «Յա՛ տեր քսկուն որթու մե՛ պատրաքչ, տո՛ւ իմ թուրը կտուր ձննա, լա՛ճ ձննա, ախչիկ չձննա, իմ իրևոը սև չձննա (ՀԱվ., № 106, էջ 224)։

Բորչալուում այն տեղի էր ունենում հարսանիքի երկրորդ օրը՝ «թագավորահորս» անունով։ Փեսան պետք է հրացանով նշան բռներ ցցի վրա պահված խնձորին (Գե. Ա.Հ, III, 337. Եվ, Ա.Հ, IX, 243—244)։ Գանձակի Բանանց գյուղում նույնանուն ծեսը կատարվում էր դերեզմանատանը. փեսան հավի գլուխը շիրմաքարին խփելով պետք է գլխատեր (Եվ. Ա.Հ, VI, 263)։

Լոռվա Վարդաբլուր գյուղում թագվորը «թագվորահորս էր ելնում»—իր մակարների հետ, հետապնդում էր հարսնացուի հայրական տան կամ նրա հարևանների հավերը (Եվ. Ա.Հ, IX, 244)։ Այս նույնը կատարվում էր ամենուրեք։ Խլաթցի աղապաները պսակին հաջորդող ճաշկերույթից հետո մնում և «խավիռունք» էին կատարում. նվագի տակտի տակ նրանք մենամարտում և թագվորի հետ թրուցքնում էին իրենց աքլորների գլուխները (ԷԱԺ, VI, 412)։ Այս ծեսը այդպես էին կատարում նաև Շիրակում (Ա.Մ. Փ, 251—252)։

Նման ծեսեր տե՛ս նաև ԲՀ. ՀՄ. ձ. 265. Քաջ. Ա.Հ, VII—VIII, 198—200 (Կս. Շրկ. Բաս.). Եվ. Ա.Հ, XII, 133 (Գնձ.). Եվ. վ. Ա.Հ, II, 137—138 (Վրնպ.)։

Մանկական խաղերը պատկերել են հայկական փոքր ընտանիքը: Մայրն ու զավակը այստեղ հիմնական տեղն են գրավում: Ընդ որում մոր դերն առանձնում է խաղացող աղջիկը, իսկ "զավակինը՝ տիկնիկը: Համեմատելի պատճառով հայրը հաղվագեպ է երևում: Կան, սակայն, ընտանիքի ուրիշ անդամներ, խնամիներ և այլ մարդիկ:

Բնորոշ է, որ այդ խաղերում սերը կամ ատելությունը, որպես այդպիսի, հայտնվում են գլխավորապես մանուկներին դրկերում խաղացնելու երգ-խոսքով: Այդ երգերի հեղինակները, անկասկած, մայրերը կամ տատերն են: Մի դեպքում խաղերդն արտահայտվում է մոր ու տատի բերանով, մյուս դեպքում՝ դրանց հյուսածները՝ արդեն հոմոմախոս երեխաների բերանով:

273. [ՁՈՒԿԸ]

Աղջիկները երկու խմբի էին բաժանվում և փորձվածներից մեկական գեկավար նշանակում: Վերջիններիս միջև տեղի էր ունենում հետևյալ խոսակցությունը:

—*Խնամի խոր՞ն:*

—*Ի՞նչ է:*

—*Հավկոս կորան, ձեր տունն է՞:*

—*Մեր տունն է:*

—*Քշե, քշե գա:*

—*Քշեմ, քշեմ, չի գա:*

—*Տաք տաք ապուռ վրեն լից գա:*

—*Լըլեմ, լըլեմ, չի գա:*

—*Մախաթ կոխե ըղղ գա:*

—*Կոխեմ, կոխեմ չի գա:*

—*Հավկոս քանի՞ հավկիթ են ածե:*

—*Մաղ ու կես:*

—*Քա, ան օր ես ձեր դռնեն անցա, ան ի՞նչ պարակ մուխ կելլեր ձեր հերդիկեն:*

—*Հարսս պարկեր էր՝ տղա էր պերե, ձվաձեղ էփեր էի:*

—*Ի՞նչ է պերե:*

—*Մանչ:*

—*Անունը ի՞նչ դրիր:*

—*Սահիան:*

«Սահիան» անվան վրա խմբերը խառնըվում էին իրար, ծիչկոտում, ծափահարում և մի քանի անգամ ասում էին.

—*Ջըխկըր, ջըխկըր,*
Սահիա՛ն:

Քաջ. Ա.Հ., IX, 103—104 (Ալր.)

274. ԽՈՄԻԿ

...Եվ ահա նորուս փոքրիկ դերձակուհին կնստի, ձեռք բերած լաթի կտորները քովքովի կբերե, կձևե, կհագվեցնե ճղլակ (երկճղկի) փայտիկի մը վրա, և անոր տալով պուճ մ՝ ու համբակորեն գծված աչք-ունքով դեմք մը՝ շրջապսպատով ու թևնիքներով կարդուզարդե իր հոգեհատոր պուպրիկը: Ի՞նչ երանություն աղջկան մ՝ համար:

...Ձեռակերտ անշունչ խոժիկը կը հագվեցնե, անուշ ու քաղցր երգերով ինքզինքը վրա կբծոցնե, սրտին կսեղմե, տաք պաչիկով մը կրոգևորե երեսն ու այտերն ամշունչ շորեղենին, կամ ծառի մը շուքին նստած՝ հողին մեջ երկու ցպիկներ խոթելով, իր խոժիկին բաժովն ու բոյովը ճանդրմակ (կախօրան) մը կը կապե և գլուխը սնարին դրած, ձեռնիկը գլուխը ձգած՝ կերգե.

Իմ տղեն անեմ գ՛ըրգ՛ը,
Աանեմ գ՛ըրե՛գ՛ըրգ՛ը, ի՞շշ գ՛ըրգ՛ը:
Ուրո՞ւր, ուրո՞ւր, իմ տղե՛ն,
Կախվե՛ր էր ծառի՛ ճղեն,
Թ՛ափեր՛ էր ծիրա՞ն վերեն... և այլն:

Մեներգելով՝ կօրրե, ու երգովն ինքն ալ կօրօրվի...: Եվ սեր ու գորով չէ՞, որ պիտի

պակսի իր մատաղ սրտին, աղապատանք՝ իր շրթներուն, ուր՝ իր մանրիկ թևերուն, մանրիկ պուպրիկին պզտիկ օրրոցն օրրելու և օրո՜ր ասելու համար։

Պուպրիկը շո՛ւտ ալ կակխի (կարթնա), չարաճճի՜ է, կուլա՜, կճչա՜, ծի՜ծ կուզե, հազար կորով մե՛կ փարա, սաստ ու կռիվ անո՜ւտ, պզտիկ մայրիկն այն առեն իր նորասեր կո՛ւրծքն է, կբռնա, կաթ ճամբելու իր կաթնատո՜ւն անառատմին...՝ կանչե ու վժույը մեղմելու՜՜՜...։

Եվ երբ անժուժությունը մինչև սա տե՛ղը (կոկորդը) հասնի, համբերությունը կտրի, սրտնեղ մայրիկը բաթիկովը թեթև ապտակնեը կուտա անբսպա՜ռ լալվակին, դրդո՜ւճին, որ պահիկ մը մնչե, մրափ տա աչքերուն և իր եղնիկ, սրամա՜շ մերիկն՝ օրասատո՜ր տեսնե։

Ես՞ղճ պուպրիկ, հանցանքն իրեն՞ն է, երբ վերջիվերջո կեղծ մայրիկին սիրտն ա՛յնքան կավցած, ջանի՛ն հատած, դեք ու անգութ, խիղճը մեռա՛ծ, մայրականին տեղ մարդատպանի մը բազո՛ւկն երկննցնելով՝ քաշել-ձըվաել, թև ու առտիկ, դուխ փորիկ՝ ծվիկ-ծվիկ բզքտելը մե՛կ ընե, կաթիլ մը շողոտ արցունքի տեղ՝ պրակ մը վառող պծա՜ռ մ՚աչքին ճոթ...։

Մի՛շտ միևնույն կատակերգությո՜ւն՝ կյանքի իրական թատերաբեմին մեկ ծայրեն մյուսը։ ...Երկամյա կամ քառամյա պզտիկ աղջիկն է, որ կրդնե, կըվերցնե ձեռակերտ խոծիկը, և սիրտը հատած պահո՜ւն՝ կըճղտե ճիտեն ու կճվռե ճղաշեն իրանը՝ թևերեն։

Պահուճապատառանքի կամ խոծիկի սերն ա՛յնքան խոր ու լայն բույն դրած է աղջիկներու սրտին մեջ, որ միայն շորե խոծիկով չի՛ն բավականար, և տղա տարիքին մեջ ալ չի՛ն հագենար։ Անխելահաս շրջանեն մինչև խելահաս տարիք՝ աստիճանական զարգացում կուտան իրենց պուպրիկասեր սրտամոր-ըությանց։

